ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

2

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

II

ԵՊՀ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 941(479.25): 94/99
ԳՄԴ 63.3(2Հ) + 63.3
Պ 797

Տպագրված է պետական պատվերով

Նվիրում եմ Հովիկ Խալաթյանին

Պողոսյան Ստեփան
Պ 797 Թուրքերը թուրքերի մասին, հատոր II, /Ստեփան Պողոսյան.- Եր.: ԵՊՀ հրատ., «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան» հրատ.), 2011թ.- 552 էջ:

Գիրքը ներկայացնում է XX դարի խոշորագույն մարդասպանների կողմից հայերի ցեղասպանության նախապատրաստական աշխատանքների և այն գործողության մեջ դնելու վերաբերյալ արժեքավոր վավերագրեր, վկայություններ, հրամանագրեր, նամակներ, ծածկագրեր ու գրություններ, որոնք կարող են մեծ դեր խաղալ Հայոց եղեռնի միջազգայնացման գործում:

ՀՏԴ 941(479.25): 94/99
ԳՄԴ 63.3(2Հ) + 63.3

ISBN 978-5-540-02226-2

© Պողոսյան Ստ., 2011թ.:
© ԵՊՀ հրատարակչություն,2011թ.:
© «Գրական հայրենիք» ՓԲԸ, 2011թ.:

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային պատմագրությունն ապացուցել է, որ երիտթուրքական կառավարության կողմից արևմտահայության բնաջնջումը ոչ միայն պետական քաղաքականություն էր, այլև ազգային նպատակադրում: Իթթիհադի համագումարներից մեկում Թալեաթը հայտարարեց. «Պետք է հայերին արմատախիլ անել, պետք է մեր երկրում չթողնենք ոչ մի հայ, նրանց պետք է ոչնչացնել: Նկատի ունենալով բանակի անվտանգության և հասարակական ապահովության հրամայականը, նաև կայսրությունում խաղաղությունը պահպանելու ձգտումը և ըստ զինվորական ու քաղաքացիական իշխանությունների որոշման, հայերին պետք է հեռացնել պատերազմական գոտուց, որպեսզի չենթարկվենք նրանց կասկածելի շարժումներին: Նաև իրավիճակը թելադրում է խիստ և արագ միջոցառումներ ձեռնարկել՝ գործի դնելու այս անխոցելի որոշումը հետևյալ պայմաններով. պետությունն իր հազարավոր զավակներին ուղարկում է ռազմաճակատ՝ պաշտպանելու և պահպանելու հայրենիքը: Ներկայիս դժվար պահին հայրենիքը ակնկալում է իր քաղաքացիներից լինել համերաշխ բանակի հետ առավել քան երբևէ: Նման որոշումների մեջ տեսնում է այդ սաղրիչներին, որոնք կրակ են վառում ներսում և աշխատում են դաշունահարել երկիրը թիկունքից»[1]:

Այս ուղեցույցի վրա հիմնվելով մի օրենք է հրապարակվում.

«**Հոդված 1.** Ընդհանուր զորահավաքի ժամանակ պետք է, որ բանակի գեներալները, նրանց օգնականները և անկախ զինվորական հենակետերի հրամանատարները հակազդեն և ճնշեն յուրաքանչյուր շարժում, որ կխանգարի հասարակական կարգին բնակիչների կողմից: Նրանք իրավունք ունեն և պարտավոր են կասեցնել այդ զինվորական ուժով (նույնիսկ սպանելով, բնաջնջելով). անհնազանդությունը պետության հրահանգներին և միջոցառումներին, որոնք կոչված են երկրում համակարգը պահպանելու և դրա պաշտպանությունն իրականացնելու:

1.**Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը, Եր., 1990, էջ 128:

Հոդված 2. Բանակի դիվիզիաների հրամանատարները և անկախ հատուկ միավորումները պետք է անհատական և հավաքական ձևով տեղահանեն քաղաքի և գյուղաքաղաքի բնակիչներին իրենց բնակավայրերից դեպի այլ վայրեր՝ լրտեսությունը կամ դավաճանությունը խափանելու նպատակով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է իր հրապարակման թվականից: (Օրենքը հրապարակվեց Էնվեր փաշայի ստորագրությամբ՝ 14 մայիս, 1915)»:[1]

Չնայած բռնագաղթը սկսվել էր դեռ վաղ գարնանը, իթթիհադական կառավարությունը 1915 թ. հունիսի 13-ին պաշտոնապես հայտարարում է հայոց բռնագաղթի մասին: 1915 թ. սեպտեմբերի 16-ին հայերի ձեռքն է ընկնում ներքին գործերի նախարար Կարմիր փաշա Թալեաթի հեռագիրը Հալեպի նահանգապետին, որում ասվում էր. «Իմացեք, որ կառավարությունը որոշել է Թուրքիայում բնակվող հայ բնակիչների ամբողջական բնաջնջումը: Յուրաքանչյուր վարչական անձ կամ պաշտոնյա, ով անկարող կլինի գործադրելու սույն հրամանը, պաշտոնանկ կլինի: Պետք է հայերին բնաջնջել՝ չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին և ո՛չ էլ անդամալույծներին, որքան էլ առաջարկած բնաջնջման միջոցները դաժան լինեն»:

Սրանք լոկ սատանայական խոսքեր չեն, այլ թուրքական կառավարության պաշտոնական հրահանգներ՝ ուղարկված նահանգապետներին:

Հայ ժողովրդից ձերբազատվելու լավագույն միջոցն այն էր, որ պետք է նախ չեզոքացվեր հայ մտավորականությունը: 1915 թ. ապրիլի 24-ից հայ ժողովրդի մտավոր ներուժը սկսեց ջարդի ենթարկվել: Միայն այդ օրը 225 հայ մտավորական ձերբակալվեց և դաժանորեն սպանվեց:

Ծրագրի իրականացումը վստահված էր «Թեշքիլաթը մախսուսե»-ին: 10000 ոճրագործ ազատ արձակվեցին բանտերից հայ ժողովրդին ջարդելու պայմանով: Այդ ոճրագործ միավորումները հենվում էին թուրքական կանոնավոր բանակի, ոստիկանության վրա՝ իրականացնելով մարդկության պատմության մեջ նմանը չտեսած ամենամեծ ցեղասպանությունը: Երիտթուրքերի ղեկավար մարմնի որոշմամբ ամբողջ կայսրությունում սկսվեցին հայերի ոչնչացումներն ու բռնագաղթը: Ընդդեմ, կայսրության տարածքը բաժանվեց երեք գոտիների. 1. Արևմտյան Անա-

1. **Ասատ Մեֆլեհ Դաղեր** Արաբական հեղափոխությունը, հրատ. Հայ առաքելական եկեղեցի, Հալեպի առաջնորդարան, Հալեպ, 1989 թ., էջ 38:

տոլիա՝ Կ. Պոլսի և Թրակիայի հետ միասին, 2. Կենտրոնական Անատոլիա և Արևմտյան Հայաստանի նահանգների մեծ մասը, 3. Արևմտյան Հայաստանի հարավ-արևելյան նահանգները:

Ջարդերի հիմնական վայրերն էին՝ Եփրատի Քեմախի կիրճը, Խարբերդի դաշտավայրը և Սեբաստիայի նահանգի գետափերն ու հովիտները: Ինչ վերաբերում է Տարոնին, Բաղեշին և Դիարբեքիրին, հայերի հիմնական մասը ոչնչացվեց տեղում: Ընդորում, Տարոնի հայությանը բնաջնջելու համար այստեղ տեղափոխվեցին Կարսում բնակեցված աղրբեջանցի թաթարները, որոնք հայությանն իսպառ ոչնչացրին և Մշո դաշտում հատուկենտ հայ մնաց: Կոտորածներն այդ շրջանում ուղեկցվեցին ռուսական բանակի ժամանակավոր նահանջի հետ: Ինչ վերաբերում է կայսրության արևմտյան մասին ու Պոլսին, ապա դրանցում ջարդեր տեղի չունեցան, բավարարվեցին բռնագաղթով: Պատճառները երեքն էին. 1.Արևմտյան նահանգները կայսրության տնտեսության սիրտն էին, իսկ տնտեսական կյանքը հայերի ձեռքում էր: 2.Այդ նահանգների մեծ մասը Եվրոպայում էր, իսկ մյուս մասը՝ Եվրոպային սահմանակից, և կոտորածներն այդ շրջաններում կարող էին Թուրքիայի համար մեծ բարդություններ առաջ բերել: 3.Արևմուտքում թուրքական հասարակության ղեկավար ուժը օսմանցի թուրքերն էին, որոնց շրջանում երիտթուրքական քաղաքականության նկատմամբ վերապահ վերաբերմունք գոյություն ուներ:

Տեղահանությունը ներկայացնում էր մոտավորապես հետևյալ պատկերը: Տեղահանվածներին հիմնականում ուղարկում էին Կոնիա՝ շրջանցելով Մարաշը, Տարսոնը, Այնթափը, Հալեպը, որոնց կեսը հասնում էր Դեր Զոր՝ քաղցած ու կիսամերկ, իրենց գերեզմանը գտնելու: Կիլիկիայի քարավանը սոված հասավ Կոնիա, նահանգապետը արգելեց ուտելու որևէ բան տալ: Քարավաններին հավաքում էին ախոռների մեջ՝ սոված և հիվանդ մալարիայով, և թույլ չէին տալիս դուրս գալ սահմաններից, արգելելով՝ նույնիսկ գնալ աշխատելու ճանապարհների վրա, որպեսզի գոնե վաստակեն իրենց հանապազօրյա հացը: Սոված հայերը ստիպված էին անգամ խոտ ուտել: Նրանց տեղափոխում էին Սիրիայի հյուսիսային մասերը: Ամեն օր մահանում էին 100-ից ավելի հայեր: Քաջ զեյթունցիների հպարտությունից չի մնում ոչինչ՝ միայն սոված աղքատներ, խենթացած, կարկատած հագուստներով, միջատներով լեցուն: Զեյթունը իթթիհադականների համար փորձարարական լաբորատորիա էր: 1915 թ. մարտ և ապրիլ ամիսներին կոտորածները շարունակվեցին մյուս նահանգ-

ների և շրջանների հայերի տեղահանումով: Այն սկսվել էր Վանի ինքնապաշտպանությունից շատ առաջ, և թուրքական կառավարությունն իզուր էր փորձում արդարացնել հայերի ցեղասպանությունը:

Դորբ Յոլը փոքր քաղաք էր Ալեքսանդրեթի ծոցի մոտակայքում, որի բնակիչների մի մասը հայեր էին: Համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ ֆրանսիական ռազմանավերը ռմբակոծում էին Ալեքսանդրեթը և Բաղդադի երկաթուղին, թուրքերը ամբաստանում էին հայերին, ասելով իբր թե ռազմանավերում ազդանշաններ էին տվել: Ձերբակալում էին մինչև 60 տարեկան տղամարդկանց և տաժանակիր աշխատեցնելուց հետո՝ բոլորին ջարդում: Հաճընին մոտ էր Զեյթունը: Հաճընցիները զեյթունցիների տեղահանությունից հետո մի քանի օր դիմադրում են, բայց ավելի ուշ, տեղական իշխանությունների ճնշման ներքո, Հաճընի հայ ազատամարտիկները հանձնվում են: Չնայած դրան, մայիսի 27-ին ձերբակալում են երևելիներին, իսկ բնակիչներին՝ տեղահանում և ջարդում: Հայերի տներում տեղավորում են Ռումելիայից եկած գաղթականների:

Բայց Մեծ եղեռնի սկիզբն ու նրա բնույթը որոշողները Շատախի կոտորածն էր և Վանի հերոսամարտը, ինչը ավարտվեց ռուսական բանակի և հայ կամավորական գնդերի հաղթական մուտքով Վան քաղաքը: Վանի դիմադրության կազմակերպման գործում առանձնակի դեր խաղաց Արամ Մանուկյանը, որը և նշանակվեց նահանգապետ: Վանեցիներն էլ ապրեցին կոտորածների դառնությունը: Նրանք երեք անգամ անցան գաղթի ճանապարհներով, երկու քարավանը հասավ Արևելյան Հայաստան, իսկ 3-րդին պարսիկները թույլ չտվեցին մտնել ռուսական սահմաններ՝ բնակեցնելով Իրաքի նավթի շրջաններում:

Հայոց պատրիարքը դիմում է դեսպաններին՝ խնդրելով միջամտել, բայց ապարդյուն: Խուզարկում են Հայոց պատրիարքարանը այն հույսով, որ ապստամբության փաստեր կգտնեն, բայց ապարդյուն:

Սկզբում հայ պատգամավորներ Վարդգեսին և Զոհրապին, ովքեր իթթիհադականների «բարեկամներն» էին, խնայում էին: Թալեաթը խոստովանում է Զոհրապին, որ սև ճակատագիր է սպասվում ամբողջ հայ ժողովրդին: Մայիսի 21-ին Վարդգեսին և Զոհրապին ձերբակալում են և փոխադրում Ուրֆայի մոտակայքը, ուր նրանց գանգերը ճզմում են ժայռերին և դիակները նետում Սատանայի ձորը՝ օսմանյան բանակում ծառայած 4000 հայ զինծառայողների դիակների մոտ:

1915-17 թթ. մեկուկես միլիոն հայ է ոչնչացվում իթթիհադականների կամքով:

Քեմախի Բողազում հազարավոր հայ կանայք, երեխաներ և ծերեր բարձր ժայռերից գետը նետվեցին: Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ն. Ռոսլերը, մարշալ Գոլցը փորձելով ընդդիմանալ հայերի ցեղասպանությանը: Ռոսլերը դրական դեր խաղաց Հալեպ հասած հայերին փրկելու գործում: Իսկ գերմանացի մարշալը, երբ իմացավ Եփրատում տեղի ունեցած ջարդերի ու տեղահանությունների մասին, հեռագիր ուղարկեց Մոսուլի կառավարչին՝ կասեցնելու շարունակվող տեղահանությունը: Երբ Մոսուլի կառավարիչը գործի է դնում Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարության հրահանգը, Գոլցն անմիջապես ներկայացնում է իր հրաժարականը:

Հայտարարությունը, որ 1915թ. մայիսին ներկայացրեցին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան, ուներ հետևյալ բովանդակությունը. «Թուրքերը, թուրք պետական պաշտոնյաների համագործակցությամբ, կազմակերպում են սպանդի գործողություն ընդդեմ հայ ժողովրդի: Ջարդեր են տեղի ունենում ապրիլ ամսվա կեսերին Էրզրումում, Բիթլիսում, Մուշում, Սամսոնում, Զեյթունում, Կիլիկիայում»: Անտանտի կառավարությունները պահանջագիր են ներկայացնում Բ. Դռանը, որ նրա վրա է ընկնում ոճիրների պատասխանատվությունը:

Բ. Դուռը անվերապահ ժխտում է իրեն ուղղված ամբաստանությունները՝ մեղադրելով տերություններին, մանավանդ Ռուսաստանին, թե նա օգնում է հայերին ապստամբելու և ջարդելու քրդերին ու թուրքերին, որ հայերը կուսակցություններ և կազմակերպություններ են կազմել՝ Հայկական կայսրություն ստեղծելու համար:

Իրականում հայ ժողովրդի ճակատագիրը նախապես որոշված էր երիտթուրքերի ժողովներում: Երիտթուրքերը նմանվում էին գազանի, որ իր որսի կոնակը ուտելուց հետո ուտում էր նրա երիկամները, խմում արյունը՝ արհամարհանքով մի կողմ նետելով մնացածը:

1. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Բեռլինի կամքը օսմանյան քաղաքականության մեջ բացարձակ էր: Թուրքական բանակում կային գերմանացի 5 000 սպա և ենթասպա: Գերմանական կառավարությունը լավատեղյակ էր, որ թուրքերը ծրագրում էին Հայոց ցեղասպանությունը: Դեռ 1915թ. հունիսի 17-ին Վանգենհայմը գրել էր իր կառավարությանը. «Թալեաթ փաշան հայտարարեց, որ Բ. Դուռը պատերազմական պայմանները հարմար առիթ է համարում ձերբազատվելու ներքին թշնամուց...»[1]:

Ըստ պատմաբան Վահագն Դադրյանի՝ գերմանացի սպաները, որոնք գտնվում են օսմանյան զինվորական գլխավոր շտաբում, խորհուրդ տվեցին թուրքերին ոչնչացնել հայ ժողովրդին, գերմանական առաքելության անդամները հայտարարել էին, թե հայերի տեղահանման ծրագիրը գերմանական գաղափար էր:

Ֆ. Նոմանը «Կենտրոնական Եվրոպա» գրքում գրում է. «Մեր արևելյան քաղաքականությունը որոշված է վաղուց ի վեր, պետք է որ արտաքին քաղաքականության մեջ հետևենք բիսմարկյան քաղաքականությանը, նույնիսկ եթե այն անխիղճ է իր գաղափարներով, ազգային քաղաքականությամբ և, սա հիմնավոր պատճառ է, որ մեզ՝ պետական գործիչներիս, պարտադրում է լինել անտարբեր Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների տառապանքներին, նույնիսկ եթե դա դժվար է մարդկային զգացմունքների հանդեպ»:

Գերմանացիների երազանքն էր իշխել մի կայսրության վրա, որ տարածվում էր Համբուրգից մինչև Արաբական ծոցի երկրները: Ուզում էին հեռացնել ճարպիկ ու աշխատասեր հայերին արդյունաբերական և առևտրական ասպարեզից, որպեսզի կարողանան առաջ մղել ծույլ և թույլ թուրքերին: Գերմանացիներն ուզում էին խնդիրներ արծարծել կովկասյան սահմանի վրա, որպեսզի ռուսները չկարողանային օգնել սերբերին և ռումինացիներին: Նման ծրագիր առաջադրեցին նաև անգլիացիների դեմ՝ Հնդկաստանում ճնշում գործադրելու համար:

1964 թ. օգոստոսի 10-ին գերմանացի գեներալ Մոլտքեն նամակ է հղում Էնվեր փաշային. «Իսլամական աշխարհում պետք է լրջորեն աշ-

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ քաղաքականութիւնը, Բեյրութ, էջ, 122-123:

խատենք ըմբոստություններ և շարժումներ կասեցնելու ուղղությամբ ընդդեմ Ռուսաստանի և Անգլիայի»:

Գերմանացիներն ու թուրքերը իրենց գործակալների միջոցով աշխատեցին խորացնել հակասությունները՝ առաջ բերելով ազգային ու կրոնական անհամաձայնություններ՝ Պարսկաստանում և Հարավային Ռուսաստանում: Թուրքիայի քրիստոնյաների հանդեպ բշնամական կեցվածքով գերմանացի կանցլերը հայտարարեց. «Ես իմ զինվորների մի ոսկորը չեմ զոհի... Արևելյան հարցին»: Գերմանացի մտավորականները քննադատեցին իրենց կառավարության ցեղասպանությունը քաջալերելու քաղաքականությունը:

Պարիս Սքրումարը՝ Կոստանդնուպոլսի «Գազետ» թերթի գլխավոր խմբագիրը, գրում է. «Այդ խայտառակությունը, որ արձանագրվեց համաշխարհային քաղաքականության պատմության մեջ՝ ոչնչացրեց մի ամբողջ ժողովուրդ (զոհերի թիվն անցնում է 1,5 միլիոնը), մանրակրկիտ նախապատրաստված էր, և սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեծ ազդեցություն ուներ Թուրքիայում»: ... Սուր քննադատության ենթարկեց իր կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության վրա աչք փակելու, և ամոթանք տվեց Գերմանիային Թուրքիայի ձեռքերին ազատություն տալու համար քրիստոնյաների ցեղասպանության գործում:

Թուրքերը գերմանացիների ճանապարհով գնացին ցեղայնական գաղափարախոսության առումով: Միաժամանակ գերմանացիները հավատում էին, որ Օսմանյան կայսրությունն էլ իրենցն էր լինելու: Այդ պատճառով վախենում էին Ռուսաստանի, Անգլիայի միջամտությունից նույնիսկ, եթե այն պետք է լիներ նահատակ ազգերի հաշվին:

Մորգենթաուն գրել է. «Ես վստահ եմ, որ մարդկության ամբողջ պատմության ընթացքում ավելի սոսկալի իրադարձություններ չեն եղել: Ջարդերը և կեղեքումները, որոնք տեղի են ունեցել անցյալում, աննշան են 1915 թվականի հայոց տառապանքների համեմատությամբ: Գերմանիան լռում է Հայոց ցեղասպանության հարցում, որովհետև նրա համար շահեկան է, որ հազարավոր հայեր պարտավոր էին անհատույց աշխատել Ստամբուլ-Բաղդադ երկաթուղու ծրագրի վրա: Այդ պատճառով գերմանական կառավարությունը մերժում էր ցեղասպանության մասին լուրերը: Նույնիսկ գյուղերում գտնվեցին գերմանացի զինվորականներ և գործակալներ, որոնք բացահայտորեն մասնակցեցին Հայոց ցեղասպանությանը և զբաղվեցին հայ աղջիկների վաճառքով»:

Օտարներն էլ հաստատեցին Հայոց ցեղասպանությունը.

1. թուրք վկաներ (պաշտոնյա, շարքային քաղաքացի, պետական գործիչ կամ զինվորական),

2. օտար դիվանագետների վկայություններ,

3. ծագումով արաբ օսմանցի պետական գործիչների վկայություններ,

4. օտար առաքելությունների վկայություններ,

5. քրդերի վկայություններ,

6. ցեղասպանությունը բացահայտող լուսանկարներ՝ նկարված օտարների կողմից, Օսմանյան կայսրության տարածքով: Թուրքերը երբեմն այդ լուսանկարները միամտորեն օգտագործում են, հայտարարելով, թե իբր սրանք թուրք զոհերի նկարներն են, չիմանալով, որ գանգրաքանությունը հաստատում է ցեղի տեսակը:

2. ՃԱՆԱՉՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Գոյություն ունեն փաստաթղթեր, որոնք վկայում են ցեղասպանության իրողությունը: Դրանցից են ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից ուղարկված հեռագրերը արաբ նահանգապետներին՝ նրանց հրահանգելով անխնա բնաջնջել հայերին. «Անձանց հեռացնելու նպատակն է ապահովել մեր հայրենիքի երջանկությունը ապագայում, որովհետև նրանք, որտեղ էլ բնակվեն, երբեք պիտի չզիջեն իրենց վատ գաղափարները, ուրեմն պետք է նրանց թիվը պակասեցնել գերագույն չափով»: Այդ հեռագրերը, որոնք հասնում էին նահանգապետներին, չափազանց հստակ էին և մեկնաբանության կարիք չունեին. պահանջում էին ձերբազատվել հայերից բոլոր միջոցներով: Իրենց քաղաքականությունն իրականացնելու իրական նպատակը՝ Թուրանական կայսրության հիմնումն էր Չինաստանից մինչև Բալկաններ. այս երազն իրականացնելու համար պետք էր վերացնել Հայկական հարցը և թրքացնել ոչ թուրք տարրերին:

Իր նշանավոր թռուցիկների միջոցով Մեքքայի իշխան Հուսեյին իբն Ալին կոչ էր անում արաբ ժողովրդին՝ հեղափոխություն սկսել ընդդեմ օսմանյան բռնատիրության:

Թուրքերը չհարգեցին իսլամի պատվիրանները: Ալթաբրանին ասում էր. «Եթե մի հավատացյալ անարդարության ենթարկվի պետության կող-

մից, կնշանակի, որ պետությունը թշնամու պետությունն է»: Արաբները և նրանց լեզուն ենթարկվեցին թուրքական սոսկալի կեղեքումների, Օսմանյան կայսրության տարածքում արգելվեց արաբերենը: Արաբ բանաստեղծ Ուալի Ըդդին Յաքրոնը իր «Ճանաչվածը և անճանաչը» գրքում՝ հրատարակված 1909 թ., քննարկում է ազատության նահատակների, այսինքն՝ հայերի ջարդերի մասին 1894-1896 թթ. Կարմիր սուլթան Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ: Նա խոսում էր երեք ջարդերի մասին: Առաջինը՝ տեղի ունեցած Շամի երկրներում 1860 թ., երկրորդը՝ բուլղարական՝ 1877 թ. և երրորդը՝ հայկական ջարդերը:

Այն հայերը, որոնք ուզում էին փախչել Օսմանյան կայսրությունից ԱՄՆ կամ Եվրոպա, պետք է նախ հարկեր վճարեին, ապա թույլտվություն ստանալու համար պետք է կաշառք տային: Դա անելուց հետո պահանջում էին երաշխիքներ Օսմանյան կայսրություն չվերադառնալու մասին, դրանից հետո միայն հայերը կարող էին վաճառել իրենց ամբողջ ունեցվածքն ու սեփականությունը: Թուրք պաշտոնյաները կաշառք էին պահանջում ու եթե չէին ստանում, ճանապարհին հայերի ընտանիքներին, կանանց ու երեխաներին սպանում էին և թալանում: Խեղճերը վերադառնում էին՝ խնդրելով պետությունից ապահովություն և արդարություն:

«Ցեղասպանություն» արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է լեհ-հրեա Լեմկինը՝ 1944-ին, ապա հրատարակվել է «Նյու Յորք Թայմս» թերթում 1945 թ. նոյեմբերի 24-ին, այն հիշատակվել է նաև Նյուրնբերգի դատավարության ընթացքում, 3-րդ ռայխի արձանագրություններում 1939 թ. օգոստոսի 22-ին Օրբեզայում և ավելի որոշակի՝ գերմանական գլխավոր շտաբի համաժողովում, որտեղ Հիտլերն արեց իր հանրահայտ հայտարարությունը: Զարմանալի է, որ Հայոց ցեղասպանության մասին նրա ասածը չարձանագրվեց, չնայած, որ ասված էր հրապարակայնորեն: Պատճառն այն էր, որ Հիտլերը բանախոսել էր այդ ժողովում ժամը 12-15-ը: Եվ երբ բեմից իջավ ընդմիջման գնալու, շրջապատվեց երկու տասնյակ գեներալներով: Այդտեղ էր, որ նա իր նշանավոր արտահայտությունն արեց, ինչը հրատարակվեց «Նյու Յորք Թայմսում»:

Այս հայտարարությունը թերթերում և երրորդ ռայխում արձանագրվելուց բացի, ավելանում է երրորդ և չորրորդ փաստը: 1939 թ. օգոստոսի 25-ին հեռագիր է հասնում Անգլիայի արտաքին գործերի նախարարու-

թյուն՝ «foreign office», ուղարկված Ժորժ Օլիվիա Ֆորբեսի Բեռլինի անգլիացի պաշտոնյաներից մեկի կողմից: Մ. Լոները, որը ամերիկյան գործակալության ներկայացուցիչն էր «Associated Press»-ում, իր հերթին ստացել էր նույն տեղեկությունը նույն համագումարին ներկա գտնված գերմանական գլխավոր շտաբի մի գեներալից: 1939 թ. օգոստոսի 21-ին մեկ այլ հեռագիր հաստատում է Մ. Լոների հեռագրի հաղորդումը, որ բարձրաստիճան սպա էր գերմանական օդուժում: Համաշխարհային 2-րդ պատերազմից հետո ամերիկացի հայտնի պատմաբան Ջոզեֆ Գոդմանը մի գիրք է հրատարակում 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին՝ «Հայոց ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմում», ընդգծելով Հիտլերի հայտարարությունը:

1978 թ. ամերիկացի դատավոր Ռոբերտ Սամբրին Նյուրնբերգյան դատավարության ընթացքում հաստատեց թուրանականության ջարդերի և նացիստական ոճիրների նմանությունը: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն անպատիժ մնալու պատճառով կրկնվեց և 1939 թ. Հիտլերն ուղարկեց մահվան միավորումներին գործելու նոր ցեղասպանություն, նորից ասելով՝ ով է հիշում այսօր Հայոց ցեղասպանությունը: Աշխարհը միայն հարգում է հաջողակի արդյունքները. Հիտլերը, թերևս, իրավունք ուներ: Ո՞վ է այսօր դատապարտում ողջ Անատոլիայի, Կովկասի և Եվրոպայի մի մասի բռնագրավումը, որ դատապարտի միլիոնավոր հայերի և հույների, հազարավեր քրդերի, ասորիների, արաբների, սերբերի ջարդերը: Ո՞վ կդատապարտի նրանց, երբ նահատակ ազգերը, որոնք մարտնչում են ազատության, ժողովրդավարության և իրենց ազգային իրավունքների համար, կոչվում են ահաբեկիչ, և այդ ժողովուրդները, եթե ճնշվեն և անհետանան պատմությունից, կկոչվեն տկար ու թույլ, և եթե պատերազմ հռչակեն իրենց հայրենիքի զավթիչների, և ազատությունը խեղդողների դեմ, կկոչվեն հարձակվող, և եթե ձայն բարձրացնեն միջազգային քաղաքական թատերաբեմում, կկոչվեն միջազգային թատերաբեմի խանգարողներ:

1916 թ. օգոստոսի 16-ին արաբական ղեկավարությունը քաղաքական արարողություն է կազմակերպում, որտեղ խստորեն դատապարտում է ջարդարար Ջեմալ փաշային, որ կախաղան էր բարձրացրել 800 անմեղ արաբ մտավորականի: Նաև դատապարտում է Կարմիր փաշա Թալեաթին Հայոց ցեղասպանության համար: Այն ինչ արեցին Ջեմալ ու Թալեաթ փաշաները և ուրիշները, շարունակությունն էր Թեմուրի, Չինգիզ խանի ոճրագործությունների:

3. ՀԱՄԱԹՈՒՐԱՆԱԿԱՆ ՄՈՒԹ ԴԱՎԵՐ

Թուրանականությունը ազգայնամոլ, հակամարդկային, արյունարբու շարժում է, որ հենվում է թուրանական ցեղի գերազանցության և թուրքական ազգայնամոլության վրա: Աշխարհի ամենավտանգավոր տեսությունն է, նույնիսկ ավելի, քան նացիզմը կամ սիոնիզմը, որովհետև իրագործած ջարդերն ու ցեղասպանությունները բացարձակորեն գերազանցում են մյուս երկուսի գործած ջարդերի ծավալը և ահավորությունը: Թուրանականության ծրագրերը շատ ավելի մեծ էին, քան մյուս տեսություններինը: Նրանց ազգայնամոլ գաղափարները ի հայտ եկան օսմանյան քաղաքական քայլերում 19-րդ դարի վերջին քառորդին, իսկ թուրանական տեսությունը՝ 18-րդ դարի 2-րդ կեսին:

Պարսիկ պատմաբան և աշխարհագրագետ Աբու ալ Կասեմ ալ Կարտուսին իր նշանավոր «Ալշահնամե» գրքում թուրանական ցեղերի մասին ասում է. «Սրանք հյուսիսի բարբարոսներն են հին ժամանակներից ի վեր, երբ պատուհաս էին դարձել քաղաքակրթված Պարսկաստանի գլխին: Ըստ իշքանիտների տեսության, մինչև մեր թվարկության 3-րդ հազարամյակը վանականները հիմնում են մի պետություն, որի սահմանները տարածվում են Հինդուքուշից մինչև Կասպից ծով և հաստատվում են Պարսկաստանի արևելքում մ. թ. ա. 1000 թ., ապա տարածվում Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում, մի մասը Սամարղանդում և Հնդուում: Ժամանակի ընթացքում «քաղաքակրթվում» են և կոչվում «ճերմակ» թեր: Մ. թ. ա. 6-րդ դարի կեսերին պատմության մեջ անվանվում են թուքյուներ: Նրանց իշխանությունը տարածվում է Միջին Ասիայի վրա: Իսլամության օրոք ստեղծում են խազն ու իտների և սելջուկների պետությունները»: Ազգագրագետները սկսեցին հետաքրքրվել թուրքերով եվրոպական զանազան երկրներում: 1756թ. ֆրանսիացի պատմաբան Ժան Դեյոգինեն հրատարակում է իր «Թուրքերի, մոնղոլների և հոների ընդհանուր պատմությունը» գիրքը, որը թուրքական ազգայնամոլության ամենացայտուն արտահայտությունն էր և թուրքերի ոգեշնչման աղբյուրը էթնիկ միավորման համար հոների, թուրքերի և թաթարների միջև:

Պատմականորեն փաստված իրողություն է, որ թուրանականության համարյա բոլոր տեսաբանները հրեաներ են: Ահա դրանցից մի քանիսը:

1. Արմենիոս Վամբերի

Հունգարացի հրեա էր, կոչ էր անում թուրքական ազգային միավորման հաստատման, որ կոչվում էր համաթուրքականություն և տարածվում էր Էգեյան ծովից մինչև Չինաստան: Վամբերին կատաղի քննադատության ենթարկեց իսլամությունը և այն խոչընդոտ համարեց թուրքերի միասնականության ճանապարհին՝ առաջադրելով իսլամությունից հրաժարվել ի շահ իրենց ազգային պատկանելության:

1873-1874թթ. հրատարակում է երկու գիրք՝ «Բուխարա» և «Կենտրոնական Ասիա», որտեղ փառաբանում է թուրքական ցեղի գերազանցությունը և փառքը: Այս գրքերը հիմք դարձան թուրք ազգայնամոլ գաղափարախոսության համար:

2. Ֆրանս Ուիրներ

Գերմանացի հրեա էր: Սահմանում է նոր թուրքերի առաքելությունը և մի քաղաքական ծրագիր է մշակում, որ երիտասարդ թուրքերի նախապատրաստական դաշինքն էր: 1877 թ. հրատարակում է մի գիրք «Մուրադ էֆենդի» ծածկանունով, մատնանշելով թուրանականության վերջնական նպատակը և նրա հավերժությունը[1]:

3. Կոնստանտին Բորզենկի

Հրեա՝ Լեհաստանից: Հրատարակել է «Հին և նոր թուրքերը» գիրքը 1889 թ.՝ Մուստաֆա Ջալալ Ալ Դին փաշա ազգանունով, որտեղ պատմում է թուրքական առասպելների մասին՝ բորբոքելով կարոտը դեպի նրանց հին փառապանծ ուղին: Նաև խոսում է հին թուրքերի արիության և թուրք ցեղի գերազանցության մասին՝ քննադատելով նոր թուրքերի անկումը, նրանց բացատրելով հետապնդելիք միջոցները վերապրելու Թուրանական կայսրության առասպելական փառքը[2]:

4. Լեոն Քոհեն

Հրեա՝ ֆրանսիացի: 1896 թ. Փարիզում հրատարակում է «Ասիայի պատմության նախաբան. թուրքերը և մոնղոլները ի սկզբանե մինչև 1400 թ.» գիրքը, որտեղ ընդգծում է՝ թուրք-մոնղոլական տիրապետությունը աշխարհի ենթակայության հրամայականն է: Փառաբանում է Չինգիզ խանին, Լենկ Թեմուրին հետաքրքրական ոճով և հրահրում թուրքերին վերագրավելու իրենց կայսրությունը, որ տարածվում էր Փոքր Ասիայից

1. **Սալե Զահար** Հրեաները Թուրքիայում և նրանց դերը թուրք-իսրայելյան դաշինքում, Բեյրութ, 1998, էջ 49:

2. Olla lalab, Les.- 1967, p. 16

մինչև Չինաստան: Նա թուրքերին համարում է կատարյալ խելացի ժողովուրդ, որն, իբր, սկսեց անկում ապրել՝ կորցնելով իր ազգվական հատկանիշները, երբ որդեգրեց իսլամը՝ որպես կրոն և քաղաքակրթություն:

Թերևս Լ. Քոհենը չէր կարդացել թուրք օսմանցի ուխտավորների գրքերը 17-րդ կամ 18-րդ դարերում, ինչպիսին էր օսմանցի ուխտագնաց Օլիան Ժալարի նշանավոր գիրքը՝ «Արշավանքների նկարագրություն», որտեղ Թեմուրը ներկայացված է որպես արյունարբու բռնատեր, գարշելի և ծայրահեղ տգետ: Կամ էլ հայրենակից հրեաների հետ ուզում էր այս բարբարոս գազաններին պատուհաս դարձնել այն աշխարհի գլխին, որ բացասական էր վերաբերվում հրեաներին:

5. Ալբերտ Քոհեն

Հրեա՝ Գերմանիայից: Գրել է Թաքլին Ալբ ծածկանունով: Նա օսմանյան տնտեսության փոխանցելու տեսությունը առաջադրեց: Անշուշտ, նպատակն էր Գերմանիայի հաղթանակից հետո տիրել օսմանյան տնտեսությանը հրեական դրամագլխով: Նա ծավալապաշտության և համաթուրքականության տեսաբան է: «Turkizmus and Panturkizmus» աշխատությունում առաջ է քաշում համաթուրքականության տեսության սկզբունքները: «Գաղափարներ մեծ Թուրքիայի բնույթի և նպատակների մասին» աշխատությունում, որտեղ վերլուծվում են համաշխարհային ծրագրերի բնույթը և համաթուրքականության տարբերությունները:

1884 թ. Լոնդոնում հրատարակում է «Թաքլին Ալբ թուրք հայրենասերը» գիրքը, որում փորձում է քողարկել իր հրեա լինելը:

Թուրանցի թուրք Ամսնահալ Ադսընը թուրքական մամուլում գրում է. «Ի գործ դնել թուրանականության գաղափարը, այն հասցնել ազգային գաղափարի մակարդակին, որը սրբազան նպատակ է, որովհետև այն ազգվական միտք է, գաղափար և միաժամանակ արկածախնդրություն:

Հրեաների կողմից Իսրայել պետության հիմնումը արաբական հողի վրա խորհրդավոր արկածախնդրություն չէ՞ր. երեկ՝ 1929 թ., հերթը Հաթայինն էր, այսօր հերթը Կիպրոսինն է, իսկ վաղը՝ Արևմտյան Թրակիայինը և Կարգուքինը, մի ուրիշ օր՝ Ադրբեջանինը, և տակավին մտածում են գնալ ավելի ու ավելի հեռուները: Սա բացարձակ իրականություն է, որ երբեք չենք կարող քողարկել»[1]:

1. **Սալե Զահար** Հրեաները Թուրքիայում և նրանց դերը թուրք-իսրայելյան դաշինքում, Բեյրութ, 1998, էջ 49:

«Մեծ Թուրքիայի» ծրագիրը առաջարկելով որպես թուրանական շարժման, որպես ազգայնամոլ տեսություն և համաշխարհային ծավալապաշտական ծրագիր՝ բոլոր թրքախոս ժողովուրդների միաձուլման միջոցով թուրքական մեկ ազգային դրոշի ներքո, թրքացնելով բոլոր տարածաշրջանները:

Կենդանի դրսևորումներն են այսօր Հայաստանի շրջափակումը, Նախիջևանի հազարավոր խաչքարերի ոչնչացումը, Ջավախքի դեմ դավերը, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարը և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի թուրանական ռազմավարական նշանակության խարդավանքը:

6. Զիա Գեոքալփ

Քուրդ է, Դիարբեքիրից: Անկարայում հրատարակել է «Թուրքիզմի հիմունքները» գիրքը: Նա մասսոնական է՝ սիոնիստական ուղղվածության: Թուրանականության տեսաբաններից մեկն էր:

7. Ուբեյդուլլա

Ծագումով աղվան է, գրել է «Նոր ցեղը» գիրքը, որը տարածում էր անհավատություն և պայքարում էր բոլոր կրոնների դեմ: Եգիպտոսում գտավ գործակիցներ՝ Իսմայիլ ալ Լահամին և Իսմայիլ Մազհարին, որոնք տարածեցին անհավատություն՝ հարձակվելով իսլամության և արաբականության վրա:

8. Ջալալ Նուրի

Գրել է «Ապագայի պատմությունը», որը արտահայտում է թուրանականության գաղափարներ. «Շահերը պահանջում են Ստամբուլի կառավարությանը պարտադրելու սիրիացիներին իրենց երկիրը: Դրանք պետք է վերածել թուրքական գաղութների, պաշտպանել թուրքական երկրներին, որովհետև արաբական նոր սերունդը ազգայնական է և պետք է այժմվանից դրա առաջն առնել»:

9. Յուսուֆ Աքչուրա

Համարվում է թուրանականության առաջին տեսաբանը, թաթար է: Զեն Ալաբդին Թազեֆը, Աղա Օղլու Ահմադը, Հասան Զադան թուրանական առաջին կազմակերպության հիմքերն էին դնում, որտեղից թուրանականները հայերի արյամբ պլիտի ներկեին Անդրկովկասը: Ռուսներին ներկայացնում էին որպես սոցիալիստներ կասկածից հեռու մնալու համար, բայց Օսմանյան կայսրությունը նրանց համար հույս էր, և նրանք գաղտնի կապեր ունեին Բ. Դռան հետ:

1889 թ. Հուսեյին Ալի բեկը հասնում է Բաքու: Թուրանականության արդյունքներից մեկը հայերի ջարդերն էին 1904-1905 թթ.: Ջարդեր են

տեղի ունենում ոչ միայն Բաքվում, Նախիջևանում, Երևանում, Շուշիում, այլև հայաբնակ ուրիշ շրջաններում:

4. ԱՌԱՋԻՆ ԹՈՒՐՔԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

1905 թ. ռուսական հեղափոխությունը նպաստեց թուրանականության զարթոնքին: Առաջին թուրանական վեհաժողովը տեղի ունեցավ նույն թվին, երկրորդ վեհաժողովը՝ 1906 թ. Ս. Պետերբուրգում, երրորդը՝ 1906 թ. Մակարիայում, որտեղ որդեգրվում է թուրանական լեզուն որպես ազգային լեզու բոլոր թուրանցիների համար: Թաթարների, կիրգիզների երեխաները սկսում են սովորել թուրքերենը: Թուրանական ժողովուրդները Դումայում իրենց պատգամավորների միջոցով որոշում են ձայն բարձրացնել ռուսների դեմ: Ցարական կառավարությունը արգելում է նրանց ձայն տալ, Դումայում թուրանների թիվը 43-ից իջեցնում է 10-ի: 4-րդ վեհաժողովը տեղի է ունենում 1911 թ. Սալոնիկում:

Օսմանյան կայսրությունը ապրում էր տագնապալից ժամանակներ իտալական պատերազմի պատճառով: Համագումարը վերածվում է ազգային պաշտպանության խորհրդի՝ առաքելություն ունենալով կամավորներ հավաքել և համոզել ոչ մահմեդականներին մասնակցելու պատերազմին: Համաժողովը տեղի է ունենում նաև Պոլսում 1913 թ.: Իր ճառում Ֆաթիին ընդգծում է տնտեսական զարգացմանը համընթաց օրենքներ մշակելու հրատապությունը: «Օսմանյան կառավարությունը ուզում է տեսնել կայսրության զանազան տարրերի զարգացումը»: Այսպիսի կեցվածքը նահանջ է արձանագրում քաղաքական և տնտեսական նուրբ կացության պատճառով: Կայսրության եվրոպական հատվածի ոչնչացումը և հետադիմական կուսակցության ուժեղանալը ստիպում էր կարծր կեցվածք ընդունել փոքրամասնությունների հանդեպ և տանել բռնի թուրքացման քաղաքականություն: Կուսակցության մի թևն առաջնորդվեց ազգայնամոլ գաղափարներով: Թուրանականները չարաշահեցին մամուլի ազատությունը, որը ռուսական հոկտեմբերյան հեղափոխության գաղափարներից էր. նրանք հարյուրավոր թերթեր հրատարակեցին Բաքվում և Կազանում: Այն կոչվեց առաջնորդական շարժում և արագ տարածվեց Կազանում, Թիֆլիսում, Ղրիմում, Ս. Պետերբուրգում, Աստրախանում: Թերթերը հրատարակվում էին թուրքերեն:

Ցարական Ռուսաստանի մահմեդականները մի կարգախոս ունեին՝ «Թաթարները մեկ նպատակ ունեն. տարբեր ցեղերի միությունը թուրք ազգի մեջ», բայց Ռուսաստանի թուրքերը կարիք ունեին կազմակերպվելու: 1908 թ. սահմանադրության հրապարակման և իթթիհադական հեղաշրջումից հետո կայսրության ներսում և արտերկրում թուրքերը որդեգրեցին թուրքական ազգայնամոլ ծայրահեղ գաղափարախոսություն:

Ահմադ Ֆիֆիկ փաշան և Սուլեյման փաշան համարվում են թուրանականության հայրերը[1]:

5. ԻԹԹԻՀԱԴԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ

1909 թ. Էնվերն ու Թալեաթը 2000 զինյալների հետ գրավում են Բ. Դուռը՝ սպանելով պաշտպանության նախարարին, տիրանում իշխանությանը: 1912թ. հունիսին մի խումբ սպաներ ապստամբում են և իթթիհադականներին դուրս են շպրտում: Բայց վերջիններին հաջողվում է վերադառնալ: Միաժամանակ բուլղարական ուժերը հարձակվում են Կ. Պոլսի վրա և փրկում այն: Ողբալի կացություն է ստեղծվում Չաթալջայի գծում և 75000 բուլղար է տեղահանվում: Ավելի ուշ 700000 հույն տեղահանվում է և 2000000 հայ՝ բնաջնջվում[2]:

Նկատի ունենալով, որ արաբականությունը նշանակում է իսլամություն՝ Մուհամմեդ մարգարեն ազգությամբ արաբ էր, իթթիհադը իսլամությունը ներկեց արաբականության գույնով, և թուրք ազգայնամոլները Կ. Պոլսում հիմնադրեցին «Թուրք օջախ» կազմակերպությունը: Այն նշանակում էր թուրք ընտանիք՝ իսլամությունը ոչնչացնելու և օսմանցի ոչ թուրք տարրերին թրքացնելու նպատակով: 1912 թ. սպաները գտնում են մի նամակ, որ իթթիհադական ղեկավարներից մեկը մյուսին էր հղել. «Թշնամու վրա կրակեք և արեք այնպես, որ նրանցից ձերբազատվեք, քանզի նրանց չլինելը շահավետ է մեզ համար: Բայց լավ պահեք քրդերին, որովհետև նրանց կարիքը կունենանք Հայաստանում»[3]:

«Թուրք օջախ» ակումբին կարող էին միանալ միայն ազգությամբ թուրքերը: Նրանց նպատակն էր ընդգծել թուրք ազգայնամոլությունը,

1. **Զարեվանդ** Անկախ և Միացյալ Թուրանիա, Փարիզ, 1987, էջ 17-19:
2. Նույն տեղը:
3. Նույն տեղը:

հենվելով հին թուրքերի պատմության վրա, երգելով նրանց փառքը և ազգայնամոլ քայլերգերը և թուրք լեզուն մաքրել արաբական և պարսկական բառերից:

Ոմանք կարծում են, որ թուրանականությունը սկսվեց 19-րդ դարի կեսին: Բայց հետազոտությունները փաստեցին, որ այն արմատացած է պատմության խորքում և հայերենի, արաբերենի ու պարսկերենի գործածությունը սելջուկյան և օսմանյան տիրապետության ներսում վարչական անհրաժեշտություն էր և ոչ թե սելջուկյան կամ օսմանյան ազատամտության արդյունք:

Ահա թե ինչու օսմանցիներն իրենց թուրքական պատկանելությունը ընդունում են առանց հպարտության կամ հոխորտանքի: Որովհետև տեսանք, թե ինչ պատահեց, երբ իթթիհադականները հոխորտացին իրենց թրքությամբ, ինչը Օսմանյան կայսրության փլուզման պատճառներից մեկը դարձավ:

Ֆիլիպ Հատին ասում է. «Նրանց ազգային զգացումները շատ հին են, երբ թուրք թափառաշրջիկ ցեղախմբերի ի հայտ գալը մեծ սպառնալիք դարձավ սահմանակից քաղաքակրթված պետության համար՝ Ժիհոն գետի հարավում: Այս թուրքական ցեղախմբերը կործանեցին սույն պետությունը և այն ցեղախմբերը, որոնք եկել էին Կենտրոնական Ասիայից, առաջնակարգ տեղ գրավեցին մահմեդական աշխարհում»:

Օսմանյան կայսրության կողմից ծավալապաշտական քայլ էր Մեծն Թուրանիայի ճանապարհին, նույնիսկ եթե այն միացներ օտար տարրերի մեկ պետության ներքո: Անգամ հիվանդ «Օսմանյան կայսրության մահից հետո, բնակչության թիվը 30000000-ի էր հասնում, որից միայն 8500000-ն էր թուրք, իսկ ընդհանուր բնակչության կեսը՝ հայեր, քրդեր և արաբներ»:

Թուրքերի ազգայնամոլությունը խորանում էր: Աղոթքները դեպի հարավ՝ դեպի Մեքքա ուղղելու փոխարեն հառում էին Արևելք, որտեղ Մեծն Թուրանիան էր: Բալկանյան պատերազմից հետո իթթիհադականները արտոնում են թերթերում հարձակվելու իսլամության, նրա կրոնականների և Մուհամմեդ մարգարեի վրա:

Կտրուկ փոփոխությունների պատճառը «Թուրք օջախի», «Թուրք բելքիթերնի» թուրանական կազմակերպությունների երկու տասնամյակ շարունակվող ջանքերն էին: Այս երկու կազմակերպությունները, նախքան թուրանականության իշխանության գալը, սկսել էին աշխատել ակադեմիայի քողի ներքո, որ կոչվում էր «Բելքիթերնի», ֆինանսավոր-

վում էր թուրք կառավարության կողմից և իթթիհադականների ազդեցության ներքո էր: Սկզբնական նպատակն էր դնել թուրքական մշակույթի և քաղաքականության հիմքերը: «Թուրք օջախը» արգելում էր ոչ թուրքերի անդամակցությունը և սկսեց ռազմական կազմակերպություն հիմնել երիտասարդների և պատանիների համար, ինչպիսին էր «Թուրք կոջիֆ»-ը (թուրքերի ուժը), որ գերմանական «Պֆաթ ֆինդեր» կազմակերպության թուրքական տարբերակն էր: Գերմանացիները մուտք գործեցին նաև աշխատանքային կոլեկտիվներ (մանրավաճառ, նպարավաճառ, բեռնակիր, կառապան և այլն): Նրանք թուրք արհեստավորների և վաճառականների դեմ պայքարելու քաղաքականություն որդեգրեցին: Թուրանականները սկսեցին իրենց թույնը սփռել, ներկայացնելով՝ թե իբր իրենց երկրում տիրապետող են չարաշահվածները, որ իրենց վրա իշխում էին օտարները և իրենք «օտարների երկրում» էին: Այսպես թուրք ժողովրդին պատվաստեցին թույն՝ վրեժխնդիր լինելու այդ «օտարից», որ ապրում է իր երկրում: Այս պատճառով Համաշխարհային առաջին պատերազմում տեսանք, թե ինչպես թուրքերը կառավարության հրամանով սկսեցին վրեժխնդիր լինել հայերից և հույներից: Թուրքական կառավարության բոլոր նախարարները «Թուրք օջախի» ծայրահեղական ազգայնամոլ կազմակերպության անդամներ էին:

1913թ. թուրանիստների համագումարը տեղի է ունենում Բայազետում, թուրքերի և ազերի ներկայացուցիչները դաշինք են կնքում:

Ռուսական կառավարությունը չկարողացավ օգնել հայ կամավորական գնդերին, բայց Հայոց ազգային խորհուրդը կարողացավ զինել և կերակրել այս գնդերին: Հայ կամավորներն էին զինվորական տարիքի չհասած տղամարդիկ՝ կամ ծառայությունից արձակվածներ, կամ նախապես ծառայածներ, կամ հայեր, որ եկել էին հայկական սփյուռքից:

Պետք չէ խնայել հայերին որպես ժողովուրդ և այն ռուս քաղաքացիներին, ովքեր ծագումով հայ էին և ապրում էին ցարական Ռուսաստանում, ովքեր ստիպված էին ծառայել ռուսական բանակում: Հաշվվում էր 150 000 հայ, որ մարտնչեց աշխարհամարտի ռազմաճակատներում: Առաջին կամավորական գունդը Անդրանիկի ղեկավարության ներքո էր, որն ամենամեծն էր՝ 1500 կամավոր: Երկրորդ գունդը Դրոյի հրամանատարությամբ էր, երրորդը՝ Համազասպի, չորրորդը՝ Քեռու: Բոլոր այս գնդերում հաշվվում էր 7000 կամավոր[1]:

1. **Ռ. Հովհաննիսյան** ՀՅԴ արխիվից, Բոստոն, էջ 44:

Պատերազմի սկզբում Նիկոլայ 2-րդը այցելեց Կովկասյան ճակատ: Ամենայն հայոց կաթողիկոսը իր ողջույնի խոսքում ասաց. «Թուրքիայի հայերի խաղաղությունը չի կարող իրականանալ միայն թուրքական լծի վերջնական վերացմամբ և անկախ Հայաստանի հիմնադրումով Մեծն Ռուսաստանի պաշտպանությամբ»: Այս ճառն օգտագործվեց Թուրքիայի կողմից հայերին դավաճան հորջորջելու համար: Բոլորին հակառակ, այս դաշնությունը ռուսների հետ վերաբերվում էր արևելահայերին և ոչ արևմտահայերին: Իսկ թուրքական բանակում կային վրացական, չերքեզական գնդեր, նաև ոչ կանոնավոր քրդական զորամիավորումներ, որոնք կռվում էին ռուսների դեմ: Գոյություն ունեին նաև լեհական և չեխական գնդեր՝ ընդդեմ գերմանացիների: Բայց ոչ ռուսները, ոչ էլ գերմանացիները չբնաջնջեցին հայ ազգին կամ գոնե վրեժխնդիր չեղան:

Էնվեր փաշան, թուրքական 3-րդ զորաբանակի գլուխ անցած, որ հաշվվում էր ավելի քան 100 000 զինվոր, հարձակվում է Սարիղամիշի վրա: Ռուսական բանակը դիմակայում է և ամբողջովին ջախջախում թուրքերին: Այդ հսկա բանակից հազիվ 18 000 զինվոր է փրկվում, որի մեկ երրորդը հաշմանդամ է դառնում: Ռուսական բանակը ներխուժում է Թուրքիա՝ գրավելով Բասենի հովիտը, Ալաշկերտը: Բայց թուրքական հակահարձակումը ուժեղ էր և զինվորական մեծ կենտրոնացում կար Էրզրումում, ինչը պատճառ դարձավ ռուսական բանակի առաջխաղացման կասեցմանը Էրզրում-Սարիղամիշ գծում: Բայց երկրորդ կամավորական գունդը ռուսների հետ շարունակեց առաջխաղացումը Օլթիից դեպի հյուսիս: Թուրքական երրորդ զորաբանակը գտնվում էր Իսսադ փաշայի հրամանատարության տակ: Էնվերը ձգտում էր գրավել Անդրկովկասը՝ կտրելով ռուսական բանակը Կարսից: Նրանք ձգտում էին ինչ գնով էլ լինի ճանապարհ հարթել դեպի Թիֆլիս և Բաքու:

Դեկտեմբերի 22-ին թուրքերին հաջողվում է ձյունամրրիկի մեջ կտրել Սարիղամիշի և Արդահանի ճանապարհը:

1915 թ. հունվարի 4-ին, երբ հայերն ու ռուսները անցնում են հակահարձակման, իրենց առջև միայն 11-րդ զորաբանակն էր գտնվում, իսկ օսմանյան բանակը նահանջում էր Էրզրում: Հունվարի 7-ին Էնվերը թողնում է 3-րդ զորաբանակի ղեկավարությունը և վերադառնում Կոստանդնուպոլիս: 90000 թուրքական բանակից մնում է 15 000-ը: Ըստ որոշ աղբյուրների՝ հազիվ 10 000 զինվոր է վերադառնում ճակատից: Պատերազմի և համաճարակների պատճառով մահանում է 75 000-85 000 թուրք: Հայ կամավորական գնդերի զինվորների մեկ երրորդը զոհվում կամ վիրավորվում է:

Թուրքերի պատերազմը Արևելյան ճակատում ձախողման էր մատնված: Էրզրում-Կարս գծի հյուսիսում թուրք գնդապետը հասնում է Եփրատից մինչև Ղարաքիլիսա: Նոյեմբերի 22-ին 10-րդ զորաբանակը Բաղդադից հասնում է և բախվում ռուսների հետ: Թուրքերը նոր օգնություն ստանալուց հետո փորձում են պաշարել ռուսական բանակը, բայց անհաջող: Հարավում զորքը անցնելով թուրքական սահմանը և գրավելով Բայազետը, սպառնում է Վանին: Մնում է պարսկական Ադրբեջանը, որի մայրաքաղաք Թավրիզը բանալին է դուրս գալու համար Կասպից ծով և արշավելու ռուսական Ադրբեջան: Երիտասարդ թուրքերը, օգտագործելով Պարսկաստանի ներքին ապստամբությունները, հարձակվում և գրավում են Պարսկաստանի արևմտյան մասը:

Ռուսները հարձակվում են Ջուլֆայի և Խոյի վրա:

Ռազմաճակատը անփոփոխ է մնում մինչև ձմռան վերջը: Ռուսները առաջանալու հնարավորություն ունեին, բայց այն չեն օգտագործում: Սպառնում են Էրզրումին հյուսիսից, իսկ Վանին՝ հարավից: 1915 թ. փետրվարին ֆրանսիական և անգլիական ռազմանավերը պատրաստ էին մտնելու նեղուցները: Կացությունը լարվում է Կոստանդնուպոլսում: Սուլթանն իր կառավարության անդամների հետ պատրաստվում է թողնել մայրաքաղաքը: Իթթիհադ ղեկավարները գիտակցում են, որ դաշնակիցների ռազմանավերի ժամանումը Մարմարա ծով իրենց անկման պատճառ էր հանդիսանալու:

Մարտի 18-ին ֆրանսիական և անգլիական ձախողումից հետո Փարիզն ու Լոնդոնը հրաժարվեցին նեղուց մտնելու գաղափարից և ուղղվեցին դեպի Գալիպոլի թերակղզի: Դարդանելի ծովային հարձակման ծրագիրը ռազմավարական նշանակություն ուներ արևմտյան ճակատում, մանավանդ Ֆրանսիայի համար: Ռուսաստանի հաջողությունը պատճառ հանդիսացավ, որ ուրիշ երկրներ ևս մտնեն պատերազմի մեջ, ինչպիսիք են Իտալիան և բալկանյան պետությունները: Նեղուցների վրա հարձակվելու գաղափարը զիջելով և դեպի Գալիպոլի թերակղզին ուղղվելով՝ դաշնակիցները թուրքերին շունչ քաշելու հնարավորություն տվեցին:

6. ԴԱՎԵՐ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Անգլիացի պատմաբան Ստին Ուտսոնը 1917 թ. հրատարակված իր «Բալկանյան երկրների ազգային զարթոնքը» գրքում գրում է. «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ոչ թուրք է, ո՛չ մահմեդական, ավելացնելով, որ «այս կազմակերպության բոլոր հիմնադիր ղեկավարները, առանց բացառության, հրեաներ էին, որ իթթիհադականները ֆինանսավորվում էին Սալոնիկի հրեա մեծահարուստների կողմից և համաշխարհային հրեական դրամագլխով»: Նույն գաղափարն էր արծարծում հայտնի պատմաբան Առնոլդ Թոյնբին. «Սալոնիկի հրեաները կազմում են «Միություն և առաջադիմություն» կազմակերպության հիմնական մասը»:

Կոստանդնուպոլսում մեծ Բրիտանիայի հյուպատոս Սիր Լոզրը իր բոլոր դիվանագիտական տեղեկանքների մեջ, որ ուղարկել էր արտաքին գործերի նախարարություն, իթթիհադականներին ներկայացնում է որպես հրեական կազմակերպություն և երիտասարդ թուրքերի կառավարությունը՝ որպես հրեական կառավարություն: Թուրք պատմաբանները մերժում են իթթիհադականների և սիոնականների միջև եղած կապերը: Շուքրի Հունի Օղլուն գտնում էր, որ իթթիհադականների ղեկավարությունը կազմված էր երկու մասսոնական օթյակներից: Մասսոնականությունը կարևոր դեր խաղաց Կարմիր սուլթան Աբդուլ Համիդի տապալման գործում, երբ վերջինս մերժել էր Պաղեստինը զիջել հրեաներին, որովհետև այն համարում էր Օսմանյան կայսրության մաս[1]:

Ֆրանսիան և Անգլիան դավաճանեցին իրենց դաշնակիցներին՝ հայերին և հույներին, պահպանելու համար տնտեսական շահերը: Ըստ Լոնդոնի դաշնագրի, որ ստորագրված է 1921 թ. մարտի 9-ին, Ֆրանսիան Թուրքիային զիջեց հայկական Կիլիկիան: Մեծ Բրիտանիան օգտագործեց համաթուրանականությունը ստեղծելու համար հակախորհրդային դաշինք, վախենալով համայնավարության տարածումից Թուրքիայում: Լոնդոնում Ժորժ Լուիզը խոստացավ Թուրքիայի ներկայացուցիչ Սամի Բաքիրին տալ ամբողջ Անդրկովկասը, փոխարենը Թուրքիան պետք է կասեցներ իր բանակցությունները Մոսկվայի հետ:

---

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ քաղաքականութիւնը, Բեյրութ, էջ 128:

Անգլիացի երեսփոխան Անուրի Վիլյամսը խորհրդարանում հայտարարում է Մեծ Բրիտանիայի դավաղիր դերի մասին. «Մենք գիտենք, որ անգլիացի ազգը պարտատեր է Հայաստանի հանդեպ, որովհետև դժբախտաբար բազմիցս նրա ազատությանը խոչընդոտ էր հանդիսացել, մանավանդ, երբ ռուսները ուզեցին ազատագրել Հայաստանը թուրքական լծից»: Նրա գործընկերը՝ Նոյել Բաքստոնը, հայտարարեց. «Մեզ պետք է մի պահ մտածել այն ողբերգական դերի մասին, որ խաղացինք, և այն մեծ պարտքի մասին, որ ունենք հայ ժողովրդի հանդեպ»: Սկզբում թուրքերը հույների հանդեպ զգուշավոր էին և վախենում էին, որ նրանք կմիանան դաշնակիցներին: Եվ սա այն էր, ինչ պատահեց 1917 թ. ի վեր: Կացությունն այլ էր հայերի հարցում, որոնք կարողացան իրենց պետությունն ունենալ 1918 թ. մայիսին: Հայերը քաջությամբ և հավատարմորեն մարտնչեցին օսմանյան բանակում: Բայց թուրքերն արդեն որոշել էին ոչնչացնել հայ ժողովրդին: 1915 թ. հունվարին օսմանյան բանակի հրամանատարությունը հետևյալ գաղտնի հեռագիրը ստացավ. «Նկատի ունենալով ներկա կացությունը՝ հայ ժողովրդի բնաջնջումը որոշված է կայսերական հրամանագրով և այն գործադրելու համար պետք է կատարել հետևյալը.

1. Օսմանյան կայսրությունում բնակվող 5 տարեկանից բարձր բոլոր հայերը պետք է դուրս բերվեն քաղաքներից ու սպանվեն:

2. Օսմանյան բանակում բոլոր հայ զինվորներին պետք է զինաթափել, նրանց հեռացնելով իրենց գումարտակներից՝ պետք է առաջնորդել անմարդաբնակ վայրեր՝ աչքից հեռու և գնդակահարել:

3. Օսմանյան բանակի բոլոր հայ սպաներին պետք է բանտարկել և այս հրահանգներից 48 ժամ հետո նրանց գնդակահարել»:

Այսպիսին էր աշխարհի ռազմաքաղաքական իրավիճակը, թուրքերի ազգային ծրագրերն ու քաղաքական գաղափարախոսական հենքը, երբ իրականացվեց արևմտահայության բնաջնջումը:

Ըստ Թալեաթի՝ տեղահանությունը պատերազմի ընթացքում բացառիկ միջոցառում էր պետական անվտանգություն ապահովելու համար և արվել էր ռուսական բանակի կազմում մարտնչող «հայերի դավաճանությունից» հետո: Ըստ նրա՝ այդ դավաճանությանը ավելանում էր նաև Վանի ինքնապաշտպանությունը, հայերը ձգտում էին փրկվել ցեղասպանությունից: Վանի բնակիչների թիվը 50 000 էր, որից 30 000-ը հայեր էին և բնակվում էին քաղաքի արևելյան մասում: 1914 թ. հուլիսին Վանի

նահանգապետ Թահսին փաշան, որ արդար մարդ էր, փոխարինվում է Ջեմալ փաշայով, որ Էնվեր փաշայի փեսան էր, դարձավ նաև թուրքական ճակատի հրամանատար՝ ամբողջ սահմանի երկարությամբ: Մարդիկ նրան անվանում էին Բաշկալեի պայտագործ, որովհետև Բաշկալեի հայերի ոտքերին պայտ էր գամել, չարչարելով նրանց նախքան ջարդելը: Մի արյունարբու, որ ճանաչված էր Պարսկաստանում, որտեղ ջարդել էր հայերի, ասորիների, գալիացիների Սալմաստում և Խոսրովոյում: Կացությունը լարված էր Վանում: Ջեմալը պահանջում է Վանի հայերից հանձնել 3 000 կովող իրենց զենքերով: Թուրքերը ռուսների նահանջից հետո ներխուժում են Վանա լճի հարավային շրջանի գյուղերը և երեք օրվա ընթացքում 1915 թ. ապրիլի 15-18-ը ջարդում 24 000 հայերի: Բախումներ են տեղի ունենում Վանա լճի հարավում թուրքերի և Շատախի հայերի միջև: Ջեմալը պահանջում է երեք պատասխանատու հայ ղեկավարների՝ Իշխանին, Արամ Մանուկյանին և պատգամավոր Վռամյանին, որ գան և բանակցեն: Ապրիլի 16-ին Իշխանը Վասպուրականի գյուղերից մեկում սպանվում է թուրքերի կողմից, Վռամյանը ձերբակալվում է, իսկ Արամ Մանուկյանին հաջողվում է վերջին ղոպեին փրկվել: Թուրքերը սկսում են պատրաստել խրամատներ Վանի հայկական թաղամասի շրջակայքում: Հայերն էլ իրենց հերթին պատրաստում են իրենց պաշտպանական խրամատները: Թուրք ոստիկանները առևանգում են մի հայ կնոջ: Երկու հայ հեղափոխականներ միջամտում են և սպանում հայ կնոջը առևանգող ոստիկաններին: Ապրիլի 20-ին կռիվ է սկսվում թուրքական բանակի և հայերի միջև: Հայերը հազիվ 1 500 կովող ունեին, ընդամենը 300 հրացան և քիչ քանակով փամփուշտ: Չնայած թուրքական ռմբակոծումներին, հայերը հերոսաբար դիմադրում են: Թուրքերը ներխուժում են քաղաքի շրջակայքում գտնվող գյուղերը՝ ջարդելով հայերին և հրկիզելով նրանց տները: Ջեմալը թույլատրում է 10 000 հայ փախստականների մուտքը հայկական թաղամաս, որպեսզի պաշարվածների սննդամթերքը հնարավորինս շուտ վերջանա: Մեկ ամսվա ընթացքում հայկական թաղամասը կատաղի ռմբակոծվում է: Չնայած սրան, հայերը հերոսաբար շարունակում են դիմադրությունը և նույնիսկ նրանց հաջողվում է գրավել կառավարական որոշ շենքեր:

Դրախտներ թաղամասի 4 000 հայ ապաստանում է ամերիկյան կրոնական առաքելությունում: Պաշարները ու ռազմամթերքը վերջանում են, հայերը խնդրում են ռուսական բանակի և նրա հետ մարտնչող կամավո-

ական գնդերի օգնությունը: Մայիսի 4-ին 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական գնդերը ներխուժում են սահման: Մայիսի 15-ին նրանք ռուսական բանակի օգնությամբ մտնում են Վան: Վալին իր զորքով փախչում է Վանա լճից հարավ: Հայ հեղափոխականներն արդեն գրավում են Վանի միջնաբերդը և բոլոր պետական հիմնարկների շենքերը: Արամ Մանուկյանը Վանի կառավարիչ է ընտրվում: Անդրանիկը գրավում է Բիթլիսը: Թուրքերը նոր օգնություն ստանալուց հետո հուլիսի կեսերին հակահարձակման են անցնում: Ռուսական բանակը հարկադրված է լինում հուլիսի 31-ին նահանջել: Գեներալ Նիկոլանն իր հետ է տանում 250 000 հայ գաղթականի: 40000 հայ մահանում է գաղթի ճանապարհին: Անդրկովկաս է հասնում 210 000 հայ:

Մուհամմեդ Էմինը հպարտանում էր. «Մերն են այդ լայնատարած երկրները, որ ընկած են երեք ցամաքների վրա»[1]:

Ա. Սուաղը հպարտանում էր. «Ավելի դժվար աշխատանք չկա, քան անսահման երևակայությամբ սահմանագծել մեր թուրանական աշխարհի իսկական դեմքը»[2]:

Սամի Գոհեն. «Հայաստանի հետ Թուրքիայի քաղաքական կապեր հաստատելու այլևս պայման ըլլալով՝ բերանի ծամոն առաջարկներ կը նշե.

1. Հայաստանի ցեղասպանութեան պնդումին Թուրքիոյ կողմե ընդունման պահանջե հրաժարվիլը.

2. Հայաստանի կողմե գրավված Ազրպեճանական հողերու վերադարձնելը»[3]:

Այս ծավալուն ժողովածուն պարունակում էր գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատանքներ: Նույն ժամանակ լույս տեսավ Հայկազ Ղազարյանի «Ցեղասպան թուրք» բացառիկ նշանակությամբ գիրքը: Ապագայում այդ գործին լծվեցին խորհրդահայ ուսումնասիրողները: Առաջինը ակադեմիկոս Մ. Ներսիսյանի «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստագրական ժողովածուն, ապա Ջ. Կիրակոսյանի «Արևմտահայությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» գիտական բարձր մակարդակ ունեցող ուսումնասիրությունը, նաև «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորը: Հետաքրքիր գործեր են ստեղծել նաև վաստակա-

1. **Զարդարեան Պ.** Թուրք ազգ մը գոյություն ունի, էջ 92:

2. Ն. տ., էջ 95:

3.«Նայիրի», 7-ը մայիսի, 2002, արտատպված «Միլիեթից»:

շատ պատմաբաններ Ռ. Սահակյանը, Հր. Սիմոնյանը, Արմ. Կիրակոսյանը, Հ. Ղազարյանը և այլք: Ներկայումս էլ արտասահմանում տքնում են Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության նահապետը՝ Ռ. Հովհաննիսյանը, և արդեն ավելի քան 40 տարի այդ գործի առաջատարը՝ Վ. Տատրյանը:

Սակայն հաստատել, թե Հայաստանում և հայերի շրջանում համաչափ ու եռանդուն աշխատանք է տարվում ցեղասպանության պատմության, և դրան առնչվող շատ հարցերի շուրջ, ճիշտ չի լինի: Մասնավորապես կաղում են գիտական ուսումնասիրությունները՝ թե քանակով և թե որակով: Մենք ստեղծել ենք Հայոց ցեղասպանությանը նվիրված մոտ երեք տասնյակ աշխատանքներ, մինչդեռ հրեաների իրականացրած ուսումնասիրությունների թիվն անցնում է հազարից: Ընդորում, ցեղասպանության տեսության մշակման նախաձեռնությունը նույնպես հրեաների ձեռքում է: Սխալ է նաև հայերի պասիվությունը ուրիշ երկրների համապատասխան մասնագետների հետ ցեղասպանության պատմության ուսումնասիրության գործում:

Արմատական բնույթի վերակառուցում է պահանջում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Այն պարտավոր է հիմնախնդրի պահանջներից ելնելով վերակառուցվել: Ցեղասպանություն բոլոր ժողովուրդները «չեն ճաշակել». այդ հարցում հայությունն իսկապես առաջին տեղում է: Թվում էր, թե Հայաստանը կձգտի ցեղասպանության հիմնահարցը աշխարհին ներկայացնել գիտական բարձր մակարդակով: Հայ պատմաբանները, ոչ առանց հիմքի տասնամյակներ շարունակ դժգոհել են, որ իշխանությունները չեն թույլատրում և հնարավորություն չեն տալիս աշխարհով մեկ քարկոծվող այդ հիմնահարցը իրոք գիտաքաղաքական ժամանակակից մակարդակի բարձրացնելու: Հոլոքոստի շուրջ հրեաները ծավալեցին քարոզչական, գիտական, հրատարակչական այնպիսի հզոր շարժում, որը, եթե այդպես պարկեշտ է ասել, լի ու լի փոխհատուցվեցին՝ այդ ժողովուրդը ստացավ ամեն ինչ՝ նախ հայրենիք, ապա սոցիալ-տնտեսական ու քաղաքական թռիչքային զարգացման նախադեպը չունեցող նյութական և բարոյական օգնություն, ինչը արդի Իսրայելին կարճ ժամանակամիջոցում վերածեց աշխարհի ամենազարգացած երկրներից մեկի: Իսկ ի՞նչ կատարվեց Հայոց ցեղասպանությունից հետո: Նախ՝ դրա շուրջը համաշխարհային լռություն՝ տնտեսական և քաղաքական հետամնացություն, աղքատություն, իրավազրկություն...

տարբեր ձևերով Մեծ եղեռնի ժխտում: Չկա մարդկության պատմության մեջ և ժամանակակից աշխարհում մի այլ դեպք, որը ուրիշ ժողովուրդների մեջ առաջացնում է ոչինչ չտվող ցավակցություն կամ գլուխ ցավացնողի խղճահարություն: Եթե հոլոքոստի ենթարկված Իսրայելը վերածնվեց որպես աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը, ապա Հայաստանը շարունակում է մնալ կիսագաղութ, միջազգային ասպարեզում խամաճիկի կարգավիճակով: Խորհրդային Միության փլուզումը Հայաստանի համար նշանակեց և շարունակում է մնալ տնտեսական անկում, սոցիալական անորոշություն, քաղաքական իշխանության թուլացում, միջազգային կյանքում խամաճիկային իրավիճակի խորացում: Թուրքիան Երկրորդ աշխարհամարտից հետո դարձել է հզոր տերություն, որի համար հիմք են հանդիսանում նմանը չունեցող աշխարհագրական դիրքը, տնտեսական և քաղաքական զարգացման անսպառ հնարավորությունները, յոթանասուն միլիոնի հասնող ազգաբնակչությունը, աշխարհի ամենահզոր բանակներից մեկը և այլն:

Այս և նման իրավիճակը անխիղճ է, անարդար և պահանջում է բոլորիցս միանգամայն այլ մոտեցումներ ու սեփական ժողովրդի վաղվա օրվա հանդեպ գերագույն պատասխանատվություն: Այդ վերաբերվում է ոչ միայն Հայաստանի ղեկավարությանը, այլև ամբողջ ժողովրդին, մասնավորապես այն օղակներին, որոնք իրենց անգամ ծնունդով, ամենօրյա գործունեությամբ հարցը հանեն լայն ճանապարհ: Մեզնից յուրաքանչյուրը, երկրի ղեկավարությունն առաջին հերթին, հրաժարվեն Հայոց ցեղասպանության շուրջ տասնամյակներ շարունակվող երեսպաշտությունից: Ինչ վերաբերում է ցեղասպանության թանգարանի գործունեության վերակառուցմանը, ապա այլևս չի կարելի հանդուրժել Մեծ եղեռնի պատմության հիմնախնդրի հանդեպ գերիշխող ձևականությունը, գիտական ու քարոզչական անթույլատրելի ցածր մակարդակը, թանգարանը պետք է հրաժարվի ուսումնասիրությունների իմիտացիայից: Պետք է ստեղծվի Մեծ եղեռնի և ցեղասպանության պատմության ուսումնասիրության խոշորագույն գիտական կենտրոն՝ հագեցած բարձրորակ (նաև ոչ հայ) մասնագետներով, ժամանակակից համապատասխան տեխնիկական միջոցների արդյունավետ, գիտական վերջին խոսքով հագեցած նորամուծություններով: Ի դեպ, այս ամենում ամենակարևորն ու ամենադժվարը բարձրորակ մասնագետների խնդիրն է, որը կպահանջի ոչ միայն երկար ժամանակ այլ նաև կապիտալ խոշոր միջոցներ:

Որքան էլ ծանր լինի Հայաստանում գիտական խոշոր կենտրոնի ստեղծումը, այնուամենայնիվ, այն հայ ժողովրդի համար առաջնային խնդիր է: Հարկ է խորապես ըմբռնել, որ թե ցեղասպանություն իրականացնելու մտահանգումը, թե դրա նախապատրաստումն ու իրականացումը, առավել ևս ընդունումը, պահանջում է Հայաստանի կողմից քաղաքական-ռազմական, քարոզչական-բարոյական բարդ ու վտանգավոր քայլեր:

7. ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Սպանությունները, այդ թվում նաև զանգվածային բնաջնջումները, նույնքան վաղեմի պատմություն ունեն, որքան ինքը՝ մարդը: Մարդու արարման եղանակը մեկն է, իսկ ոչնչացմանը՝ բազում: Օրինակ, քոչվորները ոչնչացնում էին ամբողջ ցեղեր՝ իրենց անասուններին արոտավայրերով ապահովելու համար: Օսմանյան սուլթաններից Մուհամմեդ 1-ինը իր 350 կանանց միմյանց կապած ծովը նետեց՝ կասկածելով դավաճանության մեջ: Թամերլանը մարդկանց գանգերից մզկիթներ ու աշտարակներ էր կառուցում: Կաթոլիկները խարույկների վրա այրում էին «հերձվածողներին», յակոբինները ոչնչացման համար ստեղծեցին գիլյոտինը, իսկ ամերիկացիները՝ Լինչի դատաստանը:

Վառոդի հայտնագործությանը հետևեցին ոչնչացման բազում նոր եղանակներ ու միջոցներ: 20-րդ դարը ծնեց միջուկային ու քիմիական զենքեր: Ներկայումս էլ, երբ մարդկության կեսը կիսաքաղց է, իսկ գոյություն ունեցող սպառազինություններն ի վիճակի են 5-7 անգամ ոչնչացնել Երկիր մոլորակի բնակչությանը, նյութական հնարավորությունների հիմնական մասը ծախսվում է զենքերի արտադրության, բնաջնջման է՛լ ավելի հզոր միջոցների ստեղծման վրա: Որպես կանոն, դրանով զբաղվել ու զբաղվում են մարդկության ամենահզոր ուղեղները, այդ բնագավառը մշտապես եղել է գիտատեխնիկական առաջընթացի գլխամասում:

Սակայն մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը չեն եղել (կամ գրեթե չեն եղել) բնաջնջման ծրագրավորված գործողություններ, և մարդկանց ոչնչացումները եղել են քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական ձեռնարկումների ուղեկիցներ, միջոցներ կամ հետևանքներ:

Ըստ այդմ էլ, բնաջնջման եղանակներից են.

-Պատերազմները՝ բնաջնջման ու ոչնչացման ամենատարածված ու

ամենահին ձևը: Բաղդադը գրավելու ժամանակ Թամերլանը սպանեց 100 հազար մարդ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ոչնչացվեց 50 մլն մարդ:

-Ահաբեկչական գործողությունները, որոնք կոչված են լուծելու այլևայլ սոցիալ-քաղաքական խնդիրներ: 1876 թ. թուրքական զորքերը ոչնչացրին 60 հազար բուլղար: Պատմության ընթացքում բազմաթիվ կոլեկտիվ ու անհատական բնաջնջումներ են իրականացվել, որոնք խլել են միլիոնավոր մարդկային կյանքեր:

-Ոչնչացումները գաղափարախոսական նկատառումներով, ինչպիսիք են օրինակ, հավատաքննությունները:

-Ոչնչացումները քաղաքական նկատառումներով, օրինակ Բարդուղիմեոսյան գիշեր, բնիկների բնաջնջումներ Ամերիկայում, Հնդկաստանում, ստալինյան ռեպրեսիաներ:

Այսինքն՝ դեռ հին ժամանակներից պատմությանը հայտնի են էթնիկական խմբերի բնաջնջման բազում ձեռնարկներ, քաղաքական, կրոնա-գաղափարախոսական, ռասայական, լեզվական ու այլ պատճառներով: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսից բնաջնջման առանձին գործողությունները ստացան միանգամայն այլ բնույթ ու նպատակադրում:

Ազգերի ձևավորումը՝ ազգայնամոլության գերակայությունը պայմանավորեցին «գերազգայնական իշխող վերնախավերի աննախադեպ վայրագ կատաղության» դրսևորում, որը և հիմք հանդիսացավ նոր ժամանակներում ոչնչացումների բնույթի համար: Զարդարարների տրամաղության տակ գնալով ավելանում էին ոչնչացման ավելի կատարելագործված միջոցները, ընդորում, ցեղասպանությունները ունենում են կազմակերպչական-տեխնիկական առանձնահատկություններ՝ պլանավորում, համապարփակության տեխնոլոգիական մտահղացում, ժամկետների և իրականացման եղանակների կատարելագործման հանդեպ առանձնակի ուշադրություն, գաղափարախոսական-քաղաքական հիմնավորվածություն և այլն:

Չշարունակենք. միայն շեշտենք, որ որքան բարդ ու բազմաբնույթ է ցեղասպանության նախապատրաստությունն ու իրականացումը, նույնքան էլ դժվար է այն ընդունելու մարտավարությունը:

Նաև դրանով է բացատրվում ցեղասպանության ենթարկված ժողովրդի պատմության և քաղաքական, մշակութային, տնտեսական զարգացման հիմնահարցերի խեղաթյուրումը հօգուտ իր հանցագործության ար-

դարացման: Հենց այստեղ էլ պետք է փնտրել «Ինչո՞ւ են կեղծում պատմությունը» հարցի պատասխանը:

Թուրքերի հրատարակած **«Ինը հարց, ինը պատասխան» գրքույկի 5-րդ հարցը**՝ «Թուրքերը ցանկացել ու ձեռնարկե՞լ են հայության սիստեմատիկ կոտորածները 1915 թվականին»:

«1914-ի նոյեմբերի 1-ին օսմանների մուտքը Առաջին համաշխարհային պատերազմ, գերմանացիների և ավստրո-հունգարացիների կողքին դաշնակիցների դեմ, հայերի կողմից գնահատվեց որպես այնքան սպասված առիթ»: Լուիզա Նալբանդյանը գրում է, որ «Հայ հեղափոխական կոմիտեները շատ կարևոր էին գնահատում պահը, սկսելու համար ընդհանուր ապստամբությունը և հասնելու իրենց նպատակներին, երբ օսմանյան պետությունը պատերազմական վիճակի մեջ պիտի լիներ, և հետևաբար քիչ չափով պիտի կարողանար դիմադրել ներքին ըմբոստությանը:

Պատերազմի նախօրեին, դեռ 1914-ի օգոստոսին, օսմանյան ղեկավարությունը Էրզրումում հանդիպում ունեցավ դաշնակցականների հետ՝ հույս ունենալով պատերազմի պարագային հենվել նրանց վրա: Դաշնակցականները խոստացան, որ նման իրավիճակում օրինավոր կերպով կկատարեն իրենց պարտականությունը օսմանյան բանակում:

Այնուհանդերձ, նրանք պակաս չափով պիտի հարգեին այս խոստումը, որովհետև դաշնակցության այս կոնգրեսից առաջ՝ 1914-ի հունիսին տեղի ունեցած մի հավաքույթի ժամանակ, որոշում էին ընդունել մոտալուտ պատերազմի ընթացքին ապստամբության անցնել»:[1]

Ցարական բանակներում զինվորագրված ռուսահայերը պատրաստվում էին հարձակվել օսմանների վրա առաջին իսկ առիթի դեպքում: Էջմիածնի կաթողիկոսը վստահեցրեց Կովկասի ռուս կառավարիչ-գեներալ Վորոնցով Դաշկովին, որ «եթե ռուսները հարկադրեն օսմաններին իրականացնել հայկական բարենորոգումները, փոխարենը բոլոր ռուսահայերն առանց պայմանի պիտի միանան ռուս ազգին, պատերազմի ժամանակ մղած նրանց բոլոր ջանքերին»:[2]

Որպես հետևանք այս հավաստիացման, Թիֆլիսում կաթողիկոսն ընդունվեց ցարի կողմից և այս հանդիպման ժամանակ ասաց, որ «Անատո-

1. «Հայկական հեղափոխական կոմիտեների ձգտումները և ներշնչումներն օսմանյան սահմանադրության հռչակումից առաջ և հետո...», Իսթամբուլ, 1917, էջ 144-146:

2. **Չալղուշյան Գր.** Կարմիր գիրք, Փարիզ, 1919, էջ 12:

լիայի հայության ազատագրումը պիտի տաներ դեպի Ինքնավար Հայաստանի ստեղծումը, առանց կախում ունենալու Թուրքիայից, և որի գոյությունը երաշխավորված լիներ Ռուսաստանի խնամակալությամբ»:[1]

Երբ ռուսները պատերազմ հայտարարեցին օսմանյան տերության դեմ, դաշնակցությունը իր պաշտոնական օրգան «Դրոշակի» միջոցով հայտարարեց.

«Հայությունը առանց նվազագույն վարանման դաշնակից պետությունների կողքին է: Նրանք իրենց բոլոր ուժերը դրել են Ռուսաստանի տրամադրության տակ և ներկայիս կազմակերպում են կամավորական գումարտակներ»:[2]

Դաշնակցական կոմիտեն հետևյալ հրամանը տվեց բոլոր կազմակերպություններին. «Թուրքիայում պատրաստ լինել ապստամբության, հենց որ ռուսներն անցնեն սահմանը, և որ օսմանյան բանակները բռնեն նահանջի ճանապարհը, դուք պարտավոր եք ամեն տեղ ապստամբել: Այսպես օսմանյան զորքերը պիտի ընկնեն երկու կրակի միջև: Եվ եթե լինի ընդհակառակը, նրանք՝ թուրքերը առաջանան ռուսական բանակների վրա, հայ զինվորները պիտի դասալքեն՝ իրենց հետ տանելով զենքերը, կազմավորվեն որպես առանձին անկանոն միավորումներ և միանան ռուսներին»:[3]

Ինչ վերաբերում է հնչակյան կուսակցությանը, հետևյալ հրահանգները տվեց Օսմանյան կայսրության տարածքում ապրող իր անդամներին.

«Հնչակյան կուսակցությունը բոլոր միջոցներով պետք է օգնի դաշնակից պետություններին: Որպես դաշնակից՝ հատկապես Ռուսաստանին, իր բոլոր ուժերը պիտի ներդնի պայքարելու, հասնելու համար հաղթանակի. Հայաստանում, Կիլիկիայում, Աղրբեջանում և Կովկասում»:[4]

Օսմանյան խորհրդարանի Վանի պատգամավոր Փափազյանը, որը պիտի դառնար օսմանների դեմ դիմադրության առաջնորդներից մեկը, հրապարակեց մի ուղերձ, ըստ որի. «Կովկասի հայ կամավորական գն-

1. **Չալղուշյան Գր.** Կարմիր գիրք, Փարիզ, 1919, էջ 12:

2. **Esat U.** Farihte Ermeniler ve Ermeni Meselesi. Ankara, 1950, s. 594.

3. **Մեհմետ Հոջաօղլու** Պատմության մեջ հայկական... և հայերը (թուրքերեն), Իսթամբուլ, 1976, էջ 570-571:

4. «Հայկական հեղափոխական կոմիտեների ներշնչումներն ու ձգտումները», էջ 151-153:

դերը պարտավոր են պատրաստ լինել պայքարի, ծառայել որպես առաջապահ միավորներ ռուսական բանակների համար... որտեղ ապրում են հայեր, նպաստել Անատոլիայում նրանց առաջխաղացմանը և միանալ տեղական հայկական զորամիավորումներին»:[1]

Երբ ռուսական զորախմբերը մտան օսմանյան տարածքները և առաջացան Արևելյան Անատոլիայում, նրանք առաջնորդվեցին ռուսահայերի և տեղական հայերի կամավորների կողմից, որոնց միացան թրքական բանակի հայ դասալիքները: Շատերը այս վերջիններով նախընտրեցին համալրվել և մղել պարտիզանական կռիվներ, օգտագործելով այն ռազմամթերքը, որոնք տարիների ընթացքում թաքցրել էին դպրոցների և եկեղեցիների մեջ, կողոպտելով թուրքական պարենավորման կետերը, զրկելով թուրքական բանակների զորաշարժերը ընդդեմ ռուսական զանգվածային ներխուժման: Պատերազմի սկզբից մի քանի ամսվա ընթացքում այս միավորումները, սերտորեն համագործակցելով ռուսների հետ, դաժան հարձակումներ գործեցին արևելյան շրջանների բնակավայրերի վրա, անխնա կոտորեցին բնակիչներին, կատարեցին բազմաթիվ վնասարարական գործողություններ, թուլացնելու համար բանակի կարողությունները, հեշտացնելու ռուսական առաջխաղացումը, քանդելով ճանապարհներն ու կամուրջները, կողոպտելով քարավանները և այլն:

Հայ կամավորների խժդժությունները այնքան ծանր էին, որ ռուսական հրամանատարությունն անձամբ նրանց հարկադրեց հեռանալ ճակատից՝ նրանց օգտագործելով թիկունքում:

Բազմաթիվ են այն ռուս սպաները, որոնք թողել են հուշեր հայ կամավորների կատարած բարբարոսությունների մասին:[2]

Թուրքերն ու մյուս մուսուլման բնակչությունը չէին միայն, որ ենթարկվեցին դաժան հաշվեհարդարի: Հայկական ապստամբությունները հույների և հրեաների հավանությանը չարժանացան, նրանք հակամետ չէին նրանց հեղափոխական ծրագրերին: Նրանք Տրապիզոնում և շրջաններում կոտորեցին հազարավոր հույների, իսկ Հաքքարի շրջանում հրեաներին հավաքեցին և չեզոքացրին:[3]

1. **Esat U.** Farihte Ermeniler ve Ermeni Meselesi. Ankara, 1950, s. 596-600.

2. «Էրզրումի ռուսական միջնաբերդի երկրորդ հրետանային գնդի պատերազմի պատմությունը», 1919:

3. Chemoz Cacha, նշվ. աշխ.,էջ 41 և 49:

Այս խժդժությունների նպատակը պարզ էր. այն շրջաններում թողնել միայն հայերի, որպես հայկական ապագա պետության կորիզ: Բոլոր ոչ հայերին կոտորեցին և կամ փախուստի մատնեցին, որպեսզի մնա հայկական մեծամասնություն:

Ներկայացնում է Թալեաթը:[1]

Առաջին հայ միավորումները, որոնք անցան սահմանը ռուս նվաճողների հետ, օսմանյան խորհրդարանի Էրզրումի դեպուտատ Գարեգին Բաստրմաջյանի հրամանատարությամբ էին, որը որդեգրել էր Արմեն Գարո կեղծանունը: Մի այլ նախկին օսմանյան խորհրդարանական Համբարձում Պոյաջյան «Մուրադ» ծածկանունով, պարտիզանական խմբավորումների ղեկավար, որը պաշարման տակ էր առնում թուրքական գյուղերը, հրամայելով հատկապես «սպանել նույնիսկ թուրք երեխաներին, որովհետև նրանք վտանգ են ներկայացնում հայ ազգի համար»: Մի այլ նախկին պատգամավոր՝ Փափազյանը ղեկավարեց հեղափոխական խմբերը, որոնք գործում էին Վանում, Բիթլիսում և Մուշի շրջաններում:

1915-ի մարտին ռուսական ուժերը շարժվեցին Վանի վրա: Մարտի 11-ին Վանի հայությունը ապստամբեց և կոտորեց շրջանի բոլոր թուրքերին, հեշտացնելու համար ռուսական նվաճումը: Զարմանալի չէ, որ ցար Նիկոլայ Երկրորդը 1915-ի ապրիլի 2-ին մի հեռագրով շնորհակալություն է հայտնում Վանի հայ հեղափոխական կոմիտեին «Ռուսաստանին ցույց տրված ծառայությունների համար»: Միացյալ Նահանգներում լույս տեսնող «Կոչնակ» հայկական թերթը 15-ի մայիսի 24-ին հպարտությամբ հայտարարեց. «Վանում մնացել են ընդամենը 1500 թուրք», մնացյալները ոչնչացվել էին:

1915-ի փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած հայ ազգային կոնգրեսում դաշնակցության ներկայացուցիչը հայտարարեց, որ «Ռուսաստանը պատերազմի նախօրեին 242 000 ռուբլի էր տրամադրել զինելու և զրաավարժեցնելու օսմանյան հայերին ապստամբության համար: Սա հստակորեն ցույց է տալիս, որ ռուս-հայկական դաշինքը նախապես քրծված էր օսմանյան ռազմական ուժերը կազմալուծելու համար:

Այս պայմաններում, ուր ռուսները լայն ճակատով առաջանում էին Արևելքում, հայ ապստամբները մահ էին սփռում, հարձակվելով թուրք ետնապահ ուժերի և անզեն ու անպաշտպան բնակիչների վրա»:[2]

Թալեաթը կոտորածը ներկայացնում է որպես մեղադրանք հայերին, ովքեր ոչ թե բնաջնջման վտանգի, այլ ռուսների կամքով ոտի ելան Օսմանյան կայսրության դեմ: Համառոտ անդրադարձ առաջին հայացքից տարօրինակ թվացող այս խնդրին:

1. Թալեաթ փաշայի հուշերը, ՀՀ ԳԱ:

2. Esat U. Farihte Ermeniler ve Ermeni Meselesi. Ankara, 1950, s. 604.

Դաշնակից ուժերը նույնպես ներխուժել էին կայսրության վրա մի ճակատով, որը երկարում էր Իրաքից մինչև Գալացիա՝ օսմանյան կառավարության վճիռը. տեղափոխել հայերին ռազմական շրջաններից հեռու ինքնապաշտպանական մի գործողություն էր, կատարելապես իրավացի և լիովին օրինական:

Նույնիսկ Վանի հեղափոխությունից և կոտորածներից հետո օսմանյան կառավարությունը մի վերջին փորձ էլ արեց՝ հայերին միավորելու թուրք ազգի ընդհանուր ջանքերին:

Այս առումով խորհրդի կանչվեցին պատրիարքը, պատգամավորները: Հատկապես նշվում էր. «Այս հրամանագիրը նկատի ունի հատկապես արգելել հայ հեղափոխական կոմիտեների ձգտումները: Ուրեմն դուք պիտի գործեք այնպես, որ առիթ չտրվի մուսուլմանների և հայերի տեղական կոտորածների:

Դուք ձեռք պիտի առնեք բոլոր միջոցները, որպեսզի հայ խմբերին հատկապես նշանակված պաշտոնյաները ընկերակցեն իրենց տեղափոխման սկզբից: Դուք պիտի վստահեցնեք, որ նրանք ստանալու են իրենց սնունդը և այն բոլորը, ինչի նրանք կարիք ունեն: Բոլոր ծախսերը պիտի հատուցվեն տարագիրների համար նախատեսված պետական բյուջեից»:[1]

«Տարագիրներին հատկացված անհրաժեշտ սնունդը պիտի տրվի մինչև իրենց վերջնական վայրը... շատ ավելի աղքատ անհատների համար նախատեսված են ապառիկ միջոցներ: Փոխադրված անձանց ճամբարների վրա պիտի լինի կանոնավոր հսկողություն, պատշաճ պայմաններ անձի ապահովության: Տարագիրներին համոզեք, որ նրանք պետք է ստանան բոլոր բավարար սննդամթերքը, և որ նրանց առողջությունը ամենօրյա հսկողության տակ պիտի լինի բժշկի կողմից: Հիվանդները, աղքատները, կանայք և երեխաները պիտի օգտվեն երկաթուղային միջոցներից, մնացյալները ջորիով, կառքով կամ ոտքով, ըստ նրանց ցանկության: Յուրաքանչյուր քարավանին ընկերակցում է պահապան ուժերի մի կցորդ, և սննդի պահեստների վրա մի հսկիչ մինչև նրանց տեղ հասնելը: Այն պարագային, երբ տարագիրները ենթարկվեն հարձակման, անմիջապես բոլոր միջոցները ձեռք առնել հետ մղելու համար հարձակումները»:[2]

1. «Foreigo office» արխիվները, հայության խնդիրների գրադարակից, Լոնդոն 371/9158/ E5523:

2. «Ինը հարց, ինը պատասխան», Անկարա, 1982, էջ 47:

***

Իր "Из истории Туркологии в Советской Армении" աշխատանքում[1] Ե. Սարգսյանն անարդարացիորեն Բ. Բորյանին մեղադրում է, որ «նա առանց որևէ հիմքի պնդում է, թե իբր մինչև 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը Թուրքիայում հայերի շրջանում չեն եղել ազգային-անջատողական շարժումներ»:[2] Շարունակելով այդ միտքը հեղինակը Բ. Բորյանի այդ մոտեցումը բացատրում է այն իրողությամբ, թե իբր վերջինս «փաստորեն ժխտում էր անտանելի, նվաստացնող դրությունը քրիստոնեական այն ժողովուրդների, որոնք ընկած էին Օսմանյան կայսրության ռազմա-ավատատիրական բռնատիրության տակ»:[3]

Բ. Բորյանը ոչ թե ժխտել է հայերի ծանր վիճակը և դրանից դուրս գալու նրա ձգտումը, այլ պարզապես նշել, որ հայերը մինչև Բեռլինի վեհաժողովը թուրքական լուծը թոթափելու ձևավորված շարժում չէին առաջացրել այն պարզ պատճառով, որ օսմանյան հարյուրամյակներ տևած բարբարոս լուծն ընկճել էր արևմտահայությանը, ջարդել նրա կամքը, նրան նետել թմբիրի մեջ: Իհարկե, կային անհատներ ու խմբեր, մասնավորապես մտավորականության և հոգևորականության շրջանում, ովքեր առաջ էին քաշում ազատագրության համար պայքարելու անհրաժեշտությունը, տարվում Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գաղափարներով, նրանց հետ կապեր հաստատում և համագործակցության փորձեր կատարում թուրքական լուծը տապալելու համար: Սակայն, կրկնում ենք, դրանք անհատներ էին: Ամբողջությամբ վերցրած մինչև 19-րդ դարի 70-ական թվականները, այսինքն՝ մինչև հայկական շարժումների քաղաքականացումը, Օսմանյան կայսրությունում հայկական ազատագրական լուրջ շարժման մասին խոսելն անհնար է: Արևմտահայը շարունակում էր մնալ «հավատարիմ ազգ»:

Ե. Սարգսյանը սխալ է, երբ գրում է, թե «Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների պայքարի բնորոշ առանձնահատկությունը 20-րդ դարի առաջին տասնամյակում այն էր, որ այդ պայքարը ծուլվում էր

1. Տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ XII, Ե., 1985, էջ 241:

2. Борьян Б. Армения, международная дипломатия и СССР. ч.1, стр. 51-52:

3. Տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ XII, Ե., 1985, էջ 250:

ընդհանուր, ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ, հակամիապետական շարժման հետ»[1]:

Համենայնդեպս, 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում չկար հայկական շարժում միապետությունը տապալելու համար՝ չհաշված ՀՀԴ-իթթիհադ դաշինքը սուլթանի ու նրա վարչակարգի դեմ և Աբդուլ Համիդի դեմ 1905 թ. իրականացված անհաջող մահափորձը: Բայց դրանք՝ ա. ուղղված էին ոչ թե միապետական կարգերի, այլ անձամբ սուլթան Համիդ 2-րդի դեմ, բ. տեղի են ունեցել մինչև ռուսական հեղափոխությունը: Հնարավոր է ռուսական առաջին հեղափոխության ազդեցություն փնտրել 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման մեջ, բայց իրականում այն զուտ թուրքական էր և միտված իշխանությանը տիրանալուն:

Իսկ հայկական շարժումներն իրենց բնույթով դնում էին ոչ թե իշխանափոխություն, հասարակարգը վերակառուցելու, այլ ազգային-ազատագրական խնդիրներ և ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ սոցիալ-դասակարգային դառնալ չէին կարող:

Հայերը մասնակցո՞ւմ էին Թուրքիայում ծավալված հակասուլթանական պայքարում: Իհարկե, մասնակցում էին: Դա կողմնորոշող հաստատում ստացավ կայսրության ընդդիմադիր կուսակցությունների Փարիզի (1907 թ.) համաժողովի կողմից ընդունված «Օսմանյան ընդդիմադիր կուսակցությունների հռչակագրում», որտեղ ասված է. «Այսօր քրիստոնյաների և մուսուլմանների շատ տեղերում միասնաբար հանդես գալը ցույց է տալիս, որ Թուրքիայի ժողովուրդները հոգնել են տանջանքներից ու աղքատությունից, հասկացել, որ սուլթանը իրենց տանում է դեպի կործանում»:[2]

Թուրք գիտնականներ Շ. Գյունալտայը, Հ. Բայուրը, Զ. Թողան և այլք թուրք են համարում Կովկասի բոլոր ժողովուրդներին: Օրինակ, Հ. Բայուրն իր «Թուրքական հեղափոխության պատմություն» բազմահատոր աշխատությունում գրում է, թե հայ ժողովուրդը պատկանում է «թուրքական ռասային..., հայերը Եվրոպայի անգլիացիների նման կազմում են թուրքական ռասայի մի ճյուղը»: Թուրք որոշ պատմաբաններ թուրք են համարում Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի բոլոր հնագույն ժողովուրդներին: Շ. Գյունալտայը «Մերձավոր Արևելք» գրքում պնդում է, թե խեթերը, սուբարիները, ուրարտացիները և մեդիացիները եղել են թուրքա-

1. Ն. տ., էջ 256-257:
2. Ն. տ., էջ 257:

կան ցեղեր: Վան քաղաքում հրատարակվող «Վան սեսի» թերթը պնդում է, թե ուրարտական պետությունը թուրքական էր: «Turk farih kurumu» (թուրքական պատմական ընկերությունը) պատմագիտական կեղծարարությունների բուծարան է և այդ անում է թյուրքիզմի դիրքերից:

Պատմության թուրք կեղծարարները չեն թաքցնում իրենց նպատակները: Նրանցից Կիրզիողլուն իր գրքի մասին գրում է, որ այն «հանդիսանում է պատասխան այն քաղաքական քարոզչության, որ տանում է բոլշևիկյան Ռուսաստանը սկսած 1945 թվից: Այդ քարոզչության նպատակն է մեզնից խլել Կարսն ու Արդահանը»:[1]

«Գիրքն ուղղված է այն հայ և վրացի պատմաբանների դեմ,- շարունակում է նա,- ովքեր պնդում են իրենց «պատմական իրավունքների» վրա»:

Օ. Թյուրքան 1937 թ. կազմակերպեց մի միություն, իսկ 1939-ից սկսեց հրատարակել «Bozkurt» հանդեսը, որը կոչ էր անում ազատագրել արյունակից եղբայրներին:

Նորից մոդայիկ դարձան Զիա Գեոքալփի գրվածքները, նրա մտքերն ու կարգախոսներն էին. «Թշնամի երկրները պետք է ավերվեն, Թուրքիան պետք է ընդարձակվի ու բարձրանա Թուրանի մակարդակին»:[2]

30-ական թվականներին մեկը մյուսի հետևից լույս են տեսնում պանթուրքիստական պարբերականներ («Օրհոն», «Թանրիգազ»), լույս տեսան նույն տրամադրությամբ գրքեր, այդ թվում՝ Օ. Թյուրքանի «Թուրքիզմի ներածություն» (1941) գրվածքը, որում կան հետևյալ մտքերը. «Դինամիկ թուրքիզմը կազմված է Թուրքիայի 20 մլն թուրքերից և հյուսիսի ու արևմուտքի 100 մլն թուրքերից... Եթե թուրքիզմն ու Թուրքիան ցանկանում են պահպանել իրենց գոյությունը, ապա առանց ժամանակ կորցնելու պետք է միավորվեն և նվազագույնը 120 մլն մարդուց ստեղծեն թուրքական ազգ... Մենք պարտավոր ենք մոտ ապագայում գործողության անցնել, հոգ տանել թուրքիզմի մասին և հիմնել միություն»:[3]

Ֆաշիստական Գերմանիայի հետ դաշնության մեջ մտնելը հետապնդում էր նույն խնդիրը: Ռիբենտրոպը 1941 թ. մայիսի 26-ին գրում է ֆոն Պապենին. «Թուրքիային հարևան հարավային և արևելյան գոտիներում

1. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ XII, Ե., 1985, էջ 266:

2. **Սիմոնյան Հր.** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 478:

3. ԳԱ «Լրաբեր», 1966 N6:

թուրքական ցանկությունների բավարարման վերաբերյալ խոստումներն առանձնակի զգուշավոր վերաբերմունք են պահանջում... այստեղ նախապատրաստված պայմանագրի նախագծում այս հարցի առթիվ ասված է. «Գերմանիան քաղաքականորեն և դիվանագիտորեն կպաշտպանի Թուրքիայի ձգտումները՝ նրա համար ապահովելու Լոզանի պայմանագրի՝ Թուրքիայի համար կենսականորեն անհրաժեշտ վերանայումը»:[1]

1941 թ. հուլիսին «Bozkurt»-ի թիվ 11-ում տպագրվեցին «Թուրքիզմը սպասում է» հոդվածը և «Ապագա Մեծ Թուրքիան» քարտեզը: Մեծ Թուրքիան իր մեջ էր առնում Անդրկովկասն ու Միջին Ասիան:

«Ջումհուրիեթը» «Թուրան տանող ամենակարճ ճանապարհը» հոդվածում ներկայացնում է Ղրիմի, Հարավային Ուկրաինայի, Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Պովոլժիեի, Միջին Ասիայի, ընդհուպ մինչև Լենային Ալթայի գրավման մանրամասն ծրագիրը:[2]

1942թ. մարտին Օ. Թյուրքանը գերմանական փողերով հրապարակ հանեց «Նացիոնալիզմ: Նացիոնալիզմի սկզբունքները» ծրագրային աշխատանքը: «Թուրքիստը մտածում է միայն թուրքիզմի մասին,- հռչակում է այդ հոդվածը,- և պայքարում միայն նրա շահերի համար: Նա չի հավատում այնպիսի դատարկ բառերի, ինչպես «միջազգային իրավունքը և արդարությունը», «մարդկությունը և մարդկայնությունը», «տառապանքները հանուն ընդհանուր խաղաղության»: Այդ դատարկ արտահայտություններն անգամ նվազագույն օգնություն բերել չեն կարող թուրքիզմին»:[3]

Յ. Ջյուզելյանը «Ջինարալթը» հանդեսում գրեց. «Կգա օրը, երբ մենք, ինչպես Թեմուրը, Անատոլիայից կարշավենք Հնդկաստան, կմագլցենք Հիմալայները և կստեղծենք Ղրիմի, Դաղստանի, Կազանի և Իրանի միություն: Թուրքիայի բոլոր թշնամիները կոչնչացվեն»:[4]

Նույն հանդեսում տպագրվում էին բանաստեղծություններ, որոնցում կան հետևյալ տողերը. «Թուրքերը կնվաճեն Կովկասը, Ղրիմը և դուրս կվռնդեն թշնամիներին», «Կգա մի օր, երբ թուրք ազգը կկործանի Կովկասի, Ղրիմի և Բուխարայի ամրոցները»: «Գյոքբյորյու» հանդեսը հռչա-

1. Գերմանիայի ԱԳ նախարարության փաստաթղթերը: Պրակ 2, Ե., 1947, էջ 16:
2.«ԲԵՀ», 1974, N1:
3.”Звезда Востока”, 1954, N1.
4. “Коммунист”, 1944, N10, 11.

կեց. «Ադրբեջանը մեր հարազատ եղբայրն է: Հիմնականում մենք միասնական ենք, սակայն վաղը կմիաձուլվենք վերջնականապես»:[1]

1941 թ. օգոստոսի 5-ին ֆոն Պապենը գրում է Բեռլին. «...Նկատի ունենալով գերմանացիների հաջողությունները Ռուսաստանում՝ թուրքական կառավարական շրջանները սկսում են ավելի եռանդով զբաղվել իրենց այն հայրենակիցների վիճակով, ովքեր գտնվում են ռուս-թուրքական սահմանի մյուս կողմը, մասնավորապես, ադրբեջանական թուրքերի վիճակով... ըստ երևույթին, մտադիր են վերադառնալու 1918 թ. դեպքերին՝ իրենց միացնել այդ մասերը...»:[2]

Խնդրի լուծումը նախապատրաստելու համար ստեղծվեց հանձնաժողով մեջլիսի պատգամավոր Շ. Բակչանի գլխավորությամբ, որի մեջ մտցվել են սուլթանական և երիտթուրքական շրջանների գործիչներ՝ Նուրի, Զ. Վելիդին, Ա. Ջաֆար, Մ. Շևքեթ:

Նույն օրը Բեռլինում ԱԳ նախարարության պետական քարտուղար Վեյցզեկերը գրեց Ռիբենտրոպին, որ թուրքական դեսպանն իրեն ասել է, թե «կարելի է կովկասյան ժողովուրդներին միավորել մի բուֆերային պետության մեջ...»:[3]

Պատերազմի տարիներին, մասնավորապես 1943թ., իրար հետևից հրապարակ եկան պանթուրքիստական «Գենճ թյուրք», «Չինաբալթ», «Թյուրք ամաջի», «Թուրք յուրդու», «Գյոքբյոյրուս», «Կոպուզ», «Բյույուք Դոդուն» հանդեսները:

1942 թ. հունիսի 1-ին Հենթինգը գրում է, թե զրույցի ընթացքում թուրք պրոֆեսոր Հարունն ասել է, թե խոսք չի գնում թուրքական ժողովուրդների նվաճման մասին Թուրքիայի կողմից, այլ «Բիսմարկի կայսրության նման դաշնակցային պետության ստեղծման մասին: Բացի Անատոլիայից, նրա մեջ պետք է մտնեն Կովկասը և Վոլգայից արևելք բնակվող թուրքական ժողովուրդները»:[4]

Պատերազմի տարիներին քարոզչական մեծ աշխատանք տարան Թուրքիայում ապաստանած մահմեդական վտարանդիները: Պանթուրքիստական քարոզչություն էին ծավալել Ղրիմի թաթարների, ադրբեջանցիների, Կովկասյան լեռնականների, Պովոլժիեի և Միջին Ասիայի վտարանդիները:

1. "Коммунист", 1944, N10, 11.
2. Գերմանիայի ԱԳ նախարարության փաստաթղթեր: Պրակ 2, էջ 29-30:
3. Ն. տ., էջ 35:
4. Ն. տ., էջ 75:

Պանթուրքիզմի որջի վերածվեց «Թուրքական մշակութային լիգան», որը հիմնականում միավորում էր իթթիհադականներին և Անդրկովկասից Թուրքիա անցած գործիչներին: Այստեղ էին Աղաևը, «Կովկասյան ինքնավարություն» կառավարության նախկին ղեկավար Մ. Չոկայը, Մ. Ռասուլզադեն և ուրիշներ:

Թուրքերը երազում էին Ստալինգրադի անկումը և Ախուրյանի ափին կենտրոնացրել էին 26 դիվիզիաներ՝ սպասելով հարձակման հրամանի: Զորահավաքի անվան տակ փոքրամասնությունների 18-48 տարեկան այրերին քշեցին Անատոլիայի խորքերը ճանապարհներ կառուցելու: Նրանցից շատերը մեռան ծանր պայմանների պատճառով:

Ջ. Յալչընը դիմելով սիրիահայերին՝ ասաց. «Հայեր, լավ իմացեք, որ սիրիական սահմանից հազիվ ութ կիլոմետր հեռավորության վրա եք, շատ առաջ մի գնացեք, եթե ուզենք երկու ժամում կարող ենք նոր դաս տալ ձեզ, որ հիշեցնի Դեյր Էլ Զորի անապատները. այս անգամ չենք խնայի նույնիսկ օրորոցի ծծկեր մանուկներին և ձեր արմատը կոչնչացնենք»[1]:

Թուրքական ժողովուրդների ազատագրումն ու միավորումը մինչև օրս էլ մնում են թուրքական հասարակական մտքի առանցքային թեմա: Մտավորականության շատ գործիչներ Անկարային խորհուրդ են տալիս՝ «հարկ եղած դեպքում» բանակը պետք է «ձեռք մեկնի» մուսուլման եղբայրներին:

Թուրքիայում գործող Ադրբեջանական մշակութային ընկերությունը, չնայած իր անունին, բացառապես քաղաքական գործունեությամբ զբաղվող կազմակերպություն է, որի «Azerbaycan» պաշտոնական հանդեսը ամեն տեսակի լուտանքներ է թափում հայերի ու Հայաստանի հասցեին: Կազմակերպության գործունեության կենտրոնը Կարսն է: Ոչ միայն ադրբեջանցի վտարանդիների, այլև թուրքական պաշտոնական որոշակի շրջանների աներեր կարծիքն է. «Կովկասյան Ադրբեջանը Թուրքիայի անբաժան մասն է»:

Ամերիկյան պատմաբան Չ. Հոստլերը իր «Պանթուրքիզմն ու խորհուրդները» գրքում գրում է. «Այն, որ Թուրքիան վաղուց ի վեր հայտարարել է Խորհրդային Միության թուրքական ժողովուրդների հանդեպ իր շահագրգռվածության և այն մասին, որ երրորդ աշխարհամարտի դեպքում պանթուրքիզմը որոշակի ազդեցություն պիտի ունենա Թուրքիայի

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց.1, գ.2:

քաղաքականության վրա, բարձրացնում է նրա նշանակությունը Արևմուտքի աչքում»:[1] Բանն այստեղ ոչ այնքան Խորհրդային Միությունն է, որքան սլավոնականությունը: Թուրք քաղաքագետները կարծում են, որ «սլավոնական հրեշը» ոչնչացնելուց հետո թուրքերն ու չինները լեզու կգտնեն, թե վերջիններս դեմ չեն լինի, եթե թուրանական «մեծ հայրենիքի» սահմանները ձգվեն Չինական Թուրքեստան, քանի որ այդ տարածքների ժողովուրդները պատկանում են ալթայան լեզվաընտանիքին, որի մեջ մտնում են թուրքական, մոնղոլական և տունգուզ-մանջուրական լեզվախմբերը:

Հայկական հարցում ժամանակակից Թուրքիայի կողմից տարվող քաղաքականությունը հանգում է հետևյալին՝ խեղաթյուրել հայ ժողովրդի պատմությունը. ձգտել ցույց տալու, որ եկվորները ոչ թե թուրքերն են, այլ հայերը, և վերջիններս տարածքային որևէ պահանջ Թուրքիային ներկայացնել չեն կարող: Կեղծվում է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը, մերժվում ցեղասպանության իրողությունը, Թուրքիայում մնացած հայ խլյակների հալածանք և նրանց արտամղում, պայքար սփյուռքի դեմ, որպեսզի վերջինս դադարեցնի պայքարն իր հայրենիքի համար, պայքար հայկական պետականության դեմ:

Պատմության խեղաթյուրման գլխավոր օբյեկտն ուրարտացիներն են, համոզել, որ «ուրարտերենը նմանություն ունի Ուրալ-ալթայան» լեզուների հետ, որ ուրարտացիներին ոչնչացրել են եկվոր հայերը և տիրացել նրանց տարածքներին:

Թուրք պատմագրության առաջատար ներկայացուցիչներից Ի. Դանիշմենդին գրում է. «Փոքր Ասիան հայոց առաջին հայրենիքը չէ, որովհետև այսօր գիտությունն անվերապահ հաստատում է, որ հայ ազգի բնօրրանը Բալկանները և գլխավորապես Դանուբ գետի և Թրակիայի միջև ընկած տարածքն է... Դրա համար էլ Անատոլիայից գաղթած հայերի այսօրվա մնացածները իրենց մայր հայրենիքը պետք է պահանջեն ոչ թե Թուրքիայից, այլ, եթե ի զորու են՝ Բալկանյան տերություններից»:[2]

Ժամանակակից Թուրքիայում ամբողջությամբ արդարացված են հայ ժողովրդի բնաջնջման կազմակերպիչները: Դեռ ավելին, դրանք բարձրացված են ազգային հերոսների մակարդակի:

1. «Գրական թերթ», 08. 06. 1984:
2. «Զարթոնք», 29. 04. 1966:

Թուրքիայի ազատական կուսակցության ղեկավարներից Ֆ. Օքյարն իր հուշերում գովեստներով է ողողում Աբդուլ Համիդ 2-ին, որովհետև նա արժանի հարված հասցրեց հայերին: Նա սխալ է համարում երիտթուրքերի վարքագիծը, որ 1908 թ. հեղաշրջումից հետո որոշ ժամանակ համագործակցեցին ՀՀԴ հետ, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն տվեցին այլազգիներին:[1] Նաև այն բանի համար, որ Գ. Նորատունկյանին նշանակեցին ԱԳ նախարար: Նա Թուրքիայի ապագա կառավարողներին կտակում է՝ բնավ հավատ չընծայել թուրքերի հավերժ թշնամի հայերին:

Թուրք պատմաբաններն ու քաղաքագետները մերժում են ոչ միայն Հայոց ցեղասպանության իրողությունը, այլև Հայկական հարցը:

«Հայաթ Թարիխ Մեճմուաս» հանդեսը գրում է. «650 տարի օսմանյան տարածքների վրա բնակվելով, ամբողջովին օսմանցի դարձած հայ կոչված այս քրիստոնյա հավաքականության համար թուրք բոլոր պատմագետներն օգտագործել են «հավատարիմ ազգ» բացատրությունը: Հայերը թուրք հավաքականության մեջ երբեք օտար չեն զգացել և իրենց օտարությունը հիշեցնող որևէ պատահար կամ դեպք երբեք չի պատահել»:[2] Հայերի ջարդերի մասին խոսակցությունները հնարված են Թուրքիայի թշնամիների կողմից: Սուլթանները, այդ թվում նաև Աբդուլ Համիդ 2-ը, առանձնահատուկ հոգատարություն են ցույց տվել հայերի հանդեպ: «Աբդուլ Համիդը,- գրում է «Իսթիքլալ» թերթը,- իրավունքի և պարկեշտության սուլթան էր, որի ձեռքերը ներկված չէին արյունով, նա ճակատաբաց և ձեռքերը մաքուր է ներկայանում պատմությանը»:[3]

Հայերի հանդեպ բռնությունների ու ջարդերի պատճառն իրենք՝ հայերն էին, նրանց քաղաքական կուսակցությունները: Թուրքիայի նախկին նախագահ Ջ. Գյուրսելը, որը 1915-ին Թեշքիլաթե մախսուսեի կազմակերպիչներից մեկն է եղել, հայերի հանդեպ բռնությունների պատճառը համարում է այն, որ հայերը «անսպասելիորեն հարվածեցին» թուրքական «բանակի թիկունքին, կտրեցին ճանապարհները, դժվարացրին հաղորդակցությունն ու բանակի մատակարարումը», ինչը թուրքերին դրեց մի վիճակում, որը ծնեց հայերի հանդեպ դաժան միջոցառումներ: «Ջումհուրիեթը» նույն կարծիքին է. «Օսմանյան պետությունը միտում-

1. «Մարմարա», 06. 02. 1979:
2. Ն.տ., 24. 02. 1979:
3. Ն.տ., 18. 05. 1967:

նավոր և ծրագրավորված կերպով երբեք որևէ ցեղասպանություն չի ձեռնարկել»: Հայերի հետ կատարված «ցավալի կացությունները պարզապես պատերազմական վիճակի սարսափելի հետևանքներ էին»:[1]

Իսկ օրինակ, Թ. Օզալն ընդհանրապես է ժխտում ջարդերի իրողությունը: Ֆրանսիական «Լը Պուեն» շաբաթաթերթին տված հարցազրույցում նա ասել է. «...Պարզապես ջարդ չի եղել: Միջազգային ոչ մի քննություն չի պարզել Թուրքիայի ցեղասպանությունը»:[2] Որոշ թուրք գործիչներ էլ չեն ժխտում հայերի ջարդերը, բայց և պնդում են, որ հայերն էլ ջարդել են թուրքերին ու մահմեդականներին:

Թուրքական քարոզչությունը Հայկական հարցի ծնունդը կապում է ոչ թե արևմտահայերի դժոխային վիճակի, այլ Ռուսաստանի կողմից արևելյան նահանգները գրավելու ձգտման հետ: Չնայած հայերը կայսրությունում ապրում էին բարեկեցիկ կյանքով, բայց դարձան ռուսների գործակալներ, ամեն ինչ արեցին ապահովելու ռուսական զենքի հաղթանակը և դրա համար ստացան արժանի պատիժ:[3]

Ս. Քոչազը գտնում է, որ հայ և թուրք հարաբերությունների պատմությունը երկու ժողովուրդների բարեկամության, իսկ հայ և ռուս հարաբերությունների պատմությունը, ընդհակառակը, հայության ճնշման և ստրկացման պատմություն է: Եթե ցարի 1836 թ. "Положение"-ն գրեթե ջնջեց ռուսահայերի կրոնական ազատությունները՝ նպատակն էր նրանց դարձնել ուղղափառ, մինչդեռ թուրքահայերին շնորհված Ազգային Սահմանադրությունը նրանց ամենալայն հնարավորություններ ընձեռեց ինքնուրույնաբար վարելու ազգային ներքին կյանքը:[4]

1967 թ. ապրիլին «Միլիեթը» տպագրեց իր աշխատակից Ուլունայի հոդվածը, որը բառացիորեն հակառակ կարծիքի է: Նա գրում է. «Թալեաթ փաշան երեք միլիոն հայրենակիցներ ջարդելով ու տարագրելով, մեզ խայտառակեց քաղաքակիրթ աշխարհի առջև: Այդ մեղքի բեռը դեռ ճնշում է մեզ վրա և դժվարությամբ ենք տանում այն»:[5]

Թուրք մտավորական Թ. Ջալալը նույնպես դատապարտեց Հայոց եղեռնը: Ապա հանդես եկան թուրք վտարանդիները, նրանցից ոչ քչերը և,

1.«Ալիք», 09. 06. 1985:

2. «Յառաջ», 25. 04. 1985:

3. «Ալիք», 22. 11. 1983:

4. «Ջումհուրիեթ», 14-25. 05. 1967:

5. «Պայքար», 23. 04. 1967:

առաջին հերթին, Թ. Աքչամը դատապարտում են հայերի զանգվածային ջարդերը: Իսկ Անկարայում Աթաթուրքի բուլվարին հարող գլխավոր պողոտաներից մեկը կոչեցին Թալեաթի անունով:[1]

Թուրքական իշխանությունները ձգտում են Արևմտյան Հայաստանում ջնջել հայերի հետքը: Այս գործում բացառություն են կազմում ուրարտական արվեստը, որ նրանք համարում են թուրքերի նախնիների արվեստը, և հայկական այն հուշարձանները, որոնք համաշխարհային հռչակ ունեն (Անի, Աղթամար):

Լիոնի «Լ'էկո Լա-Լիբերտե» թերթը 1966թ. սեպտեմբերի 18-ին «Վշտահար Հայաստան» խորագրով տպագրեց Արևմտյան Հայաստան այցելած մի եվրոպացի ճանապարհորդի նոթագրությունը: «Թուրքահայաստանում մի քրիստոնյայի ոչ մի գերեզման չի մնացել... Ամեն ինչ պղծված է. հողը քանդված, ոսկորները նետված շնագայլերին, շիրմաքարերը և խաչերը ջարդուփշուր, եկեղեցիները քանդված... Թուրքերը քանդել են դարեր ի վեր երկյուղածությամբ պահպանված միլիոնավոր գերեզմաններ»:

Ավստրիալական «Էքստրա» թերթը 1989 թ. ապրիլի 24-ին գրեց, որ Արևմտյան Հայաստանում 1914 թ. եղած 2549 հայկական հոգևոր շինություններից մնացել են մի քանի տասնյակը:

«Թուրքական քարտեզներից անհետացել են Հայք, Արևմտյան Հայաստան, Հայկական լեռնաշխարհ և հայերի գոյությունը հիշեցնող բազմաթիվ այլ բառեր: 1960 թ. դեկրետով երկրի արևելքում հայկական, քրդական, պարսկական 2180 բնակավայրերի անունները թուրքացվեցին»:[2] «Բևոյուք Դոդա» թերթը «Դուրս հայրենիքից» անունը կրող հոդվածում գրում է. «Թուրքիայում թուրքերի հետ բնակվող հույն, հայ, հրեա և ուրիշ փոքրամասնությունները մաս են կազմում մեր ազգային միության: Նրանց մի մասը իսլամ ընդունելու պայմանով կարող են ընդունվել թուրք հավաքականության մեջ: Հակառակ դեպքում հույները ու հայերը դուրս կվռնդվեն այդ հավաքականությունից, կկորցնեն իրենց անշարժ կալվածքները և բոլորն էլ կվտարվեն Թուրքիայից: Կրոնական սկզբունքով հույների, հայերի և հրեաների կյանքը, գույքն ու արյունը պատկանում են իսլամներին»:[3]

1. «Ալիք», 01. 01. 1966:
2. «Երեկոյան Երևան», 06. 01. 1990:
3. «Յուսաբեր», 25. 02. 1967:

Այսօր էլ շատ հայեր, վախենալով հետապնդումներից, թաքցնում են իրենց ազգային պատկանելությունը, կրում նաև թուրքական անուն-ազգանուն: Շատերը «ստիպված են իսլամ ընդունել, որպեսզի փրկվեն»:[1]

«Մեծ եղեռնի 50-ամյակի կապակցությամբ հայոց պոռթկումը թուրքերին շփոթեցրեց, նրանք անհանգստացան, լցվեցին վրեժխնդրության ավանդական մոլուցքով: Թուրքիայի պետական, քաղաքական և քարոզչական կառույցներն ամեն ինչ արեցին այդ պոռթկումը խեղդելու համար: Ջ. Գյուրսերը քարոզչական միջոցների առաջ խնդիր դրեց՝ զբաղվել հայկական պահանջների հերքմամբ»:[2] Հայկական պահանջատիրության դեմ պայքարը վերածվեց պետական քաղաքականության: Այդ քաղաքականության սկզբունքները պարզունակ էին և ընդդիմություն չհանդուրժող. «Մեզ համար հայկական հարց գոյություն չունի»:[3]

«Նրանց (սփյուռքահայերին) հող չունենք տալու»:[4]

«Հայերը որևէ իրավունք չունեն Արևելյան Անատոլիայի նկատմամբ»:[5] «Անիրագործելի երազ է Թուրքիայում Հայաստան ստեղծելը... Արևելյան Անատոլիայում մի ժամանակ մեծաթիվ հայեր էին բնակվում, իսկ այժմ այնտեղ մի հայ իսկ չկա: Ո՞ր խելացի հայն այդ անխելքությունը կանի: Հետևանքը կլինի՝ այս ու այն կողմ ցրված հայ հավաքականությունները նորից կվնասվեն»:[6] Նման սպառնալիքները դարձան սովորական:

«Մեծ եղեռնի 50-ամյակին հայկական հանրահավաքների և քայլարշավների կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Ուրգյուպլուն 1965 թ. մայիսին խորհրդարանում հայտարարեց, թե դրանք օտարների, մասնավորապես հույների գրգռությունների հետևանք են»:[7]

«1967 թ. հունվարի 30-ին Հայկական հարցը դարձավ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հատուկ քննարկման խնդիր»:[8]

Հաջորդ բոլոր տասնամյակներում «սփյուռքահայության հանդեպ թուրքական հետաղիմության վերաբերմունքը մնաց նույնը,- գրում է Հր. Սիմոնյանը,- անգիջում կռիվ, թուրք հասարակության բոլոր խավերում վրեժխնդ-

1. Лудшувейт Г. Турция, М., 1958, с. 48.
2. «Ալիք», 20. 05. 1965:
3. «Մարմարա», 08. 05. 1965:
4. «Յառաջ», 18. 06. 1967:
5. «Զարթոնք», 01. 11. 1966:
6. «Յառաջ», 01. 11. 1966:
7. «Մարմարա», 12. 05. 1967:
8. Ն. տ.:

լության ու ոխակալության բորբոքում, անցյալի դեպքերի ուրացում կամ խեղաթյուրում, ... հայության օրինական պահանջների մերժում»:[1]

1975-1984 թթ. ահաբեկչական գործողությունները միակ հնարավոր միջոցն էին պատասխանելու աշխարհի անտարբեր խղճին, ցեղասպանության հարցում նրա հանցավոր լռությանը: Ճիշտ է, այն որոշ բեկում մտցրեց այդ լռության մեջ, բայց հարցը լուծել չկարողացավ: Հայերի ու Հայկական հարցի վրա Թուրքիայի քաղաքական-պետական կառույցների և քարոզչական միջոցների հարձակումները կրեցին աննախադեպ կատաղի, համակարգված ու անբարոյական բնույթ: Դա նաև մղեց հայկական նահանգների տնտեսական և սոցիալ-ազգային նոր քաղաքականության: Վերածնվեց Արևմտյան Հայաստանը մահմեդականներով բնակեցնելու համխդյան քաղաքականությունը, միջոցներ ձեռնարկվեցին այդ նահանգների տնտեսական զարգացումն ապահովելու, բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար: Հասարակության որոշակի շերտեր սկսեցին բացահայտ խոսել հայերի բնաջնջման հետևանքների մասին: «Դույնյա» թերթում Ֆ. Աթայը գրեց. «Երբ Անատոլիայում քրիստոնյա փոքրամասնություններ էին բնակվում, մեր հողերը, որ այժմ արհամարհանքով թափուր բացաստաններ ենք անվանում, Արևմտյան Անատոլիայից ավելի ճոխ այգեստաններ էին, ավելի գինեվետ»:[2]

Արևմտյան Հայաստան այցելած մի սփյուռքահայ գրում է, որ թուրք և քուրդ գյուղացիներն ափսոսանքով էին խոսում հայերի մասին: Նրանցից մեկն ասաց. «Այ հոն հայեր կապրեին, և ամբողջ Մուշը և շրջանները ինքնաբավ դարձնելու չափ երկաթ կհանեին: Դեռ անոնց շինած օջախները կը մնան... Այս երկրին պակասողը հայերն են: Գացին, պերեքեթը հետևները տարան»:[3]

Թուրք մտավորականներից մեկն ասել է. «Իսկապես կը մաղթեմ հայերուն վերադարձը: Անոնք եթե գան, կրնան eatalyst-ի դեր կատարել այս երկրին մեջ շնորհիվ իրենց ձեռներեցության»:[4]

Ֆրանսիական «Լ' էքո Լա-Լիբերտե» թերթը տպագրեց Արևմտյան Հայաստանի քրդերի խոսքերը. «Նրանք էին (թուրքերը), որ մեզ մղեցին վատ գործի... Գյավուր գնաց, բախտը գնաց»:[5]

1. **Սիմոնյան Հր.** Թուրք-հայկական հարաբերությունների... էջ 580:
2. «Ալիք», 05. 02. 1965:
3. «Նաիրի», 10. 10. 1965:
4. Ն. տ.:
5. «Յառաջ», 27. 09. 1966:

Մի ուրիշ հայ զբոսաշրջիկ հիշում է. «Քյուրտերը լացով ու կարոտով կը յիշեն հին հայկական գիւղերը, ըսելով, թե անոնք իրենց տուներուն մառանն ու շտեմարանը եղած էին: Քյուրտերը նաև կը զոջային 1915-ին ջարդած ըլլալուն համար... հայերը»: «Անոնք մեր դրացիները, մեր եղբայրներն ու քույրերն էին,- կըսեին անոնք,- բայց մենք ջարդեցինք զանոնք գազանաբար և ասոր համար ալ Ալլահը պատժեց մեզի: Մենք ալ չարաչար կոտորուեցանք թուրքերուն կողմե»:[1]

Նաև այս մոտեցումներն են անհանգստացնում թուրքական պաշտոնական շրջաններին: Եթե Ջ. Գյուրսերը թուրքական մամուլին մեղադրում էր, որ այն լրջորեն չի զբաղվում «սփյուռքահայերի պահանջները հերքելու հարցով»[2], ապա «Հուրիեթը» զգուշացնում է, թե Թուրքիան կանգնած է ծանր խնդիրների առաջ, մասնավորապես քրդական ու հայկական: «Հայկական հարցը գնալով վտանգավոր է դառնում: Կկարողանա՞նք արդյոք մինչև վերջ ծածկել իրականութիւնը»:[3]

Սփյուռքահայերի գործունեությունը 1965-ից սկսած լուրջ անհանգստություն պատճառեց հատկապես Թուրքիայի արտասահմանյան դիվանագիտական ծառայություններին: Ֆրանսիայում թուրքական դեսպանությունը գրում է Անկարա. «Ֆրանսահայերը բոլոր կենտրոններում գործում են մեր դեմ և Թուրքիային անվանում են բարբարոս», մենք «պետք եղածին պես չենք կարողանում հակազդել հայոց քարոզչությանը»:[4]

Հանրահայտ Մ. Բիրանդը «Միլիեթում» դժգոհում էր, թե Հայկական հարցն «անհնար է լուծել պարզ վիճաբանությունների կամ դիվանագիտական հարաբերություններ խզելու սպառնալիքներով: Դա պայքար է, որը պահանջում է երկար տարիների համբերատար ու հոգնեցուցիչ աշխատանք»:[5]

Սակայն նաև շատ դժվար է աշխարհում հօգուտ հայերի քաղաքական մթնոլորտ ստեղծելու գործը և դա ոչ միայն սուբյեկտիվ, այլ նաև օբյեկտիվ պատճառներով: Նախ «գրեթե բոլոր մեծ ու փոքր պետութեանց ներկայ սերունդի ղեկավարները կամ ոչինչ գիտեն, կամ որպես հեռավոր

1. «Պատմութիւն Պաղնատան», էջ 353-354:
2. «Ալիք», 20. 05. 1965:
3. «Յուսաբեր», 04. 05. 1967:
4. «Ալիք», 12. 06. 1967:
5. «Յառաջ», 04. 10. 1984:

զրույց լսած են հայ ժողովրդի հողային պահանջներուն և այդ իրավունքը գերեզմանելու համար Թուրքիոյ գործադրած ցեղասպանութեան ահռելի ոճիրին մասին»:[1]

Եվ ապա, ոչ քիչ թվով կառավարություններ խնդրին բացասական մոտեցում են դրսևորում սեփական շահերի մղումով՝ Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունները չխաթարելու համար: Երկրորդական դեր չի խաղում նաև այն, որ հակահայ քարոզչությունը վերածվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջատար ուղղություններից մեկի:

Անկարան տարբեր միջոցներով ճնշում է գործադրում այլևայլ երկրների կառավարությունների և զանգվածային տեղեկատվության միջոցների վրա: Սակայն կասեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը նրան այդպես էլ չի հաջողվում:

Ֆրանսիական «Կոմբա» թերթը 1966 թ. սեպտեմբերի 8-ին գրում է, որ եթե «գերմանացիները խզվեցին հրեական ողջակիզման պարագլուխներից, հատուցվեց մահվան կայաններից փրկվածների կրած վնասները, ապա անհասկանալի պատճառով Թուրքիան չի հետևում գերմանացիների օրինակին և դրանով իսկ հաստատում, որ համամիտ է թալեաթների գործած վայրագություններին»:

Մի շարք երկրներում ընդդիմադիր ուժերը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը նույնպես օգտագործում էին քաղաքական և քարոզչական պայքարում: Այդ խնդրում հատկապես եռանդուն էին կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունները (Ֆրանսիա, Իտալիա, Արգենտինա, Հունաստան, Կիպրոս):

Լիբանանի կոմկուսի 3-րդ համագումարը 1972-ին անդրադարձավ լիբանանահայությանը:[2] 1982 թ. ապրիլին նույն կուսակցության կենտկոմն ընդունեց «Հայկական դատի և լիբանանահայության պայքարի շուրջը» փաստաթուղթ-հայտարարությունը, որը լայն արձագանք ունեցավ, հրապարակվեց մամուլում. լույս տեսավ առանձին գրքով և արժանացավ ամենատարբեր հասարակական-քաղաքական ուժերի դրական արձագանքին: Փաստաթուղթը դատապարտում է «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, որ ծրագրեցին ու գործադրեցին թուրք ցեղամոլ հետադիմականները... հայ ժողովրդի դեմ... Լիբանանի կոմկուսի կենտկոմը

1. **Անդրեասեան Ա.** Հայկական նոր հանգրուանը, Բեյրութ, 1967, էջ 27:
2. «Կանչ», 15. 01. 1973:

հարգանքով խոնարհվում է հայկական ջարդերի 1,5 մլն նահատակների հիշատակի առջև...»:[1]

Փաստաթղթում նաև ասվում է, որ ներկա ժամանակներում «հայ ժողովրդի քաղաքական պայքարի վերելքը» նորից է առաջ քաշում Հայ դատը «լիբրև պատմականորեն օրինական ազգային մի դատ, որի իրական և իրավական օրինականությունն անանցանելի է»:[2] Նաև առաջ է քաշվում մի ճշմարտություն, թե Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն նշանակում է արդարության հաստատում, այլև այն կարևոր քաղաքական գործոն է միջազգային կյանքում արդարություն հաստատելու պայքարի հաջողության համար:[3]

Լիբանանի կոմկուսի կենտկոմը գտնում էր, որ Հայկական հարցը համաշխարհային հեղափոխական շարժման անքակտելի մասն է, այն չի բացառում Հայկական հարցի լուծման համար նաև զինված պայքարի անհրաժեշտությունը:

Գնալով Հայկական հարցով ավելի եռանդուն են զբաղվում միջազգային և աշխարհատարածքային կազմակերպություններն ու խորհրդաժողովները:

Հայոց ցեղասպանության հարցին անդրադարձել է Հաագայի միջազգային դատարանը, որ 1984-ին քննարկելով այդ հարցը՝ դատապարտեց հայերի ցեղասպաններին: Նշվեց, որ «հայ ժողովրդի ոչնչացումը հանդիսանում է ցեղասպանություն, որի պատասխանատվությունը պետք է կրի թուրքական կառավարությունը»:[4]

1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը:[5]

Այս բանաձևը փոխանցվեց գրեթե բոլոր միջազգային կազմակերպություններին: Ուրուգվան ճանաչեց Մեծ եղեռնը: 1990-ի ապրիլին եղեռնը դատապարտող բանաձև ընդունեց (1990 թ. ապրիլ) Կիպրոսի խորհրդարանը:

---

1. «Լիբանանի Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտեի Հայտարարութիւնը Հայկական դատին և լիբանանահայոց պայքարի շուրջ», Բեյրութ, 1982, էջ 3:

2. Ն. տ., էջ 5:

3. Ն. տ., էջ 11:

4. «ԲՀԱ», 1989, N 2:

5. Parlament Europeen. Le poiet de la session. Strasburg, 15-19 juin, 1987, Doc. A2-33/87.

Նորագույն ժամանակներում Հայկական հարցի լուծման կրողները Սփյուռքն էր և Խորհրդային Հայաստանը: Բայց վերջինիս ոչ անկախ վիճակը ու նաև այն, որ Մոսկվան հայերի ազգային շահերն անվերապահ ենթարկում էր համապետական ծրագրերին, ստեղծվեց մի վիճակ, երբ Խորհրդային Հայաստանն ու ԽՍՀՄ 1920-1960-ական թվականներին Հայկական հարցը, փաստորեն, սառեցրին: Հարկ է նաև նշել այն, որ Սփյուռքը, առանց Խորհրդային Հայաստանի, էական քայլեր կատարել չէր կարող: Դրա հետևանքով Հայկական հարցը առկախ, ուշադրությունից դուրս մնաց մինչև Հայաստանի անկախանալը: Այս բնագավառում, իհարկե, սկզբունքորեն նոր իրավիճակ ստեղծվեց, երբ 1988-ի նոյեմբերի 22-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց. «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության դատապարտման մասին»: Օրենքը Հայոց ցեղասպանությունը որակավորեց որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն: Որոշվեց ապրիլի 24-ը հայտարարել Հայկական ցեղասպանության զոհերի հիշատակի օր: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը առաջարկեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ճանաչել և դատապարտել հայերի 1915 թ. ցեղասպանությունը:[1]

Հարկ է նշել, որ ապրիլի 24-ը որպես Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր նշվում էր սկսած 1965 թ.: Այդ օրը հայության լայն զանգվածները այցելում էին Եղեռնի զոհերի նորակառույց հուշարձանը, ՀԽՍՀ կուսակցական պետական ղեկավար գործիչները նույնն էին անում: Հայաստանի ՁԼՄ-ները հաղորդում կամ տպագրում էին նյութեր 1915-ի մասին, հոդվածներով ու հաղորդումներով հանդես էին գալիս նաև միութենական ՁԼՄ-ները: Սակայն այդ օրը պաշտոնապես հիշատակի օր նշվեց վերը նշված օրենքով:

Մեծ եղեռնն ու նաև դրա հանդեպ մարդկության քարոզությունը այն դարձրին հայերի կյանքի խոշոր բաժինը, մեծ հաշվով նաև նրա վարքագծի հիմքը: Խլված հայրենիքը վերածվեց ժողովրդի հիշողության, նրա վճռականության՝ երբեք չհաշտվել Արևմտյան Հայաստանի զավթելու հետ:

Այնուամենայնիվ, վերջին տասնամյակներին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չնայած դանդաղ, բայց հետևողականորեն ծավալվում է և կասկած չկա, որ ոչ հեռավոր ապագայում էական և ամբողջական հաջողություն կարձանագրի:

1. «ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», N22, Ե., 1988, էջ 304:

Հայոց ցեղասպանության ճանաչում նշանակում է.

1. Ժամանակակից Թուրքիան պետք է ձգտի ոչ թե ուրանալ ցեղասպանությունը, այլ մաքրի Թուրքիայի ճակատի խարանը, այսինքն՝ պաշտոնապես ճանաչի համիդների, երիտթուրքերի ու քեմալականների կողմից իրականացված հայերի բնաջնջումը: Գերմանական «Suddeutsche Zeitug»-ը 1983 թ. օգոստոսի 26-ին գրում է. «Թուրքիայի կառավարությունը ի վերջո պետք է ճանաչի հայոց ցեղասպանության իրողությունը, եթե ուզում է դառնալ քաղաքակիրթ պետություն»:

2.Ցեղասպանության զոհերը պետք է նյութական և հոգևոր-մշակութային փոխհատուցում ստանան:

3.Եղեռնը վերապրածների զավակները պետք է հնարավորություն ունենան անարգել վերադառնալ իրենց պատմական հայրենիք:

Սփյուռքի գործիչներից մեկը արտահայտում է հայության տրամադրությունը. «Թուրքերի կրնկին տակ ամայացած ու խոպան հայկական հողերու իրավունքն ու պահանջը մնայուն է, հավերժական, ուրեմն անոնց վերադարձին հետապնդումը կրնայ յետաձգուիլ միջազգային պայթուցիկ տագնապներու ճնշումին տակ, բայց երբեք չի կրնար ուրացուիլ կամ ջնջուիլ»[1]:

Որքան ժամանակն առաջանում է, Հայող ցեղասպանության հանդեպ հայության հետաքրքրությունը մեծանում է. «Հայութիւնը չի կրնար մոռնալ, չպիտի մոռնայ և պետք է չմոռնայ իրեն դեմ գործադրուած ցեղասպանութիւնը, մինչև որ ան չդատապարտուի ամբողջ մարդկութեան, բոլոր պետութիւններու կողմե, և մանավանդ ամենէն առաջ, նույնիքն՝ Թուրքիոյ կողմէ, պաշտոնապես և իրապես, և անոր կողմէ կատարուին բարոյական, քաղաքական, նիւթական համապատասխան հատուցումներ և յարգուին հայ ազգի արդար բոլոր իրավունքները: Այն չի հարկադրեր ցեղասպանութիւն ցեղասպանութեան դեմ: Ան կը պահանջե դատապարտել հայերու ցեղասպանութիւնը, որպեսզի պատմութեան մեջ որևէ ժողովրդի դեմ չկրկնուի ցեղասպանութիւն»[2]:

1. **Անդրեասեան Ա.** Հայկական դատին նոր հանգրուանը, Բեյրութ, 1967, էջ 75
2. «Կանչ», 23. 03. 1974:

8. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել թուրքերի ջարդարար քաղաքականությունը հպատակ ժողովուրդների հանդեպ՝ սկսած Օսմանյան կայսրության հիմնադրման ժամանակներից:

Այդ անելու համար մեզ օգնում են այժմ փոքրաթիվ և հայրենիքից հեռացած կամ արտաքսված թուրք հեղինակները: Դրանցից մեկը հանրահայտ թուրք պատմաբան Օսման Նուրին էր, որն ապրել ու գործել է Աբդուլ Համիդ 2-րդի գահակալության շրջանում: Թուրքական պատմագիտության այդ դասականը Հայաստանին և արևմտահայությանն առնչվող հիմնախնդիրները քննարկում է իր գլխավոր պատմագիտական եռահատոր աշխատությունում՝ գրված 1876-1909 թվերին: Օ. Նուրին խիզախ գիտնական էր: Մեկ օրինակ: Պատասխանելով անգլիայի թագուհու նամակին հայերի հանդեպ ճնշումներին վերջ դնելու վերաբերյալ, Նուրին նկատի ունենալով սուլթանի ցինիկ ստախոսությունը՝ գրում է, թե «հայերն են կոտորածի պատճառն ու բռնությունների հեղինակները...»:

Անհնար էր անցնել թուրք ժամանակակից առաջադիմական պատմագրության, գիտական նոր մտածողության հիմնադրի՝ Թ. Աքչամի կողքով: Հայերը ակնածանքով են վերաբերվում օսմանցի թուրքին՝ անկախ հասարակական կյանքում նրա դիրքից:

Միանգամայն այլ է հարաբերությունները արևելքից և հյուսիս-արևելքից Թուրքիա թափանցած քոչվոր թուրք-թաթարական ժողովուրդների ու ցեղերի հանդեպ:

Նրանք իսկապես վայրագներ էին, ցեղասպան, անկախ Թուրքիայում իրենց հասարակական դիրքից: Բայց եթե նման թուրքերի հանդեպ թշնամությունը հետևանք էր թուրք ցեղերի արյունարբության, նրանց կողմից հայերի գոյությանը սպառնացող մշտական վտանգի, ապա օսմանցի համարվող հոսանքներից շատերը մինչև օրս էլ չեն թոթափել բարբարոսությունը: Այդ թշնամությունը շատ հաճախ ազգի քաղաքականությունն է դառնում: «Թուրքը մնում է թուրք» ասացվածքը արտահայտությունն է՝ բացառապես թուրք պաշտոնական քաղաքականության:

Հասարակության լայն շրջաններում այն կարծիքը կա, թե «էն գլխից» հայ-թուրքական հարաբերությունները կրել են բացարձակ թշնամական բնույթ, թե այդ երկու ժողովուրդների բարի դրացիությունն անհնար է:

Սխալ տպավորություն. հայերի հանդեպ թուրքական վայրագությունները հետևանք են ոչ թե հայերի նկատմամբ թուրքերի անհաղթահարելի ատելության, այլ պայմանավորված են էթնիկական, զարգացման, կրոնական բնույթի գործոններով: Նաև սխալ է այն պնդումը, թե թուրքերը միշտ ռասայական ատելություն են ունեցել հայերի հանդեպ, ինչը որոշակի հանգամանքներում ձևավորել է, մի կողմից, թուրքերի հայաջինջ կեցվածքը, իսկ մյուս կողմից՝ բացառում է նրանց մոտեցումներում դրական որևէ դրսևորում:

Այդպես չէ: Թուրք-հայկական հարաբերությունները ունեցել են նաև բարիդրացիական, առանձին դեպքերում նաև ջերմ բնույթ: Օսմանցի թուրքի համար հայի հետ հաշտ ու խաղաղ ապրելը զարգացման խթան է իր համար:

«Հայկական բարեփոխումների հարցը Օսմանյան Թուրքիային նորից առաջադրվեց 1913 թվին: Պատճառն այն էր, որ Օսմանյան կայսրական սահմանները կտրուկ փոխվել էին, հատկապես, երբ Թուրքիան 1912-13 թթ. բալկանյան պատերազմների հետևանքով կորցրեց իր եվրոպական տարածքների մեծ մասը: Հայերը ոգևորված բալկանյան ժողովուրդների հաջողություններով՝ այն հույսն էին փայփայում, որ հասունացել էր իրենց խնդիրները միջազգային մակարդակի բարձրացնելու պահը: Այսպիսով, Բեռլինի պայմանագրի կնքումից 35 տարի անց 61-րդ հոդվածը «վերակենդանացավ», «կրկին կյանքի կոչվեց»...»[1]:

Թալեաթի՝ 1914 թ. օգոստոսի 10-ի նամակում, հասցեագրված Վեստենենկին, գրում է, որ վերջինս պետք է հետաձգի իր մեկնումը Երզրում ընդհանուր զորակոչի և «ներկայիս լուրջ հանգամանքների» պատճառով, որն «անհնար է դարձնում որոշված բարենորոգումների կիրառումը»[2]: «Ծրագրված բարեփոխումներն այդպես էլ չիրականացան, քանի

1. **Դյուսեն Յան Վան** Հայկական օրագիր, Ե., 2008, էջ 5:
2. Ն. տ., էջ 7:

որ Թուրքիան անմիջապես լուծեց Հայկական հարցը՝ իր իսկ նախաձեռնությամբ և իրեն հատուկ ձևով»:[1]

«Քեմալ Աթաթուրքի 1923 թ. հեղափոխությունից ի վեր, Թուրքիան հետևողականորեն լռում է Հայոց ցեղասպանության մասին, դրանով իսկ ձգտելով հերքել կատարվածը»:[2]

Երբ Վեստենենկը այցելում է Վագենհայմին «հրաժեշտ տալու համար», վերջինս ասում է. «Ինձ վստահեցրել են, որ կհավաքի թուրքական բանակը և բռնությունների կդիմի քրիստոնյաների նկատմամբ Բոսֆորում, եթե Ռուսաստանը կամ Անգլիան փորձեն ուժ գործադրել Դարդանելում»:[3]

1915 թ. հունվարի 26-ին Վիեննայում ստացված մի զեկուցագրում կարդում ենք. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կոտորել հայ գյուղացիներին»:[4] Նույն օրը Վիեննա ուղարկված մի այլ զեկույցում ասված է. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կողոպտել հայ գյուղացիներին»:[5]

1915-ի հոկտեմբերի 8-ին ավստրո-հունգարական բանակի երկու հրամանատարներ գրում են Վիեննա. «Թվում է, թե այս օրենքը (հայերին հարկադրաբար վերաբնակեցնելը) ընդհանրապես ստեղծվել է սոսկ նրա համար, որ օրենքի պաշտպանության ներքո կարողանան իրականացնել հայերի բնաջնջումը»: Իսկապես, 1917 թ. մարտի 24-ին Պալավինիչին զեկուցում է Թուրքիայի տնտեսության նախարար Ջալիլ բեյի հետ ունեցած զրույցի մասին. «... Նախարարը հայերի հալածանքները բնորոշեց (...) որպես նախկին կառավարության շատ մեծ սխալ: Ամբողջ ազգեր հալածելը և բնաջնջելու ցանկությունը քաղաքական տեսակետից մեծ սխալ է եղել»:[6]

1915 թ. սեպտեմբերի 30-ին դեսպանության խորհրդական Տրաուտ Մանսդորֆը գրում է Վիեննա. «Տղամարդիկ մեծ մասամբ սպանվել են,

1. Ն.տ., էջ 7:
2. Ն.տ.:
3. Ն. տ., էջ 8:
4. Wien, HHSTA PA. 272.
5. Ն. տ.:
6. Wien, HHSTA PA. 211:

կանանց և երեխաներին չնչին գնով վաճառել են թուրքերին: Նրանք, ովքեր հետիոտն ուղևորվել էին երկրի խորքերը, խիստ փոքր տոկոսով հասան իրենց նպատակին, քանզի ճանապարհին թերսնումից, հիվանդությունից և հյուծվածությունից վախճանվել են: Այսօր այլևս չի կարելի ժխտել, որ թուրքերը, անտարակույս, հայրենիքի դավաճանության և ապստամբության իբր տեղի ունեցած բազմաթիվ դեպքեր օգտագործել են որպես պատրվակ հայոց ցեղի բնաջնջումն իրականացնելու համար, մի իրողություն, որը թվում է, նրանց մեծավ մասամբ հաջողվել է»:[1]

Որ թուրքերը դեռևս պատրաստ չեն ՀՀ հետ բնականոն հարաբերություններ զարգացնելը ակնհայտ է: Այս խնդրում նախաձեռնությունը Հայաստանը վերցրել ու մեծ եռանդով առաջ է տանում: Նաև ակնհայտ է, որ Թուրքիան անվտանգ հարևան չէ և նրանից մշտապես պետք է զգուշանալ:

1. Wien, HHSTA PA. 209.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Երիտթուրքական «Մեշվերեթ» թերթը Աբդուլ Համիդի մասին

1 հունվարի 1900 թ. Ոճրագործների հետ հարաբերությունը նրա մեջ ստեղծել է այն համոզմունքը, թե չի կարող գահին մնալ և միահեծան իշխել ստահակների գործակցության: Խելագար է...

Ամոթ եմ բղավում այն բոլոր պետություններին, որոնք գործակցում են նման չարաղետ մենամոլի մոլորությունների հետ: Համիդն իր եղբայր Մուրադի դահիճն է: Նրան ստորաբար բանտարկել տվեց մի նպատակով՝ հափշտակելու գահը, որն իր արյունոտ ճիրանների մեջ է պահում...

15 մարտի 1900 թ. Նրան մեղադրում ենք հազարավոր անմեղների ջարդ կազմակերպելու համար: Առատորեն հոսեցնել տվեց իր հպատակների արյունը:

1 հունիս 1900 թ. 300 հազ. զոհերի արյուն թափեց և, երբ ոճրագործների բազուկները հոգնեցին, իրականացրեց սովորական գլխատումներ, որպեսզի աշխատավարձ ստացող իր ավազակները միշտ հմուտ լինեն ապագայում ուրիշ արյունահեղություններ կազմակերպելու համար:

1հունվարի 1901թ. Բացարձակապես մտավոր խանգարում ունի:

4 փետրվարի 1901թ. Թշնամի ամեն առաջադիմության:

15 օգոստոի 1901թ. Ճիվաղը, որին իրավամբ պետք է համարել պատուհաս մարդկության համար:

15 հունվարի 1902թ. Երկրի շահերն ու ամվտանգությունը մեզանից պահանջում են նրան գահընկեց անել:

1 ապրիլի 1902թ. Բարեգութ է միայն ոճրագործների ու լկտիների հանդեպ, որոնք հոգուտ իրեն են գործում...

Այսքան ոճիրների, այսքան ջարդերի անմեղ զոհերի անմեղ այրումը և արյան հոտը կոկորդ է բարձրանալու: Ո՞վ մեծագույն մեղապարտ, դու

դատապարտված ես՝ քո զոհերի արյունից բացի այլ բան չես կարողանալու տեսնել: Աշխարհիս բոլոր պետությունները մեղսակից են ստոր երեսպաշտիդ ոճիրներին և քեզ չեն կարող պաշտպանել այս կարմրագույն և վրիժառու տեսիլքից:

15 ապրիլի 1902թ. Ով ժանտախտ, խնայիր նրան, քանի որ նա քո գործն է շարունակում:

Ահմեդ Ռիզա՝ երիտթուրքական կուսակցության հիմնադիրներից ու պարագլուխներից մեկը, Սահմանադրության հռչակումից հետո օսմանյան խորհրդարանի նախագահ (սեպտեմբեր, 1908 թ.)

Շնորհավորել Համիդին՝ նշանակում է պատվել վայրագությունը, քաջալերել նրա ոճրագործ ձեռնարկները:

Մուրադ բեյ, 1908 թ

(Աբդուլ Համիդը) Սուլթաններից ամենակորովամիտը, ամենաիմաստունն է:[1]

«Մեշվերեթը» Սպաղանքի սպանդի մասին

Սպաղանքի դեպքը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Գերմանիայի կայսրը հրամայում էր Չինաստան գնացող իր զինվորներին որևէ գթություն ցույց չտալ նրանց նկատմամբ, ովքեր կդիմադրեն զենքով: Եթե Վիլհելմի այս խոսքերը ուղղված լինեին Ալի փաշային (սպանդի կազմակերպիչին), նա իր հերոսական գործի համար վարձատրություն կստանար:[2]

Երիտթուրքերի առաջին համագումարի (1900 թ.) բանաձևից

Եթե ուզում եք բարեկամաբար ապրել, պետք է մի կողմ թողնենք ազգությանց անհեթեթ պահանջները:[3]

Ալի Ֆուադ՝ քաղաքական գործիչ

Կայսրությունը կառավարում է ոչ թե օրինական կառավարություն, այլ ժողովրդին թալանող ածպարարների մի ավազակախումբ Աբդուլ Համիդի գլխավորությամբ:[4]

1. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, Բեյրութ, 1974, էջ 238:
2. «Դրոշակ», հոկտեմբեր, 1900թ.:
3. Ն. տ., էջ 196:
4. **А. Д. Желтяков** Печать в общественно-политической и культурной жизни Турции. Москва, 1972, стр. 275.

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի հայտարարություն

Սահմանադրությունը միակ իրական դարմանն է վերջ տալու միապետական չարագործ իշխանության գեղծումներին, որից բխում են Տաճկաստանի մի ծայրից մինչև մյուս ծայրը ամեն օր կատարվող քստմնելի գործերը, որոնց զոհ են քրիստոնյաներն ու մահմեդականները:[1]

«Միություն և առաջադիմություն» կուսակցության 1902 թ. համագումարում ընդունված բանաձևից

Մենք, օսմանեան ժողովուրդներս, կը զլանանք որևէ ձևի միասնութիւն այն վարչակարգին հետ, որին իշխանութեան ներքո ապրում ենք 25 տարի, հարստահարիչ վարչակարգ մը, որ միակ աղբիւրն է կայսրութեան մեջ գործուող բոլոր չարեաց և մարդկային նախատինքի:[2]

Սաբահեդդինի՝ Երիտթուրք պարագլուխ, իսկ ապա իթթիլաֆ կուսակցության պարագլուխ, Երիտթուրքերի 1902 թ. Փարիզի համաժողովում արտասանած ճառից

Մենք կրկին ու կրկին ասում ենք՝ բարենորոգումները, որ մենք պահանջում ենք և որոնց իրականացման համար եռանդուն աշխատում ենք, պետք է ծառայեն ոչ թե այս կամ այն ժողովրդին, ոչ թե այս կամ այն հավատին՝ ի վնաս մյուսների, այլ մենք բարենորոգում ենք պահանջում, առանց բացառության, բոլոր օսմանցիների համար:[3]

Նույն բանաձևի 4-րդ կետը

Մենք հաստատում ենք մեր անվերապահ մտադրությունը՝ հարգել միջազգային համաձայնագրերը, մասնավորապես Բեռլինի դաշնագիրը, քանի որ դրա Թուրքիային վերաբերող դրույթները կտարածվեն կայսրության բոլոր նահանգների վրա...[4]

Նույն բանաձևից

Օսմանյան պետության ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մասնակցել են 1902 թ. փետրվարի 4-ին Փարիզում բացված կոնգրեսին,

1. «Դրոշակ», 1898 թ., թիվ 2:

2. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ (1890-1910), Բեյրութ, 1973, էջ 240:

3. **P. Ferch** Constantinople aux derniers jours d'Abdul Hamid, Paris, 1907, p. 368:

4. Ն. տ., էջ 370:

բողոքում են Թուրքիայի ներկայիս վարչակարգի դեմ և համատեղ աշխատանքի կոչ են անում...[1]

«Շուրա»-ի ումմեթ»՝ իբրիհատական թերթ (10-ը ապրիլի 1907թ.)

Անհրաժեշտ է ստեղծել օսմանյան տարբեր տարրերի միավորում... ջանքեր լարել քաղաքական հարցերում օսմանյան մահմեդական հպատակների հայացքների նույնացման հասնելու համար:[2]

Երիտթուրքերի հոչակումներից

Այս երկիրն իրեն օսմանցի համարող յուրաքանչյուր անձի սեփականությունը և ունեցվածքն է... Մեր ալբանացի եղբայրների, այնպես, ինչպես Եգիպտոսի մեր հավատակիցների և մեր հայ հայրենակիցների ամենասուրբ պարտականությունն է՝ միասին, ինքնագոհ, ջանասիրությամբ մրցելով՝ պետությունն ու խալիֆաթը հասցնեն բարեկեցության հովիտը:[3]

Թուրք ազատախոհների 1906 թ. օգոստոսին հրապարակած կոչից

Տարիներ շարունակ ավազակային խմբերի գերի, անզոր ու ընկճուած ենք... Մեր նվիրական հայրենիքը դարձել է անարգ ու ոտնակոխ: Այս անգութ կառավարութիւնը միևնոյն հայրենիքի զավակների, տարբեր... բայց եղբայր ցեղերի, իրարու ձեռքով կոտորել է տալիս: Եվ չբավականանալով իրար թշնամի դարձնելով, նրանց կեանքն ու երջանկութիւնը վտանգի տակ դնելով, բանտերն ու աքսորավայրերը լեցնում է հայրենիքի ամենաանձնվեր զավակներով:[4]

Զիա Գեոքալպ՝ պանթուրքիզմի գաղափարախոս

Յուրաքանչյուրին պետք է թուրք համարել:

Քաղվածք համաժողովի թուրքերեն արչանագրությունից

Աբդուլ Համիդը ոճիրներ էր գործում և տարրերին իրար դեմ էր լարում: Բոլոր տարրերն ընդհանուր ջարդերի ենթարկվեցին՝ թուրք, հայ, հույն, բուլղարացի, քուրդ և արաբ:

Համիդը երկրի վաճառականությունը և կրթական համակարգը ոչնչացրեց: Փակեց դպրոցները, ուսուցիչներին բանտարկեց, աներևակայե-

1. «Նոր կյանք», 1902 թ., թիվ 1:
2. Ю. А. Петросян Младотурецкое движение, Москва, 1971, стр. 266.
3. S. Mardin Jön türkelerin siyasi fikirleri 1895-1908, Ankara, 1964, s. 133:
4. «Հնչակ», 1907 թ., թիվ 5:

լի գրաքննություն հաստատեց և երկիրը տգիտության, իսկ հպատակներին դժբախտության մեջ գցեց: Անհագ ու անպատիվ պաշտոնյաներ պահեց և անարդար տուրքերով պալատի գանձարանը լցրեց:

Խաֆիրների միջոցով արտաքին աշխարհին չգիտենալու մեջ պահելու համար կեղծեց երկրի ներքին կացությունը և լրագրերը հագեցրեց կաշառքներով: Արգելել էր անձնագիր տալ, տիրում էր անապահովություն: Գյուղացու անգամ սերմացուն էր բռնագրավում, որով անկման մղեց երկրագործությունը...

Այդ իսկ պատճառով այլ կրոններին ու ցեղերին պատկանողները ազատություն և անվտանգություն գտնելու համար Եվրոպա և մինչև իսկ Ամերիկա գաղթեցին: Այսպիսով՝ սովի պատճառ լինելուց բացի, պատճառ էր դառնում նաև ընդհանուր կոտորածների... Եթե մի փոքր էլ այդպես շարունակվի, Ալբանիան, Մակեդոնիան, Արաբիան և Հայաստանը, անկասկած, բաժանվելու են պետությունից...[1]

Ահմեդ Ռիզան Օսմանյան բանկի գրավման առնչությամբ

...Այս անգամ 10 հազարներով են կոտորում (հայերին):[2]

Նազըմ նույն առիթով

Այս մի քանի օրուայ կոտորածներու թիվը 100 000-ից անցել է: Երևի ալ հայ չպիտի թողնեն:[3]

Ահմեդ Ռիզա

Սուլթան Համիդը մեզ շատ պետք է: Նա մեծ ծառայություններ կարող է մատուցանել ներքին և արտաքին խնդիրների նկատմամբ, քանի որ ինքն անմրցելի քաղաքագետ է և ահագին թվով անձնական բարեկամներ ունի Եվրոպայի բոլոր ղեկավար շրջաններում: Նրա ազդեցությունից ու կարողությունից մենք պիտի օգտվենք, նա մեզ պետք է:[4]

-Եթե սուլթան Համիտ իր կենաց մի աղվոր բան ըրեր է , ատիկա հայերուն կոտորածն է:[5]

1. **Հ. Ղազարյան** Ցեղասպան թուրք, Բեյրութ, 1968, էջ 356-357:
2. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, էջ 181:
3. Ն.տ.:
4. Ն. տ., էջ 238:
5. **Ա. Եափուճեան** Մեծ եղեռնը օտար մտավորականութեան գնահատումով, Կահիրե, 1980, էջ 9:

-Իմ սերը հայրենիքի հանդեպ ստիպում է չկասկածել սուլթանի բարեխղճության վրա:[1]

-Իսլամը սոցիալական առումով էլ կարող է հիմք հանդիսանալ առաջադիմության համար:[2]

-Անհնար է արդարացում գտնել հայկական կոտորածների համար:[3]

Մուրադ բեյ՝ երիտթուրք գործիչ

Ընդհանուր բարենորոգումներից դուրս Թուրքիայում Հայկական հարցը զուրկ է գոյության իրավունքից:[4]

Հուսեյին Ջավիդ՝ երիտթուրք գործիչ

Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթները բարենորոգելու համար 61-րդ հոդվածի օգտագործումն անհնար է, և մենք նման հարցերով երբեք զբաղվել չենք կարող:

Ա. Ռիզայի նամակը Հաագայի կոնգրեսին

Մեր ծրագիրը հիմնված է հետևյալ ֆորմուլայի վրա. Միություն, Օսմանյան կայսրության ամբողջականություն և անբաժանելիություն, Օսմանի դինաստիայի պահպանում...[5]

Դամադ փաշա՝ պետական գործիչ

Չհագենալով իր զոհերով՝ Աբդուլ Համիդն արյունարբու հայացքը շուռ տվեց հայերի վրա, որոնց տրամադրությունները նրան վաղուց դուր չէի գալիս: Իրեն անվտանգ դարձնելու որոշումով նա դժբախտ Հայաստանը կրակի ու սրի քաշեց:[6]

---

1. **Г. З. Алиев** Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, стр. 116.

2. **S. Mardin** Jön türklerin siyasi fikirleri 1895-1908, s. 133.

3. "Mechveret", 1897, N 6.

4. **Murad Bey** La Papalis de Yildizcela Sublime Porte> La véritable mal d'Orient, Paris, 1895, p. 15.

5. "Mechveret", 1899, N 79.

6. «Դրոշակ», 1900, թիվ 7:

Փարիզի «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ազդագիր

Թող բոլորին հայտնի լինի, որ մենք սահմանադրական վարչակարգի պայմաններում էլ չենք կարող մեր գահը պատկերացնել առանց ներկայիս թագավորող դինաստիայի:[1]

Մուրադ բեյ

-Սա սուլթան չէ, այլ ինքը սատանան է՝ գահին նստած: ...Քանի դեռ կառավարում է սուլթան Համիդը, օսմանյան աշխարհն ու Եվրոպան նրանից այլ բան սպասել չեն կարող, բացի տհաճությունից, նորից տհաճությունից, անվերջ տհաճությունից:[2]

-Ես ամաչում եմ միապետ անվանել մեկին, որը բացի իր անձից ոչնչով չի մտահոգված, որը հանուն իր հանգստության և բարեհաջողության պատրաստ է զոհաբերել ամեն ինչ՝ պետության պատիվն ու արժանապատվությունը, ազգերի իրավունքները:[3]

Ակչուրա՝ պանթուրքիզմի տեսաբան

Օսմանեան կայսրութեան վերանորոգութեան և ուժեղացման համար միակ վստահելի տարրը թուրքն է: Թրքութեան մեջ պետք է որոնել փրկութիւնը, միացնել բազմամիլիոն թրքութեան բաժան-բաժան մասերը: Ահա թե որ ուղղութեամբ պետք է գնան մեր ջանքերը:[4]

Մուհամմեդ Էմին՝ պանթուրքիստ, բանաստեղծ

-Մեզի կը պատկանի ամեն բառ,
Որ թուրքի կոկորդէ կը հնչէ,
Մերն է այն երկիրն ընդարձակ,
Որ երեք աշխարհներ կընդգրկէ:[5]

Սիմեդ Էմին՝ թուրք քաղաքական գործիչ

-Նրանք (թուրքիստները) պարզապես գտան, որ ոչ թուրք տարրերը պետք է կլանվեն և ուծացվեն ու, եթե հարկ լինի, նույնիսկ բռնի միջոցներով:[6]

1. Й. Й. Голобородько (И. Южанин) Старая и новая Турция, Москва, 1908, стр. 212.

2. **Murad Bey** La Force et la Faibless de la Turguie, Ceneve, 1897, p. 27.

3. **E. Z. Karal** Osmali tarihi Cilt VII, Islahat Fermani devri (1861-1876), Ankara, 1956 (1984), s. 524.

4. **Ջարեվանդ** Միացեալ անկախ Թուրանիա, Աթենք, 1988, էջ 38-39:

5. Ն. տ., էջ 71:

6. A. Emin, The Development of Modern Turkey as Measured by its Press, New York, 1914, p. 100:

-Կույր և յարձակողական կայսրութիւն մը եղավ տիրական շարժիչը իթթիհատի քաղաքականութեան: Օսմանցիութիւն և միութիւն Թուրքիոյ բնակչութեան բոլոր տարրերուն՝ առանց ցեղի և դավանանքի խտրութեան:[1]

Աբդուլ Համիդ 2-րդ

Պարտությունից բացի այլ ելք չկա: Այս ազգը պատերազմի մեջ մտնելու օրն արդեն դատապարտված էր... Օվկիանոսների և ծովերի տեր անգլիական կայսրության դեմ Ավստրիայի և Գերմանիայի նման ցամաքային սահմանների մեջ բանտարկված պետությունների կողքին լինելը և կրակի մեջ նետվելը սխալ քայլից բացի նշանակում է հիմարություն:[2]

Վկայում են թուրքերը ու նրանց դաշնակիցները

Բանաստեղծ Էնիս Ավնին գրեց. «Ոտ դրած տեղերիս ամեն մի մասից արյուն պիտի ժայթքի... Երկարած թաթիս տակ գարունները աշնան և աշունները զնդանի պիտի վերածվեն...»: Իսկ 35 տարի անց «Բոյուք Դոդա» թերթը հոխորտաց. «Կասպից ծովը պետք է լցնենք պոռնիկ մոսկվացիների դիակներով»:

«Տրիբյուն Լը Մատենը» 1983 թ. հուլիսի 3-ին գրել է. Թուրքիայի կառավարողները պատերազմի մեջ մտան «հույս փայփայելով միավորել ուրալա-ալթայական լեզվով խոսող բոլոր ժողովուրդներին՝ Բալկաններից մինչև Ասիա: Եվ ահա նրա ճանապարհին կանգնած էր քրիստոնեական Հայաստանը... Ողջ հայ ժողովրդին մեղադրելով դավաճանության մեջ, երիտթուրքերը կազմակերպեցին դարի առաջին ցեղասպանությունը: Նրանք բռնագաղթեցրին և մորթեցին արևելյան մարզերի բոլոր հայերին: Ոչնչացվեց ավելի քան երկու միլիոն մարդ: 70 տարի է անցել այդ իրադարձություններից: Այսօր ցեղասպանությունը դեռևս չի ճանաչվել ոչ Թուրքիայի, ոչ համաշխարհային համագործակցության կողմից: Զարմանալի չէ, որ հայերն իրենց զգում են լքված: Դրա համար էլ նրանց զգալի մասը որոշեց պայքարել, որպեսզի վերածնի «հայկական գործը»:

«Դեր Բունդը» 1983 թ. հուլիսի 21-ին գրեց. «Թուրքական ազգայնամոլները հույս ունեին վերականգնել փլվող Օսմանական կայսրությունն իր ողջ հզորությամբ՝ Բալկաններից մինչև Կենտրոնական Ասիա: Նրանց ճանապարհին արգելքը քրիստոնեական Հայաստանն էր Թուրքիայի արևելյան սահմանի վրա»:

1. **Զարեվանդ** Միացեալ, անկախ Թուրանիա, էջ 42:

2. **Գ. Եազըճեան** Սուլթան Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, էջ 786:

Հինդենբուրգը, որ մի շարք տարիներ բնակվել է Թուրքիայում, ղեկավարել թուրքական բանակի վերակառուցման, վերազինման և վարժեցման աշխատանքները, մտերիմ հարաբերություններ էր հաստատել Թուրքիայի ղեկավար գործիչների հետ և քաջ գիտեր թե այդ գործիչներին և թե նրանց կուսակցության քաղաքական նպատակները, գրում է. «Հայկական հարցը... պատկանում է պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսության ընդգրկած հարցերին»: Ըստ Կ. Պոլսում գերմանական դեսպան Մետեռնիխի վկայության, հայերի բնաջնջման մտադրությունը գլխավոր դեր խաղաց պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու համար: Նպատակ էր առաջադրված Թուրքիան վերստեղծել «զուտ մահմեդական, համաթուրանական հիմքի վրա: Բոլոր ոչ մահմեդական և ոչ թուրքական բնակչությունը պետք է բռնությամբ մահմեդականացվեր և թուրքացվեր, իսկ այնտեղ, որտեղ այդ հնարավոր չէր՝ ոչնչացվեր»:

Քաջատեղյակ լինելով թուրքերի ձգտումներին Վանգենհայմը Թուրքիայի կառավարության ղեկավար Սայիդ Հալիմ փաշային խոստումներ էր տալիս, որպեսզի Օսմանյան կայսրությունը առանց ժամանակ կորցնելու պատերազմի մեջ մտներ: «Կովկասը ձեզ տալով,- ասում էր նա,- ձեր առաջ ուզում ենք Թուրանի ճամփան բացել»:

Թուրք գիտնականների մտքեր

-Մեծ Թուրանի մասին թախծող նոր արթնացող թուրքական աշխարհը դրեց հիմքը միապետության շենքի, որի գահին պետք է փայլեր Թուրանի թագը: Այդ շենքի սյուներ դարձան թուրքական գիտական ընկերությունը, «Թուրքերի հայրենիք», «Թուրքական օջախ» և «Թուրքական հզորություն» ընկերությունները:[1]

Քանի դեռ (մինչև 19-րդ դարի կեսերը) թուրքերը ունեին մնացած աշխարհից բարձր դասելու զգացողություն, նրանք չգիտեին, թե ովքեր են թուրքերը... Այդ գիտակցությունը նրանց հասավ միայն այն ժամանակ, երբ ոչ լիարժեքության զգացողությունը նրանց ամբողջությամբ տիրապետեց: Փաստորեն թուրքերի համար պանթուրքիզմը հանդիսացավ անելանելիության արտահայտություն, ոչ լիարժեքության զգացողությունից անհույս ու անխուսափելի փախուստ...[2]

1. **Türk Gücü Cemiyeti Murahhas Mes'ulü Kuzcuog lu Tashin Bey' den aktaran** Zafer Toprak, .11 Mezruriyet Dõneminde Paramiliter Genclik Orgütlerit, Tanzimat'tan Cumhuriyete Turkiye Ansiklopedisi, Cilt II, Istanbul, 1985, s. 532.

2. **Y. Kücük** Aydin Uzerine Tezier, Cult II, Istanbul, 1985, s. 23.

Ահմեդ Ռասիմ՝ պապմաբան

Սկսած 1862 թ., երբ իրականացվեց «Թասֆիրի Էֆքյար» թերթի հրատարակությունը, «օսմանական ազգ» տերմինի տակ հասկացվում էր թուրքեր:[1]

Ահմեդ Ռիզա

Ես այնքանով եմ սիրում արդարությունը, որ անհրաժեշտության դեպքում սեփական ձեռքերով կկոտորեի բոլոր հայերին:[2]

-Ինքնավարությունը դավաճանություն է հայրենիքին՝ դա կայսրության մասնատում է: ...Մեր քրիստոնյա հպատակները կդառնան օսմանցիներ:[3]

Ահմեդ Ֆերիդ

Օսմանցիական քաղաքականությունը նույնիսկ եթե չերաշխավորի հաստատուն և հուսալի ապագա, մեր օրերի ամենաղյուրին և անհրաժեշտ քաղաքականությունն է և Թուրքիայի քաղաքական գոյության միակ պայմանը:[4]

Երիտթուրքերն արաբներին

Մենք շուտով յառաջ պիտի քալենք յանուն Թուրքիոյ և յանուն թուրքական դրոշակին՝ մեկ կողմ թողնելով հավատքը... Դուք և ձեր ազգը պետք է լավ հասկանաք, որ դուք թուրք եք և արաբի հայրենիքի պես բաներ գոյություն չունի:[5]

Ահմեդ Ռիզա

(Թալեաթն) Արտակարգ կոմիտեական, չեթեական էր: Պետք չէր որ դառնար ներքին գործերի նախարար կամ էլ սատրազամ (վարչապետ):[6]

---

1. **Y. Akcura** Yeni Türk Devletinin Oncüleri, Yazilan, 1928, Ankara 1981, s. 29.
2. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, Երևան, 1982, էջ 17:
3. **E. E. Ramsaur** The Young Turks: Prelude to the Revolution of 1908, Beirut, 1965, s. 112.
4. **Զարեվանդ** Միացեալ, անկախ Թուրանիա, էջ 39:
5. Ն. տ., էջ 98-100:
6. Գ. Եազըճեան, Սուլթան Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, էջ 770:

«Թանին»

Թուրքերն իրենց աշխարհակալի հանգամանքով ունեն որոշ իրավունքներ և մենաշնորհներ: Կարիք չկա մյուս ցեղերի համար ճանաչել քաղաքական հավասարություն:[1]

«Թուրք օջախների» քայլերգից

Մենք ուզում ենք ամբողջ աշխարհին տիրանալ: Այլևս մեր տաճարը թուրք օջախն է, և մեր Քեաբեն էլ բարձր և լուսաշող Թուրանն է լոկ:[2]

Թուրքական մանկական երգ

Կարսն իմն է,
Էրզրումն իմն է,
Երգնկան իմն է,
Թուրք եմ՝
Երանի ինձ:[3]

Ահմեդ Աղան՝ պանթուրքիստ

Ճապոնացիներից բացի, թուրքերն Արևելքում այն են, ինչ գերմանացիներն՝ Արևմուտքում: Արևելքում մենք ամենաառաջադեմներն ենք: ...Գերմանիայի համար Արևելքը բացվելու է, և մենք ենք լինելու աշխարհին գերմանական քաղաքակրթության փոխանցողները:[4]

Մուրադ բեյ

Սուլթանի տիրապետությունից հայերին ազատելու ձգտումը հայկական կոմիտեների կողմից թելադրված գաղափար է, որ հանգեցնում է հանցագործ վճիռների, մահմեդականների հպարտության վիրավորմանը:[5]

Քաղաքական պանֆլետներ

Մարդկային պատմությունը չգիտի ավելի անպարկեշտ, ժլատ և նենգ միապետ:

Համիդը սատանա է, ոչ թե սուլթան, այլ՝ սև օձ:[6]

1. Ն. տ., էջ 663:
2. «Ազդակ», 1988 թ.:
3. Թուրքական հեռուստատեսություն, 28 հունվարի 1985 թ.:
4. Յուշամատեան մեծ եղեռնի 1915-1965, Բեյրութ, 1965, էջ 28:
5. **Murad Bey** La Force, et la Faiblesse de la Turguie, p. 48.
6. **E. Z. Karal** Osmanli tarihi, Cilt VII, s. 524.

Ալի Ֆահիր՝ երիտթուրք գործիչ

Որպեսզի չկրկնվեն հայկական կոտորածների բնույթի իրադարձությունները, որոնց մասին անհնար է հիշել առանց սարսափի և խոր ցավի զգացմունքի, հայրենակից հայերն իրենց պայքարում պետք է համաքայլ ընթանան (երիտթուրքերի) հետ... Մեզ անհրաժեշտ է համաձայնության գալ, որպեսզի թաղենք այդ անիծյալ կառավարությունը, որն իրեն վարկաբեկել է ժողովրդի արյունով և հասնենք բոլոր քաղաքացիների ազատության և հավասարության:[1]

Սասնո Սպաղանք գյուղի հայ բնակչության զազանային կոտորածի միջազգային արշաւանքների կապակցությամբ

Ինչո՞ւ Անգլիան և Ֆրանսիան կարող են Աֆրիկայում սպանություններ կատարել, իսկ քրդերը կամ թուրքերը իրենց երկրներում չեն կարող իրենց իմացած ձևով հայ ավազակների դատաստանը տեսնել...[2]

Ահմեդ Էֆենդի՝ Այդնի երեսփոխան

Թուրքիոյ մեջ դատական պաշտոնեաները մեծ մասամբ անբարոյական և կաշառակեր մարդիկ են:[3]

Սուլեյման Էֆենդի՝ Նիշի երեսփոխան

...Բայց պատիժ կրող պաշտոնատար մը երբեք տեսած չենք, և սակայն յանցավոր պաշտոնատարք խիստ շատ կան...[4]

Նազրմ

Ազգայնական չենք կրնար չըլլալ, մեր և մեր կուսակցութեան գոյութիւնը, անոր գործունեութիւնը ատով է պայմանավորուած, ազգայնականութեան մեջն է, որ մենք կտեսնենք մեր յարատևութեան առաջին գրավականը:

Չըլլալ ազգայնական, կը նշանակեր թուրք տիրապետող օսմանցի չդառնալ:[5]

1. **A. Fahri** Congré's de la jeune Turguie, Geneve, 1900, p. 4.
2. «Մեշվերեթ», սեպտեմբեր, 1900թ.:
3. «Մասիս» (Կ. Պոլիս), 1878, էջ 208:
4. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 239:
5. Ն. տ., էջ 251:

Սաբահեդդին

Իմ տեսակետով անոնք (իթթիհատականները) Թուրքիայի գոյութեան համար նույնքան վտանգավոր են, որքան Համիտի բռնակալութիւնը: Սուլթան Համիտն ու զանոնք միասին պետք է կործանել. առանց ատոր ոչ մեկ փոփոխութիւն պետք է ըլլա, առ առավելն անձեր կերթան, անձեր կուգան և իրերու դրութիւնը կը շարունակուի նոյնը մնալ, եթե դեռ ավելի չվատթարանա:[1]

Երիտթուրքական կենտրոնի կոչը Սահմանադրության հռչակման առթիվ (1908 թ.)

Արդեն 32 տարի է, որ որոշ վիլայեթներ պոկվել են մեր հայրենիքից, իսկ մնացածներն արյունով են լցված: Ահա արդեն 32 տարի է 35 միլիոն մարդ, ինչպես անասնահոտ, հալածանքի են ենթարկվում՝ չառաջացնելով մարդկության ցավակցությունը: Ահա արդեն 32 տարի է, որ մեր հայրենակիցների միջավայրը թշնամության սերմեր են նետված, որ մենք ենթարկվում ենք բռնությունների՝ ոմանք աքսորվում են, մյուսները՝ բանտ նետվում... Այսուհետև մենք ազատված ենք արյունոտ ճանկերից, որոնք խլել են ազգի սիրտը՝ ութ կամ տասը դավաճաններ...[2]

Հուսեյն Ջահիդ՝ երիտթուրք գործիչ

Ամենից առաջ թուրք ազգն է և այն պիտի մնա տիրող ազգ:[3]

Դամատ Ֆերիտ փաշա

300 միլիոն իսլամներու խալիֆը ծնած էր ոչ թե հաստատելու, այլ հրամայելու: Ազգային պետութեան տեսութիւնը... քայքայման կառաջնորդող պետութիւնը:[4]

Ֆայիդ բեյի, Մուստիչյանի և Էսադ Ռեուֆի տեղեկագիրը՝ հանձնված ներքին գործերի նախարարին

(Ադանայում) սպանելներու թիվը մոտ 15 հազար հոգի է, 30 հազար փոքրեր անպաշտպան և առանց նիւթական միջոցներու կը մնան:[5]

1. Ն. տ., էջ 254:
2. Г. З. Алиев Турция в период правления младотурок, Москва, 1972, стр. 117.
3. «Թանին», 25 հոկտեմբերի, 1908 թ.:
4. **Ա. Մանդելշտամ** Օսմանեան կայսրութեան ճակատագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 56:
5. «Ատանայի եղեռնը», Կ. Պոլիս, 1919, էջ 21:

Մուրադ բեյ՝ «Միզան» երիտթուրքական թերթի խմբագիր.

Իթթիհատ կուսակցութիւնը կազմակերպեց Կիլիկիոյ ջարդեր.

ա)Իթթիհատի ակումբներուն հավաքույթներեն ետք է, որ սկսած են Ատանայի ջարդերը...

բ)«Իթիտալ»՝ իթթիհադի օրկանը, բացարձակ կերպով գրգռած է ժողովուրդը...

գ)Ատանայի մեջ իշխանութիւնը Եղեռնին ատեն բոլորովին անհոգ գտնուած է և ամբողջութեամբ գրգռիչներուն ու ջարդարարներուն նպաստավոր գետին պատրաստած:

դ)Իթթիհատի ակումպէն 18 քաղաքներուն հետևեալ խիստ կարևոր հեռագիրը ուղղուած է.

«Կեռվտերելեանը (Հնչակյան գործիչ) 300 զինուած հայ ֆետայիներով ձեր գիւղը պիտի կոխե և տեղդ գտնուող հայերուն հետ միացած ընդհանուր ջարդ մը պիտի կատարե, ուստի անոնք չեկած դուք պետք եղածը ի գործ դրեք»:[1]

Երիտթուրք գործիչ

Մահմեդականներ ենք և անհավատներուն հետ հասարակաց բան մը չենք կրնար ունենալ: Իսլամական կայսրութիւնը պետք է մեզի վերադարձուի, ան այնքան ընդարձակ պիտի ըլլա, որ մենք կարենանք բոլորովին խզել կապը քրիստոնեաներուն հետ:[2]

Հիլմի փաշայի՝ մեծ վեզիր, Օսմանյան խորհրդարանում արտասանած ճառից (1909 թ.)

Ատանայի մեջ պատահած դեպքերու մասին իմ կառավարութիւնը նույնպես ունի հեռագիրներ: Դեռ չպարզուած ստոր մարդկանց թելադրութեամբ, յետադեմ ոճրագործ հայութիւնը յանկարծակիի բերելով, ջարդելու և հարստութիւնին կողոպտելու նպատակ ունեցած են: Այս արատը սահմանադրական երկրի մը համար յավիտենական ամոթ մըն է:[3]

1. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 310:
2. Ն. տ., էջ 330:
3. **Վ. Փափազեան** Իմ յուշերը, հատոր Բ, Բեյրութ, 1952, էջ 118:

Թ. Աքայով՝ թուրք պատմաբան

1909 թ. ապրիլի 14-ի դեպքերը հարավային Ադանա քաղաքում իսկապես մի «փոքր» էին մահմեդականների ու հայերի միջև քաղաքացիական այդ փոքր պատերազմում, որը տևեց երեք օր և հրահրվելով հետագայում վերածվեց փոխադարձ արյունահեղության:[1]

Երիտթուրքերի 1909 թ. հայտարարությունը

Որևէ ազգայնական շարժում հակաթրքական նկատուելով, չպիտի հանդուրժեն որևէ տարրի, որ իր գոյութեան մասին անջատ իրավունքներ ձեռք բերելու հետամտի:[2]

Ահմեդ Ռիզայի 1908 թ. սեպտեմբերի 14-ին արտասանած ճառից

Մենք այսուհետև հնչակիստ-դրոշակիստ չենք ճանչնար և անոնց հետ խորհրդակցելու պետք չունինք, որովհետև պետութեան բաղկացուցիչ բոլոր ազգերն ալ կան մեր կուսակցութեան մեջ... Եթե դրոշակիստները և հնչակիստները շարունակեն իրենց բրոպականդը, մենք պիտի հարձակինք անոնց վրա ու գիտցած եղեք, որ նորէն պիտի ջարդուիք:[3]

Ադիլ բեյին՝ ՆԳ նախարարության խորհրդական, Ադանայի ջարդի օրերին ուղարկված հեռագիր

Մեծագույն ուշադրութեամբ հոգ տարուի, որ վնաս չհասնի օտար կրոնային հաստատութեանց և հիւպատոսարաններուն:[4]

Մեվլան Զադե Ռիֆաթ՝ երիտթուրք նախկին գործիչ, հրապարակախոս

Իթթիհատի Ատանայի մասնաճյուղը կեղրոնէն ստացած հրահանգին համաձայն Կիլիկիոյ, մասնավորապես Ատանայի մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստել սկսած էր...

Ատանայի կուսակալ Ճնատ պեյ և Ռեմզի փաշա, հայերուն ապստամբութիւն վերագրելով, նախապես զինվորական ուժ խնդրած էին. իս-

1. T. Atayöv Ouestion armenienne, Ankara, 1986, s. 31.

2. Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 141:

3. Ն. տ., էջ 143:

4. Ն. տ., էջ 174:

լամները հայկական թաղերում վրայ յարձակիլ փորձած և սակայն ցոյց տրուած զորավոր ինքնապաշտպանութեան վրայ չկարենալով ներս մտնել, խանութները թալանի տուած և գիշերը թաղերումն կրակ ձգած էին:

Այս խուճապը, ընդհարումը, արիւնոտ կռիվը ճիշտ երեք օր երեք գիշեր տևած էր...

(Ապրիլի 25-ին) Տեսե Աղաճի վաշտը, առանց որևէ պատճառի, հայերու վրա կրակելու հրաման ստացած էր...

Կրկին սկսած այս ջարդը և ասոր յաջորդող հրդեհը և թալանը մինչև հետևյալ առավոտ շարունակած էր և հայկական եկեղեցի մը, հոն ապաստանած փոքրիկներու ու անմեղներու հետ, հրկիզուած էր...[1]

Սայիդ Հալիմը՝ վարչապետ, Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին (1913 թ.).

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համաձայն կարելի է խոսել հայկական բարենորոգումների իրականացման ժամանակ տերությունների որոշ վերահսկողության մասին, սակայն Թուրքիան ամբողջ ուժով կդիմադրի իր ներքին գործերին միջամտելուն:[2]

Էնվեր փաշան Պալավիչինիին

Եթե Ռուսաստանը ներքաշվի պատերազմի մեջ, Թուրքիան ի վիճակի կլինի լուրջ ապստամբության մղելու Ռուսաստանի և Աղրբեջանի մահմեդական ազգաբնակչությանը:[3]

Իսմայիլ Սեբնանը՝ երիտթուրք գործիչ, Աղանայի երկրորդ ջարդի նախօրյակին.

Այն, ինչ կատարված է, դեռ ամենը չէ. դա անբավարար է: Մենք միայն կարճատև դադար ենք առել: Բայց դեռ կտեսնենք, թե այդ ամենը ինչով կվերջանա:[4]

---

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ քաղաքականութիւնը, Բեյրութ, 1968 թ., էջ 104-106:

2. Wien, HHSTA PA XII 463 Jenikoj, 2 september, 1913, N 50/ E.

3. Wien, HHSTA PA I, 552 Jenikoj, 20 Juli, 1914, N 338.

4. «Իթիդալ» թերթի 1909 թ. ապրիլի 22-ի համարը կամ **A. Adossides** Arménies et Jeunes Turcs. Les massacres de Cilicle, Paris, 1910 կամ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 253:

Ջեմալ փաշան Մուշեղ եպիսկոպոսին (Ադանա)

Ջնջել ազգութիւններու առանձնաշնորհումները, և յանդուգն քայլով մը թրքացնել ամեն ինչ, ամեն տեղ:[1]

Ահմեդ Ռիզա

...Անկեղծորեն, ի՞նչ պիտի պատասխանեն պետութիւնները, եթե սուլթանը նրանց հետևյալ պատասխանը տա. «Ես ապստամբած հպատակներիս եմ պատժում»:[2]

«Իգդամ» թերթի «Վնասակար է ոչ իսլամական համախմբումների կոչումը» խմբագրականը

Երկրում առանձին ազգային բարձրագույն վարժարան հիմնելը վտանգավոր է... Օսմանեան կառավարութեան գթութեան շնորհիվ է, որ իր պետութեան մեջ առանձին ցանկութիւնների հետամուտ ազգութիւնները իրենց հատուկ վարժարաններն ունեցան: Մեր երկրում տարբեր վարժարանները Օսմանեան միութեանն արգելք են: Ժամանակն է այսուհետև ազգային քաղաքականութեանը հետևելու:[3]

Երիտթուրքական սպաների հայտարարությունը

Այս կայսրութիւնը մեզ է պատկանում և քանի որ դեռ թեկուզ մեկ թուրք ապրում է, թույլ չենք տա, որ այստեղ թուրքերից բացի որևէ ոք օրենք գործադրի...[4]

«Հուրիեթ» թերթ

Օսմանեականութեան, օսմանեան ազգայնականութեան մեջ չծուլուող և ընդդիմացող ցեղերը հարկավոր էր բնաջնջել որպես անհրաժեշտութիւն և ապահովութիւն ապագային:

Իթթիհատը դեռ առաջները կատաղի յարձակումներ է գործել տաճկահայերու դեմ իսլամութեան շահի անհրաժեշտութեան տեսակետից: Նա մեկն է համիսլամական այն բազմաթիվ համոզուողներից, որ Մի-

1. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 203:
2. **Մ. Սերոբեան** Հայկական մղձավանջ, Բոստոն, 1916, էջ 36 կամ «Մեշվերեթ», 1904 թ., հունվարի 1:
3. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 261:
4. Ն. տ., էջ 268:

ջերկրականից մինչև Չինաստան, Ղազուանից մինչև Հնդկական օվկիանոսը մոտիկ ապագային ընդհանուր սեփականութիւն են համարվում իսլամութեան:[1]

Նախընտրական թռուցիկ (1909 թ.)

Հայերուն և հույներուն ազատութիւն տալը տերութեան կործանում կը նշանակի և Օսմանեան կայսրութիւն արդեն կանգնած է կործանման վիհի առաջ, ուստի իսլամի ճշմարիտ բարեկամները լուրջ կերպով պիտի մտածեն ու միջոցներ ձեռք առնեն հայերը ջնջելու և պետութիւնը անկումից փրկելու համար:[2]

Աղանայի ջարդի կապակցությամբ երիտթուրքական կառավարության ստեղծած հանձնաժողովի եզրակացությունից

Իթթիհադի կուսակցության անդամները եղել են Աղանայի ահավոր ջարդերի կազմակերպիչներն ու մասնակիցները: Այս փաստը հաստատվել է նահանգի շատ խավերի, ինչպես նաև հյուպատոսների, ամերիկյան միսիոներների և կաթոլիկ հոգևորականների վկայություններով:[3]

Յոզլի Ֆեյսել՝ թուրք պապմաբան (1908թ.)

(Սահմանադրությունից հետո) Օգտվելով իթթիհատականների միամտությունից, հայերն ավելի լայնորեն ծավալեցին իրենց գործունեությունը: Դառնալով խաղալիք ռուսների և անգլիացիների ձեռքում, զինվելով ժամանակակից զենքով, նրանք դարձան իսկական աղետ թուրքական պետության համար...[4]

Արիֆ բեյ՝ նախկին ներքին գործերի նախարար

Հայերը Թուրքիայի ոչ մի մասում ազգաբնակչության մեծամասնություն չեն կազմում: Դրա համար թուրքական տարածքների վրա անկախ պետություն ստեղծելու մասին հայերը չպետք է մտածեն...

---

1. **Հ. Շահրիկեան (Ատոմ)** Բարենորոգումներու հարցը, Կ. Պոլիս, 1914 կամ **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 270:

2. **Յ. Յովակիմեան** Պատմութիւն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 178-180:

3. **Ա. Դարբինյան** Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր, 1890-1940, էջ 209:

4. **V. Erogli** Ermeni mezalimi, Istanbul, 1973, s. 108.

Միություն և առաջադիմություն կուսակցության կառավարման ներքո Թուրքիայում կուսակցությունների ստեղծումն անհնար է: Այսօր երկրում չկա ոչ մի կուսակցություն, որ ճշտությամբ ներկայացնի (մարմնավորի) ազգը:

Ահմեդ Շուա բեյը՝ երիտթուրքական գործիչ, հայերին (1908 թ. հուլիս)

Անհնար է, որ թուրքերն ու հայերը կազմակերպեն միմյանցից անկախ քաղաքական կառավարում և միմյանցից բաժանվեն, ինչը բխում է աշխարհագրական, պատմական և քաղաքական նկատառումներից: Մենք դատապարտված ենք ապրելու միասին: Եթե հայերն ու թուրքերը միասին չապրեն, դա վնաս կհասցնի թե հայերին և թե պետությանը: ...Դուք մեծ կայսրության զավակներ եք: Կայսրության ծավալների համեմատությամբ շատ ողորմելի տեսք կունենա Հայաստանը՝ որպես արդյունք անհեռատես մտածողության: ...Մոռանանք մռայլ անցյալը և ձեռք ձեռքի տված ձեռնամուխ լինենք ստեղծարար աշխատանքի հանուն հայրենիքի փրկության և երջանկության:[1]

Բ. Շաքիր

Մենք պետք է օգտագործենք նրանց (ՀՅ Դաշնակցության) հնարավորությունները: Հենց որ վերցնենք իշխանությունը, կհեշտանա դաս տալ նրանց, ովքեր ձգտում են վարչական ինքնավարության:

Իթթիհադ վե թերակկը և ՀՀ Դաշնակցության կուսակցությունների 1909 թ. համաձայնագիրը

1.Սահմանադրության իրականացման և երկրում հասարակական զարգացումը անսասանորեն ամրապնդելու համար անհրաժեշտ է համատեղ պայքարել՝ չխնայելով ուժերը:

2.Հետադիմական շարժումների հանդեպ գործել համաձայնեցված՝ օգտագործելով օրինական եղանակներ:

3.Երկու կուսակցությունների համատեղ գործունեության վերջնական նպատակը համարել օսմանյան հայրենիքի ամբողջականության պահպանումը, նրանք պետք է գործնականում ցրեն բռնատիրական վարչակարգից ժառանգած լուրերն այն մասին, թե հայերը ձգտում են անկախության:

4.Երկու կուսակցությունները հայտարարում են, որ իրենք միահա-

1. «Բյուզանդիոն», 1908 թ., թիվ 3:

մուռ են վիլայեթների իրավունքների ընդլայնման գործում և աջակցում են օսմանյան ընդհանուր հայրենիքի զարգացմանն ու առաջընթացին:

Իթթիհադ վե թերակը և Դաշնակցություն կուսակցությունը մարտի 31-ի Ադանայի ողբերգական իրադարձությունները համարելով դաս քաղելու նախազգուշացում՝ որոշեցին գործել համատեղ հիմնական կետերն իրականացնելու համար:[1]

Էնվեր փաշայի ճառը Կ. Պոլսի հայկական պատրիարքարանում 1909 թ. հուլիսի 15-ին

Մենք երբեք չենք կրնար չյիշել նիւթական, բարոյական և մարդկային այն մեծ ու ծանր զոհողութիւնները, ինչ-որ ըրավ հայ ազգը տապալելու համար համիտեան բռնակալական ռեժիմը: Մենք հոս հաճույքով կը խոստովանինք, թե հայ յեղափոխականները, և ի մասնավորի, հայ յեղափ. դաշնակցութեան քոմիտեն եղան մեր ուսուցիչը և ռահվիրան սուլթան Համիտի բռնակալութեան դեմ մեր վարած ժեռն-թիւրք յեղափոխական շարժումին: Այո, մենք յավետ երախտապարտ ենք հանդեպ հայոց...

Բայց եթե հայ ազգը օսմանեան նոր և ազատ ռեժիմին դեմ ալ գլուխ բարձրացնելով, անջատողական նպատակով, սուլթան Համիտի օրով եղածին նման ուզե կրկին դիմել դավաղրական գաղտնի գործունեութեան, ապա համարձակորեն կըսեմ, թե մենք՝ իթթիհատականներս, այնպիսի խստութեամբ պիտի պայքարենք այդպիսի ազգային դավաճանութեան դեմ, որ պիտի փնտռեք սուլթան Համիտի բռնակալութեան ամենասև օրերը:[2]

Արդուլ Ռեշիդի՝ երիտթուրքերի կոմիտեի անդամ, 1912 թ. մարտի հայտարարությունը

Եթե ամբողջ Եվրոպան մեր վրան յարձակի մեզ բնաջնջելու համար, մենք ալ այն ատէն ստիպուած մեզի հպատակ քրիստոնեա ժողովուրդներու դեմ այնպիսի վրեժխնդրական ծրագիր մը պիտի գործադրենք, որ եվրոպացիները պիտի ապշին և չպիտի կրնան մեզի դեմ քայլ մը իսկ առնել:[3]

1. **Մ. Վարանդեան** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 2, Կահիրե, 1950, էջ 19:

2. Ն. տ., էջ 462:

3. Ն. տ., էջ 463:

Թուրք պաշտոնատարի հայտարարությունը Աղանայում (1918 թ.).

Ինչպես որ Թուրքիոյ հայերը արմատէն չեզոքացուցինք ու բնաջնջեցինք, անանկ ալ Կովկասի հայերը պիտի փճացնենք, որպեսզի հայոց մեզ դարերէ ի վեր առթած գլխացավեն մի անգամ ընդմիշտ ազատինք:[1]

Բեդրի բեյ՝ ոստիկանապետ

Մի՞թե կառավարութիւնը ժամանակ ունի անմեղները և յանցավորները իրարմէ զատելու: Մենք որոշած ենք բնաջնջել բոլոր հայերը:[2]

Մ. Թալեաթ

Այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ և հաջողվում է, աշխարհը ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի, և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար:[3]

Մ. Թալեաթ. երիտթուրքերի Սալոնիկի 1910 թ. հանձնաժողովում արտասանած ճառից (Անգլիայի փոխհյուպատոս Արթուր Հենրիի աղագրությունը)

Դուք գիտեք, որ համաձայն Սահմանադրության, մահմեդականներն ու քրիստոնյաները հավասար են, սակայն դուք բոլորդ և յուրաքանչյուրդ առանձին, նաև գիտեք ու զգում եք, որ դա անիրագործելի գաղափար է: Շարիաթը, մեր ամբողջ պատմությունը, հարյուր հազարավոր մահմեդականների և նույնիսկ իրենց՝ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն ընդդիմանում են իրենց օսմանացման բոլոր փորձերին, մեծ խոչընդոտ են իրական հավասարության հաստատման համար: Գյավուրներին լոյալ օսմանցի դարձնելու փորձեր մենք կատարել ենք: Այդպիսի ամեն մի փորձ անպայման կձախողվի, քանի դեռ Բալկանյան թերակղզու փոքրիկ անկախ պետությունները հնարավորություն ունեն տարածելու անջատողական գաղափարներ Մակեդոնիայի բնակչության շրջանում: Ուստի խոսք անգամ լինել չի կարող հավասարության մասին, քանի դեռ հաջողության չենք հասել օսմանացման մեր քաղաքականության մեջ:[4]

1. Ն. տ., էջ 187:

2. Ն. տ., էջ 275:

3. **H. Ebip** Memoirs, New York-London, 1926, p. 337.

4. **Ф. Шуберт** Европа и Дума Востока, Франкфурт, 1947. **G. P. Gooch and Harold Temperley** British documents on the origins of the war, 1898-1914, Vol. IX. The Balkan Wars. Part I. The Prelude. The Tripoli war, London, 1933, p. 208 կամ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 266:

Սալոնիկի ժողովում 1910 թ. օգոստոսի 10-ին ընդունված որոշումը

Հոդված 1. Ընկերակցութիւններու օրենքին երրորդ և չորրորդ հոդվածներէն օգտուելով՝ բոլոր հայ ընկերութիւնները խափանել և անոնց վարչական մարմիններուն և անոնց մեջ ի վաղուց իթթիհատի կառավարութեան հակառակ աշխատողները ամբողջովին ձերբակալելով Մոսուլի, Պաղտատի պես նահանգները դրկել և ճամբան կամ այլ տեղերը փճացնել:

Հոդված 2. Բոլոր հայոց ամեն տեսակ զենքերը հավաքել:

Հոդված 3. Մասնավոր պատշաճ միջոցներով, իսլամական կարծիքը պատրաստել Վանի, Էրզրումի և Ատափազարի պես տեղեր, ուր հայերը արդեն իսկ իրենց ընտանիքովը իսլամներու պժգանքը շահած են, կազմակերպեալ դեպքեր ստեղծել, ինչպես Ռուսիան ըրավ Պագուի մեջ:

Հոդված 4. Էրզրումի, Վանի, Էլ Ազիզի և Պիթլիսի պես նահանգներու մեջ (բնաջնջումի) գործողութիւնը բոլորովին ժողովրդին թողնելով, զորքերն ու կարգապահական ուժերը իբր թե ջարդերը արգիլելու գործածել: Իսկ Ատանայի, Պրուսայի, Նիկիմնոյ և Իզմիրի պես տեղերը, ընդհակառակն, իսլամներին օգնել զինվորական ուժով:

Հոդված 5. Բնաջնջումը գործադրել մասնավորապես հիսունէն վար այրերու և դպրոցի ուսուցիչներու վրա: Աղջիկներն ու մանուկները թողուլ իսլամացնելու համար:

Հոդված 6. Փախչելու հաջողածներուն ընտանիքը մեջտեղէն վերացնել և միջոցներ ձեռք առնել երկրին հետ անոնց կապը բոլորովին խզելու համար:

Հոդված 7. Կառավարութեան հայ պաշտոնեաները, պատճառաբանելով, թե լրտեսութիւն ըրած են, վտարել բոլոր պաշտոններէն:

Հոդված 8. Բանակին մեջ գտնուողներուն պատշաճ կերպով իշխանութեան կողմէ բնաջնջում:

Հոդված 9. (Բնաջնջումի) գործողութիւնը ամեն կողմ միաժամանակ սկսիլ և այդպեսով ինքնապաշտպանութեան ժամանակ չթողալ:

Հոդված 10. Այս հրահանգի գաղտնի մնալուն և միայն մեկ-երկու հոգիի միջև մնալուն վերջին ծայր հոգ տանիլ:[1]

1. «Ազդակ», 11 հունիսի 1965 կամ R. Pinon, L'Erope of la Jeune Turquie, Paris, 1913, p. 99.

Համաժողովը որոշեց

Բոնի թուրքացնել կամ բնաջնջել ոչ թուրք տարրերին և այլևս թույլ չտալ Թուրքիայում, բացի թուքերենից, այլ լեզուներով խոսել:[1]

Յաշար Նաբի՝ պատմաբան

Թուրանիստ-ազգայնամոլները կողմնակից էին երկրագնդում բնակվող բոլոր թուրքերի միավորման գաղափարին: Եթե չհաշվենք Բալկաններում և Չինաստանում բնակվող որոշակի թվով թուրքերին, ապա միակ երկիրը, որտեղ կենտրոնացած են թուրքական ռասայի մարդիկ, Ռուսաստանն է:[2]

«Ենի մեջում» թերթ

Իսկական քաղաքակրթությունը թուրքականն է, որը նոր-նոր է սկիզբ առնում նոր կյանքի զարգացմանը զուգընթաց: Թուրքական ռասան մյուս ռասաների նման սպիրտից ու այլասերություններից փչացած չէ: Թուրքական արյունը կոփվել, երիտասարդացել է մարտերում: Գերմարդը, որի մասին երազում էր գերմանացի փիլիսոփա Նիցշեն, դա թուրքն է: Թուրքերը՝ դրանք յուրաքանչյուր դարի «նոր մարդիկ» են:

Հալիդի՝ երեսփոխան, 1923 թ. Ազգային ժողովում կատարած հայտարարությունից

Պետք է հայ ժողովրդին ոչնչացնել: Մենք պետք է պահպանենք ատելությունը հայերի հանդեպ:[3]

Երիտթուրքական տեսական դրույթ

Թուրք ժողովուրդը Աստծո ընտրյալ ժողովուրդն է:[4]

Այդ ընտրյալ ազգի մի մասը, որը բնակվում է մինչև Չինաստան, գերության մեջ է:[5]

---

1. **Հ. Ղազարեան**, Յեղասպան թուրքը, էջ 111:
2. **Յաշար Նաբի** Ո՞ւր ենք մենք գնում, էջ 59:
3. "Правда", 15 ապրիլի, 1924 թ.:
4. **Харис МапосТероризмът** първородната рожба на ЦРУ, София, 1985 стр. 183-184.
5. **O. Unal, C. T. Karaoguz** Milli Cografya. Ana Ders Kitabi I, Ankara, 1985.

Թուրքական թերթ

Անատոլիայի ոչ թուրք էթնիկական խմբերի գրգռիչ վարմունքները պանթուրքիզմի կողմնակիցներին հարկադրեցին ապացուցել, թե Անատոլիան թուրքական հող է:[1]

Զիա Գեոքալպի

-Հարյուր միլիոն թուրքերի միավորումը մեկ ազգի մեջ թուրքական ազգայնականության համար հանդիսանում է խանդավառության առավել հզոր աղբյուրներից մեկը: Եթե գոյություն չունենար թուրանականության իդեալը, թուրքական ազգայնամոլությունը չէր կարող այդքան արագ զարգանալ:[2]

-Թուրք ազգությունն ավելի առաջնային է, կարևոր, քան իսլամը. այն գլխավոր ռասայական հպարտություն է:[3]

-Զգացողությունը, որ ես ունեմ իմ արյան մեջ, կապված է անցյալիս հետ: Իմ նախնիների փառավոր գործերը ես դիտում եմ ոչ թե անցած գնացած, պատմության դեղնած, փոշեծածկ էջեր, այլ որպես արյուն, որ հոսում է իմ երակներում, իմ սրտում, իմ Աքիլա, իմ Չինգիզ, հերոսական դեմքեր, իմ ռասայի պարծանքն ու փառքը, որոնք չեն զիջում Ալեքսանդրին ու Կեսարին: Դպրոցականի համար մշուշով պատված մի ֆիգուրա հանդիսացող Օգուզ խանը մոտ և հասկանալի է իմ հոգուն: Իմ արյան մեջ իր ամբողջ մեծությամբ ու փառքով ապրում է, իմ հոգին շոյում և ինձ հարկադրում է բացականչել. «Թուրքերի հայրենիքը ոչ Թուրքիան է և ոչ էլ Թուրքստանը, այն մի ընդարձակ ու անվերջ տարածք է՝ դա Թուրանն է»:[4]

-«Ենի մեջմուաա» հանդեսում տպագրված իր «Ի՞նչ է Թուրանը» հոդվածի մասին.

Այդ հոդվածում ցույց եմ տալիս, որ այսօրվա պատկերացումով այն մշակութային Թուրան է: Այսինքն՝ օսմանյան թուրքերը պետք է մեկ

1. Basiret gazetesinden aktaran; **David Kushner** Türk milliyetciliginin Doguzu, Istanbul, 1979, s. 77.

2. **Е. Ф. Лудшвейт** Турция в годы первой мировой войны 1914-1918 гг. Москва, 1966, стр. 308.

3. **Turkey**: A Past and a Future: Reprinted (with additions) from "The Round Table", London, June, 1917, p. 25.

4. **Բլանկո Վիլյալտ** էջ 40:

մշակույթ ստեղծեն: Հետագայում մյուս թուրքերը այն ընդունելու դեպքում կստացվի մշակութային Թուրան: Եվ դա նպաստավոր կլինի նաև օսմանյան պետության համար, քանի որ, նախ, կզարգանա օսմանյան երկրի հիմքը հանդիսացող թրքությունը: Բնական է, որ կհզորանա նաև պետությունը, հետագայում էլ ամբողջ թրքությունը, որոնք կընդունեն օսմանյան թուրքերեն լեզուն: Ադրբեջանի թուրքերն արդեն սկսել են մշակույթային Թուրանի ուղղությամբ աշխատել: Թուրքերեն լեզվի տարածումը, օսմանյան գրականությունը, որպես ազգային գրականություն ընդունելը, բոլոր թուրքերին հոգով-արյունով կապելու է մեզ հետ: Բոլոր թուրքերը կարդալու են մեզ մոտ լույս տեսած ստեղծագործությունները:[1]

-Պետք է միավորել բոլոր թուրքալեզու ժողովուրդներին: Համաձայն թուրքական պատմական թեզի, թուրքերն են ստեղծել ու տարածել աշխարհում առաջին քաղաքակրթությունը, թուրքերենը հանդիսանում է աշխարհի բոլոր լեզուների «սկզբնաղբյուրը, գերլեզուն», իսկ թուրքական ռասան հանդիսանում է «իշխող ռասա»:

Անհրաժեշտ է մի ազգի մեջ միավորել 100 միլիոն թուրքերին... Անցյալում Թուրանի գաղափարը երևակայություն չէր, այլ իրականություն էր..., այն հանդիսանում է մեծ հայրենիք:[2]

-Գիտնականներից ոմանք փորձում են թուրքերին, ինչպիսիք են միջինասիական թուրքերը, Վոլգայի ափին բնակվող թուրքերին, Սիբիրի և Փոքր Ասիայի թուրքերին արհեստականորեն իրարից անջատել և առանձին ազգեր համարել: Մեր նպատակը հարյուր միլիոն թրքությունը մեկ ազգի մեջ միատեղելն է:[3]

-Որտե՞ղ է Թուրանը: Որտե՞ղ է Ղրիմը: Ի՞նչ պատահեց Կովկասի հետ: Ամենուրեք ռուսներ են՝ Կազանից մինչև Տիբեթ... ջախջախելով թշնամուն՝ Թուրքիան ընդլայնելու է իր ազդեցությունը Թուրանը վերստեղծելու համար: Օսմանյան կայսրության անկումը հետևանք էր պետության վրա մահմեդական քաղաքականության չափից վեր ազդեցության, որի արմատները արաբական և պարսկական են և ոչ թուրքական: Քաղաքական և կրոնական իշխանությունների համատեղումը սուլթան-խա-

1. "Takvim-i Vekai", թիվ 3557, 14 մայիսի 1919 թ.:
2. З. Гекальп Основы тюркологии, стр. 23-24.
3. **Z. Gökalp** Türkcülüğün Esaslari, Istanbul, 1952, s. 28.

լիֆի անձի մեջ և սոցիալական կյանքում Կորանի հանձնարարականների կիրառումը խոչընդոտում են արևմտյան տեխնիկայի նվաճումների ներթափանցումը: Այսպիսով, վերակառուցման ջանքերը պետք է կրոնը անջատեն պետությունից, գիտության և տեխնիկայի բնագավառում ընթանալ արևմտյան քաղաքակրթության ուղիով, ի վերջո կառուցել մի այնպիսի քաղաքական համակարգ, որն իշխանությունը հանձնի ինտելեկտուալ էլիտային: Այդ պետությունը հիմնված կլինի ազգային գաղափարի, այլ ոչ թե կրոնական հավատի ընդհանրության վրա:[1]

-Թուրանի գաղափարն անցյալում ոչ թե պատրանք էր, այլ իրականություն... և ապագայում իրականություն դառնալիք մեծ հայրենիքն է:[2]

-Թուրքիան պիտի ըլլայ թուրքական ժողովուրդներու համար այն, ինչ որ Փրուսիա եղավ գերմանական ժողովուրդներու համար, անոնցմէ ստեղծե մեկ հզոր, միացած դաշնակցային կայսրութիւն:[3]

-Թուրք ազգի և ազգայնականութեան սահմաններն ուրեմն Թուրքիոյ աշխարհագրական սահմաններէն անդին կանցնին... Թուրքական զանազան ճիւղերն ընդգրկող մեծագույն թրքական աշխարհով կը սահմանափակուի Թուրանիան:[4]

-Կարելի է ըսել, որ Ազգային ուխտը (քեմալականների ընդունած) թուրքճիութեան ծրագրին հետևեցավ:[5]

Նպատակ

Կրոնն այժմ երկրորդական գործոն է լեզվի համեմատությամբ... Բոլոր օսմանցիները թուրքեր չեն... Եթե կայսրությունը պետք է դառնա զուտ թուրքական, ապա բոլոր ոչ թուրք տարրերը կլինեն օտար նրա համար... Շուտով մենք առաջ կընթանանք Թուրքիայի անվան և թուրքական դրոշի ներքո՝ մի կողմ հրելով կրոնը որպես մասնավոր ու երկրորդական հարց:[6]

1. **Ռ. Ռենուվ** Միջազգային հարաբերությունների պատմության մեջ 20-րդ դարի ճգնաժամը, Փարիզ, 1957, էջ 150:

2. **Զ. Գեոքալպ** Թուրքաբանության հիմունքները (հայերեն թարգմանությունը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում է), էջ 23-24:

3. **Զարեվանդ** Միացեալ անկախ Թուրանիա, էջ 56:

4. Ն. տ., էջ 65:

5. Ն. տ., էջ 147:

6. **Turkey**: A past and a Future. "The Round Table", p. 24-25.

Երիտթուրքական քարոզչություն

...Թուրքիզմը իսլամի հակառակորդը չէ... ընդհակառակն, այն շահեկան ու օգտակար է ինչպես թուրքերին, այնպես էլ բոլոր մահմեդական ազգերին: Դա դարի թելադրանքն է... թուրքերի միասնությունը դա մահմեդականության լայնածավալ մասի միասնությունն է: Այդ միասնությունը պետք է արժանանա ողջ պանիսլամիստական աշխարհի հավանությանն ու աջակցությանը:[1]

Ահմեդ Աղան՝ պանթուրքիստ

Իրերի բնական բերումով Թուրքստանը, Աֆղանստանը, Կովկասը, Պարսկաստանը, Տաճկաստանը պիտի միանան և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պարսից ծոցը, Ալթայան լեռներից մինչև Միջերկրականը, միանման ծագում ունեցող թուրանա-թրքական ցեղին պիտի պատկանեն- մի ամբողջություն կազմեն, մերը պիտի լինեն: Իսկ այդ տարածքներում եղած ցեղերը (ոչ թուրք-թաթարական) կամ պիտի ոչնչանան կամ ժամանակի ընթացքում ձուլվեն:[2]

Ակչուրա՝ «Թուրք Յուրդու» թերթում տպագրված հոդվածից (1911 թ.)

Թուրքը տիրապետող և հրամայող ցեղ է, ստեղծվել է իշխելու համար:[3]

Թուրք լրագրող

Մահմեդականների ընդհանուր կացությունն այնպիսին է, որ նրանք մինչև օրս էլ գերադասում են նորից ապրել Թուրքիայի նախկին ինքնակալական վարչակարգի պայմաններում, քան գտնվել ներկայիս իրավիճակում:[4]

«Թանին»

-Երիտթուրքերը առանց վայրկյան մը կորսնցնելու կը թրքացնեին այսօր Օսմանեան կայսրութեան մեջ գտնուող բոլոր ցեղերը: Այս մասին բնավ պետք չէ տարակուսել:[5]

-Թուրքիան կարող է կործանվել, բայց նա իր հետ արյան վիհը կնետի նաև ուրիշներին:[6]

1. "Коммунистический интернационал" (журнал), 1921, стр. 17.
2. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, էջ 148:
3. **Զարեվանդ** Միացեալ անկախ Թուրանիա, էջ 70:
4. **M. Djinguiz** L'Islam en Crete. "Revue du Monde Musulman", N 1-2, 1909, p. 101.
5. «Ազատամարտ», 19 հունվարի 1909 թ.:
6. **V. Berard** La mort de Stamboul, Paris, 1913, p. 151.

«Թասվիր-ը էֆքյար»

Մենք պետք է դառնությամբ ընդունենք, որ այժմ դեմ առ դեմ կանգնած ենք անխուսափելի կործանման առջև:[1]

«Թանին»

Փոքր Ասիան թուրքացնելու քաղաքականության հաջողությանը նպաստում է մանավանդ այն հանգամանքը, որ տեղական թուրքական իշխանությունները... լիովին ըմբռնել են ներքին գաղութացման և մուհաջիրների վարվելաձևի ազգային մեծ նշանակությունը:[2]

Բայուր՝ թուրք պատմաբան

Ազգային տնտեսություն ստեղծելու համար ուղի նկատվեց բոյկոտի քաղաքականությունը, որը երիտթուրքերի կարծիքով... դյուրացնելու էր թուրք բուրժուազիայի խիստ թույլ դիրքերի ամրապնդումը:[3]

Խալիլ բեյի՝ պետական խորհրդի նախագահ, 1914 թ. մայիսի 19-ին խորհրդարանում ունեցած ելույթից

Կը խնդրեմ մեր ուսուցիչներին, մեր խմբագիրներին և մեր բանաստեղծներին ու մեր բոլոր մտավորականությանը, որ իրենց դասերով, իրենց գրություններով, իրենց բարոյական ամբողջ ազդեցությամբ միշտ հիշեցնեն ներկա և ապագա սերունդներուն, թե սահմանագլխին մյուս կողմը փրկելիք եղբայրներ, ազատելիք հայրենիքի բեկորներ կան:[4]

Մ. Մուխթար փաշա՝ Բեռլինում Թուրքիայի դեսպան

Առաջին համաշխարհային պատերազմում դաշինքը Օսմանյան կայսրության հետ պանգերմանացիների նկրտումների առջև բաց էր անում համաշխարհային գերիշխանության գայթակղիչ հորիզոններ: Ամբողջ երկրագնդով մեկ տարածված հարյուր միլիոնավոր մահմեդականների բարոյական ու նյութական օգնությունը Գերմանիայի համար ակնհայտորեն կարող էր դառնալ նշանակալի ծանրակշիռ ուժ ռազմական ու քաղաքական հաշվեկշռում:[5]

1. "Le Temps", 13 նոյեմբերի 1913 թ.:
2. **Dr. H. Stuermer** Deux ans de guerre a Constantinople, Paris, 1917, p. 157.
3. **Y. H. Bayur** Türk inkilabi tarihi. Cilt I, Istanbul, 1940, s. 294.
4. «Ազատամարտ», 7/20 մայիսի 1914 թ.:
5. **General M. Moukthar Pacha** La Turguie, l'Allemagne et l'Europe. Depuis le traite de Berlin jusgu'a la Guerre Mondiale, Paris, 1924, p. 1-2.

Երիտթուրքերի կենտրոնի կոչերից

Մարդասպաններն ու դահիճները նշանակված են վալու, մութեսարիֆի, կայմակամի պաշտոնում, ալայբեյեր, ոստիկաններ և ժանդարմներ, նրանց առատորեն ողողեցին ոսկով և հագցրեցին ոսկեզօծ արտահագուստներ... Բանտերը լցվեցին մարդկանցով, ովքեր ճշմարտությունն էին ասում և ճշմարտության կոչում: Անվերջ հարկերով քայքայեցին մեր տները...

Մեր թշնամին ներկայիս կառավարությունն է, որը մեր աչքերը փակել է գիշերվա նման, կպել է մեր մարմիններին արյուն ծծող թունավոր կարիճի նման, որն իրեն ներկայացնում է հրեշտակ: Ներկա կառավարության արգահատելի կողմնակիցները զբաղված են միայն մի բանով՝ ավերում են օջախներ, կործանում են տներ, ոչնչացնում են կյանքեր ու կանգնած են մեր տգետ ժողովրդի գլխին, ինչպես դժոխքի սատանայական ոգի...[1]

Մեքքա մեկնողների առաջ հանդես եկած մահմեդական քարոզչի ելույթը

Դուք և ձեր հայրենակիցները պետք է ազնվորեն ենթարկվեք թուրքական սահմանադրությանը, ինչպես նաև մարգարե Մուհամմեդի (տեղապահ) խալիֆին, սրբություններից ամենասրբազնագույնին՝ նորին մեծություն թուրքական սուլթանին: Ձեզնից յուրաքանչյուրը պարտավոր է հնարավորության չափով ինչ-որ գումար զոհաբերել իսլամի վերածննդի օգտին:

Մեր տիրույթները հասնում են երկրագնդի 1/3-ին և բնակչությունը գերազանցում է աշխարհի բնակչության 1/5-ին, սակայն դժբախտաբար մեր միջև վերացված է եղբայրությունը և իրար ատելով՝ մենք հանգիստ սպասում ենք կործանման... Եթե մենք չկազմենք միավորված մահմեդականների ամրոց՝ ուղղված Արևմուտքի դեմ, ապա ապագայում դժբախտ կլինենք:

Եթե ինչ-որ տեղում վիրավորեն որևէ մահմեդականի, ապա այդ մասին պետք է անմիջապես իմանան մյուս բոլոր մահմեդականները և ձգտեն օգնել նրան... Ներկայումս, որպեսզի կարողանանք պաշտպանել իսլամի իրավունքները, ինչպես նաև մահմեդական կրոնը, մենք պետք է ձեռք բերենք նորագույն զենք և ուսումնասիրենք դրա արտադրությունը, քանի որ միայն այդ դեպքում մենք կկարողանանք ընդդիմանալ թշնամիներին:[2]

1. **В. И. Шилкова** Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977, стр. 102.

2. "Siratela Mustagime" թերթ, 4 դեկտեմբերի, 1910: Վրաստանի ԿՊԱ, ֆ-157, ց. 1, գ. 211, թթ. 219-220: **А. О. Арутюнян** Кавказский фронт, 1914-1917, стр. 197.

Երիտթուրքերի կուսակցության Սալոնիկի 1910 թ. համագումարի որոշումները համառոտ

-Թույլ չտալ, որ թուրք այլ կուսակցություններ առաջանան:

-Սապահեդտինի կուսակցութեան և նրա գաղափարաբանութեան դեմ պայքարել:

-Սուլթան Համիդին պահել և նրա ազդեցութիւնից ու կապերից օգտուել:

-Մինչև իրենց զորեղացումը հայ կուսակցությունների հանդեպ համբերող դիրք բռնել:

-Ս. Դ. հնչակեաններին հսկողութեան տակ առնել:

-Ուժ տալ օսմանցիացման գաղափարին, համիսլամութիւնն ու համաթրքութիւնը դրանց գաղափար-առանցքը դարձնել:

-Իսլամ տարրերի տնտեսական տիրապետութեանը հետապնդել... Խորհրդարանային մեծամասնութիւնը միշտ թուրքերու ձեռքը պահել...[1]

Սաբահեդդին

Ես ուղղակի զարմացած եմ մնացել, ինձ հետ էլ՝ շատ եվրոպացիներ: Հայ ազգը ինչպե՞ս կարող է յարգանք պահանջել, երբ անգամ Ատանայի կոտորածից յետոյ էլ մեծամասնութեամբ իթթիհատի կողմն է բռնում: Դաշնակցականները ինչպե՞ս սեղմեցին իթթիհատական արիւնոտ, եղեռնագործ ձեռքը և նրանց հետ համաձայնութիւն կնքեցին: Հայ ազգը, որ անհաշտ դիրք պիտի բռներ, ընդհակառակը՝ ամենից ավելի զիջող, տեղի տուողը, կռացողը նա եղավ...[2]

Իթթիհադի կուսակցության նախընտրական հրահանգները (1912 թ.)

...Հայերին չխնայեք, կենդանի շունչ չթողնեք, կայք, գոյք՝ ամեն բան տիրապետեցեք:[3]

Սաբիհ բեյ՝ Նիկսարի զինվորական հրամանատար

Իթթիհադական մեծերին սատկացնելը հայերի ազգային պարտականությունն է:[4]

1. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, էջ 268:
2. Ն. տ., էջ 290:
3. Ն. տ., էջ 330:
4. Ն. տ., էջ 330:

Կեսարիայի մուֆթիսարիֆի փեղակալ

Եթե այս իթթիհադականները մնան, սրանք հայ ազգի գլխին նոր և ավելի խիստ փորձանքներ առաջ պիտի բերեն: Ուստի ձեր ազգի փրկության տեսակետից շուտով աշխատեցեք ձեր օձիքը սրանց ձեռքից ազատել:[1]

«Թասֆիրի էֆքյարի»՝ երիտթուրքական թերթ

Մի կողմից, մտնելով Եգիպտոս, բաց կանենք փրկարար ճեղք մեր 300 միլիոն հավատացյալների համար, մյուս կողմից, շարժվելով մինչև Կարս և Թիֆլիս, կազատագրենք Կովկասը և մեզ համար ուղի կբացենք դեպի Աֆղանստանի և Հնդկաստանի մահմեդական ժողովուրդները:

Նազրմի ճառը երիտթուրքերի Սալոնիկի 1910 թ ընդհանուր ժողովում.

Այս պահին մեզ համար կարևոր գաղափարի (պանթուրքիզմի) ոչ թե տեսական վերլուծումներն ու հիմնավորումներն են, այլև դրա իրականացման գործնական միջոցների ճշտումը:

Հավատում եմ, բոլորդ համաձայն կլինեք, եթե հայտարարեմ, որ այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական հարցի արմատական լուծումն է: Իբրև քրիստոնյա ժողովուրդ, մեր կայսրությունում որպես հպատակ ապրում են միայն հայերը: Պատմության բնական ընթացքը պիտի անխուսափելի դարձնի նրանց անջատումը կայսրությունից, ինչպես բալկանյան ժողովուրդներինը: Թեև ակամա, բայց մենք հաշտվեցինք վերջինների անջատման հետ... Բայց առավել սարսափելին առջևում է... Հայերի անջատման ընթացքի մեջ ենք գտնվում այս պահին: Տեսնեիք, թե ինչպես նրանք ներկայացան դեսպանախորհրդի առջև և բարենորոգումների առաջարկի տակ կես-ինքնավարության պահանջ դրեցին, հակառակ մեր թելադրանքներին ու պնդումներին, որպեսզի հրաժարվեն եվրոպացիներից, և մենք առանձին կարգադրենք իրենց խնդիրը իբրև կայսրության ներքին խնդիր...

Մի պահ երևակայեցեք արևելյան նահանգների վրա հայ պետության կազմվելը: Նման պետությունը թուրանական ծրագրերի տապանաքարը կլինի: Ոչ միայն պարտադրված կլինենք ամբողջապես հրաժարվել թուրք ցեղի միավորման ծրագրից, այլև պատրաստ լինել սեղմվելու Անատոլիայում, Կոնիայի նախկին սելջուկական սուլթանների նեղ տարածքների վրա: Այդ կնշանակի մահ... Որևէ թուրքի համար անհնար է հաշտվել նման իրականության հետ...

1. Ն.տ., էջ 333:

Մնում է միակ և մի վերջին հնարավորություն, որի հետ կամա թե ակամա պարտավոր ենք հաշտվել և ընդունել թուրքական շահերին համապատասխանող միակ ելքը՝ բնաջնջել մեր կայսրության կազմում եղած հայերին: Այս առաջարկը խղճի խնդիր չէ, ոչ էլ մարդկային զգացմունքների խնդիր: Կամ կհամաձայնենք հայերի ամբողջական և արմատական բնաջնջման ծրագրին՝ ապահովելով մեր ներկան ու ապագան, պատրաստելով մեր զարգացման ու զորացման ուղին, և կամ, մերժելով այս ծրագիրը՝ կշարունակենք մնալ արդի կացության մեջ, փորելով մեր ոտքի տակի հողը հենց մեր երկրում՝ բռնելով քայքայման ու անհետացման ուղին: Ուրիշ ելք գոյություն չունի մեզ համար: Հենց այսօր, մինչև այժմ մեր երկար խորհրդակցություններից հետո, պարտավոր ենք կատարել ընտրությունը: Հստակ և վճռական այո կամ ոչ ասել, մի կողմ ձգելով բոլոր տեսակի վարանումները և կազմել համապատասխան ծրագիր, նկատի ունենալով ամենափոքր մանրամասնություններն անգամ, որպեսզի ամբողջական լինի դրա իրականացումը:

Բոլորս էլ հասկանում ենք, որ ձեռնարկը շատ բարդ ու դժվար է: Հարցը միայն մեկ շրջանակում՝ Արևելյան Անատոլիայում, բնակվող հայության բնաջնջումը չէ, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար ու ճկուն էրմենի կոչված մի ցեղի, որի եռանդին ու աշխատանքին գռհացում չի կարող տալ նեղ ու փոքր սեփական հայրենիքն իսկ, որն ընդարձակ կայսրության պահանջ է զգում իբրև գործունեության դաշտ՝ Պոլսից մինչև Բաղդադ, Բայազետից մինչև Աղանա, Իսկենդերում: Պետք է արմատից ջնջել այդ ցեղը, որը որդի պես փարված է մեր մարմնին ու կրծում է մեզ...

...Մեր ամենից վստահելի, գաղտնապահ և կարող զինվորականներից, քաղաքային բարձր պաշտոնեությունից և մեր կենտրոնական վարչությունից կազմել մի հատուկ հանձնախումբ՝ այս առաջարկի իրականացման ամբողջական և մանրամասը ծրագիր կազմելու համար:

Մեր որոշումը դյուրացնելու համար մի քանի բառով պարզեմ նաև նպաստավոր թե աննպաստ այս ծրագրի հետևանքները.

Եթե հաջողությամբ ավարտենք ծրագիրը.

ա) Մեկընդմիշտ կլուծվի «Հայկական հարց» կոչվածը՝ նրա նյութը կազմող տարրի անհետացումով:

բ) Մեր պետությունը ձերբազատված կլինի թե միջազգային և թե ներքին քաղաքականության տեսակետով այդ հարցի ստեղծած տաղտուկներից ու տագնապներից:

գ) Երկիրն ազատելով հայ տարրից, ընդարձակ դաշտ կբացվի մեր ժողովրդի գործունեության համար, հատկապես տնտեսության բնագավառում, որի տերը դարձել են հայերը:

դ) Նրանց հարստության տեր կդառնան մեր ժողովուրդն ու պետությունը:

ե) Ամբողջ Անատոլիան կվերածվի թուրքերով բնակեցված միատարր երկրի:

զ) Այդ ամենից հետո, այսինքն՝ ամենամեծ խոչընդոտի անհետացմամբ կհարթվի ճամփան մեր իդեալի՝ համաթուրանականության գաղափարի իրականացման համար, որին մենք կառչած ենք ամբողջ էությամբ:

...Անշուշտ, բողոքի, զայրույթի ալիքը պիտի տարածվի ամեն տեղ:

Ահագին անկում պիտի կրի մեր բարոյական վարկը: Սակայն չպետք է մոռանալ, որ այդ վիճակը լինելու է ժամանակավոր, կարճ կամ երկար, որոշ ժամանակի համար միայն ու դրանից հետո ամեն ինչ մոռացության պիտի տրվի, ու մենք պիտի կարողանանք վերադառնալ միջազգային կյանք նախնիներից ավելի փայլուն դիրքի, որովհետև բազմապատկված պիտի լինի մեր ուժը: Միայն այդ ուժն է հաշվի առնվելու կյանքում:[1]

Աղանայի կոտորածից հետո ստացվեցին Կ. Պոլսի հայ գործիչներին հասցեագրված սպառնալից նամակներ: Դրանցից մեկում գրված էր

Մենք խորհուրդ ենք տալիս ձեզ այլևս չխոսել հայկական բարենորոգումների մասին: Եթե դուք այդ անեք, գործը կբարդանա, և մենք կկոտորենք ձեզ՝ ծեր թե երիտասարդ: Մենք ձեր փորոտիքը կթափենք ուղղակի փողոցներում, և դուք վերջին կոտորածները ցանկալի կհամարեք դրանց համեմատությամբ:[2]

Մյուսում գրված էր

Գործը ծայրահեղության կհասնի... (և) բոլորիդ, մեծից մինչև պզտիկը կսպանենք:[3]

-Սահմանադրությունը, ընտրությունը և պառլամենտը բացարձակ դատարկ բաներ են: Սա քողարկված ինքնակալություն է, սահմանադրական վարչակարգի նման մի բան: Մենք սուլթանին դրեցինք վնաս

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը, էջ 160, 165, 166, 186, 187, 191-193:

2. **B. Papazian** The Tragedy of Armenia, Boston, 1918, p. 104.

3. «Հորիզոն», 28 նոյեմբերի 1919 թ.:

հասցնելու անկարելիության մեջ: Մենք գահի վրա նրա ներկայության կարիքը ունենք... որովհետև ձգտում ենք բացարձակապես դեն նետել եվրոպական միջամտությունը: Խալիֆը դեռ ունի բարոյական անսահման հեղինակություն, մենք ուզում ենք, որ նա իր ստորագրությունը դնի մեր որոշումների տակ: Սուլթանը պարզապես մի ուրվական է: Պետք է բնաջնջել հայերը կայսրության մեջ: Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճի խնդիրը չէ, ոչ էլ մարդկային զգացմունքների խնդիր: Հարցը միայն քաղաքական է, Թուրքիայի շահերի և ապագայի հետ սերտորեն կապված խնդիր:[1]

Թուրք քաղաքական ուժերը՝ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու մասին

Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը... մեզ մղում է մեր մոսկովյան թշնամու ոչնչացմանն այն բանի համար, որպեսզի հաստատենք մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց մեջ կառնեն և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղերը:[2]

Նազիմ

-Պետությունը պետք է տարամերժորեն թուրքական լինի: Օտար տարրերի գոյությունը պատրվակ է եվրոպական միջամտության համար: Պետք է հպատակ ժողովուրդներին բռնի թուրքացնել:[3]

-Սուլթաններն իրենց հանցագործ մեղմությամբ թույլ տվեցին, որպեսզի իրենց կողմից նվաճված երկրներում ապրեն, զարգանան բնիկները, փոխանակ թուրքացման քաղաքականության միջոցով ձուլեին, լուծեին ազնվական թուրք ժողովրդի մեջ: ...Մի մոռացեք, որ մեր պապերը եկել են Թուրանից և այսօր Անդրկովկասի, ինչպես նաև Կասպից ծովից արևելք ընկած լայնարձակ տարածքներում թուրք ցեղերը բնակվում են գրեթե միատարր, դժբախտաբար մեր դարավոր թշնամու՝ Ռուսաստանի տիրապետության տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց է միայն այդ ուղղությամբ, և մենք պետք է իրականացնենք թուրք ցեղերի միավորումը Միջերկրական ծովից մինչև Արալի ծով: Թուրքական քաղաքական գոր-

1. «Արարատ», 10 սեպտեմբերի 1963 թ.:

2. **A. J. Toynbee** Turkey: A Past and Future. London, New York, 1917, p. 31.

3. «Ազդակ», 1988 թ. կամ **Ch. W. Hastler** Turkism and the Soviets, London, 1957, p. 99.

ծիչները, հավատարիմ իրենց ծագմանն ու պատմական կոչմանը, ղեկավարվել կարող են միայն այդ հեռանկարով և դրանով ոգևորեն ժողովրդին ու երիտասարդությանը...

Քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հանդիսանում է Հայկական հարցի արմատական լուծումը...[1]

-Մեծ ու բարգավաճ Թուրքիա վերստեղծելու համար գոյություն ունի մի պարզ միջոց՝ արտաքսել օտարներին և նրանց փոխարինել զուտ թուրքական ռասայով:[2]

-Վայրագությունը բնության օրենքն է... Բոլոր կենդանիները, նույնիսկ բույսերը, իրար ուտելով, իրար բնաջնջելով չէ՞, որ սնվում են: Ուրեմն նրանց արգելե՞նք իրար ուտել ու ոչնչացնել: Բայց կարո՞ղ եք ասել, թե դա վայրագություն է: ...Ես թուրքի, միայն թուրքի ապրելը, այս հողի վրա նրա անկախ, իշխող լինելն եմ ցանկանում: Ոչ թուրք տարրերը թող ջնջվեն, որ ազգության և կրոնին էլ պատկանելիս լինեն: Այս երկիրը ոչ թուրք տարրերից պետք է մաքրել: Կրոնն ինձ համար ոչ մի նշանակություն չունի, իմ կրոնը Թուրանն է:[3]

-...Եթե Թուրքիայի տարածքում բնակվեն այլազգիներ, մեծ տերությունները դա միշտ պատրվակ կդարձնեն մեր ներքին գործերին խառնվելու և սաղրանքներ հրահրելու համար: Ոչ թուրքերին պետք է բռնի թուրքացնենք:[4]

Երիտթուրքերի Սալոնիկի (1911 թ.) համաժողովում արտասանած ճառից

Երիտթուրքերը սահմանադրությամբ հռչակված ազատությունները տալ չեն կարող: Երիտթուրքերը չեն կարող հարցը լուծել միայն մասնակիորեն, ինչպես դա արվեց Աբդուլ Համիդի օրոք: Երիտթուրքերը չեն կա-

1. «Արարատ», 8 սեպտեմբերի 1963 թ., թիվ 6542:

2. **Capitaine H. Seignobsc** Tures et Turguie, Paris, 1920, p. 61.

3. **Մ. Ռիֆաթ** Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ քաղաքականությունը, էջ 98-100:

4. **Ի. Ռայի** Հայերի սպանությունը Օսմանյան տիրապետության դարաշրջանում, Թեհրան, 1973, էջ 43: "Revue des Deux Mondes" սեպտեմբեր, 1909թ.:

ղող հայերի պահանջած բարեփոխումները մտցնել ու դրանով հարվածել կայսրության շահերին, քանի որ դրանք տանելու են դեպի հայերի անկախություն:[1]

Մ. Թալեաթի արտասանած ճառից (նույն համագումարում)

Վարել կենտրոնացման քաղաքականություն և արմատավորել պանթուրքիզմ՝ հարկ եղած դեպքում դիմելով այլախոհների ոչնչացման:[2]

Ակչուրաօղլու՝ երիտթուրք գործիչ

Կայսրությունը դեպի անկում է գնում և բացի թրքությունից մի այլ ուժ չկա, որ կարողանա այդ թույլ չտալ, իսկ թրքությունը նշանակում է բոլոր թուրք ցեղերի և ժողովուրդների ընկերային, լեզվական, քաղաքական և կրոնական միաձուլում:[3]

Սալոնիկի 1911 թ. հոկտեմբերի 2-ին կայացած երիտթուրքական ժողովը որոշում ընդունեց

Մակեդոնիայի քրիստոնյաները պետք է զինաթափվեն, իսկ մահմեդականները ընդհանրապես պահեն իրենց զենքերը: Այնտեղ, որտեղ մահմեդականները փոքրամասնություն են կազմում, իշխանությունները պետք է դրանց (քրիստոնյաներին) ցրեն: Կասկածելիները պետք է տեղահանվեն և ոստիկան-զորքերին և բանակին ազատություններ տրվեն: Ռազմական ատյանը պետք է տևական կապ պահի կոմիտեի հետ և խստորեն պատժի հանցագործներին, որպեսզի օրինազանցները չկարողանան պատժից խուսափել: 20 հազար մահմեդական պետք է զետեղվի հունական և բուլղարական սահմանների վրա, և այս նպատակի համար պետք է ծախսվի 220 հազար թուրքական ոսկի: Կովկասից ու Թուրքեստանից ներգաղթը պետք է քաջալերել, ներգաղթողներին հող հայթայթել ու քրիստոնյաներին արգելել եկամուտ ունենալ: Հակաբուլղարական ճնշումը գրեթե ձախողված լինելու համար որպես փոխվրեժ, ուսուցիչների, կրոնավորների և պաշտոնատարների պաշտոնազրկում իրականացնել: Հակահույն շարժումը պետք է առաջ տանել ու այն ղեկավարել կոմիտեի կողմից, որովհետև հույների հետ հնարավոր չէ պատերազմի մեջ մտնել, մինչև նավատորմը չեզոքանա:

1. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 1, Երևան, 1982, էջ 85:

2. **R. Pinon** L'Europe et la Jeune Turquie , Paris, 1913, p. 102.

3. **S. A. Zenkovski** Pan-Turkizm and Islam in Russia, Cambridge,1960, p. 38-39.

Պետք է արգելել երեսփոխանական ժողովում և երկրի ներսում նոր խմբակցությունների կազմավորումը և նոր «ազատամիտ գաղափարների» տարածումը: Կայսրության գոյությունը կախված է Երիտասարդ թուրք կուսակցության ուժից և բոլոր թշնամի գաղափարների ճնշումից...

Բոլոր գլխավոր պաշտոնները պետք է հանձնվեն միմիայն իթթիհադական մահմեդականներին, իսկ քրիստոնյաները կարող են թեկնածու լինել երկրորդական պաշտոնների համար: Մահմեդականությունը պետական կրոն է, ուստի պիտի դառնա ընդհանուր կրոն և ըստ այդմ էլ, եթե պահանջվի, պետք է այն պարտադրել նույնիսկ զինվորական ուժով, որպեսզի կայսրությունը ձեռք բերի մահմեդական նկարագիր:

Կայսրության լեզուն թուրքերենն է: Փոքրամասնությունները կարող են պահել իրենց կրոնը, բայց ոչ լեզուն, որովհետև պատգամավորական ժողովը հավատում է, որ թուրքերեն լեզվի տարածումը սքանչելի միջոց է մահմեդական գերակայություն հաստատելու և ոչ թուրք հավաքականությունները թրքացնելու համար:

Կայսրության բաղկացուցիչ տարրերից ոչ մի ժողովուրդ կազմակերպվելու իրավունք չունի, որովհետև կազմակերպվել նշանակում է ապակենտրոնացում և ինքնավարություն, իսկ դրանք լոկ կայսրության ամբողջականության դեմ դավաճանական քայլեր են: Ավելին, կապիտուլյացիաների մերժումն ու վերացումը իրավական և իրական երաշխիքներ են երկրի ամբողջականությունն ապահովելու, ուստի կայսրության սահմաններում արդարադատության վերակառուցումից շատ ավելի անհրաժեշտ են նշված ձեռնարկները...

Որևէ պատերազմի ժամանակ երկու կողմերի միջև հավասարակշռված չեզոքությունը լավագույն գրավականն է Օսմանյան կայսրության անվտանգության համար:

Ուշ թե շուտ Թուրքիայի բոլոր հպատակների կատարյալ թրքացումը իրականացվելու է: Չնայած դրան պետք է հստակ հասկանալ, որ այս նպատակը համոզելով երբեք չի կարող իրագործվել: Ընդհակառակը՝ այն պետք է իրականացնել զենքի ուժով: Կայսրության նկարագիրը լինելու է մահմեդական, և մահմեդական կրոնի և ավանդությունների հետ համակերպությունը իրագործվելու է: Կազմակերպություններ ունենալու մյուս ազգությունների իրավունքը չեղյալ է հայտարարվելու, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը դավաճանություն է թուրքական կայսրության դեմ: Փոքրամասնություններն աննշան թիվ են

կազմում: Կրոնական ազատություն թույլատրելու որոշումը հակասում է կայսրությանը մահմեդական բնույթ տալու որոշմանը:[1]

Անհրաժեշտ է իրականացնել օսմանյան հպատակների լրիվ թուրքացումը... Ոչ մահմեդական ժողովուրդները պետք է խոսեն ու աղոթեն թուրքերեն: Կառավարությունը պարտավոր է ցանկացած գնով ու միջոցներով պայքարել ազգային փոքրամասնությունների նացիոնալիզմի դեմ և աջակցել օսմանյան ռասայի իշխանության հաստատմանը նույնիսկ այն վայրերում, որտեղ նրանք փոքրամասնություն են կազմում:

Կառավարությունն ու կոմիտեն, որոնք միավորված են գաղափարախոսություններով և միասնական են դրա իրագործման վճռականության մեջ, պետք է գնան ցանկացած զոհողության ու դժվարության, որպեսզի քրիստոնյաներին զրկեն ունեցվածքից, հատկապես անշարժ սեփականությունից:

Անհրաժեշտ է հետևողականորեն զինաթափել քրիստոնյա ժողովուրդներին և միաժամանակ գաղտնի զենք մատակարարել մահմեդականներին...

Մենք՝ երիտթուրքերս, լի ենք խիզախությունով ու հույսով:[2]

Ս. Թալեաթ

Առանց որևէ խղճահարության սպանել մեկ ամսականից մինչև 90 տարեկան բոլորին, բայց հետևել, որ այդ սպանդները տեղի չունենան քաղաքներում և ժողովրդի ներկայությամբ:[3]

«Թասֆիրի էֆքյարի»՝ 1914 թ. հունվար

Թուրքերն ու օսմանցի մահմեդականներն առանց հիմնավոր պատճառի չեն արյունոտել որևէ ոչ մահմեդականի քիթը իրենց տիրապետության ամբողջ ժամանակահատվածում: Ընդհակառակը, քրիստոնյաներն են բռնություններ գործադրել: Եվ եթե այսօր բոլոր դժբախտություններից հետո, խոր ու անզուսպ թշնամություն եմ զգում Ապոստոլիների հանդեպ, չեմ հասկանում, թե որևէ մեկն ինչպե՞ս կարող է որևէ անտրամաբանական բան տեսնել այս զգացման մեջ: Այսուհետև յուրաքանչյուր թուրք և

1. **Johannes Lepsius** Deutschland und Armenien, Potsdam, 1919, p. XVII. **И. Бутаев** Проблемы Турции, Ленинград, 1925, стр. 114.

2. **J. Goutmann** The beginnings of genocide. A brief account Armenian massacres in World War I, New York, 1948, p. 16.

3. "Коммунист" ,23 հունիսի 1987 թ.:

մահմեդական ազգայնական նկարագիր պետք է տա իր նույնիսկ տասը փարայի գնումին և դա չի կարելի այպանել կամ քննադատել:

Բալկանյան պատերազմից հետո թուրքական և մահմեդական աշխարհում այս շատ բնական հակազդեցության գոյությունը հասկանալի է: Ոչ թուրքերի ու մահմեդականների շրջանում նկատվում է մեզ առավելագույնս զոհացնող զարթոնք: Նրանք հետզհետե ըմբռնում են տնտեսական գործունեության ուժը:[1]

Սալոնիկի 1911 թ. համժողովի որոշման կարբերակ

1.Համաձայն բնության օրենքների, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերին կեր դառնան:

2.Կոտորելը ազնվականության ցասումն է ստոր ցեղերի դեմ...

3.Եթե որոշվել է ջարդերի ծրագիրը, այն պետք է գործադրել ամբողջությամբ առանց որևէ մեկից ազդվելու և առանց տրվելու զգացմունքներին: Սա անգթություն չէ, այլ գերադաս տարրի ոգու արտահայտություն:

4.Առանց տարիքի ու սեռի խտրության ժողովուրդների կոտորածը ռազմական անհրաժեշտություն է:

5.Թշնամի ցեղի երեխաներին կոտորելն ազգային պաշտպանության կանխարգելիչ միջոց է:

6.Անգամ մայրերի արգանդներում այդ երեխաներն ապրելու անարժան են՝ որպես աստվածամերժ շառավիղներ:

7.Կայսրության բախտը կախված է երիտթուրքական կուսակցության ուժից ու բոլոր հակամարտ գաղափարների ճնշումից:[2]

Ջեմալ փաշա

Ես նախ օսմանցի եմ, իսկ դրանից հետո երբեք չպետք է մոռանամ, որ նաև թուրք եմ... Թուրքն օսմանյան պետության հիմնաքարն է. օսմանյան միությունն է, որ ամրացնում և հիմնավորում է թուրքական քաղաքակրթության ու մշակույթի զարգացումը:[3]

«Թանին», 1914 թ. հունվարի սկզբին

Իսկապես կոմիտեն որքա՞ն կարող է այս բանակցություններում (նկատի ունի 1914 թ. սկզբներին երիտթուրքերի ու փոքրամասնություն-

1. "The Orient", 11 փետրվարի, 1914 թիվ, էջ 51 կամ Հուշամատեան մեծ եղեռնի, էջ 178:

2. «Հիլալը Ամերի», հոկտեմբեր, 1911 թ.:

3. **Ջեմալ փաշա** Հայկական հարց, էջ 17:

ների, մասնավորապես հայերի միջև ընթացող բանակցությունները) առաջ ընթանալ՝ առանց իր սկզբունքները կամ օրենքի հստակ տրամադրությունները ոտնակոխ անելու: Թվում է, թե մեր ոչ մահմեդական հայրենակիցները այդ չեն հասկանում: Իթթիհադ վե թերաքքին պարզապես քաղաքական կուսակցություն է, որը չնայած կառավարության համար հենարան է, բայց պետք է ելնի գործող օրենքներից՝ իր ուժը պահել կարողանալու համար: Կուսակցությունը մի քանի փոքր զիջումներից ավելին կատարել չի կարող: Եթե համագործակցված գործունեության այս առիթը բաց թողնվի, մեծապես ցավելու ենք: Սակայն ամեն ինչ իր սահմանը, և նույնիսկ համբերությունն ունի: Եվ եթե այսօր առիթը բաց թողնվի, վախենում ենք, վաղն արդեն ուշ լինի:[1]

Էնվեր

Հայերուն արդեն ժամանակին զգուշացուցած էին իրենց պատահելիք դեպքերէն, այն պարագային, երբ մեր թշնամիներուն միանային: Երեք ամիս առաջ հայերու պատրիարքը կանչեցի և ըսի անոր, եթե հայերը փորձեին յեղափոխութիւն մը յարուցանել կամ ռուսներուն օգնել, ես կարող չպիտի ըլլայի հայերուն պատահելիք չարիքները արգիլել: Իմ զգուշացուցիչ ազդարարութիւնս արդիւնք չունեցավ, և հայերը յեղափոխութիւն յարուցին և օժանդակեցին ռուսներուն: Գիտե՞ք, թե ինչ պատահեցավ Վանի մեջ: Հայերը տիրացան քաղաքին, ուժանակներ նետեցին կառավարական շենքերու վրա և բազմաթիվ իսլամներ սպանեցին: Մենք գիտեինք, թե հայերը ուրիշ տեղերու մեջ ալ ապստամբութիւններ կը սարքեին... Բացարձակապես ճշմարիտ է, որ ես հակառակ չեմ հայերուն իբր ժողովուրդ: Ամենամեծ հիացումը ունիմ իրենց մտացիութեանը և ճարտարահնարութեան համար, և ոչինչ ինձի ավելի հաճոյք պիտի պատճառեր, քան տեսնել, որ անոնք մեր ազգին մեկ մասը եղած են: Բայց եթե անոնք մեր թշնամիներուն միանան, ինչպես ըրին Վանի նահանգին մեջ, այն ատեն փճացուելու են: Ես միջոցներ ձեռք առած եմ, որպեսզի ոչ մեկ անարդարութիւն չգործուի, դեռ վերջերս է, որ հրահանգ տուի երեք հայերու համար, որոնք տարագրուած էին, որպեսզի իրենց բնակավայրերը վերադարձուին, երբ տեղեկացա, որ անոնք անմեղ էին: Ռուսիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Ամերիկա հայերուն բարիք չեն ըներ՝ անոնց հա-

1. "The Orient", 4 փետրվարի, 1914, էջ 46:

մակիր ընթացք ցուցանելով և զանոնք քաջալերելով... Երբ մեր Միութիւն և առաջադիմութիւն քոմիթեն Ապտիլ Համիտի վրա կը յարձակեր, մենք բարոյական քաջալերանք կը ստանայինք արտաքին աշխարհէն: Այդ քաջալերանքը մեզի մեծ դեր օժանդակութիւն մըն էր և մեր յաջողութեան մեջ մեծ դեր կը կատարեր: Նոյնպես ան հիմա կրնա օգնել հայերուն և անոնց յեղափոխական ծրագրին: Վստահ եմ, եթե այդ օտար երկիրները չքաջալերէին հայերը, անոնք պիտի լքէին ներկա կառավարութեան դեմ ելլելու իրենց բոլոր ջանքերը և պիտի դառնային օրինապահ քաղաքացիներ: Հիմա այս երկրին վարչութեան բացարձակ տերը մենք ենք և կրնանք դիւրին կերպով վրեժ լուծել յեղափոխականներէն:

(Բայց ինչո՞ւ միայն հանցավորին չպատժել հարցին պատասխանեց).

Ձեր տեսակետը շիտակ է խաղաղութեան ատեն... բայց պատերազմի ժամանակ չենք կրնար հետաքննել և բանակցիլ: Մենք պետք է գործենք վայրկենապես և վճռողականաբար: Կը կարծեմ նաև, որ հայերը սխալ մը կը գործեն ռուսներուն կառչելով: Ռուսները իրականապես ավելի պիտի ուզեին հայերը մահացած տեսնել, քան ողջ: Հայերն այնչափ մեծ վտանգ մըն են ռուսներուն, որչափ մեզի: Եթե հայերը անկախ կառավարութիւն կազմէին Թուրքիոյ մեջ, Ռուսիայի հայերն ալ պիտի ջանային հոն անկախ կառավարութիւն մը կազմել: ... Պոլսի մեջ 70 000 հայեր կան և անոնց նեղութիւն չպիտի տրուի, բացի անոնցմէ, որոնք դաշնակցական են և անոնցմէ, որոնք թուրքերու դեմ կը դավեն: Սակայն ես կը կարծեմ, որ... ալ հայերուն ջարդեր տեղի չպիտի ունենան: ... Թուրքիայի մեջ 28 000 000-ի չափ բնակիչ կա և 1 000 000 ալ հայ: Մենք չենք ուզեր, որ 1 000 000-ը վրդովեն մնացած բնակչութեան խաղաղութիւնը: Հայերուն հետ մեծագոյն կնճիռը ան է, որ անոնք անջատողականներ են: Անոնք որոշած են սեփական թագավորութիւն մը ունենալ և կը տարուին ռուսներէն խաբուելու: ...Երբ Թուրքիայ մեջ ծանոթ յեղափոխութիւնը յարուցինք, միայն 200 հոգի էինք: Այդ փոքրաթիվ ընկերներով մենք կարող եղանք սուլթանը և հասարակութիւնը խաբելու, որոնք կարծեցին, թե մենք մեծապես ավել բազմաթիվ և զորեղ էինք, քան որչափ էինք: ... Եթե 200 թուրքեր կրնան տապալել կառավարութիւնը, քանի մը ուշիմ և զարգացած հայեր ալ կրնան նոյն բանը ընել: Հետևաբար մենք գիտակցորեն որդեգրած ենք զանոնք ցիր ու ցան ընելու ծրագիրը, որպեսզի մեզի վնաս չկարենան հասցնել... Ես հայերու

պատրիարքին զեկուցի, որ, եթե հայերը մեր վրա յարձակվին, այն միջոցին, երբ մենք արտաքին պատերազմի մը բռնուած ենք, մենք՝ թուրքերս, զանոնց պիտի զարնենք, գետին փռենք և պիտի զարնենք անխտիր:

Ներկայիս տնտեսական նկատումներ որևէ կարևորութիւն չունին: Միակ կարևոր գործը յաղթելն է: ... Մեր կացութիւնը յուսահատական է... և մենք կը կռուինք այնպես, ինչպես յուսահատ մարդիկ կը կռուին: Չպիտի թողունք, որ հայերը մեր կոնակէն յարձակվին մեր վրա...

Ինչպե՞ս հաց կրնանք հայթայթել հայերուն, երբ բավականաչափ հաց չենք կրնար գտնել մեր իսկ ժողովուրդին համար: Գիտեմ, որ անոնք կը տառապին և թե շատ հավանական է, որ առաջիկա ձմեռ բնավ հաց չկարենան գտնել:

Մենք չենք ուզեր, որ ամերիկացիները սնուցանեն հայերը: Ատիկա ամենէն գեշ բանն է, որ կրնա իրենց պատահել: ... Եթե դուք՝ ամերիկացիներդ սկսիք անոնց ուտեստ և զգեստ բաժանել, անոնք պիտի խորհին, որ իրենք Միացեալ Նահանգներուն մեջ ուժով պաշտպաններ ունին: Ասիկա զիրենք կրկին ըմբոստութեան պիտի քաջալերէ և մենք ալ պիտի ստիպուինք ալ ավելի պատուհասել զանոնք:

Թալեաթ

Այսօր ձեր գալը խնդրեցի, որպեսզի կարենամ բացատրել մեր կացությունը, ամբողջ հայկական խնդրին մասին: Հայերի հանդեպ մեր դիտողությունները երեք որոշ կետերու վրա հիմնած ենք: Առաջին. հայերը հարստացած են թուրքերու վնասովը: Երկրորդ՝ անոնք որոշած են մեր վրա բռնակալել և անջատ պետութիւն մը հիմնել: Երրորդ՝ անոնք բացեիբաց օժանդակում են մեր թշնամիներուն: Անոնք Կովկասի մեջ օգնած են ռուսներուն, և մեր ծախողութիւնը լիովին կը բացատրուի իրենց գործքերովը: Հետևաբար մենք եկած ենք այն անդառնալի որոշումին, որ զանոնք անզոր դարձնենք այս պատերազմը վերջանալէ առաջ...

Անօգուտ են ձեր փաստերը, մենք արդեն հայերու 3/4-ին գործը կարգադրած ենք: Պիթլիսի, Վանի և Էրզրումի մեջ բնավ մարդ (հայ) մնացած չէ: Թուրքերու և հայերու միջև ատելութիւնը ներկայիս այնչափ ծավալուն է, որ ստիպուած ենք հայերուն գործը լմնցնել: Եթե ատանք չընենք, հայերը իրենց վրեժը պիտի լուծեն: Առևտրական կորուստին մասին բնավ փոյթ չենք ըներ մենք: Այդ բոլորը հաշուած ենք և գիտենք, թե վնասը հինգ միլիոն ոսկին չպիտի անցնի... Ես ձեր հոս գալը խնդրեցի, որպեսզի տեղեկացնեմ, թե մեր հայկական քաղաքականութիւնը բացարձակորեն որոշուած է

և ոչինչ չկրնար զայն փոփոխել: Անատոլուի որևէ կողմը ալ հայ չենք ուզեր: Անոնք կրնան անապատին մեջ ապրիլ, բայց ուրիշ ոչ մեկ տեղ...

Այո՛, մենք կրնանք սխալներ գործել, բայց երբեք չենք զոջար: Ոչ մեկ հայ մեր բարեկամը կրնա ըլլա՝ հայերուն մեր ըրածներէն ետքը:

Կուզեմ ամերիկեան կեանքի ապահովագրական ընկերութիւններուն պարտադրեք մեզի ղրկել իրենց ապահովագրեալներուն կատարեալ մեկ ցուցակը: Ներկայիս անոնք ամենքն ալ իրապես մեռած են: Նաև իրենց ժառանգորդները մնացած չեն՝ դրամ ստանալու համար: Որով, անշուշտ, ամբողջ դրամը կիյնա պետութեանը: Ներկայիս ժառանգորդը կառավարութիւնն է: Պիտի ընե՞ք ըսածս:

Հայկական խնդիրը լուծելու տեսակետով երեք ամսուան մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Ապտիլ Համիտ երեսուն տարուան մեջ:

Ի՞նչ է օգուտը անոնց (հայերի) մասին խոսելու: Մենք անոնց հաշիվը փակած ենք: Այդ խնդիրը լմնցած է:[1]

Բեհաեդդին Շաքիր՝ երիտթուրք պարագլուխ

Թուրքերը հայերից դժգոհ են բարենորոգումների հարցն առաջ քաշելու և մեծ տերությունների դիմելու համար: Մինչդեռ թուրքերը սպասում էին, որ տերությունների միջամտության ժամանակ հայերը նրանց բերանը կփակեին՝ ասելով, որ իրենք գոհ են թուրքական վարչությունից, և մյուս կողմից, դիմեին Բ. Դռանը, որը պատրաստ էր նրանց բոլոր միջոցներով բավարարել... Թուրքերը սպասում էին, որ պատրիարքարանն ու կուսակցությունները ուղղակի համաձայն լինեին Բ. Դռան հետ Պողոս Նուբար փաշային պաշտոնանկ անելու հարցում: Թեև կառավարությունը չի խրախուսում պայքարը, բայց միաժամանակ իթթիհադականները չեն կարող իրենց կրոնակիցներին պարտադրել, որ անպայման հայերի հետ առևտուր անեն: Թուրքերն ուշ են բարկանում, բայց երբ բարկացան, երկար են քեն պահում... Հայերը չպետք է ջարդի վախ ունենան: Այլ բան է, եթե մի որևէ տեղ ռումբ նետվի: Հետևանքը կարող է շատ ծանր լինել:[2]

Իթթիհադի Մալոնիկի գաղտնի ժողովի (1910 թ.) որոշում-երդումը

1.Պատվովս և կրոնովս երդվում եմ, որ ուրիշ կուսակցության չեմ պատկանի:

1. Ամերիկայի դեսպան **Մորգենթաուն**ի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները: Երևան, 1990, էջ 271-284, 323-329:

2. **Ա. Ալպոյաճեան** Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Բեյրութ, 1961, էջ 920:

2.Գաղտնի որոշումների մասին չեմ հայտնի որևէ մեկին, ով իթթիհադի անդամ չէ:

3.Գործելու եմ համաձայն կոմիտեի որոշումների:

4.Կոմիտեին չեմ դավաճանի և կսպանեմ նրան, ով դավաճանել է կոմիտեին կամ դեմ է նրա ծրագրին:

5.Այս պաշտոնական երդումը չկատարելու դեպքում կտամ արյունս: Թող կոմիտեի կողմից պատժվեմ, որտեղ էլ լինեմ՝ նրա անդամներն ինձ գտնեն և մահապատժի ենթարկեն:[1]

Ա. Քուրան

Իթթիհադի կենտկոմի համար բուլղարները, սերբերը, հույները և հայերը՝ երկրի թշնամիներ, իսկ արաբները, ալբանացիներն ու քրդերը հայրենիքի դավաճաններ էին:[2]

Հալիթ բեյը՝ Էրզրումի փոստի ու հեռագրի տնօրեն, Սալոնիկի համաժողովից վերադառնալիս հայերին ասաց.

Եթե ես կարողանայի ձեզ հայտնել այս կոնգրեսում ընդունված որոշումների մանրամասնությունները, ձեր մազերը բիզ կկանգնեին:

Իթթիհադական քայլերգ

Լաց մի լինի՝ դարիք Թուրան,
Մենք գալիս ենք դեպի քեզ, հավատա:[3]

Մեհմեդ Էմին՝ Սեբաստիայի կուսակալ, բանաստեղծ

Արթնացե՛ք, եղբայրներ, որովհետև կյանքը թրքական աշխարհին՝ ձեզմով պիտի բեղմնավորի:

Մեկ փեթակ ունին բոլոր մեղուները,
Մեկ Թուրան պետք է ունենան
Բոլոր թուրքերը:
.....
.....
Ալթայներու վրա ելիր
Եվ կատաղի ձայն բարձրացուր,

1. "Mechveret", մարտ, 1912թ. կամ **Հ. Ղազարյան** Ցեղասպան թուրքը, էջ 17:

2. **A. Kuran** Osmanli imperatorlugunda inkilap hareketleri ve milli mücadele, Istanbul, 1956.

3. **Ա. Ալպոյաճեան** Պատմութիւն Մալաթիո Հայոց, էջ 935:

Ճամբուն վրա հեղափոխման
Ծաղիկ չաճիր առանց արյան:
Մեն մի զարկէդ պահանջե դուն
Հավատք, արյուն և արիություն,
Դիմշիդ շուրջ գան միանան
Թուրքերն համայն»:[1]

Թուրքեր ենք մենք և կը հորդինք այսպես դարձած գետ կարմիր:[2]

Թուրքեր ենք մենք, այս արյունով, այս անունով լոկ կապրենք մենք:[3]

Ով թուրք աշխարհ, ով հայրենիք, վեհ էս բոլոր, բոլորէն,
Հին ու նորոգ, դառն ու անուշ կանչերով էս առի դուն,
Սեր ու կորով, տենչ, ողջություն թող զոհ ըլլան քո ճամբուն:[4]

Զիա Գեոքալփը «Թանին» թերթում տպած «Դեպի Արևելք» խորագրով շարքի «Ազգն ըստ Թուրքին» բանաստեղծության մեջ գրում է

Հատանե զիս սուրն իսկ, եթե միությունն իմ չեմ մոռնար,
Մենք կրոնքով, լեզվով մեկ ենք, ծնած ենք նույն մորմէն,
Իմ պետության հոգերովն ես ազգությունն իմ չեմ մոռնար,
Անատոլուն ներքին հող է, չի բաժնվիր արտերկրէն:

Զիս մի կոչեր թուրքմեն, քայ կամ օսմանցի,
Թուրք եմ, անունն այս բարձր է բոլորէն,
Չկա ուզբեկ, թաթար, խըրխըզ, շիրվանցի,
Թուրք ազգն է մեկ, չի բաժանվիր մեկն արդեն:

Արևելքեն՝ զոյգ, վաշտ մըն ալ՝ հարավէն
Դեպ Չինաստան, դեպ Հնդկաստան կը շարժին,
Օղուզ խանն էլ կը խլրտի անձավէն,
Թուրքերն, ելած ծով, կը հորդին վերստին:

1. **Զարեվանդ** Միացյալ անկախ Թուրանիա, էջ 198-199:
2. **K. Karabekir** Istiklai harbimiz, Istanbul, 1969, s. 69.
3. **Ismail Habibi** Tanzimattan beri. Edebiyet Tarihi, Cilt I, Istanbul, 1942, s. 308.
4. **K. Karabekir** Cihan habine neden girdik, nasil idare ettik, Kitab II, Istanbul, 1938, s. 69.

Ո՛վ թրքորդի, ալ ոչ ես կամ, ոչ դուն, ոչ ալ անիկա,
Չկա բարձր, չկա խոնարհ, այլ միայն կա մեծ Թուրան,
Թեքում չկա մեր ճամբուն մեջ, անկախ պեյ կամ խան չկա,
Թուրք հոգիին մեջ կան միայն մեկ հայրենիք, մեկ իշխան:[1]

Թուրքական զինվորական քայլերգ

Ելեք, արշավանքը սկսվեց,
Տղերք, Կովկասի վրա ենք հարձակվում մենք,
Թուրանն է սպասում մեզ:
Մի կողմից՝ Կահիրե,
Մյուսից՝ Բաքում, Ղարս,
Մի կողմից՝ Հինդ, Աֆղանիստան,
Մյուսից՝ Մարոկկոն է սպասում մեզ:[2]

Հուսեյին Ջահիդ՝ իբրիհաղական գործիչ

...Երկրում տիրապետող ազգը թուրքերն են, և առաջիկայում էլ այդպես կլինի:[3]

Միզանջի Մուրադ՝ իբրիհաղական գործիչ

Մեր բարեկամը խորապես սխալվում է, երբ տարբերություն է տեսնում պանթուրքիզմի, պանօսմանիզմի և պանիսլամիզմի միջև:[4]

Իբրահիմ Թեմո

Ահմեդ Ռիզան ոչ մի կերպ չէր ուզում հասկանալ, որ եթե փոքրամասնություններին որոշ արտոնություններ չտրվեն, հազիվ թե նրանք հավատարիմ լինեն պետությանը:[5]

Երիտթուրք

Ամենից առաջ մենք պետք է ոչնչացնենք բազմաթիվ և վտանգավոր թշնամիներին մեր տարածքում: Միայն դրանից հետո է հնարավոր հաշիվ մաքրել հարևանների հետ:[6]

1. Ն.տ., էջ 227, 228:
2. «Արարատ», 1 փետրվարի 1985 թ.:
3. **S. Aksin** Jön Türkler ve Ittihad ve Terakki, Istanbul, 1987, s. 169.
4. **D. Kushner** Turk Milliyetciliginin Dogusu, Istanbul, 1979, s. 39.
5. **E. E. Ramsaur** Jön Türkler ve 1908 Istiklali, Istanbul, 1982, s. 111.
6. **Ե. Սարգսյան** Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, 1995, էջ 67:

Ի. Բալբանջիևոզլի՝ թուրք պատմաբան

Զիա Գյոքալփը պնդում է, որ մեր ազգը չի սահմանափակվում պետության, հավատի կամ ռասայի ընդհանրության շրջանակներում: Ահա թե ինչու թուրքական ազգի կազմում մենք մտցնում ենք բոլոր ադրբեջանցիներին, ղազախներին, թուրքմեններին, ուզբեկներին, կիզիզներին, կաշգյարցիներին (Չինաստանում), որոնք, ինչպես և մենք, խոսում են թուրքերենով և, ինչպես մենք, աղոթում են իսլամին: Գյոքալփի կարծիքով ազգը այդ լեզվի ու կրոնի միասնությունն է:[1]

Ջելալ Նուրի՝ թուրք հրապարակախոս-գրող

Թուրքական ռասան բարձր է, որովհետև թուրքերը բոլորից խիզախ, խելոք և ընդունակ են:[2]

Մուզեֆֆեր՝ Թուրքիայի պատմության ուսումնասիրության ասոցիացիայի գլխավոր քարտուղար

Գիտական վերջին տվյալները համընկնում են մարդկային երկու կատեգորիաներն ընդունելու հետ, նկատի ունենալով գանգի ձևը: Նրանցից մեկը վերագրվում է Կենտրոնական Ասիայի սարահարթին: Այս շրջանից ծագում առած անհատները միշտ անվանվել են թուրքեր, որոնք, լեռների հետ մարտի բռնվելով, հիմք դրեցին մետաղի դարաշրջանին:

Երբ մարդկությունը դեռ տգիտության մեջ էր գտնվում, թուքերը ընթանում էին Աստծու հավատի ուղիով: Թուրքական զանգվածները շարժվելով՝ նվաճեցին Չինաստանը, Ճապոնիան, Օկեանիան, Մեքսիկան, Պերուն, Սիբիրը, Ռուսաստանը, Թրակիան, Հունաստանը: Թուրանական ծովը հասավ Իտալիայի ափերին: Այս ռասան հասավ մինչև Բալթիկա, Իռլանդիա և Իսլանդիա, անցավ Ֆինլանդիայով, որի ազգաբնակչությունը ընդունում է իր թուրքական ծագումը: Ոչ մի ուժ չկարողացավ կանգնեցնել նրանց շարժումը: Թուրքերը թափանցեցին Ֆրանսիա, Ալպերին ու Գալերին անուն տվեցին: Պատմական փաստ է նաև այն, որ էտրուսկները ծագել են թուրքական մի այլ ճյուղից: Քաղաքակրթությունը ծագել է Կենտրոնական Ասիայում, որը թուրքերը դարձրին մյուս ժողովուրդների սեփականությունը:[3]

1. "Turk Daily", 1967, թիվ 194:
2. **Nuri Gelal** Ittihad-islam, Istanbul, 1912, s. 11.
3. **W. Cherchill** The World Crises 1914-1918, Barselona, 1944, p. 260.

Ջելալ Նուրի

...Իրաքը, Եմենը պիտի դառնան լրիվ թուրքական... Կայսերական շահերի պահպանման, թուրքերի գոյության համար հարկ է թուրքացնել արաբական հողերը, սաղմի մեջ ճնշել արքնացող ազգայնականությունը արաբ երիտասարդ սերնդի մեջ... արաբները դժբախտություն են Թուրքիայի համար... Թուրքական ռազմական նվաճողի ձին ավելի լավ է, քան որևէ ազգի մարգարեն:[1]

Նաջի բեյ՝ երիտթուրքերի կենտրոնի անդամ

Պատերազմից հետո կովկասյան ժողովուրդները համադաշնակցական միավոր կստանան: Թուրքահայերը կարող են վերաբնակվել Կովկաս և ձուլվել իրենց ռուսահայ եղբայրների հետ:[2]

Թերքին Ալփ՝ պատմաբան.

Իրանում բնակչության 1/3-ը թուրքական արյուն ունի և պետք է վերադառնա թուրքականության գիրկը: Նրանք բոլորը, նաև շահերն ու վեզիրները, փիլիսոփաներն ու գիտնականները, ովքեր կորցրել են իրենց թուրքական գիտակցությունը և ուծացվել են՝ գրելով, խոսելով պարսկերեն, պետք է լինեն թուրքեր:[3]

Թեքին Ալփ

Ներկայումս 60-70 միլիոն թուրք բնակվում է աշխարհի տարբեր երկրներում... Ներկայումս, երբ օսմանյան թուքրերը արթնացել են հարյուրամյակներ տևած քնից, նրանք միայն իրենց մասին չէ, որ մտածում են: Նրանք շտապում են փրկելու ստրկության և տգիտության մեջ ապրող իրենց ռասայի մյուս ներկայացուցիչներին: Իրրեդենտիզմը... թուրքերի համար քաղաքական և սոցիալական անհրաժեշտություն է... Եթե աշխարհի բոլոր թուրքերը միավորվեն մի վիթխարի համայնքում, կձևավորվի մի ուժեղ ազգ...

Սիբիր, Կովկաս, Ղրիմ, Աֆղանստան... Եվրոպական Ռուսաստանում Վոլգայի ու Կամայի հարթավայրերը... բնակեցված 4-5 միլիոն թուրքով... (Հետևաբար) պանթուրքական ձգտումներն իրականանալ չեն կարող, քանի դեռ կործանված չէ մոսկովյան հզորությունը... Եթե ռուսական բո-

1. **Turkey**: A past and a Future. "The Round Table", p. 25.

2. "Армяне и война", Одесса, июнь, 1916, стр. 46.

3. **Turkey**: A past and a Future. "The Round Table", p. 31,32.

նատիրությունը... ոչնչացվի Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի խիզախ բանակների կողմից, 40-50 միլիոն թուրք անկախություն կստանա: Օսմանյան 10 միլիոն թուրքերի հետ նրանք կկազմեն ազգ..., և այնպես առաջ կընթանան դեպի մեծ քաղաքակրթություն, որ ամենայն հավանականությամբ կկարողանար համեմատվել գերմանական քաղաքակրթության հետ:[1]

Թուրք ժանդարմ

Նախ մենք կսպանենք հայերին, ապա՝ քրդերին:[2]

Ռ. Շարբ՝ թուրք քաղաքագետ

Հայերը Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմների ժամանակ քաջությամբ կռվեցին ... ամեն ինչ հայրենիքին նվիրող հայրենակիցը հարազատ թուրք չի համարվո՞ւմ...

Ջավիդ բեյը (1912 թ.)

Առանց թուրքի հայ չկա, առանց հայի թուրք չկա...: Այս խոսքերի վրա նրան լսող թուրքերը գոչեցին. «Կեցցեն մեր հայ եղբայրները». բուռն ծափահարել են իթթիհադական հրեա Ջավիդին:[3]

Էքրեմ Թալու՝ թուրք քաղաքական գործիչ (1948 թ)

Հայ հայրենակիցների դերն այս երկրում չի մոռացվի: Նրանց պատվավոր հիշատակի առջև խոնարհվում եմ:[4]

Փարիզաբնակ երիտթուրք

Եթե գա մի հայ ու ասի. «Ես օսմանցի եմ, ես նվիրված եմ օսմանիզմին, պատրաստ ձեր ծրագրի սահմաններում ծառայելու օսմանիզմին...» (անվերապահ ենք), այդ հային անվանել հայրենակից և ասել. «Բարի գալուստ»... Եթե մենք մեր ընկերության մեջ թույլ տանք օսմանցի ոչ մահմեդականի, ապա միայն այս պայմանով:[5]

1. **В. В. Готлиб** Тайная дипломатия во время Первой мировой войны, Москва, 1960, стр. 39-41.

2. "Miscellaneours", London, 1916, N 31, p. 153.

3. **R. Sark** Türk Devleti Hismetinde Ermeniler, Istambul, 1953.

4. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 372:

5. Y. H. Bayur, Türk inkilabi tarihi. Cilt I, s. 372.

Երիտթուրքերի Փարիզի կենտրոնի նամակը կովկասի մահմեդականներին

Եվրոպական քրիստոնյա պետությունները նույնիսկ վախենում են «իսլամական միավորում» խոսքերից: Արդյո՞ք մեր թշնամիների վախը փայլուն ապացույց չէ, թե որքան անհրաժեշտ է, որ մահմեդականները միավորվեն:[1]

Ալի Ֆաիկա Ջիհանը՝ թուրք սոցիոլոգ, ծաղրում է պանթուրքիստներին

Օգուզները, թաթարները, կիրգիզները, ուզբեկները, յակութները ստեղծել են մեկը մյուսից տարբեր մշակույթներ: Ոչ աչքերի ու մազերի գույնը, ոչ գանգի ձևը չեն կարող ապացույց ծառայել նրանց էթնիկական ընդհանուր կեցության համար: Այսօրվա թուրանականների գործունեությունը կարելի է համեմատել ածպարարի փորձի հետ, ոգիներ կանչել ու նրանց հետ խոսել:[2]

Տ. Տեկին՝ թուրք հասարակագետ.

Անատոլիական և ասիական թուրքերի միջև հազարամյակների ընթացքում հաստատվել են աշխարհագրական, սոցիալական և մշակութային տարբերություններ: Թուրքական բարբառների միջև ոչ մեծ տարբերությունները աստիճանաբար մեծացել են, որն ի վերջո հասցրել է ազգակից, բայց տարբեր լեզուների ստեղծմանը: Թուրքերենի և չուվաշերենի, յակուտերենի և խաքքերենի տարբերությունը, եթե ավելի մեծ չէ, ապա փոքր էլ չէ, քան, օրինակ, անգլերենի ու գերմաներենի միջև եղած տարբերությունները:[3]

Սևգին Սոյսալ՝ պատմաբան

Ի՞նչ են ուզում մեր թուրանիստները: Միայն ժողովուրդների ազատությո՞ւն:

Իհարկե, և մի փոքր էլ ավելին: Վերադարձնել պապենական և իսկական հայրենիքը... բայց այդ հայրենիքը միակը չէ: Մենք մի հայրենիք ունենք Չինաստանում, մյուսը՝ Ռուսաստանում, երրորդը՝ Իրաքում: Այնուհետև գալիս են մեր հայրենիքները Արևմտյան Թրակիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Հարավսլավիայում, Աֆղանստանում, Սիրիայում:[4]

1. **A. H. Kuran** Inkilap tarihimiz ve Ittihad ve Terakkl, Istanbul, 1948, s. 209.
2. **A. F. Cihan** Sosiyalist Turkiye, Ankara, 1969, s. 176.
3. **T. Tekin** Panturkizm Ulüsü ve Dilde Birlik Ideliasi, "Türk Küztarü", 1977, N 7.
4. "Politika Gazetesi", 2 հուլիսի, 1976 թ.:

Օմեր Սեյֆեդդին՝ թուրք գործիչ

Ես հիշեցի. այսօր մեր կեղծ հեղափոխության երկրորդ տարեդարձն է, այդ անարյուն, ողորմելի, հնարովի թուրքական հեղափոխության, որն ըստ էության իրենից ներկայացնում է լոկ անմիտ բուռն օվացիաներ:[1]

Միություն և առաջադիմություն կոմիտեի հայրարարությունը

(Սահմանադրությունը) միակ իրական դարմանն է վերջ տալու միապետական չարագործ իշխանության զեղծումներին, որից բխում են Թուրքիայի մի ծայրից մինչև մյուսը ամեն օր կատարվող քստմնելի գործերը, որին զոհ են գնում քրիստոնյաներն ու մահմեդականները:[2]

Սաբահեդդինը Ս. Սապահ-Գյուլյանին և Մուրադին (1908 թ.)

Եթե իթթիհադը 8 ամիս կառավարության գլուխ մնայ և պետական գործերը ինքը վարե, լավ համոզված եղեք, որ բաղկացուցիչ բոլոր ազգերի և մասնավորապես հայերի ապագան ջախջախված, վերջացած է: Ես այս ասում եմ խղճիս թելադրությունից մղված: Այդ մարդիկ ինձ հետ մտերմական խոսակցություններ են ունեցել, իրարու բացուել ենք որպես թուրք: Նրանց արած որոշակի յատարարությունից և խոստովանություններից՝ դա է երևացել, պարզ և մեկին կերպով: Ուստի օր առաջ ձեր գլխի ճարը պիտի տեսնեք և ձեր անելիքը գիտենաք: Կրկնում եմ, որպես գործից տեղեկություն ունեցող, 8 ամիս էլ՝ և ձեր ապագան, որպես ազգ, այլևս խորտակված է՝ անվերականգնելի կերպով:[3]

Բեհա բեյ՝ երիտթուրք գործիչ

Առաջ ասում էին, որ գուցե սահմանադրությամբ կարելի լինի այս երկիրը ազատել: Եկավ Սահմանադրությունը և մեր նեխածությունը, մեր փտածությունը էլ ավելի մերկապարանոց երևան հանեց... Մենք անկարող ենք Թուրքիայի մեջ եղող ազգերին ոչ ծուլել, ոչ էլ կատարեալ իրավահավասարության վրա դրված նորագույն պետություն ստեղծել: Դրա համար հարկ պիտի լիներ մեր պետության ամբողջ յորինուածությունը փոխել: Խտրականության, նուաճողականության վրա հաստատված մեր դարավոր օրենքները ոչնչացնել, թողնել մեր նախապաշարումները, մեր պապե-

1. **Ömer Seyfeddin** Külliyat, Istanbul, 1938, s. 91.

2. **Айзенштейн** Из истории Турецкого реализма.

3. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, էջ 239:

նական խելքը, մեր ժառանգական միտումները, ունակությունները... Մենք նորից պիտի վերածնունենք, հիմնաղիր ժողով կազմենք, որ հին բոլոր հաստատությունները փլցնի և նորերը առաջ բերի, իսկ դա մենք չենք կարող... Դրա համար կպահանջվեր մի նոր յեղափոխություն: Ո՞վ պիտի աներ, ո՞վ պիտի յառաջնորդեր: Կարո՞ղ ենք, ունե՞նք այդ տարրը: Ոչ և ոչ:[1]

Էմիլ Ելբչին՝ թուրք քաղաքագետ

Ի՞նչ է թուրանիզմը (պանթուրքիզմը)՝ մեծ ժողովրդի ազգային ազատագրական պայքա՞ր, թե՞ իլյուզիա, որ հակասության մեջ է պատմական ճշմարտության, գիտության և բանականության հետ, կամ թե, որ ավելի վատ է, խոսքը գնում է կեղծ գաղափարախոսության մասին, որը կրկնօրինակում է գերմանական իմպերիալիզմի քաղաքականությունը, որն արտահայտված է "Drang nach Osten" լոզունգով:[2]

Դ. Սալեհ փաշա (1911 թ.)

Իթթիհադը որոշել է կոտորել հայերին:[3]

Քաղվածք Թուրքիայի գլխավոր շտաբի 1912 թ. կազմած ստրատեգիական պլանից

Հարձակումը սկսել հետևյալ ուղղությամբ. 11-րդ և 12-րդ բանակային կորպուսները, որ գտնվում են Պարսկաստանի սահմանում, Մակուի վրայով կշարժվեն՝ շրջանցելով Արարատ սարը, կհարձակվեն Շահբախտի վրա, հեշտությամբ կմտնեն Նախիջևան, զարգացնելով հարձակումը՝ կգրավեն Երևանը, Անդրկովկասը և Կովկասը:[4]

Երիտթուրք պարագլուխների նամակ-սպառնալիքը ուղարկված հայկական պատրիարքարանին (12 նոյեմբերի 1913 թ.)

Դուք, անիծվածներ, դուք, հին վարչակարգի մեր հարգելի կառավարությանը դժբախտության մատնողներ: Միջամտելով ազգի պաշտոնական գործերին՝ դուք հիմք տվեցիք օտարերկրյա հարձակումների համար: Դուք վարկաբեկեցիք մեր ազգը և մասնավորապես երիտասարդ թուրքերի

1. **Ս. Սապահ-Գյուլեան** Պատասխանատուները, էջ 283:

2. **E. T. Elicin** Kemalist Devrüm Ideolojisi, Istanbul, 1970. s. 231.

3. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, էջ 158:

4. Վրաստանի ԿՊԱ, ֆ« 85, գ. 107, թ. 90-91:

պատիվն ու փառքը Եվրոպայի աչքում, դավաճանական նպատակներով դուք համարձակվեցիք քաղաքական բնույթի բազմաթիվ նամակներ ուղարկել ներքին գործերի նախարարությունն... Ներկայումս մենք բռնատիրության դարաշրջանում չենք ապրում, դրա համար էլ դուք պետք է գիտակցեք, որ երիտասարդ թուրքերն արքնացել են: Նրանք պարտավորվել են այսուհետև հանուն սրբազան պարտականությունների հանդես բերել ինքնազոհաբերություն և չշեղվել երդվյալ ուղուց: Երիտասարդ թուրքերը չեն հանդուրժում սեփական երկրում մարդկանց, ովքեր ցանկանում են իրենց կամքը թելադրել: Մենք անտարբեր չենք մնա վարմունքներին, որոնք վիրավորում են մեր արժանապատվությունը: Դուք, հայերդ, պետք է լավ գիտակցեք այս և գործեք դրան համապատասխան: Մի՛ մոռացեք, թե որտեղ եք ապրում: Մենք ձեզ նախազգուշացրել ենք: Ձեր պատճառած ցավը պահում ենք մեր սրտերի խորքերում: Եթե ձեզ և ձեր կրոնին վտանգ սպառնա, ձեռնարկեք նախազգուշական միջոցներ: Իսկ կառավարության գործերին և ազգային քաղաքականությանը միջամտել ոչ ոք ձեզ թույլ չի տա: Այդ իմացեք: Հակառակ դեպքում օսմանները, երիտասարդ թուրքերը անձնազոհությամբ կկատարեն իրենց սրբազան պարտքը:[1]

1913 թ. նոյեմբերի 16-ին պատրիարքարանը ստացավ մի այլ նամակ

Ով հայ գյավուրներ, դուք լավ գիտեք, թե մոծակին ինչ է արժենում թևերը թափահարելը, ինչպես է նրա կյանքը կարճանում: Դուք, թևավորված հարիֆներ, նման եք այդ մոծակին, մոռանալով, որ դրանով կարճացնում եք ձեր կյանքը: Հեռու չէ ձեր կեղտոտ վախճանը: Չկասկածեք. մերձակա ժամանակներում մենք կկտրենք ձեր և ձեր պատրիարքի թևերը, կարգելենք ձեր ժողովները: Թուրքական յաթաղանը թոցրել է շատ գյավուրների գլուխներ, և այսուհետ ևս միլիոններով սպանելու մտադրությունը չի կորցրել: Գիտցեք, որ թուրքերը երդվել են իրենց երկիրը մաքրել գյավուրներից, որոնք նման են թոքախտի բացիլներին:[2]

Ջենապ Շեհապեդդին՝ բանապրեղծ, իր որդուն

Մենք պարտվեցինք (Բալկանյան պատերազմում) և արտաքին աշխարհի կողմից թշնամություն ցույց տրվեց մեզ, որովհետև ճիշտ ու սխալի, մարդկայնության ու քաղաքակրթության վերաբերյալ մեր կարծիքնե-

1. **Լևոն Վարդան** Թող թուրքը խոսի, Բեյրութ, 1957, էջ 24-25, նաև նույն հեղինակի «Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գոյքերը», Բեյրութ, 1970:

2. **Լևոն Վարդան** Թող թուրքը խոսի, էջ 25-26: «Ազդակ», 20 ապրիլի 1965 թ.:

ռում դարձել էինք շատ խոհական, շատ մշակված և շատ ազնվացած: Բալկանյան պատերազմի օրինակը ցույց տվեց մեզ, որ թշնամուն դիմակայող յուրաքանչյուր զինվոր պետք է վերադառնա բարբարոսության օրերը, տենչա արյուն, լինի անգութ կանանց ու երեխաներին, ծերերին ու հաշմանդամներին սպանելու պահին և արհամարհի ուրիշների ունեցվածքը, կյանքը և պատիվը: Սփոթք արյուն, տառապանք, սուգ...[1]

«Իգդամ» օրաթերթ

Գործելու ժամանակը հասած է: Պետք է ծուլինք մեր բովանդակ ոյժով, մեր ամբողջ հոգիով, ատամներով ու եղունգներով, մեր մարմիններում ու ոգիներում բոլոր կարողութիւններով:[2]

Ջեմալ փաշա (նոյեմբեր, 1913 թ.)

Մինչև վերջին ժամանակներս Կոմիտեն (երիտթուրքական) դեռևս հավատում էր Ռուսաստանի աջակցությանը Հայկական հարցում, որովհետև Գերմանիան Ռուսաստանի կողմնակիցն էր: ...(Մինչդեռ) Ռուսաստանը Կոմիտեն համարում է իր հակառակորդը և ոչ պարկեշտ միջոցներով գործում է այն տապալելու նպատակով: Դրա համար էլ հասկանալի է, թե ինչու Կոմիտեն այլևս ծայր աստիճանի անվստահությամբ է վերաբերում բարենորոգումների վերաբերյալ ռուսական առաջարկներին:[3]

Թուրք զեներալը հայերին (1913 թ.)

Եթե պետության ղեկը իթթիհադներու ձեռքն անցնի, անոնց տալիք առաջին հարուածը Թուրքիո բաղկացուցիչ տարրերը պիտի զգան, ի մասնավորի հայերդ: Եվ այդ քայլը կը նշանակե նստածդ ճիւղը սեփական ձեռքով կտրել:

Արդարադատության նախարարության թուրք պաշտոնատարը հայերին

Այս կայսրության մեջ տեղ չկա թե ձեզի և թե մեզի համար, և աններելի թեթևամտութիւն մը պիտի ըլլար, եթե մենք չօգտուեինք այս առիթէն ձենէ ազատելու համար:[4]

1. «Ազմ», 7 հուլիսի, 1943 թ. նաև **A.Emin (Yalman)** The Development of modern Turkey as Measured by its Press, New Yurk, 1914, p. 108.

2. Ամերիկեան դեսպան **Հ. Մորգենթաուի** հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, էջ 21:

3. R 14082, AB 23448.

4. Տոքթ. Եօհաննես Լեփսիուսի տեղեկագիրը, Բեյրութ, 1965, էջ 328:

Իթթիհադի կենտրոնի անդամի հայտարարությունը

Օտարականները պետք է աներևույթ ըլլան Թուրքիայէն, նախ հայերը, յետո յոյները, յետո հրեաները և ամենէն վերջը եվրոպացիները:[1]

Գաղտնի ոստիկանության պետ

(Երիտթուրքերի գալով) փոփոխություն կատարվեց միայն արտաքնապես, իսկ համակարգը մնաց նույնը, քանի որ առանց այդ համակարգի անհնար է պատկերացնել մահմեդական պետություն:[2]

Երիտթուրքերը հայտարարում էին

Ներկայումս բոլորը հանդիսանում են օսմանյան քաղաքացիներ և դրա համար էլ անհրաժեշտություն չկա ստեղծելու հատուկ հիմնարկներ առանձին ազգությունների համար: Հիմնարկները պետք է լինեն միասնական և պետական, այսինքն՝ զուտ թուրքական:[3]

Ջեմալը Վարդգեսին (1913 թ.)

Եթե դուք պնդեք եվրոպական վերահսկողության վրա, մենք ստիպված ենք լինելու ընդունել: Բայց դրա հետևանքն այն է լինելու, որ այդ վեց վիլայեթներում իսլամ բնակչությունը ոտի կելնի և 300-400 հազար հայ կոտորվելու է:[4]

Երիտթուրքերի կենտրոնի որոշում (1914 թ. գարնանը)

...Բոլոր հնարավոր միջոցներով քուրդ առաջնորդներին սիրաշահել՝ դրամական նպաստներ, պաշտոններ տալ, երեսփոխան ընտրել և այլն:[5]

1913 թ. մարտի 23-ին Հասան Ղալա գյուղում Քերոբ անունով մի հայի ճաշարան է մտնում թուրքական բանակի կապիտան Հասան աղան և հայտարարում

Մեր այժմվա բոլոր դժբախտությունների պատճառը քրիստոնյա ռայան է... Ես իմ կողմից անհրաժեշտ միջոցներ եմ ձեռնարկել և Պասին

1. Ն. տ., էջ 266:

2. **Хаджетлаше Мухамед-Бек** Убийца на троне (записи начальника тайной полиции в Турции), Петроград, 1918, стр. 7.

3. **И. Голобородько** Старая и новая Турция, Москжа, 1908, стр. 288.

4. **Արմեն Գարո** Ապրած օրեր, Բոստոն, 1948, էջ 19:

5. Վրաստանի ՊԿԱ, ք. 15, գ. 1, գ. 371, թ. 164:

Կազայի բոլոր քրդական գյուղերում համոզել եմ քրդերին՝ այլևս չդանդաղել հայերի կոտորածների ու նրանց ունեցվածքի թալանի գործում, և նույն խորհրդով դիմում եմ ձեզ: Բոլոր բեկերը, որոնց ես հանդիպել եմ, չկարողացան ինձ հետ չհամաձայնվել: Հույս ունեմ, որ դուք ևս կհետևեք նրանց գովելի օրինակին:[1]

Երբ խանութում հայ վաճառողն ասում էր ապրանքի գինը, թուրքը հոխորտում էր. «Դուք հայերդ, նորէն կատղեր եք. ձեզ աջէն ձախէն մորթելու ենք»:[2]

Իբրահիմ Արվաս

Իթթիհադ ձեռքի տակէ ժողովուրդը գրգռելով հայերուն վրա հարձակվելու կը մղեր:[3]

Ահմեդ Աղաևի (Բաքվի 1905 թ. հայ-ադրբեջանական ընդհարումների հրահրող), Կարաբեկովի (Բաքվի թուրք ազգայնականների ղեկավար) և Ջովդեթ բեկի (փիլիսոփա) զրույցը

Դոկտ. Կարաբեկով.- Օսմանեան պետութեն ապագան ու մեծութիւնն ապահովելու համար պետք է, որ հայերն ու հույները չապրեն այս երկրում... այլապես մեր պետությունը միշտ ենթակա է բաժանման վտանգի:

Ջովդեթ.- Գուցե՞ հարգելի դոկտորն առաջարկում է գլխովին կոտորել հայերին է, հույներին էլ:

Աղաև.- Այդ ամենալավ միջոցը կը լիներ իսլամ այս պետութիւնը և երկիրը հայերի ու հույների ներկայութիւնից ազատելու... (կամ) պետք է քանդել նրանց ընտանիքը, նրանց ընտանեկան կազմակերպութեան հիմքերը: Այդ երկու ժողովուրդների, մանավանդ հայերի, ամրութեան միջնաբերդը ընտանիքն է: Եթե քանդուի այդ միջնաբերդը, բոլոր նրանց ամրությունները կը քանդուին և նրանց կոտորելու պետք չի զգացուի, որովհետև ինքնաբերաբար կոչնչանան որպես ազգային միութիւններ:[4]

Մուրադ բեյ՝ «Միզան» թերթի խմբագիր

Թուրքիայի ընդհանուր բարենորոգումներից բացի... առանձին Հայկական հարց պետք չէ և չի կարող քննարկման առարկա լինել այն պարզ

1. АВПР, «Посольство в Константинополе", д. 2684, л. 36-37.
2. **Ե. Պերպերեան** Պազր-Մատեն, Նյու Յորք, 1984, էջ 38:
3. «ՀԵՄ եռամսեայ», ապրիլ-հունիս, 1995 թ.:
4. «Ուսանողական տարեգիրք», Բեյրութ, 1937, էջ 71-79:

պատճառով, որ ոչ մի հավաստի տվյալ չկա նույնիսկ արհեստավորներից Հայաստան ստեղծելու համար:[1]

Մահմուդ Մուխտար փաշա՝ Թուրքիայի դեսպան Փարիզում

Հայկական հարց: Այդպիսի խնդիր չունինք: Կառավարութեան նպատակն է քրդերի ու հայերի գժտությունները կարգավորել: Մենք ամեն բան անելու ենք ուժով մեկ ընդհանուր Օսմանեան կայսրութիւն հիմնելու համար:[2]

Աբդուլ Ռահման բեյ

(Հայկական նահանգներում) մենք հայերուն չէ, որ բարենորոգութիւն պիտի ընենք, այլ՝ բոլոր օսմանցիներուն, մանավանդ իսլամներու համար:[3]

Բեհաեդդին Շաքիրի 1906 թ. նոյեմբերի 23-ի նամակը Կովկասի մահմեդականներին

Ազիզ եղբայրներ.

Ստացանք ձեր եղբայրական նամակը: Մեր ճեմիյեթի ժողովին կարդացինք: Իսլամական և ազգային իրավունքներու պաշտպանության համար Կովկասի բոլոր անկյուններում գիտական և քաղաքական խմբակներ կազմակերպելու, դպրոցներում, հրատարակություններում օսմանյան թուրքերենն օգտագործելու և մեզ հետ հարաբերությունները զարգացնելու համար Եվրոպա ներկայացուցիչներ ուղարկելու Ձեր մտադրությունները միաձայն ողջունում ենք:

1. Կովկասում և նույնիսկ ամբողջ Ռուսաստանում հարկ է ջանքեր թափել մահմեդականներին մեկ ամբողջության մեջ միավորելու համար: Ձեր հարևանները՝ դաղստանցիները, չերքեզները պատերազմիկ, քաջ մարտիկներ են, լավ գիտեն զենք օգտագործել: Համաձայն «Հավատացյալների միջև եղբայրություն» Մարգարեի խոսքին, ձեզ եղբայրական օգնության ձեռք ենք մեկնում: Դրանում երբեք չկասկածեք:

2. Լեհերը ռուսական լծից ազատվելու համար արդեն մեկ-երկու տարի է, որ հայրենասիրական մեծ վճռականությամբ են աշխատում: Բոլորս այդ մասին լսել ենք:

Կովկասում եղող իսլամները այդ ինքնազոհ ազգից, եթե ոչ նյութական, ապա գոնե բարոյական աջակցություն են սպասում: Նրանց հետ

1. **Murad Bey** La Force et la Faiblesse de la Turguie, p. 27.

2. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 261:

3. Ն. տ.:

լինել, և Օդեսայում եղած հեղափոխական հրեաների հետ բարեկամական կապ պահելն օգտակար է մի քանի տեսակետներից:

3. Աշխատեք ամեն քաղաքում գաղտնի ընկերություն ստեղծել:

4. Հայտնի է, որ առանց դրամի ոչինչ անել հնարավոր չէ: Ամենից առաջ ձեր ընկերությունը պետք է կենտրոնանա դրա վրա...

5. Գաղտնի պահեցեք ձեր ճեմիյեթի կենտրոնի անդամների անունները:

6. Առայժմ զգույշ եղեք ռուս կառավարության դեմ բացահայտ ապստամբության փորձերից:

7. Մեր թշնամի ռուսական լծից Ձեր ազատվելու ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակեք մի հատուկ ծրագիր նրանց թուլացնելու համար:[1]

Բ. Շաքիր. ճառը Էրզրումում 1914 թ. օգոստոսին

Ռուսաստանը և իր դաշնակիցները ի վիճակի չեն դիմադրելու կենտրոնական կայսրություններին: Ամբողջ մահմեդական աշխարհը՝ Մարոկկոյից մինչև Բելուջիստան և Աֆղանստան համախմբվել է Թուրքիայի շուրջը՝ ընդդեմ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի: Կովկասում մեզ կհարեն վրացիները ու մուսուլմանական ցեղերը, որոնց Թուրքիան կկազմակերպի և զենք կմատակարարի: Բայց Կովկասում մեր գործողությունների հաջողությունը ամբողջովին ձեր (հայերի) ձեռքին է, և ձեր կողմից հակառուսական շարժման գլուխ կանգնելու վերաբերյալ համաձայնություն տրվելու դեպքում բավական կլինի Կովկաս շարժել 200-300-հազարանոց մի բանակ, որպեսզի ռուսները հետ շպրտվեն Կովկասյան լեռներից այն կողմ: Ռուսներին արտաքսելուց հետո հյուսիս-արևմուտքում մենք կկազմակերպենք ինքնավար Վրաստան... հյուսիս-արևելյան մասում կառանձնացնենք ինքնավար մուսուլմանական մի մարզ... և, վերջապես, կենտրոնական մասում կկազմենք ինքնավար Հայաստան:[2]

Հայերը մերժեցին Ռուսաստանի դեմ հանդես գալու առաջարկը: Թուրքերը հայտարարեցին

Կովկասում հայերը ակնհայտորեն հանդես եկան Ռուսաստանի կողմում և Թուրքիայի ձգտումների դեմ խոչընդոտ են հանդիսանում: Թուր-

1. **A. H. Kuran** Inkilap tarihimiz ve Ittihad ve Terakkl, s. 214 կամT. **Z. Tunajayi** Turkiyede siyasi Partiler, s. 127, կամ **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 153-154:

2. АВПР, Политархив, д. 3484. **Ռ. Տեր-Մինասյանի** 1915 թ. նոյեմբերի 11-ի նամակը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը:

քերի անհաջողությունների համար պատասխանատվությունն ամբողջովին ձեր՝ հայերիդ վրա կընկնի:[1]

Բեհաեդդին Շաքիրը, Էրզրումի բանակցություններում մերժողական պատասխան ստանալով, գոռաց.

Սա դավաճանություն է: Դուք Ռուսաստանի կողմն եք անցնում մի պահի, որից կրիտիկականը չի եղել: Դուք հրաժարվում եք պաշտպանել կառավարությանը: Դուք մոռանում եք, որ օգտվում եք նրա հյուրընկալությունից:[2]

Շիհդաթ Շուքրին՝ երիտթուրքական կուսակցության կենտկոմի քարտուղար, Էրզրումի վալիի միջոցով Բեհաեդդին Շաքիր բեյին

Այստեղ մի քանիսի կողմից տրված տեղեկություններից, ինչպես նաև 1914 թ. օգոստոսի 15-ի թվակիր ձեր գրությունից պարզվում է, որ հայերը մտադրություն չունեն մեզ հետ միատեղ ռազմական գործողություններին մասնակցել: Ուստի ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է գաղտնի պահվեն նրանցից: Պետք է տպավորություն ստեղծել, որ պետությունն ու կառավարությունը փափագում են, որ հայ հայրենակիցները մնան ապահով (անվրդով, միամիտ): Այս ուղղությամբ ցանկալի է, որ անհրաժեշտ ջանք գործադրվի նրանց հանգիստ պահելու համար:[3]

Թուրքական մի վկայություն

Դաշնակցության ընդհանուր ժողովի (8-րդ համագումար՝ 1914 թ. հուլիս-օգոստոս) ընթացքում դաշնակ ղեկավարները գաղտնի հավաքույթներ էին ունենում և նույնիսկ կես գիշերն անց գաղտագողի գնում էին ռուսական հյուպատոսարան և տեսակցում ռուս հյուպատոսի հետ... իսկ Էրզրումում այդ ժամանակ գտնվող Բեհաեդդին Շաքիրը լրտեսում էր նրանց և քիչ անց հեռագրեց Էրզրումի ջարդերի կազմակերպիչ Հիլմիին՝ ոչնչացնել այդ ընդհանուր ժողովի մասնակիցներին: Սակայն այդ հաջողացնել չկարողացան:[4]

---

1. АВПР, Политархив, д. 3484.

2. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, էջ 11:

3. **Ա. Փափազյան** Արաբական կախաղաններն ու հայկական ջարդերը, Հալեպ, 1992, էջ 77:

4. "Humumi Harpte Teskilati Mahsusa", "Vakit" 15-17 նոյեմբերի, 1933 թ.:

Բ. Շաքիրը Էրզրումից հեռագրեց Պոլիս

Հայտնի դարձավ, որ հայերը տրամադիր չեն մեզ հետ հավաքաբար գործելու: Հետևաբար, հարկ է նրանցից թաքցնել մեր ձեռնարկած միջոցները: Բայց և այնպես կառավարության և կուսակցության համար հույժ կարևոր է ապահովել մեր հայ հայրենակիցների բարօրությունն ու երջանկությունը: Ձերդ արժանավորությունը հարկ է, որ այս մասին անհրաժեշտ երաշխիք ընծայի և գոհացում տա սրտերին:[1]

«Օսմանյան թուրքերի նոր և մերչակա շրջանի պատմություն» (Կ. Պոլիս, 1931 թ.)

Ի վերջո, իթթիհադը բալկանյան պատերազմից հասկացավ, որ բոլորին օսմանցի դարձնելն անհնար է:

Երբ հայերը, արաբները, քրդերը, ալբանացիները անկախության ձգտում ցույց տվին, թուրքիզմի գաղափարն ավելի առաջ տարվեց:[2]

Սարիղամիշի ճակատամարտից հետո Էնվերը երիտթուրքերի կենտրոնի նիստում հայտարարեց

Թեև Սարիղամիշի ճակատամարտում մենք արտաքնապես պարտվեցինք, սակայն ըստ էության հաղթել էինք, որովհետև Սարիղամիշի անտառներից մինչև Էրզրում ճանապարհներին թողեցինք մի քանի տասնյակ հազար քուրդ երիտասարդների դիակներ:[3]

Պատերազմը սկսվելու կապակցությամբ երիտթուրքերի կենտրոնի շրջաբերականից

...Մոսկոֆները Դելի Փեթրոյի (Պետրոս Մեծի) հետևելով, միշտ նպատակ ունեցեր են թրքությունը ոչնչացնել: Անգլիա և Ֆրանսիա, որ մինչև հիմա իրենց շահերուն համաձայն կը նկատէին թողուլ, որ Թուրքիա մնա և ապրի, այժմ պետք կը տեսնեն ռուսական կայսրության հետ համերաշխորեն աշխատիլ Թուրքիոյ քայքայման, ապա հանգիստ սրտով մարսել կարենալու համար մահմեդական երկրները՝ Հնդկաստանը, Եգիպտոսը, Թունուզը, Ալճերիան, Մարոքը և այլն, զորս կլանած են իրենց անհագ երկրաքաղցությամբ...

...Բայց պե՞տք է, (որ) մենք ձեռնածալ մնայինք անգործ, մինչ մեր բնա-

1. «Արև», 27 հուլիսի 1953 թ.:
2. «Ազդակ», 1988 թ.:
3. **Զարեվանդ** Միացեալ անկախ Թուրանիա, էջ 21:

կան զինակիցները կռվի մեջ էին Ռուսիոյ, մեր երդվյալ, անհաշտ ու հավիտենական թշնամիին հետ: Եռյակ համաձայնութեան հաղթանակը մեր մահավճիռը չէ՞ միթե: Հիմարութիւն պիտի չըլլա՞ր, եթե մենք մեր բարոյական և նիւթական բոլոր ուժերը չլարեինք դիմագրավելու համար աղետը:

Չմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցութեան նպատակը սոսկ վերահաս, սպառնացող կորուստէ մեզ փրկել չէ. այլ մենք կը հետապնդենք ավելի անմիջական նպատակ մը- մեր ազգային իդեալին իրականացումը: Մեր ժողովրդին և հայրենիքին ազգային իդեալը մեզի մեկ կողմէ կը մղէ խորտակելու մոսկովեան թշնամին, ատով հասնելու մեր կայսրութեան համար բնական սահման մը, որուն մեջ պարփակվին ու միանան մեր բոլոր ազգակից եղբայրները: Մյուս կողմէ մեր կրոնական զգացումը մեզ կը մղէ մահմեդական աշխարհը ազատագրել անհավատներու տիրապետութենէն և անկախութիւն տալ Մուհամեդի հետևորդներուն:[1]

Չիա Գեոքալփ (Երկրող «Կարմիր երգից»)

Բիւնը ոսոխի պիտի դառնա ավերակ.
Թուրքիան մեծանա, դառնա Թուրան ծայրից ծայր:[2]

Ք. Կարաբեքիր

-Ջեմալ փաշան, որը վատնեց թուրքի հողը և արյունն աննպատակ թափեց Պաղեստինի անապատներում... Անատոլիա վերադառնալով, մեր հայրենիքի հանդեպ իր գործած սխալների մասին խորհելուց հետո, ավաղ... երկու տողով այդ սխալներին չանդրադարձավ...

...Էնվերը ձմռանը, առանց խորհուրդ լսելու, Սարիղամիշի վրա հարձակվելով, օսմանյան մի ամբողջ որակյալ բանակ կործանեց: ... Ես դեմ եմ գերմանական գաղթականներին Անատոլիայում տեղավորելուն և պանիսլամիզմին...

... Էնվերն աղետ բերեց մեր գլխին, մեզ մնում էր միայն Անատոլիան պաշտպանել... Թալեաթն ու Էնվերը մեր բանակների կործանման պատճառը դառնալուց. Անատոլիայի արյունը անխղճորեն ծծելուց հետո... փախան...

Նրանք ոչ տնտեսություն և ոչ էլ որևէ ձեռքբերում չթողեցին... ամեն ինչում տմարդություն հանդես բերեցին:[3]

-Պետության մեջ պետություն դարձած իթթիհադի կենտրոնը, մասո-

1. Ն. տ., էջ 136-138:
2. **K. Karabekir** Cihan harbine neden girdik, nasil idare ettik, s. 206.
3. **K. Karabekir** Istiklal harbimiz, s. 30-34.

նական օթյակները, որոնց թիվը հասել է 58-ի և որոնց անդամակցում էին իթթիհադի աչքի ընկնող ղեկավարները, թուրանական և պանիսլամական գրականությունն իրենց տխուր դերը կատարեցին Օսմանյան կայսրության կործանման գործում...

Առաջին աշխարհամարտի մեջ մտնելով՝ շատ զոհ տվեցինք և շատ բան կորցրինք, Օսմանյան կայսրությունը կտոր-կտոր եղավ...

Օսմանյան զորքն այս պատերազմին մասնակցելու ուժ չուներ...

Թալեաթը Էնվերի ազդեցությունից չէր կարող ձերբազատվել, քանի որ իրենից ավելի կարող էր...

Թալեաթը պետական մարդ լինելուց շատ հեռու էր...

Էնվե՞ը... Թուրքիայի շտաբի անդամներին իր մերձավոր բարեկամներից էր ընտրել... Ջեմալը քիչ էր սիրված կենտրոնում... Գերմանացիներն Էնվերի միջոցով ամբողջ Թուրքիան իրենց ազդեցության տակ վերցնելու ուղին գտել էին...

Զիա Գյոքալփը պանթուրքիստ էր, Բեհաէդդին Շաքիրը՝ անպատասխանատու մարդ...

Ողբերգությունն այն է, որ Էնվերի դրոշը դարձավ պանթուրքիզմը... մինչև վերջ էլ նա թուրքական բանակը բոլոր ռազմաճակատներում ոչնչացրեց և թուրք ժողովրդին էլ կրակների մեջ նետեց:[1]

Մուսթաֆա Թուրան՝ թուրք սպա

Թալեաթ փաշա, Սուլեյման Ասքերի, Վեհիբ, Նիազի, Էյուբ Սաբրի և բոլոր ալբանացի սպաները մասոններ էին, Փարիզի Ռիզա բեյն ու իր ընկերները սրանց միացան, առանց անդրադառնալու, թե ով ի՞նչ էր մտածում և ի՞նչ ծրագիր էր հետապնդում...

Սահմանադրությունից անմիջապես հետո մարդասպանները բանտերից դուրս եկան, մտան իթթիհադի շարքերը, սպանություններ կատարեցին ու հովանավորվեցին, լրագրողներին՝ Զեքիին, Հասան Ֆեհմիին, Ահմեդ Սամիին, որպես իթթիհադի հակառակորդներ «մաքրեցին»... Բանտից ազատված մարդասպանները... Զոհրապի և Վարդգեսի սպանողներն էին...

Իթթիհադի պատմությունը սկզբից մինչև վերջ լի է սպանդներով:[2]

1. **K. Karabekir** Cihan habine neden girdik, nasil idare ettik, Cilt I, s. 82, 138.
2. **Mustafa Turan** Taskila'ta, 31 mart faciasi, Istanbul, 1964, s. 53, 88.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բ. Դոան հրամանները հայոց պատրիարքարանին

Խորենյան մանկապարտեզի պզտիկներուն կարմիր գոգնոցին վրա նշված Խ. Մ. տառերը կը նշանակեն «Խեղճ Մանուկ», որով կառավարության դեմ ցույց մըն էր կոտորածի յիշատակները վերանորոգելու:

Հայ օրիորդներուն և մանկամարդ կիներուն արգիլել կարմիր բաճկոնակ գործածել, քանի որ կարմիր գործածելը կնշանակե յեղափոխություն ցուցադրել:

Արտասահմանէն եկած յեղափոխականները մայրաքաղաքին (Կ. Պոլսի) մեջ կը շրջին եկեղեցական տարազի ներքև:

Օրմանյանը, եկեղեցական երգեցողության մեջ եռաձայնին քաջալերելով, եկեղեցիները վերածել է թատրոնի, հայերին համախմբելու վայրի:

Սուլթանը Մ. Օրմանյանին

Հայ յեղափոխականներ Կիպրոսի մեջ զինուած կը սպասեն Կիլիկիա անցնել: Արգելեք անոնց արշավանքը: (Մ. Օրմանյանը ժպտալով պատասխանում է. «Կիպրոսից Կիլիկիա պարտադիր է անցնել ծովով: Ուստի իր սեփական տորմիղը պիտի ղրկե արգիլելու համար հրոսակախումբին անցքը... Անհիմն զրույց է»):[1]

Թևֆիկ Ֆիքրեթը՝ թուրք բանաստեղծ, Աբդուլ Համիդի դեմ 1905 թ. մի խումբ հայերի կատարած մահափորձի առնչությամբ

Ով համբավավոր որսորդ, տանիքդ իզուր չկառուցեցիր,
Նետեցիր, սակայն ափսոս, շատ ափսոս, խփել չկարողացար:[2]

Երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի 1915 թ. փետրվարի կեսին տեղի ունեցած նիստի արձանագրությունից

Նիստը ղեկավարում էր Թալեաթը: Նա ելույթի համար ձայնը տալիս է դոկտոր Նազըմին, որն ասաց. «...Հայերը, այս անգամ պատերազմը համարելով հարմար առիթ և հակառակ չեզոքություն պահելու իրենց

1. **Մ. Օրմանյան** Ազգապատում, հ. Գ. Բեյրութ, 1961:
2. **Գ. Եազըճան** Ապտիլ Համիտ Բ, Կարմիր սուլթանը, էջ 418:

խոստումին, ռուսական բանակի կազմը կամավոր մտնող հրոսակ խմբեր ստեղծելով, գրավված գյուղի ու քաղաքի բնակչությանն առանց խղճահարության սպանեցին և տեղ-տեղ ապստամբություն բարձրացնելով՝ մեր վրա հարձակվեցին և մեր բանակի նահանջի գծերին սպառնացին: Ինչ են ուզում հայերը, նրանք, մեզ բնաջնջելով, մեր գյուղերին ու կալվածքներին տիրանալով, ուզում են ասել. «Ով թուրք, դու վեր կաց այստեղից հեռացի՛ր, դու այս հողի տերը չես... Դրանք աշխարհի ստեղծումից առաջ մերն են»:

Անհրաժեշտ է գործել, և գործել արագ, եթե բավարարվենք մասնավոր ջարդերով, ինչպես դա եղավ 1909 թ. Ադանայում և ուրիշ ոջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, որովհետև մենք դրանով վտանգում ենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես պետք է ճանապարհից դեն շպրտենք: Խոսքս վերաբերում է արաբներին և քրդերին: Դրանով վտանգը մեկի փոխարեն դառնում է երեքը և դժվարանում է մեր նպատակների իրականացումը... Հայ ժողովրդին պետք է արմատախիլ անել, որպեսզի մեր հողի վրա ոչ մի հայ չմնա և մոռացվի նույնիսկ հայ անունը: Այժմ պատերազմի մեջ ենք, այսքան հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ երբ նրանք իմանան, ապա արդեն կանգնած կլինեն կատարված փաստի առաջ, և դրանով հարցը կփակվի: Այս անգամվա գործողությունը բնաջնջման գործողություն պետք է լինի: Հայերի մինչև վերջին անձի բնաջնջումը անհրաժեշտություն է...

Ես դարձա ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրը նրա համար, որպեսզի վերածենք թրքությունը: Ես ուզում եմ, որպեսզի այս հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու անբաժան տիրապետի: Թող ջնջվեն բոլոր ոչ թուրք տարրերը, որ ազգությանն ու կրոնին պատկանելիս լինեն: Այս երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»:

Բեհաէդդին Շաքիր. «Եթե մի այնպիսի ողորմելի, ինչպիսին Մովսեսն էր, այնպիսի թափառական, ինչպիսին Հիսուսն էր և այնպիսի որբ, ինչպիսին Մուհամմեդն էր, կարողացան երկրի վրա ստեղծել առանձին մեծագույն կրոններ, ապա ինչու մենք՝ ուժեղ կամքի ու խելքի տեր մարդիկս, չենք կարող ստեղծել ու տարածել Թուրանի կրոնն ու գաղափարը...

Մեր ազգային մշակույթում կարող ենք թույլ տալ միայն թուրքական սերմի ծաղկում: Մենք պարտավոր ենք մաքրել մեր հայրենիքը դեռևս գոյություն ունեցող ոչ ազգակից ժողովուրդներից, նրանց արմատախիլ

անել ինչպես մոլախոտ: Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է: Հենց դրա համար էլ Իթթիհադի իշխանությանը մենք տվեցինք «Նոր Թուրքիայի կառավարություն» անունը՝ զրոյի հասցնելով «օսմանցի» անվանումը:

Տարբեր տարրերից կազմված օսմանյան շաղախը չունի իր ազգային դեմքը, նա նման է մի ագարակի մեջ տնային տարբեր կենդանիների հավաքածուի: Հայ, հույն, բուլղար, բոսնիացի, պոմակ, սերբ, ալբանացի, քուրդ, չերքեզ, արաբ, վրացի, լազ՝ բոլոր այս իրարից տարբեր տարրերը իբրև թե կազմում էին մի ամբողջություն օսմանցի անվան տակ: Պետք է հրաժարվել նման հասկացողությունից: Ինչպես բակում բադը, սագը, հավը, ոչխարը, կովը, ցուլը և հորթը ապրում են կողք կողքի, առանց իրենց տեսակը փոխելու, ճիշտ այդպես էլ այդ ժողովուրդները մնացել են մեր հողի վրա առանց փոխելու իրենց ազգությունը: Բարենպաստ պայմաններում նրանք նեղել են թուրքերին և առանձնացել նրանցից՝ խլելով հողեր, ինչպես դա արեցին, օրինակ, ռումինացիները, սերբերը, բուլղարացիները և վերջապես՝ մակեդոնացիները: Մեր ազգային կալվածքում կարող ենք թույլ տալ միայն թուրքի առաջադիմություն և ծաղկում: Մենք պարտավոր ենք մաքրել մեր հողը հնից մնացած ոչ ազգակից ու վնասակար ժողովուրդներից, նրանց մոլախոտի նման արմատախիլ անել: Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է...»:

Հասան Ֆեհմի. «Հիմա պատերազմի մեջ ենք, զենք վերցնելու կարող, հայ երիտասարդներին պատերազմի առաջին գիծ կուղարկենք, այնտեղ դիմացից ռուսները, իսկ հետևից, մեր կողմից այդ նպատակով ուղարկված ուժերը, նրանց կրակի մեջ կառնեն և կոչնչացնեն: Նրանց տանը մնացած հիվանդ, ծեր, կին ու երեխա տարրերին էլ կհրամայենք, որ ոչնչացնեն մեր հավատացյալները: (Հայերի) ունեցվածքը կկողոպտենք, աղջիկներին կառևանգենք»:

Ջավիդ՝ ֆինանսների նախարար. «Թուրքը արևի կիզիչ ճառագայթների տակ իր արտում աշխատում է, բերքը բերում է և քաղաքի վաճառական հային է վաճառում, նրան հարստացնում, նրա հանգիստը ապահովում: Տնտեսական իշխանությունը հայի ձեռքին է, հայերի լրիվ բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետից որքան հարկադրական անհրաժեշտություն է, այնքան էլ թուրքերի տնտեսական գերիշխանություն ստեղծելու համար կարևոր է»:[1]

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ քաղաքականութիւնը, Հալեպ, 1929, Երևան, 1990, էջ 88-101:

Թալեաթը բանավեճին վերջ դրեց՝ հայտարարելով. «Որպես ներքին գործերի նախարար, հարկ եղած դեպքում ես իմ անձնական պատասխանատվությամբ հայերի նկատմամբ գործադրելու եմ այն, ինչ նպատակահարմար կհամարեմ»:

Երիտթուրքերի կենտկոմի անդամները միաձայն քվեարկեցին բոլոր հայերի ոչնչացման օգտին:[1]

1915 թ. փետրվարի 18-ի շրջաբերական հեռագիրը

Թուրքիայ մեր իթթիհատ և թերագգրի քաղաքական կեանքը խափանելու կարող մեկ հատիկ ոյժը հայերն են: Վերջերս Գահիրէէն իրարու յաջորդող լուրերէն կը հասկացուի, որ դաշնակցութիւնը ճեմիյեթին դեմ վճռական յարձակում մը կը պատրաստե:

Անցեալին ամբողջ պատմական պարագաները, եթե մանրազնին քննենք, պիտի տեսնենք, որ ճեմիյեթին հայրենասիրական ջանքերու ճամբուն վրայ յայտնուած բոլոր փոթորիկները հայերուն ցանած խռովութեան սերմերուն արդիւնքն են:

(Տոքթ. Նազըմ պեյ կը գրե. «Ես ամբողջ Թուրքիան իթթիհադ եւ թերագգրի մեկ պզտիկ նշանովը ուզուած ճամբան մտնելու վիճակին կը հասցնեմ, եթե հայերը չըլլան»):

Ճեմիյեթը հայրենիքը այս անիծեալ ցեղին ցանկութենէն փրկելու և այս մասին օսմանեան պատմութեանը քսուելիք արատին պատասխանատվութիւնը իր հայրենասեր ուսերուն վրա առնելու որոշում տուած է:

Վրեժի շարքերով լեցուն անցեալին նուաստութիւնն ու դառնութիւնները մոռնալու անկարող Ճեմիյեթը, իր ապագային մասին յուսալից ըլլալով, Թուրքիոյ մեջ ապրող բոլոր հայերը, առանց անհատ մը ողջ ձգելու, փճացնել որոշած եւ այս մասին կառավարութեան ընդարձակ իրավասութիւններ տուած է:

Ջարդի կարգադրութեան մասին կառավարութիւնը կուսակալներուն եւ բանակի հրամանատարութեանց պետք եղած բացատրութիւնները պիտի տայ: Իթթիհադ եւ թերագգրի բոլոր պատուիրակները իրենց գտնուած տեղերը այս խնդրին հետապնդութեամբ պիտի զբաղին: Չպիտի թիւլատրուի, որ հայ մը օգնութեան և պաշտպանութեան արժանանա:

Թողուած գոյքերը, ի վերջո ճեմիյեթին կազմակերպութեանը ընդարձակուելուն եւ հայրենասիրական նպատակներու համար ծախսուելու

1. **Ս. Ակունի** Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1921, էջ 187-188:

պայմանով, առ այժմ կառավարութեան յամար տեսած եղանակով պիտի գրավուին ու պահուին:

Այս մասին, եթե պետք տեսնուի, կազմուելիք յանձնաժողովներէն հաշուական բացատրութիւններ առեք: Երբ մատակարարութեան մեջ զեղծում մը տեսնեք, թե՛ կուսակալութիւն եւ թե՛ մեր մոտ պետք եղած դիմումը կրնաք ընել:[1]

Ք. Կարաբեքիրը՝ զորավար, Բ. Շաքիրի մասին

Խաբկանքի, բիրտութեան և վայրագութեան մարմնացում... Թուրանի ստեղծման համար տքնեց օր ու գիշեր, տեղեկագրեց, զեկուցեց, սուտն ու ճիշտը իրարու խառնեց, գրգռեց, հնարեց խուժանի ու նաև՝ խուճապային հոգեբանութիւն, մինչև որ անտեղի ու անփորձ ելուզակներով դեպի Արդահան շարժվելով և այնտեղի թուրքերին ոտի հանելով՝ ժողովրդին ոչնչացնելու պատճառներից մեկը հանդիսացավ:[2]

(Բոնագաղթի և եղեռնի կազմակերպումը ղեկավարելու համար ստեղծվեց «Եռյակ գործադիր կոմիտե», որի մեջ մտան Բ. Շաքիրը, Նազըմը և Մ. Շուքրին):

Բեհաեդդին Շաքիրի հայտարարությունը Եռյակ կոմիտեի առաջին նիստում

Մենք պետք է ձևավորենք այնպիսի զինված ուժեր, որոնք դուրս լինեն իշխանութեան տեղական օրգանների վերահսկողությունից... դրանք մեր հրամանները պետք է գործադրեն... (իսկ) մենք պետք է միայն կենտրոնական կառավարությանը ճանաչենք և նրա ներկայացուցիչը հանդիսացող նախարարների խորհրդի հետ խորհրդակցենք...

Մեր ստանձնած պարտականությունը հայերին, առանց բացառության՝ կին, երեխա, աղջիկ, ծեր ու հիվանդ- մինչև վերջին մարդը սպանելն ու բնաջնջելն է... այս գործը չենք կարող կատարել ոչ զինվորի և ոչ էլ ժողովրդի միջոցով:

Սա հասարակ և վայրագ ոճրագործություն է, զինվորը կաքնակեր մանուկին մոր գրկից հափշտակելով, մոր աչքի առաջ չի կարող նրա գլուխը ջախջախել... նման հրամանի գործադրումը նա իր զինվորական

1. **Ա. Անտոնեան** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշան, Բոստոն, 1921, Երևան, 1990, էջ 129-133:

2. **K. Karabekir** Istiklal harbimiz, Kitab II, Istanbul, 1969, s. 28-29.

պատվին հակառակ կհամարի և կընդունեմ: Ինչպես նաև զինվորը անկարող է ձեռները կապած ծերունուն կրծքից սյունին մեխել... նա վայրագությունը հերոսություն չի համարի...

Իսկ ժողովրդին զինելը վտանգավոր է, որովհետև մի շարք բախտախնդիրներին առիթ ու ուժ կտանք... մեր դեմ հանդես գալու համար:

Ես կարծում եմ, որ մեզ համար հարմար մարդիկ գտել եմ... ես նրանց բանտերի մեջ գտա... Դրանք ոճիր գործած, մարդասպանության և զիվորական ծառայությունից խուսափելու պատճառով (բանտ ընկած) մարդիկ են: Եթե նրանց ազատ արձակելով մեզ ենթարկենք և խմբերի բաժանենք, կարծում եմ, որ մի շատ լավ հատուկ կազմակերպություն կստեղծենք:[1]

Բացելով օսմանյան խորհրդարանի նստաշրջանը, Ահմեդ Ռիզան 1918 թ. դեկտեմբերի 2-ին հրապարակեց մի հայտարարություն

Սկսած պատերազմին մեր մասնակցությունից մինչև Թալեաթ փաշայի կառավարության անկումը, վերջինիս կողմից գործած սխալների և ոճիրների, ջարդերի, հրապարակային ոճրագործությունների, անձի անապահովության, կալվածքների և շենքերի բռնագրավումների, բոլոր օսմանցիների նկատմամբ հարստահարություններ և ոճիրներ գործած լինելու համար պահանջել եմ, որ ընդհանուր դատախազությունը հանրային իրավունքների անունով դատ սկսի և ժամ առաջ ոճրագործները երևան հանվեն ու արդարադատությանը հանձնվեն:[2]

Ջեմալի՝ Յոզղաթի նախկին կառավարիչ, ցուցմունքը ռազմական դատարանում

Բանտերի կալանավոր ոճրագործները օգտագործվեցին հայերի կոտորածն իրականացնելու համար: Այս բանը լսեցի Յոզղաթի իմ խոհարարուհուց: Նրա եղբայրը ևս մարդասպանություն կատարելու համար բանտում էր: Խոհարարուհին ինձ ասաց, որ եղբայրն էլ բանտից ազատ է արձակվել և ուղարկվել է հայերին կոտորելու:[3]

---

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը. էջ 107-112:

2. «Ժամանակ», 13. 12. 1918:

3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 534:

Մ. Ռեմզի՝ Յոզղաթի նախկին դատավոր, բանտերից ազատող հանձնաժողովի անդամ

Բժշկական քննությունից հետո տեղի ունեցավ ոճրագործների ազատ արձակման ձևակերպումները՝ իբր թե նրանք զինվոր էին գրանցվում: Հետագայում իմացանք, որ այս ոճրագործները ուղարկվել են Չորումի հրոսակների թիվը ավելացնելու:[1]

Բ. Շաքիրի շրջաբերականը պատասխանատու մարմնի անունից (18 փետրվարի, 1915 թ.)

Թուրքիայում ոչ մի հայի ողջ չթողնելու պայմանով, որոշված է նրանց բնաջնջել, և կառավարությանը լայն իրավասություններ են տրված:

Կառավարական մի այլ ծածկագրի թարգմանություն.

320 75 384 317 430 198 123 119 193 148 176 111 46

Թուրքիայում եղած բոլոր հայերին ամբողջությամբ

327 և 354 198 123 111 193 152 123 123

մեռցնել և ոչնչացնել է որոշված:

Ներքին գործերի նախարարության մի ծածկագրում հաղորդվում է հայերի ոչնչացման վայրերը և այս կապակցությամբ հանձնարարվում է. **«Հայ տարագիրների անցնելիք տեղերը մեզ հայտնեք»:**[2]

Խուլիսի՝ Կեսարիայի բանակային զնդի հրամանատար, 1915 թ. փետրվարի 19-ի հեռագիրը Յազը Չինի գիշերապահ կայանի հրամանատարին

Ձեր իրավասության սահմաններում մատնություն անող մի շարք լրտես հայեր տեղահանված են, այսինքն՝ կոտորածի ենթարկված: Իսկ զորաբանակի հրամանատարը մոտավորապես նույն շրջանից դիակները մինչև հաջորդ կեսօր հավաքելու հրաման է տվել: Բողազլյանի կայմական բեյի հրամանով հանձնարարվում է դիակները ծածկել ժողովրդի ուժերով:[3]

Թուրք զինվորականի պատմածը

Ճանոթներիցս մեկը մի անգամ ինձ ասաց, որ կենտրոնական կոմիտեն (երիտթուրքերի) քաղաքացիական անձանց է հավաքագրում և

1. Ն. տ., թիվ Մ 324:
2. Հ. Ղազարյան Ցեղասպան թուրքը, էջ 41:
3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 506:

նրանցից կազմակերպում է կամավորական ջոկատներ: ...Որպեսզի մտնեինք ջոկատները, անհրաժեշտ էր տեսնվել դոկտոր Նազրմի հետ: Շաբաթվա կեսին... մտա կենտկոմ: Իմանալով իմ խնդրանքը՝ դոկտոր Նազրմը ժպտաց և ուշադիր նայեց աչքերիս:

-Այդ ջոկատների մեջ մտցնում ենք միայն բանտարկյալներին,- ասաց նա,- դա ձեր նման երիտասարդների տեղը չէ:

Ճիշտ ասած, ես ապշած էի: Ինչի՞ համար էր անհրաժեշտ մարդասպանների բանակի ստեղծումը:[1]

Ռուշդիի՝ երիտթուրքերի կուսակցության Սամսոնի պատասխանատու քարտուղար, հեռագիրը իթթիհադի ընդհանուր կենտկոմին, որը Մ. Շուքրիի կողմից 16-ը դեկտեմբերի 1914 թ. հանձնվել էր Նազրմին

Որպես հինգերորդ չեթե (խումբ) Թուֆֆան աղայի հրամանատարությամբ 55-հոգանոց խումբ ճանապարհ հանվեց ավտոմեքենայով:[2]

Էշրեֆ Կուսկուբասի՝ Հատուկ կազմակերպության դեկավարներից

Մենք իրագործեցինք նպատակներ, որոնք առնչվում էին ազգային գերագույն շահերին և, որոնք որևէ օրինավոր կառավարություն ի վիճակի չէր մտահղանալ՝ ուր մնաց թե իրագործեր: ...Մենք պետություն էինք պետության մեջ:

...Բացի մեկ-երկու նախարարներից, անգամ կառավարության անդամներից էինք գաղտնի պահում մեծ առաքելությունները:[3]

Մ. Ռիֆաթ

Ընդհանուր հրամանատարի փոխանորդ նշանակուած Էնվեր, ռուսական ճակատը քննել է և անոր «տկարութիւնը» իմանալէ ետք նոր փառք շահելու տղայամտութիւնը ունեցած էր և առանց նկատի առնելու եղանակն ու կլիման, ինչպես նաև կեղրոնէն հեռանալիք բանակի մը պարենավորման դժուարութիւնները, իր հրամանատարութեամբ ռուսներու դեմ յարձակում մը շղթայազերծել ուզած և այս նպատակը տեղեկացուցած էր Կովկասի ճակատի հրամանատար Տամատ Հաֆըզ Իսմայիլ փաշա-

1. **F. R. Atay** Zeytindagi, Istanbul, 1981, s.35. **Т. Акчам** Турецкое национальное "Я", стр. 152.

2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 282:

3. «Հեմ եռամսեայ», ապրիլ-հունիս, 1995:

յին, որ համամիտ չգտնուելուն, բոլոր բանակի սպայակոյտի անդամները և բարձրաստիճան սպաները հրավիրելով խորհրդակցած էր ժամերով: Շատերը յարմար տեսած էին, որ ձմեռը պաշտպանողական վիճակի մեջ անցնեն և մինչև ամառ պատրաստութիւն տեսնելէ յետոյ յարձակման անցնեին: Հակառակ ասոր, Էնվերին ընկերացողի ընդհանուր սպայակոյտի նախագահ գերմանացի զորավար Պրոնզո փաշա, գերման բանակին դեմ ճակատող ռուսական ուժերը տկարացնելով Գերմանիոյ բեռը թեթևցնելու սատանայամտութեամբ՝ Էնվերը համոզած և թրքական բանակին... իր ընդհանուր հրամանատարի հանգամանքով պատասխանատվութիւնը ստանձնելով, յարձակման անցնիլ թելադրած էր:

1915-ի յունուարին կատարուած այս յարձակումը Սարիղամիշի մեջ՝ թրքական ամենալավ մարզուած բանակին բնաջնջման պատճառ եղած էր եւ համաձայն ստոյգ տեղեկութեանց, այս յարձակման միջոցին 75 հազարի մոտ զինուոր կորսուած էր...

Ընդհանուր թիվը 8-10 հազարի հասնող այս հատուկ կազմակերպութիւնը նուազագոյնը տասը, առավելագոյնը յիսուն հոգիէ բաղկացած խումբերու բաժանուած եւ անոնց հրամանատարները մարդասպանութեամբ, կեղեքումով, տուն ու տեղեր այրելով ու թալանելով, առևանգութեամբ եւ տեսակ-տեսակ ոճրագործութիւններով սնած մարդիկներ ըլլալով, Երեքներու գործադիր կոմիտեէն տրուած հրահանգները առանց խղճահարութեան կը գործադրեին:

Գավառներուն քաղաքական պաշտոնեաները՝ կեղրոնէն ստացուած... կտրուկ հրահանգին վրայ գործի փարած էին:

Կարգ մը կուսակալներ, կառավարիչներ եւ տեղակալներ... տրուած հրամանը մեղմիվ եւ հեռատեսութեամբ կը գործադրեին, ոմանք ալ, Աստուած հեռու ընէ, կուսակցականութիւնը կառավարութենէն նախընտրելով՝ մեյ մեկ դժոխային սատանաներ դարձած էին:

Ամեն կողմ, առանց խնայելու մեծ ու փոքր, ծեր ու անկարող հայերը հավաքեին, ասոնցմէ իսլամութիւնը ընդունողները առժամեայ կերպով ազատ կը ձգեին, մնացածները ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ որոշուած վայրերուն մեջ հայերու խումբերուն հասնելուն կը սպասեին:

Ճամբու նեղութիւններէն յոգնած, հոգեպես բարոյալքված, ծնած ու սնած տունէն ու տեղէն բաժնուելու վշտէն ընկճուած՝ այս խղճալի խումբե-

ը, չեթեներու գտնուած վայրը հասնելուն, ոստիկան զինուորները իրենց ստացած հրահանգին համաձայն, անոնց յանձնելով կը վերադառնային:

Բառի բուն նշանակութեամբ խղճալի եւ ողբալի, նոյնիսկ քարսիրտ վայրենիներու անգամ գութը եւ կարեկցութիւնը շարժող թշուառ վիճակի մեջ, իրենց զավակներով սպանդանոց առաջնորդուող ոչխարի հոտերու նման տարագրուող այս մարդկային խումբերը «մասնավոր կազմակերպութիւն» անունով հրեշներու ձեռքը իյնալով, երեւակայութենէ եւ նկարագրութենէ վեր խժդժութիւններու և հրահանգներու կենթարկուեին:

«Մասնավոր կազմակերպութեան» այս կատաղած դահիճները, իրենց տուներէն, տեղերէն, երջանիկ բոյներէն բռնութեամբ դուրս հանուած, միայն հայ ըլլալնուն համար տարագրուած այս մարդիկը իբր սովորական գործ սպաննելով՝ զոհերուն գոյքերը յափշտակելով, իրենց սրտին մեջ ամբարուած վայրագութիւնը և քինախնդրութիւնը չէին յագեցրել:

Այս ոճրագործներու ոհմակին ի գործ դրած ոճիրներուն եւ վայրագութիւններուն ձեւը նկարագրած ժամանակ գրիչը կը դողայ և կը խպնի: Տակավին ծծկեր, աշխարհին անտեղեակ, գութի եւ սիրոյ կարոտ, մոր գրկին մեջ քնացող եւ կամ հրեշտակային ժպիտներով ու նայուածքով հոգին հրճուեցնող ձագուկ մը, մորը գրկէն խլելով կացինի հարուածով մը, աչքերէն արցունքի տեղ արիւն հոսեցնող մորը աչքին առջեւ եւ այս վայրագութիւնը խնդուքներով ծափահարել և միւս կողմէ մահուան սպասող ուրիշ տարագիրներ ալ ծափահարելու ստիպել... Դեռեւս 7-8 տարեկան աղջիկներին ծեծի տակ լլկելով, վախի, սարսափի եւ դողի մատնուած այդ խեղճերի վրա իրենց անասնական կրքերը գոհացնող այդ հրեշների ոճիրները նկարագրելու ժամանակ գրիչը ինչպե՞ս չդողայ:

Հատուկ կազմակերպությունը այլ բան չէ, եթե ոչ անպատասխանատու և ոչ լրիվ պաշտոնական թալանչիների խումբ, պետության մեջ պետություն և կուսակցություն, որի մեջ հաշվվում է մոտ 10 հազար մարդ, որոնք բոլորը, լինելով մարդասպանությամբ, կեղեքումներով, տուն ու տեղ այրելով ու թալանելով, առևանգումով և զանազան տեսակի ոճրագործություններով սնված մարդիկ, և առանց խղճահարության կատարում էին Եռյակի տված հրամանները:

Հետապնդման և բանտարկության վախ չկար: Գործադրված ոճրագործություններն ու վայրագությունները նույնիսկ դիտվում էին որպես հայրենիքին մատուցած ծառայություն:[1]

1. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը, էջ 91, 112, 120, 121:

Եոյակ կոմիտեի «Լրիվ ոչնչացման միջոցներն ու դրանց կիրառումը» փաստաթուղթը

Այն քաղաքի և գյուղաքաղաքի մեջ, որտեղ հայ կա, թե նրանցից ումը պետք է առաջին հերթին ոչնչացնել, կորոշենք ներքին գործերի նախարարության տեղական (ներկայացուցիչների) հետ և յուրաքանչյուր շրջանին պահանջված թվով այս ուժերից կուղարկենք: Նրանք ճանապարհին մեր նշանակած վայրերում կսպանեն հայերի քարավաններին: Ներքին գործերի նախարար Թալեաթը այդ քաղաքների վարչական աշխատողներին կհրահանգի, որ դրանցում գտնվող բոլոր հայերը պատերազմական շրջաններից դուրս բերելու պատրվակով խումբ-խումբ, երկու օրը մի անգամ ոստիկանների ուղեկցությամբ տարագրվեն և ոչնչացվեն:[1]

Կաղբր՝ իբբիհադական

Մահմետական մը, երբ անաստուած գլուխ մը ճաշի կը հրավիրե եւ կերակուր կը կերցնե, այդ անհատին արիւնը մահմետականին համար արդարացի է:[2]

Պագր-Մատենում հանցագործներին բանտից ազատելու ժամանակ մունետիկը կոչում էր

Կառավարութիւնը թագավորին հրամանով մեզ կը ներե... այն պայմանով, որ հայերը ջարդեք... մեծերէն պզտիկները, բայց ոչ մուսուլմանները...

Գացեք աղոթեցեք, շատ աղոթեցեք , որ մեր տերութիւնը այսպիսի օր մը կը նուիրե, աղոթեցեք, որ անոր կեանքը երկարե, որ անիծեալները մեռցնեք:[3]

Թուրք ոստիկանները բռնագաղթվող հայերի հագուստները խլում էին ասելով

Հայեր, արագ-արագ, փութացեք անիծված անհավատներ, երթալիք ձեր տեղերն ու ճամբաները այնչափ տաք է, որ դուք պետք չպիտի ունենաք հագուստներու, առանց շապիկներու պիտի պտըտիք...[4]

1. Ն. տ., էջ 122-124:
2. Ե. Պերպերեան Պագր-Մատէն, Նյու Յորք, 1984, էջ 33:
3. Ն. տ., էջ 143-144:
4. Ն. տ., էջ 159:

Ռազմական դատարանի նախագահի հեռագիրը Յոզղաթի կուսակալին (4 փետրվարի, 1919 թ.)

Ժանդարմների նախկին հրամանատար Թեվֆիկ բեյը 150 ընտանիքից բաղկացած 6-700 բնակչություն ունեցող Գում Գույու հայկական գյուղի շուրջը վառելիք է դիզել տվել ու տեղում եղած անձանց այրել ու այրել է տվել, օրորոցի մեջ ողջ մնացած երեխաներին կտոր-կտոր է արել և կտոր-կտոր անել է տվել, ինչ-որ հանրահայտ եղելություն է: Այդ պատճառով շատ ենք խնդրում, բարեհաճեք հեռագրով ուղարկել կատարված քննության փաստաթղթերը...[1]

Յոզղաթի կառավարիչ

Թեև քաղաքացիական իշխանություններն արդեն հրաման ստացել էին հայերի տեղահանության և աքսորի առնչությամբ, որը կասկածելի անձանց էր վերաբերվում, մինչդեռ զինվորական իշխանությունների հրամանն, առանց բացառության, ընդգրկում էր երեխաների, կանանց ու տղամարդկանց տարագրություն:

...Յոզղաթ քաղաքից և շրջակա գյուղերից տեղահանված հայ քարավանները կոտորվեցին և բնաջնջվեցին ոստիկանների, հրոսակների ու ժողովրդի կողմից:[2]

Երիտթուրքերի լիդերների դատավարությանը ներկայացված փաստաթղթերից մեկը

Խարբերդի նահանգի գլխավոր նահանգապետը հայտնում է, որ ճանապարհները լիքն են կանանց ու երեխաների դիակներով, և ինքն ի վիճակի չէ դրանք թաղել:[3]

Թուրք կառապան

Խարբերդից Սեբաստիա (տարածքը) ժամերով և օրերով դիակների հոտից լրիվ ապականված էր, անգամ ձիերը ջրել չկարողացա:[4]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 306:
2. Ն. տ., թիվ Մ 492-494:
3. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 284:
4. Յուշամատեան Մեծ եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 502:

Հնչակյան կուսակցության գործիչների ֆերբակալության առթիվ

Փարիզում դավադրություն է կազմակերպված Թալեաթի կյանքի դեմ... Իթթիլաֆի ներկա ղեկավար Սաղղղ բեյը և Փարիզի հռչակավոր Շերիֆ փաշան ու Գյումյուլջինայի Իսմայիլ Հագգը բեյն էին այդ դավադրության գլուխ կանգնած:Սաղղղ բեյը Եգիպտոսում այս խնդրի շուրջ հարաբերությունների մեջ էր մտել հնչակյան կուսակցության հայտնի ղեկավար Սապահ Գյուլյանի հետ և բանակցություններ է վարել: Նույն կուսակցության... համագումարը բաժանված է երկու մասի, Սապահ Գյուլյանի ղեկավարության տակ գտնվող մասը որոշել էր անօրինական և հեղափոխական գաղտնի գործունեություն իրականացնել: Սաղղղ բեյի և Սապահ Գյուլյանի միջև կայացած համաձայնության հետևանքով արտասահմանից Պոլիս ուղարկված երեք ահաբեկիչներ առանձին դեպքեր առաջացնելով Պոլսի զանազան կետերում, պետք է ահ ու սարսափ առաջացնեին և սպանեին Թալեաթին: Պետական հեղաշրջման հաջողության դեպքում նոր կառավարությունում ֆինանսների նախարարի պաշտոնը պիտի զբաղեցներ Սապահ Գյուլյանը: Անգլիայի ռազմական նախարար լորդ Կիչեները 20 հազար ոսկի է խոստացել այս մահափորձն իրականացնողին:[1]

Հեռագիր՝ թիվն ու հեղինակը նշված չեն

Դարեր ի վեր պետության ամուր հիմքերը քանդել ցանկացող և կառավարության համար խոշոր փորձանքի նշանակություն ստացած հայ տարրի բնաջնջումը թեև նախապես մտադրված էր, բայց ժամանակի հանգամանքները հնարավորություն չէին տալիս իրականացնելու այս սրբազան մտադրությունը: Ներկայումս բոլոր խոչընդոտները վերացել են և հայրենիքն այդ վնասակար տարրերից փրկելու ժամանակը եկած համարելով, որպես կարևոր խնդիր, հանձնարարվում է, որ նրանց արգահատելի վիճակի հանդեպ գութի զգացմունքներին չհանձնվեք և նրանց ամբողջի գոյությունը վերջ տալով, աշխատեք որպեսզի Թուրքիայում հայ անունն իսկ չմնա: Ուշադրություն դարձրեք, որպեսզի այդ նպատակն իրականացնող պաշտոնյաները հայրենասեր և վստահելի մարդիկ լինեն:[2]

1. «Թանին», 1 մարտի 1915 թ.:
2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 26:

Երիտթուրքերի Կ. Պոլսի կենտրոնի 1915 թ. մարտի 25-ի հեռագիրը Աղանայի պատվիրակ Ջեմալին.

Դարեր ի վեր պետութեան ամուր հիմքը քանդել ցանկացող եւ կառավարութեան համար կարեւոր փորձանքի երեւոյթ ստացած հայ տարրերին ջնջելու մտադրութիւնը՝ քաղաքական արգելքներէ զերծ ընդարձակ սահմանի մը մեջ ապահովելը ամենուս պարտականութիւնն է: Ասոր համար «Ինչ կուզե ըլլա» ըսելով, պետք է ամբողջ պատասխանատվութիւնը ստանձնենք, եւ կառավարութեան ընդհանուր պատերազմին մասնակցութիւնը որքան մեծ զոհողութեան մը հետեւանքն ըլլալը գնահատելով, պետք է աշխատինք ձեռնարկուած միջոցները պահանջուած արդիւնքներուն հասցնելու:

Ինչպես 18 փետրուարի 1915 թուակիր նամկին մեջ յայտնուած էր, Ճեմեյեթը ասկե վերջ իր ջանքերուն ճամբուն վրայ տարիներ ի վեր իրեն հետ ընդհարող զանազան ոյժերը հիմէն քանդելու եւ փճացնելու որոշում տուած եւ այս մասին դժբախտաբար շատ արիւնոտ միջոցներ ձեռք առնելու ստիպուած է: Վստահ եղեք, որ այս միջոցներուն զարհուրանքը երեւակայելով մենք ալ կը զգածուինք, բայց Ճեմեյեթը, իր յավիտենական գոյութիւնը ապահովելու համար ասկե զատ ուրիշ ճամբայ չի տեսներ:

Ալի Ռիզա (իթթիհադի Հալեպի նախկին պատասխանատու քարտուղար) մեզ կը քննադատե եւ այս մասին գրքի կոչ կընէ: Պարզամտութեան այս աստիճանը ապուշութիւն է: Հալեպ գացեք, եթե կրնաք զինքը համոզել՝ միասին աշխատեցեք, եթե կարելի չըլլա, իր սրտին նուրբ թելերը թրթռացնելիք յարմար տեղ մը կը գտնեք իրեն: Ծանոթ անձնավորութեանց (հայերի) մասին եղած ձեռնարկները մինչեւ որ չարդիւնավորուին, միւսներուն (հոյների, արաբների, սիրիացիների) հետ զբաղիլը շիտակ չէ: Առ այժմ ուշագրավներուն (մտավորականներին, երեւելի, ազդեցիկ անձանց) օրինական միջոցներով պատժուիլը յարմար տեսնուած է, ինչ որ ապագա գործունեութեանց մեկնակետը պիտի ըլլա: Թողած գոյքերու խնդիրը դարձեալ ձեր յիշողութեան կը ներկայացնեմ: Շատ կարեւոր է: Մատակարարութիւնը ձեր աչքէն հեռու մի բռնեք: Միշտ հաշիվները, գործողութեան եղանակները քննեցեք: Ճամբա ելնելու օրերնիդ ալ գիտցուցեք:[1]

1. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 526: **Ա. Անտոնյան** Մեծ ոճիր, էջ 134-13:

1915 թ. մարտի ծածկագիրը

Թուրքիայում ոչ մի հայ ողջ չպետք է թողնվի և նրանց ունեցվածքը պետք է գրավվի:[1]

1915 թ. մայիսի 12-ի ծածկագիր շրջաբերականը

Հայ գյուղերի տարագրությունն ավարտելուց հետո հայտնեք տարագրվածների թիվը, գյուղի անունը և նրանց ժամանման վայրը:[2]

Կենտրոնական ոստիկանության ստացած հեռագիրը Դեր Զորից (11 ապրիլի, 1915 թ.)

500 անձեր եկան տարբեր քաղաքներից՝ Ադաբազարից, Իզմիթից ու Բուրսայից:[3]

Ջելալ բեյը՝ Հալեպի վալի, Ռեոսլերին (12 ապրիլի, 1915 թ.).

...Ակնհայտ է, որ թուրքական կառավարությունում իշխող է դարձել մի ուղղություն, որը հայերին ամբողջությամբ կասկածելի կամ առավել ևս թշնամի է նկատում:[4]

1915 թ. ապրիլի 15-ի հրահանգը

Գերապատվելի նահանգապետներին, մեծահարգո գավառապետներին և հարգելի գյուղական իշխանություններին.

Ձեզ հայտնի են այն անողոք քաղաքական պատճառները, որոնց ճնշման տակ հզոր օսմանյան տերությունը և թուրք մեծ ժողովուրդը, Գերմանիայի և Ավստրիայի հետ միասին, պատերազմի մեջ մտավ ընդդեմ Եռյակ համաձայնության: Այդ ճակատագրական պատերազմից հաղթող դուրս գալու համար մենք կրկնում ենք, յուրաքանչյուր մահմեդական և թուրք, որոնց առաջ է մղում միևնույն սուրբ նախախնամությունը, մեկ մարդու պես ոտքի ելնեն ընդդեմ ստոր ու անհավատ թշնամիների և հենարան դառնան մեր քաջ ու իմաստուն ղեկավարների և բանակի համար,

1. Հ. Ղազարյան Ցեղասպան թուրքը, էջ 117:
2. Ն. տ., էջ 117:
3. Ն. տ., էջ 160:
4. Aus den Aufzeichnungen eines in der Turkei verstorbenen Deutschen "Material sur Basel", p. 25.

որը այնպես հերոսաբար, կրծքով պաշտպան է կանգնած ծովերում ու ցամաքում, հաղթական պատերազմ մղելով ընդդեմ նենգ թշնամիների:

Դիվանագիտությունը, նկատի ունենալով այս պատերազմի բնույթն ու ելքը, անկախ այն բանից՝ դա կլինի մեզ համար բարենպաստ թե անբարենպաստ, սահմանել և պատմականորեն ապացուցել է, որ մեր դեմ պատերազմող և առաջին անգամ միմյանց հետ միացած ռուսական և անգլիական տերություններից մեկն ու մեկը մեզ հետ դաշնակցած պայքարել է մյուսի դեմ, որպեսզի պաշտպանի մեր հողը՝ մեզ համար: Որովհետև գոյություն ունեն ծովերի թագուհի Կոստանդնուպոլիսը և Հնդկաստան տանող ցամաքային ուղին՝ արևելյան վիլայեթները, որոնց զավթումը նրանցից մեկի կողմից՝ մահ է մյուսի, մանավանդ Անգլիայի համար: Հաղթության դեպքում նրանք կարող են համաձայնության գալ երրորդ իրավասու ժողովրդի վերաբերմամբ, գտնելով այնպիսի մի ժողովուրդ, որը կարողանար ծառայել նրանց շահերին, և որպեսզի իրենք կարողանային միմյանց հետ խոսել այդ ժողովրդի անունից: Այդ երրորդ իրավասու ժողովուրդը կարող է լինել միայն հայ ժողովուրդը: Աստված մի արասցե, բայց հաշտության բանակցությունների ժամանակ մեր պարտության դեպքում ինքնըստինքյան հրապարակ կգա այդ «Հայկական հարցը», որն ահա կես դարից ավելի է, ինչ միջազգային հանգամանք է դարձել, և սպառնագին խրվել է մեր կուրծքը:

Հետևաբար մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորություններից պաշտպանելու համար, կառավարությունը, որ ներկայացնում է իսլամ և թուրք ժողովուրդը և Միություն ու առաջադիմություն կոմիտեն, ինչ էլ որ լինի, նպատակ ունենալով կանխել որևէ մի տեղ և որևէ մի ձևով Հայկական հարցի առաջադրումը, օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին՝ հայերին քշել արաբական անապատները՝ բնաջնջելով այդ խորթ տարրը, համաձայն տրված գաղտնի հրահանգի:

Այդ ծրագրի իրագործման համար առիթ են.

ա) հայկական կամավորական ուժերը, որոնք ծառայում են թշնամական բանակներում,

բ) երկրի ներսում գոյություն ունեցող կուսակցությունները, որոնք կազմակերպվել են մեր բանակի թիկունքին հարված հասցնելու նպատակով,

գ) երկրում ամենուրեք հայտնաբերված և բռնված անհամար քանակությամբ զենքն ու զինամթերքը:Այսպիսով, կառավարությունը և իթթիհադի կենտրոնական կոմիտեն դիմում են ձեզ և ձեր հայրենասիրությանը և հրամայում ձեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցել Միության և առաջադիմության տեղական մարմիններին, որոնք ապրիլի 24-ին արևածագի հետ, գաղտնի հրահանգի համաձայն, կձեռնարկեն այս հրամանի կատարումը: Ամեն մի պաշտոնական կամ մասնավոր անձնավորություն, որը կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի:

Ներքին գործերի և ռազմական նախարարներ՝ Թալեաթ, Էնվեր

Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական քարտուղար՝ դոկտոր Նազիմ:[1]

Թալեաթի պատասխանը Զեյթունում պաշտոնազրկված մի հայի խնդրանքին

Այլևս հայերի համար պաշտոն չկա, իսլամ դարձիր և թերևս որևէ պաշտոն ստանաս:[2]

Ալի Հայդարը՝ Զեյթունի զորքի հրամանատար, հայերին

Նազարեթ Չավուշը նկուղ նետեցի, ամբողջ քաղաքը պաշարուած է, հարաբերութիւնները խզուած են. ոչ ոք կրրնա ներսեն դուրս եւ դուրսեն ներս մտնել, եթե 12 ժամեն ձեր բոլոր զենքերը չհանձնեք, քաղաքը պիտի ռմբակոծեմ...

Զեյթունի մեջ ձեր բնակութիւնը կառավարութեան կողմէ հարմար չի նկատվիր: Այսօր, մայրամուտէն առաջ, ընտանյոք Մարաշ պիտի երթաք:[3]

---

1. ՀՀ ԿՊԱ, ֆ. 314, ց. 12, գ. 23, թ. թ. 1-3 կամ **Ա. Քոչեան** Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, 1915-1918, հ. Ա, Բուխարեստ, 1938, էջ 63-65:

2. «Հայկական տարեգիրք», Ա տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 108-110:

3. **Լ. Նորաշխարհյան** Զեյթունը 1914-1921 թթ., Երևան, 1989, էջ 151:

Սիմեոն Թևֆիկ՝ թուրքական բանակի հրամանատար

Ուրեմն կառավարութեան հրամանն է.

Առ այժմ ձեր բնակած զորանոցը պարպել եւ Զեյթուն տեղափոխվիլ: Եվ կամ կառավարութիւնը բնակչութիւնը իր միջոցներով կտեղափոխե Մարաշ: Ձեր ձեռքը գտնուող բոլոր զենքերը, առանց բացառութեան, պետք է հանձնեք:[1]

Երիտթուրքերի կենտրոնի 1915 թ. ապրիլի կոչը Կովկասի մահմեդականներին

Սպանեցեք նրանց, ովքեր մեր Ալլահի կողքին թույլ են տալիս, որ գոյություն ունենան ուրիշ աստվածներ, սպանեցեք ամենուրեք, որտեղ էլ որ նրանց գտնեք, բռնեք նրանց, փակեք նրանց բոլոր ճանապարհները, վերջապես սպանեք նրանց ամեն տեղ, որտեղ գտնեք:[2]

Ադանայի կուսակալի 1915 թ. ապրիլի 17-ի նամակը ոստիկանական հրամանատարությանը

Ի շարունակություն 1915 թ. ապրիլի 13-ի թվակիր հրահանգին, կոմիտեին պատկանող և ձերբակալվելիք այլ անձանց իրենց մոտ եղած ռումբերով և արգելված զենքերով հավաքաբար ու մեծ չափերով լուսանկարեք և անմիջապես ուղարկեք: Նաև հանձնարարվում է մեզ ուղարկել ձերբակալված ու աքսորված անձանց անունները, համաձայն ներքին գործերի նախարարի հեռագրի...

Ադանայի Բամուկ բազարի պահակատան արաբ կոմիսերներից Իբրահիմը թաքուն ու մտերմաբար խոստովանել է հայ ոստիկանապետին, որ հայկական կոտորածի տարին կառավարության հրահանգով, հավաքել են քաղաքի պահակներին, աղբահավաքներին, գիշերապահներին, բեռնակիրներին և նման այլ թուրքեր, նրանց հագցրել են հայ ֆիդայու տարազ, ապա իրար վրա թափել են պետական զինանոցից բերված պահեստային հին զենքերը, Եգիպտոսի Իբրահիմ փաշայի ժամանակից մնացած ռումբերը, իբր հայերից բռնագրավված զենքեր և այս ամենը լուսանկարել են տվել...[3]

---

1. **Լ. Նորաշխարհյան** Զեյթունը 1914-1921 թթ., Երևան, 1989, էջ 182:
2. Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 2, գ. 3255, թ. 121:
3. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 340:

Երիտթուրքերի կենտրոնի հեռագիրը

Աղանայի կուսակալություն.

Վանի և Սղվազի շրջաններում հրոսակներ են նկատվել, մեր զորքերը նրանց դեմ կռիվ են մղում ու ճզմում են նրանց: Ձեր ուշադրությունը և շրջահայեցողությունն եմ հրավիրում ու հանձնարարում, հայերի հոգեկան վիճակի մեջ թափանցելով, նրանց դավաճանական նախաձեռնությունների ժամանակը պարզելու համար դիմել ամեն տեսակի միջոցների:[1]

Թալեաթը՝ Մորգենթաուին

Երկրին ծոցին մեջ այս զանազան հատուածները միշտ դավաճանած են Թուրքիայի դեմ: Իր բնիկ ազգաբնակչութիւններուն թշնամութիւնովը Թուրքիան իրարու վրա նահանգներ կորսնցուց՝ Յունաստանը, Սերպիան, Ռումանիան, Պուլկարիան, Հերսեքը, Եգիպտոսը եւ Տրիպոլիսը: Այսպես Օսմանեան կայսրութիւնը պզտիկցավ մինչեւ անհետանալու աստիճան: Որպեսզի մեր հայրենիքին այս վերջին մասը ապրի, մենք պետք է ազատինք օտար ժողովուրդներէն: Թուրքիան՝ թուրքերուն:[2]

Թալեաթ (1915 թ. ապրիլ)

Կառավարությունը որոշել է ներկա վիճակին վերջ տալ, մի վիճակ, երբ յուրաքանչյուր կրոնական համայնք կարող է հատուկ քաղաքականություն վարել ու նաև ինքնուրույն քաղաքական միություններ հիմնել և դրանց օժանդակել:

Թուրքիայում պետք է վարվի միայն օսմանյան քաղաքականություն: Տեղացի հայերի մեջ կան ևս քաղաքականապես անկայուն մարդիկ, որոնց բնականաբար պետք է փնտրել հենց ակումբների և հրատարակությունների ակտիվիստների շրջանում: Հարկ է նկատի ունենալ, որ պատերազմի անհաջող ընթացքի դեպքում այդ տարրերն անմիջապես ստեղծված հնարավորությունը կօգտագործեն խռովություններ առաջացնելու համար: Թվում է, թե ներկա պահը շատ հարմար է կասկածելի մարդկանց հեռացնելու մայրաքաղաքից:[3]

1. Ն. տ., էջ 341:

2. Ամերիկյան դեսպան **Հ.Մորգենթաուի** հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, էջ 48:

3. **F. O. Turkyi** 183, Bd, 183, կամ **Վանգենհայմի** 30 ապրիլի, 1915 թ., թիվ 267 տեղեկագիր:

Մշո կուսակալի առաջարկը տեղի բողոքական համայնքի ղեկավարին (1915 թ., մայիսի սկզբին)

Համոզեց հայերին իրենց զենքերը հանձնելու... եթե հայերը զենքերը հանձնեն, կերաշխավորվի նրանց անվտանգությունը:

Հայերը զենքերը հանձնեցին: Իսկ կառավարիչը դրանք լուսանկարեց ու գրության հետ ուղարկեց Բ. Դուռ՝ գրելով.

Մուշ քաղաքում ապստամբությունը պոռթկալու կետի վրա է... խնդրում եմ լիազորություններ՝ ճնշելու այն: (Լիազորություն ստացվեց, ու տարոնահայությունը կոտորվեց):[1]

«Աբլենթիկ մանֆլի» պարբերականը 1916 թ. նոյեմբերին գրեց

1915 թ. վաղ գարնանը երիտթուրքերը շրջաբերական ուղարկեցին Թուրքիայի ներքին շրջանները: Շրջաբերականում գրված էր. «Մեր համերկրացի հայերը, օգտվելով առիթից, ցանկանում են միանալ մեր երկրի մահացու թշնամու՝ Ռուսաստանի հետ, որը պատերազմում է մեր պետության դեմ: Հանձնարարվում է՝

1.Բոլոր հայերը, բացառությամբ հիվանդների, 5 օրվա ընթացքում պետք է թողնեն իրենց գյուղերը ժանդարմներից կազմված պահակախմբերի ուղեկցությամբ:

2.Նրանք կարող են իրենց հետ տանել շարժական ունեցվածքը, բայց դրանք վաճառել չեն կարող:

3.Կետը պարունակում է բռնագաղթողների անվտանգությունը ապահովելու խոստում: Անողոք կպատժվի նա, ով կփորձի անհանգստացնել հայերին իրենց ճանապարհորդության ընթացքում:

4.Հայերը պարտավոր են հնազանդվել կառավարության որոշմանը: Եթե նրանցից որևէ մեկը զենքով դիմադրի զինվորներին կամ ժանդարմներին, զենքը կօգտագործվի նրա դեմ, նա կձերբակալվի և կհանձնվի ռազմական դատարան»:

Էնվերի 1918 թ. փետրվարի 27-ի ծածկագիրը (Այս փաստաթղթի պարեթվի հարցում շփոթն ակնհայտ է)

Ներկայիս իրավիճակը պահանջում է հայ ժողովրդի ամբողջական բնաջնջում, որի մասին հրատարակված է սուլթանական իրադե: Հայերի հանդեպ պետք է կիրառել հետևյալը՝

1. Blue Book, միաս Դ. Ա.-ի վկայությունը կամ **A. Mandelstam** La Société des Nations et les Puissances devant le probleme Arménien, Paris, 1926 (Վերջաբան):

1.Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայկական ծագում ունեցողներին կամ հայկական անուններ կրողներին, բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաները, քաղաքներից հանել և կոտորել:

2.Կայսերական բանակում ծառայող բոլոր հայ զինվորներին հեռացնել իրենց զինվորական մասերից և ժողովրդից թաքուն գնդակահարել:

3.Բանակում ծառայող բոլոր հայ սպաներին բանտարկել համապատասխան շտաբներին կից՝ մինչև նոր հրահանգ ստանալը:

Բոլոր այս երեք կետերի գործադրումը սկսել 48 ժամ անց այն պահից, երբ զորամասի հրամանատարները կստանան սույն հրամանը:[1]

Էնվերը Թալեաթին (2 մայիսի 1915 թ.)

Ինչպե՞ս վարվել Վանա լճի խռովարար հայերի հետ՝ արտաքսել ռուսական սահմա՞նն, թե՞ Անատոլիայի խորքը, իսկ նրանց տարածքները բնակեցնել այլ վայրերից բերված մահմեդականներով:[2]

Ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի գրությունը վարչապետ Սայիդ Հալիմին (13 մայիսի 1915 թ)

Ինչպես Ձեր Բարձրապատվությանը հայտնի է, օսմանյան հողային ամբողջականության և պետական բարձր սուլթանության դեմ հարձակողական նպատակներ ունեցող և կործանարար ցանկություններով տարրեր՝ մասնավորապես պետության հպատակներին տարանջատելու, նրանց միջև խռովություն գցելու և մեզ հայտնի պետությունները խաբելով ու քսությունններով մի շարք անձանցից խոստումներ ստանալով, սպառնալով և զանազան այլ միջոցներով հայ հասարակության մեջ տևական են դարձրել անջատողական միտումները: Հայերը խոչընդոտում են պետության ջանքերին և հարձակումներ են գործում՝ երբեմն իրենց գործողություններին տալով զինված ապստամբության տեսք: Քննադատում են անվտանգության և խաղաղության պահպանման ուղղությամբ պետության կատարածն ու բարենորոգումները, չնայած՝ տեսնում են դրանց կենսագործման ուղղությամբ ջանքերը, շարունակում են խաբեություններն արտաքին աշխարհում, մինչդեռ չպետք է մոռանային, որ բարենորոգումները զուտ ներքին խնդիր են: Հարկ չկա, որ տեղական

1. "Кавказское слово", 19 марта, 1919 г., **Ե. Պերպերեան** Պագր-Մատէն, էջ 33 կամ Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 198:

2. **Kamuran Gürün** Le dossier arménien, Ankara, 1983, p. 242.

բարենորոգումների ջանքերը գործադրվեն օտարների գործակցությամբ, դառնան պետությունների բանակցությունների առարկա, նաև՝ որ վարչական հատուկ կարգադրություններով, օտար հսկողության և ազդեցության ներքո տեղական առանձնաշնորհումներ մտցվեն: Օտարների թելադրանքով կայսրությունում մտցված բոլոր բարենորոգումներն ու վերափոխումները հանգում են օսմանյան հայրենիքի բաժանմանն ու անդամահատմանը, որ հաստատվում է անցյալի բազմաթիվ փորձություններով ու ցավալի օրինակներով: Անկախությունը և երկրի ամբողջականությունը տևական դարձնելու հանգամանքը և մյուս կողմից, հայտնի է օտարի թելադրանքով նշված գործերի կատարումը միշտ էլ եղել է և անհանգստացրել է մեր պետությանը: Պետության կենսական նշանակության ջանքերի շարքում այս մտահոգությունը կարևոր տեղ ունի... Այդ իրականացնելու միջոցներ նախապատրաստելու շուրջ խորհել ենք և որոշակի նկատառումներ ունենք: Վերջերս պատերազմական շրջաններին կից վայրերում հայ բնակչության մի մասը, երբ կայսերական բանակը զբաղված է օսմանյան սահմանները թշնամի պետություններից պաշտպանելով, դժվարացրել է բանակի տեղաշարժն ու նրա կարիքների համար սնունդ ու ռազմամթերք տեղափոխելու գործը: Հայության այդ մասը իր ջանքերն ու նպատակադրումները միավորել է թշնամու հետ ... և երկրի ներսում հարձակումներ է գործել զինվորական ուժերի և մահմեդական ազգաբնակչության վրա՝ կատարելով ջարդ, ավարառություն ու թալան: Նա թշնամու ծովային ուժերի համար մթերքներ է հայթայթել, հանդգնություն է ունեցել նրան ցույց տալու մեր պաշտպանական ամրությունների տեղերը:

Մեր բանակի շարժումներն անխափան դարձնելու համար որոշել ենք նման խոովարար տարրերին ռազմական շրջաններից ու նաև այն գյուղերից հեռացնել, որոնցում խոովություններ կան և կամ դարձել են ապաստարան այդ տարրերի համար:

Կենտրոնական կառավարությունը, խորհրդակցելով տեղական պաշտոնյաների հետ, զինվորական հրամանատարության միջոցով այդ գործն արդեն սկսել է Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներում:

(Թալեաթը նշում է, որ կառավարությունը անհրաժեշտ է համարում տարագրել Բիթլիսի, Էրզրումի, Վանի, Ադանայի, Մարաշի, Հալեպի, Անկարայի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի, Տրապիզոնի, Սըվազի, Ջանիկի, Կայսերի, Խուտավենտիկեարի, Կարասի, Նիյդեի, Գարահիսար

Սաթիբի, Կոնիայի և Իզմիթի հայերին): Բացի Ադանա, Սիս և Մերսին քաղաքներից, հայերին տարագրել նաև Ադանայի, Մերսինի, Կոզանի (Հաճնի), Ջեբելբերեկետի լիվաներից (սանջակներից), բացառություն անել Մարաշի սանջակի Մարաշ քաղաքը, Հալեպի նահանգի կենտրոնական կազան: Հայերին տարագրել Իսկենդերունից, Բեյլանից, Ջիզրը Շուղուրից և Անթալիայից, գյուղերից և քաղաքներից:

Դեպի հարավային նահանգներ նրանց տարագրության գործն արդեն սկսված է:

Վանի նահանգից հյուսիս ընկած շրջանների հայերը պետք է բացառապես տարագրվեն Ուրֆայի սանջակի հարավ, Հալեպի նահանգի հարավ-արևելյան և Սիրիայի վիլայեթի արևելյան շրջանները՝ նրանց տեղափոխելով ու զետեղելով կառավարության որոշած վայրերում: Այդ գործողություններն արդեն սկսվել ու շարունակվում են: Որոշումն ընդունված է հանուն երկրի բարձրագույն շահերի: Եվ այս տեղափոխության նույնակերպ ձևի ու կանոնի ենթարկվելու անհրաժեշտությունից ելնելով, որոշված է տարագրության ենթակա բնակչությանը տեղահանել ու փոխադրել նրանց համար որոշված վայրերը: Հոգ է տարված, որ նրանց անցնելիք ճանապարհներին, մինչև որոշված վայրերը հասնելն ու տեղավորվելը, տարագրվածների կյանքի և ունեցվածքի անվտանգության ու հանգստության ապահովման համար, մուհաճիրների (գաղթականների) վարչությունից սննդամթերքի հատկացումներ կատարվեն:

Կարիքավորներին համապատասխան տնտեսական և նյութական օգնություն ցույց տալու համար կառավարությունը բնակարաններ կկառուցի և երկրագործներին սերմացու, կարիք ունեցող արհեստավորներին գործիքներ կբաշխվեն, քաղաքներում իրենց լքած սեփականությունն ու կալվածքները կամ նրանց արժեքները նպատակահարմար ձևով կվերադարձվեն: Հայերից դատարկված գյուղերում մուհաջիրներ և աշիրեթներ են տեղավորվելու և հայերի սեփականությանը (տներ, հողեր) գինը որոշելուց հետո, մուհաջիրներին է հանձնվելու: Ավաններում ու քաղաքներում հայերի ունեցած անշարժ ունեցվածքը կարձանագրվի, կգնահատվի ու կբաշխվի մուհաջիրներին, իսկ վերջինների կողմից չօգտագործվածները, ինչպես՝ ձիթանոցները, թթանոցները, այգիները, նարնջի պարտեզները, խանութները, իջևանատները, գործարանները, մթերանոցները և նման այլ սեփականություններ, վաճառվելու են աճուրդով կամ վարձով են տրվելու: Գոյացած գումարները սեփականատերերի անունով մուծվելու են պետական դրամանոցները՝ հետագայում տերե-

ին հանձնելու համար: Նպատակահարմար համարվեց ծախսերը կատարել մուհաջիրներին հատկացված գումարներից:

Այս գործառությունները կատարելու համար արդեն պատրաստված է հատուկ կանոնադրություն և նրա պահանջներին համապատասխան լքյալ գույքերը ապահովաբար հավաքվելու և պահեստավորվելու են: Ընդհանուր առմամբ, համաձայն կանոնադրության՝ այդ գույքերի պահեստավորման գործն արագացնելու և կանոնավորելու, դրանք վերահսկողության տակ պահելու համար, գործելու, կողմնորոշվելու են նախարարությունից ստացված հրահանգներով, նաև ստեղծվելու են առանձին հանձնախմբեր:...Այն վայրերում, որտեղ հանձնաժողով չի ուղարկված, համաձայն կանոնադրության, նշված իրավունքները տրվում են վալիներին: Նախարարների խորհրդով շարադրվածը հաշվի առնելն ու որոշում կայացնելը ենթակա է Ձեր Բարձրապատվության կամքին:[1]

Անկանկի վերությունների 1915 թ. մայիսի 24-ին նոտան, որը օսմանյան կառավարությանը ներկայացվեց «Հավաս» գործակալության միջոցով

Ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարությունները միահամուռ համաձայն են հետևյալ ծանուցման հրապարակմանը.

Մոտավորապես մեկ ամսից ի վեր թուրք և քուրդ բնակչությունը, օսմանյան կառավարական պաշտոնյաների հետ համագործակցած և մանավանդ նրանց հովանավորությամբ, անխնա ջարդում էին հայերին: Վերոհիշյալ սպանդը մինչև ապրիլի առաջին կեսը մասնավորապես տեղի է ունեցել Էրզրումի, Դերջանի, Բիթլիսի, Մուշի, Սասունի, Զեյթունի և Կիլիկիայի ամբողջ տարածքում. Վանի շրջակայքի մոտ հարյուր գյուղերի բնակչությանը գրեթե ամբողջությամբ բնաջնջել տալուց հետո, օսմանյան կառավարությունը հիմա էլ մայրաքաղաքում բնակվող անվնաս հայերի գլխին է պատուհաս դարձել:

Եռյակի կառավարությունները Բաբը Ալիին հրապարակավ տեղյակ են պահում, որ Թուրքիայում մարդկության ու քաղաքակրթության դեմ գործադրված այս նորագույն սպանդի համար առանձնապես պատասխանատու են համարվելու ոչ միայն օսմանյան կառավարության անդամները, այլև բոլոր նրանք, ովքեր մասնակցել են կամ պիտի մասնակցեին այս կոտորածներին:[2]

1. Հ. Ղազարյան Ցեղասպան թուրքը, էջ 324-325:
2. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1091:

Թալեաթը Հալեպի կուսակալին

«Հայ տարագիրների քարավանները Հալեպ հասան, ի՞նչ պետք է անել» հեռագրին պատասխանեց. «Տեղահանության նպատակը ոչնչացումն է»:[1]

Թուրք սպա

Հայերը ինչ որ ալ լինեին, որչափ ավելի հավատարիմ ալ լինեին օգուտ չուներ եւ ինչ որ ալ ընեին, հայաջնջումը անխուսափելի էր, քանի որ հարմար պատեհութիւնն եկած էր, ինչ որ լավ հասկցանք, թե հայերու եւ հույներու զարգացումը մեզի համար փորձանք եղած էր, ասոր համար հայերը բնաջինջ ըրինք, որպեսզի մենք ապահովվեինք:[2]

Մի թուրքի պատմածը

1915 մայիսի մեջ մունետիկն հանրահավաքի հրավիրեց բոլոր թուրքերուն քաղաքէն (Էրզրում) դուրս Փաշա Քիոչքի ըսած տեղը: Հավաքվեցան 10 հազարէ ավելի թուրքեր: Հայ երբեք չթողուցին այնտեղ: Վալին՝ Թահսին փաշան, սկսավ խոսել, ըսավ, ցավոք սրտի ձեզ հայտնեմ, որ հայերը մեր ձեռքէն Վանը խլեցին եւ հանձնեցին մեր թշնամուն՝ Մոսկովին: Հայերը մեծ վտանգ են մեր կառավարութեան, ուստի որտեղ հայ կա, հոն վտանգ կա Վանա տխուր իրականութեան կրկնումին:

Ձեզ հարցնեմ, ի՞նչ ընթացք պիտի բռնենք դեպի հայերը: Բոլոր ժողովուրդը պոռացին. «Կոտորենք, ոչնչացնենք գյավուրներուն»: Խոսեցավ Սեյֆուլլան... Բոլոր ժողովը միաբերան գոռաց. «Սպաննենք, ոչնչացնենք հային, գյավուրներուն»: Հետո խոսած է Սեֆիրը, առաջարկելով բոլոր հայերուն կոտորել անխնա, մեծ, պզտիկ եւ ազատել երկիրը անոնցմէ: Ըսավ. «Մենք 1895-1896-ին խնայեցինք երեխաներուն, բայց որքան սխալվեցանք. մեր խնայած այդ երեխաներն այսօր մեծցան, իբր կամավոր, մեզ դեմ կապար կնետեն, մեզ կկոտորեն, Վանը կառնեն մեր ձեռքէն եւ վտանգ կա, որ միւս քաղաքներն ալ խլեն մեր ձեռքէն»: Հանրահավաքը միաձայն կվճռե անխնա կոտորել հայերուն: Սակայն դոկտոր Նազըմը կառաջարկե քաղաքներու, գյիւղերու մեջ արիւն չթափել, որովհետեւ,

1. **Armin T. Wegner** Offener Brief an den Präsidenten. Herrn Woodrow Wilson uber die Austreibung des armenischen Volkes in die Wuste. Berlin, 1919.

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 618, թթ. 5-8:

կրսե, կոտոին դիակները եւ հիվանդություններ առաջ կուգան, լավ է քշել հեռու ամայի վայրեր եւ անդ կոտորել եւ ջուրը ձգել: Այսպես ալ կորոշվի եւ բանաձեւը ստիպողական հեռագրով կծանուցի Պոլիս:[1]

Բ. Դոան պաշտոնական հաղորդագրությունը (27 մայիսի, 1915թ.) հայերի տեղահանության վերաբերյալ

Հաշվի առնելով, որ հայերը հակաօրինական գործողություններ են կատարում և օգտվում են ամեն առիթից կառավարությանն անհանգստացնելու համար, որ նրանց մոտ գտել են արգելված զենքեր, ռումբեր ու պայթուցիկ նյութեր, որոնք պատրաստել են ներքին ապստամբության համար, որ նրանք Վանում մահմեդականներին սպանել և ռուսական զորքին օգնություն են ցուցաբերել այն ժամանակ, երբ կառավարությունը պատերազմի մեջ է գտնվում Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի հետ, վերջապես վախենալով, որ հայերը, ըստ իրենց սովորության, կարող են ապստամբությունների, խռովությունների և ըմբոստությունների դիմել, կառավարությունը վճռել է, որ բոլոր հայերը պետք է հավաքվեն ու տարվեն Մոսուլի և Սիրիայի վիլայեթները, ընդ որում, նրանց անձը, սեփականությունն ու պատիվը պետք է պաշտպանվեն: Տրվել են անհրաժեշտ հրամաններ, որպեսզի հոգ տարվի նրանց տեղավորման համար, և որպեսզի նրանք մինչև պատերազմի ավարտն այդ շրջաններում մնան:[2]

Վկայում է թուրք պաշտոնատար (1918 թ.) Ռիզա Նուրին

Ք. Կարաբեքիրը իրեն հանձնարարել էր. «Անի քաղաքի հուշարձանների մնացորդներն ու հետքերը երկրագնդի երեսից պետք է ջնջվեն: Դուք մեծ ծառայություն պետք է մատուցեք Թուրքիայի այս նպատակն իրականացնելու գործում»:[3]

Տեղահանության օրենք

Յոդ. Ա.- Երբ ժողովրդին կողմէ որեւէ կերպով կառավարութեան հրամաններուն եւ երկրին պաշտպանութեան, արդարութեան պահպանման վերաբերյալ միջոցներու դեմ անսաստում, զենքով դիմադրութիւն տես-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թթ. 17-18:

2. **El Chassein** Die Turkenherrschaft und Armeniens Schmerzenchrei, Zurich, 1918, s. 56.

3. **Վարդանյան Ս.** Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1985, էջ 183-185:

նուի, բանակի եւ զորաբաժիններուն հրամանատարները եւ անոնց փոխանորդները, անկախ կեդրոններու հրամանատարները անմիջապես զինվորական ուժով եւ խիստ կերպով պատժելու եւ դիմադրութիւնը հիմնովին բնաջնջելու արտոնուած եւ պարտավոր են:

Յոդ. Բ.- Զորաբանակի եւ անկախ կեդրոններու հրամանատարները՝ զինվորական պետքին համաձայն լրտեսութիւն եւ դավաճանութիւն զգացուած գիւղերու եւ գյուղախմբերու ժողովուրդը կրնան անհատապես եւ կամ ամբողջությամբ ուրիշ վայրեր տարագրել եւ բնակեցնել:

Յոդ. Գ.- Սույն օրենքը հրատարակութեան թուականէն սկսեալ գործադրելի է:[1]

(Իրականում օրենքը բաղկացած էր ոչ թե երեք, այլ ութ կետից, որոնցից 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները վերաբերում էին հայերին և երբեք չեն հրապարակվել: 8-րդ հոդվածը հրապարակվել է որպես 3-րդ հոդված: Իսկապես 3-րդ հոդվածը պահանջում էր. «Բոնագաղթվածների տները հանձնել թուրք սպաներին»:

4-րդ հոդվածով այդ տների մի մասը հանձնվելու էր վիրավորված կամ զոհված զինվորականների ընտանիքներին, իսկ 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները որոշում էին մուհաջիրների բաժինը՝ պետական այդ ավազակության ավարից):

1915 թ. օգոստոսի 11-ին այս կետերը լրացվեցին. «Նահատակված, գերի ընկած, վիրավոր կամ հիվանդությունից մեռած թուրքերի ընտանիքներին նույնպես ձրի հատկացնել հայերի լքյալ սեփականությունը բնակության համար»: Այն գրված էր շրջաբերականի ձևով մանուշակագույն թանաքով՝ մեկ էջ ձեռագիր, վրան զգուշացում. «Խիստ գաղտնի»:

(Հետագա ամիսներին Պոլսից հայերի նկատմամբ ոճրագործությունների մղող ծածկագրերի հեղեղ տեղաց գավառների վրա: Մինչև 1916 թ. հունվարի 23-ը դրանց թիվը հասավ 853-ի, այսինքն՝ յուրաքանչյուր օր, միջին հաշվով՝ երեք ծածկագիր):

1. 13 Ռեճեպ, 1833, 14 մայիս, 1833-1915: **Մ. Ռիֆաթ** Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը, էջ 119-120:

Պատերազմական պարագաներու եւ քաղաքական արտասուոր անհրաժեշտութիւններու բերումով, տարագրուած հայերուն պատկանող լքեալ գոյքերուն եւ անշարժ կալուածներուն եւ հողերուն վարչական կարգադրութեանց մասին հրահանգներ (16 մայիսի 1915 թ.)

Յոդ. 1 –Ուրիշ վայրեր փոխադրուած հայերուն սեփական եւ լքեալ անշարժ կալուածքներու եւ հողերու եւ այլ խնդիրներու մասին, այս հրահանգներու տրամադրութիւններուն համամաձայն պիտի ղեկավարուին լքեալ գոյքերու այն յանձնախումբերը, որոնք կազմուած են ստորեւ գրուած յոդուածներուն համաձայն: Այդ գործերը անոնց յանձնուած են եւ իրենց իրավասութեանց սահմանները որոշուած:

Յոդ. 2 -Գիւղ մը կամ ավան մը տարագրուելէ յետոյ, տարագրուած ժողովուրդին սեփական տուները եւ բոլոր շենքերը, իրենց մեջ գտնուած ապրանքներով, վարչական յանձնախումբերու կողմէ արտոնուած պաշտոնեաներու կամ մարմնի կողմէ փակուին եւ դուռները կնքուին, պահպանութեան տակ պիտի առնուին:

Յոդ. 3 -Պահպանութեան տակ առնուած գոյքերուն տեսակը, քանակութիւնը մանրամասնութեամբ տոմարի մեջ պիտի արձանագրուին, յետոյ գոյքերը՝ եկեղեցիի, դպրոցի, խաներու եւ տեփոներու (պահեստներ) մեջ պիտի փոխադրուին, այնպես որ, իւրաքանչիւրին տերը յայտնի ըլլալու համար, առանձին պիտի գրուին եւ պիտի պահուին: Տեղեկագիր մը պիտի պատրաստուի ինչքերուն սեփականատերերու մասին, նաև գոյքերու քանակութեան, անոնց ուրկէ առնուած եւ ուր բերուած ըլլալու մասին մանրամասնութեամբ պիտի գրուի: Այդ տեղեկագրին բնագիրը պիտի յանձնուի տեղական կառավարութեան եւ անոր վավերացեալ պատճենը լքեալ գոյքերու վարչական յանձնախումբերուն:

Յոդ. 4 -Սեփականատերը անյայտ մնալու պարագային, ինչքերուն գտնուած գիւղին անունով պիտի արձանագրուին եւ պահպանուին:

Յոդ. 5 – Շարժական ինչքերու կարգին կան այնպիսիները, որոնք ժամանակի ընթացքին պիտի ավրուին կամ ընտանի կենդանիներ, որոնք քոմիսիոնի վավերացուցած ենթայանձնախումբի մը կողմէ՝ աճուրդով, հրապարակավ պիտի ծախուին եւ ստացուած գումարները, եթե սեփականատերերը յայտնի են, անոնց անունով, իսկ եթե անյայտ են, անոնց բնակուած գիւղի կամ քաղաքին անունով, իբր ավանդ, պիտի յանձնուին

ելամտական նախարարութեան գանձարկղին: Ծախուած գոյքերուն տեսակը, քանակութիւնը, արժեքը, որուն պատկանած ըլլալը, յաճախորդին անունը, գնման գումարը մանրամասնութեամբ տոմարի մեջ պիտի արձանագրուին եւ պիտի վաւերագրուի ածուրդը կատարող յանձնախումբին կողմէ: Տեղեկագիր մը պիտի պատրաստուի, որուն բնագիրը պիտի տրուի տեղական կառավարչութեան եւ պատճենը լքեալ գոյքերու վարչական յանձնախումբին:

Յոդ. 6 -Եկեղեցիներու մեջ գնուած գոյքերը, նկարները, սուրբ գրքերը տոմարին մեջ պիտի արձանագրուին, անոր պիտի կցուի տեղեկագիր մը եւ տեղվոյն մեջ պիտի պահուին: Ապա տարագրուած բնակչութիւնը որոշ տեղ մը հաստատուելէ յետոյ, իւրաքանչիւր գիւղին պատկանող եկեղեցական գոյքերը անոր պիտի ղրկուին:

Յոդ. 7 -Տարագրուած հայերուն սեփական լքուած իւրաքանչիւր կալվածին ու հողերուն տեսակը, քանակութիւնը եւ արժեքի գումարները անուններով պիտի արձանագրուին տոմարի մեջ և իւրաքանչիւր գիւղի եւ քաղաքի սեփական լքեալ անշարժ կալուածները եւ հողերը պիտի ցուցակագրուին եւ պիտի յանձնուին վարչական յանձնախումբերուն:

Յոդ. 8 – Շենքերուն մեջ եւ հողերուն վրա փճանալու դատապարտուած բերքեր եւ արմտիք գտնուելու պարագային, յանձնախումբին արտոնած անձերու միջոցով, ածուրդով պիտի ծախուին եւ գումարները, տերերուն անունով իբր ավանդ պիտի հանձնուին ելմտական նախարարութեան գանձարկղին եւ տեղեկագիր մը պիտի կազմուի, որուն բնագիրը պիտի տրուի տեղական կառավարչութեան եւ վաւերացեալ մեկ պատճենը վարչական յանձնախումբին:

Յոդ. 9 - Երկրագործական բերքերու եւ այգիներու արտադրութեանց գնորդ չգտնուելու պարագային, երաշխավորութեան ներքին պայմանագրութիւն մը պիտի կազմուի եւ նուազորդով պիտի յանձնուի դիմողներուն: Այս կերպով վարձու տրուած կամ ծախուած բերքերուն գումարները, տերերուն անունով, ժամանակավոր կերպով կը յանձնուին ելմտական նախարարութեան գանձարկղին:

Յոդ. 10- Տարագրուած հայերն անշարժ կալուածները, իրենց տարագրութեան թուականէն յետոյ, եթե սեփականութեան իրավունքով փոխնորդագիր տուած ըլլան ուրիշներուն, այդ սեփականութիւնը ծախելու համար, նման փոխնորդագրերով որեւէ գործողութիւն պիտի չկատարուի:

Յոդ. 11 – Տարագրուած հայերու գիւղերուն մեջ մուհաճիրներ պիտի բնակեցուին, հոն գտնուած բնակարաններուն մեջ եւ հողերուն վրա նկատ առնելով անոնց երկրագործական ընդունակութիւնները, անոնց վկայաթուղթեր պիտի տրուին:

Յոդ. 12 -Տեղավորուած թուրք մուհաճիրներուն արձանագրութիւնը պիտի ըլլա մանրամասն, կանոնավոր կերպով, բնակարան ստացողներուն անունը, տարիքը, հասած թուականը պիտի արձանագրուին տոմարի մեջ: Յանձնուած անշարժ կալուածներուն եւ հողերուն քանակութիւնը յայտնող հաստատագիր պիտի տրուի անոնց:

Յոդ. 13 -Գիւղերու մեջ գտնուած շենքերուն եւ ծառերուն պաշտպանութեան համար, հոն բնակեցուած մուհաճիրները հավաքաբար պատասխանատու են, եթե ավերումներ տեղի ունենան եւ անոնց հեղինակները ճշտուին, վնասներու արժեքը պիտի գանձուի այդ գիւղի ամբողջ բնակութենէն եւ վնասատվութիւն կատարողները անմիջապես գիւղէն պիտի վտարուին եւ իրենց մուհաճիր ըլլալու հանգամանքէն պիտի զրկուին:

Յոդ. 14 -Շենքերը մուհաճիրներուն բաշխուելէ ետք, ավելցածներու բնակարաններուն մեջ մուհաճիրներ տեղավորելու միջոցին նախապատութիւն պիտի տրուի քաղաքներու եւ ավաններու բնակիչներուն, նկատի առնելով անոնց տնտեսական պայմանները եւ շինարարական ընդունակութիւններն ու անոնց բավարար չափով հողեր պիտի տրուին:

Յոդ. 15 -Տարագրուած հայերու քաղաքներու եւ ավաններու բնակարաններուն մեջ մուհաճիրներ տեղավորելու միջոցին նախապատութիւն պիտի տրուի քաղքներու եւ ավաններու բնակիչներուն, նկատի առնելով անոնց տնտեսական պայմանները եւ շինարարական ընդունակութիւններն ու անոնց բավարար չափով հողեր պիտի տրուին:

Յոդ. 16 -Խանութ, առեւտրական շենքեր, որոնք յարմար չեն մուհաճիրներուն զետեղման, ինչպես նաեւ ավելցած շենքեր, ինչպես նաեւ մուհաճիրներու բնակութենէ դուրս մնացած այլ շենքերը, 18-րդ յոդուածին յամածայն, վարչական յանձնախումբին կողմէ կամ անոր հսկողութեան տակ կառավարական վարչական պաշտոնեաներու եւ ելամտական նախարարութեան ներկայացուցիչներէն կազմուած մարմնի մը կողմէ աճուրդով պիտի ծախուին:

Յոդ. 17 -Քաղաքներու եւ ավաններու մեջ վերաբնակեցուած մուհաճիրները պիտի արձանաղրուին տոմարի մեջ կանոնավոր վիճակագրութեան համար: Տոմարներուն մեջ պիտի արձանաղրուին անոնց անունները, տրուած հողերուն տեսակը, տարածութիւնը եւ արժեքները:

Յոդ. 18 - Քաղաքներու եւավաններու շրջանները գտնուած այգիները, պարտեզները եւ ձիթաստանները կամ նման անշարժ կալուածները պահպանելու եւ շենցնելու համար, մասնագետներ գտնուելու պարագային, երաշխավորութիւն առնելու պայմանով, անոնց պետքին եւ ընդունակութիւններուն համաձայն, գաղթականներուն բաշխել եւ որոնց որքան անշարժ կալուած եւ հողեր կըտրուին, արձանագրել եւ ենթականերուն յանձնել վաւերաթուղթեր: Այդ կարգի անշարժ կալուածներէն անոնք, որ մուհաճիրներու չեն յանձնուած, 16-րդ յոդուածի համաձայն, աճուրդով պիտի ծախուին:

Յոդ. 19-Նահանգներու մեջ գտնուող կամ տեղական կառավարութեան արտոնութեամբ եւ համաձայնութեամբ եւ կամ ներքին գործոց նախարարութեան հրամանով ուրիշ նահանգներէն գրաւոր վաւերագրերով եկած մուհաճիրները բացառութիւն նկատելով, հայոց գիւղերուն կամ քաղաքներուն մեջ իբրև մուհաճիր բնակիլ ուզողներէն,և կամ ուրիշ վայրեր բնակվիլ ուզողներեն, կամ մուհաճիր ըլլալով տեղվոյն մեջ բնակելու համար ղրկուածներէն պաշտոնական թուղթեր պահանջելը պայման է:

Յոդ. 20 - Տուներ եւ հողեր գնել ուզողները պարտավոր են տուներուն լավ հոգատար ըլլալ, եթե թերանան կամ արգելքներ յարուցանեն ու ավերեն, վնասները հատուցանելու յանձնառութեամբ երաշխավորութիւն պետք է տան եւ երկու տարին չանցնելու պայմանով կարելի խնդրարկուներուն վարձու տալ:

Յոդ. 21- Ըլլա գնումով, ըլլա վարձակալութեամբ կամ նուազորդով տրուած անշարժ կալուածներուն եւ հողերուն տեսակը, տարածութիւնը, տեղը, գնման ու վարձքի գները եւ մանրամասնութիւնները յաճախորդի եւ վարձակալներու վերաբերեալ տեղեկութիւններով ցուցակներ պետք է կազմուին:

Յոդ. 22- Ծախուած կամ վարձու տրուած կալուածքներէն գոյացած գումարները տերերուն անունով իբր ավանդ կը յանձնուին ելմտական նախարարութեան գանձարկղին: Յետո տրուելիք հրահանգին համաձայն տերերուն կը յանձնուին:

Յոդ. 23 - Տարագրուած հայերու քաղաքներուն եւ ավաններուն մեջ ունեցած բոլոր ինչքերուն ու կալուածքներուն յանձնումը եւ վարչական կարգադրութիւնները կը կատարուին այս հրահանգներուն համաձայն: Եվ այդ գործողութիւնները ուղղակի ենթակա են Լքեալ գոյքերու վարչութեան յանձնախումբերուն:

Յոդ. 24 – Վարչական այդ յանձնախումբերը լքեալ գոյքերու վարչական կարգադրութիւններու մասին ուղղակի կը հաղորդեն միայն ՆԳ նախարարութեան եւ միայն անկէ իրենց ստացած հրամաններուն համաձայն կը կատարեն իրենց պարտականութիւնները, կու տան որոշումներ եւ կը գործադրեն զանոնք՝ իմացնելով նաեւ այդ մասին տեղական կառավարչութիւններուն:

Յոդ. 25 - Այդ հրահանգներուն տրամադրութիւնները գործադրելու եւ ապահովութեամբ յարգելու մասին պետք եղած թիվով քոմիսիոններ պիտի կազմուին եւ ՆԳ նախարարութենէն արտոնութիւն ստանալէ ետք, վարձուած պաշտոնեաներ պիտի ծառայեն եւ պիտի գործեն ՆԳ նախարարութենէն տրուած հրահանգներու համաձայն: Կանոնները եւ բացատրութիւնները պիտի պատրաստուին, համաձայն այդ հրահանգներուն, լքեալ գոյքերու վարչական յանձնախումբերուն կողմէ եւ ատոնց պատճենները պիտի ղրկուին ՆԳ նախարարութեան եւ մեկ պատճենն ալ պիտի յանձնուի տեղական կառավարչութեան:

Յոդ. 26 – Տարագրուած հայերուն բնակարաններուն մեջ մուտաճիր զետեղել եւ զանազան գործողութիւններ կատարել այդ առթիվ պարտականութիւններն են յանձնախումբերու պաշտոնեաներուն: Այդ գործերն արագացնելու եւ կանոնավորելու համար պետք է նշանակուին քննիչներ քննութիւնները կատարելու եւ այդ առթիվ տեղական կառավարութեանց հետ խորհրդակցաբար որոշումներ պիտի տրուին գործադրութեան համար: Ատոնք ալ լքեալ գոյքերու վարչական յանձնախումբերուն պարտականութիւններուն մասը կը կազմեն:

Յոդ. 27 – Յանձնախումբերը իրենց դիտողութիւնները եւ եզրակացութիւնները, իրենց որոշումներուն հետ, գործադրութեան համառոտագրութիւնը պարունակող զրութիւնով մը առնուազն 15 օրը անգամ մը հաղորդելու են թե ՆԳ նախարարութեան եւ թե նահանգապետութեան:

Յոդ. 28 - Լքեալ գոյքերու վարչական յանձնախումբերը, իրենց վարչական գործերու ընթացքին, այս հրահանգներուն եւ տրուած ցուցմունքներուն համաձայն շարժելու պարտավորուած են:

Յոդ. 29 – Լքեալ գոյքերու վարչութեան յանձնախումբի անդամները, երբ կը նշանակուին, իրենց գործունեութեան շրջանին մեջ, լքեալ անշարժ կալուածներուն եւ հողերուն վարչութեան եւ պահպանման եւ հաշուական գործողութիւններուն համար հավաքաբար պատասխանատու են:

Յոդ. 30 – ԼԳՎ յանձնախումբը մասնավոր կերպով նշանակուած նախագահ մը երկու անդամներէ կը բաղկանա, որոնցմէ մինը կը նշանակուի քաղաքային վարչական պաշտոնեաներէն եւ միւս անդամն ալ ելմտական պաշտոնեաներէն:

Յոդ. 31 –ԼԳՎ յանձնախումբի նախագահը կամ անոր նշանակած մեկ անձ կը կատարէ բոլոր գործողութիւնները, յանուն նախագահին:

Յոդ. 32 – ԼԳՎ յանձնախումբի նախագահը, երբ յարմար նկատէ, կրնա զրկել իր կազմի անդամներէն մեկը, այս հրահանգներուն համաձայն, քննութիւն կամ հսկողութիւն կատարելու եւ կամ գործաղիր պաշտոնյա դառնալու համար:

Յոդ. 33 – ԼԳՎ նախագահը օրական 1.5 ոսկի, իսկ անդամները օրական մեկ ոսկի վարձք կը ստանան մուհաճիրներուն յատկացեալ գումարներէն եւ պարտականութեամբ ուրիշ վայրեր երթալու պարագային ալ կը ստանան իրենց ճանապարհածախսը:

Յոդ. 34 - Այն նահանգներուն մեջ, ուր յանձնախումբ չէ նշանակուած, տեղական կեդրոնական կառավարչութիւնը պարտականութիւն ունի նշանակելու մեկը այս հրահանգներու համաձայն:[1]

ՆԳ նախարարության 1915 թ. հուլիսի 15-ի հրահանգը

Անհրաժեշտ նկատուած է պատրաստել վիճակագրական գործ մը, որ պարունակի ստույգ տեղեկութիւններ տարագրուած հայերու թիվին, անոնց թողած կալուածքներուն, հողերուն տեսակի եւ արժեքի մասին: Ներփակ կը ղրկենք ձեզի բավարար թիվով ցուցակներ, որոնք կը լեցնեք իրենց տեղերուն մեջ եւ կը վերադարձնեք մեզի:[2]

Հայերի բռնագաղթի հրահանգներից

Հայերի տեղահանության ժամանակ դուք պետք է հետևեք հետևյալ սկզբունքներին.

ա) Նոր տեղերում հայ ազգաբնակչության թիվը չպետք է գերազանցի տեղական մահմեդական ժողովրդի թվի 10 տոկոսից,

բ) աքսորավայրերում հայերի կողմից հիմնադրվելիք ավաններն ու գյուղերը պետք է ունենան ոչ ավելի, քան 50 տուն...[3]

1. Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 227-235:
2. Ն. տ., էջ 222:
3. **Kamuran Gürün** Le dossier arménien, p. 277.

Շաքիր բեյի՝ Դիարբեքիրի գաղթականների ընդհանուր կնօրեն, ծածկագիրը ՆԳ նախարարությանը (14 օգոստոսի 1916 թ.)

Մինչեւ հիմա Տիարբեքիրի կեդրոնը հասած են 40 000 գաղթականներ, որոնցմէ 25 000 Սեւերեկի եւ Խարբերդի ճամբով դրկուած են Կեդրոնական Անատոլու: 12 000 թուրք մուհաճիրներ տեղավորուած են կեդրոնի (Դիարբեքիր) եւ շրջակա գիւղերուն մէջ: 4-5 000 քիւրտեր քշուած են:

Մարտին հասած 20 հազարէ 9 հազարը տեղավորուած են սանճագին մէջ եւ 10 հազարի չափ դրկուելու վրա են: Սավրի, Սիլվանի, Լըճեի, Պըշերիի, Հայտարանլը, Միրանլը եւ Իտմանլը կոչուած աշիրեթներուն թիվը 100 հազարը անց է, ըստ հասած տեղեկութիւններու: Անոնց ուղարկման եւ սնունդին շուրջ որոշուելիք միջոցներու մասին պիտի տեղեկագրուի:[1]

Թահսին բեյի՝ Էրզրումի վալի, 1915 թ. հուլիսի 15-ի հեռագիրը

Ֆայիդ անունով մի հիսնապետ հափշտակել է Արաբյանի չորս աղջիկներին: Հիսնապետ Քեամիլ էֆենտին էլ գողացել է 1 863 ոսկի, 35 բեռ կարասի և շատ մեծ քանակությամբ գոհարեղեն: Դրամի և կնոջ համար գործադրված խայտառակությունները ծայր աստիճանի ամոթալի են և անմարդկային: Պետք է այս վիճակի առաջն առնել և մանավանդ վերջ տալ ամենուրեք թեշքիլաթը մախսուսեի անվան տակ գործող չեթեներին: Խարբերդի կուսակալը գրում է, թե «բոլոր ճանապարհները լցված են կանանց ու երեխաների դիակներով, ժամանակ չենք գտնում թաղելու դրանք: Լավ կլիներ, եթե պահեինք մեր վեհանձնությունը և ազգային պատմությունը»:[2]

Թալեաթի հեռագիրը Մալաթիայի իթթիհադի ակումբին

Թե՛ ձեր գավառակն ուղարկված և թե՛ տեղում հավաքված հայերին ոչնչացրեք: Սրա համար բարոյական և նյութական պատասխանատուն ես եմ: (Իթթիհադի) ընդհանուր կենտրոնի խոշոր հարստության մեծ մասը գոյացել է հայ տարագիրներից գրաված գույքերից ու դրամից: Այդ հարստության մեծության մասին գաղափար կազմելու համար բավական է հայացք նետել այն պայմանագրի վրա, որ կնքված է, մի կողմից, ընդ-

1. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 206:

2. Ռազմական դատարանի դիվան, փաստաթուղթ թիվ 8 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 279-280:

հանուր կենտրոնի և մյուս կողմից, ակումբների և չեթեների հետ: Ինչպես հայտնի է, չեթեների մի մասը բանտերից հանված կամ դրսից հավաքված մարդասպաններ են: Սակայն այդ մարդասպաններն իրավունք չունեն ձեռք տալ իրենց կողմից սպանված հայերի ունեցվածքին: Նրանք երդում են տվել, որ գրաված ունեցվածքը պետք է բերեն կենտրոն: Համաձայն այդ պայմանավորվածության, հափշտակված իրերի կեսը ուղարկվելու է Պոլիս ընդհանուր կենտրոնի ճեմեյեթին հանձնելու համար, իսկ մյուս կեսը բաժանվելու է չեթեներին: Եվ յուրաքանչյուր չեթեի 15 000 ոսկի է բաժին ընկել, ...12 000 չեթեին բաժին է ընկնում 180 միլիոն ոսկի...

Սրանից կարող եք եզրակացնել, թե ինչ քանակության կարող է հասած լինել ընդհանուր կենտրոնին բաժին հասած գումարը:[1]

Խարբերդի կուսակալի հեռագիրը Մալաթիայի կառավարիչին

Հակառակ եղած հայտարարություններին, դարձյալ շատ դիակներ են գտնվում ճանապարհների վրա: Ավելորդ է բացատրել այդ երևույթի վնասները... Խստորեն պիտի պատժվեն դրա համար մեղավոր պաշտոնյաները... ՆԳ նախարարությունը հրամայում է ուշադրությամբ քաղել ձեր սահմաններում եղած բոլոր դիակները: Այս նպատակով պետք է օգտագործել բավարար թվով ոստիկան-զինվորների և մի շարք հայտնի պաշտոնյաների՝ նրանց ուղարկելով ամեն կողմ:[2]

Հաֆըզ Մեհմեդ բեյի՝ Տրապիզոնի երեսփոխան, հեռագիրը Թալեաթին

Սև ծովի ափերին հաստատված հայերին, նավակների մեջ լցնելով, ծովն են թափում:[3]

Մյունիր բեյի՝ Էրզրումի վալի, 1915 թ. դեկտեմբերի 14-ի ծածկագիրը

Էրզրումից Քղիի ճանապարհով ուղարկված հայ հարուստների քարավանը... սպանված ու թալանված է իթթիհադի ընդհանուր կենտրոնի անդամ Բ. Շաքիր բեյի կազմակերպած չեթեների և դերսիմցիների կողմից:[4]

---

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 287-288: «Սաբահ», 12 դեկտեմբերի, 1918 թ.:
2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիր, էջ 288:
3. Ռազմական դատարանի դիվան, փաստաթուղթ թիվ 15 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 291:
4. Ռազմական դատարանի դիվան, փաստաթուղթ թիվ 16 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 291:

Իսմայիլի՝ Կ. Պոլսի բանտերի տնօրեն, կարդացած բոնագաղթի հրամանը Պարտիզակում

Հայ ժողովուրդը անվստահելի է, երկիրը պատերազմի մեջ է, թշնամի Պոլսի դռներն է թակում, ուստի ռազմական զգուշավորության նպատակով հարկ է հավաքել հայերին և հեռացնել ծովեզրից երկրի խորքերը...[1]

Սղերդի առաջնորդարանի տեղապահին կառավարչապետանը հարկադրում են ստորագրել թուրքերի կազմած հեպևյալ «վկայությունը»

Երբ թուրքերը մզկիթում ջերմեռանդ աղոթում էին, զինված հայերը ներս խուժեցին ու նրանց կոտորեցին:[2]

Ալի բեկի պատմածը

Երբ Սեբաստիայ մեջ առաջին անգամ դաշնակցականները ձերբակալել սկսան, (բժիշկ) Հայրանեան վալիին դիմելով կը բողոքե.

-Եթե անոնց յանցանքը դաշնակ ըլլալն է, ես ալ դաշնակ եմ, զիս ալ ձերբակալելու եք:

Ասոր վրա վալին անոր խիստ ոճով կը պատասխանե, թե ձեզի ազատութիւն ու սահմանադրութիւն ալ շնորհեցինք, բայց դուք երես առնելով շատ առաջ գացիք և չափը անցուցիք: Հիմա սպասեցեք և տեսեք, թե ձեզի ինչեր պիտի ընենք:

-Թե որ մարդկութիւնը և քաղաքակրթութիւնը մեկ կողմ թողուք, կրնաք շատ բան ընել,- պատասխանելով, բարկացած կը մեկնի բժիշկը:

Սըվազի երեսելի հայերուն հետ, թվով 150 հոգի, Հայրանեանն ալ ճամբա կը հանեն՝ կառքերու մեջ նստեցուցած, իբրև թե Կեսարիա ղրկելով դատուելու համար: Գիշերանց, քաղաքէն հեռու, ժանդարմայի խիտ ցանցի մը մեջ առած զանոնք, Մուամմեր մավզերով բոլորն ալ անձամբ կը գնդակահարե:[3]

Զինվորի պատմածը

Էրզրում զինուոր էի, երբ ձեզ (հայերին) ջարդել սկսան: Բանակին մեջէն առաջին անգամ հայերը զատեցին ու զինաթափ ընելով մեզի գնդա-

1. Ռազմական դատարանի դիվան, փաստաթուղթ թիվ 16 կամ Ա. Անտոնյան Մեծ ոճիրը, էջ 291:

2. Ն.տ.:

3. Ն.տ.:

կահարել տուին: Յետո Էրզրումի հայերը աքսորեցին: Շատերը փախած էին: Շուներով զանոնք կը հալածեինք լեռներուն վրա ու բռնելով կը սպաննեինք... Ինչպե՞ս կը սպաննեին ձեզ: Թեւս կոտրի, եթե մեկուն շիտակ գնդակ մը արձակեցի: Միայն երեք վիրավոր, որոնք տակավին մեռած չէին, ստիպման տակ սուինահար ըրի:[1]

Թալեաթ

Բ. Դուռն ուզում է օգտագործել Համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնականապես հաշիվ մաքրի ներքին թշնամիների (տեղացի քրիստոնյաների) հետ, ընդորում՝ զերծ մնալով արտասահմանի դիվանագիտական միջամտությունից:[2]

Ուղղապան Քերպելա Ալի Մեհմեդի պատմածը

Ես ռազմամթերք կփոխադրեի Երզնկայէն Կարին: Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա Խոթուրի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերուն: Անթիվ, անհամար մարդու դիակներ, մեծ կամուրջի 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած եւ ջուրը իր ընթացքը փոխած կամուրջէն անտին կվազեր: Սոսկալի էր տեսնելը, երկար սպասեցի քարավանովս, մինչեւ որ այդ դիակները քաշվեցան, եւ ես կարողացա կամուրջէն անցնիլ: Սակայն կամուրջէն մինչեւ Ճինիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով, ծերեր, կիներ, երեխաներ, արդեն հոտած, նեխուած եւ ուռած: Այնպիսի մի գարշահոտութիւն կար, որ անցնել այդ ճանապարհով անհնար էր: Իմ երկու ուղտապաններս այդ հոտէն հիվանդանալով մեռան, եւ ես ստիպուեցա ճանապարհս փոխել: Անլուր եւ զարհուրելի ոճրագործութեան զոհեր եւ հետքեր էին ասոնք, իսկ բոլոր դիակները հայեր, թշուառ հայեր էին:[3]

---

1. **Ա. Քոչեան** Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, 1915-1918, հ. Ա, Բուխարեստ, 1938, էջ 101-106:

2. Deutschland und Armenian, 1914-1918. Sammlung diplomatischer, Aktenstücke. Herausgegeben und Engeleitet von **Dr Johannes Lepsius** Potsdam, 1919, s. 83, Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի 1915 թ. հունիսի 17-ի զեկուցագիրը կանցլերին:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թթ. 17-18:

«Թանին» թերթը 1915 թ. աշնանը կառավարությանը կոչ էր անում

Ոչնչացնել կամ բռնի մահմեդականացնել բոլոր հայ կանանց Թուրքիայում՝ որպես Օսմանյան կայսրության փրկության միակ միջոց:[1]

Թալեաթը Վանգենհայմին (17 հուլիսի 1915 թ.)

Հայերին բոլոր նահանգներից պետք է մաքրեն:[2]

Բռնագաղթվածներին ուղեկցող ոստիկանի պատմածը

Ծանր տեսարան էր, ես չէի կարողանում կրակել: Շատ կանանց ու երեխաների թունավորեցին դաշտերում շների միջոցով:

Գիշերը Բայբուրդից բերում են կանանց ու երեխաների խմբեր... ամեն օր 10-20-ական հոգու ընտրում և սպանում են: Նաև քշում են քաղցածներին, հոգնածներին և գիշերը նետում գետը: Բացում են փոքր երեխաների գանգերը: Կանանց բռնաբարում ու սպանում են: Ես ինքս քաղեցի հինգ կանանց դիակներ, որոնք այդ վայրերում մեռել էին ծննդաբերության ժամանակ:[3]

Թուրք պաշտոնատարը հայ բռնագաղթվածներին

Չեմ ուզում, որ այստեղ նույնիսկ հայի հոտը մնա: Գնացեք Արաբիայի անապատները և այնտեղ ստեղծեք Հայաստան:[4]

Թուրք սպան Ղոսեյնուն

Բիթլիսում իշխանությունները հայերին հավաքում էին ծղոտով լցված մարագներում, դռները փակում էին ծղոտով և հրդեհում ու այդպես խեղդում:[5]

Ֆեյզի բեյը՝ Դիարբեքիրից Օսմանյան խորհրդարանի երեսփոխան, քուրդ ավազակապետ Ամարոյին

Զավակս, Ամարո, մի քանի օրէն 6-700 հայեր, մեր յավեր չերքեզ Շաքիր պեյի հրամանատարության տակ Մոսուլ աքսորուելու պատրվակով պիտի հասնին Ըշքեֆքան գիւղ, այնտեղ յավեր Շաքիր պեյին հրահանգ-

1. **Ջ.Կիրակոսյան** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 336:

2. **Հ. Ղազարեան** Յեղասպան թուրքը, էջ 146:

3. **Гр. Чалхушьян** Красная книга, Ростов на Дону, 1919, стр. 66.

4. **Ռ. Փինոն** Հայերի բնաջնջումը, Գերմանական մեթոդ-թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 48-59:

5. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 545-554:

ին համաձայն ամբողջ աշայիրովդ պիտի ոչնչացնեք զանոնք, առանց մեկ հայի մը խնայելու եւ եթե իմանանք մեկ հայ ազատած եք, պատասխանատու եք, գիտցած եղեք:[1]

Թամո Ալիի Տարոնի հայերին

Հայեր, ես պետք է ձեզ ճշմարտությունն ասեմ: Սուլթանից հրաման է ստացված, որ բոլոր հայերը, որոնք ապրում են օսմանների երկրում, պետք է անգթորեն ոչնչացվեն: Սիլվանի հայերն արդեն կոտորված են... չորս-հինգ օր հետո այստեղ էլ կսկսվի կոտորածը, բոլորը, մինչև վերջին մարդը ոչնչացվելու են, մեկ մարդ իսկ ողջ չի մնալու...[2]

Մուսա բեկ

Հրաման կա, որ այսուհետև ով որ օսմանների հողում տա Հիսուս Քրիստոսի անունը, չպետք է կենդանի մնա:[3]

Մշո մութեսարիֆ Սերվեթը հայ համայնքի ներկայացուցիչներին ջերբակալելուց առաջ հայտարարեց

Ինձ անհայտ պատճառներով հրաման է ստացվել, որ դուք բոլորդ պետք է թողնեք Մուշը և տեղափոխվեք Դիարբեքիր մինչև պատերազմի վերջանալը:

Իսկ հունիսի 28-ին թուրք չաուշը քաղաքի փողոցներում բղավում էր. «Հայեր, համաձայն մութեսարիֆ փաշայի հրամանի, պարտավոր եք ժամը 10-ին հավաքվել կառավարական գրասենյակի մոտ՝ ձեր ձիասայլերով, ձիերով, անասուններով, ձեր ամբողջ եղած-չեղածով և ընտանիքներով՝ Դիարբեքիր գնալու համար»:

Եթե (մահմեդականներից) որևէ մեկը համարձակվի իր տանը ապաստան տալ հայ երեխաներին, կանանց և աղջիկներին, հայտնաբերվելու դեպքում թաքցնողը կհամարվի հայ և գլխով կփոխհատուցի:[4]

Տրապիզոնի վալին գերմանական հյուպատոսին

Հայերի հավանական արտաքսումը, անգամ զինված դիմադրության դեպքում, կարող է տեղի ունենալ միայն քաղաքացիական և ռազմական իշխանությունների կողմից:

1. **Տ. Մկուռնդ** Ամիդայի արձագանքները, Նյու Յորք, 1950, էջ 249-250:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց.1, գ. 219: Եղիազար Կարապետյանի հիշողություններից:
3. Ն. տ.:
4. Ն. տ.:

...Ընդհանրապես տարագրությունը ուղղված է ոչ թե քրիստոնյաների, այլ հայերի դեմ, իսլամանալուց հետո էլ հայը աքսորվելու է...[1]

Ձերաբուլիսի զինվորական հրամանատարի բացատրությունը դիակները չթաղելու վերաբերյալ

Ինքը չի կարող որոշել տվյալ դիակը մահմեդականի՞ է, թե՞ քրիստոնյայի (քանի որ դրանք անդամահատված էին): Միայն մահմեդականին է թույլ տալու թաղել:[2]

Էնվերի 1915 թ. հուլիսի 14-ի հրամանը բանակների հրամանատարներին

Բացարձակապես անհրաժեշտ է օրեօր հավաքել ու պահել բոլոր ապացույցները, բոլոր վավերագրերը, որոնք բնույթ ունեն աշխարհի առաջ արդարացնելու այն միջոցները, որոնք որդեգրել ենք խորտակելու համար հայ հեղափոխական շարժումը, որպեսզի դրանք հրատարակվեն գրքույկներով:[3]

Թուրք պաշտոնատարի հայտարարությունը

Հայերի ոչնչացումը ռազմական միջոցառում է: Իսկ զինվորականները գերմանացիների հրամանատարության տակ են: Այնպես որ, շնորհակալություն ասենք գերմանացիներին:[4]

Ներքին գործերի նախարարության բարոյաստիճան պաշտոնատար

Չնայած տարագրության մեջ գտնվող հայերին սննդամթերքով ապահովելու վերաբերյալ Բ. Դոան հրամանի, նրանց մեծ մասը սովից կոտորվելու է:[5]

---

1. Տրապիզոնում գերմանական հյուպատոսի 9 հուլիսի 1915 թ. թիվ 15 տեղեկագիրը, **Տոքթ. Եոհաննէս Լեփսիուս** Տեղեկագիր:

2. Վանգենհայմի 9 հուլիսի 1915 թ. թիվ 437 հեռագիրը: **Տոքթ. Եոհաննէս Լեփսիուս** Տեղեկագիր էջ 47:

3. Դիվան Երուսաղեմի, թիվ 3602:

4. **Վ. Շվինդլերի** 1915 թ. օգոստոսի 30-ի նամակը Բոյտլերին:

5. Գերմանական դեսպանի 1915 թ. սեպտեմբերի 25-ի հեռագիրը, Բեռլին:

Թուրքերի կոչերը հայերի կոտորածների ժամանակ

Լսեք Կորանի հետևյալ կոչը. «Սպանիր նրանց, ում Աստված կմատնի քո ձեռքը: Դա կուրախացնի հավատացյալների սրտերը և անհավատների սրտերից կհանի զայրույթը»:

Վայրենի ռուսները, դավաճան անգլիացիները, պիղծ ֆրանսիացիները շարունակում են հպարտանալ իրենց գործերով, բարձրացնել իրենց դրոշները ձեր մաքուր և սուրբ լեռների վրա...

Օհ, դուք պեղծ ու անօգնական ժողովուրդ Հնդկաստանի և Թունիսի և դուք թուրքական խեղճ ցեղեր: Օհ, Թուրքմենիա և Բուխարիա՝ մեռնող արյունոտ Ռուսաստանում: Օհ, դուք քանդվող մզկիթներ, քարոզիչների ավերվող ամբիոններ, փշրվող մինարեթներ...

Մուսուլմաններ, գնացեք արյունոտ տարածքներ: Այնտեղ տեսեք իսլամի ավերած երկրները և օրինակ վերցրեք...

Կարդացեք ձեր պատմությունը: Եթե ցանկանում եք պատիվ ու փառք, հուրիներ ու աղջիկներ, նայեք, այդ բոլորը սպասում են ձեզ: Մտածեք այս ամենի մասին: Ձեր թշնամիները դողում են ձեր ձեռքի տակ: Հարձակվեք նրանց վրա բոլոր կողմերից: Որտեղ հանդիպեք նրանց, սպանեք: Որպես վարձատրություն Աստված ձեզ հուրիներ և աղջիկներ կտա երկնքում: Մուհամմեդն է միակ ճշմարիտ Աստվածը, Մուհամմեդից բացի ուրիշ Աստված չկա:[1]

Թալեաթը

Այն բոլոր հայերը, որ Հայաստան մը շինելու համար խոսքով, գրիչով կամ գործով աշխատած են կամ կրնան աշխատիլ, տերության թշնամի կը նկատուին եւ այսպիսի ժամանակի մը մեջ պետք է մեկուսացուին:[2]

Հայ հոգևորականներին աքսորելու դեմ պապրիարքարանի բողոքին Բ. Դոան պատասխանը

Հայկական կազմակերպությունը մի շարք հայ ազդեցիկ առաջնորդների համար հասարակական անդորրը խանգարելու միջոց կարող է ծառայել: Հետևաբար այդ հավանականությունը կանխելու նպատակով որոշված է հայ առաջնորդներին մայրաքաղաքից հեռացնել:[3]

1. The missionary review of the World, July, 1915.
2. **Ա. Քոչեան** Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, հ. Ա, էջ 48:
3. **Ֆ. Նանսեն** Հայաստան և Մերձավոր Արևելք, էջ 281-285:

Էնվերը, Սարիղամիշի պարտությունից հետո անցնելով Սեբաստիայով, կառքից իջնելով, ասաց

-Հայերն են մեր դեմ կռվողները:

-Փաշա,- ասաց Մուրադը,- ինչպես որ մենք, թուրքահայերս ենք կատարում մեր պարտականությունը Օսմանյան հայրենիքի հանդեպ, այնպես էլ ռուսահայերը ստիպված են կատարել իրենց պարտքը ռուս պետության նկատմամբ:

-Ոչ միայն ռուսահայերը, թրքահայերն էլ ունեն կամավորական գնդեր ռուսական բանակում,- առարկեց Էնվերը խստությամբ և ավելացրեց,- վստահ եղեք, շատ խիստ եք պատժվելու:[1]

Էնվեր

Այդ (հայերի բնաջնջումը) ամենամեծ գործն է, որ երբևիցե իմացել (կատարել) է Երիտասարդ Թուրքիան: Գերմանացիները մեզնից շնորհակալ պիտի լինեն, որ ոչնչացնում ենք նրանց թշնամիներին:[2]

Նայիմ բեյ

Մեռցուած հայերու թիվը ծածկագիր հեռագիրներով երկու շաբաթ անգամ մը կուղարկուեր Պոլիս...

Տեր Զորի ջարդին ժամանակ զոհուեցան բոլոր այն հայերը, որ անապատ աքսորուած էին՝ ավելի քան 200 հազ. մարդ:[3]

Բռնագաղթվածների քարավանն ուղեկցող թուրք հարյուրապետը Գր. Պալաբյանին

Ես ոստիկանութեան հարիւրապետ մըն եմ: Մեզի Կ. Պոլսեն հրաման տրուած է ամենքը սպաննել, վասնզի Սուրբ պատերազմ (ճիհատ) հռչակած ենք... երբ զինուոր մը պատերազմի մեջ մեկը սպաննէ, յանցավոր չէ, այսպես գործեցի ես ալ, յետոյ՝ ջարդէն ետքը աղոթք մը (նամազ) ըրի ու արդարացայ:[4]

---

1. **Սիրվարդ** Սեբաստացի Մուրադ, էջ 14-21:

2. **Վիլհելմ Շվենդլերի** 1915 թ. օգոստոսի 30-ի նամակը, Դրեզդեն՝ պատվավոր դոկտոր, գաղտնի խորհրդական Բոյտլերին:

3. **Նայիմ պեյի** յուշերը, էջ 46-47:

4. Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 95:

Ասաֆ բեյը՝ փոխկուսակալ, Տիգրան Քելեբյանին

Սիրելի ուսուցիչ, ինչ որ կուզեք ընել, ըրեք շուտով, յետոյ ուշ է: (Ապա կարդալով Թալեաթի հեռագիրը՝ «Հեռագրեք իսկույն՝ հայերէն որչափ մեռած եւ որչափ դեռ ողջ են»), ապա բացատրեց. «Հեռագիրը կը նշանակե. ինչո՞ւ կը սպասեք, ջարդեք»:[1]

Անգլիայի տերությունների 1915 թ. մայիսի 25-ի վերջնագրին Օսմանյան կառավարության 1915 թ. մայիսի 25-ի պատասխան նոտան

Բ. Դռան կառավարությունը վերոհիշյալ հուշագրի պարունակած վկայություններն ու պնդումները բացարձակապես մերժում է: Օսմանյան տերության սահմաններում հայերի դեմ գործադրված ցեղասպանության որևէ դեպք ամբողջությամբ սուտ է:

Իրադարձությունների իսկական էությունը ցույց տալու համար ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հետևյալ լուսաբանումները:

Քանի որ Էրզրումի, Դերջանի, Էգինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերը երկրի խաղաղությունն ու հանրային անդորրությունը խանգարող որևէ քայլ կամ գործողություն չեն ցուցաբերել, Օսմանյան կառավարության պաշտոնատարներն էլ նրանց դեմ արտակարգ միջոցառումների դիմելու անհրաժեշտություն երբևիցե չեն զգացել:

Այս իրողությունը չեզոք երկրների հյուպատոսների կողմից էլ արդեն նշվել է, այսինքն համաձայնական տերությունների զրպարտությունները բացահայտ սուտ են:

Ովքեր արևելյան հարցերին և իրադարձություններին քաջատեղյակ են, լավ գիտեն, թե հայ ժողովրդին, ամեն առիթից օգտվելով, Օսմանյան կառավարության դեմ ըմբոստության մղողները եռյակ համաձայնության, մանավանդ ռուս և անգլիացի պաշտոնատարներն են:

Այնպես որ, այս հարատև զրգռություններն Օսման կառավարության և վերոհիշյալ կառավարությունների միջև թշնամանքի սկսվելուց ի վեր անժխտելիորեն երևան են եկել:

Նույն կառավարությունների Բուլղարիայում և Ռումինիայում գործող հյուպատոսները չէի՞ն, որ օսմանյան հպատակ երիտասարդ հայ ասպատակներին Վառնայի, Սուլինայի և Կոստանցիայի վրայով ու այլ ճանապարհներով Կովկաս ուղարկեցին և ռուսական կառավարությունն

1. Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 95:

էլ այս օսմանցի հայ երիտասարդներին իր բանակի կազմի մեջ մտցնելով, հրացանով ու ռումբերով զինելով, նրանց հեղափոխական թռուցիկներ ու հայտագրեր բաժանելուց հետո Օսմանյան կայսրության սահմաններից ներս հայ շրջանակներ ներմուծելուց հետ չկանգնեց: Այդ երիտասարդների պարտականությունն էր իրենց ուղարկված շրջաններում հեղափոխական կազմակերպություններ հիմնել, ինչպես նաև Վանի, Շաֆուկի, Հավասորի, Գեվաշի և Թեմարի հայերին կառավարության դեմ զինված ապստամբության մղել: Դեռ ավելին՝ մյուս կողմից դրդել այդ շրջանի թուրքերին ու քրդերին՝ հայերին ջարդելու:

Սրանից բացի հետևյալ օրինակները հիշելն ու ցույց տալն էլ հատկապես օգտակար համարեցինք:

Օսմանյան կայսրության և Թուրքիայի միջև թշնամություններ սկսվելուց հետո Արմեն Գարո անունով մեկը, որը նախկին օսմանյան երեսփոխաններից Գարեգին Բաստրմաջյանն է, հայկական կուսակցությունների ղեկավարներից Դրոյի ու Խեչոյի կողմից հիմնված ասպատակներին միացած, գործակցած վերոհիշյալ ղեկավարների հետ, Ռուսաստանի կողմից հայ կամավորների գլուխն անցած օսմանյան սահմանների վրա հարձակում է գործել: Ռուսների կողմից Բայազետի գավառի գրավման ընթացքում վերոհիշյալը իր ճանապարհի վրա գտնված բոլոր իսլամ գյուղերն ավերել է և բնակիչներին կոտորել: Այս շրջանից ռուսներին հետ մղելու ժամանակ նա վիրավորվել է, և Էրզրումի դաշնակցական պատվիրակ Սուրեն անունով անձնավորությունն էլ սպանվել է:

Ներկայումս էլ Բաստրմաջյանը Կովկասի սահմանի վրա գործում է: Ամերիկայում հրատարակվող դաշնակցության օրգան «Ասպարեզ» թերթը այս անձի պատերազմ մեկնելուց առաջ, պաշտոնական երդման կրոնական արարողություն կատարելու միջոցին Դրոյի և Խեչոյի հետ հանված մի լուսանկար է հրատարակել:

Այս ծրագրված նախապատրաստությունները, անգլիական պաշտոնյաների կողմից Կիպրոսից հատուկ բերված և Իսկենդերունի մերձակայքում ցամաք հանված հայերի գործունեության հետ կապը հստակ ու դրականորեն հայտնի է դարձել... Այս շարժումները տարբեր հետևանքներ ունենալուց բացի՝ երկաթուղային գնացքակազմի գծից դուրս ընկնելու պատճառ էլ են դարձել:

Մյուս կողմից, Ֆրանսիայի կամ Անգլիայի ծովային հրամանատարությունները Աղանայի,Դեորտ-Յոլի, Յումուրտալըքի, Իսկենդերունի և

երկրի այլ շրջանների հայերի հետ թղթակցելով, նրանց ըմբոստության ու գրգռումների էին մղում:

Գալով Զեյթունի հայերին, մասնավորապես անգլիական և ֆրանսիական կառավարությունների կողմից իրականացված քարոզչության հետևանքով, հայ հեղափոխական կազմակերպությունը անցյալ փետրվարից սկսեց իր գործունեությունը: Նշված շրջանների հայերը կառավարական պաշտոնատարների վրա զենք բարձրացնելով, շրջապատեցին պետական շենքերը: Այս դեպքերի հետևանքով օսմանյան կառավարության պարտականությունն էր ըմբոստությունը զսպել, հսկողության տակ վերցնել հանրային անդորրը:

Նման հեղափոխական և ծրագրված շարժման զսպման համար բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների իրավունքը լինելով պետական իշխանության ուղղակի իրավասության մեջ՝ դրանց միջամտելու և հակազդելու իրավունք ոչ ոք չունի:

Դրանից բացի, այս միջոցառումները, նշված հարցի նման, ներկայումս ընթացող պատերազմի ժամանակ անշուշտ անմիջական պարտավորություն և կարևորություն են ստանում: Բ. Դռան կառավարությունը, մի կողմից, ռազմական ուժով հեղափոխությունը ճնշելու, մյուս կողմից էլ, օտար երկրներում գործող հեղափոխական կազմակերպությունների և եռյակ համաձայնության կառավարությունների պաշտոնատարների հետ հարաբերություններ մշակող հայ հեղափոխականներին հետապնդելու և ձերբակալելու պահանջ զգաց:

Հակառակ վերոհիշյալ երեք պետությունների մեղադրանքների, Օսմանյան կառավարության զսպումի գործողությունների ընթացքում ժողովրդական ամենահիսկական միջամտության և մասնակցության դեպք չի պատահել: Հայ հեղափոխականների բնակարաններում կատարված խուզարկությունների ժամանակ կանխանշված հեղափոխությունն ու գործողությունները հաստատող շատ կարևոր փաստաթղթեր ու հեղափոխական դրոշակներ են հայտնաբերվել:

Սրանից բացի, այս փաստաթղթերը հաստատում են, որ դրանց գործունեության կենտրոնները՝ Փարիզում, Լոնդոնում և Թիֆլիսում հիմնված հայ հեղափոխական կազմակերպությունները, հովանավորվում են ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարությունների կողմից:

Դարձյալ գավառներում կատարված խուզարկությունների ժամանակ շատ հայերի մոտ գտնվել են հազարավոր ռումբեր ու հրացաններ,

որոնք մատակարարված են Ռուսաստանի կողմից: Այս ձերբակալված հայերը, ինչպես նաև ֆրանսիացի, անգլիացի և ռուս պաշտոնյաների սադրանքով ու դրդումով զինակոչից խուսս տալուց հետո ժանդարմների վրա հարձակվողները, անշուշտ հանձնվելու էին համապատասխան դատարաններին:

Բ. Դռան կառավարությունն ունի վավերաթղթեր, որոնք ապացուցում են նշված շարժումները ֆրանսիական, անգլիական և ռուսական տերությունների հովանավորությամբ գործադրվելը և վերջին անգամ Կոստանցիայում ստեղծած հեղափոխական բոլոր տեսակի գործունեությունը վերջացնելը համարվեց պատրանք և որոշվեց հարմար առիթի դեպքում շարժումն առաջ տանել:

Բ. Դուռը, հասարակական կարծիքին տեղյակ պահելու համար, հարմար առիթով այս վավերաթղթերը պետք է հրատարակի իրենց բոլոր մանրամասնություններով:

Օսմանյան կառավարությունը հանրային անդորրությունը պահպանելու մտահոգությամբ և համաձայն օրենքի բացորոշ տրամադրությունների, շնորհիվ իր ձեռնարկած նախազգուշական միջոցների հայերի հեղափոխական շարժումները կարողացել է զսպել՝ առանց զանգվածային կոտորածի:

Եթե նկատի առնվի, որ բացի նշված հեղափոխական շարժումներին մասնակցած 2 345 հոգու ձերբակալությունից, խաղաղ և հոգու ամենայն անդորրությամբ իրենց գործերով զբաղվող և անվտանգ անդորրությամբ Պոլսում բնակվող 77 735 հայերին, ապա ակնհայտ է, որ կատարվածը արդյունք է նախազգուշական միջոցների գործադրման և բացահայտում է, որ հայերի նկատմամբ որևէ կանխամտածված շարժում գոյություն չունի:

Գալով որոշ հայերի տեղահանմանը, դրա պատճառն անմիջապես ռազմական գործողությունների գոտիներում այդ հայերի բնակված լինելն է կամ նրանց գոյությունն այդ շրջաններում, ինչը ազգային պաշտպանության առումով առաջացրել էր Բ. Դռան կառավարության մտահոգությունը և նրա մեջ իրավացիորեն կասկած էր արթնացրել:

Այդուհանդերձ Բ. Դուռը իր թե ցամաքային և թե ծովային սահմանների անվտանգության ապահովման համար անհրաժեշտ համարվող բոլոր միջոցառումների կիրառումը համարում է օրինական պարտականություն և որևէ այլ կառավարությանը հաշիվ տալ պարտավոր չէ:

Երբ ֆրանսիական և անգլիական ծովային ուժերի հրամանատարները ռմբակոծում էին Չանաքկալեի (Դարդանելի) թուրքական շրջիկ կամ ստացիոնար հիվանդանոցները, ռուսական կառավարությունը հայերի միջոցով Կարսի մերձակայքի հազարավոր խաղաղ մահմեդականների սրի էր քաշում և Կովկասում գերեվարված օսմանյան ղեկավարներին նույն այդ հայերի ձեռքով բնաջնջում էր, նրանց քաղցի ու ծարավի մատնելով անգթորեն սպանում էր, արդյո՞ք զարմանալի չէ, որ այժմ այդ պետությունները մարդկային զգացումից են ճառում:

Պատերազմող պետությունների հյուպատոսներին անելանելի կացության մատնողը ոչ թե Թուրքիան, այլ նույն ինքը՝ ռուսական կառավարությունն է:[1]

Վանի ինքնապաշտպանության առթիվ թուրքական կառավարության 1915 թ. հունիսի 16-ի հայտարարությունը

Ռուսաստանը հույսը կտրեց, որ կկարողանա պայքարել Թուրքիայի դեմ շիտակ, բացահայտ և ազնիվ միջոցներով, դիմեց այնպիսի օժանդակ քայլերի, որոնց անծանոթ է իրեն հարգող ժողովուրդների ռազմական պատմությունը: Ռուսաստանն օգտվեց հայ բնակչության մի մասի անգիտությունից ու միամտությունից և նրան սովորեցրեց ըմբոստանալու Օսմանյան կայսրության դեմ: Ռուսաստանը չամաչեց... այդ սադրիչ շարժման հետևանքով Բաշկալեում և Վանի շրջակայքում ստեղծված իրավիճակն աշխարհին ներկայացնել որպես զենքի հաղթանակի արդյունք: Օսմանյան կառավարությունը, կատարելով սուվերեն պետության իր պարտքը, ճնշել է այդ տրամադրությունը:[2]

Կ. Պոլսի կայազորի հրամանատարության 1915 թ. հունիսի 17-ի հայտարարությունը

Երեկ առավոտյան կայսերական հրամանագրի հիման վրա ռազմական նախարարության առջև գտնվող հրապարակում մահապատժի ենթարկվեցին 20 հայեր... Կ. Պոլսում ռազմական դատարանի դատավարության ընթացքում ապացուցվել է, որ այդ անձինք փորձ են արել կայս-

1. E. Uras The Armenians in history and the Armenian Question, Istanbul, 1988, p. 618-621. J. Lepsius Der Todesgang des Armenischn Volkes, s. 161-163, Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1091-1093:

2. "Wiener Zeitung", 16 հունիսի 1918 թ.:

ռության մի մասը դուրս բերելու թուրքական տիրապետության տակից անկախ Հայաստան ստեղծելու համար և այդ նպատակով թուրքական կառավարության դեմ մահափորձերի և ապստամբությունների սադրանք են նախապատրաստել, արտասահմանում, տարբեր վայրերում գաղտնի կամ հրապարակային համաժողովներ են անցկացրել, թե խոսքով և թե գործով քարոզչություն արել:[1]

Ներքին գործերի նախարարության անունից հայտարարություն, 1915 թ. հունիս, որ փակցված էր Սեբաստիայում պատերին

1.Բարձրագույն հրամանով Ջեզիրե և Դեր Զոր եք մեկնելու:

2.Անվտանգ եք գնալու ուղեկցորդների հսկողության տակ:

3.Ճանապարհին ձեզ հետ բան չի պատահի:

4.Այս տեղահանությունը պատերազմի պատճառով է:

5.Եթե ընդդիմանալու փորձ արվի, զենքի ուժով բնաջնջվելու եք:

6.Թաղ առ թաղ եք մեկնելու:

7.Գարագոլներին հայտնված է:

8. Կարող եք վարձել կառք, ձի, էշ: Չունեցողների գույքը տեղափոխելու համար կառավարությունն է կառք վարձելու:[2]

Մուսամների՝ Սեբաստիայի կուսակալ, հեռագիրը Ամասիայի ոստիկանապետ Քյոռ Նուրի էֆենդուն

Հայերին ուղարկեցինք կարճ ճանապարհով՝ շրջանցելով Եվդոկիան: Վիլայեթում տարագրությունն ավարտված է: Քշված և տարագրված անձանց թիվը վիլայեթում նախապես նշված էր 160 հազար: Սակայն այդ թվի մի մասը Կարահիսարի և Ամասիայի դեպքերի ընթացքում բնաջնջված և սպանված է: Այդ հաշվի առնելով, վիլայեթներից տարագրվածների այն թիվը, որ արձանագրված է տոմարի մեջ, կարելի է ընդունել:[3]

Ռապի բեյի ցուցմունքը ռազմական դատարանում

Նրանք, ովքեր հաստ պարաններով կապեցին հայերի ջարդած թևերը... բանտում հավաքել էին հայերի մատանիները, դրամները... Այդ թշվառներից խլեցին ֆեսերը, կոշիկները, զգեստների մի մասը և առա-

1. "Arbeiter Zeitung", Վիեննա, 18 հունիսի 1915 թ.:

2. Հ. Ղազարեան Յեղասպան թուրքը, էջ 94:

3. Ն. տ., էջ 107:

վոտ վաղ նրանց գրեթե մերկ բանտից հանեցին և, 300 հոգու թևերը կապած իրար, ուղարկեցին դեպի սպանդ:[1]

Երբ մութեսարիֆ Քեմալը հայերին զանգվածաբար ջարդելու համար դատարանի վճռով կախաղան էր հանվում, նա իր վայրագությունները ոչ թե ժխտեց, այլ հայտարարեց

Ես մի թուրք պաշտոնյա եմ, գործադրեցի ստացած հրամանը և իմ պարտականությունը կատարեցի բարեխղճորեն:[2]

Տրապիզոնի տների պատերին 1915 թ. հուլիսի 13-ին փակցված հրամանագրի տեքստը, որ տպվեց նաև «Տրապիզոնյա մեշվերեթ» պաշտոնաթերթում

Օսմանյան տարրերի մաս կազմող մեր հայ հայրենակիցները շատ տարիներ ի վեր դրսի թելադրանք հանդիսացող հոռի և կարգը խանգարող մի շարք գաղափարներ տարածելով, իրենց հանգստի և շահերի հետ միասին օսմանյան երկրի մյուս հայրենակիցների հանգիստն ու անդորրն էլ խանգարել են, մանավանդ հայ հայմայնքը նաև համարձակվել է միանալ մեր թշնամիներին: Թե երկրի անվտանգությունը, խաղաղությունը և անդորրությունը և թե հայ համայնքի գոյության տևականությունը և անվտանգությունը պահպանելու համար մեր պետությունը հարկադրված է արտակարգ միջոցներ ձեռնարկել և զոհողություն կատարելով՝ մինչև պատերազմի ավարտը հայերին բնակեցնել ու տեղավորել ներքին նահանգներում...

1.Բացառությամբ հիվանդներից, բոլոր հայերը այս տեղեկացումից հինգ օր անց ժանդարմների հսկողությամբ ըստ թաղերի ու գյուղերի հերթականությամբ և ամբողջականությամբ պարտավոր են հեռանալ (իրենց բնակավայրերից):

2.Թեև մեկնելիս հայերն ազատ են իրենց հետ տանելու շարժական ունեցվածք, սակայն արգելված է վաճառել անշարժ սեփականությունը և հողերը ու մնացած կահ-կարասին ու գույքը կամ դրանք ուրիշներին տալ: Որովհետև այս հեռանալը ժամանակավոր է... և շարժական ունեցվածքը, որ հետները տանել չեն կարող, պետք է դրվեն անվտանգ և ամուր

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 251-253:
2. «Ճակատամարտ», 23 մարտի 1919 թ.:

շենքերում և պահվեն կառավարության հսկողության ներքո: Հայերի վերադառնալուց հետո դրանք վերադարձվելու են նրանց: Այս հանձնարարականին հակառակվողները, հայերի շարժական և անշարժ ունեցվածքը գնողներն ու վաճառողները կամ պահպանության վերցնողները հանձնվելու են ռազմական դատարանին: Միայն թույլատրվում է բանակին անհրաժեշտ գույքերը վաճառել իշխանություններին:

3.Ճանապարհին հայերի հանգիստն ապահովելու, նրանց վրա հարձակումներ թույլ չտալու և նրանց անվտանգ ժամանակավոր բնակավայրեր հասցնելու միջոցները նախապատրաստված են:

4.Հայ համայնքի մեկ կամ մի քանի անդամների սեփականության, կյանքի կամ պատվի վրա հարձակումներ գործողների դեմ ուղեկցող զորախմբերը զենք են գործադրելու և նրանց ձերբակալելով հանձնելու են ռազմական դատարանին՝ մահվան դատապարտելու: Հայերի խաբեության զոհ լինելու հետևանքով են այս ցավալի միջոցները ձեռնարկված, որոնք մյուս տարրերի հետ ոչ մի կապ չունեն: Ուրիշ ազգության պատկանողները չեն կարող որևէ ձևով կամ եղանակով միջամտել այս խնդրին:

5.Հայերը պարտավոր են հպատակվել կառավարության այս որոշումներին: Եթե նրանք համաձայնության գան զինվորի կամ ժանդարմի վրա զենք գործադրելու, դրանք փոխադարձվելու են զենքի գործադրմամբ և նրանք մեռած վիճակում են բռնվելու: Նաև կառավարության որոշումներին հակառակվողները կամ մեկնել չցանկացողները և կամ որևէ տեղ թաքնվողները և նրանց իրենց տներում պահողները, կերակրողները և նրանց թաքնվելն ապահովող անձինք հանձնվելու են ռազմական ատյանին՝ մահապատժի դատապարտվելու:

6.Հայերը չեն կարող ունենալ սուր զենքեր և հրազեն՝ տներում կամ դրսում թաքցրած: Բոլոր տեսակի զենքերը՝ ատրճանակ, ռումբ կամ սուր, բոլորը պետք է հանձնվեն կառավարությանը: Այդ և այլ տեսակի զենքերը, որոնցից շատերի մասին կառավարությանը տեղյակ է պահված, ունենալն ուրանալու դեպքում, տերերը պատասխանատու են և խստորեն պատժվելու են:

7.Գյուղերում, թաղամասերում և ճանապարհներին կողոպուտ, հափշտակություն անողների, հայերի վրա հարձակում կամ բռնարարքներ կատարողների դեմ պահապան զինվորների և ժանդարմների կողմից զենք է գործադրվելու և թույլատրված ու հանձնարարված է նմաններին սպանել:

8.Օսմանյան բանկին պարտք ունեցողները այդ պարտքի փոխարեն կարող են ապրանք հանձնել որպես երաշխիք, միայն թե, եթե կառավարությունը հարկ համարի այդ գույքերը ստանալու հօգուտ զինվորական իշխանության՝ գինը վճարելու պայմանով: Պարտքի ստույգությունը պետք է հաստատվի կառավարության կողմից...

9.Մանր ու խոշոր անասունները, որոնք հնարավոր չի հետները տանել, գնվելու են բանակի համար:

10.Հայերի ճանապարհին ընկած նահիեների, կաղաների, լիվաների և վիլայեթների պաշտոնատարները տեղում օգնություն պետք է ցույց տան:[1]

15-րդ զորաբանակի փոխհրամանատար Շահաբեդդինի 1915 թ. հուլիսի 8-ի հեռագիրը

Պատիվ ունեմ հայտնելու, որ այս գիշեր 134 հայեր ուղարկվեցին իրենց աքսորավայրը:[2]

Յոզգաթի մութեսարիֆի Ջեմալի 1915 թ. հուլիսի 11-ի հեռագիրը

Երեկ երեկոյան ստացված հեռագրով Բողազլյանի կայմակամի փոխանորդը ինձ հայտնում է, որ փախստական հայերը հարձակվել են Մուսաղիդ, Կանլճա-Չիֆթլիկ և Կարա Բունար գյուղերի վրա, թե այնտեղ ավերումներ են կատարել և թե Բեգթաշի բնակիչները հետապնդել են նրանց: Նա ավելացնում է, որ ոստիկանություն է ուղարկված դեպքի վայրը: Տրամադրելի ուժերը միացել են կայմակամին, որը գտնվում է մի այլ վայրում, ինքն անձամբ է եղել գլխավոր կենտրոնում:

Այս գիշեր ստացված հեռագրով ինձ հայտնում են, թե աղմուկն անհիմն է: Ակթաղմատենի կայմակամը, որը վերադարձել է նույն շրջանի գյուղերից, ինձ հեռագրել է, որ ոստիկանության հատվածի հրամանատարի տեղեկագրած դեպքերը շատ չափազանցված են, և Դերե Կապլանջի պատահարը, որի մասին ասել են նույն գավառի կայմակամի փոխանորդին և ոստիկանական հատվածի հրամանատարի 1915 թ. հուլիսի 9-ի թվակիր հավաքական հեռագրում... սխալ է որակավորվում և կապված է մեկ կամ երկու փախստականների հետ, որոնք նշմարվել են նույն գավառի շուրջ դեգերելու ընթացքում...

1. Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 76-78:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ 3592:

(Տեղում հարցն ուսումնասիրած) Ահմեդ բեյը քիչ առաջ հեռախոսով ինձ հայտնեց, որ համաձայն բարձրացված աղմուկի 169 հոգի, որոնց հարցաքննության թղթածրարներն ուղարկում եմ Ձերդ գերազանցությանը, ձերբակալված լինելով Տերզիլի գյուղերում և շրջաններում, ոստիկանության ջոկատի հրամանատարի կողմից հարցաքննվելու համար, Սեբաստիա էին ուղարկվելու նույն նահանգի կուսակալի խնդրանքով: Երբ մեկնեցին, իրենց պատկանող բոլոր արժեքավոր առարկաները հետները տարան, և քանի որ գյուղերը դատարկված էին, լքյալ գույքերը կողոպտվեցին մնացած ժողովրդի կողմից: Նա (Ահմեդ բեյը) կարծում է, թե անհրաժեշտ է այնտեղ մի պաշտոնյա ուղարկել ամեն ինչ պարզորոշ քննելու համար: ...Իսկ կայմակամների վերջին հաղորդագրությունները մասամբ հերքում են նրանց նախապես հաղորդածները: Տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ գավառականների հայտնած տեղեկությունները բացարձակորեն վստահության արժանի չեն: ...Եթե քննությունը հանձնվի ոստիկանական ջոկատի հրամանատարին, որն ուղարկված է Բողազլյան Ակթաղմատից, այդ քննությունը, համաձայն Ահմեդ բեյի ասածներին, կպարզի, որ հանցավոր դեպքերը նրա հրամանատարության տակ եղած ոստիկանների գործն է:[1]

Ահմեդ բեյի 1915 թ. հուլիսի 11-ի հեռագիրը

Գավառում հասարակական կյանքը կատարյալ է: Խնդիրը հաստատ թյուրիմացության՝ Տերզիլի պատահարի հետևանք է: Այս դեպքը ձեզ ծանոթ է: Իսկ ծանոթ չէ այն հրամանը, որ այս մասին տրված է: Տերզիլի դեպքից ի վեր ոչ միայն ժանդարմներն օգտվեցին, այլ բնակչությունը (մահմեդական) կողոպուտի դիմեց: Այս իրողություններին հանդիման նրանք, ովքեր խուճապահար լեռները փախան, բղավեցին, թե հրոսակներ են գալիս: Այս է, որ հուզեց ժողովրդին: Գավառի ներսում ոչ մեկի քթից ոչ մի կաթիլ արյուն չի թափվել:[2]

Հինգերորդ բանակի փոխհրամանատար միրալա Խալիլ Ռեջայի 1915 թ. հուլիսի 15-ի հեռագիրը բանակի զինվորագրության հանձնաժողովին

Հաղորդագրություն

Հայերի շարժումների և ըմբոստ հարձակումների առնչությամբ մինչև

1. Դիվան Երուսաղեմի, թիվ 3597-3598:

2. Դիվան Երուսաղեմի, թիվ 3599:

օրս տեղի ունեցած և հետագայում տեղի ունենալիք դեպքերը օր օրի անքերի և մանրամասն արձանագրվելու են հատուկ տետրակի մեջ և այդ տետրակից մի օրինակ ամեն ամսի վերջին ուղարկվելու է այստեղ:[1]

Խալիլ Ռեջայի 1915 թ. հուլիսի 15-ի հեռագիրը Կեսարիայի զորամասի փոխհրամանատարին

Ընթացիկ 14 հուլիսի 1915 թ. ձեր ձեռագրից հայտնի դարձավ, որ ձեր նախորդ հաղորդագրությունները չափազանցված են: Անհրաժեշտ է այսուհետև չհիմնվել կայմակամների տեղեկությունների վրա և հատուկ միջոցների չդիմել՝ մինչև հրամանատարներից ստույգ տեղեկություններ չստանալը... Սակայն նաև հնարավոր չէ ուրանալ մի քանի հայ հրոսակների գոյությունը: Խնդրում եմ, եռանդուն ու շուտափույթ բնաջնջեք այդ հրոսակներին և ինձ տեղյակ պահեք նրանց թիվը, նրանցից գրավված կամ գրավվելիք զենքերի քանակը, ինչպես նաև նրանց պատճառած վնասների չափը...

Յոզղաթ գավառի և Չորում գավառին ենթակա գավառակներում մնացած կասկածելի և վտանգավոր համարվող հայերը, ինչպես կատարվեց Կեսարիայում մնացած հայերի հետ, որոնք ուղարկվեցին իրենց աքսորավայրերը, նույնպիսի խոհեմությամբ և կարգապահությամբ Կեսարիայի ուղիով նրանց ևս իրենց աքսորավայրը ուղարկել և զգույշ լինել, որ անպատեհություններ չառաջանան:[2]

Մուսթաֆայի՝ Բողազլյանի կայքի պետ, 1915 թ. հուլիսի 14-ի ծածկագրից

Բարձրագույն իշխանությանը հանձնելու նպատակով գավառակի կառավարությունից խնդրված էր հայերի անուններն ու թիվը պարունակող տետրակը... սակայն մինչև օրս այդ տետրակը տեղ չի հասել և... կայմակամն արդեն բերանացի հայտնել է, թե ավանում ու մերձակայքում 1 500 հայեր ջարդված են:[3]

ՆԳ նախարարության 1915 թ. հուլիսի 1-ի ծածկագիրը

Որոշ հայեր անհատապես ու խմբովին ընդունում են իսլամ, որպեսզի չթողնեն իրենց հայրենիքը: Դրանց նույնպես հարկ է բռնագաղթեցնել:[4]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ 3603:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ 3611:
3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 511 և Մ 544:
4. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 286:

ՆԳ նախարարության 1915 թ. հուլիսի 15-ի ծածկագիր հրահանգ

Զորի սանջակ այլևս ոչ ոքի չուղարկել, քանի որ (հայերն) արդեն կազմում են ընդհանուր բնակչության 10%-ից ավելին:[1]

Սիմեոն Ռիզայի ճառը խորհրդարանում

Սա բացահայտ բռնություն է, մարդկանց ծոծրակից բռնում, քշում են գյուղերը, ապա նրանց ունեցվածքը վարի տալիս: Սա աներևակայելի է: Սրա հետ չի կարող հաշտվել օսմանցու ոչ խիղճը և ոչ էլ օրենքը... Հայերի ունեցվածքի մի մասն արդեն թալանված է...[2]

Բեռլինի թուրքական դեսպանության ներկայացուցչի հայտարարությունը

Օսմանյան կառավարությունը ցավում է Հայաստանում տեղի ունեցած դեպքերի համար, սակայն չի ընդունում դրանց պատասխանատվությունը, քանի որ հայերի անհավատարիմ գործողությունները պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ պատճառ են դարձել հակահայկական խռովությունների: Հավատալով, որ Ռուսաստանը կհաղթի պատերազմում՝ հայերը գործուն օգնություն են ցուցաբերում Թուրքիայի թշնամիներին: Հենվելով ռուսների վրա՝ նրանք ջոկատներ են կազմել և ձեռնարկել մահմեդականների ջարդեր: Վանի գավառում բոլոր մահմեդականները սպանվել են, և սպանությունները շարունակվել են մինչև թուրքական կանոնավոր բանակի կողմից կարգ ու կանոնի հաստատումը: Թուրքական կառավարությունը չէր սպասում, որ հայերը կորդեգրեն այդ դիրքը, քանի որ ինքը միշտ այն կարծիքին է եղել, որ Հայաստանը եղբայր երկիր է: Հայերը համագործակցել են երիտթուրքական շարժմանը, որը ոչնչացրել է հին կարգերը. դրա համար նրանք վարձատրվել են: Հայերը մեծ սխալ կատարեցին, երբ բացահայտորեն դաշնակցեցին Ռուսաստանի հետ և այժմ պետք է կրեն դրա հետևանքները:[3]

1. **Y. H. Bayur** Turk Inkilabi tarihi. Kisim III, s. 46-49.
2. Ն. տ., էջ 48-49
3. «Էլ Դիա», 18 հոկտեմբերի 1918 թ.:

Երիտթուրքերի Կ. Պոլսի կենտրոնի խուզարկության ժամանակ հայտնաբերված հեռագրերից մի քանիսը

Թալեաթի ծածկագիրը Մալաթիայի երիտթուրքական ակումբին.

Ձեր գավառն ուղարկված և այդտեղ կուտակված հայերին բնաջնջեք՝ բարոյական և նյութական ողջ պատասխանատվությունն իմ վրա լինելու պայմանով:[1]

Բ. Շաքիրի և Նազիմի հեռագիրը

Կետ առ կետ կատարեք հայերին մեռցնելու մասին ձեզ տրված հրամանը:[2]

Թալեաթի շրջաբերականը

Առանց վարանման ու գութի բնաջնջեք մեկ ամսականից մինչև 90 տարեկան հայերին, միայն թե ոչ քաղաքում և ժողովրդի աչքի առաջ:[3]

Բեհաեդդին Շաքիրի չափածո գրված հրահանգը

Թող զենք չպայթի,
Թող զինվորը չանի,
Թող հայ չմնա,
Մեծերին մորթել,
Գեղուհիներին ընտրել,
Մյուսներին տարագրել:[4]

Շահապեդդինի հեռագիրը Կեսարիայի 5-րդ բանակի զինվորագրության հանձնաժողովին

Բողազլյան գավառում որևէ ըմբոստական շարժում հայերի կողմից չկա: Այս գավառակում առաջ եկած ցավալի երևույթներից է սաստիկ կոդոպուտը, որ տիրում է հայկական գյուղերում և որը կատարում են տեղի

1. «Ժամանակ», 11 դեկտեմբերի 1918 թ.:
2. Ն. տ.:
3."Armenien Review", Vol. XXVII, N I, 1974, p. 26.
4. «Ժամանակ», 11 դեկտեմբերի 1918 թ.: **Ա. Քոչեան** Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, էջ 63:

ժանդարմների լրացուցիչ անձինք, չերքեզ հեծյալներն ու իսլամական բազմաթիվ ամբոխը:[1]

Սասեղդին՝ Կոնիայի ոստիկանապետ

Երիտասարդ թուրքերի կենտկոմի որոշումով օսմանյան կառավարությունը հրաման արձակեց, և պառլամենտը վավերացրեց որոշումը, որ վերապրող հայերը անապատ պիտի ուղարկվեն՝ այնտեղ վրանների տակ ապրելու համար:

Մուսրաֆայի՝ Բողազլյան քաղաքի պարեկ, գնդապետ, հեռագիրը Կեսարիայի 15-րդ զորաբաժնի հրամանատար Շահապեդդին բեյի, 24 հուլիսի, 1915:

Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի հրամանով մի անգամ 300, մի այլ անգամ 1,5 հազար և 3,6 հազար հայեր կոտորվել են:[2]

Շահապեդդինի թիվ 207 հեռագիրը 5-րդ բանակի հրամանատար Խալիլին, որը վերջինս ուղարկեց Էնվերին

Անկարայի զորաբանակի հրամանատարությանը.

Պատիվ ունեմ հայտնելու, որ Բողազլյանի կայմակամի հրամանով մինչև հիմա Բողազլյանի և շրջակա գյուղերի հայերից 2 660 հոգի կոտորված են զինվորական կայքի հրամանատարի հաղորդագրության համաձայն:[3]

Մուսրաֆայի՝ Բողազլյանի զորանոցի պետ, 1915 թ. հուլիսի 22-ի հեռագիրը

Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ այս գիշեր գյուղերում և ավաններում բռնված կասկածելի հայերից 14 հոգի ուղարկվեցին իրենց աքսորավայրերը:[4]

---

1. **Գրիկեր** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նյու Յորք, 1980, էջ 88-89:

2. Ն. տ., էջ 327-366:

3. Դիվան Երուսաղեմի, թիվ 541, 23 հուլիսի 1915 թ.:

4. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 511:

Նույն օրը նա պալիս է երկրորդ հեռագիրը

Պատիվ ունեմ հայտնելու, որ վերոհիշյալ հայերը կասկածելի լինելու համար ժանդարմական տասնապետ Հուսեյին Ավնիի հոգածությամբ ջարդվել են:[1]

Սամիհ Հաֆիզ Թանսուն՝ թուրք գրող

Յոզղաթի մութեսարիֆ Քեմալ բեյը ներքին գործերի նախարարությունից հետևյալ ծածկագիրը ստացավ. «24 ժամվա ընթացքում տարագրեք կազայումդ եղած հայերին: Նրանց բնակատեղին պետք է լինի Սիրիան: Հայտնեք, հենց որ ստանաք ծածկագիրը»:[2]

Բեհաեդդին Շաքիրի հեռագիրը Անթալիայի մութեսարիֆին

Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սըվազի, Տրապիզոնի շրջանում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և Զորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում:[3]

ՆԳ նախարարության հուլիսի 30-ի ծածկագիրը

Իսլամացված, ամուսնացած կամ վստահելի անձանց խնամքի, մարզվելու կամ ուսման նպատակով հանձնված հայ մանուկների անձնական գույքը պետք է նրանց թողնել:[4]

Զիա Մուֆթի Զաղեն՝ թուրքական կուսակցությունների ականավոր ջատագովը, որպես արդարացում օսմանյան կառավարության հանցավոր գործողությունների, հարց է տալիս. «Որտե՞ղ է Հայաստանը»

Բրիտանական նավատորմիղի ժամանելը Կոստանդնուպոլիս քաջալերեց Թուրքիային փոխելու իր մտադրությունը և Սան Ստեֆանոյում բանակցությունների ժամանակ մերժեց ընդունել Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի առաջարկած պայմանագիրը՝ Հայաստանի ինքնավար պետություն ստեղծելու մասին: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի «վարչական ինքնավարություն» դարձվածքը փոխարինվեց

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 511:
2. **Tansu Samih Hafez** Bugunumuz perdenin dibinde, Istanbul, 1964, s. 297.
3. "Takvim-i Vekai", 1919, թիվ 3540 կամ Դիվան Երուսաղեմի, թիվ 255:
4. «Հասկ», ապրիլ-մայիս 1985 թ.:

«ռեֆորմներ և բարելավումներ» դարձվածքով, որի իրականացումը Ռուսաստանը պիտի երաշխավորեր գրավելով Թուրքիայի այդ տարածքները: Բեռլինի կոնգրեսում, Մեծ Բրիտանիայի ջանքերով, պայմանագրի 61-րդ հոդվածը փոխարինվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով: Դիվանագիտական բանակցությունները Սան Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում անհերքելի ապացույցներ են թուրքական կայսրությունում Հայաստանի գոյության վերաբերյալ: Թուրքական կայսրության բնակչությունը կազմում է 32 000 000, որից 1 100 000 հայ են: Հայերն ունեն 785 դպրոց, 82 000 ուսանող, մինչդեռ թուրքերն ունեն հազիվ 150 դպրոց, 17 000 ուսանող:

Մարսել Լիարթը արձանագրում է հետևյալ փաստերը: Սըվազի 160 արդյունահանողներից 141-ը հայեր են, 13 թուրք և 12 հույն: 150 արտահանող-առևտրականներից 127-ը հայեր են, 23-ը՝ թուրք, 37 բանկիրներից 32-ը հայեր են, 5-ը՝ թուրք: 9 800 խանութպաններից և արհեստավորներից միայն 2 500 են թուրք: 153 ֆաբրիկաներից և ջրաղացներից 133-ը պատկանում են հայերին, 20-ը՝ թուրքերին:

Թուրքերը սերում են Կենտրոնական Ասիայում գտնվող թուրանյան ցեղից: Սիրիայում, Միջագետքում, Բյուզանդիայում, Արաբիայում, Եգիպտոսում, Հայաստանում և Հունաստանում նրանց հայտնվելով քաղաքակրթությունը այս երկրներից չքացավ:

Վիկտոր Հյուգոն թուրքերի վնասակար ազդեցությունը նկարագրել է այսպես. «Թուրքերը կտրում-անցնում էին ավերելով ու սուգ տարածելով»:

Բոլոր կողմերից շրջապատված լինելով թուրքական կործանարար հորդաներով, հայերը միշտ էլ համարվել են արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներ: Առաջինը՝ իրենց քրիստոնեությամբ, երկրորդը՝ կուլտուրայով: Հայ ճարտարապետ Սինանը նախագծել և կառուցել է Ադրիանապոլի մզկիթը և Կոստանդնուպոլսի Սուլեյման նշանավոր մզկիթը:

Հայաստանը թուրքերին պահպանող ուժն է: Այս փաստից ելնելով արդյոք տեղին չէ՞ ասել Զիա Մուֆտիին՝ որտե՞ղ է Թուրքիան:

Նա կարծում է, որ եթե Հայաստանը բաժանված է երեք պետությունների՝ Պարսկաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի միջև, չի կարող երկար ժամանակ գոյություն ունենալ: Բայց Լեհաստանը նույնպես բաժանված է երեք պետությունների միջև: Մենք ասո՞ւմ ենք՝ որտե՞ղ է Լեհաստանը:

Հալեպի, Ադանայի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի հայաբնակ գավառները կազմում են Տաճկահայաստանը: Թուրքական կառավարությունը ընդունել էր Հայաստանի գոյությունը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Երբ թուրքական բանակները ջախջախվեցին, սուլթանը և նրա խորհրդատուները հասկացան, որ հաղթողը՝ Ռուսաստանը, կարող է պահանջել Էրզրումի, Դիարբեքիրի ու Սըվազի գավառները, որոնք անեքսիայի էին ենթարկվել նրա կողմից: Ուստի հայերին ստիպեցին, որ նրանք հայաբնակ գավառների համար պահանջեն ավտոնոմիա օսմանյան գերիշխանության ներքո:[1]

1915 թ. հուլիսի 20-ին Կեսարիայում փակցվեցին հետևյալ բովանդակությամբ հայտարարություններ

1.Կեսարիայի նահանգի բոլոր հայերը փոխադրվում են Հալեպ:

2.Հայ կաթոլիկները բացառություն են կազմում:

3.Մեկնողների խանութները կառավարության կողմից փակվելու և կնքվելու են:

4.Կահկարասիների վաճառքն արգելվում է: Գնորդն ու վաճառողը կհանձնվեն ռազմական դատարան:

5.Մեկնող հայերը իրենց ունեցած դրամը հանձնում են դրամատուն կամ փոխանցում այլ վայրերում գտնվող իրենց ազգականներին:

6. Յուրաքանչյուրը իր հետ տանելիք դրամը, խանութում ու տանը թողած գույքի արժեքը և կալվածքների տեղն ու սահմանը որոշող ցուցակը պիտի հանձնի կառավարությանը:

7. 10 օրվա ընթացքում հավաքագրված քարավանները պիտի մեկնեն Նիկտեի ճամփով:

8.Կառապաններն ու ջորեպանները կառավարության որոշած գներով վարձով պետք է տան իրենց փոխադրամիջոցները:

9.Ով նշված ժամկետին պատրաստ չլինի, նրան կառավարությունը հետիոտն է քշելու:[2]

Ադանայի վալիի (1915 թ. ամռան) հեռագիրը ՆԳ նախարարությանը՝ վիլայեթից տարագրված հայերի թվի վերաբերյալ

Ատանայի սանջակի Մերքեզի կազայից տարագրված է 14 216 հայ, Կարա Իսալու կազայից՝ 33, Ջիհան կազայից՝ 318: Մերսինի սանջակի կազայից՝ 756, Տարսուսից՝ 840, ընդամենը՝ 1 596:

1. «New York Times», 28 հոկտեմբերի 1915:

2. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 257:

Ջեբել Բերեկետի սանջակի՝
Կենտրոնական կազայից- 753
Իսլահիեից- 496
Դեորտ Յոլից- 7 168
Բախչեից- 3 092
Խասայից- 766
Ընդամենը՝ 12 275

Իշիլի սանջակից- 306
Մութ կազայից- 0
Գիբլանրից - 7
Անամուրից - 0
Ընդամենը՝ 313

Կոզանի սանջակից՝
Սիսի մերկեզի կազայից - 3 565
Ֆերկեից- 2 217
Կարս (Բազար)-ից - 1077
Հաճընից - 10 523
Ընդամենը՝ 17 382

...Ադանայում գաղթը նոր է սկսված, դրա համար էլ տվյալները թերի են... տարագրվածներն ուղարկված են Օսմանիեի և Ռաջայի ճանապարհով դեպի Հալեպ:[1]

ՆԳ նախարարության 1915 թ. հուլիսի 29-ի հեռագրով պահանջվում էր հայերից մաքրված շրջանները բնակվելու համար մուհաջիրներ ուղարկել

Ադանայի վիլայեթից ուզում են 600 ընտանիք:
Էրզրումի վիլայեթից՝... 12 000 ընտանիք:
Բիթլիսի վիլայեթից՝ ...(թիվը նշված չէ):
Դիարբեքիրի վիլայեթից՝ 10 000 ընտանիք:

1. **Ա. Փափազյան** Արաբական կախաղաններն ու հայկական ջարդերը, Հալեպ, 1992, էջ 168:

Սըվազի վիլայեթից՝ 5 000 ընտանիք:
Տրապիզոնի վիլայեթից՝... (թիվը նշված չէ):
Խարբերդի վիլայեթից՝ 2000 ընտանիք:
Իզմիթի սանջակից՝ 600 ընտանիք:
Կեսարիայի սանջակից՝ 2 000 ընտանիք:
Կարասիի սանջակից՝ 1 400 ընտանիք:
Մարաշի սանջակից՝ 2 000 ընտանիք:
Անկարա-Կըրշեհիրից՝ 150 ընտանիք:
Գումարը 35 750 ընտանիք (մոտ 220 000 մարդ):[1]

Ծածկագիր հեռագիր Խարբերդից 1916 թ. օգոստոսի 25-ին

Խարբերդի վիլայեթի կենտրոնական սանջակում 5 000 գաղթական կա: 3 000-ը քրդեր են: Մինչև Ձեր նախարարության հրամանները ստանալը նրանց կեսին տեղավորել շրջակա գյուղերում: Մյուսները, Սեբաստիայի և Դիարբեքիրի ճանապարհով ուղարկված են նշանակված վայրերը:[2]

Աբդուլահ Նուրիի՝ Հալեպի գաղթականության գրասենյակի կենտրոնի, հեռագրերը

Հոկտեմբերի 12-ի ծածկագիրը Դիարբեքիրից. 3 533 գաղթականներից 200-ը հասան Ռաս ուլ Այն: Կենտրոնից (Դիարբեքիր) Սևերեկի ճանապարհով ուղարկված է 1 139-ը: Հայդարանցի աշիրեթից 1 200 հոգի Կենտրոն հասան: Արձանագրվածը կատարվում է:[3]

Հոկտեմբերի 20-ի ծածկագիրը. Այս առավոտ կենտրոնից դեպի Ուրֆա ուղարկվեց 1 520 հոգի:

Սիլվանում բնակվող Հայդարանլը, Ջիբրանլը և Շուլեի աշիրեթներն ուղարկված են դեպի Խառան: Նրանց պետերն իրենց ընտանիքներով բնակեցվելու են Ուրֆայում:

Հոկտեմբերի 25-ի ծածկագիրը. Սիլվանում ջիբրանցի 3 000 հոգի կա: Որտեղի՞ց են եկել:

1. Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 206:
2. Ն. տ.:
3. Ն. տ.:

Հոկտեմբերի երկրորդ կեսին Ռաս ուլ Այնից 2 615 քուրդ մուհաջիրներ 1 554 ընտանի կենդանիներով ուղարկված են Թել Աբիադ, որտեղ այժմ նրանց թիվը հասել է 4 487-ի:

Ուրֆա ուղարկեցինք (քրդեր) 6 207:

Խարբերդ՝ 1 974, Սիլվան՝ 1 915, Սևերեկ՝ 3 592, Մարդին՝ 1 257:

Հոկտեմբերի 31-ի ծածկագիրը. Ուրֆա հասածների կեսը (մեծ մասը քրդեր) տներում, իսկ մնացածները վրանների տակ են տեղավորվել:

Սավուրից Թել Էրմենի ճանապարհով 6 000 հոգի (քուրդ) ուղարկվեցին դեպի Ռաս ուլ Այն:

Դեկտեմբերի 10-ի ծածկագիրը. Վան, Բիթլիս, Էրզրում վիլայեթներից և շրջաններից սկսած 1915 թվի հուլիսից այս նահանգ (Դիարբեքիր) մտել են 158 418 հոգի (հայեր): Սրանցից 46 003-ն ուղարկված են:[1]

Խալիլ Ռեջայի 1915 թ. օգոստոսի 10-ի հեռագիրը

Պատիվ ունեմ տեղյակ պահելու, որ զորակոչից մինչև օրս նահանգի ներսում հայերը չեն կատարել որևէ նշանակալից եղեռնափորձ:[2]

Տերզիլիի փղամարդկանց գյուղից դուրս կոտորելուց հետո թուրքերը նրանց հագուստները հավաքած վերադառնում են գյուղ և հայ կանանց ասում

Ահա տեսեք, ձեր ամուսիններին ու եղբայրներին սպանեցինք: Եկեք իսլամություն ընդունեք, ձեզ ամուսին տանք և փոխվեք, այլապես դուք էլ նրանց նման սպանվելու եք:[3]

Խուլուսի բեյը Բուրուն Կշլայի գյուղապետին

Եթե իսլամություն ընդունեք և ճշմարիտ կրոնին պատկանեք, ձեզնից որևէ մեկի գլխից մազ չի պակասի, եթե չընդունեք, պատժվելու եք:[4]

---

1. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 209:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Հ 630-631:
3. Նուբարյան գրադարան (Փարիզ), ձեռագիր, Յոգղաթ, էջ 25:
4. Ն. տ., էջ 19:

Աբդի բեյի՝ Անկարայի կուսակալի տեղակալ, հեռագիրը Յոզղաթի մութեսարիֆ Ջեմալ բեյին (18 հուլիսի, 1915 թ.)

Ձեր գավառում բնակվող հայերից կոմիտեներին պատկանողների կամ այդպիսին կարծվածների՝ մասնավորապես ուսուցիչների, դեղագործների, բժիշկների, կրոնավորների, վաճառականների, փաստաբանների, ընդհանուր գաղափարներ տարածողների ներկայությունը անվտանգության և երկրի ապագա փրկության համար վնասակար ու վտանգավոր լինելով՝ խնդրում եմ ձերբակալել տաք նման անհատներին և նրանց հսկողության տակ ուղարկեք Ձորի կողմերը, որը հատուկ հատկացված է նման մարդկանց համար:[1]

Շահաբեդդինի 1915 թ. հուլիսի 27-ի հեռագիրը 5-րդ բանակի հրամանատարությանը

Պատիվ ունեմ հայտնելու, որ Յոզղաթի զինվորագրության բաժնի պետի հաղորդագրություններով 472 հոգուց բաղկացած հայերի առաջին քարավանը առաջնորդի, քահանաների և երևելիների գլխավորությամբ ուղարկվեցին երեկ կեսօրից առաջ Յոզղաթ-Ձիլե ճանապարհով երջանիկ պայմաններում:[2]

Ջեմալի՝ Յոզղաթի մութեսարիֆ, 1915 թ. հուլիսի 15-ի հեռագիրը Անկարայի կուսակալությանը

Ձերդ գերազանցության հրամաններին համաձայն ձեռնարկվեցին անհրաժեշտ միջոցներ տնտեսական ճյուղի պաշտոնյաների հանդեպ: Ձերդ գերազանցությունից խնդրում եմ, որ բարեհաճի նույնիմաստ հրամաններ տալ նաև... նախաքննության ատյանում, լեգեոնում, ծխախոտի տեսչությունում, երկրագործական դրամատանը պաշտոնավարող հայերի հանդեպ և ինձ տեղյակ պահել, թե հարմար է նման միջոցներ ձեռնարկել այն հայերի հանդեպ, որոնք անդամ են քաղաքապետության վարչական խորհուրդների և հանձնաժողովների, ինչպես նաև բռնագրավման հանձնաժողովների:[3]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Հ 612:
2. Ն. տ., թիվ Հ 618:
3. Ն. տ., թիվ հ 613:

Անկարայի վալի Աբդֆը նույն օրը պատասխանեց

Ուղարկեք նախաքննիչ և վերաքննիչ ատյանների անդամ հայերի անունները: Այն հայերի, որոնք վարչական և քաղաքապետական խորհուրդների անդամ են և որոնց սահմանված չէ աքսորել, պետք է շարունակեն մնալ իրենց պաշտոններում: Մյուս հանձնաժողովներում պաշտոնավարող հայերի պաշտոններին վերջ է տրված:[1]

Կրոնափոխության վերաբերյալ ՆԳ նախարարության ցեղախմբերի և գաղթականների տեղավորման հանձնաժողովի թիվ 61/666 հրահանգը (26 նոյեմբերի, 1915 թ.)՝ ստորագրված Թալեաթի կողմից

Հոդ. 1. Ընդունվում է իրենց բնակավայրերում մնացած, չտարագրված հայերի հավատափոխությունը:

Հոդ. 2. Նախապես կընդունվի նրանց հավատափոխությունը, ովքեր տարագրության ժամանակ հատուկ հրամանով ճանապարհի կեսին են թողնվել և ուղարկված են իրենց տները ու կամ որևէ այլ տեղ:

Հոդ. 3. Այն հայերը, որոնց հավատափոխությունը ընդունված է համաձայն վերը նշված պայմանների, պետք է ստանան իրենց գույքը, իսկ եթե վաճառված է՝ դրանց արժեքը:

Հոդ. 4. Նպատակահարմար է համարվել, որ տարագրության ընթացքում տեղում մահմեդականների հետ ամուսնացած կանանց և աղջիկներին տներ տրվեն լքյալ շենքերից:

Հոդ. 5. Երբ գավառների, գյուղերի և թաղերի բնակիչները անհատ կամ զանգվածաբար իսլամանալու խնդրանք ներկայացնեն, պետք է հավատափոխության ձևակերպումներ կատարվեն, նրանց՝ գյուղերի վրա բաժանելուց հետո, պայմանով, որ հայերի թիվը տվյալ վայրի իսլամ բնակչության թվի համեմատությամբ չանցն 5%-ից:

Հոդ. 6. Եթե որոշակի տեղերում մնալու թույլտվություն ստացած երեխաներին պատկանող ունեցվածքի վաճառքից ստացվածն ամբողջությամբ կամ մասամբ հատկացված է նրանց պարտքերի մարմանը, դրանց դիմաց այդ երեխաներին պետք է տրվի պետության անունով գրանցված լքյալ գույքերից որևէ բան:[2]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Հ 614:

2. **Գրիկեր** Եոզդատի հայասպանութեան վավերագրական պատմութիւնը, էջ 327-366:

Էնվերը Լեփսիուսին (10-ը օգոստոսի 1915 թ.)

Բ. Դուռը թույլ չի տա նրան կամ որևէ օտարերկրացու հայ տարագիրներին օգնելու որևէ ծրագիր իրականացնելու... հակահայկական միջոցառումները շարունակվելու են... ներկայումս հայերին պետք է վերջ տալ:[1]

Թալեաթը, երբ հայերը փիրացան Վանին

Այս իժերը կրկին գլուխ են բարձրացնում: Սրանց հաշիվը հարկ է վերջնականապես մաքրել:

Հինգերորդ բանակի փոխհրամանատարության 1915 թ. օգոստոսի 11-ի հեռագիրը

(Բանակի կարիքների համար հայերի վաճառատներից ու մթերանոցներից ուղարկել) կաշիի տեսակներ, գամ, սանձ, կտավի տեսակներ, վրանոներ, հագուստներ ու կերպասներ, ցորեն, գարի, ալյուր, լոբի, ոսպ, բրինձ, շաքար, ձավար, կազ, ոչխար, այծ, արջառ, բեռան կենդանիներ, բժշկական իրեղեն, կապար, երկաթ, զինուորական շինութեաց համար զանազան ապրանքներ, փայտ, ածուխ, օճառ և այլ բազմատեսակ ինչքեր:

Օսմանյան կառավարության 1915 թ. օգոստոսի 27-ի հայտարարությունը

Ամբողջ հայ ազգաբնակչությունը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, լիակատար անվտանգության պայմաններում վայելում են իշխանությունների պաշտպանությունը: Եղել են մի քանի մեղավորներ, որոնք դատապարտվել են օրինական կերպով ստեղծված դատարանների կողմից:[2]

Թալեաթը Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին

Խռովությունների (հայերի) ժամանակ մի քանի հարյուր հազար մարդ է սպանվել, բայց ոչ միայն հայեր, այլև՝ թուրքեր...

(Հետայսու) թուրքական կառավարությունը կսահմանափակվի միայն մեղավորների դեմ միջոցներ ձեռնարկելով:[3]

1. J. Lepsius Deutschland und Armenien. թիվ 13:
2. Zanne Armenien, munchen, 1977, s. 163.
3. Wien HHSFA PA XII Pera, 2 mai, 1915, N 352.

ՆԳ նախարարության 1915 թ. օգոստոսի 27-ի հեռագիրը

3-րդ, 4-րդ, 6-րդ բանակներին տրամադրել հայերի ապրանքներից:

Սեպտեմբերի 14-ի հեռագիրը. «Հայերուն դպրոցները յանձնել թուրք կրթական վարչութիւններուն եւ մուհաճիրներուն»:

Թալեաթը Հոհենլոհենին (22 օգոստոսի 1915 թ.)

Այլևս Հայկական հարց գոյություն չունի:[1]

Կ. Պոլսի ռազմական դատարանի 1915 թ. օգոստոսի 11-ի հաղորդագրությունը

Պողոս Նուբար փաշային 10 օրվա ժամկետ է տրվել, որպեսզի դատարան ներկայանա: Պ. Նուբար փաշան... մեղադրվում է, որ օգտվելով ռազմական վիճակից՝ Եռյակ համաձայնության հետ գործարքի մեջ է մտել կայսերության արևելյան նահանգներից անկախ Հայաստան ստեղծելու համար: Նաև այն բանում, որ... հայերի մեջ հանգանակություններ կազմակերպել, որոնց արդյունքը օգտագործել է հայ կամավորներ հավաքագրելու համար...[2]

Թուրքական «Միլլի» հեռագրական գործակալության հաղորդագրությունը

Ուրֆայում խռովությանը գոհացուցիչ կերպով վերջ է դրված, պարագլուխները պատժված են, անվտանգությունը քաղաքում վերականգնված է:[3]

Հասան Ֆեհմին՝ Օսմանյան կայսրության ՆԳ նախարարության պատասխանատու աշխատող, գերմանացի լրագրող Ֆոն Տիցկային

(Թալեաթն իրեն հորդորել է)՝ Հայերը վրիժառու ազգ են, նրանցից թեկուզ մեկին չթողնենք՝ վրեժ առնի:[4]

---

1. «Արազ», 1940 թ., թիվ 749, Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանի 1915 թ. սեպտեմբերի 4-ի հեռագիրը Բեռլին:
2. "Neues Wienet Tagblatt", 14 օգոստոսի 1915 թ.:
3. "Arbeiter Zeitung, Վիեննա, 11 նոյեմբերի 1915 թ.:
4. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 259:

Ջեմալ փաշայի և Սիսի կաթողիկոս Սահակ 2-րդի երկխոսությունը

Սահակ 2-րդ- Ի՞նչ պիտի ըլլա ժողովուրդիս վիճակը:

Ջեմալ փաշա- Վեհափառ, ձեր ապահովութիւնը իմ պատասխանատվութեան տակ է:

Սահակ 2-րդ- Իմ ապահովութիւնս իմ ժողովրդի ապահովութիւնն է:

Ջեմալ փաշա- Ըսեք Վեհափառին, որ իր հետ քաղաքականութեան մասին չեմ ուզեր խոսիլ:[1]

Նախագահ Ջ. Գյուրսել

Պետք է իմանալ, որ հայկական ջարդ գոյություն չունի: Հայերն անսպասելի պահին մեր բանակի թիկունքին խփեցին, ճանապարհները կտրեցին, դժվարացրին հաղորդակցությունն ու բանակի մատակարարումը: Ոչ թե թուրքական, այլ որևէ ուրիշ բանակ այդ պայմաններում ստիպված էր դիմադրել:[2]

Վարչապետ Սուադ Հայրի Յուրգյուբլուն հայտարարեց

Մի շարք օտար պետություններ ցանկանում են հայերին գործիք դարձնել իրենց քաղաքական ձգտումներին... Գրգռիչների նպատակն է պատմական իրողությունները ենթագրավորելով՝ թուրքական հանրապետության հետ որևէ առնչություն չունեցող մի շարք դեպքեր հիսուն տարի անց վերարծարծել և դրանք շահագործել քաղաքական որոշակի նպատակների համար:

...Շահագրգռված պետություններին հայտնեցինք, թե Հայկական հարցը թուրքական հանրապետության հետ ոչ մի կապ չունի և հնարավոր չէ պատմությունը ենթագրավորել....[3]

Քաղվածքներ թուրք բժշկի օրագրից

(Զորքերի տեղափոխության) ճանապարհին,- հանդիպեցինք տասնյակ գետերի, հովիտների, ձորերի, ավերված գյուղերի՝ կոտորված տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներով լեցուն, երբեմն փորները

1. **Թ. Թորանեան** Պատմութիւն Հալեպի, «Օթել պարոն»-ի և Արմեն Մազլումեանի (պարոն) նամականին, Բեյրութ, 1987, էջ 28:

2. «Մարմարա», 1 մայիսի 1965 թ.:

3. «Մարմարա», 30 ապրիլի 1965 թ.:

ցից խրված: Սևարիկ գյուղում... մեկը կաշառել է ժանդարմին, և սա թույլ է տվել բանտարկյալի կնոջը, որ երեխայի գլուխը մտցնի լուսամուտի նեղ վանդակից, որպեսզի հայրը կարողանա համբուրել: Այդ պահին հայտնվեց պահակախմբի պետը: Նա հայհոյեց ստորադրյալներին, բռնեց երեխայի ոտքից և դուրս քաշեց նեղ վանդակից՝ կիսամեռ և արյունաշաղախ անելով... նա մորը ծեծեց մտրակով, իսկ գետնին ընկած երեխային սապոգով դեն շպրտեց:

Դիարբեքիրը, դիվիզիայի մտնելու ժամանակ, կիսով չափ հրկիզված ու դիակներով լցված էր... բայց ամենասարսափելի պատկերները... Բիթլիսում էին: Դեռ Բիթլիս չհասած, տեսանք անտառում... ոչ վաղուց մորթված մի խումբ տղամարդկանց և նրանց կողքին էլ երեք կնոջ՝ լրիվ մերկ, գլխիվայր կախված: Կանանցից մեկի կողքին սառչում էր մեկ տարեկան մի երեխա և թաթիկները պարզում մորը, իսկ մայրը, դեմքը արյունով լցված, դեռ կենդանի, ձեռքերը մեկնում էր երեխային, բայց նրանք չէին կարողանում միմյանց հասնել: Մի քիչ այն կողմ ընկած էին կանանց երեք արյունաշաղախ դիակներ և մի մանկիկ՝ մոր արյունով ողողված, խլվլում էր կանանցից մեկի կրծքի վրա...

Հենց Բիթլիսի մոտ՝ անապատային հարթավայրում, նստած (էին) շուրջ 2 000 հայ՝ շրջապատված պահակներով: Նրանք սպասում էին... իրենց հերթին, քանի որ տեղական ոստիկանության առկա ուժերը բավարար չէին բոլորին միանգամից կոտորելու համար:

Բիթլիսի կոտորածին մասնակցել են նաև 36-րդ դիվիզիայի ասքյարները: Բայց թուրքական իշխանությունների կաշառվածությունը առավել հարուստ հայերին հնարավորություն էր տվել իրենց կյանքը փրկել: Իմանալով այդ մասին՝ կայմակամը հրամայել է հրդեհել փրկվածների տները... Երկրորդ հարկում երևաց մի կին՝ երեխան գրկին: Նա լուսամուտից լուսամուտ էր նետվում, «ամա՜ն» ճչում, բայց բոլոր կողմերից հանդիպում էր իր վրա ուղղված հրացանների փողերին: Կրակն աստիճանաբար բռնում էր վերին հարկը, ծուխը պատում էր լուսամուտները, և այդ կինը այրվեց:

Երբ գերի ասքյարներին հարցրին, թե ինչպե՞ս նրանք (չեն) ամաչում խոշտանգել անմեղ երեխաներին, նրանք պատասխանեցին. «Այդպես է սուլթանի հրամանը»:[1]

1. "День", 6-го сентября, 1915 г.

Թալեաթի 1915-ի սեպտեմբերի 3-ի ծածկագիրը

Կը յանձնարարենք, որ ծանոթ անձնավորութեանց (հայերի) այրերուն նկատմամբ նախապես գործադրիլը ձեզի հրաման եղած կարգադրութիւններուն ենթարկեք նաեւ կիներն ու պզտիկները, եւ այս մասին վստահելի պաշտոնեաներ կարգեք:[1]

1915 թ. սեպտեմբերի 8-ի ՆԳ նախարարության փոխխորհրդական Մուհամմեդ Սուբիի ստորագրությամբ տեղերը գնաց հետևյալ գրությունը

Աքսորված հայերի լքյալ գույքերից դպրոցների համար պիտանի գույքը և դպրոցական շենքերը իսլամ զավակներին հատկացնելու վերաբերյալ 1915 թ. օգոստոսի 22-ի թիվ 529 ընդհանուր շրջաբերականով հայտնված է կրթական վարչություններին: Չնայած դրան, մի շարք տեղերում լքյալ գույքերի հանձնաժողովները շենք ու գույքեր չեն հանձնել... ուստի անմիջապես դպրոցների համար անհրաժեշտ շենքերն ու իրերը հանձնել կրթության վարչություններին...[2]

Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայի հեռագիր-շրջաբերականը հայկական նահանգների կառավարիչներին և զինվորական հրամանատարներին

Հային թաքցնող մահմեդականը կախվելու է իր տան առաջ, իսկ տունը այրվելու է: Նրանց պաշտպանելը պատշաճ համարողները, եթե զինվորական են, պետք է բանակից հեռացվեն և դատվելու համար հանձնվեն ռազմական դատարանին: Եթե պաշտոնատար են, պաշտոնանկ են արվելու և դատվելու են ռազմական դատարանի կողմից:[3]

Թալեաթի՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ի ծածկագիրը

Հայերու համար Թուրքիոյ հողին մեջ ապրելու, աշխատելու պես իրավունքներ ամբողջովին ջնջուած են եւ այս մասին կառավարութիւնը, բովանդակ պատասխանատվութիւնը ստանձնելով, հրամայած է նույ-

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 151:

2. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 223:

3. Ռազմական դատարանի արձանագրություն, թիվ 13, փաստաթուղթ թիվ 1 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիր, էջ 290-290:

նիսկ օրորոցի մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրութեան արդիւնքները տեսնուած են: Այսպես ըլլալով հանդերձ, մեզի անհայտ պատճառներով, կարգ մը մարդոց մասին բացառիկ գործողութիւններ կըլլան եւ այդ մարդիկը ուղղակի տարագրութեան վայրերը չղրկուելով Հալեպ կը թողուին, որով կառավարութիւնը երկրորդ դժուարութեան մը կը մատնուի: Առանց անոնց պատճառաբանութիւնները ընդունելու, կին թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նոյնիսկ շարժելու անկարող եղողները հանեցեք հոնկէ և տեղի մի՛ տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտութեան բերմունքով նիւթական շահերը իր հայրենասիրական զգացմունքներէն բարձր կը դասե եւ չի կրնար կառավարութեան այս մասին հետապնդած մեծ քաղաքականութիւնը գնահատել: Որովհետև ուրիշ տեղեր անուղակի կերպով կատարուող բնաջնջման գործողութիւնները՝ խստութիւն, արագութիւն, ճամբուներեղութիւններ, թշվառութիւն, հոդ ուղղակի կերպով կրնան ապահովուիլ, հետեւաբար, առանց ժամանակ կորցնելու, ոգի է բռին աշխատեցեք: Պատերազմական նախարարութենէն բանակի հրամանատարութիւններուն ընդհանուր կերպով հաղորդուած է, որ զինվորական կայաններու հրամանատարները գաղթականներու առաքման գործին պետք չէ միջամտեն: Այս մասին յատկացուելիք պաշտոնեաներուն հաղորդեցեք, որ, պատասխանատուութենէն չվախենալով, պետք է աշխատին իսկական նպատակը իրականացնելու: Հաճեցեք Ձեր գործունեութեան արդիւնքները ամեն շաբթու ծածկագրով հաղորդելու:[1]

-Ծածկագիր.

Կը լսենք, որ կարգ մը պաշտոնեաներ պատերազմական ատեանի յանձնուած են ծանոթ անձնավորութեանց (հայերուն) հանդեպ խստութիւն եւ հարստահարութիւն ի գործ դրած ըլլալու ամբաստանութեամբ: Ասիկա որքան ալ ձեւական բան մըն է, բայց կրնա համանման պաշտոնեաներու համարձակութիւնը նուազեցնել: Այս պատճառով կիրամայեմ, որ նմանօրինակ քննութեանց տեղի չտրուի:[2]

-Ծածկագիր.

Ծանոթ անձնավորութեանց (հայերի) կողմէ ամեն տեսակ անձնական

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 35-36:
2. Ն. տ., էջ 38:

խնդիրներու մասին յարուցուելիք տրտունջներուն եւ դատերուն նկատառումը ոչ միայն անոնց (դեպի անապատ) առաքման յապաղման պատճառ պիտի ըլլայ, այլ նաև դուռ պիտի բանա գործողութեանց, որոնք հավանաբար յառաջիկային կրնան քաղաքական անպատեհութեանց ծնունդ տալ: Այս պատճառով պետք չէ նկատի առնել այդ դիմումները եւ այս իմաստով հրահանգ տալ շահագրգռուող պաշտոնեաներու:[1]

Հուսեյին Նեջաթիի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղար, 1915 թ. սեպտեմբերի 10-ի հեռագիրը նույն կուսակցության Յոզղաթի կենտրոնական մարմնին

Կարևոր է հայտարարել ձեզ, որ վերջերս ընդհանուր կենտրոնը (երիտթուրքերի կենտկոմը) հաճեց մեզ պատվել անհրաժեշտ հրամանով՝ ներկայումս բռնագրավման ենթակա և լքյալ գույքերին պատկանող ակումբի շենքի հետ վերջերս բռնագրավված կահկարասիները հանձնել լքյալ գույքերի (հանձնաժողովին), վարձել լքյալ գույքերին չպատկանող ուրիշ շենք, այն վերածել ակումբի և այս ակումբի շենքն էլ կահավորել ակումբին պատկանող հին կահկարասիներով և որակյալ գույքով...[2]

Այդ ակումբի համար լքյալ գույքերի հանձնաժողովից վերցվել են 470 անուն գույք 15 120 դահեկան ընդհանուր արժեքով:[3]

Դոկտ. Ռեշիդ՝ Դիարբեքիրի վալի

Ջարդերի հրամանները ստացվել են ներքին գործերի նախարար Թալեաթից:[4]

Մյուֆիդիի՝ Բալուի քաղաքագլուխ, 1915 թ. սեպտեմբերի 11-ի ծածկագիրը ՆԳ նախարարությանը

Միություն և առաջադիմություն կուսակցության Բուրսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը դեռևս Բալուի պատասխանատու քարտուղար եղած ժամանակ, Չանկըրիից Բալուի մութեսարի-

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 39:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 539:
3. "La Renaissanse", 7 մարտի 1919թ.:
4. **R. Nogales** Vier jahre unter dem Halbmond, Berlin, 1925, s. 147.

ֆությունն ուղարկած հեռագրով հայտնել է, որ Անկարայի վիլայեթից աքսորված հայերի ընդհանուր թիվը հասել է 61 հազարի, և այդ տեղահանությունը նպատակահարմար է նախ տեղի մահմեդականների թիվը կայունացնելու, մյուս կողմից էլ, այն հետագայում նպաստավոր կլինի Բալուի համար:[1]

Ջեմալ փաշայի այն հեռագրին, թե Եփրատում եղած դիակները հավանաբար զոհված ապստամբներինն են, Դիարբեքիրի վալին 1915 թ. հուլիսի 3-ին պատասխանեց

Եփրատն առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից: Այստեղ ապստամբության ընթացքում սպանվածների դիակները գցում են ամայի վայրերի խոր քարայրները կամ էլ այրվում են: Թաղելը բացառված է:[2]

Ռեշիդի ՆԳ նախարարությանը 1915 թ. սեպտեմբերի 15-ին ուղարկած ծածկագիրը

Դիարբեքիրից արտաքսված հայերի թիվը հասնում է 120 հազարի:[3]

ՆԳ նախարարության հեռագիր

Տարագրության մեջ գտնվող հայերն, ինչքան էլ նրանց զիջումներ կատարվեն, չեն կարող վերադառնալ իրենց բնակավայրերը, այլ կվտարվեն տեղահանվածներին հատկացված վայրերը:[4]

Իթթիլաֆ կուսակցության կազմած ամբաստանագրից

Իթթիհադի Պրուսայի պատասխանատու քարտուղար Միտհատ պեյ, երբ Պալուի պատասխանատու քարտուղարն էր, հեռագրած է, թե Էնկերիէն 61 հազար հայ տարագրուած են, եւ եթե հիշեալ կուսակցութեան իսլամ ժողովուրդը կը պաշտե իթթիհադը եւ իրմէ բղխած կառավարութիւնը իր կատարած գործին (հայերի բնաջնջման) համար, թե այս պաշտամունքը յավիտենական պիտի ըլլա, եւ հետեւաբար, ապահովելու համար

1. Ռազմական դատարանի արձանագրություն, թիվ 8, փաստաթուղթ թիվ 2:

2. **Ա. Փափազյան** Արաբական խախաղաններն ու հայկական ջարդերը, էջ 43:

3. "Takvim-i Vekai", 1919 թիվ, 3 540 կամ Ռազմական դատարանի արձանագրություն, թիվ 12, փաստաթուղթ թիվ 1:

4. Մետեոնիխի հեռագիրը կանցլերին՝ 14 սեպտեմբերի 1915 թ.:

Պալուի ապագա երջանկութիւնը, օգտակար կը գտնե տեղահան ընել նաև Պալուի հայերը: Ասիկա կը հաստատուի կառավարիչ Միւֆիտ պեյի կողմէ 11 սեպտեմբերի 1915 թուակիր ու ներքին գործոց նախարարութեան ուղղուած ծածկագիր հեռագրով: Եվ Պալու պատերազմական գոտի մը չէր, (հայերի) տարագրութիւնը ոչ զինուորական կարգադրութեան մը, ոչ ալ կարգապահական միջոցի մը անունով կրնար արդարանալ:

Մուքեսարիֆ Մուֆիտ բեյի 1915 թ. սեպտեմբերի 11-ի հեռագիրը ՆԳ նախարարությանը:[1]

Թալեաթի ստորագրությամբ շրջաբերական

Նախապես հաղորդուած էր, թե կառավարութիւնը, ջեմիյեթի հրամանով որոշած էր Թուրքիայում բնակվող բոլոր հայերուն ամբողջովին փճացնել: Ովքեր կհակառակվեն այս հրամանին եւ որոշմանը պետական պաշտոնական կազմին մաս չեն կրնար մնալ: ...(հայերի) նկատմամբ ձեռնարկված միջոցները որքան էլ ոճրագործ լինեն, հանուն առաջադրված նպատակի պետք է խեղդել խղճահարութեան ձայնն ու մարդասիրութեան զգացմունքները եւ վերջ տալ այդ ժողովրդի գոյութեանն, առանց խնայելու (նույնիսկ) կանանց, երեխաներին եւ հիվանդներին:[2]

Ջեմալ փաշայի 1915 թ. սեպտեմբերի 13-ի ճեպագիրը

Աքսորված հայերի շարասյուներին վերաբերող բոլոր լուսանկարները, որոնք արվել են Բաղդադի երկաթգիծը կառուցող ընկերության ինժեներների և այլ ծառայողների կողմից, պետք է 48 ժամվա ընթացքում հանձնվեն Հալեպում Բաղդադի երկաթգծի զինվորական կոմիսարիատին: Այս հրամանը չկատարողները պատասխան կտան զինվորական տրիբունալի առաջ:[3]

Թալեաթ

Այդպիսի խռովարար ժողովրդի (հայերի) համար աքսորավայրը ոչնչացում է:[4]

1. Ռազմական դատարանի դիվան, թիվ 2 փաստաթուղթ:
2. **Սագե Ս. Բենեդիկտսեն** Հայերը, Կոպենհագեն, 1925, էջ 259:
3. Quelques documents sur le sort des Arméniens en 1915, Fascicule III, Geneve, 1916, p. 162.
4. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 528:

Թալեաթ

Գաղտնի միջոցներով փճացուցեք արեւելեան նահանգներու այն հայերը, որոնք այդ կողմերը ձեռք պիտի անցուին:[1]

Միդհատ Շուքրի

(Դիարբեքիրի կուսակալ Ռեշիդը) հայերին անվանում է «մանրէ» ...բժիշկի պարտականությունն է մանրէները ոչնչացնել:

Ազիզ բեյ՝ բժիշկ

(Դոկտ. Ֆայիկ՝ Մարզվանի կառավարիչը) քաղաքի 13 հազար հայի կոտորել տվեց կացնով: ...Դիմեցի կառավարիչ Ֆայիկին ու ասացի. «Բժիշկ եմ, իսկ բժշկի և մսագործի միջև տարբերություն չկա... ի վերջո, բժիշկները զբաղված են մարդ արարածներին մորթոտելով: ...Խնդրում եմ ինձ թույլ տալ ներկա գտնվել այս վիրաբուժական գործողությանը... (հայերն առանց երկմտելու իրենց վիզը երկարում էին մարդասպաններին): Հնարավոր չէր չհիանալ մահվան հանդեպ նրանց արի կեցվածքով, վախի ամենանվազ արտահայտությունից զերծ վերաբերմունքով»:[2]

Խալիլ՝ երիտթուրք պարագլուխ

Ընդհանուր բռնագաղթը կարող է վտանգել կայսրության գոյությունը: Հայերին բնաջնջելով՝ կարծում եմ, որ ավելի կծանրացնենք մեր վիճակը: Հաշտության բանակցություններում հավանաբար մեզ ավելի ծանր պահանջներ ներկայացնեն:[3]

Զավեն պապրիարքի փեսակցությունը Թալեաթի հետ 1915 թ. սեպտեմբերի 19-ին

Թալեաթ.-Հայերը իրենք պատճառ եղան իրենց այս վիճակին, անոնց ներքինը ամենէն ավելի գիտցողը ես եմ: Մենք ամեն բանէ տեղեկութիւն ունինք:

---

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 155:

2. Վանգենհայմի 7-ը հուլիսի, 1915 թ., թիվ 433 տեղեկագիրը՝ իթթիհադի ընդհանուր քարտուղար Մ. Շուքրիի վկայությունը: «Հայրենիք», Բոստոն, 24 հունվարի 1987 թ.: Տե՛ս Վ. Դաղբյանի «Թուրք բժիշկների դերը Առաջին աշխարհամարտին՝ հայերու ցեղասպանութեան մեջ» հոդվածը:

3. **Ս. Ակունի** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւն, էջ 28:

Զավեն պատրաիրք.- Ընդունիմ թե ճիշտ են ձեր ըսածները, բայց կառավարութիւնը հայր մըն է և հոր մը պես պետք է պատժե:

Թալեաթ.- Այսպես չէ, երբեմն հայր է եւ երբեմն՝ ոչ. թե ժողովուրդը իր հայրութիւնը չընդունի եւ ռուսը իրեն հայր ընե, այն ատեն կառավարութիւնը հոր մը պես չի վարուիլ... Աշխարհի եւ ոչ մի կողմ չի գտնուիր ժողովուրդ մը, որ մայրաքաղաքէ մայրաքաղաք պտտի եւ իր կառավարական գործերուն մեջ միջամտել խնդրե: Այս բոլոր բաները եղան, ու ազգին ամբողջութիւնը բան մը չըրաւ եւ լռութեամբ հավանութիւն յայտնեց:

Զավեն պատրիարք.- Բայց վերջապես այս բաները քանի մը մարդու գործ են:

Թալեաթ.- Ոչ քանի մը, ոչ քանի մը հազարի եւ ոչ ալ քանի մը հարիւր հազար մարդու գործ են: Այսօր մեկ կուսակցութիւն մըն է, վաղն ալ ուրիշը կը ծնի, ոչ կուսակցականն ալ կուսակցական կը դառնա, գործը ընդհանուր համգամանք ունի: Այդ պատճառով անհրաժեշտ եղավ, որ այս ժողովուրդը իր բնակավայրէն հեռացուի եւ այլուր բնակեցուելով չեզոքացուի...[1]

Սայիդ Հալիմը՝ վարչապետ, պատրիարքին

Կառավարութիւնը հայ ազգին բնաջինջ ընելու նպատակ չունի, միայն թե միջոցներ ձեռք առած է... ու այդ նահանգները հայերէն պարպե: Այս կարգադրութիւնը ձեզի ալ, մեզի ալ օգտակար պիտի ըլլա, որովհետեւ մինչեւ հիմա ռուսներն ու անգլիացիք ձեզ իբր գործիք կը ծառայեցնեին: Ես անցեալները ամերիկեան դեսպանին ալ ըսի. «Եթե հայերը հանգիստ ըլլալ կուզեն, պետք է ռուսներն ու անգլիացիները մոռնան»:[2]

Թալեաթ

Մետեռնիխին՝ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան.

Գերմանացիները նույն հանգամանքներում այլ կերպ չէին վարվի... (մենք) դաշնակիցներից մարդասիրության դասեր առնելու կարիք չունենք:[3]

---

1. **Զավեն Արքեպս.** Պատրիարքական յուշերս, Կահիրե, 1947, էջ 126-127: Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 264-265:

2. Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 262-263:

3. **Ֆ. Նանսեն** Հայաստան և Մերձավոր Արևելք, էջ 276:

-Որբանոցի մը պետք չկա: Զգացումներն անտեսելով զանոնք (որբերին) կերակրելու եւ անոնց կեանքը երկարելու համար ժամանակ վատնելու ատեն չէ: Ղրկեցեք (անապատները) եւ իմացուցեք:[1]

-Սրանից հետո 50 տարի Հայկական հարց չի լինի:[2]

Ջեմալ փաշան գերմանական հյուպատոս Լոյտվերգին

Անձամբ կցանկանայի հայերի վիճակն հնարավորին չափ թեթևացնել, բայց խիստ հրաման ունեմ Կ. Պոլսից՝ թույլ չտալու հայերի համար նպաստամատույց ձեռնարկ գերմանական և ամերիկյան մասնակցությամբ, քանի որ թուրք կառավարության դեմ հայերի ներքին ընդդիմությունը դրանով լոկ կարող է խրախուսվել:[3]

Բ. Դուռը Մեկենիխին

Թուրքական կառավարությունը թույլ տալ չի կարող հայերի համար նպաստի մատուցում օտարների կողմից, քանի որ դրանով հայերն արտասահմանի վրա հույս դնելու իրենց ձգտման մեջ խրախուսվելու են:[4]

Թալեաթի 1915 թ. սեպտեմբերի 29-ի ծածկագիրը

Կը լսենք, թե ժողովուրդէն եւ պաշտոնեաներէն ոմանք կարգ մը հայ կիներու հետ կամուսնանան: Ասիկա խիստ արգիլելով, կարեւորութեամբ կը յանձնարարեմ, որ այդ կարգի կիները ջոկուելով առաքուին:[5]

-1915 թ. հոկտեմբերի ծածկագիրը

Ճամբուն ընթացքին ժողովրդին կողմէ ծանոթ անձնավորութեանց (հայերի) դեմ կատարվելիք բոլոր ոճիրները կառավարութեան հասնիլ ուզած նպատակին իրականացման ծառայելուն համար, անոնց մասին օրինական հետապնդման տեղի չկա: Զորի եւ Ուրֆայի կառավարութեանց ալ պետք եղած զեկուցումը եղած է:[6]

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 184:
2. "The Times", 29 սեպտեմբերի 1915 թ.:
3. **Եհանանես Լեփսիուս** Հաղորդագրություններ, էջ 105:
4. Ն. տ.:
5. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 154:
6. Ն. տ., էջ 230:

Ծածկագիր Զոհրապի սպանության առիթով (4 հոկտեմբերի, 1915 թ.)

Մի շարք պարտադրող պատճառներով Պոլսի երեսփոխան Գ. Զոհրապի այստեղ մնալը հարմար չհամարելով, նա 6-րդ զորաբանակի հրամանատարության տրամադրության տակ էր ուղարկված: Ռազմական բարձր նախարարությունը հաստատում է Գ. Զոհրապ էֆենդու ճանապարհի պատահարի հետևանքով զոհվելու մասին Ուրֆայի մութեսարիֆության և Եփրատի կայքի հրամանատարության կողմից կատարված քննությունների փաստաթղթերը (12. 09. 1915 թ., թիվ 514 գրությունով) նշված պակասները լրացնելու համար Հալեպի կայքի հրամանատարությանն են ուղարկված: Հիշյալ քննություններին հաստատ և վավերական հիմնավորում տալու համար շտապ ձեր կողմից վստահելի մի պաշտոնյա նշանակեք և վերոհիշյալ քննությունները վերահաստատելով արագացնենք:[1]

Պաշտոնատար Պարտիզակից

Հայ ժողովուրդն անվստահելի է, երկիրը պատերազմի մեջ է, թշնամին ոմբակոծում է Պոլսի դռները, ուստի, ռազմական նախազգուշական նկատառումներով, հարկ է համարվել հայերին հեռացնել ծովափնյա շրջաններից դեպի երկրի խորքերը՝ Բիլեջիկ, Էսքիշեհիր, Կոնիա:[2]

Հուսեյնը՝ Յոզղաթի դատավոր, բռնագաղթվող հայերին

Գյավուրներ, ձեզնից ով իր մոտ դրամ կամ զարդեղեն ունի, թող մեզ հանձնի, այդպիսինը ներումի կարժանանա և իր սեփական տունը կվերադառնա: Սա պատվո խոսք է երդվում եմ նիքյահիս և սուրբ Ղուրանի վրա:[3]

Հաջի Գայան՝ չեթեյապետ, բռնագաղթվող հայ հոգևորականներին ուղեկցող ոստիկանին առաջարկում է մեկ մեջիդից մինչև մեկ ոսկի գնով իրեն տալ հայերի քարավանը

Քարավանին ուղեկցող պաշտոնյան առարկում է, քանի որ «իրեն տրված հրամանով պարտավոր է եկեղեցականների արյունոտ շապիկները ցույց տալ իր վերադաս պաշտոնյային»:

1. Հ. Ղազարեան Յեղասպան թուրքը, էջ 385-386:
2. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 310:
3. Ն. տ., էջ 327:

Հաջի Գայա. «Նույն բանն ինքը կանի՝ քարավանին ուղեկցող պաշտոնյաների աչքի առաջ»:

(Քարավանը վաճառվում է 500 ոսկով: Բոլորին ոչնչացնում են և նրանցից կողոպտում են 100 հազար ոսկի):[1]

Երզնկացի թուրքի խոստովանությունը

Երզնկայի կողմերում հայերի դեմ գործած արարքները ոչ Ղուրանն է ընդունում և ոչ էլ Շերիաթը: Երզնկայի կառավարիչ Մեհմուդ բեյը, հայերին կողոպտելով, 50 հազար լիրայի տեր դարձավ և այժմ էլ ի վարձ գործած վայրագությունների Կաստամոնուի կուսակալ նշանակվեց:

(Երզնկայի մերձակայքից շուրջ 30 հազար հայ բնաջինջ եղավ)... նույնիսկ կանայք ու երեխաները ողջ-ողջ թաղվեցին: Հարյուրավոր կանայք ու կույսեր նետվեցին Եփրատ գետը:

Հազարավոր տղամարդիկ սպանվեցին, կանայք ու աղջիկներ առևանգվեցին ու բռնաբարվեցին, իսկ երեխաները թուրքերին բաժանվեցին: ...Երկնքի վրեժխնդրությունն ուշ կամ շուտ մեզ հասնելու է:

1915 թ. սեպտեմբերի սկզբին սոսկալի ջարդ տեղի ունեցավ Էնկյուրիում: Սկզբում լրիվ կոտորվեցին տղամարդիկ՝ 500 հոգի...[2]

Ազմին՝ երիտթուրք պարագլուխ, Սեբաստիայի թեմի առաջնորդին

Հայերի նկատմամբ կառավարության հետապնդած քաղաքականությունը փոխվել չի կարող: Կոնիայի հայերը թող գոհ լինեն, որ իրենք մոտակայքում աքսորվեցին, քանի որ մոտ օրերս լսելու եք, որ մյուս նահանգների հայերը կոտորված ու ջարդված են: Սա է կառավարության որոշումը: Ես էլ գիտեմ, որ Կոնիայի հայությունն անմեղ է, բայց ինչ անեմ, որ անհնար է փոխել կառավարության որոշումը:[3]

Իբրահիմ Կ. Պոլսի բանտի նախկին տնօրեն, Աղդաբազարի հայերի հավաքում արտասանած ճառից

Նախ ներկայացնեմ ինքս ինձ: Ես չեթեապետ եմ և երկար ժամանակ գործել եմ Մակեդոնիայում: Ես եմ կատարել բուլղար ու հույն եկեղեցիների ու վանքերի բոլոր խուզարկությունները և հայտնաբերել եմ մեծ քանակու-

1. **Ս. Ակունի** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւն, էջ 173-174:
2. Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 502:
3. Ն. տ., էջ 500:

թյամբ զենք: Ես էլ կոմիտեական եմ և ծանոթ եմ կոմիտեական գաղտնիքներին... ճանաչում եմ նաև մեծ կոմիտեականներին՝ լինեն դաշնակ, հնչակ թե այլք: Նրանց ղեկավարներից շատերը իմ հին ընկերներն են եղել, և նրանց հետ համագործակցել եմ, երբ մեր շահերը նույնն էին: Բայց այժմ նրանք դավաճանել են կառավարությանը, որի համար էլ մենք նրանց դեմ ենք: Սրանից առաջ ես այստեղ եկել եմ հնչակյանների հետ զենք բաժանելու ու գիտեմ, թե ով զենք ունի: ...55 ռումբ ու 250 մաուզեր եմ ուզում, որ առանց այլևայլության պետք է վերադարձնեք... եթե դրանք հանձնեք, ձեզ որևէ վնաս չի հասնի, իսկ եթե թաքցնեք՝ իմացած եղեք, որ ամեն տեսակի չարիք թափելու եմ ձեր գլխին: Լիազորված եմ՝ ամեն ինչ անելու: Անշուշտ լսել եք, թե ինչեր կատարեցի Պարտիզակում՝ 300 հոգի՝ տղամարդ, կին լցրեցի եկեղեցին, ծեծեցի, չարչարեցի, գետնին պառկեցրեցի և սատկացնելու աստիճան ոսկորները ջարդեցի, մինչև որ մեջտեղ հանեցին իրենց զենքերը: ...Տեսեք, որ պարտիզակցիների վիճակի մեջ չընկնեք:[1]

Մուստաֆա Աբդուլհալիգի 1915 թ. դեկտեմբերի 23-ի հեռագիրը ՆԳ նախարարությանը

Քննութեան համար անցեալները Ռաս իլ Ալե գացող գաղթականաց ընդհանուր տեսչի փոխնորդին տեղեկագրէն կը հասկացուի, որ նոյն տեղը ղրկուած հայերը մինչեւ այսօր հոն թողուած եւ շենք շնորհք, տուն տեղ կազմակերպած են, եւ թե զանոնք պաշտպանող եւ անոնց այնտեղ հաստատուելնին թույլատրողը Զորի կառավարիչ Ալի Սուատ պեյն է...

Ալի Սուատ պեյի ատոնց (հայերի) մասին ցոյց տուած կողմնակցութիւնն ու պաշտպանութիւնը զարմանալի համեմատութեան մը հասած են: Պատմուածին նայելով, իր քով գտնուած կարգ մը (հայ) տղոց արդուզարդը ինք իր ձեռքով կընե եւ անոնց ծնողներուն աղետին վրա կուլա ու կողբա եղեր: Այն կողմերը ղրկուած հայերը այս կերպով այլապես երջանիկ կենցաղի մը կարժանանան, եւ ասոր համար Ալի Սուատ պեյին երախտապարտ են:

Բայց որովհետեւ այդ կացութեան շարունակութիւնը Հալեպէն գաղթականներու առաքմանց ակամա յետաձգման պատճառ պիտի դառնա, Ձեր նախարարական բարձրութեան դիմելով յարմար կարգադրութիւն մը կը խնդրենք: (Ալի Սուատը պաշտոնանկ արվեց):[2]

1. **Ս. Ակունի** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւն, էջ 267-268:
2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 50-52:

Թալեաթ

-1915 թ. դեկտեմբերի 26-ի հեռագիրը.

Առհասարակ ամեն հաստատութեան, երկաթուղիի եւ ուրիշ շինութիւններու գործերուն մեջ ծառայող հայերուն ալ իրենց տարագրութեան վայրերը ղրկուելնին որոշուած եւ այդ մասին պատերազմական նախարարութենէն բանակի հրամանատարութեանց տեղեկութիւն տրուած է: Արդիւնքը հաղորդեք:

-1915 թ. դեկտեմբերի 29-ի ծածկագիրը. Կը լսենք, թե օտար սպաներ, ճամբաներուն երկայնքը դիզուած ծանոթ անձնավորութեանց (հայերի) դիակները տեսնելով, կը լուսանկարեն: Այդ դիակները անմիջապես թաղելնիդ եւ դիակները այդպես մեջտեղ չի ձգելնիդ կարեւորութեամբ կը յանձնարարեմ:

1916 թ. հունվարի 4-ի հեռագիրը Հալեպի վալիին. Հիւսիսէն գալիք հայերը այսուհետեւ առանց քաղաք կամ ավան մը հանդիպեցնելու շիտկե շիտակ իրենց տարագրութեան վայրը ղրկուելնին ընդհանուր կերպով կը յանձնարարեմ:[1]

Հալիլը՝ արտաքին գործերի նախարար, Գերմանիայի դեսպանության խորհրդականին

(Համաձայն եմ) բռնի կրոնափոխությունները պետք է դադարեցնել... սակայն անհնար է բռնի կրոնափոխվածներին իրենց նախկին հավատին վերադարձնել, որովհետև դա ծայր կտա նոր կրոնափոխությունների: ... Հենց որ պատերազմը վերջանա, հակառակ իրենց կամքի ու բռնությամբ կրոնափոխվածները որոշակիորեն հնարավորություն կստանան վերադառնալու քրիստոնեական հավատին՝ ճիշտ այնպես, ինչպես եղել է Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի հալածանքներից հետո:[2]

Աբդուլահադ Նուրիի 1916թ. հունվարի 10-ի հրահանգը

Ընդհանուր առաքման ենթարկուած հայերէն հազիվ հարիւրէն տասին իրանց տարագրութեան վայրերը հասած ըլլալնին եւ միւսներուն

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 58, 148, 156:
2. FO, Turkei, Bd 46, 1917 թ. հունվարի 5-ի թիվ 17 տեղեկագիր:

ճամբաները անոթութեան, հիվանդութեան պես բնական պատճառներէ մեռած ըլլալնին յետ քննութեան հաստատուած է: Տակավին ողջ եղողներու մասին խստութիւններ ցոյց տալով, նոյն արդիւնքին ձեռք բերելուն աշխատուիլը կը ծանուցուի:[1]

Մուսթաֆա Աբդուլհալիգի 1916 թ. հունվարի 11-ի ծածկագիրը Այնթաբի կառավարիչին

Կիմանանք, որ սվազցի եւ խարբերդցի հայերը կը գտնուին ձեր շրջանակին մեջ: Այդ կողմերը հաստատուելու առիթ մի տաք անոնց, եւ նախապես հաղորդուած ծանոթ եղանակով հարկ եղածը ընելով, արդիւնքը հաղորդեցեք:[2]

Թալեաթ

Հայերի բռնագաղթը կազմակերպելով ես վրեժ էի լուծում Սարիղամիշում Էնվեր փաշայի պարտութեան համար:

Խուլուսիի՝ Բողազլյանի ժանդարմական գնդի հրամանատար, 1915 թ. դեկտեմբերի 17-ի հեռագիրը Կեսարիայի Յազի Չինի գիշերապահ կայանի հրամանատարությանը

Ձեր իրավասության սահմանում հայրենիքի դեմ մատնություններ անող մի շարք լրտես հայեր տեղահանված են կոտորելու իմաստով, իսկ զորաբանակի հրամանատարը նույն մերձակա շրջանից դիակները մինչև հաջորդ կեսօր հավաքելու հրաման է տվել: Բողազլյանի կայմակամ բեյի հրամանով ժողովրդի միջոցով դիակները ծածկելու կարևորություն է հանձնարարվում:[3]

Ադանայի պետական որբանոցի տնօրենը քրիստոնյա սաներին

Կամ պետք է ընդունեք իսլամական կրոնը, կամ էլ հեռանաք որբանոցից:

Թալեաթի 1915 թ. նոյեմբերի 18-ի ծածկագիրը Հալեպի կառավարիչին

Ամերիկեան կառավարութեան հրամանով, Պոլսոյ դեսպանատան վերջերս ըրած միջամտութենէն կը հասկացուի, թե կարգ մը տեղերուն

1. Ա. Անտոնյան Մեծ ոճիրը, էջ 165:
2. Ն. տ., էջ 160:
3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 506:

մեջ ամերիկեան հիւպատոսները գաղտնի միջոցներով տեղեկութիւններ ձեռք կը բերեն: Թեեւ պատասխանուած է, թե (հայ գաղթականներու) տարագրումը ապահով կերպով եւ հանգստութեամբ կը կատարուի, բայց որովհետեւ այսքանը բաւական չէ զիրենք համոզելու, աշխատեցեք, որ քաղաքի, գաւառներու եւ կեդրոններու մոտ գտնուողներուն (հայերուն) առաքման միջոցին ուշադրութիւն գրաւող դեպքերի տեղի չի տրուին: Ներկա քաղաքականութեան տեսակետով ամենակարեւոր է, որ այդ տեղերը շրջող օտարները համոզուին, թե (գաղթականներու) առաքումը իսկապես լոկ տեղափոխութեան նպատակով մը կը կատարուի: Այս պատճառաւ կարեւոր է առժամաբար, որ առ ի ցոյց, փափուկ վարմունք մը ցոյց տրուի եւ ծանոթ միջոցները (ջարդերը) գործադրուին յարմարագոյն վայրերու մեջ, իսկ այս մաին տեղեկութիւն տուող հետազոտիչ անձերը ձերբակալելնիդ եւ ուրիշ պատրուակներով պատերազմական ատեաններու յանձնելնիդ կարեւորութեամբ կը յանձնարարեմ:[1]

Թալեաթ

1915 թ. դեկտեմբերի 1-ի հեռագիրը.

Հակառակ անոր, որ ծանոթ անձնավորութեանց կողերական դասակարգին գոյութիւնը ջնջելու համար ամենէն ավելի աշխատիլ պետք է, կիմանանք, որ այդպիսիներ Սուրիոյ եւ Երուսաղեմի պես կասկածելի տեղեր կը դրկուին: Ասանկ թոյլութիւն մը աններելի յանցանք է: Այդ կարգի խռովարարներուն աքսորավայրը անէութիւնն է: Կը յանձնարարեմ, որ ըստ այնմ գործողութիւններ կատարեք:[2]

-1915 թ. դեկտեմբերի 9-ի հեռագիրը.

Ծանոթ անձնավորութեանց կողմէ իրենց դեմ գործուած արարքներուն մասին կառավարականպաշտոնատանց ուղղուած տրտունջի եւ բողոքի հեռագիրները ընդունելուն մեջ անպատեհութիւն մը չկայ: Բայց անոնց քննութեամբ զբաղիլը ի զուր ժամավաճառութիւն պիտի ըլլայ: Բողոքներուն կը հաղորդեք, որ կորսնցուցած իրաւունքնին իրենց տարագրութեան վայրերուն մեջ հետախնդեն:

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 142:
2. Ն. տ., էջ 102-103:

-1915 թ. դեկտեմբերի 11-ի ծածկագիրը Հալեպի կուսակալին.

Կիմանանք, թե մեկ քանի հայ թերթերու թղթակիցներ այդ կողմերը շրջելով կարգ մը եղերական դեպքեր ներկայացնող լուսանկարներ եւ թուղթեր կազմած եւ զանոնք տեղվոյդ ամերիկեան հիւպատոսին յանձնած են: Այս կարգի վնասակար անձերը ձերբակալելով փճացուցեք:

-1915 թ. դեկտեմբերի 12-ի հեռագիրը.

Հավաքեցեք ու սնուցեք այն որբերը միայն, որոնք չեն կրնար յիշել զուլումը, որին ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարավաններուն ընկերացնելով ղրկեցեք:

-1915 թ. դեկտեմբերի 17-ի հեռագիրը.

Ընդհանուր առաքումներէն (դեպի անապատ) փրկուելու մտածումով իսլամութիւն ընդունիլ ուզող հայերուն հաղորդեցեք, թե անհրաժեշտաբար պետք է իրենց տարագրութեան վայրերուն մեջ իսլամանան:[1]

-Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին (1915 թ. ապրիլ)

Ընդունում եմ, որ գավառներում զոհվել են հազարավոր մարդիկ, և ոչ միայն հայեր, սակայն (ժխտում է) կանանց ու երեխաների նկատմամբ կիրառված դաժան արարքի փաստերը:[2]

-Նահանգներում շրջագայությունից վերադառնալուց հետո (1915 թ. դեկտեմբերի 18-ին) Մետերնիխին

Վերջին կես տարվա ընթացքում ձեռնարկված հակահայկական անվտանգության միջոցառումներից տուժել են շատ անմեղ մարդիկ: Ծրագիրը ներկայումս մոտենում է ավարտին, և ամեն ինչ արվել է տարագրված ընտանիքներին հետագա բռնություններից, քաղցից և այլ դժբախտություններից պաշտպանելու համար... Նահանգական բոլոր իշխանություններին կարգադրված է հրապարակել, որ գերմանական կառավարությունը բոլորովին անմեղսակից է հակահայկական արարքներում, և որ Բ. Դուռն իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը:[3]

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 204, 146, 187, 212:

2. Austro-Hungarion Ministry Archives, Vienna (AHFM), Turkei, Berichte, 1915 թ. մայիսի 2, թիվ 352:

3. FO, Túrkei 183, Bd 40, **Վ. Մետերնիխի** 18-ը դեկտեմբերի 1915 թ. նամակը Բեթման-Հոլվեգին, թիվ 725:

-Հինգ օր անց գերմանական կառավարությանը հղած նուպայում ասվում էր

Հայերի նկատմամբ քաղաքականությունը Թուրքիայի ներքին գործն է, ուստի չի կարող արտաքին դիվանագիտության միջամտության առարկա դառնալ:[1]

-Գերմանիայի ներկայացուցիչ Կալմանին (14 փետրվարի, 1617 թ.)

Մտադիր եմ բոլոր հարցերում հետևել նոր կուրսին ... արդեն տեղեկացրել եմ հայ համայնքի ղեկավարներին, որ անցյալ երկու տարիների ռազմական միջոցառումները պետք է վերացվեն:[2]

-1915 թ. նոյեմբերի 5-ի ծածկագիրը

Կիմանանք, թե Սըվազի, Մամուրեթ իլ Ազիզի, Տիարպեքիրի, Էրզրումի նահանգներէն տարագրուած եւ ճամբուն ընթացքին իրենց ծնողներուն մեռած ըլլալուն հետեւանքով անոք մնացած ծանոթ անձնավորութեանց (հայերի) պզտիկները կարգ մը իսլամ ընտանիքներու կողմէ որդեգրութեան եւ սպասավորութեան կընդունվին: Ձեր նահանգին մեջ գտնուող այդ կարգի տղաքը հավաքելով, տարագրութեան վայրերը (անապատները) ղրկելնիդ եւ յարմար դատուած կերպով ժողովուրդին այս մասին պետք եղած հրահանգները տալերնիդ իբր շրջաբերական կը ծանուցանենք:[3]

Թուրք սպա, որ առևանգել էր մի հայ աղջկա

(Թուրքերի) նպատակն է բնաջնջել հայերին՝ սկսած այն օրից, երբ Պողոս Նուբար փաշան Հայկական հարցը ներկայացնում էր եվրոպական կառավարություններին: Կապիտուլյացիաների չեղյալ հայտարարելը օրհնություն եղավ մեր նպատակների համար: Եթե մեր նպատակը լիներ միայն հանցավորներին պատժելը, ժողովրդին պիտի խնայեինք:[4]

---

1. **J. Lepsius** Deutschland und Armenien, Potsdam, 1919, s. 218.
2. Ն. տ., էջ 317, 318:
3. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 180:
4. **Ե. Թ. Մկրտչյան** Թուրքիոյ գեհենէն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը, Ալեքսանդրիա, 1918, էջ 45:

Խալիլ փաշայի շտաբի գնդապետը Մոսուլի գերմանական հյուպատոսին (5 նոյեմբերի 1915 թ.)

Ինքը (Խալիլը) Մոսուլում էլ հայերին կոտորելու դիտավորություն ունի... Վաղը կամ մյուս օրն այստեղ սպասվում են Խալիլի գնդերը, որոնք հյուսիսային շրջաններում արդեն ջարդել են հայերին:[1]

Սալիհ բեյ Գուրջիի զեկուցագիրը Թալեաթ փաշային հայերի հետպանդումների վերաբերյալ (1915 թ., հոկտեմբեր)

Թուրքիայում հայերի հետապնդումը, որը պարզորոշ դիտվում է որպես հայերի կոտորած և դժբախտաբար այդ հանգամանքը պետք է ընդունի հանգամանքների յուրաքանչյուր գիտակ, բացատրվում է Թուրքիայի նեղ վիճակով: Եթե Թուրքիան ուզում է կազդուրվել ներքին քաղաքականության հարցերում, եթե նա ընդհանրապես ցանկանում է մնալ կենսունակ, ապա պետք է ինչ-որ կերպ հեռացնել, վերացնել հայերին: Պետք է անմիջապես լուծել այսպես կոչված Հայկական հարցը, առանց որի Թուրքիան չի կարող մտածել իսկական ներքին վերակառուցման մասին: Սակայն այն ուղին, որի վրա թվում է, թե կանգնել է կառավարությունը և որը, կարծես, բնութագրվում է որպես կոտորածներ և բռնության ակտեր, միանգամայն սխալ ուղի է: Եթե նույնիսկ հայերի հանդեպ վերաբերմունքում անհնար լինի գտնել որևէ այլ ուղի, ապա արտասահմանի հետ հարաբերության ձևերը պետք է ուրիշ լինեն: Չի կարելի այն ամենը, ինչ վերաբերում է Հայաստանին, արտասահմանում լռության մատնելով գլուխ հանել, այլ անհրաժեշտ է ընդունելի հաղորդագրությունների միջոցով արտասահմանին տեղեկատվություններ տալ այն ոգով, որոնցով հայերի հանդեպ գործողությունները ներկայացվեն միայն մարդասիրական լույսի տակ: Ռուսաստանից սահմանի պաշտպանությունն ունի բավարար հիմք, որպեսզի բացատրվի Բարձր Հայքից հայերի բռնագաղթը, ներկայացվի որպես միջազգային-իրավական առումով սովորական և ընդունելի գործելակերպ: Սակայն Կ. Պոլիսը պարտավոր է ամենից առաջ հայերի դեմ գործողությունները քննարկել այն տեսակետից, որ Վատիկանի հանդեպ Գերմանիայի հարաբերությունները ունեն բացարձակապես այլ բնույթ, որ Գերմանիան ակնհայտորեն մեծ նշանակություն է տալիս այն բանին, որպեսզի այդ հարաբերությունները զերծ

1. **J. Lepsius** Deutschland und Armenien, Potsdam, 1919, s. 191.

մնան հնարավոր բոլոր տարածայնություններից: Գերմանիայի քաղաքական հաշիվներում Պապը հանդիսանում է գործոն, դրա համար էլ հանուն Գերմանիայի շահերի հարկ է խույս տալ այն ամենից, ինչը կարող է գրգռել Պապին կամ Հայկական հարցում Գերմանիայի հակառակորդների մատնությունների հիման վրա նրան հարկադրեն գրավել մեր համար անցանկալի դիրքորոշում և արտահայտվել Թուրքիայում ճնշումների ենթարկվող քրիստոնյաների պաշտպանության օգտին: Չնայած հայերի դեմ բոլոր գործողությունների, անհրաժեշտ է ունակ քարոզչության միջոցով հիմքից զրկել նման հնարավորությունը, և ամենից առաջ շեշտել թուրքական կողմի լավ հարաբերությունները Պապի հետ: Այդ նպատակով շատ օգտակար է թվում, ինչպես այդ արեց Բեթման-Հոլվեգը ռայխստագի վերջին նստաշրջանում, թուրքական խորհրդարանում շնորհակալական խոսք ասել Պապին բարեգործական գործունեության համար, որը հավասարապես օգուտ է բերում բոլոր մարդկանց:

Ամեն դեպքում հարկ է խույս է տալ այն ամենից, ինչը կարող է դժվարացնել Գերմանիայի վիճակը Հայկական հարցում Պապի հետ հարաբերություններում: Նաև անհրաժեշտ է ժամանակին նախազգուշացնել հայերի կոտորածների կապակցությամբ հետագա սադրանքներն արտասահմանում, քանի որ նման բնույթի ահավոր հարցում Գերմանիան լինելու է առանձնակի դժվար վիճակում, որովհետև նա չի կարող հենց այնպես անուշադրության մատնել հայ քրիստոնյաներին: Բացի այդ, զգվելի գործողություններ կատարելու հենց ընթացքում այս կամ այն ձևով պետք է զգուշություն հանդես բերել:[1]

Տեղեկագիր՝ հասցեագրված ՆԳ նախարարությանը

1915-ի դեկտեմբերին մենք գնացինք Դեր Զոր՝ նպատակ ունենալով ուսումնասիրել փախստականների վիճակը և հետաքննել այն անօրինականությունները ու չարաշահումները, որոնք տեղ էին գտել հայերի տեղահանման ժամանակ...

Մեր խնդրի իրականացմանը ձեռնամուխ եղանք բացատրություններ պահանջելով մութեսարիֆներից՝ Դեր Զորի սանջակի գրանցման հաշվառված մյուս հայերի մասին, որոնք այլ վիլայեթներից ու սանջակներից այստեղ էին բերվել, որտե՞ղ էին տեղաբաշխվել ու բնակեցվել, ինչպիսի՞

1. Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության Քաղաքական արխիվ՝ R 14 098, Ab 360, Konst/ Ankara 171, zu Ab 30 454

հանցագործություններ են կատարված հայերի դեմ ճանապարհին կամ նրանց հատկացված բնակավայրում: Ըստ մութեսարիֆի ներկայացրած տեղեկանքի՝ Դեր Զորի սանջակում տարբեր վիլայեթներից ու սանջակներից ուղարկված 229 673 հայեր բաշխված են հետևյալ կերպ.

Սանջակի կենտրոնում 15 000 հայ
Անայի կազայում 3 000 հայ
Աբու Քեմալի կազայում 2 411 հայ
Աշհարայի կազայում 4 000 հայ
Սուարի նահիեում 331 հայ
Մուհնշի նահիեում 567 հայ
Կեսրեի նահիեում 323 հայ
Մերատի նահիեում 479 հայ
Քեֆքեբի նահիեում 62 հայ
Սեբկայի նահիեում 2 500 հայ

Բացի սրանից, մեզ նաև իրազեկ պահեցին, որ տասը օրվա մթերքը մի կողմ է դրված, կեսը՝ փողով, մյուս կեսը՝ մթերքով, հայկական այն քարավանների համար, որոնք շարունակելու են իրենց ճանապարհը՝ անցնելով Բայիդիի և Սուարի նահիեների շրջակայքով, քանի դեռ գտնվում էին սանջակի տարածքում շարժվելով դեպի Մոսուլ՝ որպես իրենց բնակության գոտի: Քարավաններին ուղեկցում էին բավականին թվով պահակային զորամասեր դեպի Մոսուլի վիլայեթի Սինջար կազա անցնելու ճանապարհին:[1]

Բայուր

Ժողովուրդը զանգվածներով տեղափոխվեց Հալեպի և Դիարբեքիրի կողմերը: Նրանք ուղարկվեցին քարավաններով, ժանդարմերիայի ուղեկցությամբ և իրենց սնունդն անձամբ պետք է հայթայթեին:[2]

Թալեաթի՝ 1916 թ. հունվարի 15-ի հեռագիրը

Կիմանանք, թե կարգ մը տեղեր բացուած որբանոցներուն մեջ ծանոթ անձանվորութեանց (հայերի) տղաքն ալ կընդունուին: Քանի որ կառա-

1. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, էջ 220-221:

2. **Y. H. Bayur** Türk inkilabi tarihi. Cilt III, 1914-1918, genel savasi, Kizim III, Türk Tarih Kurumu basimevi, Ankara, 1957, s. 6.

վարութիւնը անոնց ապրիլը վնասակար կը նկատե, ըլլա իսկական նպատակը չհասկանալով եւ կամ զայն արհամարհելով, այդ տեսակ տղաքը սնուցանել եւ անոնց կեանքին յարատեւութեան աշխատիլը, ինչպես նաեւ անոնց վրա գթալը կառավարութեան բաղձանքին բոլորովին հակառակ գործել կը նշանակե: Կը յանձնարարեմ, որ այդ տեսակ տղաքը որբանոցները չընդունուին եւ անոնց համար յատուկ որբանոցներ հիմնելու ձեռնարկներ չըլլան:

-1916 թ. հունվարի 16-ի հեռագիրը

Կը լսենք, որ Ինքիլլի, Այրանի շրջաններէն սկսեալ մինչեւ Հալեպ երկարող գիծերու ճամբաներուն երկայնքը, մեծագոյն մասը կին եւ պզտիկներ, 40-50 հազար հայեր կը գտնուին: Ամենախիստ կը պատժուին այն անձերը, որոնք զինուորական առաքմանց համար մեծ կարեւորութիւն ունեցող այդ դիրքերուն վրա թշվառութեան համախմբման մը կազմուելուն պատճառ կըլլան: Հետեւաբար, Ատանայի կառավարութեան հետ բանակցելով, անմիջապես, առանց Հալեպ հանդիպացնելու, հետիոտն իրենց տարագրութեան վայրերը ղրկեցեք այդ հայերը...

-Ինքիլլի եւ Այրանի դեպքերուն վրա թողուած հայերէն (երկաթուղու) շինութեան մեջ ծառայողները մի ղրկեք մինչեւ շինութեան ավարտումը: Բայց իրենց ընտանիքին հետ միասին բնակելնին թոյլատրելի չըլլալով, զանոնք Հալեպի շրջականները յարմար տեղերու մեջ առժամանակայ կերպով բնակեցուցեք: Մնացած կիներն ու պզտիկները, նախորդ յայտարարութեան համաձայն շուտով ղրկեցեք:

-Նոյնիսկ ոճրագործութեամբ դատապարտուած կամ ամբաստանուած եւ ոստիկանութեան կողմէ ձերբակալուած հայերը բանտերը մի պահեք, իսկոյն առաջ (Դեր Զոր) ղրկեցեք:[1]

Սիմեղի՝ Այնթափի կառավարիչ, 1918 թ. հունվարի 18-ի հեռագիրը

Հաստատուեցաւ, որ մեր շրջանակին պատկանող Ռում Գալեի մեջ յիշեալ նահանգներու ժողովուրդ ըլլալով միայն 500 հոգի կը գտնուին: Ռում Գալեի գայմագամը կը յայտնե, թե ատոնք մեծ մասամբ կիներ եւ մանուկներ են, եւ թե հաղորդուած ծանոթ եղանակով, պահապան քիւրտերու կողմէ ղրկուած են՝ մեյ մըն ալ չվերադառնալու պայմանով:[2]

1. **Ա. Անտոնեան** Մեծ ոճիրը, էջ 186, 59:
2. Ն. տ., էջ 161:

Աբդուլահադ Նուրի

-Հեռագիրը Բաբի գաղթականների առաքման պաշտոնատար Մուհարեմմին (1916 թ., հունվարի 20, թիվ 344).

Բաբի մեջ ոչ մեկ հայու մնալը պիտի արտոնեք: Գաղթականներու առաքման առթիվ ձեր կողմէ ցոյց տրուելիք խստութիւնն ու արագութիւնը միայն կրնան ապահովել այն նպատակը, զոր որ հետապնդենք: Միայն թե պետք է ուշադրութիւն ընեք, որ ճամբաները դիակներ չմնան... փոխադրութեան միջոցներ հայթայթելով մի զբաղիք: Գաղթականները հետիոտն ալ կրնան երթալ:

Այս օրերս մեզի ղրկուած շաբաթական մահերու ցուցակը զոհացուցիչ չէ: Ատկէ կը հասկացուի, որ այդ մարդիկը (հայերը) հոդ շատ հանգիստ կապրին:

Գաղթականների առաքումը պետք չէ, որ ճամփորդութեան մը նմանի: Բողոքի, ողբի կարեւորութիւն մի տաք: Կուսակալութեան կողմէ հարկ եղած տեղեկութիւնները տրուեցան նաեւ գայմագամին:

Ջանք ըրեք:

-Հրահանգ.

Բաբի գազան հայ գաղթականներէն պարպելու առթիւ կատարուելիք խստութիւնները պատասխանատվութեան չպիտի ենթարկուին:

-1916 թ. հունվարի 23-ի ծածկագիրը

Անանկ ատեն մը, ուր պաշտպանութեան եւ սնունդի կարոտ հազարավոր իսլամ գաղթականներ եւ նահատակներու (ռազմաճակատում) այրիներ կը գտնուին, ապագային դարձեալ վնասակար դառնալէ զատ ուրիշ բանի չծառայելիք կարգ մը ծանոթ անձնավորութեանց (հայերի)ձգած պզտիկներուն սնուցման համար ավելորդ ծախքեր ընելը յարմար չէ: Ատոնք, տարագրութեան կարավաններուն ընկերակցելով, վիլայեթէն (Հալեպի) դուրս հանել եւ մինչև հիմա սնուցողներն ալ մեր վերջին զեկուցման համեմատ, Սըվազ ղրկել:

-1916 թ. հունվարի 28-ի հեռագիրը

Ցուրտերուն սաստկութեամբ շարունակած այս միջոցին որբերը որոշուած տեղը ղրկելով, անոնց յավիտենական հանգիստը պիտի ապահովուի:[1]

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 91-92, 97, 189, 192:

-1916 թ. փետրվարի 3-ի ծածկագիրը

Ծանոթ անձնավորութեանց (հայերի) խռովարար գաղափարներուն ու ձեռնարկներուն նկատմամբ քննութիւններ կատարելու եւ փաստաթղթեր ձեռք բերելու պաշտոնով Մուսթաֆա Նայիլ էֆենտիի նախագահութեան տակ Ուրֆա ղրկուած յանձնաժողովը նոյն տեղի պարտականութիւնը լրացնելէ ետք Ձեր նահանգին ենթակա Այնթափի եւ Քիլիսի կողմերն ալ քննութիւններ պիտի կատարէ: Հետեւաբար պետք եղած ջանքերը դիւրացնելու եւ արդիւնավորելու համար լավագոյն միջոցներ ձեռք առնեն:[1]

Էնվերի և Թալեաթի պատասխանը գերմանական երեսփոխան Մ. Էրգբերգերի հարցերին (1916 թ. փետրվարի 10-ին)

Էնվեր. Հայերի դեմ այլեւս միջոցներ չեն ձեռնարկվի, իսկ քշված հայերը կբնակեցվեն փակ բնակավայրերում:

Թալեաթ. Հայկական եկեղեցիները կբացվեն: Քրիստոնյաների արտաքսումները կամ բռնությունները Սիրիայում բացառվում են: Հոգևոր ճեմարանները և ուսումնական հաստատությունները կարող են նորից բացվել, միայն թե դրանից չպետք է տուժեն Թուրքիայի պետական շահերը:[2]

Ա. Նուրիի 1916 թ. փետրվարի 26-ի ծածկագիրը

Տեղեկութեան համար կը հաղորդեմ, թե արհեստավորի հանգամանքով Սուրիա մեկնողները բացառութիւն ըլլալով, մինչեւ հիմա (անապատները) ղրկուած հայերուն հազիվ մեկ քառորդը տարագրութեան վայրերը հասած է: Մնացածները բնական պատճառներու բերմունքով, ճամբաները մեռած են: Կարգ մը պատճառներու հետեւանքով մինչեւ հիմա Հալեպէն չհանուողներն ալ շուտով ղրկելու համար հարմար եղած միջոցները ձեռք առնուած են:[3]

Կեսարիայի մութեսարիֆի հայտարարությունը (31 հունվարի 1916 թ.)

Ով կընդունի իսլամական կրոնը, կներվի, ով չի ընդունի՝ կուղարկենք Սըվազ (այսինքն դեպի մահ):

1916 թ. փետրվարին Հալեպի բանվորական գումարտակը մահմեդականություն ընդունեց, որովհետև քաղաքի ոստիկանությունը պնդում էր. «Աքսորից ազատվելու, փրկվելու միակ միջոցը կրոնափոխվելն է»:

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 215:
2. Wien, Dioseson, Archiw, Maria Emfangnis, Verein, 10 Februar, 1916.
3. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 166:

Յոզղաթի կայազորի հրամանատար-ցեղապետ Սալիմի պաշտոնական վկայությունը հետաքննիչ հանձնաժողովում 1918 թ. դեկտեմբերի 9-ին

1915 թ. մայիսի 14-ի օրենքի երկրորդ հոդվածի տրմադրության համաձայն վերև հիշված (բանակների) հրամանատարները իրավունք ունեին, ռազմական անհրաժեշտության դեպքում, տեղահանել և ուրիշ տեղ փոխադրել գյուղերի և գավառների բնակիչներին անհատ կամ խմբերով, եթե տարակույս ունենային նրանց լրտեսության կամ դավաճանության հանդեպ:

Ռազմական նախարարության 1915 թ. ապրիլի 22-ի հավելյալ մի այլ հրամանով թույլատրվում էր զորակոչել 19 և 20 տարեկաններից բացի բոլոր նրանց, ովքեր ի վիճակի էին զենք կրել: Այս տրամադրությունը պիտի կիրառվեր մեծամասամբ այն վայրերում, որտեղ հայերը մեծ թիվ են կազմում:

...1915 թ. մայիսի 5-ի գաղտնի հրամանով (հանձնարարվում էր հայերի մեջ) ... համոզում ստեղծել, թե նրանք, ովքեր հլու հպատակ մնան, որևէ չարիքի չեն ենթարկվի...

... 1915 թ. հուլիսի 18-ի ծածկագիր հեռագրով քաղաքացիական վարչության պաշտոնյաներն իրավունք չունեին միջամտել հասարակական կարգին ու կարգապահությանը և միայն զինվորական իշխանությունն էր դրա համար պատասխանատու:

Յոզղաթ, Չորում գավառներում եղած կասկածելի և վտանգավոր հայերը տեղահանվելու էին... Կեսարիայի ճանապարհով դեպի իրենց աքսորավայրը...

1915 թ. մայիսի 20-ի հրամանով պետք է ստեղծվեր լքյալ գույքերի հանձնաժողով, որը պետք է վաճառեր ընտանիքներով տեղահանված հայերի գույքերը և կալվածքները...

(Սկզբում գործում էինք համաձայն այս հրամանի), մինչև, երբ, ավա՜ղ, մի շարք անձինք, մանավանդ նրանք, ովքեր պարծենում էին Միություն և առաջադիմություն կուսակցությանն իրենց պատկանելով, և որոնք վայրկյան անգամ չհապաղեցին իրենց ընչաքաղցությանը գոհացում տալու համար կատարել ապօրինություններ... Նրանք կեղծ ու հնարովի, պաշտոնական և անպաշտոնական տեղեկագրեր ուղարկեցին կառավարությանը՝ հայթայթելով բավարար պատճառներ հայերի հանդեպ

կիրառելու վերոհիշյալ որոշման տրամադրությունները... Նույն անձինք զորաբանակի և դիվիզիայի հրամանատարներին Նեջաթի բեյի միջնորդությամբ հայտնեցին, թե ինչ-որ երևակայական հայկական կոմիտե գոյություն ունի: Իշխանությունը տրամադրված էր սա իբրև իրականություն ընդունելու: Հետևաբար հրամայեցին հայերի մոտ զենքեր փնտրել: Սակայն գտան այն զենքերը, որոնք զենք փնտրող պաշտոնյաներն էին դրել այնտեղ: Վերջապես տրվեց հայերի տեղահանության հրամանը: ...Ժանդարմական վաշտի հրամանատար Թևֆիկի հայ գյուղերի վրա արշավների ընթացքում բազմաթիվ հայեր սպանվեցին առանց որևէ պատճառի՝ պատրվակով, թե պատկանում են կոմիտեներին: Սակայն նա դրանով չգոհացավ: ... Այս արյունարբուն... անցավ բոլոր սահմանները Սարը Համզայի դեպքերի ժամանակ, երբ 13 հայ սպանվեց և հինգը վիրավորվեց (որոնց էլ ձերբակալեցին)... Թևֆիկը... Չափանլրի մոտ սպանել տվեց այն հայերին, ովքեր բանտարկված էին...

Առաջին քարավանի առաքելու ընթացքում տեղահանված 472 հայեր սպանվեցին Սեբաստիայի կուսակալ Մուամմեր բեյի հրամանով... Նա անգամ որոշեց ուղեկցել քարավանը և հանդգնեց նրանց (հայերի) միջոցով հասարակական փոս փորել Ինջե Չայիրում՝ տարագրվածներին կոտորելու և թաղելու համար... Բողազլյանի նախկին կայմակամ, ժամանակավոր մութեսարիֆ Քեմալ բեյը... և իր արբանյակները գործեցին ամեն տեսակի խժդժություններ և գարշելի արարքներ...

Այն քարավանը, որը բաղկացած էր 80 տարագիրներից և ուղարկվեց դեպի Կեսարիա ժանդարմների հսկողության տակ, հարձակման ենթարկվեց Ջալակ Դեյիրմենի մերձակայքում: 12 հոգի կարողացավ ազատվել: Հայտնի չէ, թե ինչ եղան մնացած 68 հոգին:

Բեբեք հայկական գյուղից հայերը ցորեն էին տեղափոխում զինվորական տուրք վճարելու համար: Վերադարձին հարձակման ենթարկվեցին Դեղիկ և Ռաղվանլը գյուղերի մերձակայքում: 15 հոգու դիակները գտնվեցին կոտորված Հալկալի Չայիրի մոտերքը...

Կայմակամ Քեմալ բեյը, երբ Յոզղաթ հասավ... ժանդարմների հրամանատարի օգնական Նուման հանձնարարություն ստացավ կոտորելու Սորկուն գյուղի հայերին: Քաղաքապետարանի տնօրեն Ահմեդ էֆենդիի եղբայր Ռիզա Չաուշը հանձնարարություն ստացավ ջարդելու Մարայի շրջանի հայերին: Ջարդավայր նշանակված Կելլերի կոտորածները վստահվեցին հետևյալ անձանց՝ Յոզղաթի որբերի տնօրեն Մեհմեդին,

Բաքրջի Հաջի Մահմուդին, Թևֆինզադե Աբդուլլահ Շևքիին, ժանդարմեական գնդապետ Շուքրիին, Դաղստանլի Իսմայիլին, Ակթաշ ավանի քաղաքապետ Ֆերիդին և Բողազլյանի դատավոր և ժամանակավոր կայմակամ Ալի Ռիզային: Տաշբինարի մերձակա ջարդավայրի տնօրինությունը նորից վստահվեց Շուքրիին, Իսմայիլին, Ահմեդ Չաուշին, Չապանլզադե Իսա բեյի որդի Դերվիշ բեյին: Բոլորն էլ իրենց պարտականությունը կատարեցին կատարյալ բարեխղճությամբ՝ հնազանդվելով իրենց վերադասերից ստացված հրամաններին: Չատ, Չակմակ, Տերզիլի, Կար Յակուբ և դեռ ուրիշ հայ գյուղեր, որոնց անունները չեմ հիշում, գնդապետ Թևֆիկն ու իր օգնականները (այսինքն՝ չաուշներ՝ տասնապետներ, և չերքեզների անկանոն խմբեր) գործեցին գարշելի ոճիրներ, որոնց մասին լավ գիտի երկրի յուրաքանչյուր բնակիչ: Ժանդարմները շատ ավելի սարսափած իրենց կատարած ոճիրներից, քան պատիժներից, որոնց իրենք ենթակա էին, պահանջեցին, որ հրամանները գրավոր տրվեն: Պատասխանեցին, թե նրանք կկիսեն հայերին բաժին ընկած վիճակը, եթե երբևիցե պնդեին իրենց տեսակետը, և նրանք հարկադրված եղան կատարել այն, ինչ հրամայված էր:

Հետևաբար, հայերն անմեղ են և իրենց վերագրված ոճիրները չեն կատարել... Ես այս կարծիքը հայտնեցի դիվիզիայի հրամանատարին, որն այն ոչ միայն նկատի չառավ, այլև ինձ հրամայեց բնաջնջել հայրենիքի այդ դավաճաններին, իսլամի թշնամիներին, կոմիտեների կասկածելի անդամներին...

Հաջորդ ուրբաթ օրը, համաձայն կազմված մատրանների, հայերը հավաքվեցին և բանտ դրվեցին: Կիրակի առավոտյան, հուլիսի 26-ին, 472 հոգի առաջին քարավանով ուղարկվեցին Սեբաստիայի ուղղությամբ դեպի իրենց աքսորավայր՝ Զորի գավառ:

Նույն օրը Էլմասյան հայ ընտանիքի ծիու կառքը նստելով՝ Նեջատի բեյը Չորում գնաց, այդտեղ էլ հայերի տարագրության համար անհրաժեշտ հրահանգներ տալու և տնօրինությունն ու վարչությունը վստահելու Միություն և առաջադիմություն ակումբի նախագահին և անդամներին:

...1915-ի հուլիսի 28-ին և օգոստոսի 4-ին երկու ուրիշ քարավան էլ ուղարկվեց, մեկը՝ 257 հոգուց, մյուսը՝ 99 հոգուց կազմված... Թեև Ջեմալ բեյը գործեց համաձայն ստացած հրամանների, սակայն Նեջատի բեյի մատնությամբ պաշտոնազրկվեց և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյը դարձավ Յոզղաթի ժամանակավոր կայմակամ: Այդպիսով, Միություն և

առաջադիմություն կուսակցության անդամները, ինչպես նաև նրանք, ովքեր երազում էին չարաշահությունով հարստանալ, հասան իրենց նպատակներին և ցավալի ու մարդկային պատմության մեջ աննախադեպ ոճիրներ գործեցին: Այնպիսի գարշելի արարքներ կատարեցին, որ հավատաքննության խժդժությունները ստվերի տակ մնացին և արատավորեցին իսլամի պատիվն ու Օսմանյան կայսրության պատմությունը:

Յոզղաթի ժանդարմների հրամանատարը... Նեջատի բեյի գալուց հետո... պնդեց, որ Յոզղաթի հայերը կոմիտեների անդամներ էին: Նա անձամբ ղեկավարեց քարավանները...

Նեջատի բեյը... Բալկանյան պատերազմից հետո նշանակվեց Անկարայի կուսակցական պատասխանատու քարտուղար: ...Ընդհանուր զորակոչից օգտվելով՝ նա շարունակեց տարագրել հայերին: Հիմա նա շատ հարուստ է և 200 հազարից ավելի թրքական ոսկու դրամագլխի է տիրացել:

Նույնպես այստեղ էր, որ հայկական ողբերգության դավադիր գործերը կատարվեցին, այնպես որ Ահմեդ էֆենդին (Յոզղաթի քաղաքապետ) ճանաչվեց անկարայում Միություն և առաջադիմություն կուսակցության ամենաազդեցիկ անդամներից մեկը և հաջողացրեց Պոլսի համագումարին մասնակցել...

...Նախաքննիչ ատյանի նախագահ Համդե էֆենդին և ուրիշ շատերը... հատուկ առաքելությամբ Գելլեր ուղարկվեցին: Տաշ բինար և այլ տեղերում էլ նշանակված էին կոտորածների վայրեր և որտեղ դրամներ և արժեքավոր իրեր հավաքելուց հետո, ջարդի հրաման էր տրվում, և նրանք անձամբ էին ղեկավարում ջարդերը իրենց հավատարիմ ծառայությունը կուսակցությանը մատուցելու համար...

Գալով կայմակամ Քեմալ բեյին, Յոզղաթի ժամանակավոր մութեսարիֆ կոչվելուց հետո, սկսեց իր պարտականության կատարումը՝ հետևելով բնաջնջման քաղաքականությանը: Ամեն իրիկուն ավագ հաշվապահ Վեհիր էֆենդու տանը հրավիրում էր քաղաքապետարանի տնօրեն Ահմեդին, նախկին քարտուղար Մուստաֆա բեյին, Սաիդ բեյին և ուրիշ գործակիցների, որոնք մի քանի գավաթ կոնծելուց հետո որոշում էին հաջորդ օրվա իրենց անելիքները: Այսպես էր նա իրագործում կոմիտեի «Ազգային ձգտումները»:

Հանձնաժողովը հայերի տների իրերն էր գույքագրում և ապա դրանք մի սենյակի մեջ լցնելով՝ կնքում էր: Տեսնելով, որ իր ընկերները զբաղ-

ված են կահկարասիները իրար մեջ բաժանելով՝ քաղաքապետարանի նախկին նախագահի աները՝ Շուքրի բեյը, ծխախոտի նախկին տնօրենի տան մեջ բռնաբարում էր նրա հարսներին: Նույն մարդը հայերի տներից գողացավ բազմաթիվ առարկաներ...

Ես աշխատանքից հեռացա: Դրանից հետո էլ բազմաթիվ զզվելի արարքներ տեղի ունեցան, օրինակ, տեղահանված կանանց մարմիններ-ի ամենաներքին մասերի խուզարկությունը՝ ոսկի փնտրելու պատրվակով: Կապիլե հանըմը, հաշվապահ Վեհիբ բեյի կինը, գործեց որպես մասնագետ խուզարկու: Նա իր խուզարկությունները կատարեց քաղաքից դուրս և քննեց տարագրված կանանց մարմիններն այն աստիճան, որ խուզարկեց կանացի անդամների ներսի մասերը՝ այնտեղ ոսկի փնտրելու պատրվակով: Այսպես, շատերը, քաղաքացի և գյուղացի՝ նաջախներով, դանակներով, փոքր կացիններով, բիրերով, ոմանք ձիերի վրա՝ սվիններով ու զենքերով, իսկը շների նման, սպանդանոցի արյան հոտն առած, սկսեցին վազել և հետևել քարավաններին՝ կոտորածներին մասնակցելու համար: Ես վկայում եմ, որ այս բարբարոս և արյունալի արարքները կատարվեցին Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների և նրանց պաշտոնյաների կողմից:[1]

Փախստականներին օգնող ամերիկյան ծառայության ներկայացուցիչ դոկտոր Մակ-Կալամ

«Մշակի» թղթակցի հարցին՝ «Արդյոք Կ. Պոլսում ամերիկյան դեսպանը որևէ միջոցի չդիմե՞ց հայկական կոտորածներին վերջ դնելու համար և այդ նպատակով չդիմեց թուրքական կառավարությանը», պատասխանեց.

-Իհարկե, ամերիկյան դեսպանը դիմել է Էնվեր փաշային և ձգտել է ազդեցություն գործել նրա վրա, բացատրելով, թե թուրքական կառավարությունը ինչպիսի վիթխարի պատասխանատվության է իրեն ենթարկում իր անխիղճ գործելակերպով: Սակայն Էնվեր փաշան նրան պատասխանել է. «Պարոն դեսպան, եթե այս պատերազմից մենք հաղթող դուրս գանք, այն ժամանակ ո՞վ կհամարձակվի մեզնից հաշիվ պահանջել կատարածի համար: Իսկ եթե պարտվենք, ապա կգիտակցենք, որ մեր վերջն արդեն եկել է, իսկ այդ դեպքում հայկական կոտորածներն առանձին դեր չեն խաղա մեզ համար:

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 574-577:

Ներկայումս եվրոպական պետություններն ավել քան զբաղված են պատերազմով. նրանց մի մասը մեր բարեկամներն ու դաշնակիցներն են, մյուսները՝ մեր թշնամիները, և նրանք բոլորն անում են այն, ինչ կարող են: Մնում է Ամերիկան: Սակայն մենք գիտենք, որ դուք ի վիճակի չեք մեզ ինչ-որ բան անել: Անցել են այն ժամանակները, երբ դուք 2-3 նավ էիք ուղարկում Բեյրութ կամ Զմյուռնիա ցույցի համար, և մենք վախից հարկադրված էինք կատարել ձեր հրամանները:

Ներկայումս մի քանի տասնյակ թշնամի նավեր շրջապատել են մեր երկիրը, և մենք նրանց դիմադրում ենք: Այս պայմաններում ձեր 2-3 նավերը մեզ համար այլևս նշանակություն ունենալ չեն կարող: Իսկ եթե սպառնաք մեր դեմ զորքեր ուղարկել, այդ դեպքում էլ մեզ որևէ լուրջ վնաս հասցնել չեք կարող: Մեր դեմ գործող 500 000 թշնամի զորքերին լավագույն դեպքում կավելանա ևս 100 000, ինչը մեզ համար մեծ սպառնալիք չէ:

Հետևաբար, դուք իզուր եք ահաբեկող տոնով խոսում: Ավելի լավ է զբաղվեք ձեր գործերով և հնարավորություն տվեք, որ մենք էլ զբաղվենք մեր գործերով»:[1]

Էնվեր փաշայի հայտարարությունը թուրք, քուրդ և արաբ երևելիների ժողովում

Փաշաներ ու հերոսներ.

Յանուն Օսմանեան կայսրութեան, կողջունեմ հայրենիքի հերոս զավակներդ, որ իրականացնելով մեր ազգային իդեալը, հայրենիքը մաքրեցինք կեավուր էրմենիներէն: Անձամբ շրջեցա արեւելյան նահանգները, Անատոլու, Արաբիա, Միջագետք, աչքերովս տեսա ու կը վկայեմ բոլորիդ հայրենաւեր ծառայութիւնը:

Ցավ է յայտնել, որ շատ վայրերու մեջ 8-10 տարեկանէն վեր կեավուրի լակոտներ ողջ ձգուած են, որդեգրուած կամ թրքացուած... Մեր միակ նպատակն է կեավուր հայերու սերունդը իսպառ ջնջել երկրագունդի վրայէն: Նմոյշի համար մեկ հատիկ իսկ հայ չձգել:

Այս պետք է ըլլա ամենուդ նշանաբանը...

Ուստի, պարտք կը դնեմ բոլորիդ վրա, երբ վերադառնաք ձեր շրջանները, ճիգ մը եւս ի գործ դրեք, որպեսզի էրմենի ճինսը աշխարհիս երեսէն ի սպառ ջնջեք, քեռքը չորցնեք եւ թախումը անհետացնեք:

1.“Армянский вестник”, 916, թիվ 2:

Ամեն տեղ, որ այցելեցի, տեսա որ միջոցներուն մեջ խտրութիւն չէ դրուած: Ապրիք: Քաղաքներ եւ գիւղեր կրակի տրուած, անհավատներուն աղոթատեղիները քանդուած, բնակչութիւնը տեղահանուած եւ կոտորուած ըլլալով, Օսմանեան հայրենիքը մաքրուած էր անօրեններէ: Մեր միակ նպատակն ալ, արդեն, ուրիշ բան չէ, եթե ոչ երկիրը մաքրել այս անհավատներէն, Օսմանեան կայսրութիւնը դարձնել միածոյլ, միակրոն, միատարր, մեր գլխուն վերեւ չենք հանդուրժեր, որ կախուի Դամոկլեան սուր... Այդ սուրը օսմանեան կայսրութեան երկնակամարէն յավիտեան խորտակուած է կեավուրներու համայնական բնաջնջումով...

Փա՛ռք, պատի՛վ բոլորիդ...

Վեհափառ կայսեր հավանութեամբ եւ նախարարաց խորհրդի որոշումով աստիճաններու եւ պաշտոններու բարձրացում եւ պատուանշաններով վարձատրութիւն պիտի ըլլայ բոլոր անոնց, որոնք Օսմանեան ամենազոր կայսրութեան իրենց հավատարմութեան ապացոյցը տուին...

Հիմա խոսքս ձեզի կուղղեմ, պատրաստուելու Հալեպի, Մոսուլի եւ մանավանդ Նիսեյպինի շրջակայքը գտնուող հայերու հաշիվը վերջնականապես մաքրելու...[1]

Պեյսիի՝ զորահրամանատար, հրամանը

Նախ կը ձերբակալեք Նիսեյպինի մեր մթերանոցին պատասխանատու կեավուրները... Զանոնք նեղը կը դնեք ու կը ստիպեք, որ խորհուրդ տան իրենց ազգակիցներուն հեռանալ Համզա աղայի հողերուն վրայէն եւ ապահովութեան համար ապաստանիլ զինուորական մթերանոցները... Մինչ այդ կը հասնին մեր ներկայացուցիչները, շարժման կը մղեն ջարդարար խումբերը, միւս կողմէ, կրակի կու տան քարիւղով օծուած մթերանոցները... Այսպես գործելով, կը փակեն հաշիվը Նիսեյպինի 12 հազար հայերուն...[2]

Ջեմալ փաշա

Չնայած տվածս հրամաններին և հաղորդագրություններին, որ տարբեր վայրեր ուղարկված հայ ազգաբնակչությունը չենթարկվի ոչ մի ճնշման և վատ վարվեցողության, տեղեկանում եմ անախորժ դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել:

1. **Շավարշան** Մեծ եղեռնը հայոց, Բուենոս Այրես, 1987, էջ 467-468:
2. Ն. տ., էջ 477:

Ստորև մի քանի մանրամասնություն, որ ստացել եմ այդ մասին.

Հայերը ենթարկվել են դաժան վիրավորանքների և կամայականությունների այն ծառայողների կողմից, որոնց հանձնարարված էր նրանց ուղեկցել:

Հայկական դպրոցների և որբանոցների աշխատակիցներն ու ուսուցիչները նույն վերաբերմունքին են արժանացել, ինչ տեղի բնակչությունը, փոխանակ ետ ուղարկվեին իրենց գավառները: Նրանցից ոմանց նույնիսկ չեն թողել վերցնելու իրենց զգեստները: Գետաբերանից կանայք կանչվել են այն պահին, երբ լվացք էին անում և նրանք ստիպված են եղել ճամփա ընկնել ոտաբոբիկ՝ չկարողանալով նույնիսկ տանել իրենց լվացած սպիտակեղենը:

Որոշ ընտանիքների հայրեր ուղարկվել են իրենց կանանց և երեխաներից հեռու վայրերը: Փոխադրամիջոցի բացակայության պատճառով որոշ կանայք հարկադրված ազատվել են երեխաներից, որպես ավելորդ բեռ և թողել են նրանց ճամփին կամ ցանկապատի տակ, ոմանք նույնիսկ փորձել են վաճառել երեխաներին:

Թույլ չեն տվել բերել այն անասունները, որոնք գտնվել են բնակավայրից հեռու:

Նմանօրինակ վերաբերմունքը արատավորում է մեր ազգային պատիվը, ստվեր գցում օսմանյան անվան վրա: Հետևաբար իրավասու իշխանությունների ուշադրությունն եմ հրավիրել այս բոլորի վրա:[1]

Թալեաթ

Ռազմական անհրաժեշտությունն էր հարկադրում հայերին հեռացնել իրենց երկրից: Միջազգետք փոխադրելու ժամանակ հարձակման ենթարկվեցին թուրքերի կողմից ու նրանց մի մասը սպանվեց:

1915-ի մարտին, Դարդանելի կռիվների ժամանակ, անհրաժեշտ համարվեց հեռացնել Պոլսի և մերձակայքի հայերին: Կառավարությունը հրամայեց նրանց տեղափոխել Զոր: Դժբախտաբար այդ միջոցները գործադրող պաշտոնյաները ծայրահեղություններ կատարեցին...

Մենք բարբարոսներ չենք: Այս ողբերգական իրադարձությունների մասին պատմությունները ինձ հարկադրեցին անցկացնել բազում անքուն գիշերներ:[2]

1. **Ջեմալ փաշա** Հայկական հարց, Երևան, 1927 , էջ 50-54:

2. "Berliner Tageblat", 4 մայիսի 1916թ., **Ռ. Պինոն** Հայերի բնաջնջումը, գերմանական մեթոդ, թուրքական գործելակերպ: Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1068:

Էնվերի և Ջեմալի զրույցը Դամասկոսում

Ճեմալ դառնալով Էնվերին կըսէ.

-Այս ճամբան շինողները բոլորն ալ հայեր էին:

Էնվերի դեմքը կը մթագնի ու դառնութեամբ կը պատասխանե.

-Ճեմալ, ես գիտեմ դուն հայ ժողովուրդին վրա կը գթաս, կը ցավիս անոր ենթարկուած վիճակին եւ այդ իսկ պատճառով կուզես սիրտս շարժել, զիս կակուղցնել: Բայց լավ գիտցիր, որ կը սխալիս, որովհետեւ այս ազգին զավակներէն եթե մեկ հատ իսկ ողջ մնա, ան կրնա մեր գլխուն փորձանք բանալ: Պետք չէ խղճահարուիլ, պետք է ջարդել անոնց մինչեւ վերջին... մարդը:[1]

Ջեմալ փաշան Գր. Թաթուլյանին

Ես նախապես ծրագրուած հայկական ջարդերուն դեմ էի, սակայն ի՞նչ կրնայի ընել, իմ դիմացս կային Թալեաթը, Էնվերը եւ ամբողջ իթթիհադական ջոլիրը:

Երբ Թուրքիոյ բոլոր նահանգներուն հայութիւնը տեղահան ըլլալէ առաջ, այրերը հավաքելով, ամալէ թապուրի ըսելով, կը տանեին, կը ջարդեին ձորերու մեջ եւ վերջն ալ անոնց ընտանիքները տարագրելով, առեւանգելով, քաշքշելով կը տանեին, կը ջարդեին, ես այդ օրերուն Ատանայի կուսակալ էի: Իմ կուսակալութեանս շրջանին Ատանայի մեջ բան մը պատահեցա՞վ: Նոյնիսկ Հաճնոյ մեջ ձերբակալուած հնչակդաշնակ յեղափոխականները, որոնք վճռաբեկ ատեանին կողմէ մահուան դատապարտուած էին, ես անոնց մահավճիռը ցկեանս բանտարկութեան փոխեցի:

Եթե գիտենայի, որ այս սրիկաները հայ ազգին դեմ այսքան չարիք պիտի գործեն, Ատանայի մեջ կուսակալ եղած ատենս, կանցնեի հայոց կողմը իմ բանակովս և ռազմանիւթով ու միանալով եւ կազմակերպելով Հաճընն, Զեյթուն և Կիլիկիոյ այլ շրջանները, կրնայի Կիլիկիայում անկախութիւն հռչակել: Սակայն ես ալ հայերուն նման շատ ուշ հասկցա սարքուած դավադրութիւնը: Էնվեր փաշան Դամասկոսի մեջ ինձի հետ տեսակցելէ ետք մեկնեցաւ Ստամպուլ, ան հեռագիր հեռագրի ետեւէ ինձի կը հրահանգեր. «Ջարդեցեք հայերը, բնաջինջ ըրեք, ոչ ոքին խնայեցեք»: Ես այդ օրերուն մեկ միջոցի դիմեցի ազատելու համար հայերը հս-

1. **Հ. Սահակեան** Հայ դատը, էջ 40:

կական բնաջնջումէ: Մարդիկ ղրկեցի զանազան գիւղեր եւ քաղաքներ պատուիրելով, որ հայերն իրենց անունը փոխեն եւ երբեմն ալ երեսանց կրոնափոխ ըլլան, որպեսզի ողջ մնան:[1]

Մահմուդ բեյ՝ ջարդարար, չեբեապետ

Ես կարող եմ պարծենալ, արար աշխարհը կվկայի, որ կառավարությանը շատ եմ օգնել ու հավատարմությամբ կատարել նրա հրամանները: Հպարտ եմ ասել, թե 4-500-ից ավելի գյավուրի այս ձեռքովս (աջ ձեռքը երկարելով) եմ սպանել:

...8 000-ից ավելի իմ ջանքերով և իմ հեծյալներով ենք այն աշխարհը ուղարկել...

...Մոտավորապես երկու տարի առաջ Ռաս ուլ Այնի մեր ցեղակից կայմակամը մասնավորապես ինձ կանչել էր, և ես ներկայացա: Ասաց, թե ժամանակն է գործը սկսելու: Ահավասիկ ասպարեզը բաց է: Պաշտոնական հրահանգ եմ ստացել գյավուրներին բնաջնջելու: Դու վստահելի անձ ես, հավաքիր քո քաջերին, ահա քեզ նամակ Դեր Զորի մութեսարիֆին: Հրամանները նրանից կստանաս և, հույս ունեմ, որ ինձ սպիտակերես կանես: Անմիջապես պատրաստվեցի ու 200 հեծյալներով հաջորդ օրը ճամբա ընկա Դեր Զոր: Ինչ տեսնեմ, եղբայր, կարծես Մուշում կամ Վանում լինեինք, հայերն այստեղ հաստատվել էին այնպես, ինչպես իրենց տանը՝ խանութպանները նրանցից էին, վաճառականները՝ նրանցից, ուսուցիչները գյավուրներ էին, վերջապես, ամեն ինչ գյավուրների ձեռքում էր: Դեր Զորի նախորդ մութեսարիֆ շունը նրանց բոլոր դյուրությունները ընծայել էր...

Գյավուրներին սկսեցինք հետապնդել... քաղաքից դուրս եղած վրանների հայերին ջարդել: Ոստիկանությունն ինձ բոլոր լիազորությունները տվել էր և, կարող էի ամեն ինչ անել: Անմիջապես կամուրջից անցա ու պաշարեցի 10 հազար հայով բնակեցված վրանները իմ 200 հեծյալներով ու արաբ ուժերով, որոնց միայն ես էի հրամայում... Անմիջապես սկսեցինք խուզարկությունը... զենք, դրամ, բոլոր տեսակի ապրանքներ, գեղանի կանանց հափշտակելու համար: Առաջին անգամը լինելով՝ չէի ուզում նրանց կյանքին կպչել: Հազիվ նրանց մոտեցել էինք... ատրճանակներով կրակ բացին մեր վրա... Ձենքի դիմեցինք ու չորս կողմից նրանց վրա կրակ բացեցինք:

1. **Հ. Սահակեան,** Հայ դատը, էջ 42-44:

Եկան մութեսարիֆը, ոստիկանապետն ու ժանդարմները, որոնք մեզ օգնեցին... Չորս ժամ շարունակ կրակելուց հետո դեպի վրաններ իջանք սրերով, քրերով... Այդքան հարստություն, այդքան շքեղություն երբեք չէինք տեսել: Ծերեր, երիտասարդներ, կանայք, երեխաներ՝ բոլորը մեր ոտքի տակ էին... Այս աշխատանքը մեզ քանկ արժեցավ, որովհետև դժվար գործ էր մեկ առ մեկ կողոպտել, խուզարկել և գիշերվա մութին գեղանի կանայք փնտրել: Բայց ամեն ինչ հաջողությամբ կատարեցինք: Կես գիշերն անցել էր, երբ ետ քաշվեցինք, այստեղ դիզել էինք ամբողջ կողոպուտը, որովհետև հաջորդ օրը մութեսարիֆի ու ոստիկան մյուդիրի հետ միասին հաշվելով՝ պիտի բաժանեինք: Կողոպուտի կեսը ինձ պետք է տրվեր, ու ես էլ մաս պիտի հանեի իմ հեծյալ ծառաներին: ...Ծառաներիցս մեկը... հետը բերել էր 5 կին-աղջիկ ինձ համար, շատ գեղանի էին: Նույն ժամանակ եկան իմ հեծյալների երեք հրամանատարները և ասացին, թե գյավուրները դեռ չմեռած իրենց ոսկիները կուլ էին տվել: Պետք է մարմինները հոշոտել՝ դրամները հանելու համար: Հավանություն տվեցի և առավոտյան այս գործը կատարեցինք...

Մնալով կանանց հետ՝ ես նրանց մոտեցա, գարշելիները սատանայի նման վրաս նետվեցին, ձեռներս բռնեցին ու բռունցքներով հարվածեցին, անամոթները ուզում էին ատրճանակս հանել: Բարեբախտաբար ծառաներիցս մեկը ներս մտավ և ատրճանակը պարպեց կանանցից մեկի վրա, որը վիրավոր ցուլի նման մի հարված տվեց ամորձիներիս: Ուշաթափ ընկա: Օգնության եկած ծառաներս չորս կանանց կապեցին: Վիրավորված կնոջը տվեցի ծառաներիցս մեկին, որպեսզի մինչև մեռնելը բոլորի ներկայությամբ բռնաբարի: Մի փոքր ուրախանալուց հետո խսիր բերին, նրա ծծերը կտրեցին և տվեցին ձեռքերը, ապա նրան խսիրի մեջ փաթաթեցին, միայն ոտքերը դուրս թողեցինք ու սկսեցինք խուտուտ տալ և այդպես կես ժամվա մեջ մեռցրինք: Մյուս չորսին կապված վիճակում բռնաբարեցի: Նրանցից վերջինը գլխով այնպես հարվածեց, որ քթիցս արյուն հոսեց: Դրանից հետո նրանց բռնաբարեցին ծառաներս: Գիշերը նրանց տարանք գետ: Գետի երկու ափերին կանգնած ծառաներս պարանը ձգում էին, երբ կանայք սուզվում էին և, նրանք վեր էին բարձրանում, և ապա թուլացնում ու, նրանք կրկին սուզվում էին և, այսպես երկար զվարճացանք, մինչև նրանք խեղդվեցին:

Լուսաբացին մեռած հայերի փորերը բացեցինք և ոսկիներ հանեցինք, ապա փոսեր փորեցինք, հայերի ոսկյա ատամներն էլ հանելուց հետո նրանց հորեցինք:

Խապուրից ձախ հետապնդում էինք մի մեծ բազմության: Այնտեղ էին Դեր Զորի մութեսարիֆն ու Ռաս ուլ Այնի կայմակամը: Ինձ հրամայեցին 2 000 գյավուրի տանել ու Իջաբին նայել: Երեկոյան տղամարդկանց կանանցից առանձնացրինք՝ թվով 500 հոգի, նրանց մերկացրինք ու մեկդի թաղեցինք: ...Կանանց ևս մերկացրինք, նրանց բերաններից ոսկի ատամները քաշեցինք... հետո սկսվեց բռնաբարությունն ու մահվան խաղը:

Մինչ մենք կողոպուտը ձիերի վրա էինք բեռնում, այդ նույն ժամանակ կանանց ու երեխաների աղաղակները օդն էին թնդացնում: Մանուկները վերև նետել ու գետին ընկած պահին ցցված սրի վրա ճիշտ բերողը, բռունցքի մի հարվածով մանկան գանգը փշրողը, մանկան վիզը կծելով՝ գլուխը կտրողը պարգևատրության էին արժանանում: Կանայք մանուկներից ավելի հուժկու էին: Չնայած նրանք շոգից, սովից ու ծարավից դալկացած էին, բայց մեր քաջերի ախորժակը մեծ էր: Ամեն ինչ զինվորական ձևով էր կատարվում: Հրամանները այնպիսի ներդաշնակությամբ էին գործադրվում, որ մեր քաջերի տակ գտնվող կանայք ապշահար հիանում էին: Ըմբոստացողների ստինքները կտրում էին և շպրտում նրանց բերաններին և աչքերին: Այսպիսով, ըմբոստացողը անպատվությունից չէր խուսափում, նույնիսկ եթե մեռներ:

Լուսնի լույսով և բացօթյա այսպիսի ժամերը ավելի քան հետաքրքրական են: Հղի կանայք էլ կային, որոնց համար դայակ էր պետք, իմ քաջերս այդ արհեստին էլ էին տիրապետում, սրի մի հարվածը բավական էր... մանկանը մոր փորից դուրս հանելու համար: Ամեն ինչ վերջանալուց հետո, ողջ մնացածներին զանազան չարչարանքներով սպանեցինք: Գալով տղամարդկանց՝ հրացանի հարվածներով մեր հետ առնելով, այդ վայրից երկու ժամից հեռացանք և ժամը 4-ին հասանք մի բաց դաշտ ու այնտեղ շարք կանգնեցրինք գիշերվա լուսնի լույսով նշան բռնելու համար: 3 ժամ տևած մեր այս նշանառությունից ձանձրացած հրաձգությունից անցանք սրի և երբ համոզվեցինք, որ արդեն բոլորը մեռած են, մեր մոտ եղած երեք թիթեղյա ամանների վառելիքը լցրեցինք նրանց դիակների վրա ու այրեցինք: Տեղում համբավավոր մի ընթրիք արեցինք, երգեցինք, պարեցինք այդ մարդկային լուսավորության բոցերի կողքին: Ժամը 9-ին մոտ էր, լուսավառությունը հետզհետե մարում էր: Լուսաբացին, երբ ձիերը նստած մեկնեցինք, տակավին բոցերը աղոտ լույսեր էին արձակում ու ճարպային հեղուկը արտի երեսով հոսում էր՝ չորացնելով ամեն բույս:[1]

1. **Կ. Գաբիկեան** Եղեռնապատում Փոքուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Բոստոն, 1924 կամ Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 540-550:

Հասանը՝ կառապան, Դ. Վարուժանի ու նրա չորս ընկերների սպանության մասին

(Մի օր մեր տունը եկավ մեկը և) ինձ հրահանգեց, որ պարտավոր էի կառքովս գնալ գյուղից քառորդ ժամ հեռավորության վրա գտնվող մի տեղ ոստիկանության տրամադրության տակ: ...Հարկադրված հնազանդվեցի... Այնտեղ էր ոստիկանական պաշտոնյան մի ժանդարմի հետ, ինչպես նաև Պոլսից Չանկըրն աքսորված հինգ էֆենդիներ: Նրանցից մեկը երիտասարդ էր՝ սև մորուքով ու վառվռուն աչքերով... Ոստիկանական պաշտոնյան նրանց առաջարկեց իմ կառքը...

Թյունեից կես ժամ հեռավորության վրա էինք, երբ նույն անձը (որին Հասանը տեսել էր նախորդ օրը) հանկարծ մեր առջև տնկվեց: Ուղիղ դեպի կառքս եկավ, ձիուց իջավ, իմ ձիերի սանձից բռնած՝ ուզեց կառքը տանել ճանապարհից դուրս բլրի տակ՝ հեղեղատից գոյացած խոր ձորը...

Այդ ռոպեին մեր դեմ ցցվեցին չորս հոգի՝ մինչև ատամները զինված: Անծանոթը, որ թվում էր, նրանց պետն էր, մի նշան տվեց: Այդ մարդիկ... կառքից իջեցրին հինգ աքսորականներին, որոնց հրամայեցին իրենց ունեցած դրամները հանձնել: Բայց քանի որ նրանց ձեռները կապված էին, խուզարկելու գործը ստանձնեցին ոստիկանները, որոնք կողոպտեցին ամեն ինչ: ...Ոստիկանը մի քանի բառ շշնջաց չեթեների պետի ականջին... ու մյուս կառքը նստելով՝ (ոստիկանները) մեկնեցին: Ինձ էլ... արտոնեցին քաղաք վերադառնալ:

Գալով աքսորականներին՝ չորս չեթեների ու նրանց պետերի կողմից հրամայվեց իրենց հետևել:

...Չորամեջը կտրելով՝ անցան մյուս ափը, որտեղ փոքր անտառը զարդարում էր բլուրը: ...մարդիկ հարձակվեցին էֆենդիների վրա, նրանց զգեստները հանեցին և լրիվ մերկացրին...

...Այս խեղճ զոհերն առանձին-առանձին կապվեցին ծառին: ...հետո չեթեյապետն ու իր մարդիկ իրենց դաշույնները մերկացրին և սկսեցին դանդաղ ու հանգիստ նրանց մորթոտել:[1]

1. Հայկաշեն Տարեգիրք, Պոլիս, 1922 կամ Յուշամատեան մեծ եղեռնի, էջ 375-376:

Ֆայիհ Ռըֆքը Աբայ

Չերքեզների, քրդերի և մյուսների նման հայերի արտաքսումը դեպի Սիրիայի խորքերը նոսրացնելու էր արաբներով խիտ բնակեցված վայրերը: Նույնիսկ մի հանձնաժողով կազմվեց, որպեսզի հայերին և՛ տուն, և՛ հող տրամադրվի՝ մահմեդական դառնալու պայմանով:[1]

Ասրմ բեյ՝ թուրք սպա

Խարբերդից տեղահանված 60 հազար հայից Մոսուլ հասան 15 հազարը: Մնացածները ոչնչացվեցին ճանապարհին...

Մարդինից երկու քրդեր... ասացին, թե Խարբերդի, Դիարբեքիրի, Մարդինի և Վարենշեխիրի բոլոր հայերը մորթված են:[2]

Հուսեին Քյազրմ բեյը՝ նպաստամատույց հանձնաժողովի նախագահ, Դամասկոսի գերմանացի հյուպատոսին (30 մայիս, 1916 թ.)

(Այդ պաշտոնից հրաժարվելու է), որովհետև այլևս չի կարող գործել, իր կարգադրությունները ոչ միայն չեն կատարվում, այլև իշխանությունները դրան անգամ հակառակ են գործում...

Կառավարությունն իր տրամադրության տակ չնչին գումար է դրել, որով չի կարող հայերի ծով կարիքները հոգալ: Լրիվ վհատված է և այլևս չի հավատում, թե վերին իշխանությունն իրապես ձգտում է օգնելու տարագրյալ հայերին: ...Երկյուղում եմ, որ նրանք ուզում են տարագրվածներին ոչնչացնել:

Թուրքական որբանոցի վարիչ

...Քրիստոնյա սաներին կամ պետք է իսլամացնել կամ թողնել պաշտոնը: Աղջիկներին տվեցին տները (մահմեդականների), նաև՝ տղաների մի մասին: Մնացին միայն 14 տղաներ...[3]

1. **F. R. Atay** Zeytindagi, Istanbul, 1957, s. 79.

2. Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվ R 14 088, Ab 30 012:

3. **J. Lepsius** Raport secret sur les massacres d'Arménie, p. 275

Տեղահանման Կեսարիայի գրասենյակի պատասխանատուն բռնագաղթվող հայերին

Չեմ ուզում, որ հայի նույնիսկ հոտն այստեղ մնա, գնացեք Արաբիայի ափերն ու այնտեղ հիմնեք Հայաստան:[1]

Արդարադատության նախարարության ներկայացուցիչը հայերին

Այս կայսրությունում թե՛ մեզ և թե ձեզ համար տեղ չկա, աններելի թեթևամտություն կլինի, եթե մենք չօգտագործենք այս առիթը ձեզնից ազատվելու համար:[2]

Երիտթուրքերի կենտրոնի անդամ

Օտարերկրացիները պետք է անհետանան Թուրքիայից՝ նախ հայերը, հետո՝ հույները, հետո՝ հրեաները և ամենավերջում եվրոպացիները:[3]

Բռնագաղթվող հայերին տեղափոխող թուրք կառապաններ

Քաղաքից (Անկարայից) դուրս գալուց անմիջապես հետո հայերին սպանում էինք փայտով կամ ատրճանակով: Նույնիսկ ամենակոփված մարդիկ առանց դողոցի չէին կարողանում նայել այդ ահավոր տեսարանին: Թուրք երկու կառապաններ, չկարողանալով տանել այդ սարսափները, մեռան:[4]

Թուրքական հրամանատարության կոչերի հավաքածու

-Քարիւղին թիթեղները պարպեցեք քաներուն վրա, կոյսերը նշանաձներուն կապեցեք, հարսները՝ իրենց մարդոց, թող այդպես մեղրալուսին երթան երկինք, հոն զիրար վայելեն:

-Ծծկեր լակոտները փոսերու մեջ լեցուցեք ու հողով ծածկեցեք, գետնին տակէն թող իրենց լեզուով կանչեն մայրի՜կ, մայրի՜կ...

-Չղջիկները այնպես մը մանրեք, որ ոչ մեկ մսավաճառ իր կեանքին մեջ ասանք «խոյմա» տեսած չըլլա:

-Լակոտ, քեզ պիտի որդեգրեմ, տուն պիտի տանիմ եւ շանս կաթովը

1. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1071:
2. Ն. տ., էջ 1077:
3. Ն.տ.:
4. Ամերիկյան դիվանագետ Ջ. Դեուդեսի զեկուցագիրը Հ. Մորգենթաուին:

լիացնեմ, որպեսզի շուն մեծանաս, գիտնաս թե կեավուր յոշոտելուն մեջ ինչ հաճոյք պահուած է:

-Կացինները տուեք տղոց ձեռքը, մայրերն ու հայերը կապուած բերեք անոնց առջեւ եւ թող մեկ հարուածով գլուխները զատեն մարմիններէ:

-Պաշարման շրջային բոլոր ոյժերը պատրաստ ըլլան, երբ ազդարար փողն հնչէ, թնդանոթներն արձակուին և կեավուրներու այս որջերը՝ Վան, Շապին-Գարահիսար, Ուրֆա, Մուսա տաղ, Զեյթուն, Հաճրն, Ֆնտրճաղ՝ հինգ վարկեանի մեջ հիմնայատակ կործանեն:[1]

Ալի Իսհան փաշայի՝ թուրքական 5-րդ բանակի հրամանատար, ճառը թուրք շեյխերի, արաբ և քուրդ ավատապետերի ժողովում

Յանուն Հինգերորդ զորաբանակի, բարի գալուստ կավետեմ Օսմանեան կայսրութեան հավատարիմ ցեղապետերուն, ավատապետներուն, արևելեան նահանգներու, Քիւրտիստանի, Արաբիոյ, Անատոլուի, Միջագետքի և երկրի բոլոր ներկայացուցիչներուդ, այն մեծ ծառայութեան համար, որով իրականացուցիք հայրենիքը անհավատներէն մաքրելու նուիրական գործը:

Պատիվ բոլորիդ...

...Կը հրավիրեմ յարգոյ սեղանակիցներս՝ բարձրացնելու մեր առաջին բաժակը և ըմպելու կենացը Օսմանեան կայսրութեան գահակալ Նորին Վսեմութիւն սուլթան Ռեշատի, որուն ամենազոր բազուկին տակ բոլորդ գործեցիք ի փառս Ալլահին, անոր երկրավոր ներկայացուցիչին, որպեսզի Օսմանեան կայսրութեան հողերուն վրայէն բնաջնջուին անհավատները, հայրենիքի դավաճան էրմենի խնզրը կեավուրները:[2]

Ոսրիկան Մսրոյի պատմածը

Երբ որ Տիվիրիկի հայութիւնը տեղահան ըրին, ես ալ իբրև ժանտարմա անոնց հետ էի: Տրիժան քուրտ աշիրեթին մոտերը որ հասանք, ժանտարմաները ժողովուրդին ըսին.

-Քուրտերը այս լեռները կտրեր են ձեզ կողոպտելու համար: Ձեր դրամները և զարդեղենները բերեք մեզի պահ տուեք, որպեսզի Արաբկիր հասած ատէն վերադարձնենք:

1. **Շավարշան**, Մեծ եղեռնը հայոց, էջ 411-412:
2. Ն. տ., էջ 466-467:

Ցորենի դեզի պես ոսկեղեն և արծաթեղեն կուտակեցավ հոն: Երեք ջորի բեռնան զանոնք ու ետ, Տիվիրիկ ղրկեցին: Հասանք Արաբկիր: Անկեց անդին անջրդի դաշտ մը կար: Ժողովուրդը ծարավէն հոն թափթփեցավ: Հայրանեանի կինը Արաբկիր չհասած ճամբան մեռավ: Շատեր թոյն ունեին իրենց քով ու անձնասպան կըլլային: Ես չէի երևակայեր, որ մահն ալ այդքան դիւրին է: Ժողովուրդին 1/4-ը հազիվ մնացած էր, երբ Մալաթիա հասանք: Այնտեղ ծանոթացայ թուրքի մը հետ, որ իր գոհարեղենները Սըվազ ծախելու կը տաներ: Հարցուցի անոր, թե ուսկի՞ց են ատոնք: Մարդը պատասխանեց.

-Եփրատի վրա մակույկավար էի: Հոն բերին Կարնո և Երզնկայի հայերուն մնացորդները: Կարավանը կանգ կառներ գետափին վրայ: Տեսնելու բան էր անոնց խեղճութիւնը: Կարելի չէր, որ անկեղծ միւսիւլման մը չիրճուեր ատոնք տեսնելով: Երբ սպաննելու ժամը գար, ոստիկանապետը կը հրամայեր, որ մնացած այրերը, ծերունիները մեկ-մեկ սիկար վառեն: Անոնք կը հնազանդեին: Յետո բոլորին ալ հրաման կըներ, որ աղոթեն: Աղոթքի պահուն կը գոռար «Աքեշ»: Ու ժողովուրդը շղթայող ժանտարմները կը սկսեին գնդակ թափել անոնց վրա: Բոլորը ինկած կը հոնդային: Այն ատեն ժանտարմներու հետևը սպասող խուժանը կը յարձակեր անոնց վրա, քարերով, մահակներով, կացիններով ու մանգաղներով: Քիչ վերջը դիակներուն ջարդուփշուր կոյտը ափունքին վրա սփռելով՝ կը սեցներ զայն: Մենք, բազմաթիվ մակույկավարներ, ջուրին վրայէն այս բոլորը կը դիտեինք մեր սովորութեան համեմատ, մինչև որ մեր գործելու կարգը գար: Այդ բոլոր դիակները մակույկներով կը տանեինք գետին մեջտեղը ու կը թափեինք ջուրը: Այս գոհարեղենները, ահա, այդ դիակներուն վրայէն հավաքած եմ:[1]

Ջարդարարի պատմածը

Անգամ մը կամուրջի վրա հայեր սուինահարելով գետը կը նետեինք, որովհետև մեկ հայը գնդակ մը չարժեր, ըստ հրամանի: Հայ մը շատ պաղատեցավ, որ ժանտարման զինք գնդակով սպաննե և անոր քանի մը կարմիր ոսկի խոստացավ: Համաձայնեցան: Հայը ոսկիները վճարեց: Ժանտարման նորէն սուինով զարկավ ու գետը նետեց զայն: Թուրքերու քով ձեր գեղէն հարս ու աղջիկ կա:[2]

1. Ե. Քոչեան, Հողը փլավ մեր գլխուն (էջեր սարսափներէ), Փարիզ, 1986, էջ 74-75:

2. Ն. տ., էջ 97:

Թալեաթ

-1915 թ. նոյեմբերի 5-ի հեռագիրը Հալեպի կառավարիչին

Տեղեկացել ենք, որ Սըվազի, Մամայեթ ուլ Ազիզի, Դիարբեքիրի և Էրզրումի նահանգներից տարագրված (և ծնողներին կորցրած) հայ երեխաները մի քանի մահմեդական ընտանիքների կողմից որդեգրվել և ընդունվել են որպես ծառաներ: Տեղեկացնում ենք՝ ձեր գավառում եղած նման երեխաներին հավաքեք և ուղարկեք նրանց համար նախատեսված վայրերը...[1]

-Բրիտանական պահպանողական գործիչ Օ. Հերբերտին (1921 թ)

Ինքը միշտ դեմ է եղել հայերի ոչնչացմանը... երկու անգամ բողոքել է այդ քաղաքականության դեմ, բայց մերժվել է գերմանացիների կողմից:[2]

-Նամակ Կարաբեքիրին (Բեռլինից)

Թանկագին իմ Կարաբեքիր փաշա, եթե ռազմական պատրաստությունները լրիվ են, անցիր հարձակման: Կասկած չկա, որ Արևելքում ձեռք բերվելիք հաղթանակը Արևմտյան ճակատի և ամբողջ աշխարհի վրա խորին հետք կթողնի:[3]

-Հայկական հարցը լուծելու ուղղությամբ ես երեք ամսում շատ ավելի արեցի, քան Աբդուլ Համիդը 30 տարում:[4]

Հալիլ Մենքեշ՝ Թալեաթի կառավարության արտաքին գործերի նախարար

Այս տեղահանությունով չշահագրգռված շատ քիչ թուրք կա Անատոլիայում:[5]

Երկու թուրքերի զրույցը Ռումբիկին գյուղի մերձակայքում

Ծեր թուրքը կացին սրող պատանի թուրքին.

-Այդ ո՞ւր կերթաս կացինով:

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 180:
2. **W. Christopher** Armenia, The Survival of a Nation, New York, 1980, p. 233.
3. **B. Kutay** Karabekir Ermenitani nasil yok etti, Istanbul, 1956, s. 27.
4. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 95:
5. H. Mentesenin Hatiralari 4: "Maltaya Sürgünü", Hayat, Tarih, Mecmuasi 9/2, N 8, September, 1973, s. 22.

-Հաճի պապա, կերևի թե դուք տեղեակ չեք, թե այսօր ի՞նչ պիտի պատահի Ռումտիկինի հայերուն:

-Ոչ, տեղեակ չեմ,- պատասխանեց ծերունին:

-Երեկ մեր գիտպետը բոլոր երիտասարդները կանչելով՝ յայտնեց, որ գոց նամակը բացուեցաւ և ըստ այդ նամակին հրահանգին՝ պետք է երթանք ու օգնենք ոստիկաններուն Ռումտիկինի հայերուն ոչնչացման գործին:[1]

Ծեր սայլապանը բռնաբարվող հայ կնոջը

Ա՜յ կին, չէ՞ որ ձեզ մեռցնելու կը տանին, ինչ դրամ որ ունիս ինձի տուր, որովհետև այդ դրամն ալ ձերը չէ, ձեզմէ պիտի առնեն:[2]

Դելի Օսման՝ թուրք գյուղացի

Առաջին կարաւանը մեր գիտին մոտերը կոտորեցինք, ֆրն Տերեսին: Պապա-Եաղմուր գիտէն Ահմետ Չաուշը ժանտարմներուն պետ կարգուած էր, ան մեզ յստակ կերպով ըսաւ.

-Մենք որեւէ գնդակ պիտի չարձակենք հայերու վրա: Դուք գործի անցեք կացիններով եւ զարկեք միայն անոնց գանկերուն:

Հայերը կուլային, բողոքի ձայն չկար, միայն անոնցմէ մեկը ըսաւ.

-Սրիկաներ, խաբեբաներ, մի՞թե քաջութիւն է կապուած մարդիկ սպանելը:

Երբ մեր Հասանը սուրը բարձրացուց գլխուն զարնելու, ճարպիկ հայը Հասանին երեսին թքեց ու ոտքովը ուժեղ հարված մը տուաւ անոր փորին: Բայց տեղնուտեղը զինքը կտոր-կտոր ըրին:

Մեր գործողութիւնը հազիվ տասնհինգ վարկեան տեւեց: Կապերը կտրելով սկսանք լաթերը հանել բավական դժվարութեամբ: Նախքան մեր ցրուիլը, ոստիկանապետը յայտարարեց, որ յաջորդ օր դարձեալ ներկա ըլլայինք Ռումտիկին, որպեսզի կոտորեինք երկրորդ կարաւանը: Ահա այդ ծորը, ով որ կուզե, թող բարձրանա և տեսնե երկրորդ կարաւանի քեւաֆիրները:[3]

Մի խումբ թուրքեր, հայի ագարակից դուրս գալով, ասացին.

-Այս այգիին տերը շաբաթ մը առաջ կախուած էր տանձի ծառէն, կախուած էր գլխի վրա, քարկոծուած ու սպաննուած:[4]

1. Հ. Եափուճեան Յիշատակարան Ռումտիկինի, 1967, էջ 161:
2. Ն. տ., էջ 167:
3. Ն. տ., էջ 171:
4. Ն. տ., էջ 172:

Մեհմեդի պատմածը

Այրերու վերջին կարավանը փոքր էր: Քանի մը պատանիներ, քանի մը այր մարդիկ ու քահանա: Երբ հասանք Տարլըի ձորը, փոսի մը եզերքը, ոստիկանապետը զիս լավ ճանաչելուն ըսավ:

-Է՛յ, դասապ Մեհմետ, գործի անցիր և շնորհքդ ցոյց տուր:

-Կատուն, երբ մուկ մը բռնե, նախքան բզքտելը,- պատասխանեցի ես,- անոր հետ կը զուարճանա:

Իմ այս սրամտութիւնս ուրախութիւն պատճառեց ոստիկանապետին ու ըսավ.

-Տե, ընտրե զուարճանալիքդ ու շնորհքդ ցոյց տուր:

Ես խումբէն դուրս հանեցի քեշիշը և Շիտիտենց Երանոսը և երդում ըրի, որ զիրենք պիտի չրսպաննեմ, եթե ըսածս կատարեն: Որպեսզի համոզուին, մենք միւսները սպաննեցինք և փոսը լեցուցինք, ապա Երանոսին դառնալով՝ ըսի.

-Դու ապուշ մարդ էս, եթե լավ բան մը երգես, վալլահ-պիլլահ փրկուած ես:

Երանոսը մերժեց և խնդրեց, որքան կարելի է զինք շուտով անդի աշխարհը ճամբեմ: Ստիպեցի ու ան երգեց...

Քեֆիրին ձայնը իսկապես գեղեցիկ էր ու յուզիչ, սակայն Տարլըցի Ղասըմը... գերանդին քաշեց ու Երանոսին վիզը կտրեց:

Այս ժամանակամիջոցին քահանան, երկինք նայելով, մեզ համար անհասկանալի բան մը կը մռլտար:

-Ինչո՞ւ,- հարցուցի,- երկինք կը նայիս:

Քահանան անվախ կերպով պատասխանեց.

-Աստուծո կաղոթեմ, որ քեզ շանթահարե:

Ես ծիծաղելով քեշիշին շալակը ելա ու ըսի.

-Եթե զիս մինչև գիւղ տանիս, կը փրկուիս:

Սակայն Ղասըմը կրկին մեջ մտավ: Լուցկի մը մոտեցուց քեշիշին մորուքին: Քեշիշը իր դեմքը փրկելու համար զիս շալակեն վայր նետեց ու երեսին վրա գետին պառկեցավ:

-Ա՛յ քեշիշ, վեր ել,- պոռացի, բայց արդեն քեշիշին սիրտը պայթած էր, մնաց տեղը: Շատերը չհավատացին, կարծեցին, թե սուտ մեռել կը ձևանա, սակայն Ահմետ չավուշը ըսավ.

-Վերջացուցեք, բավական է: Կացինի քանի մը հարուած տուեք և փոսը նետեցեք...

-Ես կատարել եմ,- (արդարացավ Մեհմետը),- մեր փեյղամպերին պատուիրանը, որ կըսէ. «Քեաֆիր սպանողը կերթա գրավելու դրախտին ամենապատվավոր տեղերէն մեկը»:[1]

Բեղրի բեյը՝ Պոլսի ոստիկանապետ, Մորգենթաուին

Այդ բոլոր մանրամասնութիւնները Միութիւն և առաջադիմութիւն քոմիտեի գիշերային նիստերուն մեջ խորհրդակցութեան նիւթեր եղած էին: Չարչարանք տալու իւրաքանչիւր նոր մեթոտ ողջունուած էր իբր սքանչելի գիւտ մը, և նիստերուն կանոնավորաբար ներկա եղողները շարունակ իրենց միտքը կը տանջեին որևէ նոր չարչարանք հնարելու ճիգով... նոյնիսկ սպանիական հավատաքննութեան արձանագրութիւնները և չարչարանքի ուրիշ պատմական յիշատակարաններ հետազոտած էին և որդեգրուած անոնց մեջ գտնուող բոլոր նիւթերը:[2]

Թալեաթը Մորգենթաուին

-Հայերը վստահելի չեն... գալով ձեր հայերուն, մենք ապագային կարևորութիւն չենք տար...

(Թալեաթը գզրոցից հանեց մի բուռ հեռագրեր).

-Ինչո՞ւ այդ դրամը մեզի չեք տար,- ըսավ քմծիծաղով մը:

-Ի՞նչ դրամ,- հարցուցի:

-Ամերիկայէն ձեզի հեռագիր մը կա, որով հայերու համար խոշոր գումար մը կը դրկուի ձեզի: Դուք անոնց յանձնելու չեք զայն: Մեզի՝ թուրքերուս, տուեք այդ դրամը, մենք ալ անոնց չափ ստիպողաբար պետք ունինք ատոր...

-Միութիւն և առաջադիմութիւն քոմիթեն խնամքով քննած էր խնդիրը (հայերի տեղահանության) բոլոր մանրամասնութիւններով և հետապնդած քաղաքականութիւնն ան էր, զոր պաշտոնապես որդեգրած են... Պետք չէ, որ այն գաղափարը կազմ (վի) թե տարագրութիւնը հապճեպով որոշուած էին: Իրականութեան մեջ անոնք արդիւնք էին երկար ու խոհուն խորհրդակցութիւններու:

-Ազգերը չեն կարող անձնատուր լինել երախտագիտության, ատելության կամ սիրո զգացմունքների, գործելու միակ առաջնորդը պիտի լինի

1. Հ. Եափուճեան Յիշատակարան Ռումտիկինի, 1967, էջ 176-178:
2. Ամերիկեան դեսպան Մորգենթաուն, էջ 255:

սառնարյուն քաղաքականությունը... Ռուսաստանը մեր մեծագույն թշնամին է, և մենք նրանից վախենում ենք: Այս պահին, երբ Գերմանիան հարձակվում է Ռուսաստանի վրա, եթե մենք ի զորու ենք նրան ուժեղ աքացի տալ, այնպես որ նա որոշ ժամանակ անզոր դառնա մեզ վնաս պատճառելու, Թուրքիան պարտավոր է այդ աքացին տալու... Սպանված յուրաքանչյուր իսլամի փոխարեն երեք քրիստոնյա ենք մեռցնելու...

-Մի օր ես կգամ՝ ձեզ հետ կքննարկենք Հայկական հարցը,- և հետո ցածր ձայնով թուրքերեն ավելացրեց,- բայց այդ օրը երբեք չի գա:

Հետո հարցրեց. «Բայց դուք ինչո՞ւ եք այդքան շահագրգռված հայերով: Դուք հրեա եք, այդ ժողովուրդը՝ քրիստոնյա: Հրեաներն ու մահմեդականները լավ հարաբերությունների մեջ են: Ինչո՞ւ դուք չեք թողնում, որ մենք վարվենք այդ քրիստոնյաների հետ այնպես, ինչպես ցանկանում ենք»:

-Այս ժողովուրդը մերժեց զինաթափման մասին մեր առաջարկությունը: Հայերը դիմադրեցին մեզ Վանում, Զեյթունում, Ուրֆայում և օգնեցին ռուսներին: Միայն մի միջոց կա, որով ապագայում կկարողանանք մեզ պաշտպանել նրանցից և դա հայերին տարագրելն է:

-Մենք նախ ընդունում ենք, որ տարբերություն չենք դնում անմեղ ու մեղավոր հայերի միջև: Բայց դա բացարձակապես անհնար էր, նկատի ունենալով այն, որ նրանք, ովքեր անմեղ են այսօր, վաղը մեղավոր կլինեն: Ես այսօր խոստացել էի գալ, ես կարող եմ բացատրել մեր դրությունը և ամբողջ Հայկական հարցը: Հայերի նկատմամբ մեր հակակրանքը երեք հիմնական պատճառ ունի:

1. Նրանք թուրքերի հաշվին հարստացել են:

2. Վճռել են մեր նկատմամբ բռնության գործադրմամբ հիմնել անջատ պետություն:

3.Նրանք բացեիբաց օժանդակում են մեր թշնամիներին, Կովկասում օգնում են ռուսներին, և մեր անհաջողությունները բացատրվում են նրանց գործողություններով:

Հետևաբար մենք հանգել ենք մի վերջնական որոշման, որ նրանց անզոր դարձնենք մինչև այս պատերազմի ավարտը:

-Ձեզ հետ այս հարցի մասին վիճելուց օգուտ չկա, քանի որ մենք հայերի 3/4-ի հարցը լուծել ենք (ոչնչացրել ենք): Այլևս հայ չկա Բիթլիսում, Վանում, Էրզրումում: Հայերի ու թուրքերի միջև այժմ ատելությունն այնքան ուժեղ է, որ հարկադրված ենք հայերի հետ հաշիվները մինչև վերջ մաքրել: Եթե մենք այդպես չանենք, հայերը վրեժխնդիր կլինեն:[1]

Մորգենթաու

Այդ ժողովուրդի ձեռքում են տնտեսության շատ ճյուղեր: Նրանք են ամենաշատ հարկ վճարողները: Ի՞նչ կլինի ձեր վիճակը առանց նրանց:

Թալեաթ. Մենք չենք անհանգստանում դրա համար: Այդ բոլորը հաշվել ենք և գիտենք, որ վնասը հինգ միլիոնից չի անցնի: Ես խնդրեցի, որ այստեղ գաք ձեզ տեղեկացնելու, որ մեր հայկական քաղաքականությունը բացարձակապես որոշված է և ոչինչ չի կարող փոխել այն: Մենք ոչ մի հայ չենք ուզում տեսնել Անատոլիայի որևէ վայրում: Նրանք կարող են ապրել միայն անապատում, ուրիշ ոչ մի այլ տեղ... Այո, մենք, կարող է, սխալ թույլ տված լինենք, բայց մենք երբեք չենք զղջա դրա համար:

Հայերի նկատմամբ մեր կատարածից հետո ոչ մի հայ մեր բարեկամը չի կարող լինել:

Ուզում եմ, որ կյանքի ապահովագրության ամերիկյան ընկերություններին պարտադրեք մեզ ուղարկել իրենց մոտ ապահովագրվածների լրիվ ցուցակը: Ներկայումս հայերը բոլորն էլ իրականում մեռած են, նրանց ժառանգներն էլ չեն մնացել այդ դրամը ստանալու: Ուստի այդ ամբողջ միջոցները մնում են պետությանը: Դրանց ժառանգորդը կառավարությունն է: Ասածս կատարելո՞ւ եք:[2]

Էնվեր. Հայերը բավականաչափ զարգացած էին, և լավ գիտեին, թե իրենց ինչ էր սպասվելու, եթե միանային մեր թշնամիներին: Երեք ամիս առաջ ես զգուշացրի հայոց պատրիարքին, որ եթե հայերը օգնեն ռուսներին, ես հնարավորություն չեմ ունենա կանխելու այն չարիքը, որ կհասնի նրանց: Իմ նախազգուշացումները արդյունք չունեցան, և հայերը սկսեցին ապստամբել և օգնել ռուսներին: Դուք գիտեք, թե ինչ պատահեց Վանում: Նրանք հսկողության տակ վերցրին քաղաքը, ռումբեր նետեցին կառավարական շենքերի վրա և սպանեցին մեծ քանակությամբ մուսուլմանների: Մենք գիտենք, որ ուրիշ վայրերում ևս նրանք կապստամբեին:

1. Ամերիկյան դեսպան Մորգենթաուն, էջ 280, 48, 104, 105, 121, 276, 280-284:
2. Ն. տ., էջ281-284:

Միանգամայն ճիշտ է, որ ես հայերի դեմ ոչինչ չեմ ունեցել: Ես հիացել եմ նրանց մտավոր կարողություններով և ես ոչինչ ավելին չէի ուզի, քան այն, որ նրանք դառնային թուրք ազգի մի մասը: Բայց երբ նրանք դաշնակցում են մեր թշնամիների հետ, ինչպես այդ արեցին Վանում, ապա պետք է ոչնչացվեն: Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ամերիկան հայերին լավություն չեն անում, կարեկցելով ու աջակցելով նրանց: Ես համոզված եմ, որ եթե այս երկրները չաջակցեն հայերին, ապա նրանք կենթարկվեն ներկայիս կառավարությանը և կդառնան օրինապահ քաղաքացիներ: Մենք այժմ երկիրը վերցրել ենք մեր բացարձակ վերահսկողության տակ և ոչ մի ապստամբություն թույլ չենք տա:

Մորգենթաու. Ենթադրենք, ինչ-որ ասացիք ճիշտ է: Ինչո՞ւ չպատժել միայն մեղավորներին: Ինչո՞ւ բնաջնջել ամբողջ ազգը:

Էնվեր. Ձեր տեսակետը շատ ճիշտ է միայն խաղաղ ժամանակների համար, բայց պատերազմի ժամանակ չէինք կարող քննարկել ու պարզել: Մենք պետք է գործեինք արագ: Կարծում եմ, որ հայերը սխալ են վարվում՝ հույսը դնելով ռուսների վրա: Ռուսները իրականում ավելի կցանկանան նրանց տեսնել մեռած, քան կենդանի: Նրանք նույնքան վտանգավոր են ռուսների, որքան մեզ համար: Եթե նրանց հաջողվի ստեղծել անկախ պետություն Թուրքիայում, ապա Ռուսաստանի հայերը Ռուսաստանում ևս կփորձեն ստեղծել անկախ պետություն:

Հայերն իրենք են մեղավոր կոտորածների համար: Վանի նահանգից միայն 30 000 թուրք փախավ: Մնացածները սպանվեցին հայերի ու քրդերի կողմից: Պոլսում 70 հազար հայ կա և նրանց նեղություն չպետք է տրվի, բացառությամբ դաշնակցականներից և թուրքերի դեմ դավողներից... հայերի ջարդեր այլևս չեն լինի:

Մորգենթաու. Ես լուրջ չընդունեցի Էնվերի ասածները: Այն ժամանակ, երբ նա խոսում էր, կոտորածներ ու աքսորներ էին տեղի ունենում հայկական նահանգներում և շարունակվեցին ամիսներ ի վեր:

Ձեյթունում անօթևան ու քաղցած հայերին օգնելու համար այդ շրջանը մեկնելու ամերիկացիների թույլտվության խնդրանքին Էնվերը պատասխանեց, որ դա կքաջալերի բոլոր հայերին ու կառաջացնի նոր խռովություններ:

Էնվեր. Թուրքիայում կա 28 միլիոն բնակիչ, նրանցից հայ է մեկ միլիոնը: Մենք չենք ցանկանում, որ այդ մեկ միլիոնը վրդովի բնակչության անդորրը:

...Հայերի դժբախտությունն այն է, որ նրանք անջատման կողմնա-

կիցներ են: Նրանք որոշել էին ունենալ իրենց անկախ պետությունը: Նրանք հավատում են ռուսներին և օգնում են նրանց այս պատերազմում: Հեղափոխություններում մեր փորձառությունն է մեզ վախեցնում: Երբ սկսեցինք հեղափոխությունը Թուրքիայում, մենք 200 հոգի էինք: Այդքան փոքր թվով կարողացանք իշխանությունը նվաճել: Եթե 200 թուրքեր կարող էին տապալել կառավարությունը, ապա մի քանի հարյուր ուշիմ ու կրթված հայեր ևս կարող են անել նույն բանը: Հետևաբար մենք որդեգրել ենք նրանց դիտավորյալ կերպով ցիրուցան անելու ծրագիր, որպեսզի չկարողանան վնաս հասցնել մեզ:

Ինչպե՞ս հաց հայթայթենք հայերին, երբ բավականաչափ հաց չենք կարողանում ճարել մեր իսկ ժողովրդի համար:

Այս պահին երկրի տնտեսական վիճակը կարևոր չէ: Միակ կարևորը հաղթանակն է: Եթե մենք հաղթենք, ամեն ինչ լավ կլինի, եթե պարտվենք, կկորցնենք ամեն ինչ:

Մենք չենք ուզում, որ ամերիկացիները կերակրեն հայերին... Եթե դուք՝ ամերիկացիներդ, սկսեք հայերին ուտելիք ու հագուստ բաժանել, ապա նրանք կմտածեն, որ ունեն բարեկամներ Միացյալ Նահանգներում: Այդ նրանց կմղի ապստամբության և, մենք էլ ավելի խստորեն կպատժենք նրանց: Եթե ձեր ստացած գումարը տաք մեզ, մենք կջանանք այն գործածել հայերին օգնելու համար:

Հայերը չպետք է իմանան, որ բարեկամներ ունեն Միացյալ Նահանգներում: Դա բացարձակապես կկործանի նրանց: Ավելի լավ է նրանք սովամահ լինեն և, ասելով այս, ես իսկապես մտածում եմ նրանց՝ հայերի, բարօրության մասին: Եթե նրանք համոզվեն, որ ոչ մի բարեկամ չունեն ուրիշ երկրներում, ապա Թուրքիան կճանաչեն որպես իրենց միակ ապաստանը և կդառնան հնազանդ քաղաքացիներ:

Մենք այս երկրի բացարձակ տերերն ենք: Երբեք մտադիր չեմ եղել մեղքը բարդել մեր ստորադասների վրա և պատրաստ եմ ստանձնելու ամբողջ պատասխանատվությունը տեղի ունեցած ամեն ինչի համար: Դահլիճը (կառավարությունը) ինքն է հրամայել տարագրությունը: Համոզված եմ, որ մենք այդ անելու իրավունքը լիովին ունենք, եթե հաշվի առնվի հայերի թշնամական վերաբերմունքը Օսմանյան կայսրության հանդեպ: Բացի դա, Թուրքիայի իրական ղեկավարները մենք ենք, և ոչ մի ենթակա աշխատող չի հանդգնի նման խնդիրներում գործել առանց մեր հրամանների...

Չեմ կարող հավատալ, որ թուրք զինվորը խոշտանգի հղի կնոջ:

Թույլ չենք տալու հայերին համախմբվելու այն վայրերում, որտեղ հնարավորություն ունեն դավ նյութել և մեր թշնամիներին օգնել: Այդ պատճառով նրանց տանում ենք այլ բնակավայրեր:

Խալիլ. Ընդունում եմ, որ կառավարությունը ծանր սխալներ է գործել հայերի հանդեպ իր վարմունքում, սակայն չարիքն արդեն կատարված է: Այժմ ի՞նչ կարող ենք անել: Ձեր նման ես էլ ցավում եմ այն ծայրահեղությունների և չարագործությունների համար, որ գործադրվել են:

Ցանկանում եմ ձեզ ներկայացնել Բ. Դոան տեսակետը: Ընդունում եմ, որ այդ արդարացում չէ, բայց կարծում եմ, որ մեղմացուցիչ հանգամանքները պետք է հաշվի առնվեն օսմանյան կառավարությանը դատելուց առաջ:

Ես Վարդգեսին ասացի, որ եթե նրա ազգը իրապես տենչում է անկախ կյանքի, պետք է սպասի հարմար պահի: Թերևս ռուսները կկարողանան հաղթել թուրքական զորքերին և գրավեն հայկական բոլոր նահանգները: Այն ժամանակ կարող էի հասկանալ, որ հայերն էլ են ցանկանում ինքնավար լինել: Ինչո՞ւ չսպասել, ասացի Վարդգեսին, որ այդպիսի բարեբախտ ժամը գա: Նրան հասկացրի, թե թույլ չենք տալու, որ հայերը թիկունքից հարձակվեն մեր վրա, իսկ եթե նրանք թշնամական գործողություններ սկսեն մեր զորքերի դեմ, թիկունքում եղած բոլոր հայերի հարցը կլուծենք և այդ անելու մեր եղանակը լինելու է նրանց դեպի հարավի անվտանգ վայրեր ուղարկելը:

Մորգենթաու. Որովհետև մինչ այդ ոչ պակաս, քան 500 հազար հայ սպանվել էր, Խալիլին հարցրի. «Հարավային նահանգներում որքա՞ն մարդ օգնության կարիք ունի... մի քանի հարյուր հազար հոգի կա՞ն»:

Խալիլ. Կարծեմ կլինեն, բայց չեմ կարող ասել, թե քանի հարյուր հազար: Շատերը տառապանքներ կրեցին պարզապես նրա համար, որ էնվերը չկարողացավ զինվոր տրամադրել նրանց պաշտպանելու համար: Եղավ, որ նրանց ուղեկցեցին կանոնավոր բանակի զինվորներ և շատ լավ վարվեցին: Նրանցից նույնիսկ 40-ը զոհվեց հայերին պաշտպանելու միջոցին: Բայց մենք հարկադրված եղանք բանակում եղած ժանդարմներից շատերին հետ բերել և հանձնարարել ուղեկցելու հայերին: Ճիշտ է, որ այդ ժանդարմները շատ ողբալի ծայրահեղություններ գործեցին:[1]

1. Ամերիկյան դեսպան Մորգենթաուն, էջ 286-302:

Թալեաթ

Շարունակելով որբերի աքսորը նախատեսված ուղղությամբ դաժան սառնամանիքի պայմաններում, մենք նրանց հավերժական հանգիստը կապահովենք: Հետևաբար խնդրում ենք հաշվետվություն ներկայացնել կատարվածի մասին:[1]

Մ. Աբդուլհալիգ՝ Բիբլիսի վալի

Թուրքիոյ ապագա գոյութեան համար հայկական գավառներու մեջ հայի անունը իսպառ բնաջինջ ընել պետք է:[2]

Թալեաթը «Բեռլիներ տագեբլատի» թղթակցին

Հայաստանում տխուր դեպքեր կատարվեցին, բայց հիմա ես կարող եմ հանգիստ քնել: Մեզ մեղադրում են, որ տարբերություն չէինք դնում հանցավոր ու անմեղ հայերի միջև: Դա պարզապես անհնար էր, քանի որ նա, ով այսօր անմեղ է, վաղը կարող է դառնալ հանցագործ:[3]

Հիքմեթ Բայուր

Թուրքական իշխանությունները քիչ թե շատ անկիրք վարվեցին տեղահանման հարցում..., սակայն հեռավոր նահանգներում քրդերի և օժանդակ ջոկատների կողմից թույլ տրված ծայրահեղությունների, տիֆի, հոգնածության և սննդի բացակայության պատճառով տեղի ունեցավ հայերի զանգվածային կորուստ:[4]

Իսմայիլ Հագգը՝ երիտթուրք գործիչ

Ամեն մի հալածանք, անկախ այն բանից, թե բնակչության որ խավի դեմ է այն ուղղված, աններելի հանցագործություն է: Անտարբեր անցնել դրա կողքով, նշանակում է հանցագործության մասնակից դառնալ: Հեռավոր ծայրամասերում սպանում են հայերին: Ամբողջ սրտով ես կարեկցում եմ մեր աղետյալ հայրենակիցներին:[5]

1. **A. Wegner** A german eye-witness of the Armenian massacres. An open letter to Prezident Wilson, p. 28.

2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 177:

3. "Interpress Magazin", Բուդապեշտ, 1985, թիվ 8:

4. Ն.տ.:

5. Ն. տ.:

Թալեաթ

Սպանեցեք կեավուրները, ուր որ գտնեք, կին, մանուկ, հիվանդ մի խնայեք, որքան ալ անգթութիւն ըլլա, գոյութիւնին վերջացուցեք:[1]

Բրուսայի թուրք պաշտոնատարին

Որևէ ուշադրություն չդարձնեք ժողովրդին ուղղված իմ խոսքերին: Մեր պարտքն է մինչև իրականացնել մեր նշած ծրագիրը և շարունակել երկրից քրիստոնյաների վտարումը:[2]

-Նրանցից (հայերից) ոչ ոքի կենդանի չթողնեք, առանձնապես 5-7 տարեկանից բարձր երեխաներին, հակառակ դեպքում նրանք հասակ կառնեն ու կփորձեն վրեժ լուծել... Չխնայեք անգամ օրորոցի երեխաներին:[3]

-Չենք ընդունում, որ անգութ ենք եղել, բայց եղանք կորովի:Պատերազմական ժամանակներ ենք ապրում:[4]

-Հայերուն իրենց բնակավայրէն հանելով բանակին չկարենալ սպառնալու և երկրին խաղաղութիւնը չկարենալ խանգարելու համար ուրիշ վայրեր ղրկուիլը քաղաքային և զինվորական իշխանութեանց կողմէ տեսնուած ստիպողական պետքին համաձայն իբր կանխամիջոց կառավարութեան կողմէ որոշուած ըլլալուն, այս որոշումին շուտափոյթ գործադրութիւնը կարևոր է: Իրականութեան մեջ, իր գոյութիւնը պաշտպանելու համար պատերազմի դաշտերուն վրայ իր հազարավոր զավակները զոհող և այս պահուն առանց ցեղի և կրոնի խտրութեան իր բոլոր հպատակներէն հայրենիքին հանդեպ ամեն ժամանակ է ավելի աջակցութիւն ակնկալող կառավարութեան մը՝ զինքը ներսէն զբաղեցնող և կռնակէն զարնելու աշխատողներուն հանդեպ այս որոշման յանգիլը և միևնոյն ժամանակ գործադրութեան մեջ չթերանալը, շատ բնական է, որ իր օրինական իրավունքն է: Ըստ այնմ հարկ եղածին լուրջ կերպով գործադրութիւնը կը հրահանգուի:[5]

1. **Ե. Պերպերեան** Պագր-Մատէն, էջ 242:
2. "С. Петербургский вестник", 15 հուլիսի 1914 թ.:
3. **A. Wegner** An open letter to Prezident Wilson, p. 76.
4. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 1069:
5. **Մ. Ռիֆաթ** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը, էջ 119:

Ալի Իհսան Սաբիս՝ գեներալ

Պատերազմի հենց սկզբից ռազմական նախարար Էնվեր փաշայի ընդունարանն ամեն օր լցվում էին ծիծաղելի հագնված մարդիկ, ովքեր Էնվեր փաշային պնդում էին «թուրանական ուղու», «թուրանական նվաճումների» մասին և ստանում պարգևատրություններ ու առանձնաշնորհումներ...

Նախարարության հատուկ ֆոնդերից շտաբի պատասխանատու աշխատակիցներին վճարված միջոցները համեմատած այլ փողերի հետ, որոնք Էնվեր փաշան ծախսում էր այլևայլ նպատակներով, ավելին չէին, քան թեյափողը:[1]

Ջեմալ փաշայի նամակը Թալեաթին

Ինձ տեղյակ են պահել, որ դուք նորից իմ դեմ առաջ եք քաշել մետաքսի և մահուդի մասին հարցը և այն աստիճանի համարձակություն եք ունեցել, որ այդ հարցը քննարկել եք ձեր դրածոների ու բարեկամների հատուկ ժողովում:[2]

ՆԳ նախարարության 1917 թ. հոկտեմբերի 23-ի հեռագրի պահանջը կապարելու վերաբերյալ Հալեպի զինվորական գծի կոմիսարությանը ուղարկված հեռագիր

Վիլայեթի կայարաններում մեջ գտնուող շոգեկառքերու պաշտոնեաներէն և ծառաներէն հայերուն անուանացանկը կազմել և ամեն մեկուն հարցաքննութեամբ ինքնութիւնը ճշտել և մինչև հիմա ոստիկանութեան կողմէ ինչպես ճանչցուած ըլլալը և անոնց ընտանիքի անդամներէն և ազգականներէն որոնք կան, ատոնց մասին ալ ձեռք բերուած տեղեկութիւնները անոնց անուններուն դիմաց արձանագրել և շուտով դրկելու մասին հոկտեմբերի 23, 1917 (1333) թուականներով և 503 ընդհանուր թիվ շրջաբերականով հաղորդուած էր, և պատասխանը տակավին չէ ստացուած: (Ուստի) նախապես հարկ եղածը շտապով կատարել և իմացնել:[3]

1. **A. Sabis** Harp hatiralarim, Cilt I, Istanbul, 1943, s. 147.

2. **A. Kuran** Osmanli imperatorlugunda ve Türkiye cumhuriyetinde inkilap hareketleri, Istanbul, 1959, s. 46.

3. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 183:

Հյուսնիի՝ զինվորական գծի կոմիսարի փոխարինող, ծածկագիրը Հալեպի նահանգապետին (19 մարտի, 1918 թ.)

Պահանջուած տոմարը (հայերի ցուցակը) ներփակ կը ներկայացնենք Ձեզի:

Հաջորդ օրը ստացվում է պատասխան

Հաղորդուած հրամանի համաձայն գործադրել և տոմարները հանձնել ոստիկանութեան տնօրինութեանը:[1]

Էնվեր

-Իհարկե, մենք պատժում ենք նաև բազմաթիվ անմեղ մարդկանց: Բայց չէ՞ որ պետք է պաշտպանվել նրանցից, ովքեր կարող են մեղսագործ դառնալ:[2]

-Հայերի մնացորդներն այնպես պետք է ցաք ու ցրիվ անել երկրով մեկ, որ հարկադրված լինեն քուրք տարրի հետ ձուլվել:[3]

Ֆալիկ Ռիֆկի Աբայ՝ գրող, Թալեաթի օգնական

Էնվերը միշտ ասում էր. «Օրենքի բացակայությունն ամենալավ օրենքն է, դա բացատրելով հետևյալ կերպ. «Գործը կանենք, այն չենք ձախողի»:

Երբ Ջեմալ փաշան Սիրիայում էր, նրա մոտ է մտնում թիկնապահը և ասում.

-Էֆենդի, ես բերել եմ օրենքը:

-Ի՞նչ օրենք:

-Դուք հրաման էիք տվել մի հարցի կապակցությամբ, մինչդեռ օրենքով, որը ձեռքումս է, այն ձեր հրամանին համապատասխան կատարվել չի կարող:

Ջեմալ փաշան անմիջապես հեռագրեց ռազմական նախարարություն՝ պահանջելով իրեն հարկավոր ոգով օրենք ընդունել և ուղարկել այդ օրենքի տեքստը:[4]

1. **Հ. Ղազարեան** Ցեղասպան քուրքը, էջ 185:

2. Quelques documents, p. 161.

3. **Յ. Տաշեան** Հայ ազգային տարագրութիւնը գերմանական վավերագիրներու համեմատ, Վենետիկ, 1921, էջ 21:

4. **F. Atay** Zeytindagi, s. 96.

Ջեմալ փաշան հայերին

-Մենք վերացնում ենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ խանգարում է մեր նպատակին հասնելուն: Դուք միշտ ռուսների հետ եք, դուք նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են:[1]

Իր շրջաբի պետ գերմանացի Կրեսին (28 օգոստոսի 1917 թ.)

Հայերի հանդեպ խնդիրը կրոնական չէր, այլ քաղաքական: Թուրքիան նմանվում էր մի մարդու, որի վրա բոլոր կողմերից հարձակվում են և կյանքի մեծագույն վտանգի մեջ ընկածը պետք է, որ ամենախիստ միջոցների դիմեր: Յուրաքանչյուր երկրում ժողովուրդը, մանավանդ խռովահույզ ժամանակներում, կառավարության ձեռնարկած խիստ միջոցներից հեշտությամբ առաջ է անցնում և անկարգություններ է թույլ տալիս, որոնք արդարացում չունեն: Թուրքիայում այդպիսին էին հայերը: Թուրք կառավարությունը հայերի դեմ գործել է ոչ թե նրա համար, որ նրանք քրիստոնյա են, այլ որովհետև հայ են և պետության գոյությունը վտանգված էր:[2]

Ալի Քեմալի՝ ՆԳ նախարար, 1919 թ. ապրիլի 2-ի նամակը ռազմական դատարանի ընդհանուր դատախազին

Հայերի տեղահանության առնչությամբ 1915 թ. մայիսի 1-ից մինչև 1917 թ. ապրիլը (ներքին գործերի) նախարարությունից կուսակալներին ուղարկված ծածկագիր հեռագրերի բնագրերը վավերացնելուց հետո ուղարկված են:

Անկարայի կուսակալությունից ուղարկված՝ կապի նախարարության կողմից հանձնված մի պահարանում կան 42 կտոր հեռագրեր և նույն հարցի վերաբերյալ ունեցած ծածկագրերի պատճենները Կոնիայի կուսակալությունից ստացված փակ ծրարների հետ միասին Ձեր վսեմությանն ենք ուղարկում:

Այս հեռագրերի մեջ էր Թալեաթի հետևյալ ծածկագիրը. «Հայերի տեղահանությունն ավարտելու վերաբերյալ ընդհանուր հաղորդագրությունը մի շարք տեղերում ըմբռնվել է այնպես, թե այսուհետև ոչ մի հայ չպետք է աքսորվի: Այդ պատճառով, ինչպես հասկանում ենք, ծանոթ

1. Գ. Ահարոնյան Խոհեր 50-ամյակի ավարտին, Բեյրութ, 1966, էջ 173:
2. J. Lepsius Raport secret sur. les massacres d'Arménie, p. 304.

վնասակար անձերից (հայերից) շատերը չեն հեռացված: Հայերի տեղահանության հետաձգման մասին հրահանգը նշանակում է, որ իրենց գտնված տեղերում պիտի մնան բոլոր նրանք, ովքեր մինչև այժմ չտեղահանվածներից կամ տեղահանման ենթակա եղողներից չեն: Այդ հրահանգը երբեք չի կարող նշանակել, թե հենց սկզբից կառավարության հանդեպ դավաճան վարքագիծ դրսևորած և կոմիտեների հետ գործակցող անձինք չպետք է քշվեն:

Կուսակալությունում կամ շրջակայքում, եթե նման մարդիկ կան, ինչ պատճառով էլ նրանք բռնագաղթված լինեն, անմիջապես պետք է հավաքվեն և հսկողության տակ ուղարկվեն Դեր Զոր»:[1]

Թալեաթի հուշերից

Աբդուլ Համիդի կամայական վարչությունը թե կենտրոնում, թե վիլայեթներում ստեղծել էր հատուկ մի խավ, որին պատկանողներն աշխատում էին առաջին հերթին ու առավելագույնս ապահովել իրենց շահերը, որի հետևանքներն ամբողջովին ծանրանում էին խեղճ ժողովրդի վրա: Նույն այդ մարդիկ իրար հետ կապված էին հավաքական շահերով: Պետության կենտրոնական մարմիններում նախարարները և պալատականները սերտորեն միահյուսված էին Ստամբուլի իրենց գործակիցների հետ և փոխադարձաբար օժանդակում էին միմյանց: Վիլայեթներում էլ հարուստներն ու երևելիները, նախարարների և պալատականների հետ սերտ կապեր ունենալով, շարունակում էին անարգել, շահագործել ժողովրդին: Այս խավի մի մասը կազմված էր ազգային փոքրամասնություններից: Հույները, բուլղարները, սերբերը, հայերը, արաբները, քրդերը և առնաուտները (ալբանացիներ) աշխատում էին երկակի օգուտ քաղել Թուրքիային դեպի անկում և մահ տանող Աբդուլ Համիդի կառավարության քաղաքականությունից...

Բուլղարները և հայերը իրենց անկախությունը եվրոպական միջամտությամբ ապահովելը պատճառաբանում էին Աբդուլ Համիդի վարչակազմի կամայականություններով:

Հայերն ու բուլղարները իրենց նպատակների իրագործման համար դիմում էին տարբեր միջոցների՝ հիմնական օրենքի պարգևած ազատության շնորհիվ իրենց համար ինքնավար կառավարում և, վերջապես, անկախություն ապահովել... Նրանք թուրքերին ներկայացնում էին որպես

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3117:

հիմնական օրենքին հավատարիմ և համերաշխ ազգեր, միաժամանակ Եվրոպային ներկայանում էին թե հին և թե նոր կառավարության դեմ բողոքող և ճգնում էին ապացուցել, որ թուրքական վայրենությունները շարունակվում են:

Այնուամենայնիվ, չեմ ուզում ասել, որ իսլամ ժողովուրդը չի մասնակցել կոտորածներին: Իմ նպատակն է ապացուցել, որ այդ դրդումներն ու գրգռությունները հայերի և բուլղարացիների կողմից կատարվել են սոսկ քաղաքական նպատակներով:

Ռուսաստանը ուզում էր Ռումելիում իր հրամանների գործադրման պատրաստ Բուլղարիա, իսկ Անատոլիայում անկախ Հայաստան ստեղծել, Թուրքիան փոքրացնելով՝ նրան շրջափակման մեջ առնել և դրանով Ռուսաստանին սպառնացող ամեն տեսակի փորձությունները վերացնելուց հետո, նաև կտրել Կովկասի մուսուլմանների հետ թուրքերի հարաբերությունները: Դրանից հետո Ստամբուլի նկատմամբ իր ծրագրերի իրականացումը դյուրին էր լինելու: Երբ հայերը հասկացան այս ծրագիրը, սկսեցին հակում ցույց տալ դեպի այն Ռուսաստանը, որին երբեք չէին սիրել և Կովկասում ենթակա էին նրա բռնություններին: Նրանք կարծեցին, որ այլևս հասել է Թուրքիայից անկախանալու առիթն ու ժամանակը: Հնչակ, դաշնակ և ռամկավար հայ ազգային կազմակերպությունները միացան հայ պատրիարքարանին և Էջմիածնի կաթողիկոսի միջնորդությունով կազմեցին մի հանձնաժողով՝ Նուբար փաշայի նախագահությամբ: Ստամբուլում ռուսական դեսպանից Նուբարի հանձնաժողովի հրահանգներ ստանալը մեզ հետ հարաբերություններ ունեցող կոմիտեները թաքցնելու կարիքն անգամ չէին զգում: ...Այն ամբաստանությունը, թե ընդհանուր կենտրոնի անդամները, Միություն և առաջադիմություն կազմակերպության միջոցով մասնակցել են հայերի և հույների տեղահանմանը և այդ խնդրի մասին հրամաններ են տվել, ինչպես նաև Ստամբուլում (հայերին և հույներին) ձերբակալել են, իրականությանը չի համապատասխանում...

Ընդհանուր կենտրոնի անդամներին վերագրված ոճիրներից է համարվում նրա անդամներից մեկի այս խնդրի շուրջը կուսակալների հետ գրավոր հարաբերություն ունենալու պնդումը: Բայց առաջ գնալով, ընդունենք, որ կենտրոնի անդամներից մի քանիսն իսկապես մասնակցել են ընդհանուր նախճիրին: Տվյալ դեպքում այս անդամի ինքնուրույն գործած ոճրի պատճառով ինչպե՞ս կարելի է պատասխանատու համարել նման ոճրածին մտածումներ և գործեր արգելող ու մերժող մի ուրիշ անդամի:

Միություն և առաջադիմություն կազմակերպությունն արդյոք զինված ո՞ւժ էր և իր անդամների վրա ազդելու համար անհրաժեշտ ուժը ունե՞ր...

Օսմանյան պետությունը ցանկանում էր Հայաստանում գործադրել ընդհանուր ու մասնակի բարենորոգում և արգելք հանդիսանալ այդ գործում օտար միջամտություններին: Չնայած դրան, Հնչակյան կոմիտեն կատարելապես համոզված էր, որ առանց անկախ Հայաստանի ստեղծման նրա բնակչությունը, որ պետության էլ պատկանելիս լինի, չպիտի կարողանար անվտանգության մեջ ապրել ու զարգանալ, և հայ ազգը չպիտի կարողանա պաշտպանել իր ազգային գոյությունը ներքին և արտաքին հարձակումներից: Այս նկատառումով կոմիտեն որոշել էր պաշտպանել այդ միտքը:

Հայերն այս պահանջները որպես ճշմարտություն ներկայացնելու համար պատմական ոչ մի իրավունք չունեն: Օսմանցիները արևելյան նահանգները չեն գրավել, իսկ հայերը Օսմանյան կայսրության կազմավորումից մինչև այսօր սահմանների ապահովման և (երկրի) անկախության խնդրում ոչ մի ջանք չեն գործադրել և ոչ մի ծառայություն չեն մատուցել: Օսմանցիներին ապավինած այս ժողովուրդը լավ ընդունելություն է գտել և միշտ հայրենակցի վերաբերմունքի արժանացել: Հայերը տեղավորվեցին ամբողջ երկրում: Եթե բացառություն համարվի քրդերի հարևանությամբ շրջանները, նրանք երկրի բոլոր կողմերում լավ վերաբերմունքի հանդիպեցին: Այս շրջաններում կառավարությունը չկարողացավ կարգը պահպանել, որի հետևանքով թուրք և քուրդ գյուղերի վիճակը չէր տարբերվում հայ գյուղերից: Անատոլիայում, զանազան նահանգներում և Ստամբուլում հայերը մյուս ազգերի համեմատությամբ ապրում էին ավելի անվիշտ ու երջանիկ կյանքով: Հայրենիքի բոլոր բարիքներից օգտվող այս ժողովուրդը երբեք չէր մասնակցում նրա վշտերին ու դժվարություններին: Երկրի թե՛ երջանկությունից, թե՛ տառապանքներից միշտ օգուտ էր ապահովում: Նրանք հայրենիքի համար ոչ մի պատերազմի չմասնակցեցին և հայրենիքի համար ոչ մի կաթիլ արյուն չթափեցին: Ընդհակառակը, պատերազմի ժամանակ շարունակում էին իրենց առևտուրը և, հանձնառուական գործերի մեջ մտնելով, շատ դրամ էին շահում, թե՛ վատ և թե՛ լավ օրերին ապրում էին հանգստության և անդորրության մեջ: Այս բոլոր շնորհների համար որպես շնորհակալություն, այժմ ուզում են մեծամասնություն կազմող բնակչությանը վոնդել և անկախություն ձեռք բերելու համար պոկել Օսմանյան հայրենիքի մի մասը:

Պատմությունը չի արձանագրել նման ապերախտության մի այլ օրինակ:

Օսմանյան պետությունը 1914 թվականի հուլիսի 21-ին զորահավաք հայտարարեց: Նույն օրը արտակարգ գործունեություն էր նկատվում Դաշնակցության կոմիտեի Ստամբուլի կենտրոնում: Պետերը, իրար մոտ գնալով, ծածկագիր հրահանգներ տվին գավառների մասնաճյուղերին: Նման գործունեություն էր նկատվում նաև Հնչակ, Ռամկավար և Վերակազմյալների կոմիտեներում: Բարենորոգման հարցի կապակցությամբ միաբանված բոլոր այս կոմիտեները հիմա արդեն աշխատում էին բոլորովին միանալ և հիմնավորել այդ միությունը:

Երբ ռուսներն անցնեին սահմանը, և օսմանյան բանակները սկսեին նահանջել, օգտվելով գոյություն ունեցող միջոցներից, ամենուրեք պետք է բարձրացվեր ընդհանուր ապստամբություն: Այսպիսով օսմանյան բանակը պետք է առնվեր երկու կրակի մեջ: Պետք է պայթեցվեին բոլոր պետական պաշտոնատները, անհրաժեշտ էր զբաղեցնել կառավարությունը ներքին խնդիրներում և հարձակվել գերմանական հաղորդակցության միջոցների վրա: Օսմանյան բանակի առաջանալու պարագային հայ զինվորները զենքերով պետք է հեռանային իրենց միավորումներից և հրոսակային (չեթե) խմբեր կազմելով՝ միանային ռուսներին:

Բանակի վարչությունը երկրի ներսում տիրող ընդհանուր ապստամբության պատճառով բոլոր կողմերում սկսեց գործադրել տեղահանումը: Այս պատճառով երկու ուժերի միջև սկսեցին իրական ներքին պատերազմի բնույթ ստացած ուժեղ բախումներ և կռիվներ: Թուրք ժողովուրդը և զինվորները համոզված էին, որ հայերը միացել են ռուսներին և նպատակ ունեն ոչնչացնել թուրք բնակչությանը և վերջ տալ թուրքական պետության անկախությանը: Երբ Անատոլիայի զանազան տեղերում սկսվեց տեղահանումը, Ստամբուլի հայերի մեջ և, մասնավորապես, կոմիտեներում տիրեց արտասովոր տագնապ: Հայ կոմիտեների վարչական կենտրոնը, այսինքն՝ արտաքին կազմակերպության ուղեղը գտնվում էր Ստամբուլում: Այս քաղաքը միևնույն ժամանակ կենտրոնն էր բոլոր տեսակի զինված շարժումների: Հետևաբար ընդհանուր շտաբը նախ և առաջ Ստամբուլում որևէ ապստամբության կարելիությունը խափանելու և նեցուկների պաշտպանությունը լավ կազմակերպելու նպատակով հրամայեց իր իրավասության տակ եղած ոստիկանական տեսչությանը ձերբակալել և պաշարման շրջանակից հեռացնել բոլոր այն անձերին,

որոնք առնչություն ունեն կոմիտեների գործունեության հետ: Այս հրամանը տրվելուն պես, ոստիկանական տեսուչը այդ մասին տեղեկացրեց ինձ: Խնդրո առարկա անձերի մի մասը կովկասցի էր: Սրանք ամենքն էլ մի գիշերվա մեջ ձերբակալվելով՝ ուղարկվեցին Կոնիա: Ավելի ուշ, ուղարկված քննիչ հանձնաժողովի կողմից ստուգված է, որ Անկարայի ռազմական ատյան տանելու ժամանակ նրանք սպանվել են ոստիկանների կողմից: Այս կապակցությամբ ռազմական ատյանին հանձնված ոստիկանները դատապարտվել են զանազան պատիժների, նույնիսկ՝ մահապատժի:

Թե պաշտոնական քննությունների արխիվներից և թե ընտրական շրջաններից վերադարձող պատգամավորների տված տեղեկություններից իմանում ենք, որ մի շարք անխիղճ, անբարոյական և ստոր մարդիկ ցանկացել են կացությունից անձնապես օգտվել և հեղինակ են դարձել շատ ոճրագործությունների: Պատասխանատվությունից վախենալով՝ ընդհանուր կուսակալները և կառավարիչները դեպքերը ներկայացրել են կարելի եղածին չափ անկարևոր և մասամբ էլ հանցանքը բարդել քուրդ ժողովրդի վրա: Պատգամավորների տված տեղեկությունները իրոք ողբերգական էին: Շատ գիշերներ չեմ կարողացել քնել: Մի կողմից, քաղաքական մարմիններին հրամայեցի գործադրել անհրաժեշտ միջոցառումներ, մյուս կողմից, զինվորական իշխանություններից խստորեն պահանջեցի, որ ոճրագործությունների հեղինակները պատժվեն, իսկ ժողովրդին պաշտպանելու համար զինվորական ջոկատներ ուղարկվեն: Բացի դրանից, պետական համապատասխան ամենաբարձր մարմիններից՝ վճռաբեկ ատյանից, պետական խորհրդի անդամներից և քրեական դատարանի նախագահներից բաղկացած չորս քննիչ հանձնաժողով կազմելով՝ ուղարկեցի Անատոլիա: Այս հանձնաժողովները, բազմաթիվ պաշտոնյաների պաշտոնազրկելով, ռազմական ատյաններին են հանձնել: Քննությունների արձանագրությունների մի օրինակը հանձնաժողովի կողմից հանձնվել է Բարձրագույն Դռան, պատճենը պահվում է արխիվում:

Թե՛ տեղահանման և թե՛ ապստամբության պատճառով հայերը կորուստներ են կրել: Պետք է խոստովանել այս: Սակայն իրականությունն է նաև այն, որ Արևելյան նահանգների մուսուլմանները ևս մեր հայ հայրենակիցների կողմից նույն չափով կորուստների են ենթարկվել:

Ըստ էության, զինվորական նախազգուշական միջոցառումներից բացի, այլ բան չեղող տեղահանումը, անխիղճ, աննկարագիր մարդկանց

պատճառով ստացել է ողբերգական կերպարանք: Ես նպատակ չունեմ թաքցնել այդ գործերի տգեղությունը: Պարզապես ցանկանում եմ ասել, կառավարությունը, Միությունն և առաջադիմության կոմիտեի վարչական կենտրոնը այս գործերի հետ ոչ մի առնչություն չունեն:[1]

Զիա Շաքիրը Թալեաթի մասին

Նա գլխավորապես օգտագործում էր Հագգը փաշայի (մատի վրա խաղացնել) և Սաիդ փաշայի (անվճռականություն և տատանվողականություն) տակտիկան... Լինելով կոմիտեական, իսկ հետագայում՝ մեջլիսի պատգամավոր, Թալեաթն ավելի շատ հայտնի էր իր վճռականությամբ և անխոնջությամբ: Զբաղեցնելով պատասխանատու պաշտոն՝ նա վերածվեց լրջմիտ էֆենդու:

Նա կարող էր մարդկանց, եթե նրանց կարիքն ուներ, օգտագործել, իսկ ապա առանց երկմտելու հեռացնել ճանապարհից (ոչնչացնել):

Իմ անձնական արխիվում պահվող վերծանված գրառության բնօրինակները բավական ակնհայտ ցուցադրում են Թալեաթ փաշայի բնավորության այդ գիծը:

Ընկերության (երիտթուրքերի կառավարության) ֆիդայիների թվում էր ոմն Չերքեզ Ահմեդը: Այս արյունախումը, լինելով կոմիտեական, կատարել է տարբեր գաղտնի հանձնարարություններ: Մի անգամ, վերևի հանձնարարությամբ, գիշերը Բաքրքյոյում նա գազանաբար սպանեց ընդդիմության ներկայացուցիչ Զեքի բեյին: Քանի որ հանձնարարության հետքերը չհաջողվեց ոչնչացնել, գործը հասավ դատի ու հետաքննության: Չերքեզ Ահմեդն անհետացավ և մինչև հայերի տեղահանությունը այլևս ոչ մի տեղ չերևաց: Տեղահանության բուռն ընթացքում նա հանկարծակի մակերես դուրս եկավ և ակտիվ մասնակցություն ունեցավ Դիարբեքիրի վիլայեթի իրադարձություններին: Նրա դեմ այնքան գանգատ ստացվեց, որ փախավ Դամասկոս, սակայն այստեղ ձերբակալվեց Ջեմալ փաշայի կողմից:

Այն ժամանակ Թալեաթ փաշան դեռևս մեծ վեզիրի պաշտոնը չէր զբաղեցնում: Ջեմալ փաշան նրան ծածկագիր ուղարկեց հետևյալ բովանդակությամբ. «Այստեղ են եկել Չերքեզ Ահմեդը և նրա ընկեր Հալիլը: Հալիլի մոտ հայտնաբերվել է ավելի քան 1 500 լիր, երբ Չերքեզ Ահմեդի

1. ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարան: Կ. Պոլսում 1946 թ հրատարակված հուշերի թարգմանություն կամ "De Rud grosse" հանդես, 1948 թ.:

մոտ ոչ մի գրող չկար: Սրանից ևս եզրակացրեցի, որ վերջինս մասնակցություն չի ունեցել թալանին ու կողոպուտին: Ես լրիվ համոզված եմ, որ (հայերի) կոտորածին մասնակցել է բացառապես Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդի հրամանով: Դուք ի՞նչ եք կարծում, անհրաժեշտություն կա՞ Ահմեդին վերացնելու: Կամ կարելի՞ է բավարարվել միայն Հալիլին մահապատժի ենթարկելով: Խնդրվում է պատասխանել ոչ ուշ, քան վաղը երեկոյան»:[1]

Ջենաի, Շեհաբեդդինի «Գիշատիչ թռչունները» հոդվածից հատված՝ տպված «Բեյամ Սաբահ» պարբերականում

Թալեաթը կատաղի փառամոլ էր, երեսփոխանությունը չբավարարեց նրա փառասիրությունը, բավարար չեղավ նաև նախարարությունը, թերևս արհամարհեց եպարքոսությունը: ...Ամեն գնով ձգտեց ընդարձակել իր ազդեցության շրջանակները: Ցանկացավ, որ իր շուրջը կազմվի գովաբանողների օղակ, ստրկամիտների շրջանակ... Թալեաթի համար դրամը երբեք նպատակ չդարձավ, սակայն ոսկի և արծաթ սիրում էր, որովհետև դրանց փայլով հնարավոր էր երևալ: Նրա իդեալն էր երևալ, երևալ, միշտ երևալ, միշտ մի քիչ ավելի բարձրանալ... Այդ ստորածնի մեկնակետից մինչև հասած դիրքը միայն մի ուղղահայաց գիծ կա, չնայած դրան դեռ չի հագեցել բարձրանալուց: ...Թալեաթը հեշտությամբ ինքնախաբեությանն անձնատուր եղավ... իր դեմ այլևս չէր կարողանում պատկերացնել որևէ պատնեշ... կարելի է ասել, որ Թուրանի բախտը որոշող դառնալն էր նպատակը: Ճիշտ է, քանի բարձրացավ, այնքան տեսանելի դարձավ, սակայն նրա տեսողության դաշտը չընդլայնվեց: ...Կարծես արև է այն հրդեհը, որ շրջապատել է մեզ: Անկարող էր զանազանել կենսատու և կիզիչ ջերմությունները... առաքինություն էր այն ոճիրը, որն իր օգտին էր: Ճանաչում էր միայն այն օրենքները, որոնք ծառայում էին իր ցանկություններին: ...Լեզվով միշտ հանրային սեր էր, իսկ սրտում՝ միայն անձնական սեր: «Մեծ» էր համարում նրանց, ումից վախենում էր և վախկոտների մեջ արժանիք տեսնում: Թալեաթի համար ազգային եղբայրներ էին «մերքեզը ումումիի անդամները», իսկ հայրենիքն էին իթթիհադի ակումբները: Իր թշնամիները՝ իթթիհադի թշնամիներ, իթթիհադի հակառակորդն էլ ազգի թշնամիներ էին: Նախընտրում էր, որ

1. Z. Sakir Yeni tarihinde önemli devlet adamlari, Talahat, Enver ve Cemal, Istanbul, 1944, s. 52-53.

պետությունն իր ձեռքերի մեջ մեռներ, քան բարգավաճեր ուրիշի ձեռքերում: Իր փառատենչությանը հագուրդ տալու համար Տրիպոլսում պատերազմ սկսեց, Բալկանյան պատերազմը սկսել տվեց, գրավեց ու գրավել տվեց Բաբը Ալին: ... Նա ոչինչ չէր. «Կոմիտեական էր»... չար տաղանդ ուներ, թակարդ լարելու, դարանակալ լինելու, հանկարծակիի բերելու ընդունակ, խարդախ, լարախաղաց, խաբեբա տաղանդ: Թե իր անձնական և թե հասարակական կյանքում Թալեաթի հենարանը, լծակը, ուժը, տոկունությունը նույնն էր՝ բանսարկությունը: Շատ ստորին խավից բանսարկության շնորհիվ հասավ ամենաբարձր դիրքերին: Սակայն նրա ճակատագրի ծառը որքան բարձրացավ, այնքան ակնհայտ դարձավ, որ արմատներն աղբի մեջ են... նրա եպարքոսությունը յուրատիպ օձային արքայություն էր:

Հասկացել էր, որ նույնիսկ իրեն դատապարտողների աչքում «արհամարհված արձան» էր: Ինքը նույնպես զգացել էր, որ թե իր դիրքը և թե իր համբավը պատմության առջև իրեն մեղադրող վկաներ են լինելու: Նրա համար հույսը այլևս շնչարգելությունն էր: Ամեն մի հաջողության մեջ կար նրան սպասող անքնություն, որը որևէ այլ մղձավանջից շատ ավելի տառապանք պատճառող էր: Կյանքը նրա էությունը կրծող որդի էր վերածվել, այտերը վաղ խոռոչացած և մազերը ծերացած 40 տարեկան չդարձած: Զգացվում էր, որ դագաղը չէր ուշանալու, որպեսզի չափի նրա իսկական հասակը: Հակառակ իր պաշտոնական փայլին, Թալեաթը դժբախտ կյանքով ապրեց: Ամեն ինչի արժանացավ, առանց որևէ բան վայելելու: ...Շինծու ժպիտով անտաշ զորություն ցույց տալու համար այնքան բռնադատում էր ինքն իրեն...

Թալեաթն ուներ սատանայական զառոզություն, որը ձգտում էր թաքցնել խորամանկության մտերմիկ ձևերի տակ: Նրա զառոզության համար քաղաքական պարտությունն անհանդուրժելի հեռանկար էր: Չնայած դրան, զգում էր, որ յուրաքանչյուր քայլը իրեն մոտեցնում է այդ հավանականությանը...[1]

Շերիֆ փաշան՝ Աբդուլ Համիդի նախարարներից, Թալեաթի մասին

Լինելով արտակարգ հարմարվող և երկերեսանի՝ նա նվաճեց Միություն և առաջադիմություն գաղտնի կոմիտեի իր համախոհների վստա-

1. **Հ. Գանգրունի** Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ, էջ 468-472:

հությունը՝ հենց սկզբից դառնալով կոմիտեի գլխավոր առաջնորդը: Նրա ղեկավարության ներքո կազմակերպվեց Ֆեդանս կամ քաղաքական մարդասպաններ ընկերությունը: Երկրի ներքին քաղաքականության մեջ նա ներդրեց ահաբեկչության գաղափարը:

Հայկական հարցը Ջեմալ փաշայի «Հուշերում» ՝ 2-րդ գլուխ

Ռուս դիվանագիտությունը շատ լավ հաշվի էր առնում այն հանգամանքը, որ Բուլղարիայի անկախություն ստանալուց հետո ինքն այլևս զրկվելու է Թուրքիայի ներքին գործերին խառնվելու առիթից: Եվ որովհետև ռուս կառավարությունը չէր ուզում այդ իրավունքը կորցնել, ուստի հենց դա աչքի առաջ ունենալով՝ Սան Ստեֆանոյում Թուրքիայի հետ կնքած դաշնագրի մեջ մտցրեց հայերի վերաբերյալ հատուկ մի հոդված, որը հետագայում փոքր-ինչ փոփոխված ձևով մտավ Բեռլինի դաշնագրի մեջ:

Եվ ահա սրանից հետո է, որ հայերի, քրդերի ու թուրքերի հարաբերությունները ծայր աստիճան լարվեցին: Օսմանյան պետության մեջ, ամենուրեք՝ թե՛ մեծ քաղաքներում և թե՛ ամենափոքր գյուղերում, առաջացան շատ լավ կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեներ:

Այս գաղտնի միությունները անընդհատ ջանք էին թափում գրգռելու հայերին քրդերի ու թուրքերի դեմ և պահանջում էին կազմել մի անկախ, առանձնաշնորհված Հայաստան, որը բաղկացած էր լինելու ոչ ավելի ոչ պակաս, քան Արևելյան Անատոլիայի վեց նահանգներից: Ինքնըստինքյան հասկանալի է, որ թե՛ կառավարությունը և թե՛ թուրք ու քուրդ ազգաբնակչությունը լավ տեղյակ էին ռուսական այս բանսարկություններին:

Եվ որովհետև հայերն անկախ պետություն հիմնելու ձգտում ունեին, մի պետություն, որտեղ իրենք, չնայած քրդերի և թուրքերի թվական գերազանցությանը, պետք է նրանց վրա իշխեին, ուստի, հասկանալի է, որ սրանք էլ իրենց կողմից ամեն կերպ աշխատեցին ի դերև անել հայերի այդ ծրագիրը: Պարզ ասած՝ քրդերն ու թուրքերը շատ լավ ըմբռնում էին, որ այդ բոլորը ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ ռուսների սարքած պատրվակ, որպեսզի բացառապես քրդերով և թուրքերով բնակեցված Անատոլիայի մի խոշոր մասը իրենց ճանկը գցեն...

Նշանակալի է, որ ամեն անգամ, երբ Թուրքիան ձեռնամուխ էր լինում իր արտաքին կամ ներքին կյանքում որևէ կարևոր հարցի լուծմանը, Ռուսաստանն իսկույն հրապարակ էր հանում Հայկական հարցը: Այս անգամ էլ Աբդուլ Համիդ 2-ը այս հարցը լուծեց նրանով, որ Ռուսաստանին մի շարք զիջումներ արեց:

1894-96 թվականներին հայերն ուժգին գործունեություն սկսեցին և ամենուրեք մեծ և փոքր ապստամբություններ առաջացրին: Հայկական խռովություններն այն աստիճան գրգռեցին այդ երեք, մինչ այդ գրեթե հինգ-վեց դար իրար կողքի խաղաղ ու հաշտ ապրող ազգերին, որ այժմ դրանք պատրաստ են հարձակվել միմյանց վրա՝ մեկը մյուսի արյունով ներկել Անատոլիայի հողը և նույնիսկ Կ. Պոլիսի փողոցները:

Այն երկու-երեք տարիների ընթացքում, երբ տեղի էին ունենում այդ կոտորածները, հայերի ձեռքով սպանվեցին բազմաթիվ քրդեր ու թուրքեր. երկու կողմերն էլ իրար ոչնչացնելու գործում մրցման էին ելել: Եվ քանի որ ամեն տեղ հայերը թվով փոքր էին, ուստի, բնական է, որ թուրքերն ու քրդերը կոտորածի գործն ավելի հաջողությամբ էին առաջ տանում: Պարզ է, որ եթե հայերը մեծ թիվ կազմեին, նրանք ավելի շատ քուրդ և թուրք կկոտորեին:

Պետություն կառավարելու մասին իմ ունեցած հայացքներով ես զգվանքով դատապարտում եմ «հեղափոխությունը խեղդելու» նպատակով զանգվածային կոտորածների դիմելու համակարգը. այդ միջոցը, բացի այն, որ երկրին մեծ վնաս է հասցնում, միաժամանակ արատավորում է ժողովրդի պատմությունը...

Ինձ ասացին, որ «Մոհամադիե» կուսակցության կողմից Կ. Պոլսից Ադանա էին ուղարկված եղել որոշ մարդիկ, որոնք եկել էին թուրք ազգաբնակչությանը նախազգուշացնելու հայերի սկսելիք ապստամբության մասին: Այս լուրերի իսկության ապացույցներ, սակայն, ինձ չհաջողվեց գտնել:

1909 թ. ապրիլի սկզբին տրամադրությունների փոխադարձ լարվածությունն այն աստիճանի էր հասել, որ ամեն օր կարելի էր սպասել՝ ուր որ է, ազգաբնակչությունը իրար վրա հարձակում կսկսի: Ապրիլի 14-ին, վերջապես, Մուշեղ եպիսկոպոսի՝ հայերին տված հարձակման հրամանով, սկսվեցին «Ադանայի դեպքերը»:

Ադանայում, Տարսոնում, Համիդիեում, Երզինում, Դորտ Յոլում, Ացիբլիում, կարճ՝ հայերով բնակեցված բոլոր վայրերում տեղի ունեցավ այնպիսի մի կոտորած, որի մանրամասների նկարագրությունն իսկ սարսափ է ազդում: Կառավարությունը, որը նույնիսկ վիլայեթի գլխավոր քաղաքում իր կատարյալ անզորությունն ապացուցեց, կուրությամբ այն տեղը հասավ, որ, հայերի՝ մուսուլմանների վրա հարձակման առաջն առնելու նպատակով, շրջաններին ոտքի կանգնելու հրաման էր տրվել:

Աղանայի այս արյունահեղությանը զոհ գնացին 1՝/հազար հայեր և հազար ութ հարյուր հիսուն թուրքեր:

Վերջապես մենք էլ ակտիվ մասնակցություն ունեցանք համաշխարհային պատերազմում...

Երբեմն ինձ լուրեր էին հասնում, որ գաղթվող հայերը Մամուրեթ ուլ Ազիզի և Դիարբեքիրի վիլայեթներով անցնելիս բռնությունների էին ենթարկվում... Գաղթականական գործերը ղեկավարում էին քաղաքացիական մարմինները և, բանակը դրանցում ոչ մի մասնակցություն չուներ: Սակայն, քանի որ ինձ համար անհանդուրժելի էր, որ իմ բանակի շրջանից անցնող հայերի նկատմամբ բռնություններ գործադրվեին,մի բան, որ տեղի էր ունենում մյուս շրջաններում, ուստի այդ մասին համապատասխան հրաման արձակեցի: Անդադար գանգատներ էին լսվում, թե քաղաքացիական իշխանությունները Բոզանտիի ու Հալեպի ճանապարհին չեն կարողանում գաղթող խմբերին բավականաչափ պարեն մատակարարել և այդ պատճառով էլ մարդիկ երկարատև ճանապարհորդության հետևանքով ամենախղճալի վիճակում են:

...Երբ ես համոզվեցի, որ տեղահանված հայերին Միջագետք աքսորելը նրանց թշվառության է մատնելու, նպատակահարմար գտա նրանց մի քանի խմբի տեղավորել Բեյրութի և Հալեպի սիրիական վիլայեթներում: Դա ինձ հաջողվեց Կ. Պոլիս արածս եռանդագին դիմումներից հետո միայն և, վերջապես, ստացա ցանկացածս թույլտվությունը:

Այդպիսով ինձ հաջողվեց մոտ 150 000 հայ տեղավորել հիշյալ վիլայեթներում:

Ինչ վերաբերում է աքսորի ընթացքում տեղի ունեցած անցքերին, ապա դա պետք է վերագրել այն խտացած ատելությանը, որ վաքսունյոթանասուն տարիներ ի վեր գոյություն ուներ թուրքերի, քրդերի և հայերի միջև:

Անշուշտ, 1915 թ. տեղահանության ժամանակ հայերի նկատմամբ գործած հանցանքներն ամենայն իրավամբ զզվանք են առաջ բերում, սակայն այն բոլորը, ինչ որ արեցին հայերը թուրքերի և քրդերի դեմ, երբ ապստամբել էին, իրենց անխղճությամբ ու լրբությամբ, առաջինների արածներից հետ չէին մնում:

Կառավարությունը հայերի տեղահանությունը համարում էր թուրք և քուրդ ազգաբնակչության պաշտպանության, զորքի և Օսմանյան պետության քաղաքական գոյության տեսակետից միակ դրական ու կտրուկ

միջոցը, սակայն, մյուս կողմից, այս միջոցը թուրքերին և քրդերին հնարավորություն տվեց հանցագործության արհեստի մեջ վարժվելու: Մի՞թե հնարավոր չէր այս հարցն այլ կերպ լուծել, կամ մի՞թե չէր կարելի գաղթողներին կոտորածից փրկել:

Ընդունենք, որ Օսմանյան կառավարությունը մեկուկես միլիոն հայերի Արևելյան Անատոլիայի նահանգներից տեղահանեց և որ դրանցից վեց հարյուր հազարը մասամբ սպանվեցին, մասամբ էլ քաղցի ու թշվառության հետևանքով կորան:[1]

Ջեմալ փաշան Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին

Նախարարական ժողովի այս հարցի մասին ունեցած խորհրդակցությանց մեջ շատ աշխատեցայ, որ փոխանակ հայ ժողովուրդը ամբողջապես տեղահան և աքսոր ընելու, ամեն քաղաքէ միայն գրչի տեր, մտավորական ու հայ քաղաքական քոմիտեներու պետերէն 15-20 -ական հոգի աքսորել տրուի, ու հասարակ խեղճ ժողովուրդը խնայուի, սակայն կը ցավիմ ըսել, թե ձայնս լսելի ընել տալ չի կրցա:[2]

Ադանայի երիտթուրք գործիչը 1915 թ. փետրվարին հայտարարեց

Հայոց գլխուն նոր փոթորիկ պիտի պայթի, որը պիտի գերազանցե ցայդ պատահածները... Զեյթունի, Հաճընի, Տեորթեոլի, ինչպես նաև Ատանայի ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան և հարստութիւննին պիտի գրավուի, նույնիսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չպիտի մնան:

Մորգենթաուի պատմածը

Մի անգամ մի ծեր թուրք ասաց իր տղային. «Տղաս, դու խոզեր տեսե՞լ ես: Մեկը սև է, մյուսը՝ սպիտակ, մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր: Դրանք մեկը մյուսից տարբեր են, բայց դրանք բոլորը խոզեր են: Նույն բանը վերաբերում է քրիստոնյաներին: Մոլորության մեջ չընկնես, տղաս: Քրիստոնյաները կարող են հագնել գեղեցիկ զգեստներ, նրանց կանայք կարող են շատ գեղեցիկ լինել, նրանց մաշկը սպիտակ է և հարթ: Հայերը կառուցում են գեղեցիկ տներ: Բայց հիշիր, տղաս, այդ արտաքին շլացուցիչ փայլը

1. **Ջեմալ փաշա** Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 21-28, 50-54:

2. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան** Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեոլինէն դեպի Զոր, 1914-1920 թթ., հատոր Ա, Բեյրութ, 1977, էջ 103-104:

խաբուսիկ է, նրանք բոլորը խոզեր են»: Այս թուրքի մտածելակերպը տիպիկ երիտթուրքական է: Ըստ այդ կուսակցության ռասիստական, շովինիստական սկզբունքների՝ մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարություն չի եղել և չի կարող լինել, որ թուրք ռասան վեր է բոլորից և անպայման պետք է առանձնաշնորհներ ու մյուս ազգերի նկատմամբ իր հայեցողությամբ վարվելու իրավունք ունենա: Բայց սա երիտթուրքերի քաղաքականության էությունն է, իսկ արտաքնապես նա իր նպատակն էր հռչակել ազատություն, առաջադիմություն և հավասարություն սկզբունքները:

Եվ ինչպես նշում է «Քարնք հիստորի» հանդեսը. «Թուրք պարագլուխները, ներառյալ Թալեաթն ու Էնվերը, այցելեցին քրիստոնեական եկեղեցիներ, հետո գնացին հայկական գերեզմանատուն: Հայ քահանաներն էլ իրենց հերթին այցելեցին թուրքերի մզկիթներ: Էնվեր փաշան այցելեց մի քանի հայկական դպրոցներ, երեխաներին ասելով, որ քրիստոնյաների և մուսուլմանների հին պայքարն ավարտվել է և այս երկու ժողովուրդներն այժմ ապրելու են միասին, ինչպես քույր ու եղբայր»:

«Որ հայերը համակրում են Անտանտին, գաղտնիք չէ ոչ մեկի համար: Եթե դուք ցանկանում եք իմանալ, թե ինչպես են ընթանում պատերազմական գործողությունները, նայեցեք որևիցե մի հայի դեմքին», նշում է թուրքական թերթը: «Եթե նա ժպտում է, ուրեմն դաշնակիցները հաղթում են, եթե նրա աչքերը ցած են խոնարհված, ուրեմն գերմանացիների գործերը հաջող են»:

Մորգենթաուն պալիս է թուրքերի կողմից հայերի խոշտանգման բարբարոս մեթոդների նկարագրությունը

«Ժանդարմները անմարդկային տանջանքների էին ենթարկում հայ զոհին, մինչև նա ուշաթափվում էր: Նրան ուշքի էին բերում վրան ջուր լցնելով և շարունակում կոտտանքները: Նրանք պատժի բազմաթիվ մեթոդներ գիտեին: Թուրքերը մեկ առ մեկ պոկում էին զոհի թարթիչները, մորուքը, հանում էին ձեռքերի ու ոտքերի եղունգները, շիկացած աքցանով պոկում միսը և եռացրած ձեթ լցնում վերքերի վրա: Այնուհետև բղավում էին. «Այժմ թող ձեր խաչը փրկի ձեզ»:

Այնուհետև Մորգենթաուն շարադրում է իր զրույցը Թալեաթի հետ:

«Ես հարցրեցի Կոնիայի հայերի մասին: Բայց հազիվ էի սկսել, երբ Թալեաթի աչքերը փայլեցին, շրթունքները սեղմվեցին և կոպիտ պա-

տասխանեց. «Նրանք ամերիկացիներ՞ն են», և ապա շարունակեց. «Հայերին չպետք է վստահել: Բացի դրանից, մենք ինչպես որ վարվենք հայերի հետ, այդ Միացյալ Նահանգներին չի վերաբերում»:

Այս դեպքում նույնպես, ինչպես շատ ուրիշ դեպքերում, Թալեաթը խուսափողական դիրք գրավեց և թշնամական վերաբերմունք ցույց տվեց ամերիկյան ժողովրդին՝ դեպի հայերն ունեցած հետաքրքրության հանդեպ:

«Մի օր,- հանկարծ ասաց նա,- ես կգամ և ձեզ հետ կքննարկենք ամբողջ Հայկական հարցը,- և հետո ցածր ձայնով թուրքերեն ավելացրեց՝ բայց այդ օրը չի գա: Հետո հարցրեց. «Դուք ինչո՞ւ եք հետաքրքրվում հայերով: Դուք հրեա եք, այդ ժողովուրդը՝ քրիստոնյա: Հրեաներն ու մահմեդականները լավ հարաբերության մեջ են» (Այս ամբողջ հատվածը, որը ձեռագրով է, արդեն տպված է, այդ պատճառով էլ չեմ շարունակում):

Ասրաֆ՝ Չանկըրիի մութեսարիֆ

-Հայերու հանդեպ կառավարական քաղաքականութիւնը աղեկ չեմ տեսներ, դարձեալ բաներ մը պիտի պատահին, նայեցեք, որ ժամ առաջ դուք ձեզ Պոլիս նետեք, նոր փոթորիկներու նշաններ կը տեսնեմ:

-Պոլիս նստող և հրամայողները մեզի ամեն ինչ տալէ վերջ, երբ օր մը նեղը մնան, և պատժի օրը գա, կը ձգեն կը փախչեն և զմեզ՝ ստորադաս պաշտոնեաներն, ոտքի ներքև կը թողուն: Ես 1909-ին Օսմանիեի կառավարիչ էի, երբ Ատանայի հայերու կոտորածը պատահեցավ, քիչ մնաց ինձ կախաղանի պիտի դատապարտեին, հազիվ օձիքս ազատեցի:

Ես աղեկ չեմ տեսներ կացութիւնը և չեմ ուզեր աս անգամ ուրիշներուն ձեռքը գործիք ըլլալ:[1]

Հայ բռնագաղթվածների քարավանի պետ

Ոչ ոք կրնա մեզմէ պահանջել զձեզ, զի համրանքով չտուին, որ համրանքով ուզեն... Սակայն դուք հայերուն պես չպիտի սպաննուիք:[2]

1. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան** Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեռլինէն դեպի Զոր, 1914-1920 թթ., հատոր Ա, Բեյրութ, 1977, էջ 164, 165:

2. Ն. տ., էջ 164:

Մի թուրք Պալաքյանին

Եկայ խորհուրդ տալու, որ չերթաք Էնկիւրի... Էնկիւրիի կուսակալութեան մեջ արիւն կը վազե, ո՞ւր պիտի կրնաք երթալ... իմ զավակս ոստիկան զինուորներու տասնապետն է: Եթե տղուս Էնկիւրիում տեսածները ու ինծի պատմածները Ձեզի ըսեմ, կը խելագարիք պարզապես:[1]

Յունուար՝ Չանկըրիի իթթիհադի պատասխանատու քարտուղար, ոստիկանապետին

Եթե հայերու տուներուն մեջ զենք չգտաք, գոնե չէի՞ք կրնար հետերնիդ մեկ քանի զենք տանելով, մեկ երկու հայերու տան մեջ գաղտնապես ձգել, և ապա «ահա գտանք» ըսելով՝ ըստ այնմ ոստիկանական պաշտոնական տեղեկագիր պատրաստեիք... աս որքան անճարակ եք եղեր, և անգիտակից օրուան պետական քաղաքականութեան...[2]

Չանկըրիի զինվորական հրամանատարի հրամանը

Երեք օր պայմանաժամ կը տրուի Չանկըրիի հայ ժողովրդին, դեպի Տեր Զոր մեկնումի պատրաստելու համար: Իւրաքանչիւր ոք ազատ է իր կինն ու զավակները հետը առնելու կամ քաղաքը ձգելու: Փախչողները և պահուողները մահուամբ պիտի պատժուին:[3]

Քելեբյանի մահվան մասին պաշտոնական կարծիքը՝ արտահայտված Չանկըրիի Բեժիի թուրք տնօրենի կողմից

...Քելեկեան էֆենտի Սեբաստիոյ մոտ Գըզըլըրմաքի կամուրջէն անցած ատեն յանկարծ խելագարելով կամուրջէն գետը կը նետուի, և հակառակ հետևորդ ոստիկան զինուորներուն ջանքերուն կանյայտանա գետի յորձանքներուն մեջ:

Չանկըրիի կառավարչի որդին ասաց

Իթթիհադի կեդրոնական քոմիտեն սպաննել տուավ Քելեկեանը...[4]

---

1. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան** Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեռլինէն դեպի Զոր, 1914-1920 թթ., հատոր Ա, Բեյրութ, 1977, էջ 196:

2. Ն. տ., էջ 212:

3. Ն. տ., էջ 213:

4. Ն. տ., էջ 222:

Իթթիհադի հարյուրապետ

Տեսա՞ք, հին պատմական ազգ մը երկու ամսուան մեջ բնաջինջ ըրինք:[1]

Թուրք կին

Անիծեալ ըլլան, ընողաց գտնողաց աշխարհ է: Անմեղ ժողովուրդը սպաննելու կը տանին: Եկող թշնամին ալ վաղը մեզի այսպես պիտի ընե...[2]

Չորումի ոստիկանապետը հայ մտավորականների մի քարավանի մասին

Ասոնց պաշտոնաթուղթը լավ ոճով գրուած է, թող չվախենան, թե կը սպաննուին, միայն թե թող արթուն կենան միշտ... և թող գոհ ձգեն իրենց ուղեկից հսկող չաուշները և ցրուած չերթան ճամբան...: Եթե Յոզղատէն Պողազլեան և ապա Կեսարիա, երկարող ամենավտանգավոր ճամբան ողջ կարենան անցնիլ, ալ թող չվախենան...[3]

Շուքրի՝ Յոզղաթի ժանդարմերիայի հարյուրապետ

Մուրախաս էֆենտի ըսէ ժողովուրդին, որ զգացումով տարուելով՝ հանդիպած զանգերը ձեռք առնելով չհամբուրեն, որովհետև չեն գիտեր, թե քիչ մը հեռուն իրենց ի՞նչ բախտ կը սպասե:

Թիւրք գիւղացիներու կողմէ ջարդուած հայերու ոսկորներն են ասոնք, որ 1915-ի օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն մեջ Պոլսէն եկած բարձր հրամանին վրա կոտորուեցան, (ձեռքով ցույց տալով) սա դեմի խոր ձորերին մեջ: Եվ թեպետ ներքին գործոց նախարարին հրամանով՝ այս կոտորածներուն հետքը կորսնցնելու համար, մեծ փոսեր փորուելով ի մի հավաքուեցան և թաղուեցան անցեալ տարի հոկտեմբերին, սակայն ձմռան հեղեղները, այդ փոսերը բանալով, ոսկորներն ու մասամբ ալ կազմալուծուած դիակները դուրս բերած են...

Այս ճամբան կը տեսնե՞ս, բացի տարագրութեան սկիզբը, 1915-ի յուլիսին՝ չորումցիներու առաջին կարավանէն, դեռ այս ճամբէն ողջ անցնող չեղավ...

1. Ն. տ., էջ 223:
2. Ն. տ., էջ 248:
3. Ն. տ., էջ 260:

Արդեն այժմ՝ գաղտիք մը չէ, մոտ 86 հազար հայեր ջարդուեցան, մենք ալ զարմացանք, որովհետև կառավարութիւնը ինքն ալ չէր գիտեր, որ Էնկիւրիի կուսակալութեան մեջ այսքան հոծ հայեր կը բնակին: Թեպետ այս թուին մեջ քանի մը հազար ալ շրջակա կուսակալութիւններէն գալով մեր ճամբաներէն անցնող հայեր կան, որոնք մասնավորաբար մեր ճամբաներէն անցուցին, որպեսզի անոնք ալ մաքրենք...

Թե՛ Պոլսոյ իթթիհադի կենտրոնական քոմիտէն և թե՛ ներքին գործոց նախարարութենէն հրամաններ եկան հայերը աքսորելու, կամ ավելի ճիշտ, բացատրութեամբ քաղաքներէն դուրս հանելով կոտորելու...

Երբ որ Եոզղատի քաղաքին բոլոր այրերը՝ ավելի քան 8-9 000 հոգի, իրենց առաջնորդով և քահանաներով ու աղաներով այս վայրերուն մոտակա ձորերուն մեջ ջարդեցինք, այս անգամ կարգը եկավ կիներուն... Էրիկ մարդոց կոտորուելէն երկու ամիս վերջ, քաղաքին մեջ կառավարիչ Քեմալ ըստ տեղական սովորութեան, մուենտիկ կանչել տուավ, թե, «Ձեր այրերը ողջամբ Հալեպ ժամանած ըլլալով և տեղվոյն կուսակալին խնդրագիր տուած ըլլալով, որ իրենց ընտանիքները ևս Հալեպ բերուին... Մութեսարիֆը երեք օր պայմանաժամ կու տա, որպեսզի ամեն ոք երկար ճամբորդութեան մը համար պետք ունեցած անհրաժեշտ պատրաստութիւնը տեսնելով մեկնելու նշանին սպասե: Ով որ ինչ ուզե կրնա հետն առնել և վարձքը ով որ կրնա վճարել, ձիու կամ եզան կառք ու սայլ կրնա ունենալ, այս մասին կառավարութիւնը ամեն միջոց ձեռք առած է արդեն:

Կառավարութեան այս հրամանին դեմ անասստողները և պահվողներն ամենախիստ պատժի պիտի ենթարկուին: Ի գիտութիւն հայ ընտանիքներու ահա կը հաղորդուի...»:

Կարավանները առաջնորդելու պաշտոնը միշտ ինծի յանձնուած ըլլալով՝ կիներու այս կարավանին ղեկավարութիւնը ևս ինծի յանձնուեցավ իբր այս վայրերուն ծանոթ ոստիկան զինուորներու հրամանատար մը: ...Երբ 6400է ավելի կիներու, աղջիկներու և երեխաներու այս մեծ կարավանը հետս առած և շրջաններէ բերուած 80է ավելի ոստիկան զինուորներով հասանք քաղաքէն 4-5 ժամ հեռու գտնուող այս դիմացի ձորին մեջ գտնուող երեք ջրաղացները... Հրաման տուի ոստիկան զինուորներու ենթասպաներուն, որպեսզի իջևանին այս տեղը: Միաժամանակ հրամայեցի 830է ավելի կառապաններուն և սայլապաններուն, որպեսզի հոս ձգելով ընտանիքները՝ իրենք դառնան իրենց գիւղերը:

Ապա օրեր առաջ պատրաստուած կառավարական ծրագրին յամաձայն, քաղաքէն 25-30 թուրք դայակուհիներ բերել տալով՝ սկսանք մանրակրկիտ խիստ քննութիւն: Իւրաքանչիւր կին, աղջիկ ու տղա մի առ մի խուզարկուեցան մինչև իրենց ներքնազգեստները, և հավաքեցինք ասոնց բոլոր ոսկեղէն, արծաթեղէն, ադամանդեղէն զարդերն ու արժեքավոր իրեղենները, ինչպես նաև իրենց զգեստներուն երիզներուն մեջ ճարտարորեն կարած բոլոր հնչուն մետաղե ոսկիները: Ասոնք, ամենք ալ խաբուելով, թե Հալեպ իրենց այրերուն քով կերթան, հետերնին առած էին իրենց բոլոր արժեքավոր և դիւրատար ունեցածը, ինչպես նաև իրենց թանկագին գորգերն ու կարպետները: Արդեն կառավարութիւնը ևս այս նպատակով, «Հալեպ ձեր էրիկներուն պիտի երթաք» սուտը շինեց, որ ունեցածնին հետերնին առնին...

Այնպես որ, կարճ ժամանակ վերջ զատ-զատ դեզեր կազմեցան հարիւրավոր և հազարավոր կանացի ոսկի շղթաներով՝ ոսկի ժամացոյցներով, ադամանդեայ, և այլ ազնիվ ու թանկագին քարերով ընդելուզուած քառամանեակներով, ապարանջաններով, օղերով, մատանիներով: Հազարավոր հնչուն ոսկիներ գտանք կանանց զգեստներու մեջ կարուած: Այս պատճառով ևս խուզարկութիւնը սկսավ այնքան երկարել ու դժուարանալ, որ հարկ եղավ նոր խուզարկու կիներ բերել տալ քաղաքէն և կրկնակի խուզարկութիւններով միշտ նոր զարդեղեններ և հնչուն ոսկիներ գտան պահուած կամ կարուած ամենաթաքուն տեղերուն և զգեստի ու ճերմակեղեններու ծալքերուն մեջ:

Եթե ամենքը ինծի մնար, ինչ աղեկ, բայց կաշիէ պայուսակները լցնելով ու բերանները ևս կնքելով՝ քաղաք դրկեցի՝ մութեսարիֆին, բայց այս առթիվ շատ գողութիւններ եղան: Կրնամ ըսել կառավարութեան ձեռքը հազիվ ասոնց կեսը հասավ...

Այսպես, չորս օր, չորս գիշեր մանրազնին խուզարկութիւնը շարունակելով, ամենքը իրենց բոլոր ունեցածէն մերկացնելէ և միայն իրենց վրա հագած զգեստը ձգելէ վերջ, ամեն մեկուն հետիոտն ետ դարձուցինք Եոզղատ քաղաքին ետևը գտնուող ընդարձակ սարավանդը, ըսելով, որ կառավարութենէն ներուած ըլլալով նոր հրաման եկած է զիրենք կրկին քաղաք դարձնելու համար, որով ուրախութեամբ և առանց դժկամութեան հետևեցան մեր հրամանին...

Երբ չորս օր ու գիշեր խուզարկութեամբ զբաղուած էինք, Եոզղատի տեղական կառավարութիւնը, ոստիկան զինուորներ դրկելով, շրջակա

բոլոր թուրք գիւղերը, յանուն սրբազան ճիհատի հրավիրած էր իսլամ ժողովուրդը՝ մասնակցելու կրոնական այս սուրբ պարտականութեան, որոշելով օրը և տեղը:

Ուստի երբ որ որոշեալ տեղը հասանք, մեզմէ առաջ և որոշեալ օրը կանխելով՝ բոլոր շրջակայքէն փութացած էին գալ, հավաքուել այս տեղը:

...Ոստիկան զինուորներու միջոցով յայտարարել տուի ներկա իսլամ ժողովրդեան, թե իրենց կնութեան առնելու պայմանով ով որ գեղեցիկ կույս աղջիկներէն կամ հարսներէն զատել կուզե, կրնա անմիջապես ընտրել, սպանդի միջոցով ընտրութիւն ընելը արգիլեալ է:

Ասոր վրա հազիվ 220-250 աղջիկներ ու հարսներ զատուեցան ներկա ժողովուրդէն և ոստիկան զինուորներու կողմէն...

Պատերազմի շրջան է հիմա, գնդակը սուղ է. այլ իսլամ ժողովուրդը այս սպանդին վազած ատեն իր գիւղերէն ձեռքը ինչ որ ինկած էր, կացին, սակը, մանգաղ, մահակ, բրիչ, բահ, ասոնցմով հանդիպածին զարկավ գետին փռեց, վերջապես ինչ որ ուզեց՝ ըրավ...

...Ես նուիրական և սրբազան պարտականութիւնս կատարեցի Աստծո, Մարգարեիս և Խալիֆայիս առջև... ...շեյխ ուլիսլամը հայերը իբր մեր պետութեան դավաճանող բնաջինջ ընելու «Ֆեթվան», ասոր գործադրութիւնը հրամայած էր... իսկ ես ալ իբր զինուորական պաշտոնյա թագավորիս հրամանը գործադրեցի... ամեն անգամ ըրածիս նման, այս պատմած կոտորածէս վերջ ալ, «փոսքս» գետին փռելով, նամազս ըրի և փառք տուի Ալլահին ու Մարգարեին, որ արժանի ըրավ զիս իմ ծերութեան այս օրերուն սուրբ ճիհատին անձամբ մասնակցութեան...

Գերմանիան մեզ հասկըցուց, թե ցորչափ օսմանեան կայսրութեան սահմաններուն մեջ հպատակ ուրիշ ցեղերը մեզի բաղդատմամբ 20 տոկոսի համեմատութեան չհասցնենք, ազատելիք չունինք մեր գլխուն եկած շարունակական փորձանքներէն:

Անատոլուի մեջ կոտորուած և տեղահան եղած հարիւր հազարավոր հայերու տուներուն խոհանոցի պղնձեղենները ամիսներով Եոզղատեն Էնկիւրի երկաթուղի դրուելու համար հարիւրավոր կառքերով և սայլերով ես էի փոխադրողը: Այս անհատնում պղնձեղենները իսկույն Գերմանիա փոխադրուեցան զենք շինուելու համար: Ասքե զատ, լքուած ու կողոպտուած հարիւրավոր եկեղեցիներու ու վանքերու բոլոր մեծ ու փոքր զանգակները Գերմանիա ղրկեցինք Քոռուփի գործարանին մեջ թնդանոթ ձուլելու համար...

...Փրկութիւն չկա ձեզ ալ, ամենքդ ալ պիտի մեռնիք, միայն թե ես կառավարութենէն հրահանգ ունիմ, կարելին ընելով, ձեր և ձեր ետևէն եկող Գասթեմոնուիի հայերու կարավանները ողջ անցնելու այս տեղերէն, ուրկէ ոչ մի մեծ կարավան ողջ անցած է դեռ... յիմար չըլլաս կարծելու, թե Տեր Զորի և շրջակա անապատներուն մեջ տարագրուած հայերը ողջ պիտի ձգուին, անոնք ալ վերջ ի վերջո պիտի բնաջնջուին...[1]

Թուրք ժանդարմի պատմածը

10000է ավելին շրջանակներէն հավաքուած թուրք խուժան մը «Ալլահ, Ալլահ»... պոռչտունքներով կը յարձակի եռզղատցի 6 400է ավելի անտեր ու անպաշտպան կիներուն, աղջիկներուն վերայ. գոռում գոչումը, աղեկտուր ճիչերը, և կացիններով, ուրագներով, սակրներով և այլ այս կարգի զենքերով խուժանը այնքան կատաղորեն կիյնա իր անմեղ զոհերուն վրայ, որ խժալար այս աղմուկը մինչև 1,5 ժամ հեռու շրջակա գիւղերը կը լսուին...

Երբ սպանդը կը լրանա, ապա կը սկսին բոլորովին մերկացնել հազարավոր սպաննուած և յոշոտուած այս զոհերը՝ զգեստները հետերնին տանելու նպատակով: Այս դիակապտին կը մասնակցին հետզհետե ոճրին վայրը շրջակա գիւղերէն փութացող թուրք կիներ, և շատերը իրենց ծծկեր կամ մեկ քանի տարու երեխաները գրկերը կու գան...[2]

Շուքրի

Իթթիհադականներին այս ըրածը «հայերի տեղահանութիւնը» առաջինէն ավելի խոհեմ ճամբա էր, որովհետև եթե հայերը ջարդել ուզեինք սուլթան Համիտի օրով եղածին պես, այն ատեն մենք ալ շատ զոհեր պիտի ունենայինք: Ինչպես հայերը Ատանային մեջ 1909-ին ըրին, փողոցներուն մեջ շինուած պատնեշներու ետև և քարաշեն տուներուն մեջ ամրանալով, դիւրավ չպիտի ուզեին անձնատուր ըլլալ, այլ զենքով պիտի դիմադրեին: Տես, Շապին Գարահիսարի և Ուրֆայի մեջ հայերը՝ ամիսներով զբաղեցուցին կատավարութիւնը: Միթե այս ձևը ավելի գործնական չէ՞ր, ձեզ աքսոր պիտի տանինք ըսելով՝ նախ զինաթափ ըրինք և

1. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան,** Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեռլինէն դեպի Զոր, 1914-1920 թթ., հատոր Ա, Բեյրութ, 1977, էջ 369-385:

2. Ն. տ., էջ 285:

ապա ճամբայ հանելով, առանց որևէ փոքր մը իսկ ընդդիմութեան մաքրեցինք... իսկ եռոզատցի կիներուն գալով, եթե քաղաքին մեջ ասոնց գործը մաքրել ուզեինք, իրենց մոտը գտնուած ոսկեղէն, արծաթեղէն և գոհարեղէն իրենց բոլոր զարդերը կոյուղիներու մեջ պիտի նետեին կամ փճացնեին, որպեսզի մեր ձեռքը չիյնային...

Թեպետ մոռց ցայդ յիշել, որ «տեղահանութեան ժամանակ էլ» աղամանդեայ շատ զարդեղեններ մեր խուզարկումներու միջոցին կլլած էին: Սակայն թուրք գիւղացիները, մանավանդ կիները օրերով նեխած հազարավոր այս դիակներուն մեջ շրջելով փորոտիքները պատռեցին և բավական զարդեղեններ գտան...

(Ցոյց տալով կոտորված հայերի իրար վրա թափուած դիակները)... այս տեսած դիակները սպաննել տուած է Պողազլյանի կայմակամ Քեմալ, երեք գիշեր այս գիւղը գալով և իբր գործավար զինուոր հոս գտնուող բոլոր այրերը և կիները ընդամենը 28 հոգի սպաննել տուած է խուժանին և ձգած, մեկնած է...[1]

Թուրք հոջա

Ե՞րբ պիտի դառնան մեր դրացի հայերը աքսորէ, ինչո՞ւ այսքան ուշացան մեր դրացիները: Սուլթան Համիտն իսկ, երբ հայերը պատժեր, քանի մը ամիս վերջ «ափուշահանե» կը շնորհեր: Այս ճեռն թիւրքերը ինչո՞ւ հայերուն դեմ սկսուած այս հալածանքը դեռ չվերջացուցին, երկիրը ավերակ դարձավ...

Մեր վզին կապը գերմանացիին տուինք... Ա՜խ, ե՞րբ պիտի լսենք, Ալլա՜հ, որ Թալեաթն ու Էնվերը շանսատակ ըրեր են... Այս խեղճ ազգին (թուրքին) գլխուն փորձանք չմնաց, որ չբերեին... անիծեալ ըլլան...

Առաջ հին վարչակարգի ժամանակ մեկ սուլթան Համիտ կար, հիմա հարիւր հատ սուլթան Համիտ ունինք մեր գլխուն... Հայերը մեր երկրին աղն էին, անոնք գնացին:[2]

---

1. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան** Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, Պեռլինէն դեպի Զոր, 1914-1920 թթ., հատոր Ա, Բեյրութ, 1977, էջ 300-304:

2. Ն. տ., էջ 343-345:

Թուրք գյուղացի

Քաղաքներն ու գիտերը բնակիչներէն դատարկուեցան, և մնացած քանի մը էրիկ մարդիկն ալ ռազմաճակատ կը տանին, ասոնք ալ լմնցնելու համար... այո ձեզ լմնցուցինք, բայց մենք ալ լմնցանք:

Թուրք ծերունին հայերին հարվածող ոստիկաններին

Աստուծմէ չվախեցողներ, ասոնք արդեն լմնցած են, պատառ մը հա՞ց ալ չեք ձգէր, որ իրենց դրամով գնեն և ուտեն... այս մեր ըրածները մեզի չպիտի մնան:[1]

Հյուսնի՝ թուրք իբրիհաղական սպա

Դուք, հայերդ, շունէն ալ ցած արարածներ եք, դեռ երես ալ ունիք և գթութիւն կը սպասեք, ազգի և պետութեան թշնամի գարշելիներ... Եթե քաղաքին մեջ տեղ ալ ըլլա, դարձեալ չեմ թույլատրեր, որ քաղաքին մեջ գիշերեք... դե գնացեք Տեր Զորի անապատները և հայկական անկախ պետութիւն հոն հիմնեցէք:[2]

Թուրք պաշտոնապար

Պոլսէն խիստ հրաման կա՝ չօգնել հայ կարաւաններուն... ասոնք մեռնելու կը տարուին... ավելորդ է անոնց օգնութեան հասնիլ... որչափ շուտ մեռնին, այնքան շուտ կազատին: Մեռնելու կերթաք, ձեր գոյքերը հետ տանիք, ի՞նչ պիտի ընեք... եթե հոս չձգեք, քանի մը օր վերջ ուրիշ տեղ մը ձեռքերնուդ պիտի առնեն... ավելորդ տեղը ինչու յոգնութիւն յանձն կառնիք:[3]

Ադանայի ռազմական հիվանդանոցի թուրք հիվանդ զինվորը հայ բուժքույրին (1918 թ.)

Աստծո պատիժն է, որ ես այսքան հայ աղջիկներ սպաննեցի և հիմա ալ հայ աղջկան մը օգնութեան կարոտ եմ...

Քույրս, ես քո օգնութեանդ արժանի չեմ, ձգէ, որ շանսատակ ըլլամ: Եթե գիտենայիր, թե ի՞նչ խժդժութիւններ գործած եմ հայ կիներու հանդեպ, ինձմէ պիտի փախչեիր:[4]

1. Ն. տ.,էջ 340-341:
2. Ն. տ., էջ 410-411:
3. Ն. տ., էջ 122:
4. Ն. տ., էջ 200-201:

Կաղրի փաշա

Գիտեմ, որ երրորդ բանակի տեղակայված շրջաններում կառավարության հրամանով ամբողջ արու բնակչությունը սպանված է:[1]

Կոտորածներից հետո հայկական նահանգներում եղած մահմեդականի վկայությունը

Բիթլիս քաղաքում ոչ մի հայ չկա: Հայկական տուները այրուած ու քանդուած են: Ոչ մի եկեղեցի կանգուն է: Ս. Կարմրորակ վանքը զորանոցի է վերածուել...

Մուշ քաղաքը ավերակներու մի կոյտ է: Հազիվ 15 հայ տուներ կան, որ վերադարձել են: Հացթուխներ են և կոշկակարներ: Հայոց թաղը ամբողջութեամբ այրուած է: Եկեղեցիները քանդուած են: Առաքելոց վանքը կիսակործան դրութեան մեջ է: Ս. Կարապետը կիսաքանդ է: Չքանդուած մասը ծառայում է իբրև զորանոց: Սասունում հայի նշոյլ չկայ: Կան հատ ու կենտ իսլամացուածներ: Մ. Աղբերիկի վանքը դեռ կանգուն է, որտեղ կան երկու աբեղաներ... Քանիցս հռչակավոր բռնակալ Մուսա բեկը փորձել է վանքը քանդել... Վանքում կան մոտ 40 հայ որբեր և այրիներ միանգամայն անյոյս դրութեան մեջ:

Վարդենիս գիւղում է բնակվում քուրդ Մուսա բեկը: Նրա մոտ ծառայում են մի քանի հայ մշակներ: «Ծառայութեան» մեջ են նաև եօթը հայ օրիորդներ և կիներ... Նրանց անունները անգամ քրդացուած են: Այս գիւղում նոյնիսկ հայկական գերեզմաններն են քանդուած: Թե քիւրտերի և թե թիւրքերի մոտ կան բավական թիվով իսլամացուած հայ կանայք և երեխաներ: Տիգրանակերտ, Սղերդ և Հազո քաղաքներում հայութեան հետքն անգամ չի մնացել:

Վան քաղաքում կան 1 000-ի չափ հայ կանայք, ծերունիներ և որբեր...

Խլաթը և Բուլանըխը ավերակների են վերածուել... Քրթանցոց և մոտկանցոց մեջ կան բավական թուով հայեր՝ ողբերգական վիճակի մատնուած:[2]

Վարչապետ Սայիդ Հալիմը խորհրդարանում ներկա չեղող հայ երեսփոխանների մասին (15 նոյեմբերի, 1915 թ.)

ՆԳ նախարարութիւն պաշտոնագրով մը կը հաղորդե, որ անցեալ երեսփոխանական ժողովի նստաշրջանին ներկա չեղող երեսփոխաննե-

1. Material sur Beurfeiling Schieksais der Armenier mi jahre 1915-16, Basel, p. 18.
2. **Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան** Հայ գողգոթան, հատոր Բ, էջ 272:

րէն Էրզրումի երեսփոխան Վարդգես և Իաթանպուլի երեսփոխան Զոհրապ էֆենտիները Տիարպեքիրի պատերազմական ատեանեն պահանջուած էին և Տիարպեքիր ղրկելու ընթացքին Չերքեզ Ահմետի չեթեյախումբին մաս կազմողներուն կողմէ սպաննուած էին: Մարդասպանները Դամասկոսի պատերազմական ատեանին կողմէ մահապատժի ենթարկուած են...

Արդնի երեսփոխան Ստեփան (Չրաճեան) էֆենտիի այսօր ողջ չըլլալու մասին տեղվոյն իշխանութիւնը հաղորդած է մեզի...

Վանի երեսփոխան Վռամեան (Արշակ) էֆենտին Վանի ապստամբութեան ընթացքին Պիթլիսի շրջակայքը սպաննուած է:[1]

Դոկտ. Ռեշիդը զնդապետ դը Նոկալեսին

Ջարդերու հրամանները եկած էին ՆԳ նախարար Թալեաթէն. «Այրե, զարկ, մեռցուր... աքսորներուն և բնաջնջման բարոյական և նիւթական պատասխանատուն ես եմ»:[2]

Հալիլ՝ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար

Հայերը պետք է իրենց մեղադրեն սեփական դժբախտության համար: Եթե նրանք հնազանդ լինեին և իրենց մտավոր կարողություններով օգնեին Թուրքիային, ապա թուրքերը նրանց չէին կոտորի: Պատերազմի սկսվելուն զուգընթաց սկսվեց նաև կոտորածը: Երիտթուրքերը հայերին նայում էին որպես Թուրքական կայսրության արժեքավոր մաս: Փաստն այն է, որ թուրքերը հայերի կարիքն ունեին: Երկրի առևտուրը գտնվում էր հայերի ձեռքում և որպես ֆերմերներ, հայերը մեծ արժեք էին ներկայացնում: Խորհրդարանում մեծ թվով հայեր կային, կային նաև մի քանի սենատորներ ու նախարարներ: Համարյա բոլոր փոխնախարարները հայեր էին: Հեղափոխությունից հետո ամեն ինչ գնում էր իր հունով և, երիտթուրքերը հուսով էին, որ վերջապես գտել են հարցի լուծումը: Բալկանյան պատերազմը ստիպեց հայերին կրկին առաջ քաշել առանձնանալու գաղափարը:

Երբ սկսվեց պատերազմը, մենք ճշտորեն գիտեինք, թե հայերն ինչ են անելու: Մեծ թվով ռումբեր, հրացաններ, ռազմամթերք և փող էր բերվել

1. Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 388-389:

2. **Nogales Rafael de** View jahra unter dom Halbmond, s. 147 կամ Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 390:

երկիր: Ես այդ ժամանակ նախագահում էի խորհրդարանում և շատ էի սիրում հայերին: Ուստի կանչեցի նրանց ներկայացուցիչներին և հարցրեցի, թե ինչ են մտադիր անելու: Զրույցի վերջում ասացի նրանց, որ ես կհամակրեմ նրանց այնքան ժամանակ, քանի դեռ նրանք առաջ չքաշեն անջատողական գաղափար:

-Պարոններ՛ր, ես լիովին հասկացա ձեր մտադրությունը և, հուսով եմ, որ դուք էլ հասկացաք մերը: Ձեր գործն է պայմանավորվել Անտանտի հետ, բայց իմացեք, որ Օսմանյան կառավարությունը կդիմի ամենադաժան գործողությունների, եթե դուք գործեք թուրքերի դեմ: Ձեր պլանները կազմեք այնպես, որ կարողանաք հանդիպել Անտանտի պետություններին մաքուր ձեռքերով: Դուք կարող եք ազատ գործել, և ես ձեզ հաջողություն եմ ցանկանում, բայց իմացեք՝ մենք դեռ չենք պարտվել և, ձեր կողմից ամենաանշան վտանգավոր շարժումը դժբախտություն է բերելու բոլոր հայերի գլխին:

Չնայած այս զգուշացմանը, երբ ռուսները ներխուժեցին Փոքր Ասիա, հայերը ապստամբեցին: Թուրքական կառավարությունը միջոցներ ձեռք առավ մեկուսացնելու հայ առաջնորդներին: Հայերի արտաքսումը թուրքական կառավարության համար վիթխարի կորուստ է: Բայց ի՞նչ կարող ես անել: Մենք պատերազմի մեջ էինք և առաջին հերթին հարկավոր էր անվտանգ դարձնել մեր երկիրը:[1]

Զրույց Էրզրումի սրճարաններից մեկում հայի և թուրքի միջև

Հայ- Էրզրումի մասին ես տարբեր համարում ունեի, անցեալի մեջ փայլուն շրջանները բոլորած է...

Թուրք- Այո, հայերուն ժամանակը այդպես եղած է: Բայց ի՞նչ ընենք, եղբայր, Էրզրումը վերաշինելու համար հայե՞րը բերենք...Մել մըն ալ սա քոմիթաճի Անդրանիկ... մեկը կա եղեր ժամանակին, այդ ավազակը այս կողմերը թուրք չէ ձգած, ջարդեր է...

Հայ- Բայց կըսեք, թե հայ ալ չկա աս կողմերը:

Թուրք -Ոչ, ոչ, չկա: Սա դիմացը եկեղեցի մը ունեին, հիմա ախոռի և միզարանի վերածուած է... քանդեր ենք բոլորը, պտղատու ծառերն անգամ կտրեր վառեր ենք... որպեսզի հայու հետք չմնա...[2]

1. "Literary digest", 11 նոյեմբերի 1916 թ.:
2. **Հ. Սահակեան** Հայ դատը, էջ 90:

Իսմեթ Իսենյուն Պողոս Նուբարին (1923 թ., Լոզան)

Դուք հոս եկած եք Թուրքիայէն հայկական հողերը պահանջելու: Հողերը նուէր չեն տրուիր, այլ զոռով կառնուին: Պատմութեան անիվը այսօր ի նպաստ թուրքերուն կը դառնա: Ո՞վ գիտե, միգուցե օրին մեկը քաղաքական պայմանները ձեզի նպաստավոր ըլլան, և մենք կորսնցնենք այն հողերը, զոր դուք կը պահանջեք:[1]

Մեհմեդ Զեզին՝ երիտթուրք գործիչ, լրագրող, գերմանական թերթերից մեկում 1919 թ. մայիսին տպագրված հոդվածում, անդրադառնալով Հայկական հարցի վերաբերյալ Իսմայիլ Հազգի մի հոդվածին, գրում է

Մենք գիտենք, որ Իսմայիլ Հազգը բեյը միայն Թալեաթ փաշայի հետ չէ, որ յարաբերում է սերտորեն: Նա յարաբերում է նաև դոկտոր Նազըմի և Հալեպի նախկին կուսակալ Պետրիի հետ: Յայտնի է, որ հայկական ողբերգութիւնը կազմակերպողները և գործադրողները, ինչպես նաև իրենց անցանկալի նկատուած թուրքերին մեջտեղից վերացնողները, այս երեքն են: Պոլսոյ կառավարութիւնը չպիտի ուշանայ նրանց արժանի պատիժը տնօրինելու: Բերլին գտնուող իթթիհատականները վերջերս սկսել են իրենց ընկերավարական յայտարարել: Սապահետտինն է, որ հազիվ կարողացավ իթթիհատականների հալածանքներից ազատուել:[2]

Գիշերանոցի մեջ փաթաթված Մազհարը՝ Անկարայի վալին, գոչեց.

-Օ՜, ներեցե՛ք, ես ինչպե՞ս կարող եմ անմեղ մարդկանց կոտորելու հրաման արձակել. Էշրաֆը չի ընդունիր, ներեցեք:

Սալոնիկի Աքըֆը դուրս է քաշում գրպանից մի թուղթ և ցույց տալով գոչում.

-Այդ դեպքում կուսակալը ես եմ, ո՞ւր է Գալա գիւղի հոճա Գարա-Մահմետը:

-Էնկիւրիի 1200 և Աքանոս գիւղի 350 հայերը միասին,- գոչում է Աքըֆը:

Հազարապետ Հալը.

-Հագուստները հանեցեք անվնաս պահելու համար, մարմինները ծածկեցեք:[3]

1. Ն. տ., էջ 207:
2. **Ս. Թեհլիրեան** Վերյիշումներ, Կահիրե, 1956, էջ 253:
3. Ն. տ., էջ 317:

Ա. Նուրիի հեռագիրը (7 մարտի 1916 թ.)

Ստացուած տեղեկագիրներ՝ կը հասկացուի, որ մինչև հիմա Պապի և Մեսքենեի շուրջը 35 000, Հալեպի առաքման վայրը (Գատլըք) 10 000, Տիբսիի, Ապուհարրարի և Համանի շրջանակին մեջ 20 000, Ռաս ուլ Այնի մեջ 35 000, ընդամենը 95 000 հայեր այլևայլ պատճառներէ մեռած են:[1]

Թուրքական տեղեկագիրը Խարբերդի վիլայեթից տեղահանված հայերի թվի վերաբերյալ (նշվում է 74 206 թիվը)

Վիլայեթուն հայերուն թիվը 60 000 պետք է ընդունիլ: Թեև ըլլա նահանգին մեջ, ըլլա անոնց քշուած տեղերուն մեջ, ինչպես նաև դրացի նահանգներէն քշուած հայերը, որ այս նահանգներէ անցած են, կառավարութեան ուժերուն դիմադրած և ապստամբած ըլլալով՝ մեկ մասն ալ ընդհարումների միջոցին բնաջնջուած է, որով տարագիրներուն թիվը ավելի կը պակասի: Վիլայեթին մեջ տարագրութեան գործը վերջ գտած է: 52 000-ը արդեն ղրկուած է, 14 000 ալ ղրկուելու վիճակին մեջ են:[2]

Բուրսայի վալիի հեռագիրը

Տարագրուած հայերու թվի մասին մանրամասնություններ չունինք... Հայերու ընդհանուր գումարը՝ 66 482:

Թահսինի՝ Իզմիրի սանջակի մութեսարիֆ, հեռագիրը

Տարագրութիւնը որոշուած բոլոր հայերը աքսորուած են:[3]

Թալեաթ

Հրահանգ (20 փետրվարի 1916թ.)

Բանակի հրամանատարութեանց կողմէ ծանոթ անձնավորութեանց (հայերի) զինուորական տարիք ունեցողները զինուորական ծառայութեան մեջ գործածելու պետք ցոյց կը տրուի: Մտածելով, որ կարելի չպիտի ըլլա ատոնք պատերազմական գոտիները ղրկել և քաղաքին մեջ մնալնին ալ ներելի չէ, արտոնենք, որ իրենց ընտանիքները ընդհանուր առաքումներու հետ քշուելու պայմանով՝ ատոնք քաղաքէն դուրս ճամբա և

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 169:
2. **Հ. Ղազարեան** Ցեղասպան թուրքը, էջ 121:
3. Ն. տ., էջ 160:

կամ ուրիշ շինութեանց մեջ գործածուին: Այդ մասին պատերազմական նախարարութենէն բանակի հրամանատարութեանց մասնավոր հրահանգ ղրկուած է: Հետևաբար, բանակցելով՝ յիշյալ հրահանգին համաձայն գործեցեք:[1]

-Գերմանացի լրագրողին.

Հայերը Ռուսաստանում և Թուրքիայում քարոզում են քաղաքական գաղափարներ, որոնք կարող են իրագործվել միայն մի պայմանով՝ եթե կործանվի թուրքական կայսրությունը:

Պատերազմի սկզբում Փոքր Ասիայում տեղի ունեցավ համահայկական հանձնաժողով, որում որոշվեց, թե Կովկասի հայերը զենք կվերցնեն և հանդես կգան Ռուսաստանի օգտին, իսկ թուրքահայերը որոշ ժամանակ կգրավեն սպասողական կեցվածք: Այդ մասին իմանալով՝ հարցրեցի մի քանի հայերի և, նրանք չքողարկեցին իրենց դավաճանական պլանները՝ այն արդարացնելով լոկ Թուրքիայի հիմար քաղաքական կուրսով:

...Կայացված խուզարկությունները հայերի տներում հայտնաբերեցին զենքերի և ռումբերի պահեստներ: Այդ ժամանակ հայերի արտաքսումը Թուրքիայի արևելյան վիլայեթներից դարձավ ռազմական, ազգային և պատմական անհրաժեշտություն: Արևմտյան նահանգներից հայերի արտաքսման հարցը որոշվեց, երբ Դարդանելի վրա դաշնակիցների հարձակման հետևանքով ակնհայտ դարձավ կառավարության նստավայրը Կ. Պոլսից այլ վայր տեղափոխելու անհրաժեշտությունը: Հայ «բռնագաղթվածները» արևելյան նահանգներից Միջագետքի ճանապարհին հարձակման ենթարկվեցին քրդերի կողմից և նրանց մի մասին վերջինները կոտորեցին: Քրդերը դրա համար խիստ պատժվեցին: Ես ցավում եմ, որ բռնագաղթման գործը հանձնարարվել էր մի վարչության, որն իր բարձրության վրա չէր, որի հետևանքով կարող է տեղի ունեցած լինեն լուրջ միջադեպեր: (Ապա Թալեաթը, ձեռներն աչքերին տալով, կարծես թե ցանկանում էր քշել ահավոր հուշերը):[2]

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 162:
2. "Армянский вестник" , 1916, 23

Ա. Նուրիի ծածկագիրը (7 մարտի 1916 թ.)

Պատերազմական նախարարութեան հրամանով զինուորական կայաններու կողմէ հավաքուելով սնուցուած ծանոթ անձնավորութեանց (հայերի) մանուկները, պատրուակելով թե գաղթականներու պաշտոնատանց կողմէ պիտի սնուցին, համախումբ վիճակի մեջ, առանց կասկածի տեղի տալու, փճացնել ու տեղեկացնել:[1]

Ջեմալ փաշայի պատասխանը գերմանացի դիվանագէտին (29 մարտի 1916 թ.)

Հայերի վիճակը, որքան հնարաւոր է, կաշխատեմ թեթևացնել, սակայն Կ. Պոլսից դրամական օգնության փոխանցումներին ամեն մի գերմանացու և ամերիկացու մասնակցությունը հայերին օգնելու գործում խանգարում է, քանի որ այն կուժեղացնի հայերի դիմադրությունը թուրք կառավարությանը: Այդ դիմադրությունը կարող է թուլանալ, եթե հայերն այլևս հույս չդնեն արտաքին օգնության վրա:

Խալիլ փաշայի ցուցմունքը՝ տրված Կ. Պոլսում անգլիացի սպային

Հակառակ կնքված համաձայնության, հայերն ըմբոստացան բանակի կռվի շրջաններում, վտանգեցին թիկունքի մեր մատակարարումները և նույնիսկ ցանկացան առաջին գծից էլ անցնել: Այդ պատճառով հրամայեցի, որ բնաջնջեն բանակի շրջանում եղած հայկական զինված չեթեներին, իսկ հայերին տեղահանեին հեռավոր շրջանները: Տեղահանության ընթացքում շատերը մեռան: Դրանց թիվը 300-ից շատ է, թե քիչ, ճշտել չկարողացա:[2]

Զիա Գեոքալպի ցուցմունքը դատարանում

Պետք չի զրպարտել մեր ժողովրդին: Թուրքիայում տեղի է ունեցել ոչ թե հայերի կոտորած, այլ թուրք-հայկական բախում: Մեզ հարվածեցին թիկունքից, և մենք էլ պատասխանեցինք նույն ձևով:[3]

---

1. **Անտոնեան** Մեծ ոճիրը, էջ 196-197:

2. **Գ. Լազեան** Հայաստան և Հայ դատը հայ և ռուս հարաբերութիւններու լոյսի տակ, Երևան, 1991, էջ 249:

3. **B. Simsir** Malta Sürgünleri, Ankara, 1985, s. 83.

Հյուսամեդդին Էրթուրք՝ հայտնի կազմակերպության ներկայացուցիչ

Երբ ծագեց առաջին աշխարհամարտը, դաշնակների ու հնչակների կամավորական ջոկատները, որոնք ռուսական բանակի ավանգարդում էին, Էրզրում և Վան քաղաքներում կազմակերպեցին թուրքերի կոտորած: Ի պատասխան դրան, Միություն և առաջադիմություն կուսակցությունը ձևավորեց մարտական ջոկատներ, որպեսզի ընդդիմանար հակառակորդին: Եթե խոսքը գնում է հանցագործության մասին, ապա պատասխանատվությունը դրա համար պետք է կրեն երկու կողմերը:[1]

Պաշտոնական կարծիք

Հայերը դրան արժանի էին: Հարյուրամյակներ շարունակ նրանք օսմանյան տան ծածկույթի տակ օգտվել են այնպիսի ազատությունից հավատի ու մշակութային գործունեության ասպարեզում, ինչը գոյություն չի ունեցել արևմտյան ոչ մի երկրում: Նույնիսկ պատերազմների ժամանակ նրանց հանգիստը չի խանգարվել, քանի որ նրանք բանակում չեն ծառայել: Զբաղվել են առևտրով և մեծ եկամուտներ են վաստակել: Իսկ թուրքերի զավակները զոհվել են ռազմաճակատում, որպեսզի հայերը լավ ապրեն:[2]

Ֆալիհ Ռիֆկի Աբայ

Հայերի դեպորտացիայի ժամանակ Անատոլիայի քաղաքների և ավանների շատ թաղամասեր հրո ճարակ դարձան... Հայերի ու հույների հետ միասին աշխույժ կյանքն ու բարեկեցությունը երկար ժամանակ լքեցին Անատոլիային:[3]

Որբանոցների թուրքական հանձնաժողովի անդամի հայտարարությունը (5 նոյեմբերի 1916 թ.)

Որբերը պետք է փոխադրվեն Կոնիայի նոր մեծ ազգային (թուրքական) որբանոց: Բնականաբար այնտեղ ընդունելու են թուրքական անուններ և կրթվելու են իբրև թուրք:[4]

1. **Hüsamettin Ertürk** Iki Devrin Ped Re Arkasi, Istanbul, 1964, s. 306.

2. **Em. Tümg** Ihsan Sakarya, Belgelerie Ermeni Sorunu, T. C. genelkurmay Yayini, Ankara, 1984, s. 163.

3. **F. R. Atay** Gankaya-Atatürk'ün Dogumundan Ölümüne Kadar, Istanbul, 1980, s. 450.

4. Material sur Beurfeiling des Schieksaisder Armenier im jahre 1915-16, Basel, Heft 1-2 ff, p. 298.

Իսմայիլ Հագգին «Bejanul Hakk» թերթում գրեց

Հալածանքները, որ ուղղված են խաղաղ բնակչության դեմ, բարբարոսական են ու անխիղճ... Օսմանյան կայսրությունում բնակվող հույների ու հատկապես հայերի նկատմամբ ամենասարսափելի ոճրագործություններ են կատարվում: Մարդկային լեզուն ու գրիչը ի վիճակի չեն արտահայտելու փաստերի անգամ հարյուրերորդ մասը: Կեղծ հայրենասերներն ու կարճատես քաղաքագետները ջանում են քողարկել Թուրքիայում իշխող հարաբերությունները: Մինչդեռ մենք, որպես իսկական հայրենասերներ, այսօր գոռում ենք մարդկությանն ու քաղաքակիրթ Եվրոպային, որ հայերի ու հույների հալածանքները շատ ավելի սոսկալի չափեր են ընդունել, քան երևում է մամուլի հաղորդումներից: Հայերին ու հույներին անողոքաբար հալածում են: Նրանց կյանքը, ունեցվածքը և պատիվը մշտապես վտանգի տակ են: Օրեցօր հեռավոր շրջաններում հարյուրավոր հայեր են սպանվում:[1]

Շերիֆ փաշայի հոդվածը «Ժուռնալ դը Ժնևի» 1915 թ. սեպտեմբերի 18-ի համարում

Եթե կա մի ցեղ, որն իր հավատարմությամբ, ծառայություններով, իր պետական գործիչներով ու պաշտոնյաներով նվիրված է եղել երկրին, խելքով, որ նրանք դրսևորել են բոլոր բնագավառներում... և մոտ է կանգնած մեզ՝ թուրքերիս, ապա դա հայերն են: ...Եթե հիմա պատկերացնես, որ մի այդպիսի բարձրատաղանդ ժողովուրդ, որը կարող էր դառնալ Օսմանյան կայսրության նորոգման գործընթացում ամենաբարերար ֆերմենտը, կանգնած է պատմությունից վերանալու, ոչ միայն ճնշվելու, այլև ոչնչացվելու կետում, ապա անգամ ամենաանզգա մարդու սրտից արյուն կկաթի: Ես կուզենայի սրանով այդ զոհաբերված և մեռնող ազգի անունից վրդովմունք արտահայտել նրա դահիճների հանդեպ և իմ անսահման կարեկցանքը՝ նրանց զոհերին... Որքան եմ զգուշացրել նրանց Միություն և առաջադիմություն կոմիտեից, որի սև հոգին ճանաչում եմ: Գոնե Աղանայի ջարդերը, որոնք կազմակերպված էին կոմիտեի հրամանով, պետք է դաշնակցականներին իրականության հողին վերադարձնեին:

1. J. Lepsius, Der Turkenherrsehaff, Potsdam, 1930, s. 239.

Մեծ վեզիրի 1917 թ. հունվարի 20-ի հայտարարությունն ավստրո-հունգարական դիվանագետին

Թուրքիան մի անգամ... ստիպված կլինի ամբողջ աշխարհի առաջ պատասխանելու հայերի նկատմամբ իր վարվելակերպի պատճառով թշնամիների անընդհատ կշտամբանքներին... պետք է անընդհատ շեշտել, որ այն միջոցառումների պատճառը, որոնց դիմելու համար Թուրքիան ոչ միայն իրավունք ուներ, այլև հանգամանքների բերումով ստիպված էր, ռուսների, ինչպես նաև անգլիացիների և ֆրանսիացիների մեքենայություններն էին, այնպես որ ամբողջ պատահածի մեղքը սրանց վրա է ընկնում...[1]

Էնվերը Լեպսիուսին

Իմ վրա եմ վերցնում պատասխանատվությունը այն բանի համար, ինչ տեղի է ունեցել երկրում:[2]

Թուրքիայի գյուղատնտեսության նախարարության հրամանը

Հայերին, որ դավանանքի էլ լինեն, այնպես տեղաբաշխել, որ ոչ մի տեղ ազգաբնակչության 5 տոկոսից ավել չկազմեն:[3]

Ադրիանապոլսի իշխանությունների հայտարարությունը

Կատարված դեպքերի համար պատասխանատվություն չենք կրում, որովհետև գործում ենք Կ. Պոլսից եկած հրամանով:[4]

Խալիլ բեյ

Այն եղանակը, որով գործել է կառավարությունը, սխալ է:[5]

Ջավիդ բեյ՝ նախարար

Հայերի հալածանքը... նախկին կաբինետի միածայն վրիպումն էր... քաղաքական տեսակետից մեծ սխալ էր ամբողջ ազգեր հալածելն ու բնաջնջել ցանկանալը:[6]

1. Wien HHSTA PA XII 221 Kostantinopel, 20 Jauner, 1916, N 6/P. A.
2. J. Lepsius, Der Todesgangf, Potsdam, 1930, s. XIII
3. Wien HHSTA PA XII 221 Kostantinopel, 13 August, 1915, N 66/P. B
4. Wien HHSTA PA XII 463 Adrianopel, 29 Oktober, 1915, Z 95/P
5. Wien HHSTA PA XII 463Adrianopel, 10 Marz, 1916, N 21/P. B
6. Wien HHSTA PA XII 221 Kostantinopel, 24 Marz, 1917, N 25/P. B

Էնվերը Մետեռնիխի մասին

Մետեռնիխը հուսահատության է հասցնում կառավարությանը հայերի մասին իր պատկերացումներով. նա իրեն ամբողջովին նվիրել է հայկական գործին: (Էնվերի պահանջով Մետեռնիխը հետ կանչվեց դեսպանի պաշտոնից):[1]

Սայիդ Հալիմ

Թուրքահայաստանի տեղահանումը ռազմական տեսանկյունից լիովին հիմնավորված է եղել, միայն խայտառակություն է, որ դա առիթ է ծառայել գազանությունների համար... չեմ հասկանում Հայաստանի սահմաններն այդքան նեղ գծելու կառավարության ցանկությունը: Ընդհակառակն, այն պետք է բավական մեծ լիներ թուրքահայերին ձգելու համար, որպեսզի նրանք հնարավորին չափ մեծ թվով դեպի այնտեղ ձգտեն և ազատեն կայսրությունը իրենց ներկայությունից:[2]

Թաներ Ակչամ՝ թուրք պատմաբան

Արևելյան Անատոլիայի վիլայեթներում հարկեր հավաքելու և դասալիքներ հետապնդելու պատրվակով հարձակումներ էին տեղի ունենում գյուղերի վրա, կատարվում թալան և տեղական բնույթի սպանություններ: Այս գործողություններում գլխավոր դերը հատկացվում էր քրդերից կազմված համիդիե գնդերին և Թեշքիլաթ-ը մախսուսե կազմակերպությանը, որի շտաբն արդեն գտնվում էր Էրզրումում: Ոչ հեռավոր ապագայում դրանք իրականացնելու էին հայերի զանգվածային կոտորածներ: Թեշքիլաթ-ը մախսուսե կազմակերպության մեջ հիմնականում մտնում էին բանտերից ազատվածները, ինչպես նաև մահմեդական փախստականները Բալկաններից ու Կովկասից...

Պատերազմի առաջին իսկ ամիսներին այդ կազմակերպության ստորաբաժանումների կողմից իրականացրած թալանն ու սպանություններն այնպիսի ծավալների հասան, որ մի շարք վիլայեթների նահանգապետերը սկսեցին գանգատվել և պահանջեցին կառավարությունից վերջ դնել այդ խայտառակություններին...

1915 թ. փետրվարի հրամանով բոլոր հայ զինվորականները զինաթափվեցին և նրանցից կազմվեցին բանվորական գումարտակներ: Օգ-

1. Wien HHSTA PA III 172 Berlin, 18 August, 1916, N 102/P. B
2. Wien HHSTA PA X157 Jenikoj, 20 August, 1918, N 72/P. C.

տագործելով ճանապարհաշինության և բեռների փոխադրության մեջ՝ այս գումարտակները կամ զոհվեցին քաղցից ու ցրտից, կամ ֆիզիկապես ոչնչացվեցին: ...Շատ վիլայեթներում ձերբակալությունները սկսվեցի ապրիլի 19-ին և շարունակվեցին մինչև մայիսի 19-ը: Մի շարք տեղերում ձերբակալվածներին հրապարակային մահապատժի ենթարկեցին մնացածներին ահաբեկելու համար: Այս ամենը մեկ նպատակ ուներ՝ մինիմումի հասցնել հայ բնակչության դիմադրությունը բռնագաղթին: Նույն այդ ժամանակ բոլոր հայերին արձակեցին պետական ծառայությունից, արգելեցին նրանց տեղափոխությունները երկրի ներսում:

Հայ ազգաբնակչության զինաթափման հարցը դրվել էր դեռևս մինչև պատերազմի սկսվելը... զենք փնտրելու, հարկեր հավաքելու և դասալիքներ հատնաբերելու պատրվակով իրականացվեցին նախադեպը չունեցող թալան ու սպանություններ: ...Ոչնչացման էին ենթակա նաև ոչ հայ այն պաշտոնակատարները, որոնք տեղերում չէին ենթարկվի բռնագաղթի որոշմանը: Բռնագաղթի մասին պաշտոնական որոշումն ընդունվեց 1915 թ. մայիսի 27-ին... Սակայն հայերի աքսորը սկսվեց դեռ մարտին: Օրինակ, սկսած մարտի 15-ից Մարաշի և Ադանայի վիլայեթների հայ բնակչությունը զանազան պատրվակներով բռնագաղթվեց մասամբ Կոնիա, մասամբ էլ Դեր Զորի անապատը Իրաքում:

Բռնագաղթի և կոտորածների ձևերն ու եղանակները տարբեր շրջաններում տարբեր էին: Մի շարք տեղերում բնակչությանը նախազգուշացնում էին երկու ժամ առաջ, մինչդեռ ուրիշ տեղերում տալիս էին հնգօրյա ժամկետ: Սակայն, որպես կանոն, այդ ժամկետները ձևական էին: Որոշ տեղերում հայերին թույլ էին տալիս իրենց հետ վերցնել իրեր, սակայն եղան շրջաններ, որտեղ արգելվում էր նրանց ունեցվածքի առուծախը, և նույնիսկ եղան մահմեդականներին մահապատժի ենթարկելու դեպքեր, ովքեր համարձակվել էին հայերից գնելու անշարժ սեփականություն... Նրանք, ովքեր իրենց հետ վերցրել էին թանկագին առարկաներ, դրանով միայն արագացրին սեփական մահը...

Որպես կանոն տղամարդիկ ոչնչացվեցին մինչև բռնագաղթի սկսվելը: Իսկ այնտեղ, որտեղ «զտումը» նախապես չէր կատարվել, առաջին իսկ կանգառին տղամարդկանց առանձնացնում էին կանանցից և երեխաներից ու սպանում՝ գործադրելով ամենատարբեր եղանակներ: Բնաջնջմանը... մասնակցել են նաև զինվորական ստորաբաժանումներ (հատկապես ժանդարմները) և քաղաքացիական բնակչությունը:

Մայիս-հունիս ամիսներին, ավարտելով բռնագաղթը արևելյան վիլայեթներից, սկսվեց հայերի աքսորը Արևմտյան Անատոլիայից և Թրակիայից... Առաջին նշանակավայրը Հալեպ քաղաքն էր Սիրիայում: Այստեղ կենդանի հասածները կենտրոնացվում էին համակենտրոնացման ճամբարներում: Մահվան այդ ճամբարներից կենդանի դուրս գալը հրաշք էր համարվում: Այստեղից նրանց ուղարկում էին երկու ուղղությամբ՝ հարավային Սիրիա, կամ արևելյան Միջագետք, այսինքն՝ Արաբական անապատ... Սա հավասարազոր էր մահվան: Անապատում ստեղծված համակենտրոնացման ճամբարները ավելի շուտ պետք է դառնային գերեզմանատներ:

...Այնպիսի կարևոր որոշում, ինչպիսին է մի ամբողջ ժողովրդի գաղթը մի վայրից մյուսը, ընդունվել է բանավոր և գործադրվել է շատ ավելի վաղ, քան կկազմվեր գրավոր փաստաթուղթ...

Դրա հետ միասին, նույնիսկ բռնագաղթի վերաբերյալ որոշում ընդունելուց հետո էլ թուրքական իշխանությունները իրենց դեսպաններին տված հրահանգներում շարունակում էին համառորեն պնդել, որ «դեպորտացիայի մասին լուրերը լրիվ զրպարտություն են»:

Հայերի դեպորտացիայի ընթացքում տեղ գտած չարաշահումների և ապօրինությունների փաստերն ուսումնասիրելու համար ռազմական նախարարությանը կից ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի գործունեությունը շարունակվեց մինչև 1918 թ. վերջը: Մեղավոր ճանաչված պաշտոնատար անձանց գործերը հանձնվեց դատարան: Մեղադրյալների ընդհանուր թիվը կազմեց 1 397 մարդ, որոնցից շատերը կամ դատվեցին բանտարկության, կամ մահապատժի ենթարկվեցին:

...Հազիվ թե հրեաների զանգվածային ոչնչացումը գերմանացիներին տնտեսական ու քաղաքական որևէ օգուտ բերեց: Հայերի գենոցիդի դեպքում գործը բոլորովին այլ է: Այս ակցիան թուրքերին խոստանում էր որոշակի օգուտներ: Դրա արդյունքով նրանք ստացան կարևոր առավելություններ: Այլ կերպ ասած, հայերի ցեղասպանությունն իրականացվեց ոչ թե հանուն վերացական գաղափարախոսության, այլ բավականին շոշափելի օգուտների: (Սակայն) այս ակցիան տնտեսական առումով Թուրքիային 150-200 տարով հետ շպրտեց: Դրա պատճառած տնտեսական ավերածությունը կատաստրոֆիկ էր:[1]

1. Т. Акчам, Турецкое национальное "Я"..., Москва, 1995, стр. 102, 103

Ահմեդ Աղան՝ պանթուրքիստ

Այս գործում թուրքերը մի մեղադրանք չէ, որ շահել են, քանի որ նրանցից առաջ գերմանացիները նման գործեր կատարեցին իրենց հպատակ լեհերի նկատմամբ: Գերմանացիները պարտադրեցին թուրքերին գործադրելու հայաջնջումը, ասելով, որ եթե մենք չգործադրենք հայասպանությունը, Գերմանիան սուլթանի հետ դաշնակցություն չի կնքի:[1]

Յագղի էֆենդու՝ օսմանյան բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի հիմնապետ, հուշագրություններից

...Երևում է, որ Վանում վտանգը մեծ չէ, դրա համար էլ (Տիլսիզիում) մեզ հանգիստ են տալիս... Տեղի կառավարությունը, տեսնելով զինվորների գալը, սկսեց իր ուժերն ու կարողությունը ցուցադրել:

Քաղաքում հարյուրից ավելի հայեր էին բնակվելիս եղել: Երեկ երեկոյան նրանցից 70-ին «մաքրել են»: Առավոտյան դեմ այդ գործը դեռ շարունակվում էր: Բոլոր հայերը տրորվեցին (ոչնչացվեցին): Զինվորներից մեկը, որ քաղաք էր գնացել, վերադարձին պատմում էր, թե հայերի դիակներն ընկած էին խառն ի խուռն, որը՝ երեսն ի վեր, որն էլ՝ ամբողջ մարմնով փռված՝ հոգեվարքի մեջ էր:

Մի ժանդարմ ինձ ասաց, որ փոքր երեխաներին մահմեդականացնում են, երիտասարդ աղջիկներին իրենց են վերցնում, իսկ տղամարդկանց ու ծերերին կոտորում են: Սղերդում կոտորել են 2 000 հայ: Սղերդի ժանդարմները անցյալ օրը վերադարձել էին: Ասել է, թե եկել էին մաքրազարդելու: Դիարբեքիրում էլ են կոտորում: Աստված իմ, արժանի արա վայելելու մեր հաղթանակի հրճվանքը:

Այսօր ճանապարհին հանդիպեցինք երկու ժանդարմների, որոնք տանում էին 40-50 հայ կանանց, տղամարդկանց և երեխաների: Ոտաբոբիկ էին ու լալիս էին: Հաց էլ չունեին: Մարդ ցավում է՝ նման բաներ տեսնելով: Բայց ցավել պետք չէ: Անպիտաններն ամբողջությամբ միկրոբներ են: Թող հանուն հասարակական անվտանգության՝ սրանք էլ գնան... թող գնան տեսնելու իրենց ցանկացած անկախությունը: Ժանդարմներին հարցրինք՝ ո՞ւր եք տանում սրանց: Պատասխանեցին, թե մի քիչ տեղ էլ պիտի տանենք և ապա բոլորին սպանելու ենք: Հանդիպեցինք նաև մի հայ կնոջ դիակի, որին անփութությամբ գցել էին ճանապարհի մեջտեղը:

1. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 282:

...Բիթլիսից երեք ժամ հեռավորության վրա ենք: Ճանապարհին մինչև 40-50 հայերին հանդիպելը տեսանք բահ ու բրիչավորների: Նրանք փոսեր էին փորում, իսկ մյուսներին էլ մեկ-մեկ, երկու-երկու ուղարկում էին Մարգո փաշայի մոտ:

...Առավոտյան ճամփա ենք ընկնում: Մեկնելուց առաջ տեսա, որ տղաները ճանապարհին մի հայ երեխայի էին կենդանի թաղել: Նրա գլուխն ու ձեռները հողից դուրս էին թողել ու քթից ու բերանից արյուն էր հոսել:

Ճանապարհի երկարությամբ հոսող ջրի ափին հանդիպեցինք ևս չորս հայի դիակի: Նրանցի մեկի մարմինը, առնանդամն ու ամորձիքները չափազանց ուռել էին, մեկն էլ նստատեղում խոշոր պաշար ուներ (երևի վախից), մյուսներն էլ զանազան տեսակ այլանդակություններ ունեին: Բոլորի մարմիններն էլ ծածկված էին բազմաթիվ վերքերով: Մի այնպիսի զզվելի տեսարան էր, որ անհնար է նկարագրել... Առանց իմանալու, կուշտ-կուշտ խմեցինք դիակներով լցված ջրից: Չես հասկանում, թե ինչու դիակները թողնում են բաց և ապականում մթնոլորտը:

...Դարձյալ գարշահոտություն է զգացվում: Նայում ու տեսնում ենք մի ուրիշ դիակ՝ լրիվ սևացած. մարդկանց լրիվ մերկացնում են և ապա սպանում: Մի քիչ էլ ենք առաջանում և բանակատեղի մոտ եղած փոսում տեսնում ենք մի ուրիշ դիակ:

...Բիթլիսում եղող հայերին դեռ չեն կոտորել: Հավանաբար մեզ հենց դրա համար են բերել:

...Մի հայ երեխայի հարցրի. «Ինչո՞ւ (հայերը) տներից դուրս չեն գալիս»:

-Սպանում են,- պատասխանեց տղան:

-Դու սպանվել ուզո՞ւմ ես,- կրկին հարցրի երեխային:

-Դու այդ բանը ուզո՞ւմ ես, որ ես ուզեմ,- պատասխանեց գուլպա վաճառող երեխան:

(Հաջորդ օրը քաղաքից վերադառնալիս) իմացա, որ մեզ մոտ եղած հայ զինվորներին էլ պահանջել են: Վաշտում եղածներին տարա: Միհրանը համբուրեց ձեռքս և ասաց. «Էֆենդի, իրավունքդ ինձ հալալ արա»: Նրանց հանձնեցի ամրություններ կառուցող գումարտակին: Չափազանց ողբերգական տեսարան էր, խուզարկում էին նրանց գրպանները ու ծոցերը և ինչ գտնում՝ վերցնում էին: Մի քանի հեծյալ ժանդարմներ էլ եկել էին մեզ մոտ: Սրանք հայ զինվորներին իբր Բիթլիս պիտի տանեին, բայց Ազրայիլի նման սպասում են: Դեպի մահ են գնում հայ զինվորնե-

ը: Մեր թամբագործին ուղարկել էի քաղաք: Դժվար թե նա կարողացած լինի իր կյանքն ազատել: Հայերը, իրենց խանութները բաց թողած, փախչում են: Ժանդարմները բացում են հայերի տների դռները, ներսում եղածներին դուրս են անում և հավաքում մի հրապարակում: Հավաքվածները ժանդարմների հսկողության տակ են: Մարդիկ որևէ դիմադրություն ցույց չտվեցին: Վերջապես Բիթլիսն էլ մաքրվեց: Մեր կիսաբաժնում 200 հայ զինվոր կար, նրանք էլ մաքրվեցին: Առաջին օրը, երբ գնացի Բիթլիս, կառավարությունը հայտարարել էր, թե բոլորն իրենց խանութները բացեն: Այդ հայտարարությունից հետո հայերը խանութները բացեցին ու սկսեցի առևտուր անել: Հնազանդ ժողովուրդ, իմանալով հանդերձ, որ մեռնելու է, այնուամենայնիվ, կանոնավոր առևտուր է անում: Սա հույսի աշխարհ է՝ չէ որ կարող է մտածել. «Գուցե ազատվե՞մ»: Կուսակալը հմտորեն որսում է այս հոգեբանությունը, ասելով. «Գուցե կառավարությունը ձեզ ների: Իսկ ես ձեզ 60 տոկոսով վստահեցնում եմ, որ եթե հավատարիմ մնաք, կազատվեք: Եկող զինվորներից մի վախեցեք, նրանք պատերազմ են գնալու»: Այսպես ասելով՝ (հայերի ձրի աշխատանքով) զորանոցներ է կառուցել տվել, իսկ հետո, մարդկանց մեջ իսկապես վստահություն է ներշնչել ու նրանց բոլորին կոտորել:

(Դատվանում) բոլոր հայերին կոտորել են հենց գյուղում: Ես հանդիպեցի հեռագրատան տեսուչին: Նա հայտնեց. «Կարճկանի 86 գյուղերից 11-ը եղել են քրդաբնակ, իսկ մնացածները՝ լրիվ հայաբնակ: Բոլոր հայերին կոտորել են, որոնց թվում եղել են զենք բռնելու ընդունակ 1 600 հոգի: Քրդերից դժգոհ են»: ...Այսօր Բիթլիսից նոր լուր ստացվեց, որ հայերի տների դռները ջարդելով՝ բռնությամբ ներս են մտնում: Կանայք խելագարվում են: Քաղաքում «դո՜ւն , դո՜ւն» է եղել, քաղաքը շրջապատված է և ոչ ոքի թույլ չեն տալիս Բիթլիս մտնել:

...Անցնում ենք Մշո դաշտի ջրառատ ձորերով: Այստեղ-այնտեղ ընկած են անհամար դիակներ: Մի տեղ տեսա՝ դիակները ոչխարի հոտի նման խիտ-խիտ փռվել էին գետնին: Մի զզվելի գարշահոտություն բռնել էր օդը, ձորերն անհամար դիակներով լիքն էին: Շատ տարօրինակ էին ցերեկով տեսած դիակները՝ ոմանք ոչխարի նման գլուխը հետ շրջած՝ տարբեր ձևերով լրիվ մերկ ընկած էին: Նրանց մարմինները արևի տակ սևացել էին:

Այսօր ես կռվի բռնվեցի թշնամու՝ հայերից կազմված, մի հեծյալ խմբի հետ, որը ոչ մի դիմադրություն ցույց չտվեց: Երևի եկել էին՝ իրենց

գաղթականներին տանելու: Երեկ երեկոյան նրանք մեզնից ձախ գտնվող գյուղից փախցրել էին իրենց գաղթականներին և թողել էին Սիփանի ստորոտում, իսկ այսօր եկել էին այնտեղից նրանց տանելու:

...Մուշում հայերը հարձակվել էին հիվանդանոցի վրա, բայց մի գումարտակ շրջապատել է նրանց և բոլորին կոտորել: Ս. Կարապետի շրջանում շուրջ 10 հազ. հայեր են եղել: Գումարտակը թնդանոթով նրանց էլ է մաքրել:[1]

Մշեցի թուրք Ալի աղայի պատմածը

...Այս առավոտ ես, Հաջի Հալի էֆենդին և Բաղուլ էֆենդին ձիեր հեծանք և գնացինք Ալիշխան գյուղը... Գյուղը լեցուն էր ժանդարմներով, որոնք մեզ ասացին, թե 350 հայեր իրենց պարագլխի հետ փակված են մարագում... Մենք բարձրացանք մի փոքր տան տանիքը և սպասեցինք, թե այդ ամենն ինչով է վերջանալու: Կես ժամ անց զինվորական բժիշկը 150 ժանդարմների ուղեկցությամբ մոտեցավ մարագին, բացեց դուռը և հրամայեց դուրս հանել հայերին: Նրանք բոլորը շղթայված էին ու միմյանց կապված... Նրանց բերեցին ու շարեցին կալատեղի կենտրոնում: ...Սաստիկ գունատ, մեռելատիպ դեմքերով նրանք նայում էին մերթ գետնին, մերթ ժանդարմներին... Պատրաստ կանգնած ժանդարմները (ազդանշանով) կրակ բացեցին և սպանեցին բոլորին:[2]

Թուրք պաշտոնատար

Համակենտրոնացման ճամբարների գաղափարին... եկանք անգլիացիների օրինակով, որոնք նույն ձևով էին վարվում բուրերի հետ Հարավային Աֆրիկայում:[3]

Քարոզ-կոչ մզկիթներում Սարիղամիշի ճակատամարտից հետո

Այդ նրանք (հայերը) դավաճանեցին մեզ: ...Նրանք ոտի հանեցին ռուսներին: Մահ հայերին: ...Մահ:[4]

Թուրք պաշտոնատար

Հայեր, մենք ամեն ինչ գիտեինք, իսկ այժմ ամեն ինչ ապացուցվեց: Այս երկրում կամ մենք ենք իշխելու, կամ դուք ու ռուսները:[5]

1. «Մի թուրք սպայի հիշատակարանից», Թիֆլիս, 1917:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219:
3. Der Prozess Talaat Paschas. Berlin, 1921, s. 56-57.
4. "Армянский вестник" , 1916, N25.
5. "Армянский вестник" , 1916, N26.

Բեղրի բեյ

Կառավարութիւնը որևէ ճշգրիտ կասկած մը չունի, բայց կը վախենա, որ բան մը տեղի չունենա և խոհեմության համար է, որ այս ձերբակալութիւնները տեղի ունեցան:[1]

Հայդար Ջեմալի՝ թուրք բժիշկ, նամակը ներքին գործերի նախարարությանը

Վսեմաշուք տեր.

Երբ հայոց խնդիրը կքննվի, կտեսնեմ, որ ամբողջ պատասխանատվութիւնը միշտ կուսակալներուն և հրամանատարներուն կվերագրվի: Հայոց վրա ի գործ դրված խժդժութիւնները կրնան կարճատես քաղաքական ըմբռնումներու գեշ հետևանքներ ըլլալ:

...Նվաստիս ձեզի հաղորդելիքը հայոց վրա գիտականորեն ի գործ դրած վայրագութիւններն են:

...Պատասխանատուներուն հանդեպ պետք եղածը տնօրինելը «Խժդժութ քննիչ հանձնաժողովին» պատվին ու խղճին կը հանձնեմ: 1915-ի դեկտեմբերին Երզնկայի մեջ 3-րդ բանակի բժշկապետ Թևֆիք Սալիմի հրամանով, թիֆուսէ վարակուած հիվանդներէն առնուած արիւնը առանց «inactive» ընելու և բժշկականորեն միայն փորձի կենդանիներուն վրա ներելի եղող գիտական փորձերը՝ գաղթեցնելու սահմանուած անմեղ հայերուն կներարկվին և այդ պատճառով շատ մը խեղճ հայեր հիվանդանալով կմեռնին: Ներարկումները կատարուած ատեն՝ զոհերը խաբած են, հավաստելով, որ հիվանդութիւնէ զերծ կացուցանելու համար է: Այս փորձը կատարողը՝ Օսմ. Բժշ. Վարժարանի «Anatomic Patholog»-ի ուսուցիչ Համտի Սուատ՝ «Ջինուորական բժիշկ» թերթին մեջ իր փորձերը հրապարակած պահուն՝ փորձերը սպանուելու դատապարտուածներուն վրա կատարած են կըսեր, իսկ նուաստս՝ հիշյալ ուսուցչին սպանիչ փորձերուն ենթականերուն հայ ըլլալէն զատ ուրիշ հանցանք չունենալուն մոտէն վկան է: Այս խնդրին մոտէն տեղեակ են այն ժամանակ Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի բժշկապետ դոկտոր Ռեֆետ բեյը և իրեն մոտ աշխատող երկու հայ բժիշկներ, նույնպես Երզնկայի Կարմիր Մահիկի բժշկապետ Սելահետտին պեյը:

1. Տոքթ. Եօհաննես Լեփսիուս, Տեղեկագիր, Բեյրութ, 1965, էջ 228:

Ահավասիկ նվաստս, ոչ միայն քաղաքական, այլև գիտականորեն հայերուն վրա ոճիրներ կատարած ըլլալը հայտնելով, այս մասին պետք եղած բացատրութիւնները տալու պատրաստ եմ:

Տոքթ. օրերաթոր Հայտար Ջեմալ:[1]

Դոկտոր Սելահեդդինի նամակը «Թիւրքճէ Սթամբուլ» թերթին

Երեկ օրերաթոր Հայտար Ջեմալ պեյի կողմէ ներքին գործոց նախարարութեան ուղղուած բաց աղերսագրին մեջ իբրև վկա ցոյց տրուած ըլլալս տեսա:

Երզնկայի կեդրոնական հիվանդանոցին մեջ կատարուած այդ դեպքերուն դժբախտաբար բոլորովին տեղեակ ըլլալով, խնդիրը ավելի լուսաբանելը՝ խղճի պարտք կը համարեմ... Արդարև, մարդկութեան ու բժշկութեան համար ամոթալի եղող այս դեպքերուն, երբ բուն պատասխանատուները մեկ առ մեկ երևան հանուին, պարտավորուած թուրք բժշկութիւնը մեծ բեռէ ազատած կըլլայ:

1915-ի հազարումեկ դժվարութիւններով Երզնկան ապաստանող հայերէն մաս մը ախոռէն ոչխար գատուելու պես սեքյաթէն առնուելով Երզնկայի կեդրոնական հիվանդանոցը կը դրկվին և հոն, մանրէաբանութեան մեջ միայն հնդկախոզի և ճագարի պես կենդանիներուն վրա փորձվելիք գործողութեանց ենթակա կըլլան: Այսպիսով շատ մը հայեր մեռնելով հանդերձ... խնդիրն ալ բոլորովին անլուծելի մնացած է... Որևէ օգուտ չունեցող մեթոդ մը՝ միայն հայերու հանդեպ կիրարկվիլ, ի՞նչ կը նշանակե: Անոնց կեանքին՝ կենդանիի մը կեանքին չափ իսկ կարևորութիւն չի տրվող խեղճ հայերը այս առիթով ալ զոհված են: Կը կարծեմ, որ թիֆուսի բռնուած հայերէն առնուած արիւնը «inactive» ընելէ վերջ հիշեալ ուսուցիչը «presentive» Կառնո կուսակալ Թահսիմ բեյին ներարկած է:[2]

«Ալեմդար» թերթի 1918 թ. հունվարի 8-ի հոդվածը

Իթթիհադ և թերագգըի կառավարութեան օրով՝ խիղճ, բարոյական, պատիվ, վերջապես բոլոր սրբութիւններուն ինչ աստիճանի արժեք ունենալը, երբ նկատի առնուի ընդ. պատերազմի տարիներուն հայերու վրա ի գործ դրված ոճրագործութիւններուն և անգթութիւններուն ինչքան վատ մտածումներուն տակ տեղի ունեցած ըլլալը կը հատկացուի: Միայն այն

1."Türkce Istanbul", 23 դեկտեմբերի, 1918 թ.:

2. "Türkce Istanbul", 24 դեկտեմբերի, 1918թ.:

պարագան, որ այդ ատեններում ոչ մեկ անհատի կատարած վայրագութիւններուն հաշիվը կհատուցեր, կարծել տուած էր, թե ամենեն մարդու ըրածը հավետ անպատիժ պիտի մնար:

Ահա այս մտայնութեամբ էր, որ Երզնկայի մեջ հայերու վրա բծավոր ժանտատենդի մասին փորձեր կատարվեցան: Մեր ըսածը հայտարարելու համար ունինք բավականաչափ փաստեր. ինչպես հայերու տարագրութեան, ջարդին և կողոպուտին պատճառ եղողները, նույպես ալ այս գործին մասնակցողները պատասխանատու են: ...ճշմարտութիւնը ոչ թե օրաթերթերու սյունակներու մեջ, այլ դատարանի առջև երևան պիտի ելլե:

Մուսթաֆա Նեղիմ՝ Աբդուլ Համիդի քարտուղարներից

Հալեպում սկսեցին վատ լուրեր ստացվել: Մի օր էլ փողոցում տեսա մարդկանց մի հոտ՝ բաղկացած ծերերից, երեխաներից, հիվանդներից, որոնք մեծ դժվարությամբ էին քայլում՝ շրջապատված բիրերով, սվիններով, մտրակներով զինված ոստիկաններով: Շատերի ոտքերը ուռած էին և տանջանքով էին քայլ գցում: Այդ նույն քարավանի մի շարք անդամներ մտել էին հիվանդների թևերը ու նրանց պարզապես տանում էին քաշկոտելով: Մոտեցա ոստիկաններից մեկին ու հարցրի.

-Ովքե՞ր են սրանք:

-Հայ գաղթականներ:

-Որտեղի՞ց են գալիս:

-Սեբաստիայից:

-Ինչի՞ հետևանք է այս տարագրությունը: Սեբաստիայի կողմերում դեռ պատերազմ չկա: Բացի դա, բրի, մտրակի ուժով են գնում տարագիրները: Դա ի՞նչ է նշանակում:

Նույն պահին հանդիպեց մի բարձրաստիճան զինվորական: Տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

-Սրանք գաղթակա՞ն են, գալիս են Սեբաստիայի կողմերից: Նման գաղթականությունը չհասկացա: Ի՞նչ կա Սեբաստիայում:

-Սրանք գաղթական են: Սեբաստիայում ոչինչ չկա:

-Այդ դեպքում ինչի՞ց է առաջացել տարագրությունը:

-Հայերին իրենց երկրից հանում են. կառավարությունը նրանց ուրիշ կողմ է ուղարկում:

-Լավ, պատճա՞ռը:

-Խռովարարութիւնով են զբաղվել...

-Որտե՞ղ են խռովություն բարձրացրել:

-Ամեն տեղ:

Հասկացա: Հավանաբար ինչ-որ մի տեղ 2-3 զինվոր զառանցել են ու պատրվակ փնտրող կառավարությունն էլ դա պատճառ է համարել գողության ու ոճրագործության առաջ նոր դռներ բանալու համար: Ակներև էր, որ պաշտոնյաները, ոստիկանները, քաղաքապահ զորքերը ջանալու էին օգտվել այդ պատճառներից ու պատրվակներից, որովհետև առաջին դեպքերի (1894-96 թթ. ջարդերի) համը բերաններն էր մնացել:

Երբ տանս մոտ հասա, հանդիպեցի մի նոր բազմության, երկու կանայք մտել էին մի հիվանդ պառավի թևերը և ջանում էին նրան քայլեցնել: Կանանցից մեկի գրկում երեխա կար, որը կմախքացած էր: Չորս երեխաներ էլ լալով ու ողբալով գնում էին նրանց կողքից, որոնցից փոքրը՝ վեց, իսկ մեծը՝ 10 տարեկան կլիներ:

(Պառավի պատմածից):- Մենք տիգրանակերտցի ենք, անունս Մարիամ է: Այս երկու կանայք դուստրերս են, սրա անունը Աննա է, իսկ մյուսինը՝ Ազնիվ: Սրանք էլ Աննայի երեխաներն են: Տիգրանակերտում լավ կյանք էինք վարում... Մի օր էլ հանկարծ քաղաքապահ զորքերը մեր տուն խուժեցին և երկու փեսաներիս տարան: Մի ժամ անց նորից եկան ու մեզ էլ տարան, թույլ չտվեցին, որ հետներս անկողին, գոնե վերմակ վերցնեինք: Մի քիչ դրամ ունեինք, մեկ էլ դուստրերիս հարսանեկան ոսկիները կային, վերցրեցինք, թաքցրեցինք ու ոտով ճամփա ելանք: Տիգրանակերտից այստեղ քայլելով եկանք: Ճանապարհին ոստիկանները դրամն ու ոսկին խլեցին, միաժամանակ փչացրեցին զավակներիս պատիվը: Պետք է գնայինք մինչև Դեր Զոր, կաղալով թերևս կարողանայինք քայլել ևս մեկ-երկու օր, որից հետո անապատում մեռնելու էինք:

Երկու օր անց մեռավ մոր գրկի երկամսյա տղան: Մյուսները մեզ մոտ մնացին մինչև վերջին ժամանակներս: Դրանից հետո սկսեցին ամեն մի տարագիր խմբից 8-10-ական ծեր, հիվանդ, երեխա վերցնել:

Զարմանալով զարմանում էինք, երբ ունկնդրում էինք նրանց գլխով անցած դարձածի և նրանց վրա գործադրված կեղեքումների ու անզգամությունների չափի ու աստիճանի մասին տարագիրների պատմությունները:

...Տարագիր խմբերում շատ սակավ էին տղամարդիկ: Տղամարդ բոլորովին չկար Խարբերդից ու Սեբաստիայից եկածների մեջ:

Սեբաստիայից կուսակալ դահիճ դասակարգի անսիրտ, այլանդակ

Մուամմեր փաշան կոտորել էր տվել Սեբաստիայի հայ բոլոր տղամարդկանց: Իսկ Խարբերդի կուսակալը իրենց ընտանիքներից զատել էր տղամարդկանց և, Խարբերդի ու Մալաթիայի միջև գտնվող Քեռմուրխան կոչված վայրը տանելով, գնդակահարել ու դիակները Եփրատն էր նետել:

Մի օր անցնում էի հալեպի... շուկայով, տարագիր մի խումբ խառն ի խուռն նստած ու ցրված էր եկեղեցու պատի տակ: Ոչ մեկի երեսին մի գրամ արյուն, ոչ մեկի մարմնի վրա մի գրամ միս չէր մնացել: Բոլորն էլ քաղցից հասել էին կենդանի մեռյալների վիճակի:

Մոտ 30 տարեկան մի երիտասարդ նստած էր գետնին, մի ծնկին պառկած էր ծեր, իսկ մյուսին՝ երիտասարդ կին, գիրկը մեկ տարեկան երեխա կար: Թե կանայք և թե երեխան մեռած էին, իսկ երիտասարդը հոգին ավանդելու վրա էր: Կանանցից մեկը նրա մայրն էր, մյուսը՝ կինը, երեխան էլ որդին էր:

Առևտրական գործով գնացել էի Բեհիսնի, վերադարձա նավակով,- ինձ պատմեց քաղաքական տեղակալ Ասըմ բեյը:- Մինչև Էբուհիհրեյե գալս մի բաժակ ջուր խմել չկարողացա՝ Եփրատը լցված էր մարդկանց դիակներով: 8-10-ական հոգու պարանով կապել ու նետել էին գետը: Մեռելների մեջ կային կանայք ու երեխաներ: Բոլորին ասացի, որ մի քանի տարի ձուկ չուտեն: Ոստիկանների գործած անզգամությունները նկարագրել չեմ կարող: Դրամ պահանջելով՝ չարաչար ծեծում էին կանանց և, թիվ չկար ծեծից մեռնողներին: Տեսա մի կնոջ, որ երկու ոսկի էր կուլ տվել: Երբ դրամը չեն գտել, ճեղքել են փորը ու կատարյալ անտարբերությամբ ստուգել ստամոքսն ու աղիները...

Դեր Զոր ուղարկելու համար ճանապարհ են հանում 50-60 մարդու:

Ես նման մի խմբի հանդիպեցի: Ուղեկցող ոստիկանները տարագիրներին ասում էին.

-Դուք Դեր Զոր եք գնալու: Բնականաբար այնտեղ մատնվելու եք քաղցի ու թշվառության: Եթե այդ փորձանքներից ուզում եք ազատվել, դարձեք մահմեդական:

Խեղճերը համակերպվում էին: Գյուղից մի քանի հոգևորական են բերում, նրանց բոլորին մահմեդական դարձնում, թլպատում են ու ասում.

-Դուք մահմեդականացաք և եթե մեռնեք, արքայություն եք գնալու, մանավանդ մարտիրոսացածներն անպայման դրախտ են գնում: Դրա համար էլ ձեզ պետք է մարտիրոսացնենք:

Ու բոլորին սպանեցին:

Անթիվ դարձան այդ սրտամորմոք եղեռնները,- շարունակում է Մ. Նեղիմը:- 500 մետր հեռավորության վրա գտնվող մի տեղից տուն էի վերադառնում: Հալեպի բանուկ Բաբ էլ Ֆարաջի փողոցում տեսա 19 դիակներ: Մեռել էին քաղցից, տանջանքներից ու ոստիկանի ճոկանից: Ամեն օր քաղաքապետարանի կառքերը ցրվում էին փողոցները մեռել հավաքելու: Նրանք թաղվում էին առանց կրոնական արարողության: Նետում էին փոսերի մեջ իրար վրա: Նաև եղան զզված հուսալքվածներ, որոնք նետվեցին այդ փոսերն ու ողջ-ողջ թաղվեցին:

Զինվորական հրամանատարությունը ստեղծել էր աշխատատեղեր բռնագաղթվածների, մասնավորապես կանանց ու աղջիկների համար: Օրը 12 ժամ աշխատանքի դիմաց նրանց տրվում էր մեկական զինվորական հաց, սակայն քաղցի ու Դեր Զոր ուղարկվելու ահից բոլորը ստիպված էին աշխատել այդ դժոխային պայմաններում: Չնայած դրան այս դժբախտները հանգիստ չունեին: Զինվորական ու ոստիկանական սպաները, հիսնապետերը, նույնիսկ շարքային զինվորները անընդհատ այցելում էին աշխատանոցներն ու փնտրում գեղեցիկ կանանց, աղջիկների ու ձգտում էին նրանց ձեռք գցել:

Էյուբ բեյի, Աբդուլահ բեյի անունները, որոնք երկուսն էլ տարագիրների առաքման հանձնախմբերի պաշտոնյաներ էին, զարհուրանք էին սփռում: Որ հայը սրանց հանդիպեր, իր մահը աչքն էր առնում:

...Հունվար ամիսն էր, մի ցուրտ առավոտ, օդը ծակող ու կծու էր, որևէ կերպ չէիր տաքանա: Գործով մտա կայմակամի տունը: Միասին գնացինք կառավարական պաշտոնատուն: Բակից ներս մտնելու վրա էինք, երբ երկուսս էլ շփոթվեցինք, սառեցինք ու մեխվեցինք տեղում: Պատի տակ կծկվել էին 22 տղա ու աղջիկ, փոքրիկ երեխաներ, որոնցից փոքրը վեց, իսկ մեծը հազիվ 10 տարեկան լիներ: Դոնչունի նման աղմուկ էր բարձրանում այդ զանգվածից: Մեջքների եղած պատռված հագուստները նույնիսկ պատանքի չափ չէին պաշտպանում նրանց հալումաշ եղած վտիտ մարմինները: Ահա թե ում իրավունք ունեին անվանել կենդանի դիակներ: Սրանք Հալեպի աշխատանոցի հայ կանանց երեխաներն էին: Մայրերի ու քույրերի աշխատանքի ժամերին նրանք մնում էին փողոցներում: Կառավարությունը նրանց հավաքել էր տվել և այդ ցրտին առանց հագուստի, ոտաբոբիկ ուղարկել էին կառավարչատուն: Էդլեբի Ջիսդի Շիգուր գյուղաքաղաք պիտի գնային: Ճանապարհին խոտ անգամ չգտնելով՝ հող էին կերել:

...Իմ տկար գրիչը անզոր է նկարագրել Դեր Զորի դեպքերն ու նախճիրները, որոնց նմանը չի տեսնված և չի էլ տեսնվի պատմության գրքերում: «Ներման արժանացաք» ասելով՝ Եփրատի հանդիպակաց ափն անցկացնել 40-50 հազ. դժբախտների և անմեղ վայրերում կոտորել, փոսը գցել 10 հազարից ավելի երեխաների, նավթ լցնել ու այրել- սրանք երևակայության մեջ չտեղավորվող ոճրագործություններ են:

Դեր Զորում երկրի բոլոր մասերից հավաքվել էին շուրջ 160 հազ, հոգի: Տարակույս չկա, որ այստեղ հասած 160 հազ. հայերը տասնապատիկ անգամ ավելի շատ են եղել, երբ վտարվել են իրենց օջախներից: Քաղցը, թշվառությունը, ճանապարհի տառապանքները հալեցրել էին նրանց շարքերը:

Դեր Զոր ուղարկվելու համար Հալեպ բերված բռնագաղթվածները քաղաքի ծայրամասի Գառլրկ անունով մի վայրում բանտարկվում էին: Այս քաղաքը նման էր այն տեղերին, որտեղ մսավաճառները սպանդանոց տանելուց առաջ ժամանակավորապես փակում էին ոչխարներին: Գառլրկ մտնող թշվառը պետք է հույսը կտրեր կյանքից:[1]

Նայիմ բեյ՝ թուրք պաշտոնատար, Հալեպի գաղթական գրասենյակի ծառայող

Հայոց եղերական տարագրութեան և սպանութեան խնդիրը, որ թուրք անունը մարդկութեան յավիտենական անեծքին արժանի կը դարձնե, անանկ զարհուրելի դեպքերէն ոչ մեկուն կը նմանի: Թուրքիոյ ընդարձակ հողամասին որ անկիւնն ալ որոնուի, որ ամենամութ խորշն ալ խուզարկուի, ամենաանգութ կերպով խողխողուած հազարավոր հայու դիակներ և կմախքներ պիտի գտնուի:

Ես տակավին գաղթականներու առաքման գործով չէի զբաղվեր, Ես իւլ Այն՝ Ռեժիի քարտուղար էի: Գիւղին դեմը, գետնի եզերքը թափուած հարիւրավոր կիներէ և մանուկներէ բաղկացեալ թշուառներու կարավան մը տեսա: Ասոնք ամեն օր, առավոտուն, գիւղ գալով կը մուրային: Ոմանք ալ ջուր կը կրեին և կը ջանային ապրիլ այն պատառ մը հացով, որ կը յաջողեին ձեռք բերել:

Տակավին ամառ էր: Ժայռերու և ծմակներու մեջ, կամ հողակոյտի մը ճեղքերու խորը կրնային պատսպարուիլ: Բայց երբ ձմեռը վրա հասավ,

1. **Մ. Նետիմ** Մեծ եղեռն ու իմ վկայութիւնները, էջ 84-116:

այլևս շարունակ գիշերվան խոր լռութեան մեջ կը լսուեին ցուրտէն և անոթութենէն հոգի տուողներու հեծեծանքները...

...Եղերական բան մըն էր անոնց մահը, բայց անհունապես ավելի հոգեհոյս տեսարան մը կը դառնար, երբ շուներ կը յոշոտեին անոնց դիակները:

Ատոնք Սըվազի, Տիարպեքիրի, Խարբերդի թշուառ հայ գաղթականներու մնացորդներ էին: Հինգ-վեց նահանգներու մոտավորապես մեկ միլիոն բնակչութիւնը տեղահան կըլլար: Մինչև որ իրենց աքսորավայրը գային՝ յուրաքանչյուր կարավանէ հազիվ 100-150 կիներ ու տղաք կը մնային, ինչ որ կապացուցաներ, թե անոնք կոտորուելու կը բերուին...

...Մինչդեռ Ռես իլ Այն կը գտնուեի, աչքովս տեսնելով հանդերձ չէի հասկցած այն ոճիրներուն նպատակը: Անոնց բնույթն ու հոգին ետքէն կրցա ըմբռնել: Հասած ծածկագիրները քանի կարձանագրեի, դող կուգար վրաս: Մեծ ազգ մը, իր կիներով ու ծագուկներով, մահուան դատապարտուած էր:

Արդեն, երբ փոխուեցավ պետական խորհրդոյ այն որոշումը, որ տեղահան եղող հայոց համար բնակավայր կը սահմաներ Հալեպի Մաարա, Պապ և ուրիշ գավառները, և «հայոց բնակավայր Խապուր գետին (Տեր Զորի մոտ) շրջանակն է», իր իմաստով հրահանգներ տրուեցան, սկսայ ըմբռնել, թե խնդիրը պարզ տռամ մը չէ, ավելի զարհուրգին բան մը պիտի դառնայ:

Ստանալով հայերի բռնագաղթի վերաբերյալ ՆԳ նախարարության հրահանգը՝ Հալեպի գաղթականության գրասենյակի պետ Աբդուլահատ Նուրիի մոտ խորհրդակցություն տեղի ունեցավ: Մասնակիցների խոսակցութեան նիւթը հայերու բնաջնջման ձևն էր: Էյուպ պեյը (նույն գրասենյակի տեսուչ) համարձակ փճացման կողմնակից էր: Բայց Ա. Նուրի պեյը, որ շատ խորամանկ մարդ մըն էր, մերժեց այդ գաղափարը: Իր կարծիքով, լավագոյն էր հայ գաղթականները զրկանքի և ծմրան սաստկութեան ենթարկել և այդպիսով մեռցնել, ինչ որ ապագային՝ անոնց բնական մահուամբ մեռած ըլլալուն թեզը պաշտպանելու և զորացնելու պիտի ծառայեր: 10-15 հազար հայ գաղթականներ, մեկ կետի վրա համախմբուելով, անշուշտ շուտով զրկանքի, անոթութեան և հիվանդութեան պիտի ենթարկուեին: Յետո յանկարծ, երբ զանոնք տեղահան ընեին, ավելի առաջ քշելու համար, բնականաբար մարդիկը չպիտի կրնային փոխադրութեան միջոց ճարել, պիտի ստիպուէին քալել, և պիտի իյնային ճամբաներուն երկայնքը:

Վերջապես իր կարծիքը յաղթանակեց:

Մինչև այն ատեն Հալեպի մեջ ժանտարմաները գաղթականներու գործերուն չէին միջամտեր: Բայց ժանտարմաներու պաշտոնատունն ալ սկսավ ոստիկանատանը գործակցիլ: Շուտով մեծ գործունեութիւն մը ծայր տուաւ Հալեպ: Կադմայի մեջ, Քիլիսի շրջանները և Հալեպի շուրջը խռնուած գաղթականները մաս առ մաս Ագբերին և անկէ Պապ կը ղրկուեին: Իրոք մտածածնուն պես ալ եղաւ: Անոթութենէն, ցուրտէն, հիվանդութենէն ամեն օր հարիւրավոր անձերու մեռնելուն լուր կը հասներ մեզի: Էյուպ պեյ Ազազ գնաց: Վերադարձին խնդալով պաշտոնատուն եկաւ: Կը պատմեր, թե ինչպես վրանները այրած էր: Թիֆիւսը չորս դին կայրեր, կը մրրկեր: Գայմագամը, գաղթականներու առաքման պաշտոնյաները ամեն օր մահուան տեղեկագիրներ կը ղրկէին: ....

Օր մը ըսի Ա. Նուրի պեյին. «...Գաղթականներու առաքումը քիչ մը մեղմացնենք, որովհետև մահը բովանդակ Միջագետքի կը սպառնայ...»: Նուրի պեյ խնդաց. «Տղաս,- ըսավ,- այս կերպով երկու վնասակար տարրեր մեկանց կը փճացնենք: Հայերուն հետ սատկողները արաբները չե՛ն: Գե՛շ է: Թրքութեան ապագային ճամբան կը հարթուի»:

Սկիզբները Հալեպի գաղթականաց ընդհանուր տեսչութեան մեջ գոյութիւն ուներ մասնավոր յանձնաժողով մը, որուն միջոցով տեղի կունենային գաղթականներու առաքումները (դեպի պանապատ): Քանի այս գործը այդ յանձնաժողովի ձեռքը մնաց, գաղթականները մասամբ զերծ էին կեղեքումէ և հարստահարութենէ: Կառավարութիւնը հասկանալով, որ այդ կերպով իր հետապնդած նպատակը չպիտի իրականանայ, կուսակալ (Պեքիր Սամի) հրաժարեցնելով անոր տեղը ղրկեց իր նպատակներուն շահուած Մուստաֆա Ապտիլհալիգ պեյը: Այս մարդը հայոց թշնամի մը է, և կը ջանար յանուն թրքութեան բնաջինջ ընել հայ ազգը: Իր կողմէ գաղթականաց ընդհանուր տեսչութեան հաղորդուած հրամանները այնքան խիստ էին, որ կարելի չէր բացատրել: ...Նուրի պեյ չափազանց ուշիմ և ի բնէ անգութ մարդ մը էր, և մասնավորաբար հայոց դեմ լեցուած էր թշնամութեան զգացումով: Նրբահնար անգթութեան մարմնացում մը: Հայոց աղետն ու թշուառութիւնը իրարու յաջորդող մահուան տեղեկագիրները այն աստիճան կը հրճուեցնեին զինքը, որ կը զգլխեր՝ պարելու աստիճան: Որովհետև այդ ամենը իր հրամաններուն արդիւնքն էին: Կառավարութիւնն անոնց ապրիլը չուզեր, կըսեր: Կը պատմեր, թե երբ այս պաշտոնին կոչուեցաւ, Հալեպ մեկնելու պահուն ներքին գործոց

նախարարութեան խորհրդականը իրեն յանձնարարեց, որ չմեկնած անգամ մը տեսնե Թալեաթ փաշան: Նուրի պեյ կերթա Բ. Դուռ: Փաշայի մոտ քանի մը հիւրեր կային:

-Ե՞րբ պիտի մեկնիս,- կը հարցնէ:

Յետոյ, տեղէն ելլելով, զինքը պատուհանին մոտ կը տանի և ցած ձայնով կըսէ.

-Անշուշտ, գիտես, թե ի՞նչ պիտի ըլլայ տեսնելիք գործդ. այլևս այդ անիծեալներուն (հայերին) Թուրքիոյ մեջ ապրիլը չպիտի տեսնեմ...

Նոր ու սարսափելի հրաման մը, որ Հալեպ հասեր էր ներքին գործոց նախարարութեան կողմէ, ամեն ազատութիւն կուտար իրենց (գաղթականութեան գրասենյակի աշխատողներին):

...Գաղթականներու առաքման գործողութեանց միայն մեկ մարդու թողուելուն նպատակը սա էր, որ խժդժութիւններ ի գործ դրուելու համար տրուելիք հրամանները կարելի եղածին չափ գաղտնի մնան, շատ մարդիկ չիմանան, և ոճիրը կատարուի լռելեայն, առանց տարաձայնութեանց տեղի տալու:

Արդեն Հալեպէն քայլ մը առաջ գացողներուն համար ապրելու յոյսը այլևս գոյութիւն չուներ: Գալըքէն սկսեալ մինչև Տեր Զոր երկարող բովանդակ գիծը թշուառութեան բոյն մը, գերեզմանոց մը դարձած էր: Գաղթականներու առաքման համար նշանակուած պաշտոնեաներին վստահելիներու պատուիրած էր, որ մահ պատճառող ամեն տեսակի խժդժութեանց գործադրութենէն ետ չկենան:

Որովհետև երբեմն կուսակալութեան և գաղթականներու տեսչութեան շրջանակի ուղղուած բողոքագրեր կուգային զանազան պաշտոնեաներու դեմ: ՆԳ նախարարին ուրիշ մը հեռագիրը կը յանձնարարեր, որ այդ կարգի բողոքագրերը ընդունուին, բայց նկատի չառնուին: (Սրա հետևանքը հանդիսացավ այն, որ) ճամբաներուն վրայ ընտանիքն ու զավակները մորթուած, աղջիկը ձեռքէն բռնի առնուած, պատիվը աղարտուած թշուառ մը, երբ ճամբուն վրա ավանի մը հանդիպելով կուզեր հեռագրով մը իր ողբալի վիճակը պարզել և օգնութիւն հայցել, հեռագրական պաշտոնեաները զինքը կը յանդիմանեին, թե ինչու այդ ոճով հեռագիր տալ կուզե:

... Բայց մահապարտներու բողոքներ էին այլևս ատոնք, գերեզմանէն եկած ձայներու կնմանեին: Կառավարութիւնը այդ ձայներէն կը վախնար, զանոնք լսելը իրեն համար տանջանք մըն էր, չէր ուզեր լսել: Երբ

դեպի Ռես իլ Այն երկաթուղիով կը կատարվեր գաղթականներու առաքումը, գայմագամ Եուսուֆ Զիյա պեյ ծանոյց, թե այլևս Ռես իլ Այնի մեջ հայ զետեղելիք տեղ չէ մնացած, թե ամեն օր 5-600 գաղթական կը մեռնի, թե ո՛չ ողջերը դեպի ավելի վար ղրկելու, ոչ ալ մեռելները թաղելու ժամանակ կը գտնեն: Ե. Զիյա պեյը կը պաղատեր, որ այլևս դադրի դեպի Ռես իլ Այն գաղթականի առաքումը:

Հետևյալ իմաստով պատասխանեցավ իրեն. «Առաքումները փութացուցեք, այդ պարագային մեկնելու վիճակին մեջ չեղողները քաղքէն քանի մը ժամ անդին կինան կը մեռնին, և գավառակը թե ողջերէն և թե մեռելներէն ազատ կըլլայ»:

Տեղվոյն առաքման պաշտոնեային և գայմագամին վերջին տեղեկագիրներէն կը հասկացուէր, թե չորս ամսուան միջոցին 13-14 հազար հայ անոթութենէ և հիվանդութենէ մեռած է:

...Ապտիլահատ Նուրի պեյ գաղթականներու առաքման պաշտոնեան՝ Ատիլ պեյը, նեղելով հասկցավ, թե հոն գտնուող հայերու դեպի անապատ առաքման հակառակողը նույն ինքը Տեր Զորի կառավարիչ Սուատ պեյն է:

Նուրի պեյ, Հալեպ դարձին, իրողութիւնը տեղեկացրեց կուսակալ Ապտիլհատ պեյի, որ անմիջապես ծածկագրով հրամայեց Ալի Սուատ պեյին. «Հազարավոր հայերու Ռես իլ Այնի մեջ թողուած ըլլալը կառավարութեան սրբազան նպատակին անհամաձայն պարագայ մըն է, քշեցե՛ք զանոնք այն տեղէն»:

Ալի Սուատ պեյ պատասխանեց. «Փոխադրութեան միջոցներ չկան, որպեսզի կարենամ ժողովուրդը տեղահան ընել: Եթե հետապնդուած նպատակը զանոնք սպաննել է, այս բանը ոչ կըրնամ ընել, ոչ ալ ընել տալ»:

Ռես իլ Այնի չեչեններէն հրոսակախումբ մը կազմուեցավ, իբր թե այդ տեղի գաղթականները ճամբորդութեան միջոցին յարձակումներէ զերծ պահելու համար: Այդ հրոսակախումբը զինուեցավ: Պահապանի անունը կրող այդ մարդիկը, սակայն ճամբան գաղթականները կողոպտելու, սպաննելու պաշտոն ունեին:

Ռես իլ Այնի եղերական դեպքին հրամանը ուղղակի Հալեպէն տրուեցավ: Այս հրամանը այն հրոսակախումբին պետերուն տրուած էր: Անոնցմէ մեկ քանին Հալեպ եկան և կուսակալ Մ. Ապտիլհալիգ պեյի հետ տեսնուեցան: Անոնց վերադարձէն 4-5 օր ետքը՝ Ռես իլ Այնի գայ-

մագամը ծածկագրով իմացուց անոնց հասած և հրահանգները ընդունած ըլլալը:

Երբ Մաարայի, Պապի և Հալեպի շրջակայ գիւղերուն մեջ նախապես բնակեցուած հայերը քշելու հրաման եկաւ, գայմագամներու այն աստիճանի անգութ հրամաններ տրուեցան, որ կարելի չէր արցունքը զսպել՝ զանոնք կարդալով:

Հալեպէն հրաման կը տրուեր ժանդարմներուն, որ աշխատին ճամբաներուն վրա անոթի ու ծարաւ ձգելով կարելի եղածին չափ պակսեցնել գաղթականներուն թիվը:

Մուհարրեմ պեյը Պաղտատի նախորդ ոստիկանութեան տնօրենն էր... իրեն յանձնուած գործը շատ կարևոր էր և որպեսզի ընչաքաղցութեան հետևանքով ներողամտութեամբ չվարուի, 150 ոսկի ամսական կուտային իրեն: Այս մարդը շատ մեծ առաքումներ ըրաւ: Մինակը պատճառ եղաւ, որ հազարաւոր հայեր ամենաանողորմ կերպով մեռնին ճամբաները: Ա. Նուրի պեյ այս անողորմ մարդուն գործակից տուաւ ձիաւոր ժանտարմներու հարիւրապետ մը...

Այս հարիւրապետը, հետը առած 5-10 ժանտարմներով, ամեն տեսակի ոճիրներ գործելէ չքաշուեցաւ:

Վերջին հրահանգին համաձայն, Պապի բոլոր գաղթականները 24 ժամուան մեջ տեղահան պիտի ըլլային: ... Ամեն պարագայի մեջ այս տեղահանութիւնը իրենց մահուան պիտի յանգեր: Եղանակը ձմեռ, ոտքերնուն մինչև գլուխնին մերկ, այս վիճակին մեջ ճամբայ հանուելով, ճամբաներուն եզերքը կիյնային կը մեռնէին: Պապէն մինչև Մեսքենէ ճամբուն երկայնքը, արտերը հայու դիակներով լեցուեցան: Իրենց դիակներուն վրա ափ մը հող անգամ չէր ծածկուեր: Դիակներուն մեջտեղ ձգուած ըլլալը իմանալով, կառավարութիւնը իրար անցաւ...

Մեռելներուն քանակութիւնը ամեն տասնհինգ օրը անգամ մը ծածկագրով կը տեղեկագրուեր Պոլիս: Ասիկա ալ կապացուցանե, թե գաղթականներու ընդհանուր տեսչութեան փոխանորդութեան պաշտոնատունը բոլորովին ոճրամիտ նպատակով մը հաստատուած էր:

Կառավարութիւնը կը պահանջեր, որ հային կեանքն ու պատիվը փճացուին: Այլևս անոնց համար ապրելու իրաւունք, գոյութեան իրաւունք չէր մնացած:

Թիֆիսին սաստկացած մեկ պահուն Հալեպի մեջ գաղթականների առաքումը այն աստիճան սաստկացաւ, որ ոստիկաններն ու ժանտարմ-

ները տուներէն քաշքշելով դուրս կը հանեին և խոզ կապելու պես չուաններով կաշկանդելով կը քշեին Աստուածմէ զատ ուրիշ ապավեն չունեցող խեղճ հայերը...

Մեսքենէ ղրկուեցայ: Մեկնած ատենս Էյուպ պեյ զիս կանչեց.

-Նայիմ էֆենտի... Մեսքենէ ղրկուած առաքման պաշտոնեաներուն ոչ մեկէն օգուտ տեսանք: Դուն գործի մեջ գտնուեցար, եկած հրամաններուն տեղեակ ես, նայե, որ այդ մարդիկը (հայերը) ողջ չձգես: Իհարկին քու ձեռքովդ սպաննե: Ասոնք սպաննելն ալ զուարճութիւն մըն է:

Մեսքենէի և Ապուհարրայի միջև գտնուած Տիբսի կոչուած կայքը ամենէն կարևոր եղեռնավայրերէն մեկն էր: Մահուան դատապարտուածները հոն կը սպաննվեին և գետը կը նետուեին: Մեսքենէի մեկ ծայրէն միւսը կմախքներով լեցուած էր, պարզապես ոսկորներու արտի մը երևոյթը ստացած էր:

Մի միայն Հալեպէն Բես իլ Այնի և Մեսքենէի ճամբով 200 000 հայ ղրկուեցավ և այս խոշոր քաղաքականութեան հազիվ 5-6 հազ. հոգին կրցած են ողջ մնալ: Մանուկները Եփրատի մեջ նետելով մեռցուցին: Կիները զանազան ճամբաներու վրա, ժանդարմներու և ժողովուրդին խժդժութեամբ ու վայրենութեամբ՝ սուինով կամ հրազենով սպաննուեցան:

Այս ոճիրը գործադրուած ատեն Թալեաթ փաշա մեկ կողմէն իր անպարտութիւնը ապահովող փաստաթուղթերը կը փնտռեր, ասոնց կազմութեան ու կարգադրութեան համար պաշտոնեաներ յատկացուցած էր և պետական գանձէն դրամներ կը ծախսեր: Իբր թե հայերու տուներէն գտնուած քանի մը զենքի, հրացանի լուսանկարներ հանել տալով՝ իր ոճիրը չքմեղացնել կուզեր: Ավա՜ղ... եթե զենքերու գոյութիւնը խռովութեան ու ապստամբութեան նշան է, ուրեմն Թուրքիոյ բոլոր մասերը ապստամբութեան վառարաններ պետք է ըլլան: Որ թուրք գիւղը որ երթաք, հարիւրավոր մարթիններ, մավզերներ պիտի գտնեք:[1]

Քաղվածքներ «Յուշամատեան Մեծ եղեռնի» գրքից

Կարինի թուրք բերդապան. Անհնար է, որ հայ զինվորները իրենց թուրք ընկերների վրա կրակած լինեն: Հայերը միշտ ռազմաճակատից հեռու՝ թիկունքում էին օգտագործվում:

1. Ա. Անտոնյան Մեծ ոճիրը, էջ 31-218:

Թուրք սպա (Տրապիզոն). Տեղահանության հրամանը ստանալու օրվա երեկոյան 40 հայ ծովը նետվեց և 500 հայ զինվոր սպանվեց: Բոնագաղթվածները սպանվում էին Ջևիզլիկ վայրում, նրանց նետում էին Դեյիրմեն գետը:

Թ. Նշանլի՝ թուրք չեթեական. Աստծոյ պատժից վախենալու կարիք չունեմ: Այս ձեռքովս 150 հայ եմ սպանել և, ինչպես տեսնում եք, ողջ-առողջ եմ մնացել:

Մի այլ չեթեական՝ բանտից ազատված հանցագործ. Այս դաշույնով մեկ օրում 60 երզրումցի եմ սպանել:

Իշխանությունները թուրքերին հավաքում էին մի տեղ, զենքեր ու ածելիներ նրանց ցույց տալիս ու ասում. Այս զենքերով հայերը կառավարությանն էին տապալելու, իսկ ածելիներով մեր մայրերի, կանանց ու աղջիկների ստինքներն էին կտրելու:

1918թ. «Վաքիթ» թերթում տպագրվեց Հալեպի և Կոնիայի նախկին վալի Ջելալ բեյի մեծ հոդվածը ցեղասպանության մասին, որը 1918 թ. դեկտեմբերի 13-ին արտատպվեց Կ. Պոլսի «Լե Ռենեսանս» թերթում «Չարաշուք պատմական» վերնագրով:

Հատվածներ այդ հոդվածից

Բոլոր կողմերից սկսվեց հայկական տարագրությունը: Տարբեր կետերի հասնող քարավանները նախապես ուղարկում էին Կոնիա, սակայն շուտով ստացանք նրանց Տեր Զոր ուղարկելու հրահանգը:

Խոստովանում եմ, որ չէի հավատում, թե այս հրահանգները և գործողությունները կմիտեին հայության բնաջնջումը: Չէի կարող երևակայել, թե մի կառավարություն, պետություն կարող էր այսպես բնաջնջել իր հպատակներին, իր մարդկային դրամագլուխը, որը երկրի գլխավոր հարստությունը պիտի համարվեր: Եվ կարծում էի, որ այս միջոցառումները թելադրված էին հայությանը պատերազմական անհրաժեշտության բերումով ժամանակավորապես ռազմադաշտային շրջաններից հեռացնելու ցանկությամբ: Ահա սրա համար հեռագրով դիմեցի ներքին գործերի նախարարին՝ նրանից նյութական հատկացումներ պահանջելու գաղթական հայերի բնակեցման համար՝ հատուկ հյուղակներ կառուցելու ծրագրով:

Հատկացումների փոխարեն ինձ մոտ ուղարկվեց «Գաղթականների տեղավորման պատասխանատու» տիտղոսը կրող, սակայն իրականում հայության զանգվածային տարագրությունը կազմակերպելուն կոչված մի անձ... ներքին գործերի նախարարին ուղղված անձնական նամակս հետևյալն էր ասում. «Հայությունը մեր բնակչության կարևոր մասն է կազմում: Հանրային հարստության մոտ քառորդը նրա ձեռքում է գտնվում, ինչպես նաև երկրի ամբողջ տնտեսական նախաձեռնության կեսը: Նրան բնաջնջել՝ կնշանակի շատ մեծ վնաս հասցնել կայսրությանը, վնաս, որ դարերով կարելի չպիտի լինի դարմանել: Եթե աշխարհի մեր բոլոր թշնամիները հավաքվեին և մտածեին մեզ վնասելու ձևերի մասին, ավելի վնասակար արարք չպիտի կարողանային գտնել»:

Ջեմալն այս խնդրով նույնիսկ Պոլիս է գնում, բայց այստեղ ևս՝ «Դժբախտաբար, ոչ ոք չուզեց ինձ լսել»:

Մայրաքաղաքից վերադառնալիս խորհրդարանի մի երեսփոխան նրան փոխանցում է կոմիտեի անդամներից մեկի խոսքերը. «Այս միջոցառումը վճռված էր Կենտրոնական կոմիտեի կողմից երկար քննարկումներից հետո և հետևաբար չէր կարող վերանայման ենթարկվել, որ այս ձևով իրականացված տարագրությունը կազմում է ազգային իդեալի բաղկացուցիչ մասը և ինձ մնում էր զոհել իմ անձնական տեսակետները այդ իդեալին»: Խոսակիցս իր կողմից ավելացուց, որ եթե շարունակեի հակադրվել ընդունված տեսակետին, պիտի հեռացվեի պաշտոնիցս:[1]

Կապիտուլյացիայի մահմեդական ազգաբնակչության դիմումը կուսակալ Ռեշիդին

Շրջակա նահանգներից հայերն իրենց կանանց ու երեխաների հետ հանվում են լեռն ու սպանվում են սպանդանոց քշված անասունների նման: Մենք նման բան մեր շրջանում չենք ուզում: Մենք վախենում ենք Աստծոյ բարկությունից: Կառավարությունը չի կարող ապօրինություններով ու բռնություններով կանգուն մնալ: Մեր նահանգում նմանօրինակ դեպք չպետք է տեղի ունենա:[2]

1. **Ս. Թեհլիրեան** Արդարահատոյց, Բեյրութ, 1981, էջ 359-360:
2. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 278-279:

Իսսան բեյ՝ ներքին գործերի նախարարության հատուկ դիվանի պետ

Երբ ինքը Քիլիսի կառավարիչն էր, Պոլսից Հալեպ ուղարկված Աբդուլահադ Նուրի բեյն աշխատել է համոզել իրեն, թե տարագրության նպատակը բնաջնջումն է, թե ինքը տեսնվել է Թալեաթ բեյի հետ և անձամբ է ստացել բնաջնջման հրամանը, և սրանում է երկրի փրկությունը:[1]

Երբ «Թասֆիրի էֆքեարի» նախկին խմբագիր և Հալեպում Աժանսի հեռագրերի պատասխանատու Ագեահ բեյը հարցնում է Զորի մութեսարիֆ Զեքի բեյին, թե արդյո՞ք 10 000 հայ է սպանել, նա պատասխանել է

Ես պատվախնդիր մարդ եմ: Տասը հազարն ի՞նչ է, բարձրացրու՛, մեծացրու թիվը:[2]

Ջեմալ բեյ՝ Կոնիայի նախկին վալի, ցուցմունք դատարանում

Թեև աշխատել եմ պաշտպանել Կոնիայի հայությանը, սակայն դոկտ. Նազըմի կողմից ուղարկված երեսփոխան Ալի Ռիզա էֆենդին բարեկամաբար խորհուրդ է տվել՝ չհամառել այն խնդիրներում, որոնց մասին իթթիհադի կենտրոնն արդեն որոշում է կայացրել երկար քննարկումներից հետո:[3]

Դիարբեքիրի թուրք ուսուցչի պատմածը

Բրուսայի իշխանությունները տեղի հայերին հայտնեցին, թե կառավարությունը որոշել է բոլորին ուղարկել Մոսուլ և Դեր Զոր և, որ մեկնումը տեղի է ունենալու երեք օր հետո: Նրանք վաճառեցին իրենց ունեցվածքից այն ամենը, ինչ կարող էին, սայլեր ու բեռնասայլեր վարձեցին ընտանիքներն ու բեռները փոխադրելու համար և նշված ժամանակին ճանապարհ ընկան: Երբ ահագին հեռացել էին բնակեցված տեղանքից, կառապանները իրենց տրված հրահանգի համաձայն լծից արձակեցին ձիերին և դժբախտ աքսորյալներին լքեցին անապատում: Գիշերը

1. **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 277 կամ Դատական գործ, թիվ 1, էջ15:

2. Դատարանի դիվան, կարգաթիվ թիվ 6, փաստաթուղթ թիվ 14, նաև կարգաթիվ թիվ 11, փաստաթուղթ թիվ 1 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 284-285:

3. Հարցաքննության թղթապանակ, էջ 7 կամ **Ա. Անտոնյան** Մեծ ոճիրը, էջ 284-285:

նրանք վերադարձել ու թալանել էին վերջիններիս: Նրանցից շատերը մահացան սովից ու սարսափից: Մյուսներին կոտորեցին ճանապարհին, և այդ մարդկանց լոկ փոքր մասը հասավ Դեր Զոր:[1]

Շեֆեք բեյ, որին հանձնարարված էր հայերին կոտորել

Ես ուղեկցում էի աքսորված հայերի մի քարավանի: Երբ Դիարբեքիրի սահմաններից դուրս էինք եկել և սկսեցինք գնդակահարել նրանց, առջևս հայտնվեց մի քուրդ: Ձեռքերս պատելով համբույրներով՝ նա աղաչեց, որ իրեն տամ իր հավանած մի տասնամյա աղջկա: Ես դադարեցրի հրաձգությունը և ժանդարմներից մեկին կարգադրեցի բերել աղջկան: Նրան հրամայեցի նստել ու ասացի. «Մենք քեզ կհանձնենք այս մարդուն, և կյանքդ կփրկվի»: Մի ակնթարթ անց տեսա, թե նա ինչպես նետվեց մահվան դատապարտվածների կողմը: Ես նորից կարգադրեցի դադարեցնել կրակը և բերել աղջնակին: «Չէ՞ որ ես քեզ մեղք եմ գալիս,- ասացի ես,- ուզում եմ փրկել քո կյանքը: Ինչո՞ւ խառնվեցիր նրանց: Գնա այս մարդու հետ, նա քեզ հետ կվարվի, ինչպես իր աղջկա»: Նա պատասխանեց. «Ես հայի աղջիկ եմ, ծնողներս ու ազգականներս նրանց մեջ են, որոնց շուտով կսպանեն: Չեմ ցանկանում ուրիշ ծնողներ ունենալ և չեմ ուզում նրանցից հետո ապրել նույնիսկ մեկ ժամ»: Նա սկսեց հեկեկալ: ...Ես բաց թողի նրան: Տեսա, թե ինչպես նա շատ գոհ վազեց հոր ու մոր մոտ և նրանց հետ միասին գնդակահարվեց:[2]

Քաղվածքներ Լեփսիուսից

Թուրք զինվորն ու ժանդարմը Երզնկայի կոտորածի մասին

Դա սարսափելի էր:

Այստեղից տասը բոպեի ոտքի ճամփա հեռվում ենթադադար էր արել Բայբուրդից աքսորվածների մի մեծ քարավան... Նրանց (հայերին) մեկը մյուսի հետևից ոչնչացնում ու նետում էին կիրճի անդունդը, (բղավելով). «Սպանե՛ք, սպանե՛ք, գալիս են»... բոլոր գյուղերում բռնաբարում էին կանանց, և ինքը նույնպես ուզում էր բռնաբարել մի աղջկա... ջախջախում էին երեխաների գլուխները, երբ նրանք լաց էին լինում կամ խանգարում էին առաջ ընթանալ... Այստեղ երեք մերկ աղջիկների դիակներ էին ընկած: Ես դրանց թաղեցի, որպեսզի բարի գործ արած լինեի:

1. Faiez of Dhocein, Témoignage d'un Arabe musulman...., p. 39.
2. Ն. տ.:

Երզնկայի հյուրանոցի տեր. Կ. Պոլսում որոշում է ընդունված, որ այս (հայ) կանայք ու երեխաները պիտի մեռնեն:

Խարբերդի մութեսարիֆ. Հայ երեխաները պետք է մեռնեն իրենց ազգի հետ:[1]

Սեբաստիայի ճանապարհին մի թուրք ասաց

Այստեղ կանգնել եմ, որ սպանեմ անցնող հայերին և արդեն սպանել եմ 250 հոգու... հայերն արժանի են դրան, քանի որ նրանք բոլորն իշխանականներ են... հեռախոսով հրաման էի ստացել սպանել ճանապարհի մեր (գերմանուհի բուժքույրերի) երկու ուղեկիցներին: Այդ երկու մարդը և նրանց կառապան հայը պետք է սպանվեն:

Թուրք ժանդարմ, որն ուղեկցել է 3000 հայ կանանցից ու երեխաներից կազմված քարավանը

Բոլորը զոհվեցին, բոլորը մեռած են... Այն, ինչ արվում է հիմա (բռնագաղթը)՝ դա լավագույն եղանակն է: Նրանց պետք էր ստիպել, որ տառապանք կրեին, և, բացի այդ, դիակները տեղ չէին թողնի մեզ՝ մուսուլմաններիս համար: Դրանք գարշահոտություն կտարածեին:[2]

Ալաֆրար Իբրահիմի պատմածը

Հայերում տեղահանելու մասին Պոլսէն եկած հրամանը շատ խիստ և ստիպողական էր այս մտքով՝ անխնա կոտորել բոլոր այր մարդկանց՝ 14էն մինչև 65 տարեկան, իսկ երեխաներին, ծերերուն և կիներուն չդիպչել, այլ աշխատիլ իսլամացնել:[3]

Հեռագիր Աղանայի նահանգապետից

Գոհունակությամբ կարող եմ հայտնել, որ համածայն կառավարության մտադրության, ինչպես այստեղ, այնպես էլ Մարաշի սանջակում հաջողվել է լրիվ փոխել (ազգաբնակչության ազգային կազմի) տոկոսա-

1."New York Times", 12 դեկտեմբերի 1915 թ.:

2. J. Iepsius Treatment of Armenians in th ottoman Empire 1915-1916, London, 1916, p. 248-250.

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 106:

յին հարաբերությունը: Իմ վիլայեթը մաքրված է քրիստոնյա տարրերից: Եթե երկու տարի առաջ վաճառականների ու արհեստավորների 80 տոկոսից ավելին քրիստոնյաներ էին, այժմ 95 տոկոսը կազմում են մահմեդականները և միայն 5 տոկոսը՝ քրիստոնյաները:[1]

Թուրքի պատմածը Բաղեշից Մուշ ճանապարհին իր տեսածի մասին

2 300- ի չափ կիներ ու երեխաներ... կը քշեին մտրակներու տակ: Անոնք, որ ոտքի վրա չէին կրնար կենալ, տեղն ու տեղը կը սպանուեին: Շատ մը կիներ, չկրնալով հետերնին տանել իրենց զավակները, զանոնք լքեցին ճամբուն եզերքը, անանկ որ հազիվ քիչ մը հեռացած, 400-500 փոքր երեխաներ լքուած մնացին ճամբուն վրա, մեկէն մինչև 4-5 տարեկան: Կարավանը դեռ Երզնշտեր չհասած, Սլեման Անպաշին, ձերբակալուած 4-5 հայերու կոնակը մեկ-մեկ թիթեղ քարյուղ բեռնցնելով, զինուորի մը հսկողութեան տակ, ղրկեց Երզնշտեր: Յետոյ ժանդարմներէն իմացա, որ այդ ամբողջ բազմութիւնը՝ այնտեղի մարագներու մեջ լեցնելով՝ վառած են: ... Սլեման Օնպաշին հրամայեց 15-ի չափ քոլոսիկցի քիւրտերու և մեկ քանի տղոց, որ չամբուն վրա լքուած երեխաներու համար մեծ հոր մը փորեն և այդ փոքրիկները հավաքելով մեջը լցնեն և հողով ծածկեն: Ջիս ալ ղրկեց անոնց հետ: Ամբողջ պզտիկները տեղ մը հավաքեցինք, բավականին խորունկ փոս մը փորեցինք: Քոլոսիկցի պատոն սկսավ մանկիկները շարել այդ փոսին մեջ և իր իսկ ձեռքով կոշտ-կոշտ հողեր խոթել անոնց բերանները, որպեսզի շունչ չկրնային առնել ու խեղդամահ ըլլային: Այսպիսով, այդ անմեղ երեխաները բոլորն ալ խեղդամահ եղան: Իսկ անոնք, որ հինգ տարեկան էին և դժուարով կը խեղդուեին, կամ բերաննին չէին բանար, քարով կը կոտրեր անոնց ատամները և հող լցնելով՝ բռնամահ կըներ: Վերջն ալ, հողով ծածկեցինք այդ փոսը...

Երբ գիւղ վերադարձանք, տեսանք, որ Երզնշտեր գիւղի վրա (Խաս գիւղէն հինգ քիլոմեթր հեռու) թանձր մուխ մը կը բարձրանար: Մեկ-երկու ժամ յետոյ հայ կիներն ու երեխաները տանող ժանդարմները ետ դարձան:[2]

1. Wien HHSTA PA XI 275, Kostantinopel, 27 Februor,, 1917, N 47.

2. **Ս. և Մ. Բդեանեներ** Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 569:

Ալի Ֆուադ Էրդենիի՝ բանակի գեներալ, հուշերից քաղվածքներ

1915 թ. ապրիլին գլխավոր հրամանատարությունից տեղեկություն ստացվեց այն մասին, որ արևելյան Անատոլիայում ամենուրեք ապստամբություններ են բռնկվում: Կառավարությունը որոշում է ընդունել դեպորտացիայի մասին, համաձայն որի՝

1. Դեպորտացիան իրականացվելու է Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Սըվազի, Մամուրեթ ուլ Ազիզի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Ադանայի (բացառությամբ Ադանա քաղաքը) և Հալեպի (բացառությամբ կենտրոնի) վիլայեթներից:

2. Հյուսիսային վիլայեթներից բռնագաղթվածները բնակեցվելու են Զորի սանջակում և Մոսուլի վիլայեթի հարավում, իսկ Ադանայի, Հալեպի ու Մարաշի վիլայեթներից բռնագաղթվածները՝ Սիրիայի հարավում ու հարավ-արևելքում:

3. Բնակեցման վայրերը գտնվելու են երկաթգծերից ոչ պակաս, քան 25 կմ հեռավորության վրա:

4. Բռնագաղթվածներն իրենց հետ պետք է վերցնեն արժեքավոր իրերը:

Չորրորդ բանակի հրամանատարությունը դեպորտացիայի խնդրում հետևյալ տեսակետն էր պաշտպանում.

1. Յուրաքանչյուր առանձին վերցրած հայ մեր քաղաքացին էր հանդիսանում: Մի շարք շրջաններում նրանք կազմում են ազգաբնակչության վտանգավոր մեծամասնությունը: Դեպորտացիայի նպատակը հենց այն է, որպեսզի վերացնի այդ վտանգը, մեծամասնությանը վերածելու անվտանգ փոքրամասնության:

2.Գործողությունը (դեպորտացիան) սկսվելու է ծովափից (Սև ծովի) և աստիճանաբար ընդգրկելու է ներքին շրջանները:

3.Տեղափոխության և նոր վայրերում բնակեցման ժամանակ քարավանների անվտանգությունն ապահովվելու է: Արգելվելու են վրիժառության, անձնական հաշիվներ մաքրելու դեպքերը:

4.Գաղթականները բնակեցվելու են միայն կյանքի համար նորմալ պայմաններ ունեցող շրջաններում:

5.Չեն բռնագաղթվելու հաշմանդամները, ծանր հիվանդները, հղի կանայք և նրանց խնամակալները:

Չորրորդ բանակը բռնագաղթվածներին բնակության վայր ընտրեց Համա, Հավրան, Քերեք սանջակների քաղաքները և գյուղերը, ինչպես նաև Հալեպից հարավ և մասամբ արևմուտք ընկած շրջանները...

Ջեմալ փաշան Բեհաեդդին Շաքիրից ստացավ հետևյալ բովանդակությամբ հեռագիր. «Մենք Տրապիզոնից, Էրզրումից, Սրվազից, Բիթլիսից, Մամուրեթ ուլ Ազիզից և Դիարբեքիրից բռնագաղթվածների 95 տոկոսին ուղարկել ենք Մոսուլի վիլայեթի հարավը, իսկ դուք, ինչպես պարզվում է, նրանց ուղարկում եք Հալեպ...»:

Պատասխան հեռագրով Ջեմալ փաշան սպառնաց Բ. Շաքիրին, որպեսզի նա այլևս հեռագիր չուղարկի: Իսկ գլխավոր հրամանատարի տեղակալին ուղղված հեռագրում գրեց. «Ես նման նահանգապետի և հրամանատարի չգիտեմ: Ինչո՞ւ է այդ անձը խառնվում այս գործերին»...

Հարյուր հազարավոր մարդկանց վերաբնակեցումը հազարավոր կիլոմետր հեռավորության վրա ընկած շրջաններում, առանց նախապատրաստության և կազմակերպման, ինչ որ բանվոր հիշեցնում է ժողովուրդների գաղթը հին ժամանակներում: Կովկասյան, իրաքյան և սիրիական ռազմաճակատներում կռվող բանակների թիկունքային ապահովման աղբյուր հանդիսացող շրջանները դարձան զանազան համաճարակների տարածման հրապարակներ: Պայմանները, որոնցում ապրում էին վերաբնակեցվածները, ավելի քան բարենպաստ էին խոլերայի և բծավոր տիֆի տարածման համար: Նրանք իրենց ճանապարհին տարածում էին այդ հիվանդությունները, և համաճարակը հասավ կանոնավոր բանակի զինվորներին:

Հետևանքն այն եղավ, որ զոհերի թիվը ազգաբնակչության և զինվորների շրջանում ավելի փոքր չէր, քան բռնագաղթվածների շրջանում...

Մենք հրահանգավորման նպատակով գտնվում էինք Ջեբել-Դրուզի լեռներում: Մի անգամ երեկոյան գնացինք ամայացած գյուղը: Ի պատիվ Ջեմալ փաշայի վրանները զարդարված էին դրոշակներով: Փաշային ծափահարություններով ընդունող բնակչության մեջ մենք տեսանք մերկ, հյուծված, կմախք հիշեցնող մարդկանց: Նրանք լռում ու չէին ծափահարում: Դրա համար նրանք ուժ չունեին: «Ովքե՞ր են այս մարդիկ»,- հետաքրքրվեցի ես ու իմացա՝ տեղահանվածներ էին...[1]

1. **Ali Fuad Erden** Birinci Dünya Harbinde suriye hatirlari, Cilt I, Istanbul, 1954, s. 120-123.

Հալիդե Էդիպ Ադվար՝ գրող, հասարակական գործիչ

-Հայտարարություն տպագրված թուրքական «Վազքբ» թերթի 1918 թ. հոկտեմբերի 21-ի համարում

Այն օրերին, երբ մենք զորեղ էինք, աշխատեցինք քրիստոնյաներին, մասնավորապես հայերին, միջնադարյան եղանակներով բնաջնջել... Այսօր մեր ազգային կյանքի ամենատխուր և սև օրերն ենք ապրում: Ամերիկան և Անգլիան մեզ համարում են մի պետություն, որն իր անմեղ հպատակներին ու զավակներին է կոտորել:[1]

-Թուրքերն ապացույց տվին, որ իրենք անկարող են քաղաքակիրթ կառավարություն կազմել:[2]

-Հեռագիր Մուսթաֆա Քեմալին (10 օգոստոսի 1919 թ.)

Իթթիհադի արածը (ջարդերը) ամբողջական և լրիվ չէր, որի հետևանքով փոքրամասնությունները շարունակում են գոյություն ունենալ և խաղաղության դաշնագրի հոդվածներն ինչպիսին էլ լինեն, քրիստոնյա փոքրամասնությունները շարունակելու են մնալ: Նրանք վայելելու են օսմանյան քաղաքացիների առանձնաշնորհումները և հենվելով օտար երկրների՝ եվրոպական որևէ ուժի վրա, միշտ էլ դժվարությունների պատճառներ են առաջացնելու և տարեցտարի մեր անկախությունից ինչ-որ բան կորցնելու ենք հօգուտ այդ փոքրամասնությունների:[3]

-Նորվեգացի լրագրողին քեմալական շրջանի մասին

Մենք վտարեցինք մեր հույն հպատակներին, ամեն ինչ արեցինք նրանց արմատախիլ անելու համար: Հայերի հետ մենք անում ենք նույն բանը: Նպատակին հասնելու համար մենք դիմում ենք միջնադարյան եղանակների... Կառավարիչները, պրեֆեկտները, պաշտոնատարները, որոնք օգտվում են բացարձակ իշխանությունից, այսօր էլ կատարում են զարշելի հանցագործություններ... կատարվում է հանցագործ ոճրագործություն... Անկարայում գործում են քրիստոնեական փոքրամասնություններին վերացնելու կազմակերպություններ:[4]

1. «Ժամանակ», 22 հոկտեմբերի 1918:
2. "La Renaissance", 22 դեկտեմբերի 1918:
3. **M. G. Kemal** A speech, October, 1927, Leipzig, 1927, s. 84.
4. **Paul du Veou** La Passion de La Cilicie, 1919-1922, Paris, 1954, p. 54.

Թուրքական կառավարության կարծիքը (1919 թ.)

Միություն կազմակերպության մեղքը, որը մշակել և մտածված իրականացնում էր ոչնչացման ու կողոպուտի այդ ներքին քաղաքականությունը, ակնբախ է: Նրա պարագլուխները պատկանում են մարդկության ամենամեծ հանցագործների շարքին:

...Թուրք ժողովուրդն իր գլուխը խոնարհում է հայ ժողովրդի ողբերգության առաջ: Դա նա անում է տխրությամբ՝ հայ ժողովրդի և ամոթով՝ իր համար: Նա խոստովանում է դա և պարտավորություններ է իրականացնում, որոնք հետևանք են այդ իրադրության: Բայց թուրք ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն, որ կապված է իր անարժան ղեկավարների գործողությունների հետ և նրանց չի ճանաչում...

...Թուրքերն իսկապես սպանել են հայերին, կոտորածներ կազմակերպել, կողոպտել և ավերել նրանց տները:[1]

Թուրք Կարինից

(Կարինում հայ ընտանիքը փորձում է իր կահկարասիները վաճառել: Թուրքը չնչին գին է առաջարկում, հայն առարկում է): Հետևում է թուրքի պատասխանը. «Դուք գիտեք, որ ես դրանք առանց վճարելու եմ տանելու տունս: Դուք քիչ անց դրանք ձգելու եք ու հեռանաք»:[2]

Թուրք ուսուցիկան

Երբ քարավանը կանգ է առնում ճանապարհին մահացածին թաղելու, տեղահանվածներին հրամայում է.

-Ելեք, մի մեռածի համար չենք կարող քարավանը կանգնեցնել:

Հայեր.- Էֆենդի, մենք կաթոլիկ ենք...

Ոստիկան.- Քեֆիր օղլու, ի՞նչ կաթոլիկ, ի՞նչ բան, աղբը չոր ու թաց ունի՞, բոլորը նույնն են:[3]

Թուրք գյուղացին բռնագաղթվածներին

Երեխաներին տվեք, վաղը այստեղից քշվելու և բոլորդ սպանվելու եք: Երեխաները մեղք են, տվեք մեզ:[4]

1. The Turko-Armenian Question. The Turkish Point of View, Costantinople,1919, p. 84.

2. **Մ. Տեռքմեճեան** Արեան հետքերով, Անթիլիաս, 1960, էջ 9:

3. Ն. տ., էջ 14:

4. Ն. տ., էջ 16:

Թուրքը հայ կղային

Մեզ տղա է պետք: Քրդին ասացինք մի տղա գտնի, բերի: Դու հիմա մեր զավակն ես: Իսլամություն պետք է ընդունես... Սրանից հետո անունդ Հասան է:

(Ցույց տալով ճանապարհին թափված բազմաթիվ դիակները, շարունակում է). «Հասան, տես իսլամ չեղողների վիճակն այս է, նրանք քյաֆիրներ են, մի նոր քարավան էլ է գալու, որ սպանենք»...

...Լեռան կողի այն բույսերի ճյուղը տեսնո՞ւմ ես: ...Երբ բոլորին (հայերին) վար նետեցինք, նրանցից մի աղջիկ այդ ճյուղից բռնեց և կախվեց: Վերևից քարերով նշան բռնեցինք, քար քարի ետևից նետեցինք, մինչև որ աղջկա գլուխը պատռեցինք:[1]

Նույն թուրքը

Ահմեդ չաուշը Սևերիկից եկել է, գյուղերում ապաստանած հայերին հավաքում են, որ սպանեն...[2]

Մի այլ թուրք

Ահմեդ չաուշը եկավ մեր գյուղ, հավաքեց հինգ հայ կին: Հետը մի քուրդ էլ վերցրեց և գյուղից գնաց: Ահմեդ չաուշը քրդին հրամայեց այդ կանանց սպանել:[3]

Ահմեդ չաուշի երկխոսությունը չորս տարեկան երեխայի հետ

-Դու ո՞ր ազգին ես պատկանում:

-Ես հայ եմ:

-Հայրդ ու մայրդ ի՞նչ եղան:

-Տաճիկները սպանեցին:

-Երբ մեծանաս, դու տաճիկ սպանելո՞ւ ես:

-Այո, երբ մեծանամ, ես էլ եմ սպանելու:[4]

---

1. **Մ. Տեոքմեճեան** Արեան հետքերով, Անթիլիաս, 1960, էջ 9:
2. Ն. տ.:
3. Ն. տ., էջ 58:
4. Ն. տ., էջ 61:

Թուրքացված փոքրիկ տղա

Ես ժամանակին կեավուր էի, ինձմէ փոքրիկ եղբայր մըն ալ ունեի, իսլամ մայրիկիս հետ գիւղին վերի ժայռերը բարձրացանք, մայրիկս ինձ դանակ մը տուաւ և ըսաւ. «Այս դանակով եղբորդ գլուխը կտրէ, որ լաւ իսլամ եղած ըլլաս և անոր աղվոր ուտելիքները միայն դու վայելես»:

Կտրեցի եղբորս գլուխը: Ժայռէն վար նետեցինք զայն ու տուն վերադարձանք:[1]

Մահմեդականի պատմածը

Մի անգամ... 2 000-հոգանոց քարավան են բերում, բոլորը ձիերով ու ջորիներով: Հարուստ քարավան էր: Մեր չաուշը սրանց առաջնորդում է Եփրատի ափերը: Մի լեռնոտ վայրում նրանց գրաստներից իջեցնում են և խուզարկություններ սկսում: Խուրջինները լցվում են ոսկիներով ու զարդեղենով: Քարավանից անջատում են 20-25 աղջիկ, խուրջինների հետ անվտանգ տեղ դնում և մի ժանդարմի պահակ նշանակում, իսկ իրենք մնացած ժողովրդին մի քիչ հեռացնում են ու սկսում ջարդել: Փակված աղջիկներից մեկը ժանդարմին զբաղեցնում է, իսկ մյուսները վերցնում են խուրջինները և միասին նետվում Եփրատ:... Քիչ անց ջրի երեսին երևացին դիակներ ու դատարկ խուրջիններ:[2]

Թևֆիկ Ջովդար՝ Թալեաթի կենսագիր

Իթթիհադը երկդեմ կազմակերպություն էր. այն բացի լեգալ կառույցներից ուներ նաև անլեգալ օղակներ, ինչը Թալեաթին հնարավորություն տվեց ապահովել ճեմիյեթի ապօրինի գործունեությունը:[3]

Սիմեդ Ռիզայի նամակը խորհրդարանին

Աննախադեպ և անօրեն ոճիրները գործվել են նախորդ կառավարությունների կողմից արաբ , հայ և հույն հայրենակիցների դեմ, և պահանջում են անհապաղ ոճրագործներին դատի տալ: ...Միայն այս կերպ վարվելով ներկա կառավարությունը ապացույց կտա, թե գիտե իր խոստումները հարգել:[4]

1. **Մ. Ավետիսեան,** Հայ ազատագրական... յուշամատեան, էջ 148:

2. Ն. տ., էջ 64:

3. **T. Govdar** Tallat Pasa. Bir Örgut usta sinin yasam Öyküsü, Ankara, 1984, s. 190, 210

4. «Ազատամարտ», 26 նոյեմբերի 1918 թ.:

-Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերը դաժանորեն սպանվեցին:[1]

(Առաջին աշխարհամարտի տարիներին) ես պաշտպանեցի հայերին: Նրանք, ովքեր նույնիսկ բոլորովին անմեղ էին, միևնույնն է, ոչնչացվում էին հենց միայն այն պարզ պատճառով, որ հայ էին:[2]

Ռեշիդ Ակիֆը՝ երեսփոխան, 1918 թ. խորհրդարանում հայտարարեց

Մինչ խոնարհաբար կընդունեի պետության նախագահի պաշտոնս, ի զարմանս ինձ, պատահաբար աչքիս ընկավ պաշտոնական հրամանների կապոցին: Հրամաններից մեկը ՆԳ նախարարության հրամանն էր բռնագաղթի մասին: Մյուսը խիստ գաղտնի շրջաբերական էր ուղարկված իթթիհադի կենտրոնի կողմից: Այն նշում էր երթուղիները, գավառների ստորաբաժանումները և հորդորում շարունակել ի կատար ածելու չարագույժ պլանը: Դրա մղումով ելուզակներն անցան եռանդուն գործողությունների, որոնց հետևանքը դարձան հրեշավոր կոտորածները:[3]

Սիմեոնը Զոհրապի և Վարդգեսի սպանության մասին

Ոչ միայն Վանը և շրջակայքը Քաաբայի սուրբ հողին վերադարձրեցի, այնպես որ այնտեղ նույնիսկ մեկ հատիկ հայ գտնել չես կարող... սպանեցի հայ երեսփոխաններ Զոհրապին ու Վարդգեսին: Զոհրապին բռնեցի գետին տապալեցի, ոտքերիս տակ առա և մի մեծ քարով գլուխը ջախջախեցի՝ մինչև որ մեռավ:[4]

Շեֆիկ՝ Բուլանըխի կառավարիչ

Հոջա Իլյասը (Մուշից խորհրդարանի պատգամավոր) քրիստոնյա աղջիկ բռնաբարելու անսանձ մարմաջ ուներ:

Հոջա Իլյասը Դիարբեքիրի երեսփոխան Ֆեյզիի պարծենկոտությա-

1. Meclisi Mebusan Zabit Ceridesi, 3-րդ գումարման 5-րդ նստաշրջան, 2-րդ նիստ, h. 1, էջ 9:

2. Meclisi Mebusan ve Ayan Reisi Ahmed Riza Beyin Antlari, Istlari, Istanbul, 1988, s. 58.

3. Meclisi Mebusan Zabit Ceridesi, 3-րդ գումարման 5-րդ նստաշրջան, h. 1, էջ123:

4. A. Refik (Altinay) Iki komite- Iki Kital, Istanbul, 1919, s. 38-39.

նը, թե ինքը 600 հայի վանքում սպանել է տվել, պատասխանել է. «600-ը ինչ է, ես Մշո համայն ժողովրդին արմատախիլ արեցի»:[1]

Մ. Արիֆի՝ ՆԳ նախարար, ճառը օսմանյան խորհրդարանում (1918 թ.)

Ներկա պայմաններում կառավարությունը միայն մի բան կարող է անել՝ տարագրվածներին վերադարձնել իրենց բնակավայրերը: ...Դրա գործադրման եղանակ կա և այդ եղանակը ձեր կարծածի չափ դյուրին չէ:

Տարագրվածները վերադառնալով այդ բնակավայրերում կարո՞ղ են օթևան գտնել, տաք ճաշ ուտել: Կառավարությունը կողմնակից է այս գործն աստիճանաբար կատարել, աստիճանաբար քանդված գյուղերը նորոգել, դրանք կրկին բնակելի դարձնել, ինչը ոչ կառավարության և ոչ էլ որևէ մեկ ուրիշ կարողության սահմաններից դուրս է: Ուստի վերականգնման այս խնդիրը պետք է թողնել ժամանակին:

Պարոններ, այս ժամանակավոր օրենքը մեր ներկա ժամանակին անհարիր օրենք է, և ես այս բարձր ժողովից խնդրում եմ, որ որպես հրատապ խնդիր, այս օրենքը շուտափույթ չեղյալ համարեք: ...Դրանից ավելի հռոի և մեր դարի ոգուն հակոտնյա շատ օրենքներ կան (որոնք բոլորն էլ պետք է չեղյալ հայտարարվեն):[2]

Մեհմեդ Էմին՝ Տրապիզոնի երեսփոխան

Այո, այս օրենքի կիրառման ընթացքում երկրում մի շարք ոճիրներ գործադրվեցին: Ես արդեն հայտարարել եմ, որ քանի դեռ կառավարությունը չի խոստանա, որ կապահովի երկրում կատարված բոլոր ոճիրների հետաքննությունը և պատասխանատուներին պատժելու գործը, ես այդ կառավարությանը վստահության քվե տալ չեմ կարող... Երկրում գործած ոճիրների հետաքննությունը և պատասխանատուներին պատժելը օրինականության և արդարության պահանջն է, ու թե՛ ժողովը և թե՛ ազգը լրիվ համաձայն են այդ պահանջին: Այո, պարոնայք, ես էլ եմ ասում, որ մեր կառավարական մարդիկ շատ ընտանիքներ կանանցով ու երեխաներով ջարդեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին: Որքա՛ն հայ է այսօր պակասում: Եթե նկատի ունենանք նրանց նախապատե-

1. S. Aksin Istanbul, Hükümentleri ve milli Mücadele... son Mesrutiyet (1919-1920), Istanbul, 1992, s. 354.

2. Վ. Տատրեան Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումով, Մասաչուսեթս, 1995, էջ 15:

ռազմական ժամանակի 1 200 000 թիվը, որից հանած վերապրողների թիվը, մնացած բոլորը ոչնչացվեցին ու սպանվեցին, նրանց ունեցվածքն էլ ավարի տրվեց: Այս հարցում որևէ կասկած լինել չի կարող: Ես էլ ցանկանում ու պահանջում եմ, որ հանցավորները պատժվեն:

(Խորհրդարանը տարագրության մասին այս օրենքը անվավեր համարեց):[1]

Մեհմեդ Էմին

Զնդեթ բեյը Դեր Զորի մերձակայքում ավերել տվեց բռնագաղթված հայերի վրանային ավանը և գազանաբար ոչնչացրեց 70 հազ. հայ: դեր Զորի և Ռաս ուլ Այնի միջև ընկած տարածքներում գայլերի ու թռչունների հոշոտումներից ավելացած հայերի ոսկորներից բլուրներ առաջացան:

Հայերից շատերի տները քանդել են, ավերել, մեծ ու փոքր, ծեր ու երեխա՝ բոլորն էլ մեռած են...

Այս մեծ ոճիրին մասնակցած պաշտոնյաներին պետք է պատժել:[2]

Վանի թուրք պատգամավոր

Իթթիհադը թաքուն գրգռում էր մահմեդական ժողովրդին, որպեսզի հարձակվեին քրիստոնյա ժողովրդի վրա:[3]

Ռիզա Թևֆիկ՝ կրթության նախարար

Տուժածների վնասների հատուցումը հրատապ խնդիր է, մենք չենք կտրի այն ճյուղը, որի վրա նստած ենք:[4]

Շերիֆ փաշա՝ պետական խորհրդի նախագահ. Նախ պետք է պատվով դուրս գալ խաղաղության բանակցություններից և ապա միայն ապահովել երկրին պատկանող տարրերի և տարբեր ազգությունների իրավունքները:[5]

---

1. «Ժամանակ», (Կ. Պոլիս), 21 դեկտեմբերի 1918 թ.:
2. «Ժամանակ», 27 նոյեմբերի 1918 թ.:
3. **Ibrahim Asrasin Hatiralari Yeni Istikbal** 21 ապրիլի 1965 թ.:
4. **Վ. Տատրեան** Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումով, էջ 18-83:
5. Ն. տ.:

Մեհմեդ Էմին. Նախկին, մասնավորապես Թալեաթի, կառավարությունները վատ գործեր շատ են կատարել, և մենք այդ մասին չորս տարի լռել ենք և լռել ենք ճշմարիտ տեղեկատվության բացակայության հետևանքով: Իսկ ներկայումս այդ հարցում շտապելը վտանգավոր է:

Նկատում եմ, որ մեր գործընկերները, հույն հայրենակիցներն ու հայ խորհրդականները մեծ տարողությամբ արդարություն են պահանջում և իրավունք ունեն... Եկեք նրանց պահանջները քննենք և հետամնացություն չդրսևորենք...[1]

Հասան Ֆեհմի՝ Սինոպի պատգամավոր. Խոսքերդ հետ առ:[2]

Մեհմեդ Էմին. Ոչ, հետ չեմ առնի, դա իմ անձնական կարծիքն է:[3]

Իլյաս Սամի՝ պատգամավոր Տարոնից, կարոնահայության ջարդերի կազմակերպիչ. Պարոններ, այս խնդիրը մարդասպանությա՞ն, թե՞ արյունալի բախումների խնդիր է: Այս հարցը ձեր ներկայությամբ պիտի պարզաբանեմ: Թուրքերը հանցավոր հայտարարվեցին, ամբողջ ազգը հանցավոր որակվեց... այդ բոլորը զրպարտություն են:[4]

Մեհմդեդ Էմին. Անձամբ եմ ստուգել, Օրդու կազայի կայմակամը, հայերին նավակները լցնելով՝ Սամսոն ուղարկելու պատրվակով, ծովը թափել տվեց: Լսեցի, որ (Տրապիզոնի) կուսակալ Ջեմալ Ազմին նույն բանն է արել: Չնայած երեք տարի զբաղվեցի, սակայն կուսակալի դեմ որևէ բան անել չկարողացա: Ասացին պատերազմական գոտի է:[5]

Մեհմեդ Էմին՝ բանասպեղծ. (Կոտորածները կատարվել են թրքության անունով) Քավ լիցի, հանուն զուլումի է եղել, անիծում ենք զուլում անողներին:[6]

1. Ն. տ.:
2. Ն. տ.:
3. Ն. տ.:
4. Ն. տ.:
5. Ն. տ.:
6. Ն. տ.:

Իլյաս Սամի. Բայց չէ՞ որ տեղահանություններն ու զուլումները որոշակի արարքների հետևանք էին...

Աչքովս եմ տեսել, որ հայ հայրենակիցներին ջարդելու և ոչնչացնելու քաղաքական հրամանի (1895 թ.) գործադրման համար վարչական միջոցներ ձեռնարկելու հատուկ հրահանգներ ստացած մութեսարիֆը... խարազանը ձեռքին արգելում էր ժողովրդին (կոտորել): ...Մյուս կողմից սակայն նշան էր անում՝ «Արե՛ք, արե՛ք»: Միակ մարդիկ, ովքեր արգելք հանդիսացան այդ նախճիրին, իսլամի կրոնավորներն ու իմաստուններն էին...

Ես, ձեռքս կրծքիս դրած և լրիվ համոզված ասում եմ, որ մեր ոչնչացված, տեղահանության և արտաքսման ենթարկված հայրենակիցների 80 տոկոսն անմեղ մարդիկ էին, որոնք զոհ դարձան տգիտությամբ ընդունված որոշման:

...Անմեղ ժողովրդի դեմ գործադրված զուլումների կապակցությամբ նողկանքս արտահայտելով՝ պահանջում եմ, որ (դրանց հեղինակները) խստորեն պատժվեն...

Գեղամ էֆենդին (Տեր-Կարապետյան) գրում է, թե «Մուշը թնդանոթային ռմբակոծությամբ պատժվեց»: Այո, թնդանոթով պատժվեց: Ահա նման ռմբակոծություններով է , որ, հանուն ամբողջ մահմեդական և ոչ մահմեդական հավաքականությունների, երկիրն ավերակների վերածվեց:[1]

Մուստաֆա Արիֆը՝ ՆԳ նախարար, ընթերցեց սուլթանի հրովարտակը (21 դեկտեմբերի 1918 թ.) խորհրդարանը ցրելու վերաբերյալ և ասաց

Հայերի դեմ գործադրված ոճիրների պատճառով մեր երկիրը վերածվեց վիթխարի սպանդանոցի:[2]

Ալի Մոլլայի՝ արդարադատության նախարար, հայտարարությունը խորհրդարանում (25 նոյեմբերի 1918 թ.)

Ներկա կառավարությունը մի ելք ունի՝ պատժել կառավարության ամբողջ կազմը՝ սկսած վիլայեթներից: Կոտորածին մասնակցած հասարակ ժողովուրդը պիտի դատվի հասարակ դատարանների կողմից աս-

1. **Վ. Տատրեան** Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումով, էջ 18-83:

2. "La Renaissance", 22 դեկտեմբերի 1918 թ.:

տիճանաբար, երբ նրանց դեմ դատ բացվի, քանի որ շատ ոճիրներ իրականացվել են ամբոխների կողմից պաշտոնյաների հովանավորությամբ և մեղսակցությամբ:

Տարագրության ընթացքում ջարդ անողները կամ ջարդին մասնակցողները՝ լինի կուսակալ թե զինվորական, սովորական անձանց նման դատվելու են պարզ դատարաններում:

Իսկական հանցագործները դատվելու են բարձր կարգի դատարաններում, որոնց վրա կառավարությունը որևէ իշխանություն չպետք է ունենա:

Պաշտոնատարների վերաբերյալ տարբեր կարծիքներ կան կառավարությունում և Պետական խորհրդարանում. կառավարությունը գտնում է, որ նրանց պետք է դատել արտակարգ դատարաններում, իսկ Պետական խորհուրդը՝ սովորական (շարքային) դատարաններում:[1]

Մ. Արիֆ՝ ՆԳ նախարար

Աղոտ լույս է սփռվում հայերի դեմ գործված վայրագությունների վրա, վայրագություններ, որոնք առաջացրին ամբողջ մարդկության զայրույթը: Մեր երկիրը մեզ հանձնվեց՝ վերածված մի հսկայական սպանդանոցի...

Մեր այն ժամանակվա ղեկավարները ներշնչված ավազակությունով, տարագրությունն իրականացրին այնպիսի ձևով, որ նույնիսկ ամենահանդուգն և արյունարբու ավազակներն այդպես չէին վարվի...

Հրամայելով հայերին Դեր Զորից աքսորել, կառավարությունը չէր մտահոգվել նրանց արաբական ցեղերի մեջ տեղավորելու և նրանց համար սնունդ հայթայթելու խնդիրներով:

Ի՞նչ էր կառավարության նպատակը...

Ուզեցին բնաջնջել (հայերին) ու բնաջնջեցին: Չի կարելի թաքցնել, որ (բնաջնջման) որոշումը տրվեց կենտրոնական կոմիտեի ազդեցիկ անդամների և գործադրվեց կառավարության կողմից...

Նրանք նախընտրեցին բնաջնջել հայերին:[2]

1. «Ժամանակ», 28 նոյեմբերի, 1918 թ.: "La Renaissance", 10 դեկտեմբերի 1918 թ.:

2. "La Renaissance", 14 դեկտեմբերի 1918 թ.:

Օսմանյան կիսապաշտոնական «Ալեմդար» թերթը գրում է

Ի՞նչ են տեղահանությունն ու կոտորածը: Մի քանի գաղափարապաշտ հայրենասերների կողմից մի հիմար ծրագրի գործադրություն...

Բնաջնջման այս քաղաքականությունն իրականացվեց կոտորածներով ու կողոպուտներով:

Երիտասարդ թուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեն և գործադիր մարմինը՝ նախարարների խորհուրդը, ինչպես նաև պաշտոնյաները, ամենավերևից մինչև ամենաստորադասը պատասխանատու են:[1]

Հասան Ֆեհմի՝ երեսփոխան

(Հայերի բնաջնջումն ազգին ազատեց գալիք վտանգներից): Դուք գիտեք, որ բոնագաղթի հարցերի շուրջ աշխարհով մեկ աղմուկ են բարձրացրել, և մեզնից յուրաքանչյուրին փակցվել է մարդասպանի պիտակ:

Մինչև այս ամենի տեղի ունենալը մենք նախապես գիտեինք, որ ողջ աշխարհն անբարյացակամ կարծիք է կազմելու և զզվանք ու ատելություն է տածելու մեր նկատմամբ: Ինչո՞ւ ենք ինքներս մեզ թույլ տալիս կրելու մարդասպանի պիտակ:

Դրանք գործողություններ (կոտորածներ) են, որ կարող են տեղի ունենալ միայն հրամանով ինչ-որ բանի անվտանգությունը պաշտպանելու համար, իսկ այդ բանը շատ ավելի թանկ է, քան մեր սեփական կյանքը՝ դա մեր հայրենիքի ապագան է:[2]

Ֆուադ բեյի՝ խորհրդարանի անդամ, մեղադրանքները Սայիդ Հալիմի և Թալեաթի կառավարություններին

1.Առանց պատճառի և անժամանակ ձևով պատերազմին մասնակցեցին:

2.Պատերազմ սկսելու պատճառների մասին խորհրդարանում սուտ ու սխալ հայտարարություններ կատարեցին:

3.Զորահավաքից հետո և մինչև պատերազմի սկսվելը համաձայնական տերությունների կողմից եղած պատվաբեր և շահեկան առաջարկները մերժեցին առանց Գերմանիայից երաշխավորություն ստանալու և

1. "La Renaissance", 14 և 22 դեկտեմբերի 1918 թ., "Vakif", 13 դեկտեմբերի 1918 թ., «Ժամանակ», 25 դեկտեմբերի 1918թ.:

2. T. B. M. M., 1-ին գումարման 1-ին նստաշրջան, հ. 1, էջ 177:

պատերազմին մասնակցելուց առաջ կայսրության համար որևէ շահ ապահովելու:

4.Պատերազմական գործողություններն ապիկար մարդկանց հանձնեցին, ռազմավարության սկզբունքներին չհամապատասխանող հիմար ձեռնարկումներ կատարեցին և անձնական շահերի համար հայրենիքի կենսական շահերը մսխեցին:

5.Մարդկային օրենքներին և, մասնավորապես, խորհրդարանի ոգուն հակառակ ժամանակավոր օրենքներ հրատարակեցին և երկիրը ոճիրների թատերավայր դարձրեցին:

6.Ռազմագիտության հետ առնչություն չունեցող, հետևաբար թաքցնելու որևէ պատճառ չունեցող եղելություններին տեղյակ չպահեցին՝ պարզապես իրենց դիրքերը չխախտելու նպատակով: Մի օր էլ առանձին պատճառով թշնամուն տվեցին ոտնակոխ անելու հայրենիքը և նվիրական հայրենիքի մի մասի ապագայի հարցում ազգին պարզաբանումներ չտվեցին:

7.Պատերազմի տարիներին, մասնավորապես Ռուսաստանի կազմալուծվելուց հետո, համաձայնական տերությունների կողմից քանիցս կրկնված հաշտության առաջարկումները մերժեցին և դրանով ազգին ու հայրենիքին հասցրին այսօրվա ցավալի վախճանին:

8.Պատերազմի պատճառած դժվարություններում, փոխանակ միջոցներ գտնել ժողովրդին օգնելու, մի քանի մարդկանց համար հարստություն ապահովելու դիտավորությամբ զեղծումների դռներ բացեցին:

9. Անտանելի և ապօրինի ռազմական և քաղաքացիական գրաքննություն հաստատեցին և եվրոպական մամուլի մուտքը կայսրություն արգելեցին:

10.Երկրում իրարանցում առաջացրին՝ կյանքի, ինչպես նաև պատվի վրա հարձակվող մի շարք հրոսակախմբերի օգնելով:[1]

«Ալեմդար»

Միայն ռազմական դատարաններն ի վիճակի չեն արդարություն ապահովել, քանի որ վերջին 5-6 տարում գործադրված խժդժություններն աներևակայելի են:[2]

1. «Ժամանակ», 26 նոյեմբերի 1918 թ.:
2. "La Renaissance", 12 մարտի 1919թ.:

-Թալեաթն ու Էնվերը աշխարհակալության սրիկաներ ու արյունարբուներ են:[1]

Յեղասպանության հանցագործներին դատելու համար Կ. Պոլսում ստեղծվեց 3, իսկ վիլայեթներում՝ 10 ռազմական դատարան

1-ին շրջան. Անկարայի և Կաստեմունուի նահանգ և Պոլսի առանձին անկախ գավառ:

2-րդ շրջան. Տրապիզոնի նահանգ ու Սամսոնի գավառ:

3-րդ շրջան. Բուրսայի նահանգ, Էդիրնեի նահանգ և Չատալջայի գավառ:

4-րդ շրջան. Այդընի կամ Զմյուռնիայի նահանգ, Չանակկալեի գավառ և Կարասիի առանձին անկախ գավառ:

5-րդ շրջան. Կոնիայի նահանգ, Էսքիշերիի, Կարահիսարի, Կեոքահիայի և Անատոլիայի գավառներ:

6-րդ շրջան. Սեբաստիայի նահանգ, Կեսարիայի և Յոզղաթի գավառներ:

7-րդ շրջան. Դիարբեքիրի ևԽարբերդի նահանգներ:

8-րդ շրջան. Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգներ:

9-րդ շրջան. Ադանայի նահանգ և Մարաշի գավառ:

10-րդ շրջան. Ուրֆայի, Այնթափի և Զորի գավառներ:[2]

Սիմեոն Ռիզան, 1918 թ. դեկտեմբերի 2-ին, բացելով օսմանյան պառլամենտի նիստը, հրապարակեց հայտարարություն

Սկսած պատերազմին մեր մասնակցությունից մինչև Թալեաթ փաշայի կաբինետի անկումը կառավարության կողմից գործած սխալների և ոճիրների, ջարդի, հրապարակային ոճրագործությունների, անձի ապահովության, կալվածքների և շենքերի բռնագրավումների և բոլոր օսմանցիների նկատմամբ նման հարստահարություններ ու ոճիրներ գործած լինելու համար պահանջել էի, որ ընդհանուր դատախազությունը հանրային իրավունքների անունով դատ սկսի, և ժամ առաջ ոճրագործները երևան հանվեն և արդարադատությանը հանձնվեն:[3]

1. "La Renaissance", 11 հունվարի 1919 թ.:
2. "La Renaissance", 13 հունվարի 1919 թ.:
3. «Ժամանակ», 13 դեկտեմբերի 1918 թ.:

Մուսա Քյազիմ՝ շեյխ ուլ իսլամ

Իմ կարծիքը մի հարցրեք և ինձնից քվեարկել մի պահանջեք, կուսակցությունն այդպես է ուզում և այդպես էլ լինելու է:[1]

Պոլսի թերթերը խորհրդարանի մասին

-Խորհրդարանն իր հերթին եղել է երիտասարդ թուրքերի մեղսակիցն ու գործակիցը:

Մեղսակից, այն լռությամբ, որ գիտակցաբար պահպանեց ամենազզվելի ոճիրների գործադրման ընթացքում, չնայած տեղյակ էր այդ ոճիրների կազմակերպմանը, որոնք տեղի ունեցան իրենց (երեսփոխանների) աչքի առջև:

Գործակից, որովհետև երեսփոխաններից շատերը անձամբ վարեցին կոտորածները:

Նրանք քվեարկեցին մի շարք ժամանակավոր, անօրեն, եղեռնագործ օրենքների օգտին:[2]

-Տարիներ շարունակ այս երեսփոխանական ժողովը թույլատրեց, որ գործվեն պատմության մեջ աննախադեպ կոտորածներ, կողոպուտներ, գողություններ ու ապօրինությունների մի անհամար շարք:[3]

-...Մի ժողով, որ նշանավոր է ամեն մի առաջարկությանը իր տված հավանությամբ՝ նույնիսկ Ներոնի ժամանակներից սկսած գոյություն ունեցած ամենաոճրագործ առաջարկներին:[4]

Երեսփոխանների մասին

Հայերը կոտորվեցին, նրանք ծափահարեցին,
Հույները տարագրվեցին, նրանք ծափահարեցին,
Արաբները բնաջնջվեցին, նրանք ծափահարեցին:[5]

1. "Takvim-i Vekai", թիվ 3596:
2. "La Renaissance", 13 դեկտեմբերի 1918 թ.:
3. "La Renaissance", 24 դեկտեմբերի 1918 թ.:
4. «Արիամարտ,, 23 դեկտեմբերի 1918 թ.:
5. Ն. տ.:

-Մեր երկրի նախկին ղեկավար ծերակուտականները և երեսփոխանները պետք է անապատ քշվեին և այնտեղ քավեին իրենց մեղքերը:

Ամենից անտրամաբանականն է խոսել, երբ մարդ պիտի լռի ու լուռ մնալ, երբ պետք է խոսի:[1]

Սայիդ Մոլլա բեյի՝ արդարադատության նախկին նախարար, խոստովանությունը երիտթուրքերի դատավարությունում

Ինչքա՛ն մարդ են սպանել իրենց սեփական ձեռքով պետական քարտուղարի օգնականը և նույնիսկ երկիրը ղեկավարող նախարարները: Նրանց լկտիությունն այնտեղ էր հասել, որ երբ կատաղում էին, ապա ժողովներում միմյանց նկատմամբ օգտագործում էին «կատիլ» է հանցագործ պիտակը: Զրուցակիցն առարկում էր, ասելով. «Եթե ես մեկ մարդ եմ սպանել, ապա դու՝ հարյուրների, հազարների, այսինքն իսկական հանցագործը դու ես...»:

Հայերի և հույների կոտորածը կատարվել է դեռնմենների ձեռքով, քանի որ ցանկանում էին նրանց տեղը բռնել և տեր դառնալ նրանց հարստությանը:[2]

Մուստաֆա Էդիպի՝ Սելևկիայի նախկին մութեսարիֆ, հայտարարությունը (10 փետրվարի 1919 թ.)

Երիտթուրքերի կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը ասել է. «Թեև (կառավարության) հրամանը արտաքուստ հայերին արտաքսելու մասին էր, սակայն Միություն և առաջադիմություն կոմիտեի վարչության, ներքին գործերի նախարարության նպատակը հայերին բնաջնջելն էր...»:[3]

Ալի Ռիզա՝ մեծ վեզիր

Յուրաքանչյուրը կհաստատի այն իրողությունը, որ կառավարությունը սեփական նախաձեռնությամբ որոշում է ներկայացրել արդարադատության ղեկավարությանը կազմակերպելու օրենքով նախատեսված անհրաժեշտ հետաքննություններ ու պատժամիջոցներ նրանց հանդեպ, ով-

1. "La Renaissance, 7 փետրվարի 1919 թ.:
2. «Փեյամ» (Կ. Պոլիս), 17 օգոստոսի 1922 թ.:
3. «Յուսաբեր», 1965 թ., բացառիկ, էջ 21:

քեր, օգտվելով պատերազմից (ինչպես նաև ուրիշ հանգամանքներից ելնելով), կազմակերպեցին հայերի ու հույների բռնագաղթն ու կոտորածը:[1]

Դամադ Ֆերիդ՝ մեծ վեզիր

Անհապաղ պետք է որոշում կայացնել պատժելու համար բոլոր մեղավորներին, որոնք համայն մարդկության թշնամանքին են արժանացել:[2]

Սիմեոն Ռեշիդ՝ ներքին գործերի նախարար

-Լինելով Հալեպ նահանգի գեներալ-կառավարիչ՝ իմ իրավասությունների շրջանակներում քննադատեցի 1909 թ. Ադանայի հայ անմեղ զոհերի կոտորածը...

Կարող եմ միայն ավելացնել, որ Անատոլիայի և Կիրիխանի հայերը ոչ միայն չեն հարձակվել, այլև նույնիսկ չեն փորձել իրենց պաշտպանել անսպասելի հարձակումներից:[3]

-Բոլոր այս հանցագործությունների պատասխանատուները և դրանց կազմակերպիչները հայտնի են: Նրանց պարագլուխները դեռ գտնվում են Գերմանիայում...

Հայ ազգը դարձավ դրանց բռնի գործողությունների զոհը:[4]

Մուսթաֆա Արիֆ (Դեյմեր)՝ ներքին գործերի նախարար

Մենք նախարարությունում հաշվառեցինք և ուսումնասիրեցինք իթթիհադականների հակահայկական գործողությունների զոհ դարձած հայերի թիվը:[5]

---

1. **Excerpted from Prof. M. Tayyib Gökbilgin** Milli Mücadele Baslarken (At the Start of the National Struggle) vol. 2 (Ankara, Türk Tarih, kurumu, 1959), p. 135.

2. **Excerpted from Fuad Ali Türkgeldi** Gorüp Isittim (The things I saw and heard), 2nd ed. (Ankara, Türk Tarih, kurumu, 1951), p. 197.

3. **C. Tarihier** Gördüklerim-Yaptiklarim 1890-1922, s. 107.

4. **Excerpted from Prof. M. Tayyib Gökbilgin,** Milli Mücadele Baslarken (At the Start of the National Struggle) vol. 2 (Ankara, Türk Tarih, kurumu, 1959), p. 213.

5. Excerpted from Nor Gianle, 13 December, 1918.

Ալի Քեմալ՝ ներքին գործերի նախարար

-Հայոց ցեղասպանության ժամանակ իրականում ոչնչացվել է 800 000 հայ:[1]

-Կառավարությունը ձգտում է մաքրել արյունոտ անցյալը:[2]

Մյունիր (Ակայա)՝ Էրզրումի նահանգապետ

Վտարանդիների պահակախմբերը ենթարկվեցին իթթիհադի կենտրոնական կոմիտեի անդամ Բ. Շաքիրի կողմից տրված թալանելու և կողոպուտի իրավունքին:[3]

Հալիլ Կաթ՝ Արևելյան ռազմաճակատի կորպուսի հրամանատար

Ես բոլոր զենքերով մինչև վերջին (հայ) մարդը երկրի երեսից ջնջելու եմ....

(Ոչնչացել է) 300 000 հայ... Կարող է լինել ավելի կամ պակաս: Ես չեմ հաշվել...[4]

Ֆալիհ Ռիֆկի (Աքայ)

Երբ քննարկում էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիների Հայոց ցեղասպանության և հալածանքների խնդիրը, ես նույնպես նմանություն տեսա դրա և ցեղասպանության միջև: Լատինա-հունական դարձվածքների համադրումով այդ բառը լայն կիրառում ունի: Միաժամանակ կեղծիք համարեցի պնդումը, թե այն իրոք տեղի է ունեցել...

(Հայկական հարցի լուծման համար) հարկ էր գտնել երկընտրանքներ: (Ազգի անունը) ինչո՞ւ ենթարկել խայտառակվելու վտանգի: Մ. Քեմալը նույնպես դեմ էր ցեղասպանությանը:[5]

---

1. Excerpted from Le Meniteur Orienale, 13 March, 1919, Ikdam,Vakit,15 March, 1919, and Haolisat, 17 March, 1919.

2. Excerpted from Prof. M. Tayyib Gökbilgin, Milli Mücadele Baslarken (At the Start of the National Struggle) vol. 2 (Ankara, Türk Tarih, kurumu, 1959), p. 55.

3. Excerpted from Mümr's 14 December, 1918, telegram to the Inquiry Cömmission.

4. Bitmeyen Savas, Istanbul, 1972, s. 241, 274.

5. "Dunya", 17 դեկտեմբերի 1967 թ.:

Ժամանակի թուրքական մամուլ

Եթե այսօր խժդժությունների համար պատասխանատու հեղինակների նկատմամբ չկիրառենք արժանի պատիժներ, ապագա սերնդին կխաթարենք ու կապականենք... Հարկ է այս շատ կարևոր գործում ամենից առաջ դասակարգել հանցագործությունները.

1.Իսկական հեղինակները:

2.Նրանք, ովքեր առաջինների թիկունքում թաքնված գործեցին: Միություն և առաջադիմություն կենտրոնի ազդեցիկ անդամները, նահանգային ակումբների նախագահները...

3.Նրանք, ովքեր գաղտնի կազմակերպությունների մեջ էին, ինչպիսիք են կրտսեր սպաներն ու բանտերից ազատ արձակված սրիկաները:

4.Այն երեսփոխանները, ովքեր չբողոքեցին, ովքեր հավանություն տվին ոճիրներին ու մասնակցեցին կողոպուտին:

5.Հրատարակիչները, որոնք ծափահարեցին բոլոր ոճիրներն ու արարքները... և որոնք հանրային կարծիքը մոլորեցրին ամեն տեսակի խաբեություններով ու ստախոսություններով...

6.Նրանք, ովքեր շահաբեր գործեր հետապնդեցին առևտրի քողի տակ...

7.Մի լեգեոն փաշաներն ու բեյերը, ովքեր շրջապատեցին ավարառուներին և եղան նրանց քծնողներն ու խնկարկուները:[1]

«Միմբեր»

Պատմության հանդեպ մեր ղեկավարների մեծ ու աններելի պատասխանատվություններից մեկն էլ երևան եկավ հայ ազգի նկատմամբ նրանց հոռի ընթացքի մեջ: Եթե նույնիսկ հնարավոր լիներ հայությունը վերացնել աշխարհի վրայից, արդյոք վնասից բացի, օգուտ կլինե՞ր:

«Հայրիդաս» թերթը Դիարբեքիրի կուսակալ դոկտոր Ռեշիդ բեյի վայրագությունների մասին

50 հազարից ավելի կանանց, տղամարդկանց, պատանիների, անմեղ ժողովուրդ սպանեց, 300 հազ. ոսկի և զարդեղեն կողոպտեց:

1. "La Renaissance", 19 դեկտեմբերի 1919 թ.:

«Քյոյլու» (Իզմիր)

(Թուրք ազգը) սպասում է՝ որպես սովորական ոճրագործ և մարդկության թշնամի դատապարտվեն բոլոր նրանք, ովքեր պատերազմ հայտարարեցին, հայերին ու հույներին տեղահանեցին, սպանեցին ու թալանեցին... Օսմանյան պետությունը միայն այս եղանակով կմաքրվի:

«Զաման»

Իշխանության այս հափշտակիչները, այս արյունարբուները հասարակական օրինականության դեմ գործած ոճիրներից բացի, կատարեցին հրեշային խժդժություններ, կոտորածներ, տեղահանություններ:

Այս իսկական ոճրագործներին ներում շնորհելը նշանակում է ավելի ստորանալ քաղաքակիրթ աշխարհի առջև...

...Մենք որդեգրեցինք բնաջնջման քաղաքականությունը, որը մյուս տարրերի նկատմամբ գործադրեցինք մեծագույն բռնաբարությամբ ու այնպիսի կատաղությամբ հետապնդեցինք այն քաղաքականությունը, որ ուզեցինք իրականացնել տարագրության, կոտորածների ու հափշտակության միջոցով:[1]

«Սաբահ»

Ասում են, թե բոլոր թուրքերը մասնակցել են Միութենականների գործած ոճիրներին և զզվելի պղծումներին: Եթե թուրքերն այդ արարքներին մեղսակից չեն եղել, ապա գոնե սրտանց հավանություն են տվել:[2]

«Ալեմդար»

Մենք դատապարտված ենք մի ոճիրով և վարակված ենք մի անբուժելի հիվանդությամբ, որ ժանտախտից սոսկալի է...

Մարդկությունը տատամսում է մեզ մոտենալ, մինչ մենք ուզում ենք, որ նա մեզ ձեռք երկարի...

Դրա համար հաստատեցինք ռազմական արտակարգ դատարան հանցավորներին պատժելու համար...[3]

1. "La Renaissance", 12 փետրվարի և 4 մայիսի 1919 թ.:
2. "La Renaissance", 5 հունվարի 1919 թ.:
3. "La Renaissance"1 և 4 մայիսի 1919 թ.:

«Սաբահ» թերթի խմբագիր Ալի Քեմալը բանավիճելով «Յենի Գյունի» խմբագիր Յոնաս Նադի հետ՝ գրեց

Աշխարհը գիտե, և սա է ճշմարտությունը, որ հայերի կոտորածները կազմակերպվեցին Կենտրոնական կոմիտեի հրամաններով: Այս հրամանները (տեղերը) հաղորդվեցին առանձին պատվիրակների միջոցով և գործադրվեցին ավազակների՝ նույն այդ Կենտկոմի հսկողության տակ:

Այս բանը երևան հանելը մի՞թե թուրքերին ու թրքության դատին ծառայել չէ: Ուզում ես, որ հեռու մնա՞նք այս բանն անելուց և մենք էլ նույն ամբաստանության տակ ընկնե՞նք:[1]

«Թուրքչե Սպամբուլ»

Այս ճշմարտությունները (կոտորածները) շատ բիրտ են, բայց պետք չէ, որ կրկին ու կրկին վերհիշվեն:

Այստեղ չեմ ցանկանում վերամբաստանել միայն Միութենականներին: Նրանց անվանեք ինչպես ցանկանում եք, սակայն այն մարդիկ, որոնք տարբեր անունների տակ նույն մտայնությանն են ծառայում և ընթանում են բռնության ուղիով, կարող են լոկ հասնել միևնույն օրհասական արդյունքին...

...Թուրքերի բոլոր միացյալ ջանքերը չեն կարող ծածկել այն ոճիրները, որոնք ճնշում են թրքության ուսերը...

Ի՞նչ պետք է անենք...

Ներո՞ւմ պիտի խնդրենք:

Պետք է ասե՞նք, թե հայերն են, որ ջարդեցին թուրքերին... Սակայն ուրիշ երկրներում օրենքն ու խիղճը չեն թույլատրի, որ անմեղը այդպես ամբաստանվի, նրա կինն ու զավակները մորթվեն, որպեսզի մենք կարողանանք այդպիսով ինքներս մեզ անմեղ դարձնել Եվրոպայի աչքում:

Վանում կեղեքիչ ոճիրներ գործեցին մի քանի անհատներ, և կառավարական ուժը պարտավոր էր բնաջնջել միայն այս ոճիրների հեղինակներին, մինչդեռ մեր կառավարությունը որոշեց ջարդեր կատարել, մորթել տվեց մարդկային զանգվածներին, կողոպտել տվեց նրանց ունեցվածքը և հրապարակեց լքյալ գույքի օրենքը, այսինքն՝ բռնագրավելու այն կալվածքները, որոնք հնարավոր չէր հափշտակել: Այսպիսով մեր կառավարությունը պաշտոնական բնույթ տվեց չարագործությանն ու հափշտակությանը:

1. "La Renaissance" 15 դեկտեմբերի 1918 թ.:

Մեր՝ թուրքերիս, կողմից առաջ քաշված պատճառաբանությունները, համածայն որոնց, Վանում հայերն են մեր վրա նախահարձակ եղել և, որ մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք, գոհացում կարող է տալ միայն նրանց, ովքեր «զգացմունքայնությամբ» և ոչ թե գիտական և իրավական տրամաբանությամբ են գործում:[1]

Թուրքիայի ներքին գործերի նախարարության հայկարարությունը

Ստույգ է, որ մի քանի հայեր օգնեցին մեր թշնամուն և մի քանի հայ դեպուտատներ թուրք ազգի դեմ ոճիրներ գործեցին:

Սակայն թուրքական կառավարության պարտականությունն էր ձերբակալել ոճրագործներին և միայն այս վերջիններին պատժել:

Հնարավոր չեղավ այդպես վարվել (կառավարությունը պետք է գործեր ոչ թե որպես թշնամի, այլ որպես բարեկամ): Նա այդ շրջանի հայերին տեղափոխեց մի այլ տեղ:

Սակայն հրոսակապետը կարող է ամեն ինչ անել, որովհետև ավազակապետ է...

Կառավարությունը պետք է հետապնդի միայն հանցավորներին: Շատ ցավալի է, որ մեր այն ժամանակվա ղեկավարները ավազակային ոգով տոգորված, տեղահանման օրենքն այնպես կիրառեցին, որ ամենահանդուգն արյունարբու ավազակները այդպես վարվել չէին կարող:[2]

-Այն ժամանակ ոչ ոք հաշիվ չէր պահանջում կատարված վայրենությունների համար, և մարդիկ կարծում էին, թե այդ ամենն անպատիժ է մնալու:

Հենց այդ մտայնությունն էլ մղեց բծավոր տիֆի պատվաստանյութի հետ կատարված փորձեր իրականացնելուն Երզնկայում:

Եթե այդ գործին ձեռնամուխ լինեն ձեռնհաս ու հեղինակավոր անձինք, ապա ճշմարտությունը երևան կհանվի: Այդ գործում էլ, ինչպես տեղահանության, ջարդերի ու կողոպուտների հարցում, կան մեղավորներ...

Մեղավորները հայտնի են:

Եթե մեկը կա, որը ցանկանում է հովանավորել հանցագործներին,

1. "La Renaissance", 1 մարտի և 22 հունիսի 1919 թ.:
2. "Vacit", 13 դեկտեմբերի 1918 թ.:

թող այնքան սպասի, մինչև որ իշխանության գլուխ անցնի Միությունն և առաջադիմություն կուսակցության կառավարությունը:[1]

-Սրանք այնպիսի ոճիրներ են, որոնք ամենևին էլ առանձին-առանձին քննության կարիք չունեն: Դրանք ոչ միայն հայտնի են, այլև ապացուցված, չիթաճիներից շատ քչերը չեն մասնակցել տարագրության և ջարդերի իրականացմանը: Նրանք հավասարապես ոճրագործ են, իթթիհադի հետ ձեռք ձեռքի տված մասնակցեցին (հայկական) տարրերի եղեռնին: Նրանք, ովքեր գործիք դարձան և նրանք, ովքեր պարտավոր էին խոսել, բայց լռեցին՝ ոճրագործ են: Ոճրագործ են ջարդերի մեծ ու փոքր պաշտոնատարները ու նրանց հրամայող բորենիները: Խոսքը վերաբերում է նախարարությանը, խորհրդարանին և նրանց գերագույն ղեկավար իթթիհադին:[2]

-Կախեցին, սպանեցին, աքսորեցին, մորթեցին և միաժամանակ հայերին մորթել, աքսորել և սպանել տվեցին: Նրանք կրկնակի մարդասպաններ են, որովհետև սպանելու հրաման արձակեցին և սպանեցին: Երկրի ներսում վարչական վայրիվերումներ ստեղծեցին, ազատության, կյանքի, սեփականության և պատվի վրա հարձակում գործող չեթեներին օգնեցին և տեղի ունեցած աղետներին մեղսակից եղան:[3]

«Հայրիսաք»

Կոտորածների հեղինակները կառավարությանը ստիպեցին պատրաստել և հրապարակել տեղահանության օրենքը և իրականացնել կոտորածը: Եթե նրանք դատարանի առաջ հանվեն, Օսմանյան կայսրության ժողովուրդը կկարողանա քաղաքակրթված աշխարհից արդարություն պահանջել:[4]

Սիմեոն՝ սպա

Գիշերը զինված մարդիկ ինձ արթնացրին, հանձնեցին մի կնքված ծրար, որը պարունակում էր հայերի տեղահանության հրամանը:

1. Les persecutions cöntre les médecins arméniens. Pendant la guerre générale en Turquie, Istanbul, 1919, p. 7, 20-25.

2. «Ալիք», 28 մարտի 1985 թ.

3. **Jemal Katay** Teskilat-i Mahsuses, s. 72.

4. "La Renaissance", 1919 թ., N127:

Իմ հրամաններին ենթակա քաղաքացիական մի պաշտոնյա նշանակեցին: Ինձ տրված էր իրավասություն՝ խնայելու այդ պաշտոնյայի կյանքը և կամ նրան սպանել, եթե իմ հրամաններին չհնազանդվեր:

Սույն իրավունքը տրված էր զինվորական հրամանատարին, որն իմ վերադասն էր, սա կարող էր ինձ մեռցնել, եթե ես չկատարեի նրա հրամանները: Այսպես էր դրությունը՝ բարձրագույն հրամանատարությունից սկսած մինչև ամենաստորադրյալ սպան:

Հրամանը բացարձակ էր և իբրև զինվորական ես հնազանդվեցի:[1]

«Իսթիքլալ»

Առաջին համաշխարհային պատերազմը մեր մեջ առաջացրեց ամենաբարձր աստիճանի անասնական և անբարոյական ոգի:[2]

«Թասֆիրի էֆքյար»

Դժվար է հասկանալ, թե ինչու այս անձերը չմտածեցին, որ մի օր հաշիվ են տալու այն բոլոր ոճիրների համար, որոնք գործվեցին Թալեաթ փաշայի կառավարության կողմից... նույնիսկ, եթե պատերազմից հաղթանակով դուրս գային:[3]

Աբդուլ Մեջիդը՝ բազաժառանգ, «Մորնինգ պոստ» թերթի թղթակցին հայտարարեց

Կոտորածներն ամենաանջնջելի արատներն են, որոնք մեր ազգին ու ժողովրդին նսեմացրին:

Կոտորածը Թալեաթի և Էնվերի գործն էր:

Բնաջնջման գործը սկսելուց առաջ Էնվերին հարցրի, թե կոտորածի ծրագիր ունեին:

Նա պարզորոշ պատասխանեց, թե այս մասին վճռական որոշումներ կային, որոնք իրենց ծրագրի մաս էին կազմում...

Եթե Գերմանիան ուզեր, կարող էր այդ սպանդները արգելել, բայց այս ուղղությամբ ոչինչ չարեց:[4]

1. "La Renaissance", 1919թ., N127:
2. "La Renaissance", 22 հունիսի 1919 թ.:
3. "La Renaissance", 15 դեկտեմբերի 1918 թ.:
4. "La Renaissance", 18 դեկտեմբերի 1918 թ.:

-Ես ամաչում են հայկական կոտորածների համար, որ կատարվեց պատերազմի տարիներին, բայց նաև պետք է պնդեմ, որ դրանք տեղի ունեցան ներկայիս սուլթանի և ընդհանրապես ամբողջ (թուրք) ազգի կամքին հակառակ: Դրանց դրդեցին ոչ հայրենասեր նախարարները, որոնք, ենթարկվելով Գերմանիային, չէին ուզում կորցնել իրենց պաշտոնները:[1]

«Ալեմդար»

Եթե Բայազետի հրապարակը ոճրագործների կախաղաններ չտեսնի, Փարիզը մեր պետության և ազգի դատապարտման վայր կդառնա:[2]

«Սաբահ»՝ բաց նամակ արդարադատության նախարար Փիրզադե Իբրահիմ բեյին

Երիտասարդ թուրքերի հրոսապետերի ժողովատեղի կենտրոնում կայացած որոշման համաձայն չէ՞ր, որ բանտերից ազատել տվեցիր ամենասարսափելի ոճրագործներին մի նպատակով՝ հայերին իրենց օրինական բնակարաններից արտաքսելու և, հակառակ բացարձակ անմեղության, նրանց վայրագությամբ բնաջնջել տվեցիր:

Մի՞թե դու չէիր, որ կազմակերպեցիր ամենավայրագ ոճրագործներին, վայրենի հրոսակներին, որոնք Պոլսի կենտրոնական բանտի կալանավորներ էին՝ միաժամանակ հրաման ուղարկելով գավառներ (նույն բանը անելու):

Մի՞թե ոճրագործների այս հրոսակախումբը չէր, որ կազմվեց ու կազմակերպվեց վերաքննիչ ատյանի ընդհանուր դատախազի գրասենյակում, արդարադատության նախարարության գրասենյակին կից:

Մի՞թե դու չէիր, որ նշանակեցիր ընդհանուր դատախազ, և մի բարձրաստիճան սպա ռազմական նախարար Էնվերի կողմից չկանչվե՞ց արյունարբու ոճրագործների հրոսակներ կազմակերպելու:

Մի՞թե մի բժիշկ պաշտոն չստացավ, քո ցանկության համաձայն, քննելու և որոշելու ոճրագործների ֆիզիկական կարողությունները բնաջնջման բարբարոսական գործի համար: Մի՞թե այս հրոսակախմբի կազմակերպումը շաբաթներ չտևեց:

Նույն շրջանում բանտի արյունարբու ոճրագործները ամեն օր չէի՞ն գալիս հավաքվում (արդարադատության պալատի) գավիթում, ճիշտ այն

1. "New York Times", 27 նոյեմբերի 1918 թ.:

2. "La Renaissance", 16 ապրիլի 1919 թ.:

տեղը, որը գտնվում է ատյանի և ընդհանուր դատախազի խորհրդակցությունների և ամբաստանությունների սենյակի միջև:

Մի՞թե դու չէիր, որ քո տիրոջ՝ Թալեաթի հետ համաձայնեցնելուց հետո, հրամաններ և հրահանգներ տվիր անձնակազմերի տնօրեններին՝ անմիջապես պաշտոնազրկել հայ պաշտոնյաներին, ինչպես նաև դատավորներին այն տեղերից, որտեղից հայերը պետք է արտագաղթվեին՝ արագացնելու և ապահովելու համար արտաքսումն ու բնաջնջումը...

Մի՞թե դու չէիր, որ հրճվում էիր հայ դատավորների և հայ ժողովրդի սպանդի տեսարանի առջև, որ գործադրվում էր կացնի, ուրագի և բրիչի հարվածներով:[1]

«Սաբահ»

Բացարձակապես հաստատված է, որ կոմիտեի (իթթիհադի) կառավարությունը ծրագրել էր ամբողջ ազգի բնաջնջումը:

-Շատ բնական է,- գրում է մի թուրք,- որ այսպես էր լինելու, որովհետև արդարադատության նախարարը բանտերից ազատ արձակեց արյունարբու մարդասպան ոճրագործներին: Այս մարդասպաններից կազմված հրոսակախմբերն արդարադատության նախարար Իբրահիմ բեյն ինքը կազմակերպեց....

Արդարադատության նախարարը և իր գործակիցները, արդարադատության վերաքննիչները և վերաքննիչ ատյանի ընդհանուր դատախազների փոխանորդներն ու հանձնաժողովների անդամները չարագործ ոճրագործների պաշտպաններն էին:[2]

«Թասֆիրի Իֆքյար»

...Ֆրանսիացիներն իրենց քնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով այնքան գերմանացի չեն սպանել, որքան թուրքերը՝ հայ...

Իթթիհադական պարագլուխների ձերբակալությունն ամենայն գնահատության է արժանի, արդարև, ի՞նչ կա ավելի ուրախալի, քան տեսնել արդարադատության ձեռքը հանձնված հայրենիքի դավաճաններին, որոնք երկիրը տարան դեպի անկման խորխորատները, ոտնակոխ արե-

1. "La Renaissance", 19 հունվարի 1919 թ.:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 256:

ցին նրա արժանապատվությունը, բռնաբարեցին պատիվները, խոշտանգեցին, կողոպտեցին, մի խոսքով գործեցին ամեն տեսակի գազանություններ:[1]

Ջեմալի՝ Յոզղաթի նախկին կառավարիչ, ցուցմունքը հեպաքննիչ հանձնաժողովին (12 դեկտեմբերի, 1918 թ.)

Տեղահանվող, աքսորվող հայերը ձերբակալվեցին: Այդ ժամանակ Քեմալ բեյը, որպես ժամանակավոր մութեսարիֆ, Յոզղաթ եկավ: Նա իրեն պարտավորված չհամարեց քննություն կատարել, և կանայք, երեխաներ ու տղամարդիկ, առանց խտրության, աքսորվեցին ու տարագրվեցին: Նույն նպատակի համար հրամանատարը՝ գնդապետ Թևֆիկ բեյը, տեղացի չերքեզներից հրոսակներ (չեթե) կազմակերպեց...

...Յոզղաթ քաղաքից և շրջակա գյուղերից տեղահանված հայ քարավանները կոտորվեցին և բնաջնջվեցին ոստիկանների, հրոսակների և ժողովրդի կողմից...

...Եվ նրանց ունեցվածքն ու արժեքավոր իրերը թալանի տրվեցին: Ամբողջ ժողովուրդը գիտե, որ Քեմալ բեյը, ոստիկանության հրամանատար Թևֆիկ բեյը և Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը համատեղ գործելով կազմակերպեցին հայերի բնաջնջումը:[2]

Վեհիբ բեյը Յոզղաթի զորքերի հրամանատար Սալիմ բեյի պաշտոնազրկման մասին

Քեմալ բեյը կանչել էր և առաջարկել ստորագրելու հայերի մահավճիռը, որը պետք է ուղարկվեր Գելլեր: Սալիմ բեյը մերժել էր, որի պատճառով Քեմալը նրան սպառնացել էր կախաղան հանել: Մի քանի օր հետո Նեջաթի բեյը Չորումից եկավ ու Սալիմ բեյին պաշտոնանկ անել տվեց:[3]

Հեպաքննիչ հանձնաժողովի հարցերն ուղղված ռազմական նախարարությանը

Քանի՞ զորամասից էր բաղկացած Թեշքիլաթ-ը մախսուսեն, որը Միություն և առաջադիմություն կոմիտեի անդամ Բ. Շաքիր բեյի վարչության և հրամանի տակ էր գտնվում:

1. "La Renaissance", 15 դեկտեմբերի 1918 թ. և 22 հունիսի 1919 թ.:
2. «Ժամանակ», 6 մարտի 1919 թ.: Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 494- Մ 492:
3. "La Renaissance", 20 փետրվարի 1919 թ.:

Յուրաքանչյուր զորամաս քանի՞ վաշտից ու ջոկատից էր բաղկացած: Ո՞ր թվականին և ո՞ր բանտերից ազատվեցին դատապարտված ոճրագործները: Եվ յուրաքանչյուր բանտից քանի՞ ոճրագործ ազատ արձակվեց:

Քանի՞ բարձրագույն և քանի՞ կրտսեր սպաներ, այսինքն՝ քանի՞ գնդապետ, փոխգնդապետ, հրամանատարներ, հարյուրապետեր ու հիսնապետեր էին հրամայում ոճրագործների գնդերին: Ի՞նչ էր նրանց անունները: Ո՞վ էր պաշտոնապես հրամայել և հրահանգել նրանց պաշտոնի կոչելն ու ոճրագործների կազմակերպելը:[1]

Ռազմական դատարանի ընդհանուր դատախազի կարծիքը Ռադի բեյի տված ցուցմունքների մասին

Կուսակալի պաշտոնին Աթքֆ բեյի անցնելուց հետո (հայերի) տեղահանության և կոտորածի հրամանը տրվեց ու գործադրվեց...

Նենիգի և Օրտակյոյի միջև 15-20 բաց կառքեր էին հայերին տեղափոխում: Ոստիկանության գործակալը և մի պաշտոնյա ձիու փակ կառքով գնում էին առջևից:

Լսելով դրամատան տնօրեն պարոն Շնորհքյանի ձերբակալության մասին... (Ռադի բեյ) ու Անկարայի կուսակալության խորհրդի անդամ Մուֆտի էֆենդին գնացին խնդրելու Աթքֆ բեյին՝ ազատելու նրան: Սա պատասխանեց. «Իմ վերադասից հրաման ունեմ: Նա (Շնորհքյան) էլ պետք է մեկնի: Հայերը չպետք է ապրեն»:

Հաջորդ օրը Շնորհքյան էֆենդին աքսորվեց ու սպանվեց ուրիշ բազմաթիվ հայերի հետ... (դրանից) մեկ օր առաջ նա (Ռադի բեյ) տեսակցություն ունեցավ ոստիկանության տնօրեն Բեհաեդդին բեյի հետ, որը շրջապատված էր անբարոյական, վատահամբավ և կասկածելի անձանցով և նրանց հրահանգներ էր տալիս հաջորդ օրը կոտորվելիք խմբի վերբերյալ:

Անկարայի և Յոզղաթի միջև, Յոզղաթի ավանից մինչև Շեհզեր գյուղը լեռան կողքին (Ռադի բեյը) տեսավ հայերի դիակներ՝ գարշահոտ և նեխված նետված գետերի մեջ՝ արդեն փտած ու կտոր-կտոր եղած...

Յոզղաթում Խարիտզադե Հյուսնիի (ծերանոցի) կանանց հարկաբաժնում տեսան... մի ծեր կնոջ, որի գլուխը կապված էր: Վերքը դանակի հարվածից խորացել էր: Կինն ասաց. «Տղամարդկանցից հետո ճանապարհ հանվեցին կանայք: Ավանի մոտ ավազակի կերպարանքով 15-20

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 555:

տղամարդ կտրեցին ճամբան և ջարդեցին»: Միայն ինքը կենդանի մնաց: Երբ ուշքի եկավ, տեսավ, որ դիակների մեջ է գտնվում: Թաքնվում է ցորենի դեզերի մեջ: Եվ գիշերը թաքուն քաղաք է գնում ու ապաստանում Հյուսնի բեյի տանը:

Անկարայի կուսակալ Մազհար բեյը համաձայնվել էր նույն նահանգի նախկին ոստիկանապետի հետ, որ ձգձգեն Պոլսից եկած հրամանի կատարումը հայերի տեղահանության առնչությամբ: Պոլսից Աբդֆ բեյն Անկարա ուղարկվեց հատուկ քննություն կատարելու համար, սակայն նրա առաքելության բուն նպատակն էր՝ Մազհար բեյին բերանացի հաղորդել հայերի կոտորածի հրամանը:

ՆԳՆ-ից ստացված հրամանները չհասկանալ ձևացրեցի, պատմել է հազարապետը: Գիտեինք, որ ուրիշ նահանգներում տեղահանությունն ավարտվել էր, մինչդեռ ես դեռ չէի սկսել:

Աբդֆ բեյը վրա հասավ, ինձ հաղորդեց հայերի տեղահանության, կոտորածի և բնաջնջման վերաբերյալ ՆԳՆ բերանացի հրամանը: Ես նրան ասացի. «Ո՛չ, Աբդֆ բեյ, ես կուսակալ եմ, այլ ոչ թե չարագործ ավազակ: Աթոռս թողնում եմ, եկ տեղս և ինքդ գործադրիր կոտորածի հրամանը»...

Որպես իր ծառայությունների վարձատրություն Աբդֆ բեյը Կաստամոնու ուղարկվեց և այնտեղ այնպիսի բաներ կատարեց, որ նույնիսկ Ռեշիդ փաշան չի արել:

Անկարայի, Յոզղաթի և Կըրդեհրի հայերի կոտորածը շատ բացահայտ իրականացվեց...

Հայերի տեղահանության ընթացքում Բեհաեդդին բեյը գործել էր նրանց վրա եղած գոհարեղեններն ու իրերը չհավաքելու կանոնին հակառակ:

«Ինչո՞ւ վերցրիր» հարցին նա պատասխանեց. «Նրանց տեղահանությունից կես ժամ անց հողի տակ էին թաղելու, դրա համար էլ գոհարեղենը վերցրի հանձնաժողովին հանձնելու համար»:

Հետագայում նա պաշտոն ստացավ Սամսոնի հայերի տարագրության ծառայությունում:

Բիթլիսի հայերի կոտորածը ղեկավարել է Բիթլիսի կուսակալ Մուստաֆա Աբուլիալիզ բեյը: Այդ է վկայում Մուստաֆա Թուրան բեյը, որն Անկարայի ոստիկանապետ լինելուց առաջ նույն թվականին (1915 թ.) Բիթլիսում էր...

Ջարդված հայերի թևերը հաստ պարաններով կապողները Անկարայի երեսփոխան Թահիբի փեսան էր, խորհրդի անդամ Շեմսեդդին էֆենդիի հետ: Նրանք այդ արեցին բանտում: Ժանդարմի և ոստիկանի ներկայությամբ հավաքեցին հայերի մատանիները, ունեցած դրամները... Ապա թշվառներից խլեցին ֆեսերը, կոշիկները և զգեստների մի մասը և գրեթե մերկ վիճակում նրանց բանտից հանեցին վաղ առավոտյան և 300 հոգու թևերը իրարու կապած, ուղարկեցին դեպի սպանդ...[1]

Ռիֆաթ բեյի՝ Յոզղաթի ավագանու ներկայացուցիչ, գրավոր վկայությունը (1 դեկտեմբերի 1918 թ.)

Թևֆիկ բեյն իր պաշտոնավարության ընթացքում ներկայացել է որպես Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի ներկայացուցիչ... և հոխորտանքով հայտարարել է, թե ինքն է ձգել կախաղան հանված Դամադ Սայիդ փաշայի պարանը: Երբ կառավարությունը հայերին աքսորելու հրաման արձակեց, այս մարդն իր շուրջը հավաքեց ոճրագործների և հրոսակների ոհմակ և սկսեց իր հրոսակային, չեթեական գործունեությունը...

Սկզբում Թևֆիկ բեյը Յոզղաթի հայերին 15-75 տարեկան այր մարդկանց Յոզղաթից երեք ժամ հեռավորության վրա գտնվող Տաշ Բունար գյուղն աքսորեց, կացիններով սպանել տվեց, նրանց ամբողջ զարդեղենը և ինչքերն իր տուն փոխադրել տվեց: Կոտորածը տեղի ունեցավ վայրենի աղաղակներով:

...Կեսարիա աքսորելու պատրվակով հավաքեց 1 800 կին, աղջիկ, երեխա, նրանցից գեղեցիկներին առանձնացրեց քրդերի ու չերքեզների համար, բոլոր զարդեղենները կողոպտեց և տանելով Բողազլյանի մոտ գտնվող Գելլեր գյուղի մերձակայքը՝ նրանց կացինահար անել տվեց, դիակները գցել տվեց Կարասու գետը, իսկ տրամադրության տակ եղած աղջիկներին բաժանեց հրոսակներին: Այդ աղջիկները ներկայումս ապրում են: Յոզղաթի 8 500 հայերին այս ձևով մեռցնելուց, նրանց հարստությունը կողոպտելուց հետո Թևֆիկ բեյը մեկնեց շրջակա գյուղերը: Ողջ աշխարհը գիտի, որ նա մտավ Գում Գույու գյուղը, 150 ընտանիքի և ավելի քան 650 մարդու՝ հլու-հնազանդ հայերի, հրո ճարակ արեց, ամեն տեսակի վառելանյութ հավաքեց և հավաքել տվեց, լցրեց տների շուրջբոլորը և այրել տվեց Գում Գույու հայ գյուղը: Ողջ մնացած անմեղ մանուկ-

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 251-Մ 253:

ներին դաշունահար անել տվեց: Նաև փնտրեց ու գտավ այս ու այն տեղ ապաստան գտած հայ կանանց, աղջիկներին ու երեխաներին: Ճանապարհին սրանց էլ ոչխարի նման կտոր-կտոր անել տվեց: Այս գյուղերի հայերն առանց դիմադրության հանձնվեցին և վզերը ծռած՝ ասացին. «Մեզ սպանիր, սակայն խնայիր, ներիր այս կանանց ու մանուկներին»: Այս խոսքի վրա գազանաբարո (Թևֆիկը) նրանց հրացանի բռնել տվեց:

Ագդաղամադեմի և Բողազլյանի բազմաթիվ հայկական գյուղերի տներն ու բնակիչներին այրելուց հետո, այս հրեշը գնաց Տերզիլի և Չաթ գյուղերը: Այս գյուղերի հայերը ևս հանձնվեցին առանց դիմադրության և կոտորվեցին:

Հարևան գյուղերի իսլամ ժողովրդի պատվիրակությունը, այլևս չկարողանալով հանդուրժել երկինք բարձրացող ճիչն ու աղաղակները, Թևֆիկ բեյին ասաց. «Ինչ որ անում ես, դեմ է իսլամի օրենքին: Թևֆիկ բեյ, մեզ էլ սպանիր, բայց խնայիր կանանց ու երեխաներին»:

Թևֆիկ բեյը իր ձիու ոտների առաջ ծնրադրած աղաչող այս մարդկանց պատասխանեց. «Դուք խոչընդոտում եք իմ գործին» և դուրս քաշեց ատրճանակը ու վիրավորեց այս մարդկանցից շատերին ու շարունակեց վայրագ կոտորածը:[1]

Խուլուսիի՝ Բողազլյանի ժանդարմական վաշտի հրամանատար, հաղորդագրությունը ստորագրված 1915 թ. փետրվարի 23-ին

1915 թ. փետրվարի 15-ին Բողազլյանից 36 հայեր չորս ժանդարմների հսկողության տակ աքսորվել են Բողազլյանի Յազչելեբի գյուղը: Իհսան Չաուշը՝ Բողազլյանի ժանդարմական կայազորի հրամանատարը, գիշերվա ժամը 3.30-ին յոթ ժանդարմների հետ գյուղ է գալիս և կապում է նրանց թևերը ու տանում Յազչելեբի...

Սրանցից (հայերից) 11 հոգի կարողացան կտրել իրենց պարանները և փախչել, մյուս 25-ը սպանվեցին...

Չորս ժանդարմներ այնտեղ մնացին մինչև առավոտ, փոս փորեցին և թաղեցին ջարդված հայերին...[2]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 469:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 272 և Մ 298:

Թևֆիկ բեյի՝ Յոզղաթի ոստիկանապետ, հարցաքննությունը

Նախագահ- Անկարայի զինայրերի գնդի հրամանատարին տեղեկություն ըսած ես, թե Մատենի շրջանում հայ հրոսակներ կան: Դուն հոն գնացիր մութեսարիֆի հրամանով և հոն գտար միայն կողոպուտ և գողություն թույլատրված այնտեղի գայմագամի կողմէ:

Յոզղաթի բանտէն 57 դատապարտյալներ և արգելափակման տունն ալ 8 մարդասպաններ ազատ արձակված են, և ասոնք, այսինքն 67 ոճրագործներ ղրկվեցին Չորում (կոտորածներ) կազմակերպելու համար:...

Չորումէն Յոզղաթի վրայով Նեճաթի Սեբաստիայէն Ղանի պեյը հեռագրելով կանչեց և անկէ պահանջեց, որ անհրաժեշտորեն կարգադրություն ընէ ապահովելու համար վերև հիշուած հայերու հավիտենական հանգիստը (այսինքն սպանեն)...

Ավելի քան 1 500 հայեր կոտորված են Պողազլյանի զորակայքի 14 հուլիս 1915 թուակիր և 18 թուահամար, զորաբաժնի 14 հուլիս 1915 թուակիր և 169 զորաբաժնի հեռագիրներու համաձայն...

«Անոնք տարագրվեցան իրենց աքսորավայրերը»... Չէ՞ նշանակեր, որ անոնք ջարդվեցան և բնաջնջվեցան...

Ուզուն Հաճիի եղբայրը Շյուքրի, ճերիտզատե Հյուսնի, զինայրերու տասնապետ Իպրահիմ հրոսապետ նշանակվեր են:

Տասներկու տարեկանեն վեր մանչերը հավաքած և զանոնք դրած եք կառավարութեան բանտին և նկուղներու նման վարին հարկերու մեջ...

Հայերը քանիակա՞ն իրարու հետ կապված էին, երբ զանոնք տեղահան կընեիք: Ապացույց կա, որ զանոնք երկերկու իրարու հետ կապած էիք...

«Մեր մայրերը մեզ ծնած են այս օրվան համար», հրոսակախմբերը ժողովուրդին այսպես կը պոռային քաջալերելու համար, որ միանային իրենց:[1]

Հարցեր՝ ուղղված Ֆեյազ բեյին

Կոտորածն ու բնաջնջումը սկսելու համար սովորություն եք ունեցել զենքի պայթյունով ազդանշան տալ: Գելլերի ձորում հայերի կոտորածից ու բնաջնջումից առաջ դու անձամբ զենք պայթեցրիր և կոտորածը սկսվելու ազդանշան տվիր: Գելլերից հայ տղամարդկանց ու կանանց

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 324:

տարաք Յարիշի ձորը: Այնտեղ կանանց բաժանեցիք և տարաք ուրիշ ուղղությամբ: Ինչո՞ւ կանանց այլ ուղղությամբ տարաք: Երբ ճանապարհով հայ տղամարդկանց էիք տանում, դու ասացիր Տեր Ակոբին. «Ձեր կյանքի վերջը հասել է: Հրաման է եկել ձեզ ջարդելու: Ահա այստեղ է հրամանը: Այժմ աղոթիր և պատրաստվեք մեռնելու»....[1]

Հարցեր՝ ուղղված Կեսարիայի 15-րդ դիվիզիայի հրամանատար Շահաբեդդին բեյին

1915 թ. հուլիսի 26-ի թիվ 320 հեռագրով թույլտվություն ես խնդրել տեղահանելու նաև զինվորական գնդերի և աշխատավորական վաշտում աշխատող հայ զինվորներին:

1915 թ. օգոստոսի 11-ի թիվ 263 հեռագրով բանակի հրամանատարին հայտնել ես, որ Յոզղաթի մութեսարիֆն էլ Ակդաղմադենի կայմակամին հրահանգներ է ուղարկել հայ զինվորների ընտանիքներին էլ տեղահանելու մասին:

1915 թ. օգոստոսի 12-ի թիվ 293 հեռագրով բանակի (հրամանատարությանը) հայտնել ես, որ Յոզղաթից տեղահանված հայերն իրենց ընտանիքների հետ լրիվ կոտորված և բնաջնջված են Յոզղաթի և Բողազլյանի ճանապարհների վրա...

1915 թ. օգոստոսի 13-ի թիվ 1561 հեռագրով բանակի (հրամանատարությանը) հայտնել ես, թե Յոզղաթից Բողազլյան աքսորված 130 հայեր կոտորվել են Ջևիզլի խանի և Կազալի խանի միջև Բողազլյանի ժանդարմական գնդի կողմից:

1915 թ. օգոստոսի 17-ի թիվ 923 ծածկագրիցդ՝ հասցեագրված բանակի հրամանատարությանը, հասկացվում է, որ անձերին (տարագրվող) ուղեկից ես դարձրել փախստականների մի խումբ, որովհետև հեռագրում նշում ես, որ նրանցից հինգ հոգի սպանվել է ուղեկիցների կողմից: Դեռ ավելին, հայտնում ես, որ 40 փախստական հայեր կոտորված են Գելլերի մոտ փարախի մեջ:

1915 թ. օգոստոսի 9-ի թիվ 261 հեռագրով նաև տեղեկացնում ես, թե Բենյանի մոտ Կայա Ալթը վայրում մի տանն ապաստանած 10 հայերին ձերբակալելու համար այդ տունը հրդեհվել է...

1. Դիվան Երուսաղեմի թիվ Մ 330:

1915 թ. օգոստոսի 12-ի թիվ 263 հեռագրով հայտնում ես, թե վերը նշված հայերը շնչահեղձ եղան ու մեռան:

1915 թ. հուլիսի 23-ի թիվ 207 հեռագրով հայտնում ես, թե Բողազլյանից և շրջակա գյուղերից 3 660 հայ կոտորված են:[1]

Շաքիր բեյի՝ Յոզղաթի երեսփոխան, վկայությունը հեպաքննիչ հանձնաժողովին (5 դեկտեմբերի 1918 թ.)

Ջեմալ բեյի փոխարեն ժամանակավոր մութեսարիֆ եկավ կայմակամ Ջեմալ բեյը...

Մինչև Յոզղաթ գալը նա արդեն տեղահանել էր Բողազլյանի գավառակի հայերին և նրանց կոտորել ու կոտորել էր տվել: Դահիճ է: Գալուց անմիջապես հետո նա ստիպեց տեղահանել հայերին՝երեխա, պատանի, կին, ծեր: Նա կարճ ժամանակում տեղահանեց բոլոր հայերին և ի վերջո, համածայն լուրերի, բոլորին ջարդել տվեց Յոզղաթի մերձակայքում իր գործակալների միջոցով:

Ժողովրդին (թուրք) հրամայեց կողոպտել հայերի անտեր մնացած ինչքերը և ունեցվածքները: Լսեցի, որ հարբեցող էր: Մասնակցել էր տնտեսական պաշտոնյա՝ հաշվապահ Վեհիբ բեյի տան գինարբուքներին: Խորհրդակցության և գինարբուքների ընթացքում նա ասել է. «Ես Բողազլյանի հայերին կոտորեցի և փոխմութեսարիֆ դարձա: Այստեղ էլ Յոզղաթի հայերին կկոտորեմ և մութեսարիֆ, թերևս նաև կուսակալ դառնամ»: Ես լսել եմ այս խոսքերը:[2]

1918 թ. դեկտեմբերի 8-ին վեց երևելի թուրքեր՝ Օսման Նուրի, Հասան Հուսեին, Մեհմեդ Ալի, Ալի Մուրթուզա, Ահմեդ և Իբրահիմ Հաքք, Մազհար բեյի ղեկավարած և սուլթանի հրամանով ստեղծված հեպաքննիչ հանձնաժողովին գրեցին

Կեսարիայի շրջանում հազարավոր անմեղ հայ մանուկներ ջարդելուց հետո Խուլուսի էֆենդին այժմ մեր գավառի ոստիկանության հրամանատարն է: Ինքն էր, որ նրանց (հայերի) գոհարեղենը և չգնահատված ունեցվածքը կողոպտեց: Այս եղելությունը հաստատված է նախորդ կառավարության կողմից և վերոհիշյալ Խուլուսին Կեսարիայի ռազմա-

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 271- Մ272:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 494:

կան ատյանի կողմից դատապարտվեց միայն երկու ամսվա բանտարկության: Ապա ազատ արձակվեց:[1]

Ջեմալ բեյի՝ Յոզգաթի նախկին մութեսարիֆ, ցուցմունքը Մազհարի գլխավորած Հեպաքննիչ հանձնաժողովում (12 դեկտեմբերի 1918 թ.)

Տեղահանությունը սկսվեց: Առաջին քարավանն ուղարկեցինք: ...Կառավարությունը հանձնարարեց երկրորդ քարավանը ուղարկել Կեսարիայի ճանապարհով: ...Այս անգամ հրաման եկավ, որ տեղահանվածների մոտ եղած դրամները վերցրեք: Դրանք վերցնում էինք և կանոնավար հանձնում հատուկ մարմնին և արձանագրում:

Այդ միջոցին տեղահանությունը սկսվեց Չորումում: Մենք նույնպես զբաղված էինք: Օգոստոսի 5-ին հեռագիր եկավ՝ ես պաշտոնանկ եղա: Քեմալը տեղս եկավ:

Ընդհանուր դատախազ.- Քանի որ ժողովուրդը ուղարկվում էր հսկողության տակ, նրանց մոտ եղած դրամն ինչո՞ւ էին առնում: Թնդանոթ տեսե՞լ են այդ կողմերում:

Ջեմալ.-Չեթեն կարո՞ղ է թնդանոթ բերել: Թնդանոթն այնտեղ ի՞նչ գործ ունի: Այն գրպան չի դրվի...

Լսել էի, որ մի շարք չեթեներ պատրաստվել էին կոտորել հայերին...

Ընդհանուր դատախազ.- Դատապարտվածների (թուրք) մի մասին ազատ են արձակել: Արդյո՞ք դրանք են եղել ոճիր գործողները, թե՞ հատուկ մարմինները կազմված էին հայերի բնաջնջման համար:

Ջեմալ.- (Իմ ժամանակ) նրանք օգտագործվեցին ռազմաճակատներում: ՆԳ նախարարությունից հրահանգ եկավ՝ հանձնաժողով ստեղծել և տեղահանվողների դրամը և նրանց մոտ եղած առարկաները վերցնել ու հանձնել հանձնաժողովին:

Տեղահանության սկզբից գործը կատարվեց զինվորական իշխանությունների միջոցով: Իմ պաշտոնանկությունից մի օր հետո այն հանձնվեց քաղաքացիական իշխանություններին:

Կարդացվեց Էնկյուրիի կուսակալության հեռագիրը ուղղված Ջեմալ բեյին, որում ասվում էր, թե բժիշկներին, փաստաբաններին, մտավորականներին և կոմիտեների անդամներին և նրանց հետևող կասկածելի անձանց բոլորին տեղահանեք և Չոր ուղարկեք...[2]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 289:
2. «Ժամանակ», 6 մարտի 1919 թ.:

Քեմալ բեյի վկայությունը Պոլսի հեպաքննիչ հանձնաժողովում (15-16 դեկտեմբերի 1918 թ.)

(Բողազլյանի գավառակում) մոտավորապես 7-8 հազար ոչ իսլամներ կային...

Հարց.- Ե՞րբ և ո՞ւր այդ հայերը տեղահան եղան:

Պատասխան.- Դեր Զոր տարագրվեցին 1915 թ. հուլիս և օգոստոս ամիսներին ստացված հրամանի համաձայն: ...Հայերին Դեր Զոր տարագրելու հրամանը Յոզղաթի կառավարչատանն է... Տարագրության հրամանները այնքան շատ են, որ անհնար է դրանք մտաբերել...

Գիտեմ, որ Միություն և առաջադիմություն կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջաթ բեյը Յոզղաթի հայերի տեղահանությունից առաջ կուսակալ Աքըֆ բեյին տեղահանության առնչությամբ բանավոր գաղտնի հրամաններ է հաղորդել: Յոզղաթի միութենականների հետ, ինչպես նաև նույն կուսակցության պաշտոնյաների, մասնավորապես ժանդարմների հրամանատարի հետ, որը կուսակցության Յոզղաթի կոմիտեի անդամ էր, ժողովներ անցկացրեց... Բողազլյանի հայերի տեղահանությունից առաջ: Տարագրության ընթացքում Միություն և առաջադիմություն կուսակցության Կեսարիայի պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյը Բողազլյան եկավ:

...Նեջաթի բեյի բերած... հրահանգները հայերի տեղահանության հետ էին կապված...

Իմ պաշտոնավարության ժամանակ տեղահանված հայերի թիվն ավելի մեծ էր, քան իմ նախորդի օրոք տեղահանվածներինը, քանի որ նախորդս գյուղերի հայերին չտեղահանեց:

Թե՛ Յոզղաթի գավառում և թե՛ Բողազլյանի գավառակում չտեղահանված հայեր մնացին: Նրանք բաժանվեցին մահմեդական գյուղերի վրա: Նրանց թիվը չեմ հիշում...

(Չտեղահանված) տղամարդկանց թիվը փոքր էր, մեծ մասը կանայք ու երեխաներ էին: ՆԳՆ հրամաններ էր ուղարկել նրանց բաժանելու մահմեդական գյուղերի վրա: Հրամանով 5 տոկոս էր (95 տոկոս մահմեդական, 5 տոկոս հայ), սակայն այս տոկոսը չկատարվեց... Գյուղերում բավարար տներ չկային:[1]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 489- Մ 494:

Ալի Քեմալ՝ լրագրող ՆԳ նախարար

Չորս հինգ տարի առաջ երկրին մեջ կը գործադրուի պատմութեան մեջ եզակի, աշխարհասասան ոճիր մը: Նկատի ունենալով ոճրի հսկայական չափն ու ծավալը, անոր հեղինակները այսպես հինգ տասը հոգի չեն, այլ աստիճանաբար՝ հարիւր հազարներ են անոնք: Զարդուողները եթե 600 000-ի փոխարեն 300 000, նոյնիսկ 200 000 կամ 100 000 ըլլան, հարիւր, հինգ հարիւր, նոյնիսկ հազար ոճրագործ չպիտի կրնային բնաջինջ ընել այսքան մարդ: Արդեն ապացուցած իրողութիւն մըն է, որ այս եղեռնը ծրագրուեցաւ իթթիհադի ընդհանուր կեդրոնին որոշումներովն ու կարգադրութիւններովը: Մասնավոր կազմակերպութիւններու, մեկ քանի նախարարութիւններու և նախարարներու կողմէ ոճրին ծրագիրը կազմուելէն յետոյ, կանոնավորաբար ի գործ դրուեցաւ կուսակալներու և կուսակալութիւններու կողմէ: Այդ արդարութեան հանդեպ հեգնութիւն մը չէ՞ արդեոք մեկ կողմ նետել մեծ ու պզտիկ ոճրագործներու բազմութիւն մը և ձերբակալել միայն ընդամենը Տիարպեքիրի, Սըվազի, Խարբերդի կուսակալները և քանի մը մանր մունր պաշտոնեաներ:[1]

Երիտթուրքական կառավարության ղեկավարների և Միություն ու առաջադիմություն կուսակցության կենտրոնի անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-հունիս)

Մեղադրական եզրակացություն.-Դատական փաստաթղթերը վկայում են, որ Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնը միաժամանակ բաղկացած է եղել երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կանոնադրությանը և ծրագրին համաձայն, իսկ մյուսը գործել է ընդհատակյա և գաղտնի հրամաններով: ...Կոմիտեն, նրա իսկական դեքը մեղադրվում է օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով: Ստորև բերված փաստարկները լիովին ապացուցում են նրանց գործադրած հանցագործությունների չափը:

1. «Սաբահ», 28 հունվարի 1919 թ. կամ Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 245:

...(Երիտթուրքերի պարագլուխները) ձգտեցին օգտագործել առիթը, որ Եվրոպան զբաղված է համաշխարհային պատերազմով և աշխատեցին ահաբեկչությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի էր հարթել հանդարտորեն, արդար և առողջ բանականությամբ...

Ռազմական գործողությունների ընթացքում, իրենց գաղտնի ծրագրերը իրականացնելու համար, սկսեցին աշխուժացնել գաղտնի կոմիտեների գործունեությունը: Այսպես, հանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծվեց Թեշքիլաթ-ը մախսուսեն, այն գաղտնի հրամաններն ու հրահանգները ստանում էր Ստամբուլում ստեղծված Հատուկ կոմիտեից, որի կազմի մեջ մտնում էին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյը, կուսակցության կենտկոմի անդամներ Աթրֆ և դոկտ. Նազըմ բեյերը...

(Այդ կազմակերպության) գործակալներին և ընդհանրապես նրա գործունեության համար առաքվում էին հսկայական գումարներ:

Դոկտ. Բեհաեդդին Շաքիրը Թեշքիլաթ-ը մախսուսեի ղեկավարներին տվել էր իր ծածկագրի բանալին, տրամադրել ավտոմեքենաներ, դրամական մեծ գումարներ և անհրաժեշտ զինամթերք...

Որոշակի շրջաններ ուղարկված այս կազմակերպության գործակալներից մի քանիսը, իրենց ղեկավարների ցուցմունքներով, ինչպես նաև Միություն և առաջադիմություն կուսակցության տեղական կոմիտեների ներկայացուցիչներն ու պետական պաշտոնյաները... սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցվածքն այրել և շատերին տանջամահ անել: Չնայած ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, տուժեցին նաև այլ տարրեր ու մեծ թվով թուրքեր:

...Հայերի տեղահանության ընթացքում... տեղի ունեցած հանցագործությունները... ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով... Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների կողմից սկզբնական շրջանում պատերազմական գործողություններին մասնակցելու համար ստեղծված Թեշ-

քիլաթ-ը մախսուսեն... բացառապես գաղտնի բնույթ էր կրում, և նրա բուն նպատակը հանցագործ արարքներ կատարելն էր: Այդ գաղտնի ցանցը ղեկավարում էին կենտկոմի անդամներ դոկտ. Նազըմը, Բ. Շաքիրը, Աթքֆը, Ռիզան և հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյը: Սրանցից Բ. Շաքիր բեյի կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որտեղից նա ղեկավարում էր արևելյան վիլայեթների ուժերը...

...Խալիլ, Նազըմ, Աթքֆ և Ազիզ բեյերի ստորագրություններով Միդհատ Շյուքրի բեյին ուղղված թիվ 59 գրությունը ցույց է տալիս, որ ... Էնվեր բեյի հորեղբայր Խալիլ փաշան... նույնպես ընդգրկված է եղել Թեշքիլաթ-ը մախսուսեի մեջ, որ այդ կազմակերպությունը ներքին կապ է ունեցել Միություն և առաջադիմություն կուսակցության հետ: Այդ ապացուցվում է Իզմիթի քաղաքագլխին Խալիլ բեյի ուղարկած թիվ 67 հեռագրով, որում ասվում է կալանավորներին բանտից ազատելու, առաջնորդներ նշանակելու և այլ ծրագրերի մասին: (Արձանագրություն թիվ 10, փաստաթուղթ թիվ 4):

Դիարբեքիրում տեղի ունեցած խոշտանգումներն ու կոտորածները տեղի են ունեցել Թալեաթ բեյի դրդմամբ: (Արձանագրություն թիվ 8, փաստաթուղթ թիվ 1):

...Տեղահանությունը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել զուտ կոմիտեի ցանկությամբ և նախաձեռնությամբ...

(Երիտթուրքերի կենտկոմը) համագործակցել է ներքին գործերի նախարարության հետ՝ հրոսակախմբեր պատրաստելու գործում... Բանտերից դուրս բերված հանցագործներն ու ավազակներն ընդգրկվում էին Թեշքիլաթ-ը մախսուսեի մեջ: ...(Այդ հրոսակախմբերը) ստեղծված էին տեղահանված (հայերի) քարավանները կոտորելու և ոչնչացնելու նպատակով:

Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով ու գիտությամբ... (արձանագրություն թիվ 11):

Տրապիզոնի նախկին պատգամավոր Հաֆըզ Մեհմեդ բեյի ցուցմունքով բացահայտվում է, թե ինչպես հայերին, Սև ծովի ափերին նավ նստեցնելով, խեղդամահ են արել: Նույնիսկ այս ողբերգության առնչությամբ, երբ ինքը հայտնել է Թալեաթ բեյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել (Տրապիզոնի) վալի Ջեմալ Ազմիի նկատմամբ...

...Էրզրումից Քղիի ճանապարհով ուղարկված հայերի քարավանները կոտորածի են ենթարկվել կենտկոմի անդամ Բ. Շաքիր բեյի կազմակերպած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից:

...Տեղահանվածները կոտորվել են քուրդ Սլոյի ավազակախմբի կողմից, որը կազմակերպել էր կուսակցության Չանկրիի նախկին պատասխանատու քարտուղարը:

...Նրանք, ովքեր քննադատել և չեն մասնակցել կատարվող ողբերգություններին, համարվել են հայրենիք դավաճաններ, իսկ Բեհաեդդինի նման ակտիվ գործիչներն արժանացել են չափից ավելի հովանավորության:

...Կաստամունուի վալի Ռեշիդ փաշան ծածկագիր է ստացել Բ. Շաքիր բեյից, որում նշված է եղել, որ հայերի տեղահանությունը շատ անհրաժեշտ է: (Արձանագրություն թիվ 2, էջ 13):

Միություն և առաջադիմություն կուսակցության ժողվում նախագահը թաքրիր է ներկայացրել Թալեաթ բեյին, որում նկարագրված էին հայերի հանդեպ գործադրված դաժանություններն ու կոտորածները: Նա պահանջել է դատաքննության ենթարկել կուսակցության մի շարք շրջանային պատասխանատու քարտուղարների... Թալեաթ բեյը մի կողմ է շպրտել այդ թաքրիրը...

Վեհիբ փաշայի վկայությամբ (արձանագրություն թիվ 7, էջ 3) հայերի հանդեպ վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի կողմից: Եվ այդ կոտորածների, ինչպես նաև այլևայլ գազանությունների իրականացման համար Բ. Շաքիր բեյը 3-րդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մար-

դասպաններ և անձամբ ղեկավարել դրանք: Նույնիսկ պետության ղեկավարներն են ենթարկվել Բ. Շաքիրի հրամաններին և հրահանգներին: 3-րդ բանակի կողմից կատարված բոլոր բռնությունների, խարդավանքների և բանսարկությունների մտահղացողը նույնպես եղել է Բ. Շաքիրը: Նրա կողմից հավաքվածների մի մասը եղել են մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մի մասն էլ՝ արնախում ժանդարմներ...

Սուլեյման Նազըֆ բեյը Բաղդադից Դիարբեքիր գալիս սահմանամերձ շրջաններում դիակների գարշահոտությունից փակել է քիթը:

...Անկարայի նախկին վալի Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմակամներին, որովհետև նրանք դեմ են եղել տեղահանությանը...[1]

Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների դատավարության մեղադրական եզրակացությունից

Հատուկ օրենքի համաձայն, այլ վայրեր տարագրվողների քարավանները ենթարկվել են հատուկ նպատակով կազմակերպված հրոսակախմբերի հարձակումներին և ոչնչացվել, իսկ նրանց ունեցվածքն ու կահկարասին կողոպտվել են: Եվ այդ (արարքները) երկիրը հասցրել են ծայրաստիճան խռովահույզ և տագնապալի վիճակի: Իսկ կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող հանցագործներին, այլ ընդհակառակը պաշտոնից հեռացրել է այն վալիներին և մութեսարիֆներին, որոնք սեփական պատասխանատվությամբ հրաժարվել են գործադրել այդ տեղահանություններն ու կոտորածները: Մի առանձին համայնք կազմող ամբողջ ժողովրդին այդ ձևով կոտորելը, բնաջնջելը և ունեցվածքի հափշտակությունը մտահղացվել և իրագործվել է կուսակցության այդ գաղտնի խմբավորման արնախում (մարդկանց) կողմից:

Միություն և առաջադիմություն կուսակցության հանցանքներից մեկն էլ կենտկոմի մտահղացմամբ և որոշմամբ կազմված տեղահա-

1. "Takvim-i Vekai", 1919, N 3540.

նության օրենքն էր, և դրա գործադրման հետևանքով Օսմանյան կայսրության բոլոր կողմերում առաջ եկած ողբերգությունը: Լիովին ապացուցված է, որ արևելյան բոլոր վիլայեթներում տեղի ունեցած տեղահանությունը կյանքի էր կոչվել Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավար անդամներից կազմված Թեշքիլաթ-ը մախսուսե հանձնախմբի կողմից, որի նախագահը այդ շրջանում Բ. Շաքիր բեյն էր: Իսկ խնդրի լուծման համար Բ. Շաքիր բեյն օգտագործել էր Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազորներին և քննիչներին:

(Հայերի) տեղահանության ընթացքում մի շարք վիլայեթների վալիների հատուկ հրահանգներ տալու գաղափարը նույնպես կուսակցության կենտկոմի մի քանի անդամների չարանենգ մտահղացումների արդյունք է...

Լիովին ապացուցված է, որ (կայսրության) բոլոր տարրերի միջև փոխադարձ ոխակալության խստացումը բխել է կենտկոմի ընդունած որոշումներից և գաղտնի գործարքներից:[1]

Սամի բեյի՝ ընդհանուր դատախազ, մեղադրական խոսքից հատված՝ արտասանած 1919 թ. փետրվարի 5-ին Յոզղաթի հայերի կոտորածների դատավարության ժամանակ

Արդարությունը պետք է լիովին գործադրվի քաղաքակրթության դեմ ուղղված այս դեպքերի (ջարդերի) հեղինակների դեմ, որպեսզի սրբվեն նույն արյունոտ արատները, որոնք ուզեցել են քսել ամբողջ (թուրք) ժողովրդի ճակատին և իրենց ամբողջ մերկությամբ ներկայացնեն հասարակությանը...

Սա (տեղահանությունը) ընդհանրապես ամենամեծ պատիժն է, որը երկրի տնտեսությանը պատճառած մեծագույն վնասների հետևանքով իրականացվում է որպես վարչական և պատժողական միջոց միայն կասկածելի, վատթար և վտանգավոր անձանց հանդեպ...

Սրանից բացի, իրենց (պաշտոնատարների) ձեռքի տակ եղած մի շարք ստոր մարդկանց գործիք դարձրեցին և տարագրությունն

1. "Takvim-i Vekai", 1919, N 3571

այն աստիճանի ամոթալի և եղերական վիճակի հասցրեցին, որ անհնար է մարդկային լեզվով պատմել մանրամասները: Խեղճերի ունեցած անգամ հացի դրամը բռնությամբ վերցրին...

Այս ցավալի արարքները, որ տեսանկյունից էլ դիտվեն՝ հանցագործություն են, և հրամայողները, գործադրողները, և պատճառ հանդիսացողները պետք է հանձնվեն այս դատարանին...[1]

Ռազմական ատյանի նախագահը Անկարայի կուսակալին հեռագրեց (22 փետրվարի 1919 թ.)

Բողազլյանի ժանդարմերիայի պետ Մուստաֆա էֆենդու կողմից 15-րդ զորաբաժնին 14 հուլիսի, 1915 թ. 18 թվահամարը կրող ծածկագրի վերլուծությունից հայտնի դարձավ, որ 1 500-ից ավելի ջարդվածների անունները կրող տետրը զորաբանակից վերցնելն ու առաջին թղթատարով մեզ ուղարկելը պարտադիր կերպով խնդրում ենք:

Տետրն իսկապես կար և ուղարկվեց Կ. Պոլիս:[2]

Շահաբեդդինի Անկարայի զորաբանակի հրամանատարին ուղարկած ծածկագիրը (23 հուլիսի, 1915 թ.)

Պատիվ ունեմ Ձեզ հայտնելու, որ համաձայն զորակայքի պետի հեռագրի մինչև հիմա Բողազլյանի կայմակամի հոգածությամբ Բողազլյանում և շրջակայքում երեք հազար վեց հարյուր վաթսուն (3 660) հայեր կոտորված են:[3]

Արդարացնելով Քեմալին՝ թուրք հեղինակները գրում են

Հրամանը գալիս էր բարձրագույն հեղինակությունից՝ Միություն և առաջադիմություն կուսակցության ընդհանուր կենտրոնից: Ոչ ոք չէր կարող դեմ կանգնել այդպիսի հրամանին:[4]

1. «Ճակատամարտ», 6 փետրվարի 1919 թ.:
2. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 266:
3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 255:
4. **Պատմող Հուսամեդդին Էրթուրք, գրող Սամիհ Հաֆըզ Թանսու** Երկու շրջանների վարագույրի հետևում, Ստամբուլ, 1964 թ., էջ 297:

Ռազմական դպրոցի նախագահը 1919 թ. փետրվարի 4-ին գրեց

Էլեքճիեր գյուղում և նրա շուրջը՝ Բողազլյանի գավառի Գելլեր գյուղի մեջ և Յոզղաթի գյուղերից Թաշբինարում ու նրա շրջակայքում հայերը կոտորված ու բնաջնջված են, և նրանց գույքերն ու գոհարեղենները հափշտակված ու կողոպտված են:[1]

Սուլեյման Ֆայիզի՝ Մամուրեթ ուլ Ազիզի կայազորի հրամանատար, խոստովանությունը ռազմական ատյանում

Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մահմուդ Քեամիլ փաշայից ստացել և իր մոտ պահում է բազմաթիվ հեռագրեր, որոնք հրամայում են բնաջնջել հայերին:[2]

Լեոնի՝ Յոզղաթի կառավարիչ, տեղեկագիրը տեղի հայերի տեղահանության և կոտորածի մասին՝ ուղարկված ռազմական դպրոցին (10 փետրվարի 1919 թ.)

1915 թ. մայիսին... նոր կազմակերպության մեջ Թեշքիլաթ-ը ճետիտե արձանագրվելու համար 68 հոգի՝ մարդասպաններ, ոճրագործներ, գողեր, ավազակներ ազատ արձակվեցին Յոզղաթի բանտից ու հանձնվեցին զինվորական կենտրոնին և բանակի հրամանատարի հրամանով ուղարկվեցին Չորում:

Կատարված հետաքննությամբ հաստատվեց, որ սրանց չվերցրին ոստիկանության շարքերը: Բանտի տնօրինությունը և մատյանները հաստատում են, որ այս գործողությունը տեղի ունեցավ, երբ (պաշտոնատարների հանձնաժողովը բանտից հանվածներին) բժշկական քննության ենթարկեց և կուսակցության անդամ գրանցեց: Սա հաստատված է իրենց (այդ պաշտոնյաների) ստորագրություններով...

Ժանդարմների գնդի քարտուղար Ահմեդ բեյը, Սելևկիայի նախկին կառավարիչ և (Յոզղաթի) երևելիներից Աբդուլ Ջեբբարզադե Էդիպ բեյը վկայում են, թե Նեջաթի բեյն առաջարկել է բնաջնջել հայերին... թե (նա) ասել է, որ տեղահանությունն իր որոշակի նպատակն ունի, բայց կենտրոնը (կուսակցության) և ՆԳ նախարարը հրամայել են արմատապես բնաջնջել (հայերին), ինչը միանգամայն հայրենասիրական պարտականություն է:[3]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 307:
2. "La Renaissance", 20 ապրիլի 1919 թ.:
3. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 534:

Ռազմական դատարանում

Նախագահ.- Միություն և առաջադիմություն կուսակցության մի շարք ղեկավարների նախաձեռնությամբ տեղի ունեցած տեղահանությանը և կոտորածին, եթե մասնաճյուղերը օժանդակություն ցույց չտային, ապա այդ ծավալի ոճրագործություն տեղի չէր ունենա:

Ջուդի բեյ.- Այդ արարքը ոչ թե Միություն և առաջադիմություն կուսակցության, այլ կառավարության կողմից է կատարվել: Այն իրականացվել է համաձայն տեղահանության կանոնադրության:

Նախագահ.- Օրենքով կատարված գործողությունների համար ոչ մեկին պատասխանատվության չենք ենթարկում: Իրականությունն այն է, որ տեղահանության քողի տակ կոտորած են սարքել: Ահա այս արարքի համար է, որ պատասխանատվության ենք ենթարկում:[1]

Երիտթուրքերի դատավարության 1920 թ. ապրիլի 14-ի նիստի արձանագրությունից

Հատված Հատուկ կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Յուսուֆ Ռիզայի հարցաքննությունից, որը վերաբերում էր վրացական պատվիրակության հետ անկախ Վրաստան ստեղծելու վերաբերյալ երիտթուրքերի բանակցությանը.

Դատարանի նախագահ.- Ինչպիսի՞ն էին լինելու (այդ պետությունը) ստեղծելու պայմանները:

Յուսուֆ Ռիզա բեյ.- Վրացիները մեր տրվելիք զենքերով Կովկասում ապստամբելու և Ռուսաստանի նահանջի գիծը կտրելու էին, ավերելու էին երկաթուղիները, զենքի պատրաստման և ռազմամթերքի պահեստները օդ էին հանելու:

Նախագահ.- Այդ ժամանակ Թուրքիան պատերազմ հայտարարե՞լ էր:

Յուսուֆ Ռիզա բեյ.- Ո՛չ:

Նախագահ.- Ուրեմն ձեր (իթթիհադի) կենտրոնն արդեն որոշել էր պատերազմի մեջ մտնել, քանի որ դուք դեռ պատերազմ չհայտարարած, անցել էիք ռուսական սահմանը:[2]

1. "Takvim-i Vekai", 28 հունիսի 1919 թ.:
2. **Ա. Անտոնեան** Մեծ ոճիրը, էջ 125-126:

Յուսուֆ Ռիզա

Իմ կարծիքով, գոյություն է ունեցել մի Թեշքիլաթ-ը մախսուսե, որը կազմակերպվել է ռազմական նախարարության հրամանով և գործել է ռազմաճակատում և ընդհանրապես թշնամու գտնված շրջաններում: ...Մյուս՝ երկրորդ Թեշքիլաթ-ը մախսուսեն ստեղծվել է, որպեսզի մի շարք վիլայեթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանությունը, նկատի ունենալով, որ այդ վայրերում ժանդարմական ոստիկանությունը բավարար ուժ չի ունեցել այն գործադրելու: Թեշքիլաթ-ը մախսուսեի ստեղծած խմբերը կապ չեն ունեցել ժանդարմական ուժերի հետ... Օրինակ, հայերին գյուղերից հավաքելու և տարագրելու խնդրում ժանդարմական ուժերը չէին բավականացնում: ...Բանակը ժանդարմին իր հետ ռազմաճակատ էր տարել: Որևէ գյուղի տեղահանության համար ուղարկվում էր երկու ժանդարմ, իսկ նրանց օգնելու համար էլ նշանակվում էին տվյալ գյուղին կամ շրջանին ծանոթ ձեռնահաս և փորձառու մի քանի մարդիկ: Հավաքագրում էին: Եվ դա անվանում էին Թեշքիլաթ-ը մախսուսե...

Այնտեղ, որտեղ դրանք ստեղծվել են, կառավարվել են այդ շրջանի քաղաքացիական առաջնորդների (իշխանությունների) կողմից: Տվյալ վայրի պատասխանատու քարտուղարներն անպաշտոն խառնվել են այդ գործերին, դրանք ուղղակիորեն տեղական բնույթի գործեր են եղել:[1]

Ռազմական դատարանի նախագահ.- Գիտե՞ք, որ Բեհաէդդին Շաքիր բեյի շրջագայությունից հետո սկսվել են (հայերի) տեղահանությունն ու կոտորածները:

Ռիզա բեյ.- Ես հետագայում իմացա այդ մասին:

Նախագահ.- (Ջեմալ բեյին) Թեշքիլաթ-ը մախսուսեն ձեր տրամադրության տակ եղած ժամանակ զինվորական կազմակերպություն է եղել, մինչդեռ դուք դրամը ուղարկել եք ոչ զինվորական պաշտոնյաներին, Խալիլ փաշայի կողմից Միդհատ Շյուքրի բեյին ուղարկված հեռագրերը... պարզորոշ ցույց են տալիս, որ Թեշքիլաթ-ը մախսուսեի և կենտրոնական կոմիտեի միջևներքին կապ է գոյություն ունեցել: (Քարտուղարը կարդում է);

«Միդհատ Շյուքրի էֆենդիին.

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3554:

Հարգելի եղբայր.

Իզմիթի, Բրուսայի, Բանդրմայի, Բալըքեսիրի և այլ վայրերի պատասխանատու քարտուղարների միջոցով մեկ շաբաթվա ընթացքում հատուկ մարդկանց գաղտնապես հավաքելու մասին խնդրվում է տեղեկություն տալ:

13 նոյեմբերի 1914 թ., Ազիզ, Աքըֆ, Նազըմ, Խալիլ»:

«Իզմիթի մութեսարիֆությանը.

Հարյուր չեթեներին ճամփու դրեք զինվորների անվան տակ և այդ մասին տեղեկացրեք մեզ: Բանտարկյալների ազատ արձակման մասին նախարարությունից հրաման է տրվելու:

16 նոյեմբերի, 1914 թ., Խալիլ»:[1]

Միդհատ Շյուքրիի՝ երիտթուրքերի կենտկոմի քարտուղար, ցուցմունքը դատարանում

...(Տեղահանությունը) տեղի է ունեցել զինվորական նկատառումով, ինչ որ պատերազմական գործողությունների հետ է կապված... Կոտորածի հարցում կենտկոմն ու բոլոր ընկերներս լրիվ դեմ էինք: Ես անձամբ այդ մասին զեկուցեցի ՆԳ նախարարությանը... իմ զեկույցին տրվեց հետևյալ պատասխանը. «Ստույգ հանձնաժողով եմ ուղարկել, վստահ եղեք, հանգիստ եղեք, այդ արարքները կանխվելու են, մի քանի հարյուր հոգի ձերբակալվեցին և հանձնվեցին ռազմական ատյանին, մի քանիսը մահվան են դատապարտվել»...[2]

Կովկասյան ժողովուրդների շրջանում խռովություն սերմանելու համար անհրաժեշտ էր (Կովկաս) ուղարկել այդ տեղերին ծանոթ, լեզուն տիրապետող մահմեդականների...

...(Տեղերը) հայտնել էինք, որ մեր փնտրած մարդիկ նամուսի տեր, լեզու իմացող, Կովկասի իրավիճակին ծանոթ և հեղինակություն վայելող անձնավորություններ լինեն: Իսկ ՆԳ նախարարությունը մութեսարիֆներից պահանջել է այլ մարդիկ:[3]

Զիա Գեոքալպ

(Կոտորածների) իսկական եղելության մասին մեզ ոչ մի տեղեկություն չէր հասնում, շատ թեթև լուրեր էին գալիս... կենտկոմի անդամներն

1. "Takvim-i Vekai", 8 մայիսի 1919 թ., թիվ 3549:
2. **Հ. Փափազյան** Հայերի ցեղասպանությունը, էջ 77:
3. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3557:

անձամբ դիմում էին ՆԳՆ կամ էլ մյուս նախարարներին, հարցնելով այդ խնդրի առաջ գալը կամ ինչ ձևով տեղի ունենալը և ցանկանում էին, որ այն կանխվի:

Այդ (կոտորածների) լուրերն առնելուց հետո բոլորն էլ անիծում և ատելությամբ էին խոսում դրանց մասին...

Բազմաթիվ անգամ բողոքել ենք նախարարներին և մենք ենք պատճառ հանդիսացել, որպեսզի այդ (կոտորածների իրողությունը քննող) հանձնաժողովները ուղարկվեին:[1]

Սիմեոն Ջևադ՝ Սպամբուլի նախկին պարեկ, Հատուկ կազմակերպության անդամ

Կամավորների ջոկատներ կազմակերպվելուց հետո, ռազմական նախարարության հրահանգով դրանք ենթարկվում էին բանակի հրամանատարությանը: Իմ պաշտոնավարությունից առաջ մի քանի խմբեր գնացել էին Կովկաս... զինվորական ծառայության հետ առնչություն չունեցողների ընտանիքներին այստեղ ռոճիկ էր հատկացվում... Բազմաթիվ հրամաններ կան, որ (այդ խմբերը) մեկնելուց հետո բոլորովին թղթակցություն չունենային այստեղի հետ... մի քանի ջոկատներ, իբր թե բանակում ծառայելու համար սպաների ու զինվորների հետ (հանձնվել են վալիների իրավասությանը)... Նրանք զինված էին ռազմական նախարարությունից, բանակի շտաբից հատկացված զենքերով:[2]

Աբդի բեյ՝ Անկարայի նախկին պատգամավոր, Հատուկ կազմակերպության ղեկավարներից

...Սահմանամերձ վիլայեթների վալիները, այդ թվում՝ Տրապիզոնի և Էրզրումի վալիները, օգնություն են ցուցաբերել: Այսինքն՝ նրանք մի տեսակ համարվում էին այդ վայրերի Թեշքիլաթ-ը մախսուսեի մասնաճյուղերի անդամները:[3]

(Հանձնաժողովի համար պաշտոնատեղ էր վարձված Նուրի Օսմանիեում, «Թասվիր-ի էֆքյար» տպարանի դիմաց, թիվ 32 տանը: (Կազմակերպության ծախսերի գումարները) մի քան անգամ ստացել ենք ազգային պաշտպանության նախարարությունից: Ավելի շատ ստանում էինք ռազմական գաղտնի հաստատությունից:[4]

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3547:
2. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3548:
3. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3548:
4. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3557:

Ռազմական դատարանի 1919 թ. ապրիլի 27-ի նիստի արձանագրությունից

Թեշքիլաթ-ը մախսուսեի վերաբերյալ կարևոր մաս կազմող հեռագրերը, փաստաթղթերը, ինչպես նաև ընդհանուր կենտրոնի բոլոր թղթերը և գումարները փախցրել են: Եվ նույնիսկ ընդհանուր անվտանգության տնօրեն Ազիզ բեյը Թալեաթի հրաժարականից առաջ (15 սեպտեմբերի 1918 թ.) պաշտոնատանը եղած կարևոր տեղեկագրերը, հաղորդագրությունները պարունակող թղթածրարները իր հրաժարականից հետո վերցրել ու չի վերադարձրել: Այդ մասին պաշտոնական տեղեկություն ստացանք ներքին գործերի նախարարությունից, նաև ձեռք բերեցինք գրավոր վկայություններ, որոնք հաստատում են կարևոր փաստաթղթերի գոյությունը:[1]

Ռազմական դատարանի լսումներից (4 մայիսի 1919 թ.)

Նախագահ.- Իթթիհադ վե Թերաքքը Ջեմիյեթը Թեջեդդյուդ կուսակցությանը փոխանցելու ժամանակ ընդհանուր կենտրոնին պատկանող բոլոր արձանագրություններն ու զանազան փաստաթղթերը այդ կենտրոնի անունից հանձնվեցի՞ն Թեջեդդյուդ կուսակցությանը:

Միդհատ Շուքրի.- Իհարկե, էֆենդի: Բայց հետո իմացա, որ դոկտ. Նազըմ բեյը դրանք վերացրել է:

Նախագահ.- Իթթիհադ վե Թերաքքը կուսակցությունը գավառներում ինչպիսի՞ պաշտոնատարներ ուներ:

Զիա Գեոքալփ.- Սկզբում կենտրոնական մարմիններն էին տեղերում ներկայացուցիչներ ընտրում: Հետո քննիչներ նշանակվեցին:

Նախագահ.- Ջեմիեթի կամ կուսակցության տոմարներն ու կարևոր արձանագրությունները հանձնվեցի՞ն Թեջեդդյուդ կուսակցությանը:

Զիա Գեոքալփ.- Բնականաբար հանձնվեցին... Ես, Ձեր ծառան, ընդհանուր քարտուղարից (կուսակցության) իմացա, որ դոկտ. Նազըմ բեյը ջեմիյեթի պատմության վերաբերյալ փաստաթղթեր է ուզել և նա էլ (քարտուղարը) ասել է. «Շատ լավ: Վերցրեք»... Բայց բանտ ընկնելուց հետո իմացա, որ բոլոր թղթերը միասին տարել են սնդուկով՝ առանց ջոկելու:

1. Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 59:

Իսմեթ Ինենյու՝ Էնվերի խորհրդական

Փոխգնդապետ Հուսամեդդինը, որ նախարարության շենքում ուներ առանձին բաժանմունք, որտեղ Նուրը Օսմանիե կենտրոնից բացի հավաքվում էին ցեղասպանության վերաբերյալ բոլոր գաղտնի փաստաթղթերը, պատմել է. «Թեշքիլաթի և մյուս բոլոր գաղտնի փաստաթղթերը տարել, պահել եմ Ստամբուլում Ֆաթիհի մզկիթի թաքուն սենյակի մի անկյունում»:[1]

Մուսա Քյազիմ Շեյխ ուլ Իսլամ

Մենք այդ (կոտորածների) մասին լսեցինք: Դրանց բոլորին առարկելով՝ հավանություն չտվինք: Այդ մասին ես դիմեցի Սայիդ Հալիմ փաշային և ասացի. «Այս ի՞նչ բան է, այս մարդուն (Թալեաթին) ո՞վ տվեց այդ արտոնությունը. մի՞թե հիմա դրա ժամանակն է»: Սայիդ Հալիմ փաշան պատասխանեց այսպես. «Այդ բոլորի մասին ես էլ տեղյակ չեմ, այդ մարդը, այդ խենթ մարդը հավանաբար կատարել է ինքնուրույն: Բայց ի՞նչ կարող ենք անել, եղածը վերջացած է արդեն... Միայն տեղի ունենալուց հետո իմացա այդ մասին»: Բավականին ժամանակ հետո ես էլ լսեցի, որ (հայերին) ընտանիքներով տեղահանում են ու աքսորում այս ու այն կողմ... Մեր հարցումին պատասխանեցին հետևյալ կերպ. «Այդ բոլորն անհրաժեշտություն է»:[2]

Աբդուլ Ղանի՝ երիտթուրքերի կուսակցության Էդիրնեի պատասխանատու քարտուղար

Մի օր վաղ առավոտյան, երբ դեռ անկողնի մեջ էի, ինձ մոտ եկան մի քանի ծանոթ հայեր և պատմեցին տեղի ունեցած դեպքերի մասին. «Մեր մի մասին տարան, մյուսներին նույնպես տանելու են» ասելով՝ ինձնից օգնություն խնդրեցին... միասին գնացինք վիլայեթ: Վալիին ասացի, որ նրանք ոչ մի առնչություն չունեն «Կոմիտեի» հետ, որ անմեղ մարդիկ են և խնդրեցի նրանց չտեղահանել: Վալին ասաց. «Այս մարդկանց համար ես էլ եմ մտահոգ, բայց հրամանը խիստ է և վերաբերում է բոլորին»:

Տեղահանությունը կատարվում էր օրենքի հիման վրա... Այն գործադրվում էր տվյալ վիլայեթի վալիի կողմից, անգամ ոստիկանության և ժանդարմերիայի միջոցով...

1. «Իքի Դեվրին փերդէ Արքասը» կամ Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 61:
2. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3573:

...Տեղահանության համար հատուկ օրեր էին նշանակում և մարդկանց զգուշացվում էր, որ 10-15 օր անց ենթարկվելու են տեղահանության: ...Էդիրնեում այդպիսի բաներ տեղի չունեցան: Ինչպես ասացի, մի առավոտ նկատեցինք, որ տեղահանություն է կատարվել: ...Տեղահանությունը տեղի էր ունեցել մի գիշերվա ընթացքում...

...Տեղահանվածների ամբողջ ունեցվածքը վաճառվեց:

Ինքն՝ Աբդուլ Ղանը, Էդիրնեի դատարանի տվյալներով բազմաթիվ հայեր սպանելել և բնաջնջել տուած է. այդ ոճիրներուն զուգընթաց բռնագաղթի վրա ալ մեծ ազդեցութիւն բանեցուցած է և տարագրութեան ընթացքին՝ զինեալ չեթեներու կողքին շրջած է և փոլիսներու կայաններէն և պահականոցներէն տարագրուած հայերու դրամները կողոպտելու համար հրաման ըրած է. Գազազեան եղբայրներուն 100 հազ. ոսկի արժողութեամբ մթերանոցի ապրանքները իր ծառային՝ Խայրուլահին 1 000 ոսկի չնչին գնով փոխանցած է: Էդիրնեի շրջանին մեջ միւս իր ընկերակիցներուն ալ ամենէն ոչինչ գիներով լքեալ գոյքեր փոխանցած է:[1]

Մուսթաֆա Նազրմ բեյ՝ երիտթուրքերի պարագլուխների դատավարության դատախազ

Բարբարոսաբար իրականացված կոտորածները, անարգ չարաշահումները, դժբախտաբար, նույնպես պատկանում են Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմին, նրա պլենումներին և Թեշքիլաթ-ը մախսուսեի գործունեությանը: Եվ այս անձնավորությունները (երիտթուրք ղեկավարներ) դատի են տրվում ոչ թե նախարարի պաշտոնում գտնվելու համար, այլ Միություն և առաջադիմություն կուսակցության մեջ ղեկավար դիրք ունենալու և կենտկոմի անդամ լինելու հանգամանքով: Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մրոտած սև բծերը կարելի է ջնջել միմիայն արդարության գրչով:[2]

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թթ. 3859, 3596: Հ. Ղազարեան Ցեղասպան թուրքը, էջ 253:

2."Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3540:

Ռազմական ատյանի նախագահի 1919 թ. փետրվարի 8-ի հեռագիրը Յոզղաթի կառավարչին

...Յագուպ Հոջան Կարա-Քեյկ գյուղի 250 հայ ընտանիքներին ազատելու համար նրանց մահմեդականացրել էր և երբ Յոզղաթի փոխմութեսարիֆ Քեմալ բեյը ցանկություն էր հայտնել նրանց էլ բնաջնջել, Հոջան առարկել էր, թե իսլամական օրենքով թույլատրելի չէ նրանց կոտորել, (Քեմալը) պատասխանել է. «Դուք նրանց իսլամացրիք Շերիաթի օրենքով, ես էլ նրանց գլուխները կկտրեմ և կտրել կտամ քաղաքացիական օրենքով»: Արդարև, բոլոր տղամարդկանց, ինչպես նաև արգասաբեր Կեռոնէ ավանի Էնաս գյուղի ուրացող հայերը Թանիշի Չիֆթլիկի ձորի մեջ ջարդել տվեց և (դիակները նետեց) գետակի մեջ: Նմանապես ջարդել տվեց Ինջիրլի գյուղի բողոքական 70 ընտանիքների անդամների:[1]

Ջևադ բեյի հարցաքննությունը (քաղվածք)

Դատարանի նախագահ.- Ասում եք, թե Թեշքիլաթ-ը մախսուսեն կախում ուներ զինվորական պաշտոնեությունից: Եթե այդպես լիներ, զինվորական պաշտոնատունը ստիպված էր լինելու վճարել դրանց ծախսերը... (մինչդեռ) ՆԳ նախարարությունն էր հրաման տալիս, (իթթիհադի) կենտրոնն էր հրաման տալիս: Դուք էլ գիտեք, որ ռազմական նախարարության գործերին միջամտություն չի կարող լինել...

Սակայն (ընդհանուր կենտրոնի) տված ինչ-ինչ հրամանները հակառակ են ՆԳՆ տված հրամաններին...

Մեկը, ոճրագործներին բանտերից ազատելով, ուզում էր նրանց օգտագործել այս գործերում, մյուսը հակառակ կարծիքն էր արտահայտում...

Ընդհանուր կենտրոնը միայն միջամտողի դերում չի մնում, այլ գործի մեջ է մտնում՝ այսպես արեք, այնպես արեք...

Ընդհանուր կենտրոնի թելադրանքով պատասխանատու պատվիրակները կարծիք էին արտահայտում կամ թելադրում էին:

...Թեշքիլաթ-ը մախսուսեի համար կարգադրությունները եղել են ՆԳՆ-ից:[2]

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 291:
2. "Takvim-i Vekai", 14 մայիսի 1919 թ.:

Ընդհանուր կենտրոնի կողմից պատասխանատու պատվիրակներ և պատասխանատու քարտուղարներ են ուղարկվել Անկարա, Կաստամունու, Յոզղաթ, Երզնկա, Տրապիզոն, Սեբաստիա և ուրիշ շատ տեղեր, որտեղ նրանք վալիներին, մութեսարիֆներին ինչ-ինչ գաղտնի հրամաններ են հաղորդել:[1]

Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարները... իրենց դիվային ծրագրերն իրականացրին իրենց իսկ կազմակերպած մարդասպան հրոսակախմբերի միջոցով:[2]

Միություն և առաջադիմություն կուսակցության պատգամավորները և պատասխանատու քարտուղարները մի շարք վայրերում մասնակցություն են ունեցել և նույնիսկ հիմնական դեր են խաղացել (տեղահանության և կոտորածի) խնդրում: Օրինակ, Բ. Շաքիր բեյը, դոկտ. Նազըմ բեյը... իրականում իրենք են կազմակերպել (կոտորածները)... Դրանց կենտկոմի իրազեկության վերաբերյալ բավական թվով գրավոր ապացույցներ կան... Պարզվում է, որ այստեղի (Կ. Պոլսի) կենտրոնն ու արտաքին մասնաճյուղերը միաձայն հավանություն են տվել այդ գործի (կոտորածների) իրականացմանը...

(Երիտթուրքերի) համագումարում եղած 300 հոգին բոլորն էլ այս մտքին են եղել...

Այդ շրջանների պատգամավորներին և պատասխանատու քարտուղարներին պետք է հանցագործ համարել...

Կենտրոնական կոմիտեն (Թեշքիլաթ-ը մախսուսեի) զինելու համար տվել էր իր համաձայնությունը, նույնիսկ այդ մասին հրամաններ էր արձակել: Այդ բոլորն առկա են փաստաթղթերում:[3]

Պատմաբան Թայիբ Գեոքբիլգինը պնդում է. «Պատմության ողջ ընթացքում թուրքերի հայրենիքը հանդիսացող արևելյան վիլայեթներում հայերը շատ վաղուց աննշան փոքրամասնություն են կազմել»:[4]

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3549:

2. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3540 կամ **Հ. Փափազյան** Հայերի ցեղասպանությունը, էջ 49:

3. "Takvim-i Vekai", 1919թ., թթ. 3547, 3554:

4. Ն. տ.:

Յուսուֆ Բայուրը հայերի տեղահանությունը որակում է որպես լոկ ստիպողական միջոց թուրքական բանակի թիկունքը «հայկական ապստամբությունից» ապահովելու համար, որ նրանց նկատմամբ կիրառված «պատժիչ միջոցառումները» հետևանք էին հայկական խռովությունների և ոչ թե հայերի բնաջնջման կառավարական ծրագրի մշակման ու գործադրման:[1]

Էնվեր Զիա Քարալը գրում է. «Դաշնակից տերությունների հետ համագործակցելով՝ հայերը թուրքերի դեմ քաղաքացիական պատերազմի ճակատ բացեցին: Դրանում դաշնակիցները շահագրգռված էին, քանի որ հայկական հարցը նրանց համար պատրվակ էր հայերին զինելու, թուրքերին թիկունքից հարվածելու և այդ եղանակով կարճ ժամանակում պատերազմն ավարտելու համար: Թուրքերը ձգտում էին պաշտպանել պետության գոյությունը, կանխել հայերի համագործակցությունը դաշնակից պետությունների հետ՝ հայերին էվակուացնելով ռազմական գոտիներից»:[2]

Այնուհետև Քարալը գրում է. «Բացարձակ ճշմարտություն է, որ երկու կողմերից էլ թափվել է շատ արյուն այն պատճառով, որ հայերի կողմից ցույց է տրվել զինված դիմադրություն, իսկ զգալի թվով հայեր կյանքից զրկվել են հիվանդությունների, ցրտի, ինչպես նաև այն պատճառով, որ նրանք դիմել են վրեժխնդրական գործողությունների, մի բան, որ չէր կարող հավանության արժանանալ թուրք ժողովրդի կողմից»:[3]

Քարալը գտնում է, որ իր բերած փաստերը «օգնում են հաստատելու, թե ինչու ցավալի նախաձեռնությունները չեն կարող մեկնաբանվել որպես հայ ազգի սպանություն», իսկ այդ փաստերն են հնչակյան կոմիտեի փարիզյան կենտրոնի որոշման մի նախագիծ, որն ավարտվում է «Կեցցե Հայաստանը» կոչով և մի թռուցիկով, թե «հասել է ժամը, երբ հայերը պետք է ազատվեն օսմանյան կեղեքումից»»:[4]

Ի. Ջ. Օզքայան բռնագաղթի պատճառը համարում է «հայ ազգաբնակչության» խռովարար վարքագիծը, որը հրահրվում է Ռուսաստանի

1. "Takvim-i Vekai", 1919թ., թթ. 3547, 3554:
2. Ն. տ.:
3. Ն. տ., էջ 15-16:
4. Ն. տ.:

կողմից: «Երբ, ցավոք, պատերազմական իրավիճակ հայտարարվեց Օսմանյան կայսրության և այլ երկրների խմբի միջև, որին պատկանում էր իմպերիալիստական Ռուսական կայսրությունը, հայկական կոմիտեները, առանց որևէ պատճառի և հակառակ ամեն մի քաղաքականության ու ողջամտության, գտան, որ իրենք պատերազմական վիճակի մեջ են այն պետության հետ, որին իրենք պատկանում էին... Այդ իսկ պատճառով կայսրական կառավարությունը որոշում ընդունեց ոչնչացնել հայկական այդ կոմիտեները և ցրել նրանց ղեկավարներին: Որոշումն ի կատար ածվեց սկսած 1915 թվականի ապրիլի 15-ից, զորակոչ հայտարարելուց գրեթե ինը ամիս հետո»:[1]

Ստում է: Հայ երիտասարդության կոտորածը սկսվել էր դրանից առաջ: Սուտ է նաև նրա այն պնդումը, թե ապրիլի 24-ին լոկ ցրվել են հայկական կոմիտեներն ու նրանց ղեկավարները, իրականում ձերբակալվել ու ոչնչացվել է 600 հայ մտավորական:

Ֆահրի Բելենը գրում է. «Թուրքական բանակի թիկունքում ծայր առած հայկական ապստամբության կազմակերպմամբ կառավարությունը հրաման արձակեց՝ հայերին ճակատային գծից հեռացնելու և նրանց Սիրիա և Իրաք ուղարկելու մասին»:[2]

Նա դժգոհում է, որ հայերի սպանության մասին խոսում են, իսկ մահմեդականներինը՝ ոչ:

Թյուրքկայա Աթայովի «Թռուցիկ հայացք հայկական հարցի վրա» (անգլերեն) գրքույկում հեղինակը պնդում է, թե հայերը հանդես էին գալիս պատերազմող կողմ՝ Ռուսաստանի կողքին, հետևաբար նրանք սահմանից պետք է հեռացվեին- «տեղափոխվեին»:

Ամերիկյան հյուպատոս **Օսկար Կայզերը** 1915 թ. հուլիսի 28-ի թվակիր զեկուցագրում գրում է. «Գերմանացի դեսպանն ինձ ասաց, որ ինքը չի կարծում, որ հայերը կարող են վերադառնալ Տրապիզոն նույնիսկ պատերազմի ավարտից հետո»:[3]

1. Ն. տ.:
2. Ն. տ.:
3. Ն. տ.:

Թևֆիկ փաշա՝ նախկին մեծ վեզիր

Միայն այդ ճանապարհով (միջազգային հանձնաժողով ստեղծելու) Եվրոպան կարող է իմանալ ճշմարտությունը: Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում տեղի ունեցած ծանր իրադարձությունները, այլև խորապես ցավում ենք դրանց համար: Մենք այժմ դատում ենք նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում:[1]

Մուստաֆա Քեմալի՝ գեներալ, ցուցմունքը (27 հունվարի 1919 թ.)

Փաշաները, որոնք իրագործեցին անասելի և աներևակայելի ոճիրներ և որոնք երկիրը հասցրեցին ներկա վիճակին, իրենց անձնական շահերի համար նորից հրահրում են խռովություններ: Նրանք սկզբնավորեցին ամեն տեսակի բռնարարք, կազմակերպեցին տեղահանություններ և ջարդեր, նավթով այրեցին ծծկեր երեխաներին, ծնողների ներկայությամբ բռնաբարեցին կանանց և դեռահաս աղջիկներին, կապկպեցին, վիրավորեցին և բաժանեցին երիտասարդ աղջիկներին իրենց հայրերից ու մայրերից, բռնագրավեցին նրանց անշարժ ու շարժական գույքը, կանանց ողբալի վիճակում աքսորեցին մինչև Մոսուլ՝ կատարելով ամեն տեսակի բռնություններ: Նրանք նավերի վրա բարձեցին հազարավոր անմեղների և ծովը նետեցին: Մունետիկների միջոցով նրանք հռչակել տվեցին, որ օսմանյան կառավարությանը հպատակ ոչ մահմեդականները պարտավոր են հրաժարվել իրենց հավատից և ընդունել իսլամը: Նրանք պարտադրեցին դավանափոխությունը, ամբողջ ամիսներով քաղցած քայլել տվեցին ծերերին և ստիպեցին կատարել տաժանակիր աշխատանքներ: Նրանք կանանց նետել տվեցին անտանելի պայմաններում գտնվող հասարակաց տներ: Դեպք, որ աննախադեպ է որևէ ազգի պատմության մեջ:[2]

Դարպարանի նախագահը Քեմալին

Արդյո՞ք տեղեակ ես, թե Եոզղատէն 130 հայեր կոտորված են Պողազլյանի գավառակին մեջ Ճեվիզլի խանի և Նաջթ խանի միջև:

Դուն ակումբը (երիտթուրքերի տեղական) անձամբ հաստատեցիր վաճառական Աթանեսեանի տան մեջ, որ տեղահանութեան պատրվակով սպաննվեցավ...

1. "New York Times", 13 մարտի 1919 թ.:

2. **Paul du Veou** La Passion de La Cilicle, 1919-1922, p. 54.

...Դուն առանց փարա մը վճարելու գրավեցիր անոր տունն ու կարասիները:

Մինչև 23 հուլիս 1915 թուականը Պողոսլյանի և շրջակայ գյուղերէն դուն 3 660 հայեր կոտորել տուած ես. զորաբաժնի հրամանատար Ճեհապէտտին պեյի կողմէ զորաբանակի հրամանատարին ղրկուած 23 հուլիսի 1915 և 207 թուահամար ծածկագիր հեռագրին մեջ գրուած է:

Այս թիվը հազիվ մինչև 23 հուլիս 1915 թուականը կոտորված հայերու թիվն է:[1]

Թուրք պաշտոնատարի վկայություն

Բժիշկ Քեչյանի կինը աղաչեց ինձ, որ ի նպաստ իրեն բարեխոսեմ: Խնդրեցի հեռագրատան տնօրենի օգնությունը: Նախ մերժեց, ապա համաձայնեց կնոջն ազատել, եթե ընդունի մահմեդականություն և ամուսնանա իր եղբոր հետ:[2]

Սաադեդդինի՝ Յոզղաթի մութեսարիֆ, Քեմալ բեյի դատապաշտպան, ելույթը դատարանում (5 փետրվարի 1919 թ.)

Այս մեղադրյալներն արժանի են ներողամտության, քանի որ նրանք կատարել են հրամաններ: Առաջին հերթին պետք է պատժել նախարարներին, կառավարության բարձրաստիճան պաշտոնատարներին ու նրանց մեղսակիցներին, այնուհետև, անցկացնելով համապատասխան քննություն, պարզել նրանց ենթակա անձանց դերը... Հայերին վտարելու հրամանը հավանության է արժանացել նախարարների խորհրդում և օրինականության ուժ է ստացել սուլթանի կայսերական մի իրադեով:[3]

Մ. Ռիֆաթ՝ Յոզղաթի ավագանու ներկայացուցիչ

Երբ կառավարությունը հայերին աքսորելու հրաման արձակեց, այս մարդը (Թևֆիկ բեյը) իր շուրջը հավաքեց ոճրագործների ու ասպատակների ոհմակ և սկսեց իր հրոսակային (չեթեական) գործունեությունը...

Այս հայտարարությունս հաստատում եմ և ձեզ կներկայացնեմ, թե ինչպես Յոզղաթի 35 հազ. հայեր կոտորվեցին և, ինչպես նրանց ամբողջ հարստությունը կողոպտվեց: Սկզբում Թևֆիկ բեյը Յոզղաթի հայերի 15-75

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 239- Մ240:
2. "La Renaissance", 20 փետրվարի 1919 թ.:
3. «Ժամանակ», 6 փետրվարի 1919 թ.:

տարեկան այր մարդկանց Յոզղաթից երեք ժամ հեռու Տաշ Բունար գյուղը աքսորեց, նրանց կացիններով սպանել տվեց: Կոտորածը տեղի ունեցավ վայրենի աղաղակներով...

Մամի բեյի՝ Յոզղաթի արտակարգ ռազմական դատարանի գլխավոր դատախազ, հայտարարությունը

Նախ հարկ է ճշտել, որ շատ փոքր էր թիվը այն թուրքերի, որոնք իսկապես դեմ էին հայերի կոտորածին:

Ոչ մի թուրք չէր կարող և չի կարող արդար դատել և արդարությունը անկողմնակալ գործադրել:

Թուրքական կառավարությունը անկեղծորեն չէր ուզում արդարացի դատել կոտորածի պատասխանատուներին, այլ ուզում էր ճնշման տակ, հատկապես դաշնակիցներին ցույց տալ, թե Թուրքիայում դեռևս արդարություն գոյություն ունի...

Դաշնակիցները ևս, որոնք ճնշում էին գործադրում թուրքական պետության վրա, իրապես համաձայն չէին, որ դատվեին բոլոր թուրք պատասխանատուները, այլ միայն մի քանի գլխավոր անձինք պատժվեին՝ օրինակ լինելու համար: Ռազմական դատարանի այն անդամները, որոնք իրոք անկեղծորեն ցանկանում էին ոճրագործների նկատմամբ արդար օրենքը կիրառել, վախի ու սպառնալիքի տակ էին, ինչպես զորավար քուրդ Մուստաֆա փաշան, որը բանտարկվեց իր հանդգնության համար, որովհետև խստորեն հարցաքննել էր նախարար Ավնի փաշային:

Ընդհանրապես դատարանների անդամների վրա ամեն տեսակի ճնշումներ էին գործադրվում հանցագործներին պատասխանատվությունից փրկելու դիտավորությամբ և կառավարությանն ու երկրի ազդեցիկ ուժերին շատ հաճախ այդ հաջողվում է:[1]

«Թասվիրի Էֆքյար» օրաթերթ

Չկարողացանք որևէ կերպ արդարադատություն կիրառել մեր երկրի աղետի համար պատասխանատու այս հեղինակների հանդեպ և ոչ էլ հասկացանք, թե քանի դեռ նրանք անպատիժ են, մենք չենք կարող ներկայանալ իբրև ազգ, իբրև քաղաքակիրթ պետություն:

1. **Գրիկեր** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 305-308:

Դամադ Ֆերիդ փաշան, որը վարչապետի պաշտոնում հաջորդեց Թևֆիկ փաշային, վերջինիս նման ինքն էլ չկարողացավ գործել, արդարություն և հզորություն դրսևորել, արդարություն գործադրելու մեջ հետևողականություն հանդես բերել: Նա ձերբակալեց մի մեծ խումբ անձանց, ապա ազատ արձակեց և դրանով դաշնակիցներին ներշնչեց, թե մեզանում արդարության կիրառումը վճռական բնույթի պահանջ չէ և թե ինչ կատարվեց, պարզապես աչքերին փոշի ցանելու համար էր:[1]

Մեղադրական ակտ

1919թ. փետրվարի 15-ին Կ. Պոլսում սկսվեց երիտթուրքերի կուսակցության ղեկավարների դատավարությունը: Նման դատավարություններ տեղի ունեցան նաև Տրապիզոնում ու Խարբերդում:

«Մենք ի գիտություն ընդունեցինք ռազմական դատարանի գլխավոր դատախազի եզրակացությունը, ինչպես նաև հետաքննության հիման վրա ստեղծված փաստաթղթերն ու դատական գործերը Սայիդ Խալիլ փաշայի՝ Միություն և առաջադիմություն կոմիտեի նախագահ... ինչպես նաև գլխավոր խորհրդի անդամներ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Ի. Շաքիրի... և «Հատուկ կազմակերպության» կենտրոնական ապարատի անդամներ դոկտոր Բեհաեդդին Շաքիրի, դոկտորներ Նազըմի, Աթըֆի ... և այլոց վերաբերյալ»:

Միություն և առաջադիմություն կոմիտեն միաժամանակ բաղկացած էր երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը լեգալ էր և հանդես էր գալիս պաշտոնապես, մյուսը գաղտնի էր, գործում էր հրամանների հիման վրա...

Կան ապացույցներ, որոնք վկայում են, որ Կոմիտեն ... մեղադրվում է մի շարք սպանությունների, թալանի և անօրինականությունների մեջ...այդ Կոմիտեի վերը նշված ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը հաստատված է: Հանցագործությունները, որոնց մեջ նրանք մեղադրվում են, հիմնավորվում են ստորև բերված փաստերով:

1914 թ. հուլիսին ընդհանուր զորահավաքից անմիջապես հետո, որ հայտարարվեց Կոմիտեի ղեկավարներ Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի կողմից... օգտվելով, որ Եվրոպայում մտքերը զբաղված են համաշխարհային պատերազմով, ձգտեցին չլուծված հարցերը լուծել կոպիտ ուժի միջոցով...

1. "La Renaissance", 30 մայիսի 1919 թ.:

Դրա համար նրանք կայսրությունը ներքաշեցին համաշխարհային պատերազմի մեջ... Որպեսզի իրականացնեն իրենց գաղտնի պլանները, նրանք ակտիվացրին գաղտնի կոմիտեների գործունեությունը, ստեղծեցին «Հատուկ կազմակերպություն»՝ կազմված բանտերից բաց թողնված հանցագործներից, որոնք գործում էին հատուկ հրամաններով ու հրահանգներով... Գործակալներին ու անդամներին մեծ գումարներ բաժանվեցին...

Դոկտ. Բ. Շաքիրը երիտթուրքերի ղեկավարներին տրամադրեց ծածկագրերի բանալիները, նրանց տրամադրության տակ դրեց շատ դրամ, ավտոմեքենաներ և ավերածության միջոցներ և այդպիսով գաղտնի աջակցում էր Միություն և առաջադիմություն կոմիտեի ղեկավարներին:

Այդ կոմիտեի ցուցումներով նահանգներ ուղարկված նրա որոշ անդամներ, ինչպես նաև կոմիտեին ենթակա առանձին պաշտոնյաներ մասամբ հարստանալու հնարավորության գայթակղությամբ, մասամբ էլ վախից դրդված, որոշ հանցագործների օգնությամբ ձեռնամուխ եղան ազգաբնակչության թալանի, կոտորածների, տների հրդեհման, գողության և խոշտանգումների...

Ամենաշատը տուժեցին հայերը, բայց շատ տուժածներ կային նաև թուրքերից:

...Տարբեր տեղերում և տարբեր ժամանակաշրջաններում հայերի բռնագաղթի ժամանակ կատարված հանցագործությունները մեկուսացված և լոկալ գործողություններ չէին: Դրանք նախապես մտածված էին և կազմակերպված վերը նշված անձանցից կազմված կենտրոնական օրգանի ցուցումներով կամ բանավոր հրահանգների միջոցով:

Թիվ. 67 հեռագիրը, որ... Խալիլ բեյը հասցեագրել էր Իզմիթի նահանգապետին, հաստատում է, որ ցուցմունք էր տրվել բանտերից հանցագործներին ազատելու և նրանցից ոմանց ավազակախմբապետեր նշանակելու մասին:

Թիվ 68 հեռագրում, որ տրվել է 1914 թ. նոյեմբերին... նշվում է, որ ավերածությունների սարքավորումները հանձնված են «Հատուկ կազմակերպությանը»... Բայց կատարված հետաքննությունից հետևում է, որ «Հատուկ կազմակերպությանը» պատկանող փաստաթղթերի զգալի մասը և կոմիտեի կենտրոնական վարչության բոլոր փաստաթղթերն ու գործերը գողացված են...

Այն փաստը, որ Դիարբեքիրում կոտորածներն ու գազանությունները կատարվել են Թալեաթի (փաշայի) հրահրմամբ, հաստատվում են Զորի

նահանգապետ Ալի Սուադ բեյի կողմից Թալեաթին հասցեագրված ծածկագիր հեռագրով... Ներքին գործերի նախարարության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը Քիլիսայի կայմակամն էր Կ. Պոլսից Հալեպ գործուղված, Ա. Նուրի բեյը հայտարարեց, որ բռնագաղթի նպատակը ոչնչացումն է (հայերի) և ավելացրեց, որ ինքը կապերի մեջ է եղել Թալեաթ բեյի հետ և անձամբ նրանից է ստացել ոչնչացումների մասին հրամանը, և որ նա փորձում էր իրեն համոզել նաև այն բանում, որ այդ է երկրի փրկությունը:

...Բրուսայում կոմիտեի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը... Գանգրից Բոլ հեռագիր է ուղարկում, որպեսզի հայտնի, որ բռնագաղթման ենթակա մարդկանց թիվը Անկարայի վիլայեթում հասել է 61 հազարի և որ այդ բռնագաղթը օգտակար է Բոլի ապագա հաջողության համար: Սա վկայում է այն մասին, որ Բոլից, որը չէր մտնում ռազմական գործողությունների գոտու մեջ, բռնագաղթը հանդիսանում էր ոչ թե ռազմական միջոցառում, այլ լոկ Կոմիտեի ցանկությունների կատարում...

Խարբերդի գեներալ-նահանգապետը իր հերթին հայտնում է, որ բոլոր ճանապարհները լցված են կանանց ու երեխաների դիակներով... Բ. Շաքիր բեյի հեռագիրը, որ հասցեագրված էր Նազըմ բեյին, բովանդակում էր. «Այդտեղ ուղարկված հայերին ոչնչացրե՞լ եք: Ոչնչացված կամ գաղթեցված են միա՞յն վնասակար անձինք, որոնք ենթակա են գաղթեցման: Եղբայր իմ, ինձ այդ մասին հայտնեք ճիշտը»: ...Այս փաստաթուղթը վկայում է այն մասին, որ «Հատուկ կազմակերպության» նպատակը հայերի ոչնչացումն էր...

Նոյեմբերի 20-ին ուղարկված հեռագրում... հայտնվում է, որ հանցագործներն ու ավազակները հանդիսանում են «Հատուկ կազմակերպության» կադրերը... կան ապացույցներ և համապատասխան փաստաթղթեր, որոնցից հետևում է, որ այդ ավազակախմբերը ստեղծվել էին գաղթականների քարավանները ոչնչացնելու և կոտորածներն իրականացնելու համար: Որ սպանությունները կատարվել են Թալեաթ բեյի, Ջեմալի և Էնվեր բեյի հրամանով, երևում է Դիրբեքիրի, Խարբերդի, Ուրֆայի և Զորի նահանգապետերին ուղարկված ծածկագիր հեռագրից, որը հրամայում էր ճանապարհներին մնացած դիակները չգցել փոսերն ու գետերը, ինչպես նաև այրել գաղթվածների հագուստները... Մի այլ հեռագրում, որ Դիարբեքիրի նահանգապետին հուլիսի 18-ին ուղարկել էր...

Ջեմալ փաշան, խոսվում է այն մասին, որ դեպի հարավ Եփրատի բերած դիակները, հավանաբար հայերի մարմիններ են... Մի այլ հեռագրում, ուղարկված Ջեմալ փաշային, ասվում է. «Եփրատը քիչ է կապված մեր վիլայեթին: Դիակները հավանաբար Էրզրումի ու Խարբերդի վիլայեթներից են: Նրանք, ովքեր այստեղ են բերվում մեռած, գցվում են լքված խոր քարայրները և կամ, ավելի հաճախ, այրվում են... Զորի նահանգապետ Սալիխ Զեքի բեյը՝ «Քո մասին ասում են, որ դու սպանել ես տասը հազար հայի» հարցին պատասխանեց. «Պատիվ եմ ունեցել: Ես չեմ բավարարվել 10 հազարով...»: Մալաթիայի նահանգապետին Խարբերդի գեներալ-նահանգապետի հրամանը պարունակող ծածկագիր հեռագրում ասվում է. «Չնայած կրկնակի հրամանի, հայտնում են, որ ճանապարհներին մեծ թվով դիակներ կան... ներքին գործերի նախարարությունը հասկացրել է, որ այս գործը արհամարհող պաշտոնյաները խստորեն կպատժվեն և, որ բոլոր դիակները, որոնք գտնվում են ձեր սահմաններում, պետք է հողի մեջ մտցվեն...»:

Ներքին գործերի նախարարությանը սեպտեմբերի 15-ին ուղարկված հեռագիրը հայտնում է այն մասին, որ Դիարբեքիրից գաղթեցված հայերի թիվը հասել է 120 հազարի...

3-րդ բանակային կորպուսի հրամանատար Մ. Քյամիլի ստորագրած հեռագիրը նախազգուշացնում է, որ ցանկացած մահմեդական, որը փորձի պաշտպանել թեկուզ մեկ հայի, կկախվի իր տան դիմաց, իսկ տունը կայրվի...

Կա Տրապիզոնի նախկին պատգամավոր Հ. Մուհամեդ բեյի ցուցմունքը Սև ծովում հայերին խեղդելու մասին...

Միություն և առաջադիմություն կուսակցության ժողովում Թալեաթ բեյին հեռագիր են տալիս, որում հաղորդվում էր հայերի նկատմամբ կատարված գազանությունների մասին... Թալեաթ բեյը մակագրում է. «Կցել գործին»: Ինչպես վկայում է Վեհիբ փաշան, հայերի գնդակահարումն ու ոչնչացումը, նրանց ունեցվածքի թալանն ու բռնագրավումները կատարվում էին Միություն և առաջադիմություն կոմիտեի կենտրոնական ապարատի որոշումների հիման վրա, և Բ. Շաքիր բեյը 3-րդ բանակի շրջանում այդ աշխատանքի համար վարձում և ուղարկում էր մսագործներ:

Ս. Նազիֆ բեյը «Բաղդադից Դիարբեքիր գնալիս հարկադրված փակում էր քիթը քայքայված դիակների հոտի պատճառով...

Երբ Կ. Պոլսում Ջեմալ փաշան Թալեաթին և Նազիմին ակնարկեց բռնագաղթի անհրաժեշտության մասին, վերջիններս պատասխանեցին, որ գաղթի անհրաժեշտության և օգտակարության մեջ համոզված են: Նազիմ բեյը նույնիսկ հայտարարեց, որ այդ միջոցառումը կլուծի արևելյան հարցը...»:

Սալիմի՝ Յոզղաթի կայազորի հրամանատար, վկայությունից քաղվածքներ

Պատերազմական նախարարութեան 22 Ապրիլ 1915 թուակիր ուրիշ հրամանագրի մը համաձայն արտոնած է զինուորագրելու 19 և 20 տարեկաններէն զատ ամեն անոնք, որոնք կարող են զենք կրել: Այս տրամադրութիւնը պիտի կիրարկուի մեծ մասամբ այն տեղերը, որտեղ հայերը կարևոր թիվ կը կազմեն...

Քաղաքացիական վարչութեան պաշտոնեաները 18 հուլիս 1915 թ.... ծածկագիր հեռագրի համաձայն իրավունք չունին միջամտելու հանրային կարգի ու կարգապահութեան մեջ և թե զինուորական իշխանութիւնը առանձին պատասխանատու է անոր...

Առաջին կարավանի առաքումի ընթացքին 472 տեղահանված հայեր սպանվեցան Սեբաստիայի կուսակալ Մուամմեր պեյի հրամանով...

Այն կարավանը, որ բաղկացած էր 80 տարագիրներէ և ղրկվեցավ դեպի Կեսարիա զինայրերու հսկողութեան տակ, հարձակում կրեց Ճալաք Տեյիրմենի մոտերը: 12 հոգիներ հաջողեցան ազատիլ...

Զինայրերու հրամանատարի օգնական Նուման պաշտոն ստացավ Սորկուն գիւղի հայերը կոտորելու: ...Ռիզա չաուշը պաշտոն ստացավ Սարայի շրջանի հայերը ջարդելու: Ջարդավայր նշանակված Քելլերի կոտորածներուն պաշտոնները վստահվեցան հետևյալներուն (թվում է ազգանունները)... Ամենք ալ իրենց պարտականութիւնը կատարեցին՝ կատարեալ խղճամտութեամբ հնազանդելով իրենց մեծավորներէն ստացած հրամաններուն: Չաթ, Չագմագ, Թերզիլի, Գարա Եագուպ և դեռ ուրիշ հայ գիւղեր, որոնց անունները չեն հիշեր, գնդապետ Թևֆիգ և իր օգնականները (այսինքն՝ չաուշներ, տասնապետեր և անկանոն չերքեզներու խումբեր) գործեցին գարշելի ոճիրներ, բան մը, զոր երկրի ամեն մի բնակիչ լավ գիտե:

Հետևաբար հայերը անմեղ են և չեն գործած իրենց վերագրված ոճիրները:

Նեճաթի պեյը հուլիսի 23-ին երիտթուրքերի ակումբում ցուցումներ տվեց լքեալ գոյքերի հանձնաժողով ստեղծելու մասին, նա գրպանից մի թուղթ հանեց և ցույց տվեց, որ սա այն հրահանգներն են, որոնցով պետք է ղեկավարվել: Ապա հայտնեց, որ ոչ ոք կրնար հակառակիլ բարձրապատիվ կառավարութեան կողմէ տրված ուղղության, որ է նաև կուսակցության ուղղությունը...

...Ամեն անգամ Եոզղատ գալուն, քաղաքապետարանի տնօրեն Ահմետ էֆենտիի տունը հյուր կըլլար: Անոր հետ միասին Նեճաթի պեյ կարգադրություններ ըրավ և լուծեց բոլոր հարցերը... Ըստ որում այդ Ահմետը միաժամանակ երիտթուրքերի տեղի կազմակերպության ղեկավարն էր: Պոլսոյ համագումարին մասնակցել հաջողեցրեց: Նրա և Նեճաթի հրավիրած գաղտնի ժողովներում «հայկական ողբերգության դավաղիր գործերը կարգի դրվեցին»: Ըստորում, Քելլերի կոտորածավայրում ջարդերի կազմակերպումը անմիջականորեն ղեկավարում էին երիտթուրքերի տեղական կոմիտեի անդամները:[1]

Երիտթուրքերի կառավարության ղեկավարության և Միություն և առաջադիմություն կուսակցության կենտկոմի անդամների դատավարության դատավճիռը (8 մարտի 1919 թ.)

Քաղվածքներ.

...Մեզ բոլորիս խաղաղություն, անվտանգություն և արդարություն բերող սահմանադրություն մտցնելու հարցում հայ ժողովրդի գործադրած ջանքերը և ունեցած խոր համոզմունքը ճիշտ չհասկացան և սկսեցին առաջ քաշել (հայերի) նախկին ազգայնական տենչանքների աճման պատճառաբանությունները, երկպառակություններ ու ոխակալություն սերմանել ոչ թուրք տարրերի միջև, և նույնիսկ ազգայնական և ցեղային հարցեր առաջ բերեցին մահմեդական ժողովուրդների շրջանում: ...Կոտորածները կազմակերպվել և գործադրվել են Միություն և առաջադիմություն կուսակցության պարագլուխների կողմից:

...Վերոհիշյալ հանցագործ արարքների անմիջական հեղինակներն են Միություն և առաջադիմություն կուսակցության իրավական դեմքն արտահայտող նրա պարագլուխներն ու ընդհանուր մեջլիսի անդամները:Այդ թվում՝ փախուստի մեջ գտնվող նախկին մեծ վեզիր Թալեաթ

1. Դիվան Երուսաղեմի, թիվ Մ 574-Մ577 կամ **Գրիկեր** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, էջ 345-364:

փաշան, նախկին ռազմական նախարար, այժմ զինվորական շարքերից վտարված Էնվեր փաշան, նախկին ծովային նախարար, նույնպես զինվորական շարքերից վտարված Ջեմալ էֆենդին և նախկին հանրակրթական նախարար դոկտ. Նազըմ էֆենդին, որոնց անմիջական հեղինակությամբ կատարվել են այդ հանցագործությունները:...

Այսպիսով, լիովին բացահայտված է, որ կոտորածի գործադրման որոշումը հիմնականում համաձայնեցվել է երեքի միջև...

Օրենսգրքում առկա... հոդվածների հիման վրա Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտ. Նազըմը դատապարտվում են մահվան, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերիֆը, Մուսա Քյազիմը՝ 15-ական տարի ժամկետով աքսորի:[1]

Երիտթուրքերի տեղական կազմակերպությունների ղեկավարների դատավարություն

Դատավճիռ.

...Միություն և առաջադիմություն կուսակցությունն ամբողջ երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելուց հետո, երկիրը ներքաշել է համաշխարհային պատերազմի մեջ, կատարել տեղահանություններ, կոտորածներ և կողոպուտ:

Տեղահանված հայերի մի քանիսի բնակարանները, ակումբի վերածելով, կահավորել են լքյալ գույքերով... (Կուսակցության պատասխանատու քարտուղարները) մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքներով դիզել են հսկայական հարստություն... նպաստել և օժանդակել կենտկոմի ծրագրի կատարմանը և իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և կողոպտել նրանց ունեցվածքը: Զբաղվել են հարստահարությամբ և տիրացել նրանց լքյալ գույքին:

Երբ Կաստամունուի վալի Ռեշիդ փաշան, ըմբոստանալով տեղահանության դեմ, պնդել է. «Ես ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», իսկույն հեռացվել է պաշտոնից՝ նույն Կաստամունուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդիի նախաձեռնությամբ և առաջարկով, իսկ նրա տեղը նշանակվել է Աթըֆ բեյը, որը և եռանդագին իրագործել է տեղահանությունը և պատճառ դարձել ողբերգական իրադարձությունների:

1."Takvim-i Vekai",1919 թ., թիվ 3374 և թիվ 571:

Այս ձևով էլ Միդհատ բեյը, գնալով Ստամբուլ, ըմբոստության համար հեռացնել է տվել պաշտոնից Բալուի մութեսարիֆի տեղակալ Ալի Իլմի բեյին: Իսկ Բալուի տեղահանության ընթացքում պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը ժողովրդին հորդորել է, ասելով, որ «հայերին չենք ուզում» և նրա հրահանգով, և ներգործությամբ իրականացվել է Բալուի տեղահանությունը:

Բոլոր ապացույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ կոտորածները անմիջականորեն իրականացվել են Միություն և առաջադիմություն կուսակցության ստեղծած Թաշքիլաթ-ը մախսուսեի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարներն իրենց մասնակցությամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը:[1]

Մահապատիժ Բաբերդի գարագրության առթիվ

Քաղվածքներ.

Բաբերդում բռնագաղթը ղեկավարելու համար ուղարկված էր Նեջաթի էֆենդին, իր տրամադրության տակ ունենալով 30-40 հոգի: Բաբերդում հացի գործարանի աշխատակից, իսկ ապա առևտրական դարձած Հասան օղլու Էմերը դատարանում վկայություն տվեց. «Բաբերդի աշխատանքային վաշտի սպաներից երկրորդ տեղակալ Քեֆալի օղլու Քեածիֆը... և Էլխազ օղլու Սաբիտը ու մի շարք անծանոթ անձինք քարավան առ քարավան հայերին թշվառ վիճակում տարագրեցին և, տարագրվողները երկու ժամից վերադարձան: Նույնիսկ քարավաններում եղած հայ երեխաներին էլ հետները բերել էին... այդ մանուկները 1-5 տարեկան էին: Ճանապարհներին տարագրված հայերի մոտ եղած իրերն ու դրամները կողոպտելուց հետո, նրանց սպանել են»:

Մի այլ վկա՝ Ալի էֆենդին, ցուցմունք տվեց. «Մեկ գիշերվա ընթացքում, առանց նախազգուշացնելու, կայմակամ Նուսրեթ բեյի հրամանով, ոստիկաններով ու ժանդարմներով, գոռում-գոչյունով, առավոտ վաղ, առանց մարդկային որևէ զգացմունքի, բոլորին տարագրել են: ...Եվ Բաբերդի հայերին (15 օրում) ուղարկել էին տարագիր քարավանները: Նրանց ուղեկցում էին ժանդարմներ, զինվորներ, բաշիբոզուկներ, և Ալի էֆենդին լսել է, որ նրանց ճանապարհներին սպանել են: Նրանց մեծ մասի սպանված լինելու մասին ինքը լիակատար համոզված է: Նուսրեթ բեյը շուրջ 150 փոքրիկ աղջիկ և տղա որբերի լցրել է Բին Բաշի խան կոչ-

1. "Takvim-i Vekai", 1920 թ., թիվ 3772:

ված վայրը և թուրք ժողովրդին տեղյակ պահել, որ գնան, իրենց հավանած տղաներին և աղջիկներին ընտրեն ու գնեն: Հետագայում նույն ինքը՝ Նուսրեթ բեյը, իսլամների մոտ գտնվող (հայ որբերին) հավաքել տվեց ու տարագրեց»:

Բաբերդի նախկին կայմակամ Զիյա բեյը վկայեց. «Բաբերդի տարագրությունը և ջարդը կատարողները եղան այնտեղ եկած Սաադի բեյը, որը ծերակուտական Ահմեդ Ռիզա բեյի քրոջ որդին և ծերակույտի քարտուղարներից մեկն է...»:

Էրզրումի ժանդարմական գնդապետ Աղիլ բեյը վկայեց, որ Բաբերդի հայերի տարագրողը Էրեն Քեոյում այսօր կառքերով զբոսնող Մ. Նեֆատի էֆենդին է, որը 24 ժամում ժողովրդին դուրս հանել տվեց և Բաբերդից երկու ժամ հեռավորության վրա, Դեյիրմեն կոչված վայրում, Թեշքիլաթ-ը մախսուսեի զինվոր- չեթեների հետ հարձակվել ու սպանել է նրանց: Ինքը, պաշտոնի բերումով հետաքննություն է կատարել... և տվյալները ուղարկել է վալի Թահսին բեյին:

Նուսրեթը «...տեղյակ լինելով այդ բոլոր ողբերգական իրադարձություններին, դրանք արգելելու համար քայլ անգամ չանելուց բացի, վերը նշված վկայությունները իր վերադաս մարմիններին նույնիսկ հաղորդելը հարկ չհամարեց և Երզնկա ուղարկած անձանց համար էլ ստացական չունենալու մասին լռեց, իսկ հարցաքննության ժամանակ ասել է, թե առաջին քարավանը պաշտոնագրով է ուղարկել Երզնկա, բայց այդ գրությունների պատասխանները չի ստացել: Այն հարցին, թե ինչու դրա դեմ չի բողոքել վալիին, պատասխանել է. «...Այդ ժամանակ արդեն ամեն ինչ վերջացած էր»»:

Ժողովուրդը նրան անվանում էր «Երկաթե ճանկերով կառավարիչ»:

«Նուսրեթը Բաբերդի տարագրությունն ավարտելուց անմիջապես հետո պաշտոնում առաջ է քաշվում ու նշանակվում Երզնկայի փոխկառավարիչ, որից հետո՝ Արղնիի մութեսարիֆ: Երբ հեռավոր վայրերից տարագրված հայերը, ճանապարհների բազմատեսակ դժվարություններից ու թշվառություններից հետո ուժասպառ, հազիվ հասել էին Արղնի, Նուսրեթը, լսելով, որ նրանք երկու կամ երեք օր խաներում են մնալու... բոլորին մի ճանապարհի շինության վրա չարաչար աշխատեցրեց... Բայց այդ չարչարանքով աշխատող զոհերին օրավարձ անգամ չտվեց: Արղնիի մութեսարիֆի պաշտոնում էլ կենդանի մնացած հայ անչափահաս պատանիներին ու մանուկներին՝ «Դիարբեքիր պետք է ուղարկվեն»

ասելով, հանձնել է Տիգրանակերտի արյունռուշտ վալի դոկտ. Ռեշիդի վայրագություններին: Արղնիից հետո... նշանակվել է Ուրֆայի անկախ մութեսարիֆ և երկրի տարբեր կողմերից հասած 15-20 հազար հայ տարագրյալների դեմ կատարել է ողբերգական արարքներ: Այստեղ ևս պաշտոնի բարձրացում ստանալով՝ շարունակել է ոճրագործների հետ գործակցելը, ինչը, փաստորեն, կատարելապես հաստատված է:

Նուսրեթ բեյը հայտնել է, թե «հրաման էր ստացել, որ որևէ հայ կենդանի չպետք է մնար, այլապես սպառնում էր մահապատիժ»:

Բաբերդի կառավարչատան գանձապահ Հովակիմ էֆենդու ընտանիքը մահմեդականություն էր ընդունել և զերծ մնացել տարագրությունից... Նուսրեթը, նրանց տուն գնալով, պահանջել է, որ աղջիկները իրեն հանձնվեն և սպառնացել է, որ մերժման դեպքում ընտանիքը տարագրվելու է: Նկատի ունենալով, որ տարագրության ժամանակ, համաձայն հասած լուրերի, պետք է ենթարկվեն տարագրյալներին բաժին հասած գազանություններին՝ ջարդվեն ու բնաջնջվեն, կինը, դուստրերը և քույրը թույն են խմում և մեռնում, իսկ Հովակիմ էֆենդին ու իր որդին կախվում են»:

Նուսրեթը Արղնիում բռնաբարել է դեռահաս Նոյեմին ու նրա քրոջը՝ Ֆիլոմենին:

«Նուսրեթի հետ... Նեջատի էֆենդին ևս, Բաբերդի հայերին տարագրելու պատրվակով, նրանց սպանել է և ունեցվածքները կողոպտել...»:

Նրանք երկուսն էլ մահապատժի դատապարտվեցին:

«Նաև մեկ օրվա ընթացքում 20 հազ. ժողովուրդ՝ Էրզրումից տարագրված հայեր և Բաբերդում ու Արղնիում նույն արարքների համար մեղադրվող ու անուններով հիշված 26 անձանց համար էլ օրենքին համապատասխան հետապնդում կատարելու վերաբերյալ միաձայն որոշում կայացվեց»:

Սակայն թուրք մեծապետականությունը դրա հետ հաշտվել չէր կարող: Դատավճռից 15 օր անց իշխանությունները սկսեցին ձերբակալել վճիռներ ստորագրած թուրք դատավորներին: Ք. Կարաբեքիրը, Հայաստանի վրա հարձակման օրերին, 1920 թ. նոյեմբերի 8-ին ձերբակալեց պատերազմական ատյանի դատավոր Մուստաֆային ու իր ընկերներին, իսկ դեկտեմբերի 7-ին նրանց դատավարությունը սկսվեց, որի հիմքում ընկած էր վերը նշված Նուսրեթի վերաբերյալ վճիռը: Նուսրեթին ներկայացված մեղադրանքներն ու նրա մասին դատավճիռը չեղյալ հայտարարվեց, իսկ դատողները դատվեցին:[1]

1. «Թերջուման հաքիքաթ», 5 օգոստոսի 1920 թ.:

Տրապիզոնի տեղահանության և կոտորածի դատավարություն

Ջեմալ Ազմի բեյը, ինչպես Միություն և առաջադիմություն կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են ստացված գաղտնի հրամանները իրականացնելու գործում... (ինչը) նրանց համարձակություն է տվել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին կոտորելու և բնաջնջելու:

Մի շարք հանցագործ, անառակ անձանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմներից նրանց կազմած հրոսակախմբերը իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները: Մինչդեռ շտապ տեղահանության ենթարկված և պաշտպանության միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և վերոհիշյալ հանցագործներից կազմված չեթեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը, այնուհետև աներևակայելի դաժանությամբ սպանել և բնաջնջել են բոլորին: Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով, հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը և բռնաբարել: Այնուհետև, ամիսներով ճանապարհներին քարշ տալուց հետո, շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված տառապալի ուղևորությունից, սովից և ծարավից: Իսկ (ողջ) մնացածներին Էրզինջանի ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր:

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին պաշտպանելու պատրվակով տեղավորել են հիվանդանոցներում և դերվիշների տներում: Այնուհետև ծովային ճանապարհներով այլևայլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և ծովի խորքերը տանելով... գցել են ջուրը և բոլորին խեղդամահ արել: Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և, մենք բոլորս համոզված ենք, որ կողոպուտն ու կոտորածը մտահղացվել է ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնավոր և խիստ կազմակերպված:

Կանանց ու երեխաների մի մասին թողեցին Տրապիզոնի հիվանդանոցներում ու դերվիշների տներում, իբր պաշտպանելու համար... իսկ ապա նրանց բաժանում էին բոլոր նրանց, ովքեր կցանկանային վերցնել որպես տան ծառայող կամ որպես կին: Հիվանդանոցներում մեծ տարածում ստացան բռնաբարությունները:[1]

1. "Takvim-i Vekai", 1919 թ., թիվ 3616:

«Մեղադրյալ Ջեմալ Ազմի բեյը, Տրապիզոնի նախկին վալին, գաղտնի հրահանգներ է տալիս, իսկ Միություն և առաջադիմություն կոմիտեի Տրապիզոնի վիլայեթի պատասխանատու Նայիլ բեյը համագործակցել է նրա հետ... հրահանգների կատարման ժամանակ, Նայիլ բեյի արտահայտած կարծիքներից ոգևորված, Ջ.Ազմի բեյը ձեռնարկեց անհրաժեշտ միջոցներ հայերի եղեռն ու ոչնչացումը ըստ այդ գաղտնի հրահանգների իրականացնելու համար:

...Գաղթվածների քարավաններին որպես ուղեկցողներ նշանակելով փչացած ու հանցագործ մարդկանց, դրանց միանում էին մի քանի ոստիկաններ, որոնք հակված էին համագործակցելու նման մարդկանց հետ: (Իշխանությունները) գաղթվող հայերին զրկեցին պաշտպանությունից:

Հենց որ քարավանները քաղաքներից հեռանում էին, անմարդաբնակ վայրերում կանանց առանձնացնում էին տղամարդկանցից: Ապա նշված հանցագործներից կազմված ավազակախմբերը... հարձակվում էին նրանց վրա, թալանում, խլում նրանց անձնական իրերը, խոշտանգում, բոլորին սպանում: Իսկ խեղճ կանանց տանում էին ուրիշ տեղ, որտեղ խլելով զարդերը, փողը և հագուստը, բռնաբարում էին:

Ապա նրանք քարավաններին հարկադրում էին ամիսներ շարունակ քայլել այնպիսի քայլքով, որ տեղահանվածները լրիվ և վերջնականապես հյուծվեցին: Եվ այդպիսով նրանցից մեծ թվով մարդիկ մեռան սովից, ծարավից ու հյուծվածությունից, իսկ (ողջ) մնացածներին Էրզիջանի ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր... Քաղաքում մնացած կանանց և, նույնիսկ, աղջիկներին, խմբերով հավաքած, նստեցնում էին նավերը իբր ծովով այլ վայրեր ուղարկելու: Բայց հենց նավերը կորչում էին տեսողությունից, այդ կանանց ու երեխաներին լցնում էին ծովը...

...Դիարբեքիրի, Սվասի և Տրապիզոնի շրջանների հայերը ուղարկված են Մոսուլի և Դեր էլ Զորի շրջանները, ապա նրանք ինչ են անում Ատալեում»:

Եվս մի դատավարության մասին, որը տեղի ունեցավ Բեռլինում 1921 թ. հունիսի 2-3-ին: Դատում էին հայ ուսանող Սողոմոն Թեհլերյանին: Դատարանը նկատի ունենալով, որ Կ. Պոլսի զինվորական դատարանը ճիշտ է վարվել, որ վճռել է մահվան դատապարտել Թալեաթ փաշային ու նրա համախոհներին, արդարացրեց Ս. Թեհլերյանին, որը նույն Բեռլինում ի կատար էր ածել Ստամբուլի դատավճիռը:

Հանդես գալով Թեհլերյանի այդ դատական պրոցեսում գերմանացի գիտնական և հոգևորական Ի. Լեպսիուսը հայտարարեց. «Համընդհանուր բռնագաղթի մասին որոշումը ընդունել էր երիտթուրքերի կոմիտեն: Այդ մասին հրամանը տվել էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան (ռազմական նախարար Էնվեր փաշայի հետ միասին): Հայերի բռնագաղթը իրականացվեց երիտթուրքերի հատուկ կազմակերպության միջոցով... Բռնագաղթի ենթարկվեց մոտ 1,4 մլն հայ...Թալեաթ փաշայի ստորագրած հրամանում կան այսպիսի խոսքեր. «Բռնագաղթ ոչնչացում է»:

...Բռնագաղթվածների միայն 10 տոկոսը հասավ աքսորավայր: Մնացած 90 տոկոսը սպանվեց ճանապարհին: Բացի ոստիկանների կողմից վաճառված կամ քրդերի փախցրած կանանցից ու աղջիկներից, մնացած բոլորը մեռան քաղցից և հյուծվածությունից.... Միջագետքի անապատներում ստեղծված համակենտրոնացման ճամբարներում հավաքված հայերը աստիճանաբար բոլորն էլ ոչնչացվեցին սովից ու խոշտանգումներից: Մարդկանց մեծ խմբերի քշում էին անապատ և սպանում:

Դատական պրոցեսներ տեղի ունեցան, վճիռներ արձակվեցին: Տարբեր ժամանակներում սպանվեցին 20-րդ դարի առաջին գենոցիդի կազմակերպիչներն ու ղեկավարները՝ Թալեաթը, Էնվերը, Քեմալը, Սաիդը, Շաքիրը: Բայց մինչև օրս էլ թուրքական իշխանություններին հաջողվում է դիվանագիտական զանազան խաղերի, ահաբեկման, ստի, կեղծիքի ու կաշառքի միջոցով թույլ չտալ, որ միջազգային մասշտաբով ընդունվի ու դատապարտվի հայկական ցեղասպանությունը:

Բայց մենք համոզված ենք, որ կգա մի օր, երբ ոչ միայն աշխարհի մյուս ժողովուրդները, այլ նաև թուրք ժողովուրդը իր զայրույթի խոսքը կասի մարդատյաց այդ քաղաքականության ու նրա իրականացնողների, նրանց գործի ժամանակակից ստորացնողների ու շարունակողների հասցեին, բոլոր նրանց հասցեին, որոնք պղծելով միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակը, կեղծում են պատմությունը, կաշվից դուրս են գալիս գլխի վայր շուռ տալու հայ, թուրք և օսմանյան տիրակալության տակ գտնվող մյուս ժողովուրդների պատմությունը, խաբելու համաշխարհային հասարակական կարծիքը»:

Քաղվածքներ Խարբերդի դպրավանից

Իթթիհադ վե Թերաքքը կուսակցության ընդհանուր կենտրոնի անդամներից դոկտ. Բեհաեդդին Շաքիր բեյը, որպես Թաշքիլաթ-ը մախսուսեի

նախագահ Կ. Պոլսից Տրապիզոն, Էրզրում և շրջաններ է գնացել, բանտերում եղած ոճրագործների խմբերն ազատ է արձակել և նաև այլ չարագործ անձանցից կազմակերպել է չեթեական խմբեր, դրանց գլուխն անցած՝ հայերի բռնագաղթի ժամանակ հանկարծակի հարձակվելով՝ սպանություններ և խուզարկություններ է գործել տվել զանազան վայրերում... Խաբեության կամ տգիտության հետևանքով նրանց միացել են մի շարք այլ անձինք ու պաշտոնատարներ: Երբեմն բանավոր, երբեմն էլ գրավոր՝ ծածկագիր հեռագրերով գաղտնի հրահանգներ են պատրաստել և ուղարկել, որոնք իրականություն են դարձրել այդ արարքները: Նրանք Թեշքիլաթ-ը մախսուսեի անդամների միջոցով բնաջնջել ու սպանել են հայերին:

Հիշյալ Բ. Շաքիր բեյը Խարբերդում Իթթիահադ վե Թերաքքը կուսակցության պատասխանատու քարտուղար փախստական ռեսնեցի Նազըմ բեյին ծածկագիր-հեռագիր է ուղարկել... որի թվականն է 21 ապրիլի 1915 թ. և որում բառացիորեն ասված է. «Այդտեղից տարագրված հայերի հաշիվը մաքրվելու է: Դրանց սպանելու և բնաջնջելու հանգամանքների մասին տեղյակ պահեք: Թե լոկ քաղաքից դուրս են հանվում և ուղարկվում»:

Վերոհիշյալ եղանակով ուղարկված ծածկագիր-հեռագրից բացի, Իթթիհադ վե Թերաքքը կուսակցության ընդհանուր կենտրոնի անդամների վերաբերյալ գտնված թղթածրարի մեջ վավերագրերի շարքում կա նաև հետևյալը. «Մարդիկ սպանող մսագործներ հավաքագրողը և ղեկավարը եղել է Բ. Շաքիրը»:

Բ. Շաքիրը Էրզրումից Անթալիայի կառավարիչ Սապար Սամի բեյին ծածկագրել է. «Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Դիարբեքիրում, Սըվազում, Տրապիզոնում և շրջաններում նույնիսկ մեկ հայ չթողնելու պայմանով Մոսուլ և Զոր են ուղարկվում: Դուք Անթալիայում այդ ուղղությամբ ի՞նչ եք անում»:

Վերոհիշյալ ոճրագործներից Բ. Շաքիր բեյի արարքները քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածին է համապատասխանում: Համաձայն 181-րդ հոդվածի մահվան է դատապարտվում:[1]

Դիարբեքիրի վիլայեթի կուսորածների վերաբերյալ Ռազմական դատարանի արձանագրությունից

Դիարբեքիրից բռնագաղթված հայերի թիվը 120 հազարի հասնելը, որը նշված է ներքին գործերի նախարարությանը 1915 թ. սեպտեմբերի

1. "Takvim-i Vekai", 1920 թ., թիվ 3771:

15-ին վալի Ռեշիդի ուղարկած ծածկագիր-հեռագրում, բավարար է նկատելու, թե այդ գործն ինչ ծավալ ու ահավորություն ունի:[1]

Իզզեթ փաշա

(Էնվերը և նրա ընկերները) փառասեր, եսասեր էին... հայրենասիրությունից զուրկ և սեփական գրպանները լցնելուն հետամուտ ոճրագործներ:[2]

Հ. Էրբուրը՝ Թեշքիլաթ-ը մախսուսեի գնդապետ, «Երկու շրջանների վարագույրների հետևում» գրքի հեղինակ, որը 1966 թ. հրատարակվեց երկրորդ անգամ, Քենալ բեյի մասին գրում է

Թուրք ազգի այս հերոս զավակը թշնամու կողմից գրավման զոհ դարձավ, կախաղան հանվեց: Նրա հիշատակը հավերժ կապրի թուրք ազգի սրտում:[3]

Կոտորածների հրամանը գալիս էր բարձրագույն հեղինակությունից՝ Միություն և առաջադիմություն կուսակցության ընդհանուր կենտրոնից: Ոչ ոք չէր կարող դեմ կանգնել նման հրամանին:

Քեմալը ՆԳՆ այսպիսի ծածկագիր էր ստացել. «Հարկ է 24 ժամում տարագրել գավառում բնակվող հայերին: Նրանց բնակավայրը պետք է լինի Սիրիան: Հենց որ այս ծածկագիրը ստանաք, տեղյակ պահեք»:

Միութենականները (երիտթուրքերը) խիզախ ծնված մարդիկ էին և երդվել էին քաջաբար մեռնել...[4]

Սաղի Գոչաս՝ ժամանակակից թուրք պատմաբան

Կառավարական անմեղ պաշտոնյաներից մեկն էր Քեմալ բեյը՝ Բոզազլյանի կայմակամը: Նրա վերջին խոսքը վկայում է, որ նա շիտակ մարդ էր և բարի օրինակ ծառայեց բոլորին:[5]

«Թերջուման», 31 մարտի 1977 թ.

Զինադադարից հետո երկու անմեղ կայմակամներ՝ Նուսրեթ և Քեմալ բեյերը Պոլսում կախաղան հանվեցին:

---

1. "Takvim-i Vekai", թիվ 3534 և թիվ 3540:
2. **Izzet Pasa** Memoirs, Leipzig, 1927, p. 77, 294 կամ **Հ. Ղազարեան** Յեղասպան թուրքը, էջ 50:
3. **H. Erturk** Iki devrin perde arkasi, Istanbul, 1964, s. 301.
4. Ն.տ., էջ 220-301:
5. **S. Kocas** Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilisklerı, Ankara, 1967, s. 202.

Դամադ Ֆերիդ փաշայի՝ Թուրքիայի վարչապետ, ճառը Փարիզի խաղաղության կոնֆերանսում (11 հունիսի 1919 թ.)

Պատերազմի տարիներին ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կենդանի հետաքրքրություն դրսևորեց այն հանցագործ արարքներին, որ կատարել են թուրքերը: Ինձնից հեռու է ձգտումը խեղաթյուրելու չարագործությունները, որոնք մշտապես սարսուռ են առաջացնում: Ես չեմ ցանկանում մեղմացնել այդ ողբերգության հեղինակների մեղքերը: Իմ նպատակն է աշխարհի օգնությամբ նույն այդ աշխարհին ցույց տալ, թե ովքեր են հեղինակներն այդ հրեշավոր հանցագործությունների...

Թուրքիան սգում է իր բազմաթիվ հայրենակից քրիստոնյաների սպանությունների առթիվ...

Հարյուր հազար դժբախտներ մինչև օրս թափառում են Փոքր Ասիայի խորքերում՝ առանց ապավենի ու գոյության միջոցների: Նրանք եթե նույնիսկ վերադառնան իրենց տները, կկանգնեն անելանելի վիճակի առաջ, քանի որ քրիստոնեական ու մահմեդական բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ քանդվել ու անհետացել են երկրի երեսից: Եվ չնայած իրավիճակի բարդությանը, նոր կառավարությունը քայլեր է արել այդ ալեկոծությունների հետևանքները վերացնելու համար: ...Մնում է միայն հերքել այն կարծիքը, թե կատարված բռնությունները ռասայական ընդհարում էին կամ կրոնական մոլեռանդության բռնկում:

Երիտթուրքերի մեծ դատավարությունը Կ. Պոլսում հաստատեց կոմիտեի ղեկավարների պատասխանատվությունը... պատերազմի և արևելքի ողբերգական իրադարձությունների խնդիրներում: Այդ դատավարությունը օսմանյան ժողովրդի պատվի վերականգնում էր:[1]

Սաղրը Շահիդ

Հայերի վերջին կոտորածը նախապես մտածված էր, ծրագրված ու կարգադրված սուլթանի կողմից:[2]

Ահմեդ Ռեֆիկ՝ թուրք պատմաբան

Նա ականատես է եղել Էսքիշեհիրի հայոց տեղահանությանը 1915 թվին և իր «Երկու կոմիտե՝ երկու ոճիր» գրքի առաջին մասը նվիրել է այդ վիլայեթի հայերի ողբերգությանը

...Պատերազմի սկզբում Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա: Այս հրոսակախմբերը բանտերից դուրս բերված

1. "La Renaissance" 20 հուլիսի 1919 թ.: "Journal de Geneve"18 սեպտեմբերի 1915 թ.:
2. **Հ. Փափազյան** Հայերի ցեղասպանությունը, էջ 7-8:

մարդասպաններից ու հանցագործներից էին կազմված: Սրանք ռազմական նախարարության մարզահրապարակում մեկ շաբաթ վարժվելուց հետո «Հատուկ կազմակերպության» միջոցով Կովկասի սահմանն էին ուղարկվում: Հայերի նկատմամբ բռնություններում ամենից մեծ հանցագործություններն այս հրոսակախմբերն են կատարել:

(Հայերի) այս փոքրիկ խումբը բավական տխուր տեսարան էր ներկայացնում:...Բոլորն էլ խեղճուկրակ գյուղացիներ էին: Կայարանի ճաղերի առջև, տարեց մի կնոջ կրծքին փաթաթված, վզները ծուռ նստել էին կապուտաչյա, շիկահեր 5-6 տարեկան մի աղջիկ, կողքին էլ մի տղա երեխա: Հետաքրքրվեցի: Չինվորականի ընտանիք էր, հորը բանակ էին տարել, մայրը մահացել էր:

Հարցրի աղջկա անունը.

-Սիրանուշ:

Արտաքսվել էին անգամ տեղաշորում թոքախտով պառկած, հոգեվարքի մեջ գտնվող հիվանդները, հաշմանդամն ու խելացնորը, գոտկատեղից ներքև անդամալույծ ողորմություն խնդրողները: Գրեթե յուրաքանչյուր օր Էսքիշեհիրի հայկական գերեզմատանը՝ առջևից քահանա, հետևից՝ մի քանի աղքատ ընտանիքներ, կամ երեխաներից մեկին էին թաղում, կամ էլ տարեց հայերին:

Անատոլիայի լայնատարած հարթավայրերում, ընդարձակ ու ցանված դաշտերում... երեխաներից բացի, ոչ մի կենդանի շունչ չէր երևում... Մի կողմից հայերը տեղահան էին արվում, իսկ մյուս կողմից թշվառ ժողովուրդը սովամահ էր լինում:

Սոված ու տկլոր զինվորներով լի գնացքները շարան-շարան մեկնում էին ոճրագործության վայրերը: Վերստին հազարավոր ընտանիքներ սոված էին մնալու, հազարավոր անմեղներ ոտաբոբիկ, ցնցոտիների մեջ իրենց սնունդը ապահովելու էին խոտ ճարելով...

Կայարանի շրջակայքում գտնվող հայկական գեղեցիկ տներն ամբողջովին դատարկ էին...

...Հայերի Վանի կոտորածն ու ռազմական գործողությունների ծավալման խնդրում իբրև խոչընդոտ նրանց հանդես գալը հարմար առիթ ստեղծեց իթթիհադականների կողմից իրենց ազգային նկրտումների իրականացման համար... իթթիհադականները ցանկանում էին իսպառ ջնջել հայերին և այս ձևով մեջտեղից հանել վեց վիլայեթների հարցը: Ենթադրելով, թե օր օրի մոտենում է հայերի փրկությունը, Անատոլիայի

արևելյան սահմաններում կատարվող շուտափույթ ձեռնարկումները վերածեցին կոտորածների...

...Էսքիշեհիրի շրջակայքում արդեն առաջացել էր 20-հազարանոց մի ճամբար...

Ամենից ոխերիմ թշնամին նրանց (հայերի) համար Կենտրոնի ներկայացուցիչն էր: Պատահում էր, որ...տղամարդկանց հավաքել տալով՝ գրպաններից վերցնում էին փողերը...

Հազարավոր ընտանիքներ սովի էին մատնված՝ փող, ուտելու և խմելու ոչ մի բան չկար: Ի վերջո, որոշվեց վաճառել իրերը... Սովը գնալով տարածվում էր, ցուրտը՝ ուժգնանում:

Ի վերջո, մի օր չարաբաստիկ մի հրաման եկավ՝ Էսքիշեհիրը ևս պիտի դատարկվեր: Եկավ Կենտրոնի ներկայացուցչի գործելու ժամը: Փոքոցների ծայրերին ժամապահներ էին հսկում: ...Հաջորդ օրը էսքիշեհիրցիները ձեռքներին մեկական կապոց, վերարկուներ, նստեցին անասուն տեղափոխող վագոններ: ...Նրանք ուղղություն վերցրին դեպի Կոնիայի հարթավայրերը շրջապատող լեռները,... այրվող անապատները, դեպի սով, աղքատություն, թշվառություն...[1]

Ռեֆիկ Խալիդի «Հուլիսի հուշերը»

(Իթթիհադի լիդերները) մի ժամանակ վիթխարի կարողության քար ու հող տակնուվրա արած, սերմի փոխարեն թույն ցանած, անձրևի փոխարեն փորձանքներ տեղացրած, հունձքի փոխարեն չարիք հնձած, կալի տեղ անիրավություններ էին դիզել: Նրանց սնունդը՝ մարդկային մարմիններ, խմածները՝ արյուն, արտասուք, շնչածները՝ վառոդի ծուխ, արդարությունը՝ կախաղան, եղբայրությունը՝ տարաձրություն, հավասարությունը՝ սպանություն և ազատությունը՝ բանտի խորխորատներն էին: Ավելի քանդեցին, քան կառուցեցին, մեկին բարիք էին անում, 5 000-ի հոգին էին կրծում, մեկի կյանքն էին փրկում, 5 000 անմեղների արյունն էին ծծում, մի բարիքի դիմաց հազար չարիք հասցնում: Ժամանակ եղավ, որ մեռածների ոսկորներով ապարանքներ կառուցեցին: Բարձերը որբերի մազերով լցրեցին և սենյակներն արյան քողերով զարդարեցին: Սովյալների ճիչը նրանց համար երաժշտություն էր: Որբերի արցունքները գավաթները լցրեցին և նահատակների վերջին շունչը համադամի տեղ օգ-

1. **A. Refik** Iki komite-Iti Kital, Istanbul, 1919. **Ա. Ռեֆիկ** Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997, էջ 9, 13, 26, 29, 30, 34 -37, 41, 48, 49:

տագործեցին... թղթի տեղը կյանքեր ոչնչացրեցին, ֆիշի փոխարեն մահ սփռեցին, դրամի տեղ հոգի առան... Նրանց զբոսավայրը ռազմաճակատներն էին, տեսածները՝ մահասփյուռ վայրերը... տեսարանները՝ ոճիրներ, կարդացածները՝ մահավճիռներ... իսկ ծրագրերը՝ դավադրություն ու ընդհանուր ջարդը:[1]

Հատվածներ նույն հեղինակի «Պարոններ, դեպի ո՞ւր» հոդվածից՝ նվիրված երիտթուրք լիդերների փախուստին

Պարոններ, դեպի ո՞ւր...

Բարձր լեռներին կրակոտ աչքերով, սուր ժանիքներով, մազերը փուշ-փուշ, որպես քաղցած գայլ են շրջում, պահապան չունեցող հայերի վրա են հարձակվում, ոչխարներ են բզկտում, չորս կողմերը արյուն ու ոսկոր դիզելով՝ կշտացած փախչում են իրենց որջերը, հավանաբար հովիվը տեսավ, շները սկսեցին հաչել:

Կշտացած գայլեր, դեպի ո՞ւր...

Խփեցին, կոտորեցին, քանդեցին, սպանեցին, այրեցին և մեր դիակները հրապարակ նետելով՝ օձերի նման փախան, երբ թշնամին մեր տունը մտավ, կորան:

Ջինված, արյունն աչքերիդ առած փաշաներ, դեպի ո՞ւր:

Դուք ոչ թե նախարար, այլ ավազակապետեր էիք, դուք ոչ թե պետ, այլ ելուզակներ էիք, դուք ոչ թե կուսակալ, այլ խռովարարների պետեր էիք...

Հենց որ «մահ» էիք ասում, շարք-շարք կախաղաններ էին պատրաստվում, հենց «այրեցեք» էիք ասում, բոցեր էին բարձրանում, հենց «հարձակում» էիք ասում, գունդ-գունդ ժանդարմներ էին վազում: Ձեռներումդ՝ բանտերի բանալին, մեջքերիդ՝ կախաղանի պարաններ, ուսերիդ՝ կախաղաններ, նահանգից նահանգ շրջեցիք... Հինգ տարի է, ամենուրեք մարդկանց դիակներից ագռավների խնջույքներ սարքեցիք, նրանց երեխաների մսով կերակրեցիք, արծիվներին զզվացրեցիք մարդկային մսից: Ընդդիմադի՞ր է՝ ցած նետեք, հրապարակագի՞ր է՝ խփեք գլխին, թո՞ւրք է՝ դեպի մահ առաջնորդեցեք, հո՞ւյն է՝ դրամ ուզեք, հա՞յ է՝ գլուխը կտրեք, արա՞բ է՝ կախաղան հանեք...[2]

---

1. «Վահդետ», Հալեպ, 8 հուլիսի 1928 թ.:

2. **Մեվլան Զադե Ռիֆաթ** Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը, էջ 186-189:

Հ. Բայուր՝ պապումաբան

(Հայերի բռնագաղթը) բացառապես ստիպողական միջոց էր, որը նպատակ ուներ ապահովելու թուրքական բանակի թիկունքը հայկական ապստամբության (դեպքում)...

Մեր նպատակն է ցույց տալ, որ այն ժամանակվա մեր թշնամիների առաջ քաշած պնդումները, թե թուրքերը առանց պատճառի տեղահանում էին և նույնիսկ ոչնչացնում, կեղծիք է:

Ո՞վ սկսեց առաջինը... Որովհետև մի բան է ասել՝ թուրքերը ոչնչացրին հայերին և միանգամայն այլ բան, եթե թուրքերի գործողությունները ներկայացվեն որպես պատասխան, ճիշտ է չափից ավելի դաժան պատասխան հայ ապստամբներին:[1]

Հալիե Էդիպ

Պատերազմի ժամանակ Թալեաթի հետ մտքեր փոխանակելու ժամանակ այդ սպանդի (հայկական ջարդեր) հեղինակին առաջարկեցի քննարկել Հայկական հարցը...

Երկու գործոններ, որոնք մարդուն մղեցին տվյալ ձևով բնաջնջելու, և այդ անել իր համախոհների կողմից առաջարկված սկզբունքներով՝ նյութական շահադիտությամբ...

Գաղափարների միջև հարաբերությունները շատ ավելի բարդ էին, սակայն նրանցից յուրաքանչյուրը պարտավոր էր հարգել մյուսներին, եթե նույնիսկ համաձայն չէր նրանց հետ:

Թալեաթն այդպիսի մարդ էր...[2]

Սուաք Փառլար՝ թուրք գործիչ

Ցեղասպանության նախապատրաստական աշխատանքներն ու գործողությունները նշանակեցին՝ հարձակումներ հայկական գյուղերի վրա, սպանություններ ու թալան, բանտարկյալների հանդեպ խստագույն պատիժներ Կովկասից ու Բալկաններից եկած մահմեդական փախստականների կողմից...

Զորակոչված հայ զինվորականների զինաթափումներն ու ձերբակալությունները հաջորդ փուլն էին...

1. **Y. H. Bayur** Türk inkilabi tarihi, Cilt III, Ankara, 1959, s. 40, 35.
2. Memoirs of **Halide Edip,** New York, 1926, p. 387.

Ահաբեկելու նպատակով ձերբակալվածների մի մասը տարբեր շրջաններում մահապատժի ենթարկվեց: Նպատակը հայ ժողովրդին գլխատելն ու զինաթափելն էր անգամ մինչև պատերազմական գործողությունների սկսելը: Զենք փնտրելու, զինահավաքի և դասալիքների բռնելու պատրվակով Թեշքիլաթ-ը մախսուսեի հատուկ խմբերը իրականացրին բազում վայրագություններ: Այդ ընթացքում վայրագ բռնություններն ու թալանը դարձել էին առօրյա երևույթ ու հրամայական:[1]

Հանդ Օնգյորեն՝ թուրք գործիչ

Հայերի բռնագաղթի ժամանակ տեղի ունեցան սպանություններ ու կողոպուտներ, որոնք սանձազերծվեցին կազմակերպված ձևով և իրականացվեցին Հատուկ կազմակերպության միջոցով: ... Ֆալիհ Ռիֆի Աթային, լսելով բանակի կողմից իրականացված սպանությունների և մարդասպաններից կազմված ջոկատների գործողությունների մասին, բողոքի ձայն բարձրացրեց:[2]

Մ. Էմին

Այն, ինչ հայերի նկատմամբ կատարվեց, ռազմական պահանջների հետ համաչափ չէր... դա սարսափելի արարքների մի տխուր գլուխ է, որոնց դիմում են Մերձավոր Արևելքի ժողովուրդները իբրև միջոց ըմբոստությունները ճնշելու և միասնականություն ապահովելու համար: Տարագիրները, որոնց մեծ մասը կանայք ու երեխաներ էին, ենթարկված էին կլիմայական և աշխարհագրական ծանր պայմաններին, ինչպես նաև ապրելու միջոցների բացակայությունը, տարագիրների տառապանքները սահմանված չէին միայն այնպիսիներով, որոնք անխուսափելի էին սոսկ ռազմական անհրաժեշտությամբ կամ գոյություն ունեցող ընդհանուր իրավիճակով: Առաջին հերթին ավանը կամ գյուղը ամբողջ շարժական ունեցվածքով լքելու կամ դրանք վաճառելու համար տրամադրված ժամանակը շատ կարճ էր, որոշ դեպքերում այդ ժամանակը մեկ կամ երկու օր էր միայն: Երկրորդ, տեղահանվածները ոչ միայն անպաշտպան էին հրոսակախմբերի հարձակումներից, որոնք անխուսափելի էին, այլև Հատուկ կազմակերպությունը, որ ստեղծվել էր Միություն և առաջադիմություն կուսակցության երկու ազդեցիկ անդամների աջակցությամբ, մի

1. Osmanli Günümüze **Gizli Dovlet,** Istanbul, 1996, s. 91.
2. "Nokta", 21-27 Juli, 1996.

շարք դեպքերում, ուղղակի գործնական դեր ունեցավ հարձակումների ու ջարդերի կատարման գործում: Երրորդ, տարագրության համար ընտրված վայրը մասամբ անապատ էր և անկարող ապահովելու մեծաքանակ մարդկանց, ովքեր զով լեռներից էին եկել՝ անցնելով անասելի դժվարությունների միջով: Տեղահանությունները կոչված էին լինելու ռազմական նկատառումներով ժամանակավոր միջոց, բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների համար դրանք կոչված էին բնաջնջելու Թուրքիայում եղած հայկական փոքրամասնությունը, Փոքր Ասիայում ցեղային միատարրություն ստեղծելու համար...

1917 թ. թշնամական քարոզչության ուժեղացման և տեղահանության դեմ հանդես եկող մի շարք բարձր պաշտոններ գրավող, նույնիսկ կառավարության կազմում եղած անձանց ճնշումների պատճառով, կառավարական հանձնաժողով ստեղծվեց տեղահանության վայրագություններն արձանագրելու համար, բայց կառավարության մեջ տեղահանության կողմնակից անձանց ավելի ազդեցիկ լինելը ամբողջ խնդիրը վերածեց ավելի շատ ձևականության, քան անկեղծորեն փորձ արվեց պարզելու իրական վիճակը: Նրանք, ովքեր պնդում էին «բնաջնջման քաղաքականության վրա», գիտեին, հասարակական դատապարտման են ենթարկվելու, միաժամանակ հավատալով, որ ի շահ ազգի իրենց անձնական զոհողությունը կարող է ճանաչվել միայն շատ հեռավոր ապագայում:[1]

Էսադ Ուրաս

Առաջին ըմբոստությունը նորից Զեյթունում ծագեց:

...Հայերը, Զեյթունի կենտրոնում ժողով գումարելով, որոշեցին զորակոչին չմասնակցել և զենքերով լեռը բարձրացան:

...Բիթլիսի և Վանի նահանգներում սկզբում հայերը թեև զինվորագրվեցին, բայց հազիվ զենք ստացած, թշնամու կողմն անցնելով՝ հրոսակախմբեր կազմեցին և սկսեցին զինվորների, ժանդարմների դեմ կռվել:

Իսկ բանակի թիկունքին հարվածելու համար Սեբաստիան ամենահարմար կենտրոնը լինելով՝ նախապես կազմակերպված ու զինված էր... Գրեթե բոլոր նահանգներում հայկական բացահայտ կամ գաղտնի խլրտումներն ու շարժումներն անպակաս էին:

Հայերի կողմից Վանի գրավման հետևանքով Բիթլիսի, Մուշի, Էրզրումի, Բայազետի, Զեյթունի և Սըվազի շրջաններում ծայր առած ըմբոս-

1. A. E. Yalman Turkey in the World War, New Havan, 1930, p. 320.

տությունների և հարձակումների պատճառով կառավարությունը բանակին պաշտպանելու մտադրությամբ կարիք զգաց անցնելու գործողությունների:

...Ազատ գործող կուսակցությունների կենտրոնները հարկադրեց փակել, նրանց ղեկավարներին ու անդամներին ձերբակալել:...

Հայ նահատակների թիվը 600 000, 800 000, նույնիսկ մինչև մեկ միլիոն ցույց տալու փոխարեն, եթե կա իրականություն, հետևյալն է՝ ռուսական զավթումների ընթացքում հայ հրոսակների, կամավորական վաշտերի միջոցով կոտորված իսլամ բնակչության թիվը դրանից շատ ավելին է և գաղթի, ըմբոստությունների ընթացքում էլ մեռնողների թիվը նույնն է՝ այդ իրականությունն արևելյան նահանգների բնակչության մեծ մասի բնաջնջված լինելն է:[1]

Դոդան Ավսիոդլու

Քրիստոնեական տարրերի վերացումը կատարվեց ռազմական նախարարությունում տեղի ունեցած և ամիսներ տևած քննարկումների արդյունքների հիման վրա:

Ենվեր փաշան բանակի սպայական կազմը համալրեց հաստատակամ երիտասարդ սպաներով, որոնց իթթիհադը վստահում էր: Նրանք կրթվել էին Ստամբուլում և քաջատեղյակ էին իրավիճակին:...

Հարյուր հազարավոր հայեր շատ կարճ ժամանակահատվածում և մեծ զանգվածներով քշվեցին ու վոնդվեցին Անատոլիայի սահմաններից հեռու:

Հատուկ կազմակերպությանն էր վստահված այդ գործը, և իթթիհադականները մշակեցին և իրականացրեցին այս սիստեմատիկ բռնագաղթը, որը նպատակ ուներ արմատապես լուծելու Հայկական հարցը և, որի մասին հրահանգը, անկասկած, ստորագրված ու հաստատված էր գերմանացիների կողմից: Իթթիհադի կենտկոմի նիստերում Բեհաեդդին Շաքիրը պաշտպանում էր բռնագաղթի քաղաքականությունը: Բռնագաղթի նախապես հաստատված միջոցառումները բավականին անվտանգ էին ներկայացնում բռնագաղթվածների վիճակը:[2]

1. **E. Uras** Tarihte Ermeniller ve Ermeni meselesi, Ankara, 1950, p. 615-617.
2. **Milli Kurtlulus Tarihi** Cilt III, Istanbul, 1974, s. 1114, 1135.

Ս. Սամիհ

Հայկական գյուղերի վրա հարձակումներն ու խժդժությունները տեղի ունեցան նաև Սարիղամիշի ճակատամարտից առաջ: Արդեն 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հայ տղամարդկանց օգտագործում էին որպես քաշող ուժ: Բ. Շաքիրը կոտորածներ կազմակերպելու համար Էրզրում և Մուշ մեկնեց 1914 թ. դեկտեմբերի սկզբներին... Սարիղամիշի ճակատամարտի օրը համիդիե զորքերն արդեն շրջապատել էին Ալաշկերտի բնակավայրերը և սկսել էին հայ ազգաբնակչության կոտորածը: Եվ հունվարի կեսին ռուսները եկան... մահմեդականները, վախենալով քրիստոնյաների դեմ իրենց չարագործությունների համար պատժվելուց, ընտանիքներով լքեցին իրենց գյուղերը և կառավարության օգնությամբ հաստատվեցին Մանազկերտի և Բուլանըխի գյուղերում:[1]

Ու. Եկեն

(Երիտթուրքերը) անարդարության և զուլումի պատմություններում Աբդուլ Համիդի հաջորդներն են:

Ս. Այդեմիր

Նազըմ բեյը կրում է ամենաարյունահեղ արարքների պատասխանատվությունը և մարմնավորում է մեր կայսրության ամենախավար շրջանի արյունոտ դեպքերը:[2]

Դողան Ավչի Օղլուն

Տեղահանությունները կյանքի են կոչվել իթթիհադի վերին մարմիններում Բ. Շաքիրի կողմից: Դրանց իրականացումը հանձնարարված էր վստահելի իթթիհադականներին և Հատուկ կազմակերպությանը:[3]

Ահմեդ Քուրան

Իթթիհադականները երկիրն անիշխանության վերածեցին... չանսալով նահանգների որոշ ապակենտրոնացմանը, որից օգտվողն անտարակույս Թուրքիան էր լինելու...

1. ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, թիվ 3, էջ 18:
2. **S. Ajdemir** Suyu arayan again, Istanbul, 1979, s. 273.
3. **Dogan Archi Ogium** Milli kurtlulus tarihi, s. 125.

Պետության գործերը որոշվել են իթթիհադի գաղտնի ժողովներում... և ոչ մի անգամ գաղտնի ժողովներից չեն կարողացել ձերբազատվել: Նրա ղեկավարներից յուրաքանչյուրն իրեն նախարարի տեղ էր դնում: Երկրի բոլոր նահանգներում և մասերում մեկական հսկիչ -քարտուղարներ էին տեղադրել...

Բանակն իրենց հրամանի տակ էին վերցրել...

Սեփական երկիրը պաշտպանելու հարցով մտահոգվելու փոխարեն «Թուրք յուրդ», «Թուրք օջախ» շարժումներով ուրիշներին փրկելու մասին մտահոգվեցինք... գրգռեցինք հարևան երկրները...

Սրանց (իթթիհադի) ծրագրերին չհետևողները Թուրքիայում որակվեցին «վաքան խայինի», քինախնդրության որոմ ցանվեց... ժողովրդի հանդեպ ցուցաբերած (իթթիհադական իշխանությունների) վերաբերմունքը մեզ մղեցին փնտրելու սուլթան Համիդի օրերը...

Իթթիհադի կենտկոմի աչքում բուլղարները, սերբերը, հույները ու հայերը երկրի թշնամիներ էին, իսկ արաբը, ալբանացին և քրդերը՝ հայրենիքի թշնամի...

Ադանայի կոտորածների համար հայերը պատասխանատու չէին, հանցավորն իթթիհադն էր, որ կանխարգելիչ միջոցներ չձեռնարկեց...

Էնվեր փաշան Թեշքիլաթ-ը մախսուսեի խմբեր ստեղծեց: Նրա նպատակն էր բոլոր մահմեդականներին մի դրոշի տակ համախմբել և Զիա Գյոքալփի մտքերը իթթիհադին ներարկել, նոր քաղաքականությունով զբաղվել տալ և ուժեղացնել պանիսլամիզմն ու պանթուրքիզմը: Որքան դժվար էր առաջ տանել պանիսլամիզմը, նույնքան անհնար էր պանթուրքիզմն իրականացնելը...

Բայց երբեմն Թալեաթ փաշայի հասցեին այնքան գովեստներ է շռայլվում, որ մարդու նախանձն է գրգռվում... Մարդիկ մոռանում են՝ նա էր պատճառը, որ Օսմանյան կայսրությունը պատմության գիրկն անցավ...[1]

«Արքլրմ» թերթը 1963 թ. օգոստոսի (թիվ 8) համարում տպագրված «մեր պետության սև էջը» հոդվածից

Գերմանամետ Իթթիհադ վե Թերաքք-ը կուսակցության պարագլուխների ցուցումով օսմանյան պետության տարածքում բնակվող ավելի քան մեկ միլիոն հայեր 1915 թվին գազանաբար ոչնչացվեցին, իսկ հար-

1. **B. Kuran** Osmanli imperatorlugunda ve Türkiye cumhuriyetinde inkilap hareketleri, Istanbul, 1959, s. 475, 479, 538, 539, 591.

յուր հազարավոր հայեր էլ հարկադրված եղան թողնելու հայրենի երկիրը և ցրվել աշխարհով մեկ: Աբդուլ Համիդի թագավորության շրջանում նույնպես հայկական ջարդեր տեղի ունեցան: Հայերը մշտապես ապրել են օսմանցիների լծի տակ: 1915 թ. գենոցիդը Թուրքիայի պարտության ամենախայտառակ էջերից մեկն է...

Այսօր խունտայի գեներալները համարձակվում են ժխտել գենոցիդի բուն փաստը, չնայած դրա իրողությունը հաստատողների թվում են կենդանի մնացած ականատեսներ, հարյուրավոր փաստաթղթեր: Հետադիմական գրողներն ամեն կերպ աշխատում են արդարացնել հայերի ցեղասպանությունը: Դրանով նրանք ապացուցում են, որ ժառանգներ են հանդիսանում էնվերների ու թալեաթների և միաժամանակ հրահրում են հայկական ահաբեկչություն:

«Հուրիեթ»(15 հուլիսի 1978 թ.), «Եթե հայ ես, պիտի մեռնես» վերնագրով հոդվածից

Զինվորական ծառայությունը որպես ուսուցիչ ես անց եմ կացրել արևելյան Անատոլիայի լեռնային գյուղերից մեկում: Գյուղի, ինչպես նաև շրջակա բոլոր գյուղերի խոսակցական լեզվում շատ էին օգտագործվում հայկական բառեր...

Գյուղի որոշ ծեր բնակիչներ, որոնց հիշողության մեջ դեռևս կենդանի էին անցած ժամանակների իրադարձությունները, պատմում էին ահավոր բաներ հայկական կոտորածներից: Լինելով անգրագետ և հետամնաց մարդիկ, նրանք փառաբանում էին Միություն և առաջադիմություն կուսակցության, հատկապես Էնվեր փաշայի հակահայ քաղաքականությունը, հպարտությամբ ու ոգևորվածությամբ էին հիշում զանգվածային կոտորածները, որոնց իրենք անմիջական մասնակցություն են ունեցել: Լսելով նրանց պատմածները, թե ինչպես են իրենք մի խումբ հայերի պառկեցնելով աղյուսե պատի տակ և այն փուլ տվել պառկածների վրա, մեր մազերը բիզ-բիզ էին կանգնում, զարմանում ու ամոթահար էինք լինում...

Այդ ինչպե՞ս կարող է պատահել, ինչպես կարող էին այդ պատկառելի ծերերը մանկական ժպիտը դեմքերին այդպես գազանաբար հաշվեհարդարի ենթարկել նրանց, որոնց հետ դեռ երեկ որսի են գնացել, վերանորոգել են գյուղատնտեսական գործիքներ, աշխատանքի ժամանակ նրանք են զիջել իրենց եզները և Երզնկայի դաժան ձմռանը նրանց օթևան են տվել Քեշիշի լեռներում: Հարցի պատասխանը մենք փորձեցինք գտնել այս մարդկանց սոցիալական խորը հոգեբանության մեջ:

Սալահի Սոնիել

Կառավարությունը տեղահանված հայերի քարավանների պահպանությունը վստահեց ոչ զինվորականի, որոնք սովորաբար դատապարտյալներ էին՝ բանտից ազատ արձակված այս նպատակի համար:[1]

«Ջումհուրիեթ» (17 ապրիլի 1965 թ.)

Բնականաբար հայերը հանձինս այդ դեպքերի տեսնում էին ջարդ, իսկ թուրքերը՝ ինքնապաշտպանություն:

Ալիև՝ ադրբեջանցի պատմաբան

Չնականորեն «դեպորտացիայի» մասին օրենքը նախատեսում էր ազգաբնակչության տեղափոխություն այն շրջաններից, որոնց սպառնում էր ռուսական բանակը, իրականում այն գործադրվեց նաև Կենտրոնական Անատոլիայում և Ստամբուլում բնակվող հայերի դեմ:... «Դեպորտացիայի» մասին օրենքը հայրենի վայրերից քշված 1,5 միլիոն հայերի համար նշանակեց զանգվածային ոչնչացում:

«Դեպորտացիան» իրականացվում էր զինվորական իշխանությունների անմիջական հսկողության ներքո: Քանի որ այն իրականացվում էր հապշտապ, հայերի ուեցվածքը պետական մարմինները, ինչպես նաև գերմանացի սպաները, ձեռք էին բերում չնչին գնով, իսկ շատ դեպքերում այն պարզապես թալանվում էր: Որովհետև տղամարդիկ, կանայք ու երեխաները բռնագաղթվում էին անջատ, հազարավոր ընտանիքներ նույնիսկ իմանալ չէին կարող իրենց հարազատների ճակատագրի մասին:

Այդ դժբախտները, զուրկ սննդամթերքից ու բժշկական օգնությունից, խմբերով տեղափոխվում էին լեռնային կիրճերով դեպի «հատուկ ճամբարներ» Սիրիայում և Միջագետքում: Մեծամասնությունը ճանապարհին զոհվեց քաղցից, ծարավից, հիվանդություններից, ինչպես նաև ավազակային հարձակումներից, իսկ նրանք, ովքեր հասան ճամբարները, զոհվեցին համաճարակներից...

Շատ թուրքեր դատապարտում էին երիտթուրքական ղեկավարների հակահայ քաղաքականությունը: ...Թուրք աշխատավորները իրենց կառողությունների սահմաններում ձգտում էին խանգարել կառավարության սևհարյուրակային քաղաքականությունը, օգնություն ցույց տալ բռնա-

1.«Հայրենիք», 23 հունվարի 1987 թ.:

գաղթված բնակչությանը: Օրինակ, 1915 թ. ամռանը հայերի աքսորի դեմ հանդես եկավ Էրզրումի թուրք ազգաբնակչությունը: Իսկ Տրապիզոնի թուրք բնակիչները իրենց տներում թաքցրեցին բռնագաղթվող հայերին:

Ազգային հարցում երիտթուրքերի գործելակերպից մեկը հանդիսանում էր ազգային փոքրամասնությունների միջև թշնամության բորբոքումը: Օրինակ, նրանք սաղրանքի ենթարկեցին և թունավորեցին քրդերին հայերի և հայերին քրդերի դեմ: Հայերի դեմ գործողություններում որպես պատժիչ ուժ օգտագործեցին երիտասարդ քրդերից ձևավորված համիդիե հեծելազորային «գվարդիաների», ինչպես նաև տարբեր ազգությունների հանցագործ տարրերից կազմված ջոկատները:

Առաջին աշխարհամարտի ժամանակ ոչնչացվեց ավելի քան մեկ միլիոն հայ: Կենդանի մնացածները փրկվեցին լոկ արտասահման փախչելու շնորհիվ...

(Հատուկ կազմակերպությունը) ստեղծվել էր կենտկոմի նախաձեռնությամբ ռազմական նախարարության մասնակցությամբ Բալկանյան երկրորդ պատերազմի վերջին օրերին:

Համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց հետո այս կազմակերպության իրավունքներն ու գործունեության շրջանակները մեծ չափով ընդլայնվեցին: Թե ինչպիսի նշանակություն էր տալիս Իթթիհադ վե Թեարգզը այս կազմակերպությանը, կարելի է դատել նրանով, որ նրա կազմի մեջ մտել էին Նազըմը՝ որպես կուսակցության կենտկոմի, Խալիլ փաշան՝ որպես գլխավոր շտաբի ներկայացուցիչներ, ինչպես նաև մի շարք այլ նշանավոր երիտթուրքեր՝ Սուլեյման Ասքերի բեյ, Աթըֆ բեյ, Ազիզ բեյ և ուրիշներ:

Ձևականորեն Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր «հայրենասիրական զգացմունքները միավորելու» համար, սակայն իրականում նրա առջև դրված էին միանգամայն այլ խնդիրներ: Ահմեդ Ռեֆիկը, հիմնվելով իր դիտարկումների վրա, նշում է, որ Հատուկ կազմակերպության ջոկատների կարևորագույն պարտականություններից մեկը «դեպորտացիայի» մասին խայտառակ օրենքի կատարման հաջողության ապահովումն էր: Այս նպատակով ռազմական նախարարությունը նրանց համար կազմակերպել էր հատուկ ուսուցում:

Թուրք մի այլ պատմաբանի՝ Զիա Շաքիրի խոսքերով, պատերազմի առաջին օրերին երիտթուրքերը բանտերից ազատեցին և Հատուկ կազմակերպության տրամադրության տակ դրեցին հարյուրավոր հանցագործների: Դրանից բացի, այդ կազմակերպությունն իր գործունեության

մեջ ներառելով էմիգրանտների՝ Ռումելիայից ու Կովկասից: Հատուկ կազմակերպությունը պետք է իրականացներ ոստիկանական-լրտեսական գործունեություն երկրում ու արտասահմանում՝ Իթթիհադ վե Թերաքզզի թշնամիներին թույլ չտալու ակտիվ մասնակցություն ունենալու պետական գործերին:

Հատուկ կազմակերպության ստեղծման գործում Թալեաթ և Էնվեր փաշաները գործում էին միասին, սակայն նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր այն ենթարկել իր շահերին: Ի վերջո, երիտթուրք երկու լիդերները հանգեցին յուրատիպ փոխզիջման՝ կուսակցության կենտկոմը, որը ղեկավարում էր Թալեաթ փաշան, նշանակեց Հատուկ կազմակերպության ջոկատների ղեկավարներին, իսկ ռազմական նախարարությանը, որը գլխավորում էր Էնվեր փաշան, պատկանում էր վճռական խոսքը կազմակերպության ծրագրի և գործունեության ուղղությունների որոշման գործում:[1]

Նազրմ Հիքմեթ

Բայց ինչպես չզայրանալ, երբ հիշում ես,
թե ինչպես է ցնցվում իր հարազատ հողը
մի խումբ սրիկաների ոտքերի տակ:[2]

Ալի Սիրմենի «Ի՞նչ ենք անելու» հոդվածը «Ջումհուրիեթ» թերթում

...Եթե մեր բարձրաստիճան ղեկավարները ասեն. «Այո, ցեղասպանություն եղել է, բայց մենք չենք հայերին սպանել, այլ հայերը մեզ սպանեցին», սա համոզիչ չի լինի: Ընդհակառակը, ավելի ծանր հակազդեցության պատճառ կդառնա...

Առանց մերժելու Օսմանյան կայսրության նկատմամբ մեր հպարտությունը, մյուս կողմից էլ պաշտպանելով Օսմանյան կայսրության դեմ հիմնված մեր հանրապետությունը, կարող ենք ասել, որ այս նյութերը վիճելի են, դրանք պետք է մանրակրկիտ քննել: Միայն թե այս ճշմարտությունը մի մոռացեք: Գերմանացիներն անգամ, որ ամենամեծ ցեղասպանությունը կատարեցին, ներվեցին, երբ նացիստները սրբվեցին, վերջացան պատմությունից: Այսօրվա թուրք ժողովուրդը ինչո՞ւ պետք է պատասխանատու լինի օսմանցիների կոտորածի համար:

1. **Г. З. Алиев** Турция в период правления Младотурок, Москва, 1972, стр. 276-278, 288- 289.

2. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, էջ 423:

Բայց որպեսզի սա անել կարողանալ, պետք է մտածողությունը փոխվի, պետք է փոխենք մարդկային իրավունքներին անհարիր մի կառույց, իրականացնենք այնպիսի տեսակետներ, որոնք հավասարապես պաշտպանունակ լինեն ժամանակակից ամեն մի մարդու համար: Հայկական հարցի լուծման գործում ամենակարևորը պետք է լինի այսօրվա Թուրքիայում տիրապետող մտածողության վերանայումը:[1]

Բ. Էջևիթը՝ վարչապետ, 1988 թ. հանդես գալով ԱՄՆ-ի Բերկլիի համալսարանում, հայտարարեց

Մտքերում հարցեր են ծնվում՝ ցեղասպանություն կատարվե՞լ է, թե՞ ոչ, դա օսմանյան պետության ցանկությունո՞վ է, թե՞ ոչ: Բոլոր դեպքերում պատասխանատու համարվում է օսմանյան պետությունը: Սակայն այս պահին իմ և օսմանցու միջև ի՞նչ նմանություն եք գտնում: Թուրքիայի հանրապետությունը ստեղծվել է օսմանյան վարչակարգի դեմ ապստամբության միջոցով:[2]

Մեշիլ Աքգյուն՝ պատմաբան

...Գաղթի ընթացքում մի շարք տխուր դեպքեր եղան: Գաղթող հայերի վրա հարձակումներ էին գործում, բազմաթիվ հայեր սպանվում էին, այսինքն՝ ջարդ տեղի էր ունենում, սակայն ոչ միակողմանի... Հայերը պետությունից պարտվել էին և դատապարտվել էին տեղահանության: Թուրք ժողովուրդն էլ ձգտում էր այդ տարածքներին տիրանալ... Գաղթող հայերի վրա մերթ հարձակվել են պաշտոնյաները, մերթ՝ մահմեդական բնակչությունը, մերթ էլ՝ քուրդ հրոսակները: Հայերը հետիոտն գնում էին հարյուրավոր կիլոմետրեր և այդ այն օրերի ծանր պայմաններում: Սովից ու հիվանդություններից ևս մեռնողներ եղան... Պատճառներից մեկը նաև 30 տարվա թշնամությունն էր, որ կուտակվել էր՝ հայերն ու թուրքերը բացարձակ թշնամիներ էին դարձել, մանավանդ Բալկանյան պատերազմներից հետո, երբ թուրքերը կորցրեցին տարածքները Բալկաններում... Հարյուր հազարավոր թուրքեր հարկադրված էին այդ տարածքներից Անատոլիա գաղթել... Նրանք համակված էին ոխի զգացմունքով: Այսինքն՝ կոտորածների մասին պետության հրաման չի եղել: Սակայն նույնիսկ հոգեբանական ազդակներով, տեղահանված քրիստոնյաների քարավանների վրա հարձակումներ էին գործում թուրքերն ու քրդերը...

1. «Արարատ», 15 հուլիսի 1988թ.:
2. «Արարատ», 10 մայիսի 1988 թ.:

Հալեպի կուսակալ Բեքիր Սամի բեյը տեղահանության օրենքն անվանեց «խելառ օրենք» և չէր ուզում այն կիրառել...

Զանգվածային աքսորը լավ պայմաններում չէ, որ տեղի ունեցավ, և շատ հայեր մեռան:

Այդ օրերին Հ. Մորգենթաուն դիմում է Թալեաթին՝ մեկ միլիոն հայի տարագրելու Ամերիկա: Թալեաթ փաշան համաձայնվում է, սակայն ասում է. «Մենք, այսինքն՝ թուրքական կառավարությունը, ի վիճակի չենք դրա նյութական ծախսերը ստանձնել»: Փոխադրական ծախսերից հրաժարվում է նաև ամերիկյան կոնգրեսը: ...Եթե նպատակը հայերի տեղահանությունն էր, ապա օսմանյան կառավարությունն ինչո՞ւ էր նման բանակցություններ վարում... սպանված հայերի թիվը պետք է եղած լինի 300-500 հազար մարդ:

Կոտորածին մասնակցել են նաև պետական պաշտոնյաները, բայց ոչ հրաման կատարելու, այլ վրեժի ու ոխի թելադրանքով:

Այն, ինչ անվանվում է «տեղահանություն կամ աքսոր», նշանակում է բռնագաղթ, տարագրություն, այսինքն՝ հայերը պետության կողմից բռնի միջոցներով գաղթվեցին, քշվեցին իրենց բնակավայրերից...

Նախ, 1915 թ. փետրվարի 25-ին բանակի հրամանատարությունը հրաման է հրապարակում, համաձայն որի՝ հայերն այլևս բանակում գտնվել չեն կարող... Ապրիլի 18-ին կառավարական որոշմամբ 16-55 տարեկան հայ տղամարդկանց արգելվեց արտասահման մեկնել և արտասահմանից Թուրքիա գալ:[1]

Մ. Շուքրուն. Նազրմը Բ. Շաքիրի հետ ի վիճակի էին պաշտոնազրկել տեղական լիազորներին: **Քուչուկ Թալեաթի ցուցմունքը.** Նազրմը գործում էր այն վիլայեթներում, որտեղ Հատուկ կազմակերպությունը զորավարժություններ էր անցկացնում:[2] **Նազրմ.** Միլիոնավոր հանցագործություններ եմ կատարել հայերի դեմ: "Morning post. **Ս. Այդեմիր.** Նազրմը կուսակցության պատժիչ ձեռքն էր... Նրա անձն արյունահեղության մեջ ամենամեծ պատասխանատվությունն է կրում: **Մահամերձ թուրք Խարբերդի հիվանդանոցում.** Պիտի ջանամ շուտով աղեկնամ, որպեսզի վերադառնամ և օգնեմ կեավուրները սպանելու և անոնց կիները բռնաբարելու:[3] Թուրքը միսիոներ Էհմանին. եթե 20 տարիէ վերջ ապստամբութիւն մը ծագի, հանցանքը ձերն է: Դուք 6 000 ոճրագործներու (հայերի) կը

1. «Հուրիեթ», 27 ապրիլի 1987 թ.:
2. "The Orient", 7 մայիսի 1919 թ.:
3. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1986 թ., թիվ 6:

պահեք ձեր քով: Թուրքերուս համար ատիկա մեծ մտահոգութիւն մըն է, նոյնիսկ այն քիչ կամ քանի մը համեստ որբերը, որոնք կապրին:[1]

Թուրք ժանդարմը Մ. Յակոբսոնին. Ինչո՞ւ են սրանց (հայերին) դրամ ու ուտելիք տալիս, սրանք գնում են լեռները մեռնելու:[2] **Թուրք սպա.** 1915 թ. օգոստոսին... Մշո մերձակայքի մի գյուղում տեսա, թե ինչպես թուրք ժանդարմները 500 հայի, մեծամասամբ կանայք ու երեխաներ, հավաքեցին մի ախոռում և փակեցին:Կտուրի անցքից (երդիկից) ժանդարմները ներս գցեցին բոցավառվող ջահեր: Բոլորը կենդանի այրվեցին: Չմոտեցա, բայց տեսա բոցերը և լսեցի խեղճ զոհերի ճիչերը:[3] **Թուրք սպա.** Մշո դաշտում սկզբում եղել է 800 գյուղ, յուրաքանչյուրը 200-300 տնով և բոլորը լի հայ բնակչությունով: Նրանց սպանողներն արդեն սպանվել են... իսկ փախչողներն ապաստանել են ձյունոտ լեռներում: Այսօր Քոռ Հուսեյին փաշան սպանել է 40-50 հայ... Էշրեֆի հրոսախումբն էլ մեծ անձնազոհություն դրսևորեց: Այնպես, որ Աիլաքը թողնում ենք թշնամու(հայերի) դիակներով ծածկված:[4] **Ալի Ֆուադի՝ Կոմիտասի ծննդավայրի կառավարիչ, պատասխանը հայերին տեղահանելու վերաբերյալ Թալեաթի 3-րդ հեռագրին.** Ոճրի գործիք չեմ կարող լինել: Դուք եկեք և տեղահանությունը գործադրեք:[5] **Էսքիշեհիրի ոստիկանապետը Ենոք Արմենին.** Ջանըմ, այս որքա՞ն ջանք ապրելու... չե՞ք հասկնար կոր կառավարութեան միտքը... հասկցեք, պիտի երթաք... կոտորվեք:[6] **Ահմեդի պատմածը 55 հայ տղամարդկանց ջարդի մասին.** Երբ մոտեցանք վանքին (Առաքելոց), Քյամիլ էֆենդին նստեց մի բարձր քարի վրա և հրամայեց կրակել: Մենք 200 հրացանի փողերն ուղղեցինք և կրակ բացեցինք շղթայված հայերի վրա: Նրանք իսկույն օձի նման գալարվեցին, փաթաթվեցին իրար, դարձան մի գունդ ու փովեցին գետնին: Մոտեցանք ստուգելու... Այդ պահին նրանցից մեկն ազատվեց պարանից ու փախավ դեպի Մզրայի ձորը: Անբողջ զորքը կրակելով ընկավ նրա հետևից...[7]

Կեսարիայում հայտնաբերվել է Թալեաթի մեծ թվով ծածկագրերի կապոց: Ահա դրանցից մի քանիսը. 12 մայիսի, 1915 թ.

Հայկական գյուղերը դատարկվելուց անմիջապես հետո տեղեկագրել նրանց անունը, բնակչության թիվը և ուղարկված վայրի անունը: **8 հունի-**

1. «Սովետական Հայաստան» ամսագիր, 1986 թ., թիվ 6:
2. Ն. տ.:
3. Fo 371/3668/1228/1210201:
4. Մի թուրք սպայի հուշերից. Թիֆլիս, 1917 թ.:
5. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 612:
6. Ն. տ., էջ 614:
7. **Ե. Կարապետյան** Հուշագրություններ (ձեռագիր):

սի. տեղացի ժողովուրդը չպետք է խառնվի լքյալ գույքերի գործերին: **9 հունիսի.** Հայերի... դպրոցներն իրենց եղած վիճակով... հանձնել այդ վայրերում տեղավորվելիք մահմեդականներին: **10 հունիսի.** Հայերի տեղավորման ժամանակ պետք է նրանց... իրարից անջատ տեղեր բաժանել և արգելել հայկական դպրոց բանալ, այլ ստիպել, որ իրենց երեխաներին ուղարկեն պետական դպրոցներ... Նրանց տեղավորած բնակավայրերը պետք է իրարից առնվազն հինգ ժամ հեռավորության վրա լինեն և չունենան իշխող և ինքնապաշտպանության համար հարմար դիրք: **29 հունիսի.** Որոշված է, որ հայերը Հալեպի նահանգից արևելք և Քիրկուկի գավառում և Սիրիայի նահանգի արևելքում հաստատվեն, ուստի այլևս Զորի գավառ հայ չուղարկել, որովհետև լցված է և բնակչության 10 տոկոսից հայերի թիվն անցել է: **10 հուլիսի.** Հայերից դատարկված գյուղերի երկրագործությունն ու տնտեսական կյանքը հասցնել բնականոն վիճակի, խստորեն հետապնդել ու կատարել մեր առաջադիմության համար անհրաժեշտ, մահմեդական գաղթականների բնակեցման գործը: **15 հուլիսի.** Քանի որ շատ մահմեդականներ բնակվում են մեկուսացված փոքրիկ գյուղերում, ինչը բացարձակապես անհարիր է մահմեդական տարրը բազմացնելու և նրա առևտուրն ու արհեստները զարգացնելու մեր սկզբունքին, ուստի նման գյուղերի մահմեդական ժողովրդին պետք է խմբովին հաստատել հայերից դատարկված 100-150 տուն ունեցող գյուղերում: **29 հուլիսի.** Կոնիայում և Անկարայում ստեղծված են հայկական բնակավայրերում մահմեդականներ բնակեցնելու կենտրոններ: Կոնիայից գաղթականներն ուղարկվում են Աղանա և Դիարբեքիր, իսկ Անկարայից՝ Սեբաստիա, Կեսարիա, Խարբերդ:[1]

Թալեաթի ևս մի քանի հեռագրեր. 23 հուլիսի. Ձեր վիլայեթի սահմաններում գտնվող հայերին ուղարկել նրանց համար նախատեսված շրջանները: Կաթոլիկները պետք է դուրս մնան տեղափոխման այդ գործընթացից: **25 հուլիսի.** Որոշված է, որ հայերը պետք է երկրի ներսը տարվեն: Այդ նպատակով խնդրվում է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել արգելելու ձեր շրջանի բանվորական վաշտերում եղած հայ զինվորների կողմից կարգ ու կանոնի խանգարումը... **2 օգոստոսի.** Արգելվում է տեղափոխել հայ պատգամավորներին ու նրանց ընտանիքներին: Հրաժարվեք բողոքական հայերին աքսորելուց (ովքեր դեռ տեղահանված չեն) և հայտնեք մեզ աքսորվածների թիվը, և նրանց մասին, ովքեր դեռ մնում են

1. **Ա. Գալֆայան** Զոմախլու, Նյու Յորք, 1930, էջ 131-133, **Ա. Ալպոյաճեան** Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, հ. Բ., էջ 1453-1455:

վիլայեթում: **Առանց թվականի.** Չինվորականների ընտանիքները, բողոքականներն ու կաթոլիկները, ովքեր դեռևս չեն տեղահանվել, արհեստավորները, որոնց տեղական իշխանությունները թույլատրել են մնալ, բանվորները, ովքեր աշխատում են ժողովրդի կողմից պահանջարկ ունեցող ապրանքներ արտադրող գործարաններում և նրանք, ովքեր աշխատում են երկաթուղիների վրա ու կայարաններում, ինչպես նաև նրանց ընտանիքները, չպետք է տեղահանվեն: 15 տարեկանից բարձր տղաներն ու ամուսնացած կանայք ընտանիքի մեծերից կախված չեն համարվում:[1]

1915 թ. սեպտեմբերի 13-ին հաստատվեց Լքյալ գույքերի կանոնադրությունը

1.1915թ. մայիսի 27-ի օսմանյան օրենքի համաձայն այլ վայրեր տեղափոխված անձանց գույքերը, դրամական միջոցները և պարտքերը տնօրինում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը:

2.Այդ անձանց շենքերն ու եկեղեցական հողերը գրանցվելու են բարեգործական հաստատությունների նախարարության վրա:

3.Լքյալ գույքերի վաճառքից ստացված, ինչպես նաև տարագրվածների գումարները հանձնաժողովների նախագահները պահ են տալիս տնտեսական նախարարությանը:

(4-8 հոդվածները սահմանում են տեղահանվածների պարտքերի գանձման կարգը, 9-րդ հոդվածով հայերի հողերը կարող են բաժանվել ներգաղթողներին):[2]

Ք. Կարաբեքիր. Հատուկ կազմակերպության ղեկավար կոմիտեի մեջ մտնում էին Մ. Շուքրին, Զիա Գյոքալփը, Բ. Շաքիրը, Նազըմը, Ռուսուհը, Հիլմին, Ռըզան, Քյուչուկ Թալեաթը և Աքըֆը... Բ. Շաքիրը միտք ուներ Թեշքիլաթ-ը մախսուսեի մեջ հավաքել 40 հազար մարդ... նա անժամանակ և անփորձ արձակվածներով դեպի Արդահան շարժվելով և այնտեղ եղած թուրքերին էլ ոտի հանելով՝ ժողովրդի ոչնչանալու պատճառ եղողներից մեկը հանդիսացավ:[3] **Ռեշիդ՝ Դիարբեքիրի վալի.** Երկու հավանականություն կա... կամ հայերը թուրքը պիտի մաքրեն կամ թուրքերու կողմէ պիտի մաքրագործուին: Այս երկընտրանին ընելու անհրաժեշտութեան առջև երկար ատեն չվարանեցայ: Թրքութիւնը հաղթեց բժշկու-

1. S. Sonyel Beleg lerin isiginda Ermani tehcirleri, "Belleten", 1972, N141, FO N91335523.

2. "The Orient", 13 հոկտեմբերի 1915 թ.:

3. K. Karabekir, Kitab, s. 28-29.

թեան դեմ: Փոխանակ թույլ տալու, որ անոնք մեզ բնաջնջեն, մենք զանոնք կը բնաջնջենք՝ ըսի... Բայց այս գործը տեսայ ոչ անձնական հպարտութեանս գոհացում տալու, ոչ ալ գրպանս լեցնելու համար: Տեսայ, որ հայրենիքը ձեռքէ կելլե, իսկոյն աչքս գոց առաջ նետուեցայ՝ համոզուած, որ յօգուտ ազգիս կը շարժիմ... եթե այս ընթացքիս հետևանքով մեր պատմութիւնը զիս պատասխանատու նկատե՝ այժմէն կընդունիմ:[1]

Թալեաթի հուլիսի 22-ի հեռագիրը. Մի շարք վայրերից ստացված լուրերով... լքյալ գույքերի ու ունեցվածքի աճուրդի ժամանակ պաշտոնատարներից ոմանք ի հաշիվ իրենց չվճարված աշխատավարձերի կամ էլ որոշ ամսավճարով դրանք փորձում են վերցնել: Պետական պաշտոնատարների կողմից նման գործերին միջամտելը տեղի կտա զեղծումների և ամբաստանությունների, ուստի լքյալ գույքերի և ունեցվածքի առուծախի մեջ գնորդի դերում պաշտոնատարներ չպետք է լինեն:[2] **Մ. Շուքրուն Ռոսլերին.** Երևում է, դուք չեք հասկանում մեր մտադրությունը: Մենք ուզում ենք Հայաստան առանց հայերի: **Մ. Շուքրուն Բաստենդորֆին.** Հասել է հայերի հետ տնական կոնֆլիկտը մեկընդմիշտ լուծելու ժամանակը հայերին բնաջնջելու միջոցով: **Սալեհ Զեքի.** Ես անխտիր կոտորել եմ հայերին՝ սկսած ծծկեր երեխաներից մինչև 70-80 տարեկանները: **Թուրք բարձրաստիճան զինվորականը Ալեքսադրեթի գերմանական փոխհյուպատոսին.** Մինչև 1915 թ. հոկտեմբերի կեսերը հենց միայն Հալեպից մոտ 300 հազար հայեր են տեղահանվել և ուղարկվել դեպի հարավ ու հարավարևելք: **Քերիմ Ռեֆի՝ Ռաս-ուլ-Այնի կազայի ենթատնօրեն.** Ինձ ենթակա տարածքում հայ գաղթականների շարասյուների ոչնչացումը ի կատար է ածվել համաձայն հրամանի: **Հասանի՝ սպա, վկայությունը.** Հայոց որբերին բռնությամբ հավատափոխ էր անում նաև Դամասկոսի վալի Թահսին, որն այստեղ էր տեղափոխվել Էրզրումից: **Սուլեյման Նազիֆ՝ հրապարակախոս.** Հայ ժողովրդի բնաջնջումը կդառնա Թուրքիայի պարտության ամենասև էջը: **Բոնագաղթի թուրք լիազոր.** Այս անգամ մենք հայերի հետ հաշիվները կմաքրենք, ինչը վաղուց էինք ուզում:[3]

1. «Արև», 27 հուլիսի 1965 թ. կամ **Հ. Նազլեան** Յուշեր, Բեյրութ, 1960, հ. Ա, էջ 629:

2. **Ա. Գալֆայան** Ոմանխլու, էջ 132:

3. Երիտթուրք գործիչների մասին մեջբերումները տե՛ս **Vahan N. Dadrian** The Naim Andobian documents on the World War I destruction of ottoman Armenians: The Anatomy of a genocide. International Journal of Middle East Studies, vol. 18, N 3, august, 1986, ps. 311-360.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱՀԱՅ ՅԵՂԱՍՊԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Իթթիհադի համագումարի հանձնարարությունը թուրքական պատվիրակությանը զինադադարից հետո

Թույլ չտալ, որ օսմանեան հողերը փոխանցուին դաշնակիցներուն, արաբներուն և հայերուն: Օսմանեան պետութիւնը պաշտպանել դաշնակիցներու պահանջած անդամահատումէն: Պատժէ փրկել իր այն անդամները, որոնք Ոճրադատ ատեաններու առջև հանուած են:[1]

Վեհիբ փաշայի՝ թուրքական 3-րդ բանակի հրամանատար, հեռագիրը Էրզրում (26 հունվարի 1918 թ.)

Թիվ 4 խառը հանձնաժողովի անդամները, տեսնելով 2-րդ թուրքեստանյան կորպուսի և 5-րդ թուրքեստանյան դիվիզիայի շտաբների տեղաշարժը և վտանգ զգալով հայկական հրոսակների կողմից, միաձայն որոշել են ուղարկել անհրաժեշտ քանակությամբ զորք, պաշտպանելու տեղական բնակչության անվտանգությունը:[2]

Վեհիբ փաշա

-Թուրքական մարզերում մահմեդական բնակչության կյանքի անվտանգության համար առաջ եմ շարժվելու, մինչև որ շփման մեջ մտնեմ ռուսական զորքերի հետ: «Հայկական ազգային զորքերին զորք չի համարում»:[3]

-Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց են տվել, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները:[4]

---

1. **Մուսա Բրենս** Անպատիժ ցեղասպանութիւն մը, Հայասպանութիւնը, Բեյրութ, 1969, էջ 54:

2. ՎՊԿՊԱ, 1818, ց. 2, գ. 45, թ. 152:

3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, Գեներալ Նազարբեկովի հուշագրությունները:

4. **И. Х. Баграмян** Мои воспоминания, Ереван, 1979, стр. 88.

Ի. Բերկուկը՝ թուրքական բանակի գնդապետ, «Մեր գործողությունները Հյուսիսային Կովկասում համաշխարհային պատերազմում (1918) և 15-րդ դիվիզիայի մարտական գործողությունը» աշխատության մեջ գրում է

1918 թ. գարնանը Բրեստ Լիտովսկի պայմանագիրն այլևս չէր բավարարում մեր կառավարությանը: Կառավարությունը պահանջում էր, որպեսզի մեր զորքերը գրավեն ռազմավարական կարևոր կետեր Կովկասում, հատկապես երկաթուղիներ՝ թույլ չտալով Վրաստանի և Հայաստանի կողմից Կովկասում մեր զորքերի գործողությունների ազատության որևէ սահմանափակում: Մեր կառավարությունն իր այդ պահանջները ներկայացրել է վերջնագրի ձևով:[1]

Էնվերը Բաքվի վրա թուրքական բանակի շարժվելու առնչությամբ

Ես չեմ կարող կանգնեցնել իմ նախաձեռնությամբ և օգնությամբ սկսված ռազմական գործողությունը, որը նպատակ ունի օգնության հասնել մահմեդական ժողովրդին Հյուսիսային և Արևելյան Կովկասում:[2]

Ռուշտուն՝ թուրքական բանակի փոխգնդապետ

Զավթելով Բաքուն՝ հայ բոլշևիկների զորքերը շարունակեցին առաջխաղացումը մինչև Շամախի և Քյուրդամիրի բնագծերը: Նրանց ագրեսիայից չկարողացան փրկվել նաև Լենքորան, Սալյան և Ղուբա քաղաքները...

Գերմանացիները կովկասյան քաղաքականության հարցում օսմանցիների համար դաշնակիցներ չեն եղել... Նրանք չեն ցանկացել, որպեսզի նավթով ամենահարուստ և մեծ քաղաք Բաքուն լինի միայն օսմանցիների ձեռքում:[3]

---

1. ՀՀ ՊԿՊԱ «Թուրքական աղբյուրները Կովկասում 1914-1920 թթ. իրադարձությունների մասին» հավաքածու:

2. **В. Ф. Луцшувейт** Турция в годы первой мировой войны, стр. 218.

3. **Ռուշտու** Կովկասյան 5-րդ հետևակային դիվիզիան Բաքվի ուղիներով առաջին աշխարհամարտի ժամանակ, Անկարա, 1934: ՀՀ ՊԿՊԱ, «Թուրքական աղբյուրները Կովկասում...», էջ 24:

Վեհիբ փաշայի հեռագիրը իսլամական բանակի հրամանատար Նուրի փաշային

Աղրբեջանի իսլամական անկախ կառավարության պահանջով Ղազախի վրայով Գյանջա է ուղարկվում ուժեղացված հավաքական զինախումբ՝ մահմեդականներին փրկելու բոլշևիկյան ագրեսիայից: Այդ զինախմբի հեծելազորը խնդիր ունի պաշտպանելու Ղազախ-Գյանջա տեղամասը: Ղարաքիլիսայում և Ջալալօղլիում իսլամական բանակի կարիքների համար պատրաստված են զենք և զինամթերք:[1]

Ռուշտու

Հայերին գրավոր զգուշացում արվեց՝ անհապաղ հավաքել զենքերը և հանձնել թուրքերին, հակառակ դեպքում տեղն ու տեղը կգնդակահարվեին նրանք, ում մոտ կհայտնաբերվեր զենք... իսլամական բանակի հրամանատարի հրամանով հայկական թաղամասերն ենթարկվեցին հրետանային ռմբակոծության:[2]

Աքչուրա (1920 թ.)

Պետք է ոչնչացնել Հայաստանը, զոր դաշնակիցները կուզեն իբր թումբ կանգնեցնել երկու եղբայր հատուածներուն, Անատոլուի և Կովկասի թրքութեան միջև:[3]

Ռեուֆ

Եթե հայերը պիտի պահանջեն ազգային տուն, թող այդ տունը ստանան իրենց բարեկամներէն:[4]

Սիմեդ Ջևդեթ

Հայոց ազգային տան գաղափարը միամտութիւն է. Թուրքիոյ մեջ ապրելու համար հայերը օրինակ պիտի առնին հրեաներէն, որոնք այն-

1. **Ռուշտու** Կովկասյան 5-րդ հետևակային դիվիզիան Բաքվի ուղիներով առաջին աշխարհամարտի ժամանակ, Անկարա, 1934: ՀՀ ՊԿՊԱ, «Թուրքական աղբյուրները Կովկասում...», էջ 5:

2. Ն.տ., էջ 31, 32:

3. Ն. տ.:

4.Ն. տ., էջ 132:

քան երջանիկ կապրին՝ չպահանջելով և ոչ մեկ ազգային առանձնաշնորհում: Իսկ եթե չեն ուզեր մեր հետ ապրիլ, թող երթան Արժանթին:[1]

Ռիզա Նուրին ամերիկացիներին

Մենք ձեզի հաց կու տանք, դուք անոնց հող տուեք:[2]

Ջելալ Նուրի

Երբ Հայկական տան մասին կը լսեմ, կոնակի վրա կինկնամ մինտարին և տասը վայրկեան անդադար կը խնդամ:[3]

Էնվերի գաղտնի հրամանը (27 փետրվարի 1918 թ.)

Ոչնչացնել ամբողջ հայ ցեղը:[4]

Էնվեր

(28 օգոստոսի, 1918 թ. հանդիպում հայկական պատվիրակության հետ: Հայաստանին չի վստահում, որովհետև թուրքերի նահանջի դեպքում հայերը խորանալու են մեր տարածքը):

...Դաշինք կնքեք Թուրքիայի հետ և չեզոքությունից հրաժարվելով, կռվեք Թուրքիայի թշնամիների դեմ, պաշտպանեք երկաթուղիները և թուրքերի թիկունքը: Հակառակ դեպքում Հայաստանի տարածքին վերաբերող որևէ հարց չի քննարկվի և ընդառաջ չենք գնա, որպեսզի հայ գաղթականները վերադառնան իրենց տները:[5]

Բ. Ջևանշիր՝ Ադրբեջանի ներքին գործերի նախարար

Այսօր ինձ մոտ էր Թաղիանոսովը: Ես նրան ասացի, որ հանուն հայերի շահերի ինձ մոտ չերևալ և չմիջամտել: Երբ խոսում եմ հայերի հետ, իմ մեջ բարձրանում է այնպիսի չարություն, որ ինքս ինձ չեմ հասկանում և դա, իհարկե, վատացնում է հայերի վիճակը...

...Ես այս նախարարություն եկա միայն նրա համար, որպեսզի հաշվեհարդարի ենթարկեմ հայերին:[6]

1. Ն. տ., էջ 133:
2.Ն. տ.:
3. Ն. տ.:
4. Վրաստանի կուսարխիվ, ֆ. 2914, գ. 503, թ. 19:
5. Ն. տ.:
6. «Кавказское слово», 1918, N262.

Հայդարով՝ Տրապիզոնի բանակցություններում Թուրքիայի պատվիրակության անդամ

Խոսել պետական սահմանների անխախտելիության մասին, ինչպես նաև Անդրկովկասի սահմաններում ժողովրդի ինքնորոշման մասին, թուրքական կառավարության կողմից՝ տրամաբանական հետևողականությամբ կարող է հարց հարուցվել՝ ինչո՞ւ Անդրկովկասի Սեյմի հաշտության պատվիրակության անդամները չեն կարծում, որ երկրամասի ժողովուրդների մեջ ինքնորոշման միտում կարող է դրսևորվել թուրքական կայսրության սահմաններում, և այդպիսով Օսմանեան կայսրության կողմից այդպիսի հարցադրումը չի կարող թվալ զուրկ իրական մտքից ու բովանդակությունից:[1]

Հաջինսկի՝ Ադրբեջանի պատվիրակության անդամ

Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքերին կարևոր է մեր անկախության հռչակումը... և Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարվելը:[2]

«Իկդամ» (7 օգոստոսի 1918 թ.)

Կովկասը մեր կյանքն է, մեր հոգին: ... Թուրք կառավարությունը չի կարող և պետք չէ, որ անտարբեր նայի, որ Կովկասը ենթարկվի ուրիշ քաղաքական և տնտեսական ազդեցության:

«Թանին» (14 օգոստոսի 1918 թ.)

Կովկասը գրավելը և նվաճելը ոչինչ չարժե Թուրքիայի համար, այն պետք է, որպեսզի Թուրքիան անձեռնմխելի պահի իր ամբողջությունը և պաշտպանի սահմանները:

Թալեաթ

Ղարաբաղի տեղաբնակ թուրքերը սար են բարձրանում, և այդ պատճառով անհնար է այդ երկիրը տալ Հայաստանին:[3]

Ահմեդ Էմին

Եթե մենք ցանկանում ենք պաշտպանել հայերին, ապա ոչ թե նրա համար, որ նրանց սիրում ենք, այլ նրա համար, որ այդ գործողություններ-

1. Հ. Ավետիսյան Հայկական հարցը 1915 թ., Երևան, 1997, էջ 114:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 9, թ. 101:
3. Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., էջ 290:

րին մղում են մեր շահերը: Թուրքիան հնարավորություն կունենա հաշտության վեհաժողովում հայտարարել, որ անցյալը հանդիսացել է կործանարար քաղաքականության արդյունք... Գործունեության համար անկախ և պատասխանատու Հայաստանը մեզ համար վտանգ չի ներկայացնում, մենք միշտ կարող ենք հաշիվ պահանջել մեր դեմ դրսևորված թշնամական յուրաքանչյուր քայլի համար: Եթե այդպիսի գործողություններ տեղի ունենան, ապա ավելի հեշտ կլինի հաշիվները մաքրել անկախ Հայաստանի հետ, քան արտասահմանյան պետությունների հովանավորության տակ գտնվող հայերի հետ... Այսպիսով, քաղաքական առումով Հայաստանը (անկախ) մեր տրամադրության տակ կլինի:[1]

Վեհիբ փաշա

Քանի որ սուլթանական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև խաղաղության դաշինք կնքված է, ապա հայկական զորքերի զորացրումը բնական է, ուստի ոչ մի կարիք չկա, որ հայկական զորքերը նույնպես օգտվեն օսմանյան ճանապարհներից ու խճուղիներից:[2]

Մուրսել փաշայի հեռագիրը Ա. Գյուլխանդարյանին (3 օգոստոսի 1918 թ.)

Եթե դուք համաձայնվեք քաղաքը՝ Բաքուն, հանձնել առանց կռվի, այդ դեպքում, առանց ազգի ու կրոնի խտրության, ամբողջ ազգաբնակչության իրավունքները կպաշտպանենք: Մասնավորապես հայերին թույլ կտրվի և կերաշխավորվի անարգել փոխադրվել Բաքվից Հայաստան... իսկ եթե քաղաքը չհանձնվի... այն ժամանակ թե՛ վնասների և թե՛ թափված արյան պատասխանատվությունը կընկնի ձեզ վրա:[3]

Խան-Խոյսկուի հեռագիրը Խալիլ փաշային

(Շնորհավորում եմ) Թուրքերի քաջարի զավակների ձեռքով խոշոր կենտրոնը (Բաքուն) վերցնելու առթիվ, որը հանդիսանում է երկրորդ Ստամբուլը թուրք աշխարհի համար և որը կարող է ապահովել Բաքվի ու Ադրբեջանի ապագա քաղաքական ու տնտեսական բարեկեցությունը:[4]

1. «Վաքրթ», 3 սեպտեմբերի, 1918 թ.:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 105:
3. «Վեմ», 1935, էջ 116-117:
4. «Азербайджан», 1918, թիվ 1:

Պատմում է Ա. Վամբերին

Համիդն ասաց. «Հայերու խելքը շուտով գլուխնին պիտի բերեմ: Իրենց գլխուն հարված մը տալով մոռցնել պիտի տամ յեղափոխութեան գաղափարը... Գրեթե հարկաղրուած եմ այդ արմատական միջոցները ձեռք առնել ի ներկայութեան այն անդուլ հալածանքին եւ թշնամութեանը, զոր քրիստոնեայ աշխարհը ցոյց կուտայ: Ռումանիան և Յունաստանը առնելով Եվրոպան Թուրքիոյ ոտքերը կտրեց: Պուլկարիոյ, Սերպիոյ եւ Եգիպտոսի կորստով անոր ձեռքերը կտրեցին, եւ հիմա այս հայկական յուզումով կուզեն մեր ամենէն կենսական մասերը՝ մեր աղիները խլել մեզմէ: Այս պիտի ըլլար ամբողջական կործանումը եւ մենք բոլոր մեր զորութեամբ դեմ պիտի դնենք ատոր»:[1]

«Իկդամ» (23 սեպտեմբերի 1918 թ.)

Թուրքերի նպատակն է տիրել ամբողջ Կովկասին, պարսկական Ադրբեջանին, Թուրքեստանին և առասպելական թոչունի թևին հառած հասնել մինչև Չինաստան, կիրգիզների բուն երկիրը, մոնղոլների ու սարթերի աշխարհը, թուրք-թաթարական Կասպից ծովի ափին ստեղծել թաթարական Ադրբեջան պետություն՝ Բաքու մայրաքաղաքով... Եվ Հայաստանը խեղդել իր անձուկ օղակում:

Ջելալ-Բայար՝ քաղաքական գործիչ

Կովկասում մենք ունենք երկու դիվիզիա: Վերջին ժամանակները զենք բաժանվեց Ադրբեջանին և Հյուսիսային Կովկասի մուսուլմաններին: Էնվեր փաշան պլանավորում էր կովկասյան կամավորներով մեր դիվիզիաներն ուժեղացնելուց հետո ջախջախել Հայաստանը և Կովկասում, ուր չեն կարող հասնել Համաձայնական պետությունները, ստեղծել ժամանակավոր կառավարություն:[2]

Թուրքական «Միլլի» հեռագրական գործակալության 1918 թ. օգոստոսի 16-ի հաղորդագրությունը

Կարսի, Բաթումի և Արդահանի պատվիրակությունը... երեկ ընդուն-

1. **Ա. Չոպանեան** Լումա, 1906, թիվ 4, էջ 77-79, թիվ 5, էջ 72-92:

2. Российсский центр хранения и изучения документов новой истории, ф. 544, оп. 3, д. 15, л. 54

վեց Մեծ Վեզիրի կողմից, որին ներկայացվեց հանրաքվեի արդյունքները՝ նշված մարզերի 19 տարեկանից բարձր ամբողջ բնակչությունը ներկայացնող 87 048 ձայներից 85 124-ը պահանջել են այդ երեք մարզերը վերադարձնել մայր երկրին (Թուրքիային):[1]

Էնվեր

Հայերը միշտ էլ եղել են և քանի դեռ կան, կլինեն մեր թշնամիները, հանգիստ չեն թողնելու մեր անատոլիական նահանգները և ավելի լավ է նրանց հիմնովին բնաջնջենք նաև Կովկասում, ինչպես այդ արվեց Թուրքիայում:

Կովկասում փոքրիկ Հայաստանը պատճառ է դառնալու, որ միշտ ձգտի ընդարձակել իր սահմանները և Թուրքիայի համար հավիտենական վտանգի վերածի: ...Մենք մի արատ ունենք, որ պիտի մաքրենք... (Դա) հայերից Թուրանի ճանապարհի մաքրումն ու թուրքական միության ապահովումն է:[2]

Խալիլ փաշայի հայտարարությունը Երևանում (31 օգոստոսի 1918 թ.)

Մենք՝ թուրքերս... մի իդեալ ունենք և ուզում ենք այն իրականացնել: Մենք ցանկանում ենք վերամիավորվել մեր հին հայրենիքի՝ Թուրանի հետ, և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքներն իրար կապող ճանապարհը ուրիշների տրամադրության տակ չլինի:

Խան-Խոյսկին 1918 թ. Գանձակում Նուրի փաշայի զորքերին դիմավորելու ժամանակ

Վերջապես Ադրբեջանի թրքությունը հասնում է իր նպատակին՝ մտնում է իր սիրելի օսմանյան խալիֆի գիրկը: Վերջապես իրականանում է համայն մահմեդականության դարավոր իդեալը՝ համախմբում սուլթանի կանաչ դրոշի տակ: Թուրք ազատարար զորքերին սրտատրոփ սպասում են Կովկասի լեռնականները, Թաթարստանի թաթարներն ու կիրգիզները, Անդրկասպյան երկրի սարթերը, խիվացիները, բուխարացիները, և վերջապես, Աֆղանստանն ու հարուստ Հնդկաստանը: Կեցցե՛ օսմանյան բանակը: Կեցցե՛ միավորված մահմեդականությունը:[3]

1. "Arbeiter Zeitung", Վիեննա, 18 օգոստոսի 1918 թ.:
2. «Շարժում», 7 հունիսի 1985 թ.:
3. **Գ. Ահարոնյան** Խոհեր հիսունամեակի ավարտին, Բեյրութ, 1966, էջ 172:

Թալեաթը հայկական պատվիրակությանը (20 հոկտեմբերի 1918թ.)

Քանի մը ժամ ետք ես պիտի ձգեմ իշխանութիւնը. մենք յաղթված ենք, ես ձեզ կը նախանձեմ, դուք յաղթողներու բանակին մեջն եք, իսկ մենք պարտուածներու հետ ենք և շատ բան կը կորսնցնենք: Բայց ձեզ բան մը պիտի ըսեմ՝ երբեք մի մոռնաք, որ ապագան անյայտ է և դեռ ով գիտե ինչեր կրնան պատահիլ: Ես ճակատագրապաշտ եմ, դուք երիտասարդ դիվանագետ եք, միշտ սպասեք վերջին վայրկեանին, երբեք չստորագրեք թուղթ մը երեկոյեան, երբ ան պիտի երթայ վաղը առավոտեան, ով գիտե ինչ կրնայ պատահիլ գիշերվայ ընթացքին:[1]

Խալիլ փաշան Բաքումի բանակցությունների ժամանակ

Տրապիզոնի բանակցութիւններէն յետոյ տեղի են ունեցած բախումներ և արիւնահեղութիւն Թուրքիոյ և Անդրկովկասի զորքերուն միջև: Ուստի մեր յայտարարութեանց բնույթը և հիմքը արդեն փոխված են, հետևաբար ես չեմ կարող թույլ տալ, որ մեր ներկա բանակցութեանց իբրև միակ հիմք ծառայե Պրեստ-Լիթովսկի դաշնագիրը:[2]

Ջեմալ փաշայի հայտարարությունը Բաքումում

Աղրբեջանցիք թուրքերու սիրելի եղբայրներն են և թուրքերը ազատելու են զանոնք... Թուրքերու և վրացիներու միջև, ճիշտ է, եղած են անցողակի թիւրիմացութիւններ, բայց ինքը վստահ է, թե ապագային անոնք չի պիտի կրկնվին այլևս և շատ դիւրութեամբ կարելի պիտի ըլլայ համերաշխ գործակցութեան մը գետինը մշակել...

Թուրքերու վեճը հայերու հետ հին է, և հայերը ոչ մեկ քայլ կընեն հաշտվելու համար թուրքերու հետ: Այս ընթացքը պատճառ պիտի դառնայ հայերու նոր դժբախտութեանց:[3]

Բեհաեդդին Շաքիր

Ես հայերու ազնիվ թշնամին եմ... Հայերը կանգնած են մեր համաիսլամական և համաթրքական սրբազան իդեալներու իրականացման ճամ-

1. **Ա. Խատիսյան** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 93-94:

2. Ն. տ., էջ 52:

3. Ն. տ., էջ 55:

բուն վրա, և մենք անխուսափելիորեն կը բախվինք անոնց հետ: Ատիկա վեր է և դուրս է մեր անձնական զգացմունքներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնել մեր ճամբուն վրայէն այն ամենը, ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր ազգային սրբազան իդեալներուն: Եվ յետոյ, դուք միշտ ռուսներուն հետ եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են: Պատմական թշնամիները: Մտածեցեք այդ մասին, փոխեցեք ձեր հոգեբանությունը և կողմնորոշումը: Դուք թշնամի եք և ես ալ թշնամի եմ, բայց մենք ընկերակիցներ ենք:[1]

Թալեաթը Ա. Խատիսյանին

Էնվեր փաշան կը գտներ՝ քանի որ հայերը եղած են և պետք է միշտ ըլլան մեր թշնամիները և հանգիստ չպիտի թողուն մեր Անատոլուի նահանգները, ավելի լավ է, որ հիմնավորապես բնաջնջուին անոնք նաև Կովկասի մեջ, ինչպես եղած են Թուրքիոյ մեջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մեջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնայ յավիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ ես պատասխանեցի, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թեկուզ այն պատճառով, որ այսպես թե այնպես, երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ և անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի ավելի լավ է, որ անոնց գոհացում տրվի, որովհետև եթե նույնիսկ 100 000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզ հանգիստ չպիտի տան երբեք: Եվ վերջապես փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կըլլանք Հայկական հարցը և այդպես կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին:[2]

Խալիլը Տրապիզոնի բանակցություններում հայկական պատվիրակությանը

Ես և Վեհիբ փաշան կոմիտեում (երիտթուրքական) ներկայացնում ենք չափավոր, հաշտարար թև, Թալեաթ և Էնվեր փաշաներն ուզում են լրիվ ոչնչացնել հայկական հողը: Օգնեցեք մեզ մեր դիրքն ուժեղացնելու: Բոլոր զիջումներն արեք, մեզ հնարավորություն տվեք գալու Ջուլֆա-Պարսկաստան երկաթուղիով և թույլ տվեք մեզ գնալու Բաքու և Հյուսիս՝ Ղարաքիլիսա-Եվլախ ճանապարհով:[3]

1.Ն. տ., էջ 82:
2. Ն. տ., էջ 72:
3. Ն. տ., էջ 55:

Թալեաթ

Մեր թշնամիները ռուսներն էին, բայց երբ անոնք իրենց հրացանները կը պարպեին մեր զինվորներուն վրա, անոնց փամփուշտները կը դիպչէին մեր զինվորներուն ոտքերուն: Իսկ երբ սկսեցան կրակել թրքահպատակ հայերը, իրենց հայրենիքի դավաճանները, այն ատեն փամփուշտները կը դիպչեին մեր զինվորներու սրտին:[1]

-Արտաքին նկատումները մեզ թույլ չեն տար, որ ազատութիւն տանք գաղթականներուն վերադառնալու մեր գրաված շրջանները: Տեղական մահմեդականները չեն ուզեր զանոնք տեսնել, ես չեմ կարող երաշխավորել անոնց կեանքը: Թող անցնի ժամանակ մը, հանգամանքները թերևս կը փոխվին: Եվ յետոյ, չէ՞ որ հայերը դեռ պատերազմ կը մղեն մեզի դեմ: Պաքուի մեջ անոնք կազմակերպած են բանակ մը և կը կռվին տակավին, ինչպես նաև Զանգեզուրի մեջ Անդրանիկը կը շարունակե պատերազմիլ մեր դեմ:[2]

-Մենք չենք կարող մտածել սահմաններու ընդարձակութեան մասին, որովհետև ես յաջողեցայ ընել այն, ինչ որ կենսական անհրաժեշտութիւն է Թուրքիոյ համար: Ես և իմ ընկերներս ստեղծեցինք Հայաստանը և ատով գոհացում տվինք հայերու ազգային ձգտումներուն և լուծեցինք Հայկական հարցը: Միևնույն ժամանակ մենք այդ ըրինք Թուրքիոյ սահմաններէն դուրս, ռուսական հողին վրա, և ունեցանք երկու յաջողութիւն.

ա) ստեղծեցինք Հայաստանը և

բ) անվթար պահեցինք Թուրքիո հողը:

Միայն այդ գնով է, որ համաձայնեցանք հաշտվիլ հայկական հանրապետութեան գոյութեան հետ: Արդ, ինչպե՞ս կարելի է այժմ պահանջել, որ նոր հողամասեր կցենք Հայաստանին: Չէ՞ որ այդ չենք կրնար ընել առանց դիպչելու հին ու նոր Թուրքիոյ հողերուն: Կարսը, Արդահանը և Պաթումը նոր միայն վերադարձան իրենց հին հայրենիքին գիրկը:[3]

1. **Ա. Խատիսյան** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 82:

2. Ն. տ., էջ 83:

3. Ն. տ., էջ 85, նաև **B. Lewis** Emergence of Modern Turkey, London, 1962, p. 339.

Հուսեյին Ջահիդ

Թուրքիոյ մեջ պատերազմէն յետոյ հազիվ թե 6 միլիոնէն ավելի թուրքեր կը մնան: ...Մեզ պետք են կենդանի ուժեր, և հայերը պետք չէ, որ ճամբան փակեն դեպի մեր եղբայրները... (Զանգեզուր- Ղարաբաղ և Ախալքալաք-Բորչալու ճանապարհներից) մեկն ու մեկը պետք է բաց մնա մեզ համար:[1]

Վեհիբ փաշայի ֆերմանը Բաքումի պայմանագիրը ստորագրելու առնչությամբ (4 հունիսի)

Երկաթուղային հաղորդակցութիւնը Գանձակի և Երևանի միջև վերականգնելու համար շրջանառութեան մեջ պիտի դրվին յատուկ գնացքներ, որոնց մեջ պիտի գտնվին թուրք սպաներ: Այդ սպաները իրենց ձեռքը պիտի ունենան Վեհիպ փաշայի ֆերմանը, զոր պիտի կարդան թուրքթաթարական բնակչութեան՝ ամեն տեղ յայտարարելով, որ այլևս հաշտութիւն է ու արգիլված է թշնամական վերաբերում ցույց տալ դեպի հայերը, կարգիլվի նաև այսուհետև սպանել հայերը:[2]

Բ. Շաքիրը և Նազիմը Ա. Խատիսյանին

Դուք ամեն տեղ մեր դեմ կը գործեք, կը զինեք ամբողջ Եվրոպան ու Ամերիկան մեր դեմ, անողոք կերպով կը ձգեք մեր վարկը: Եվ եթե մենք ձեզ ֆիզիկապես կոչնչացնենք, դուք ալ կը սպանեք մեզ բարոյապես՝ բան մը, որ շատ ավելի ծանր է մեզ համար:[3]

Էնվեր

-Դուք կըսեք կոտորած, բայց չէ՞ որ պատերազմի ժամանակ ալ մարդիկ կը սպանվին և շատ ավելի մեծ արիւնահեղութիւններ կը կատարվին, որոնց համար ժողովուրդները արձաններ ալ կը կանգնեցնեն իրենց զորավարներուն: Չէ՞ որ ըստ էութեան նույն է խնդիրը: Պատերազմի մեջ թնդանոթներով ու հրացաններով կը սպանեն, իսկ այստեղ սուրերով և սվիններով: Արդիւնքը նույնն է՝ մարդոց սպանութիւնը: Ինչո՞ւ փարիսեցիութիւն ընել: Թուրքիոյ մահացու վտանգ մը կը սպառնար հայերէն, որոնց սպանութիւնը հավասարազոր է թշնամիներու սպանութեան պատերազմի մեջ:[4]

1. Ն. տ.:
2. Ն. տ., էջ 89:
3. Ն. տ., էջ 90:
4. Ն. տ., էջ 91:

-Լավ պիտի ըլլար, եթե Հայաստանը իրեն համար թագավոր ընտրեր ավստրիական իշխան մը, Վրաստանը՝ գերմանական իշխան մը, իսկ Ադրբեջանն ալ թրքական իշխան մը: Այս երեք թագավորութիւններն ալ կարող էին շատ ամրանալ իրենց արքայական տուներու շնորհիվ:

Ռաուֆը Տրապիզոնի բանակցություններում (մարտ 1918 թ.)

200 տարուց ի վեր ցարիզմի դեմ մղված բոլոր պատերազմները մեր երկրների համար ինքնապաշտպանողական պատերազմներ էին, ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագիրները ավելի ու ավելի էին կապվում միմյանց այդ ընդհանուր փառավոր պատմութեան ընթացքին... կովկասեան և թուրքական ժողովուրդներն այժմ կազմված են միևնոյն կրոններից և միևնոյն ազգերից և ունեն գրեթե միևնոյն պատմութիւնը...

(Անդրկովկասեան) պատվիրակութիւնը բաղկացած է Սեյմի պատվիրակներից... յիշեալ պետութեան (Անդրկովկասի) կազմակերպութիւնը չի համապատասխանում միջազգային հանրային իրավունքին և... այդ պետութիւնը դեռ յայտարարութիւն չի արել իր անկախութեան մասին... Կովկասեան հանրապետութեան անկախութեան ճանաչումը հնարավոր կը լինի միայն մի առանձին կերպով Անդրկովկասի և Թուրքիայի միջև կնքվելիք դաշնագրի մեջ, իսկ նման դաշնագրի բանակցութիւնները կարող են սկսվել այն ժամանակ միայն, երբ Անդրկովկասի պատվիրակութիւնը հրաժարվի Բաթումի, Կարսի և Արդահանի սանջակների վրա ունեցած յավակնութիւնից: Ինչ վերաբերում է Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման և Թուրքահայաստանի ինքնավարութեան հարցին, այդ թուրքական ներքին խնդիր է և չի կարող քննութեան առնվել...[1]

Մ. Վեհիբ փաշայի հեռագիրը Կովկասում ռուսական բանակի հրամանատար Լեբեդինսկուն (25 փետրվարի 1918 թ.)

Ռուսաստանի փառապանծ հանրապետութիւնը, համաձայնվելով պարպել Բաթումիի, Կարսի և Արդահանի շրջանները, հենց նոր այդ մասին ստորագրեց հաշտութեան դաշինք: ...Ես այս պահուս ստացա իմ սպարապետից մի հրաման, որի հիման վրա խնդրում եմ ձեզ ամենակարճ ժամանակում դատարկել յիշեալ շրջանները:[2]

1. **Ս. Վրացեան** Հայաստանի Հանրապետութիւն, բեյրութ, 1958, էջ 81:
2. Ն. տ., էջ 83:

Մ. Վեհիբ փաշայի հեռագիրը

Այսօր ստացված տեղեկությունների հիման վրա, ձերդ գերազանցություն հեռանալուց յետոյ, Էրզրումում և քաղաքի շրջակայքում տեղի են ունեցել անհաշիվ գազանություններ հայերի կողմից, այդ պատճառով... հարկադրանքի տակ ենք, ըստ կարելվոյն, շուտ ազատելու սպառնալիքի ներքո գտնվող շրջանները: Այս առթիվ խնդրում եմ... որևէ ձևով յայտարարել այդ բռնավորներին, որ նրանց դիմադրությունը կարող է հանգեցնել խիստ ճնշումների և անսպասելի արդիւնքի:[1]

Ռեուֆ բեյի հեռագիրը անդրկովկասյան պատվիրակության նախագահ Չիխենկելիին (13 ապրիլի, 1918 թ.)

(Որպեսզի Անդրկովկասը կարողանա մասնակցել հաշտության բանակցություններին) անհրաժեշտ է ամենից առաջ, որ Անդրկովկասը յայտարարե իր անկախությունը:[2]

Ռասուլ Զադեի առաջարկը սեյմում (13 ապրիլի, 1918 թ.).

Հրավիրել թուրքական զորքերին բոլշևիկների դեմ պայքարելու համար, քանի որ Սուխումին ու Բաքուն տառապում են ինքզինքը խորհրդային իշխանության գաղափարների ջատագով համարվող ավազակների լծի տակ:[3]

Բաքումի բանակցություններում օսմանյան պատվիրակության 1918 թ. մայիսի 26-ի վերջնագիրը

Հարիւր հազարավոր թուրքեր ու մահմեդականներ Բագվում և շրջակայքում տառապում են անխիղճ հրոսակների, այսպես կոչված յեղափոխականների արիւնոտ լծից, և անուղղելի աղետը, որ սպառնում է այդ դժբախտներին, դառնում է ավելի ու ավելի անխուսափելի... ոչ մի կառավարութիւն չի կարող դիտել անտարբեր աչքերով, որ իր երկրին սահմանակից մի հողի վրա անպատիժ կերպով աճեն նման ոճրագործութիւններ, և կը գիտակցեք, անշուշտ, որ օսմանեան կայսերական կառավարութեան դրութիւնն առանձնապես փափուկ է Կովկասը ծվատող անիշ-

1. Ն. տ., էջ 85:
2. Ն. տ., էջ 293:
3. Ն. տ., էջ 294:

խանութեան հանդեպ, որովհետև այդ վերաբերում է նոյնպես և առավելաբար ապահովութեանը մի ազգաբնակչութեան, որ ցեղի ու կրոնի ամենասերտ ազդեցութիւնն ունի կայսրութեան բնակչութեան վրա: Միւս կողմից, ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները կայսերական կառավարութեանը դնում են Կովկասի վրայով, երկաթուղիներով, ըստ կարելվոյն շուտ, դեպի պատերազմի ուրիշ ռազմաբեմ զորքի ազատ փոխադրիութիւնը ապահովելու անհրաժեշտութեան առջև:[1]

Մեհմեդ Ալիի՝ Երևանում Թուրքիայի ներկայացուցիչ, գրությունը ՀՀ ռազմական նախարարին (24 նոյեմբերի 1918 թ.)

Օսմանեան կայսրութեան գլխավոր սպայակոյտի պետը հրամայում է ինձ հաղորդելու ձեզ, որ Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս մնացող և թուրք զորքերի կողմից գրավված հողամասերը պետք է (հայերից) դատարկվեն վեց շաբաթվա ընթացքում:[2]

Խան Թեկինսկու՝ Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչը Հայաստանում, հեռագիրը իր կառավարությանը (10 ապրիլի 1919 թ.)

Լուրերի համաձայն անգլիացիք Կարսը յանձնել են հայերին, պատրաստվում են յանձնել նաև Շարուր-Նախիջևանը... եթե դա ճիշտ է, կարծում եմ, անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աղվանիստանի, Մալայան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականութեանը, նոյնպես և Հաշտութեան վեհաժողովին ընդդեմ անգլիացիների ցանկութեան՝ մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկել կես միլիոն հայերին:[3]

Զիաթխանովի՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար, հեռագիրը Խան Թեկինսկուն (6 մայիսի)

Անյապաղ կապ հաստատեցեք Կարսի կառավարութեան հետ: Ցույց տվեք նրան ամեն տեսակի ազդակցութիւն: Իմացեք, թե ինչի կարիք ունի: Հեռագրեք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք:[4]

---

1. **Ս. Վրացեան** Հայաստանի Հանրապետութիւն, Բեյրութ, 1958, էջ 295-299:
2. Ն. տ.:
3. Ն.տ.:
4. Ն. տ.:

Բաքվի կառավարության մայիսի 18-ի հեռագիրը

Եթե տեղական բնակչությունը կարող է կանգնեցնել հայկական զորքերի յառաջխաղացումը, այդ ուրախությամբ կընդունվի Ադրբեջանի կողմից, մանավանդ որ Ղարաբաղի հայերը, հակառակ մեզ աջակցելու համար Ղարաբաղ եկած անգլիացիների ներկայութեան, կտրականապես ընդդիմանում են Ղարաբաղում Ադրբեջանի իշխանութեան հաստատմանը:[1]

Թեկինսկու հեռագրերը (10 մայիսի)

Յետաձգեցեք Հայաստանի երկաթուղիների համար նավք ուղարկելը, որովհետև Նախիջևանի շրջանում դեպքեր են սպասվում:

...Անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ ստեղծել Նախիջևանում: Գործը կազմակերպելու համար անյապաղ պետք է դրամ բաց թողնեք: Իմ ձեռք առած միջոցների շնորհիվ Շարուրը, Նախիջևանը և Օրդուբաղը արդեն միացել են մեկ ազգային խորհրդի մեջ, որը մշտական յարաբերութեան մեջ է ինձ հետ:[2]

11 հունիսի

Շարուր-Նախիջևանի շրջանների մոտ 6 000 կիսականոնավոր զորք՝ ձիավորով, թնդանոթով ու գնդացիրներով, ռազմունակութեամբ յետ չեն մնում հայերից... Պատերազմական գործողութիւնների ժամանակ զինված ուժերի թիվը կարող է հասնել 10 000-ի:

...Ոչ մի ֆունտ նավք ու մազութ բաց չթողնեք Հայաստանին: Մեր զորքերի երևալը սահմանների վրա խուճապ կը ձգե հայերի մեջ, կուժեղացնե դասալքութիւնը և կը բարձրացնե մահմեդականների ոգին... Եթե ուզում եք օգտվել ռոպեից, ձեռք առեք շտապ և վճռական միջոցներ:[3]

14 հուլիսի

Բոյիւք Վեզիի դրութիւնը լուրջ է... Մահմեդականներին կարող է ազատել Ադրբեջանի զինված միջամտութիւնը...[4]

1. Ն. տ.:
2. Ն. տ.:
3. Ն. տ.:
4. Ն. տ.:

1 օգոստոսի

Հայկական գնդերը փախչում են կամ ոչնչանում...

Մահմեդականները դեռ չեն ցանկանում գրավել Երևանը... պետք է անյապաղ պատերազմ յայտարարենք:[1]

3 օգոստոսի

Անհրաժեշտ է, որ Ադրբեջանը երկու շաբաթվա ընթացքում մաքրե Զանգեզուրի հաշիվը և զորքերը առաջ քաշե մինչև Ղամարլու:[2]

Հասկել-Ուսուպբեկով համաձայնագիրը՝ ստորագրված Բաքվում օգոստոսի 29-ին

Շարուր-Դարալագեազի և Նախիջևանի գավառներում պիտի հաստատվի չեզոք շրջան...

Հայաստանի կառավարութիւնը պիտի գործադրե իր ամբողջ ազդեցութիւնը հանգստացնելու համար հայ ազգաբնակչութեանը չեզոք շրջանում և Զանգեզուրում...

Հայաստանի և չեզոք շրջանի սահմանը պիտի լինի այն տեղը, որը կոչվում է Գայլի Դրունք:[3]

«Հարավ- արևմտյան Ադրբեջանի» ներկայացուցիչների հուշագիրը Հասկելին (9 սեպտեմբերի)

Սուրմալուի, Վեղի Բասարի, Միլիստանի, Շարուրի, Նախիջևանի և Օրդուբադի շրջաններն իրենց համարում են անբաժանելի մասն Ադրբեջանի:[4]

Ադրբեջանի կառավարության հայտարարությունը

1918 թ. յունվարից սկսած, նախքան թուրքերի գալը Երևանի նահանգ, հայերը քանդեցին ավելի քան 300 գիւղեր՝ կոտորելով այդ գիւղերի մահմեդականների մեծ մասին... Հայկական վարչութիւնը օգոստոսի 17-31-ը կարճ ժամանակամիջոցում կարողացել է ջարդել ու կոտորել էջ-

1. **Ս. Վրացեան** Հայաստանի Հանրապետութիւն, Բեյրութ, 1958, էջ 295-299:
2. Ն. տ.:
3. Ն. տ., էջ 305-306:
4. «Ադրբեջան», Բաքու, 1919 թ., թիվ 176:

միածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր Բայազետի գավառների մինչև 50 գիտի մահմեդականների:[1]

Ադրբեջանի կառավարության հայտարարությունը

(Ղարաբաղում Ադրբեջանի) ընդհանուր նահանգապետութիւն հաստատելու որոշումը ոչ մի դեպքում չի խախտում Հայաստանի հողային իրավունքները: Ընդհակառակը, Հայաստանի կառավարութեան բողոքը մենք համարում ենք խախտում մեր գերիշխանութեան և մեր ներքին գործերին միջամտելու փորձ:[2]

Ռասուլ Զադե

Ղարաբաղը, մեր հայրենիքի այդ սիրուն վայրը, ազատվեց մեր յամառ դրացիների ոտնձգութիւններից, որոնք ջլատում էին մեր տնտեսական կեանքը և, մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրութեան մատնել: Առանց տեղի տալու ավելորդ արիւնահեղութեան՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ադրբեջանի գերիշխանությունը:

Նախիջևանը, որ իր բնական պայմաններով իսկապես «Հախշը-Ջիհան» (աշխարհի զարդանկար) է և անբաժան մասը Ադրբեջանի. շնորհիվ իր հերոս և անձնվեր զավակների հայրենասիրութեան, օգտվեց ապստամբելու իրավունքից, միանալու համար հայրենիքին, որից բաժանվել էր խաբվելով: Նախիջևանը իր սահմանից դուրս շպրտեց բռնագրավող Հայաստանի բանակը:

Գալով Զանգեզուրին, որ ցավ է դարձել մեզ համար, և մեջտեղը կանգնած է՝ սպառնալով մեր նպատակներին, կարող ենք յոյս ունենալ, որ նա էլ մոտ ժամանակում կը դրվի անվնաս դրութեան մեջ, և որ Առտարա գետից և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կը բացվի անարգել մի ճամբա:[3]

Խալիլ բեյի՝ Օրդուբադի շրջանի զինվորական կառավարչի հայտարարությունը (8 օգոստոսի 1919 թ.)

Մեր սահմաններում գտնվող հայ գիտերը, եթե կցանկանան հպատակվել մեզ, պետք է յանձնեն զենքերը...

1. «Աշխատավոր», 27 սեպտեմբերի, 1919 թ.:
2. **Ս. Վրացեան** Հայաստանի Հանրապետութիւն, էջ 313:
3. «Ադրբեջան», Բաքու, 28 օգոստոսի, 1919 թ.:

Ադրբեջան-քեմալականների միջև 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում կնքված պայմանագիր

Ադրբեջանի կառավարութիւնը խոստանում է շարունակել նպաստել Խորհրդային Ռուսաստանին և Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանութեան կոմիտեի միջև մերձեցումն իրականացնելուն: Անհրաժեշտութեան դեպքում ինքն էլ է յարում այդ միութեանը:

...Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանութեան կոմիտեն վճռականորեն խոստանում է, որ այն դեպքում, երբ Հայաստանը յարձակում գործե Ադրբեջանի վրա, և Ադրբեջանի կառավարութիւնը վճռականորեն խոստանում է, որ եթե Թուրքիայի արևելյան շրջանները տրվեն և միացվեն Հայաստանին, այս երկու դեպքում էլ համաձայնութեան եկած կողմերը պաշտպանելու են միմյանց շահերը և գործելու են որպես միացյալ բանակ:[2]

Թուփչիբաշև՝ Ադրբեջանի նախագահ

Աստուածային շնորհով կրցած եմ հասնիլ իմ նպատակիս՝ տեսնել բոլոր մահմեդականներու խալիֆը և բոլոր թուրքերու փատիշահը: Ատեն մը առաջ դուք ընդունեցիք թուրքի փոքր պետութեան՝ Ադրպեյճանի պատուիրակութիւնը և զիջանեցաք ըսելու. «Ադրպեյճանցիները իմ նախասիրեալ զավակներս են»: Մենք՝ ադրպեյճանցիներս, կը յիշենք այդ պատիվը... և պիտի ապրինք իսլամներու խալիֆային և օսմանցի թուրքերու փատիշահին՝ մեր մեծ եղբոր շնորհիվ:[3]

«Իսլամական հանրագիտարան»

Երևանի հայերը և շրջակայքի հայութիւնը օտարամուտ են: Բնիկ տեղացին թուրքն է, որ տեղահանուած ու փոխանակուած է: Հետևաբար, Երևան մաս կը կազմէ Թուրքիոյ...[4]

---

1. **Ս. Վրացեան** Հայաստանի Հանրապետութիւն, էջ 335-336:
2. Ն. տ., էջ 447-448:
3. **Գ. Ահարոնեան,** Խոհեր հիսնամեակի ավարտին, 1915-1965, Բեյրութ, 1966, էջ 172-173
4. Ն. տ., էջ 177:

Ք. Կարաբեքիր

Մեր, Ադրբեջանի և բոլշևիկների միջև կնքված պայմանագրի հիման վրա, մեր մեծ թվով սպաներ, բժիշկներ և պաշտոնեաներ գնացել են Ադրբեջան: Բոլշևիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատերազմական գործողություններ սկսել հայկական սահմանների վրա՝ հայերի դեմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսիացիների դեմ: Դաղստանում կազմված կանաչ բանակը՝ Էնվերի, Նուրիի և Խալիլի ղեկավարությամբ, պետք է աշխատի ապրիլի սկզբներին մտնել Բագու: Ադրբեջանական զորքերը պետք է ցույց տան կեղծ-խաբուսիկ դիմադրություն, որպեսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակիցների հանդեպ: Միանալով կանաչ բանակին՝ ադրբեջանական զորքերը պետք է առիթ որոնեն ընդհարվելու Հայաստանի հետ և Անատոլիայում գտնվող թիւրք զորքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները և սկսեն ռազմական գործողությունները Հայոց Հանրապետության դեմ:[1]

Ռազմական խորհրդի 1920 թ. սեպտեմբերի 8-ի նիստը Էրզրումում

Ռազմական խորհուրդը դիմեց Կարաբեքիրին հետևյալ հարցով՝ ինքն ունի՞ բավական ուժ և հավատացա՞ծ է, որ քեմալական բանակը կատարեալ յաղթություն կունենա:

Ք. Կարաբեքիրի տրամադրության տակ գտնվում է 4 դիվիզիա, որից երկուսը՝ Ռեմզիի հրամանատարության ներքո: Դիվիզիաներից իւրաքանչիւրը բաղկացած է 8-9 հազար ասկեարից, որոնց կաջակցեն նաև քիւրդ և թիւրք հրոսախմբերը...

Այնուամենայնիվ Մ. Քեմալի համար դեռ մնում էր մի մութ կետ՝ Հայաստանի դեմ յարձակվելու դեպքում պետք է գիտնալ, թե ինչ դիրք կը բռնե Վրաստանը... Մ. Քեմալը ծածկագիր ռադիոյով դիմեց Բագու, որտեղ գտնվում էր թուրքական պատվիրակությունը... Բագուից Անգորա ստացվոց հետևյալ լակոնական պատասխանը. «Ճանապարհը բաց է»...

Ռեմզին անմիջապես իր 13 զորաբաժնի գլուխն անցավ և սեպտեմբերի 19-ին դիմեց դեպի սահման... (Կարաբեքիրը... ծածկագրեց Բաքու):

«Բանակը պատրաստ է գործողությունները սկսել»:

Սեպտեմբերի 23-ին դիմեցին յարձակման:[2]

1. Ն. տ.:
2. Ն. տ.:

Խալիլը Արամ Մանուկյանին Երևանում (1918 թ.)

-Արամ ջան, ասացի, որ մենք պետք է փախչենք... Բայց մի բան... ինձ անձնապես մտահոգում է... վախենում եմ, թե մեր փախուստի ժամանակ հայերը կռնակից մեզ սպանեն:

-Հայերը փախչող զինվորին կռնակից չեն սպանի,- պատասխանեց Ա. Մանուկյանը:

-Այնքա՜ն բան է պատահել, որ հայերը կարող են շփոթել լավը վատի հետ: Ես եղել եմ միշտ ձեր բարեկամը: Դու գիտես այդ,- ասաց Խալիլը,- բայց կարող են ինձ էլ ուրիշների պես նկատել և սպանել... Պիտի խնդրեի քեզանից, որ 2-3 հայ տայիր, որ ինձ առանձնապես առաջնորդեին մինչև Էրզրում և ասեին. «Սա մեր բարեկամն է, պետք չէ նրան ձեռք տալ»:[1]

Ռեուֆ բեյը հայերին

Դուք միշտ հակված եք դեպի ռուսները և դրա համար պիտի ջնջենք հայերին: Եթե դուք՝ հայերդ, շարունակեք Ռուսաստանի կամ Անգլիայի օգնությանը դիմել, մենք չենք երաշխավորի նաև մնացած հայերի անվտանգությունը:[2]

Ռեուֆ բեյը հեգնանքով Հ. Քաջազնունուն

Մենք ինչպե՜ս չվախենանք ձեզնից՝ հայերից: Թուրքիայում այլևս ոչ մի հայ չկա, իսկ դուք դեռ պլաններ եք քաշում Թուրքահայաստանի մասին:[3]

Վեհիբ փաշա (1918 թ. մայիսի 27ին)

Հայ զորքը հիանալի կռվեց... ըստ Շեքի փաշայի նա նման կռիվ չի տեսել տաճկական ոչ մի զորաճակատում, չնայած մեր ուժերին (10 հազար կանոնավոր զորք, չհաշված կամավոր հրոսակներին, իսկ հայերը՝ 7 000) ու տեխնիկական առավելություններին, կռիվը չորս օր տևեց: Այդ կռիվը զանազան խորհրդածությունների նյութ է դառնում, որ Կովկասում դուք (հայերդ) բռնելու եք Բուլղարիայի տեղը:[4]

---

1. Արամ Ժողովածու, Երևան, 1991, էջ 505:

2. Протоколы заседаний Бакинского национального комитета. ՀՀ ՔԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 315:

3. Мелик-Каракозов Г. Воспоминания, 1918 г., стр. 25.

4. ՀՀ ՔԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 241:

Հ. Բայուր

Ենվերը պատրաստվում էր իրեն հռչակել Աղրբեջանի սուլթան:[1]

Մուհամմեդ 6-րդ

Եթե ինքն այն ժամանակ սուլթան լիներ, ոչ մի այդպիսի բան (հայերի կոտորածներ) տեղի չէր ունենա... նման հանցագործությունները և միևնույն հայրենիքի զավակների փոխադարձ ոչնչացումը ցնցեցին ինձ... (ինքը) կարգադրել էր հետաքննություն անցկացնել և խստորեն պատժել հրահրողներին... Սակայն տարբեր փաստեր խանգարեցին իմ հրամանների լրիվ կատարմանը: Այժմ գործը մանրազնին ուսումնասիրվում է, արդարադատությունը շուտով կասի իր խոսքը, և մենք այլևս երբեք չենք տեսնի այդպիսի սարսափելի իրադարձությունների կրկնություն...[2]

Ջևդեթ Քերիմի «Դասախոսություններ անկախության համար մղված պայքարի մասին» գրքից

Գլխավոր ուշադրությունը կենտրոնացած էր Արևելյան ռազմաճակատի վրա, քանի որ այստեղ հաջողությունը նշանակում էր ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը, որ թարախապալարի նման շարունակում էր մնալ մեր երկրի մարմնի վրա:[3]

Խաս-Մամեդով

Թուրքական զորքերի առաջխաղացումը և նրանց կողմից վիճելի մարզերի գրավումը պետք է դիտել ոչ թե որպես դրանց նվաճում, այլ կարգ ու կանոնի վերականգնում...[4]

Ռասուլ Զադե

Բոլորը հույս էին դրել Թուրքիայի վրա: Միակ ուժը, որն ի վիճակի էր փրկելու ազգը այդ ծանր դրությունից՝ Թուրքիան է: Այդ եղբայրական ազգը կգա և մեզ կփրկի թշնամու ձեռքից:[5]

---

1. **H. Bayur XX y.y. Türklügün Tarih ve akun Siyasi, Ankara, 1974 Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, էջ 140:

2. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, էջ 160:

3. Мустафа Кемаль Путь новой Турции, т. 3, Москва, 1934, стр. 314

4. ՀՀ ԿԿՊԱ, ֆ. 200, գ. 7, թ. 140:

5. ՀՀ ՔԿՊԱ, ֆ. 11, գ. 29, թ. 591:

«Վաքրը» բերբ

Մեր գլխավոր նպատակը Անդրկովկասի սահմանագծերի պահպանումն է, Ռուսաստանի և մեր միջև այնպիսի ամուր պատնեշի ստեղծումը, որը կարողանա կատարել բուֆերի դեր՝ ի դեմս նորաստեղծ անդրկովկասյան անկախ պետությունների:[1]

Վեհիբ փաշա

Մենք հայերին մատների վրա կխաղացնենք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ զինվորներ են հարկավոր ճակատի համար, իսկ հետո քրդերի ու թաթարների օգնությամբ նրանց կստիպենք խեղդվել այդ տոպրակում, որում նրանք նստած են:[2]

Ք. Կարաբեքիր

Որպեսզի երկրում ամուր խաղաղություն ապահովենք, առաջին իսկ պատեհ առիթով որպես պատանդ պետք է գրավենք նույնիսկ ամբողջ Հայաստանը... ինչ էլ որ լինի, պետք է հայերի ու հույների հետ հաշիվները մաքրենք... իմ որոշումը հետևյալն է... Եթե որևէ կողմից մեր շրջանի վրա հարձակում գործվի, ապա պատասխանատվությունը բարդել Հայաստանի վրա:[3]

Կարաբեքիրի հեռագիրը Անկարա (1918 թ. ապրիլի սկզբներ)

Մոտ օրերս ես հաղորդելու եմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից:[4]

Բեռլինում Թուրքիայի դեսպանի հայտարարությունը

(Հետագայում) հնարավոր է Կովկասի ժողովուրդներին միավորել մի բուֆեր պետության մեջ և... Կասպից ծովից արևելք ընկած տարածքներում ևս ստեղծել թուրքական անկախ պետություն:[5]

---

1. "Грузинская республика", 18-ое ноября, 1919 г.

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 79:

3. **Karabekir Pasa** Birinci Kafkas Kclordusonum 334 senesindeki harekati ve meshundaki hakkinda general Harbord riyasetindeki Amerika heyetine takdim edilen rapor sureti, Erzurum, 1919, s. 22

4. **Ե. Սարգսյան** Դավաղիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, 1995, էջ 138:

5. Документы Германии, док. 11, стр. 40-41

Ռասուլ Զադե

Պիտի գա օր մը, երբ այս առուները միանալով պիտի կազմեն ուժեղ դաշնակցութեան մը գետը: Եվ մեր աչքին առջև կը կենդանանա 1871-ի գերմանական պետութիւններու միութիւնը: Թուրք աշխարհը այդ երջանիկ իդեալին հասնելու համար պետք է անցնի հանգրվաններէն մեկէն, որ է կովկասեան ազգերու միանալը ռուսական տիրապետութեան դեմ... Միութիւն Թուրքիայի հետ ապակեղրոնական կապով:[1]

Ալի Հայդար Էմին

Մեր նշանաբանն է՝ լեզուի միութիւն, երկրի միութիւն: Երբ թուրքիացի թուրքճիները «միանանք» կըսեն, չեն ուզեր իրենց երկրին սահմանակից թուրք պետութիւններ ստեղծել անոնց հետ միայն իբրև դաշնակից ապրելու համար:[2]

Զիա Գեոքալպ

Թուրքիոյ մեջ Աստուծո սուրը «խալք»ին,
Աստուծո գրիչը թուրքճիներուն ձեռքն է:[3]

Ք. Կարաբեքիր

Արիականներու հոս գալէն առաջ, մշակոյթ մը հիմնել կարողացող օրտոհացիներու իսկապես թուրանցի ըլլալն ու 11-րդ դարուն թուրքերուն այս կողմերը հաստատվիլ սկսած ատեն, հայերուն իրավական դրութեան վաղուց ի վեր վերջ գտած ըլլալը կը փաստվին պատմական տվեալներով: Երկար պատմութեան մը ընթացքում արյունի, հոգիի և բարոյականի կապերով այս վայրերը անքակտելի կերպով զոդված են մեր ժողովրդին: Այս վայրերուն մեջ մեր ժողովրդին տիրապետութեան միայն զինվորական չըլլալով՝ անոր մշակոյթային հիմ ունենալն ալ կը փաստվի մինչև այսօր կանգուն կեցող հուշարձաններով: Այս առնչութեամբ՝ քանի մը աղոթատեղիներէ զատ հայերու պատկանող ոչ գիտական և ոչ ալ մշակոյթային հաստատութիւններ կան:[4]

1. **Շահան Նաթալի** Թուրքերը և մենք, էջ 167-168:
2. Ն. տ.:
3. «Յառաջ», 2 ապրիլի, 1927 թ.:
4. **K. Karabekir** Istiklal harbimiz, Istanbul, 1969, s. 44.

Կարաբեքիրը 1919 թ. ապրիլի 19-ին այցելում է հիվանդ Մ. Քեմալին ու նրան ասում

Ես վաղը Էրզրում կը մեկնիմ: ...Ազգին փրկութեան բանալին արևելքն է: ... Պարզ է, ծրագիրս-կազմութեունը ազգային կառավարութեան մը, և արևելյան նահանգները գրավելու պատրաստվող Հայաստանը մեզի համար խաղաղութեան լավ գրավական մը ըլլալուն համար՝ ձեռք անցնել զայն... իմ ուխտս պայքարի է մինչև ու ամայի լեռան գագաթը դառնա իմ գերեզմանս:

Քեմալը պատասխանեց. «Լավանամ՝ ձեզի օժանդակել կաշխատիմ...»:

Ժամանակակից թուրքեր

-Անցյալներում Մարդինում սպանված երեխաների դիակներ տեսանք: Մեղք են. խղճի ու պատվի ձեր անձնավորությունը, որի երակներում թուրքի արյուն է հոսում, չի կարող ընդունել այս արյունահեղությունը:[1]

- Թ. Էվրեն՝ Թուրքիայի նախկին նախագահ

Հայերը առաջին համաշխարհայինի տարիներին դավաճանեցին և թուրքերին թիկունքից հարվածեցին՝ միանալով ռուսներին: Դրա հետևանքը եղավ որոշ հայերի հարկադրական տեղափոխությունն ուրիշ վայրեր: ...Տեղահանվող հայերի մեջ զոհեր եղան: Ահա այս զոհերն են, որ ներկայացնում են իբրև ցեղասպանություն... իսկական կոտորած կատարել են հայերը, որոնց զոհ գնացած անմեղ մարդկանցով գերեզմանները հայտնաբերվել են Էրզրումի շրջակայքում:[2]

- Թուրքիայի արտաքին գործերի նախարարություն

Տեղահանությունը ցեղասպանության հետ նույնացնել, կնշանակի պատմության առաջ մեծ հանցանք գործել:[3]

-Օսմանյան արխիվների բացելն առանձնակի նշանակություն չունի, քանի որ խնդրո առարկայի (հայերի կոտորածների) մասին փաստաթղ-

1. TACC, "Атлас", 30 июня, 1987 г.

2. Ն. տ.:

3. Թուրքական հեռուստատեսություն, 19 օգոստոսի 1987 թ.:

թերը 1918 թ. իթթիհադականների Նուրի Օսմանիե ակումբից փախցվել և հրկիզվել են:[1]

- «Թերջուման»

Օսմանյան արխիվների փաստաթղթերը դասավորելու գործը հանձնարարված է ոչ թե մասնագետներին, այլ նախկին դեսպաններին ու պաշտոնաթող բարձրաստիճան սպաներին: Վավերագրերը նրանց հանձնվում են այդ նյութերի հետ վարվելու սեփական քմահաճույքով:[2]

- Մ. Յրմազ՝ Թուրքիայի նախկին վարչապետ

Ոչ մի կառավարություն չի կարող փոխել հայերի պնդումների (կոտորածների իրողություն) նկատմամբ քաղաքականությունը, քանի որ հասարակությունը դրան հիվանդագին է վերաբերվում:[3]

1926 թ. Աբաթուրքի դեմ կազմակերպված մահափորձին նվիրված մի թուրքի հեղինակած հոդվածաշարից

Ողբերգությունը կատարեալ ընելու համար, յիշենք նաև ընդհանուր պատերազմի տարիներու զանգուածային տեղահանութիւններն ու հալածանքները, ինչպես նաեւ ժողովուրդի մը մտավորական ընտրանիի ձերբակալումներու վախճանը այն եղերական պայմաններու տակ, անմեղ եւ անդատապարտ մարդոց վերապահուած այնքան կսկծալի վախճանը:

Շարժանկարի ժապավենի մը պես կը տողանցեն պատմութեան աչքերուն առջեւ այս ցավալի դրվագները, որով նախապես տրված ու ծրագրված հրահանգի մը համաձայն, 11-24 ապրիլ 1915-ին եւ այլ թվականներու մեջ, հասարակ ոճրագործներու նման կը ձերբակալեին հայ մտավորականութեան պատկառելի ներկայացուցիչները... առանց հաշվելու գավառի մտավարականութիւնը եւ յառաջադեմ ժողովուրդ, որոնք ծաղկեցուցել էին իրենց բնակած տեղերը իրենց պարկեշտութեամբ, ստեղծագործ ոգով, աշխատասիրութեամբ...

Այաշի, Չանղըրի բանտերը կը յորդեին այսպիսի ձերբակալեալներով, որոնցմէ շատեր անդարձ կը բաժանվեին եւ սեւ շղարշ մը կիջներ այս ողբերգութեան վրայ:[4]

1. «Միլլիեթ», 28 հոկտեմբերի 1987 թ.:
2. «Հորիզոն», 23 նոյեմբերի 1987 թ.:
3. TACC, "Атлас", 23 января, 1989.
4. «Ալիք», 23 ապրիլի 1989 թ.:

Համդուլլահ Սուբհիի ճառը Անկարայում «Թուրք օջախների» կենտրոնական պալատի հիմնադրման ժամանակ (21 մարտի 1927 թ.)

Թուրք օճաղրն հրապարակ եկավ իբրև հակազդեցութիւն միւս տարրերու մասնավոր վիճակին...

Թուրք օճաղրն օսմանեան հայրենիքին վրա երևցավ իբրև սեղմուած բոունցք մը, ու թրքական դատը թուրք օճաղրին միջոցով միւս դատերուն մեջ մտավ և դիրք բռնեց...

...Կեցած կետէս կը տեսնեմ առանց պահանջի, պարզ կտուր մը, այն, որուն տակ հավաքուեցավ Թուրքիոյ ազգային Մեծ ժողովը... Այս կտուրին վերև նոր դրոշ մը ծածանեցավ: Այդ դրոշը Ասիա առաջին անգամ կը տեսներ, դրոշ մը, որ ազգայնութեան գաղափարը կը խորհրդանշեր: Տասնվեց տարի առաջ գրականութեան, գիտութեան և գաղափարի գետնին վրա ծնված ազգասիրութիւնը այդ դրոշակով քաղաքական ասպարեզ մտավ...

Թուրք ազգայնականութիւնը պատմութեան արձանագրած ամենէն զորավոր գաղափարական պայքարներէն մեկն է: Այս հոսանքը, ամեն արգելք խորտակելով, ամեն դժվարութիւն գլելով, արիւնոտ ճամբու մը վրայէն քալելով, առաջ անցավ: Ու յուզուած սրտով կը տեսնենք, թե անիկա այսօր թուրք վեհապետութեան մը ձևը առած է ու հայրենի հողերուն վրա թրքական պետութիւն մը դարձած է...

Այսօրուան սերունդին վրա ալ պարտականութիւն կը ծանրանա թուրք լեզուէն դուրս եղող բարբառներու առաջ բերած տարբերութիւնները մեջտեղէն վերցնելով, քաղաքական միութեան վրա բարոյական միութիւն հիմնելու:[1]

Իսմեթ Ինենյուի ճառը

Ներկայիս կը բոլորենք ազգայնականութեան շրջան մը: Ազգութեան գաղափարը միայն անկեղծ ազգասերներու միտքին մեջ գոյութիւն ունեցող գաղափար մը չէ, այլ ծրագիր մը, որ շարունակ կիրագործուի և որ կը նմանի արեան շրջանի մը, որ կեանքին բոլոր մայր երակները պատած է:[2]

1. «Յառաջ», 2 ապրիլի 1927 թ.:
2. Ն.տ.:

Ալի Էմիր

Ուրեմն վերին Ատրպեճանը նախ իր անկախութիւնը պիտի ապահովէ եւ յետոյ Թուրքիոյ հետ պիտի դաշնակցի:

Ատրպեճանցիները ոչ միայն որեւէ փափակ չունին ապրելու իբրև խորթ եղբայր տարացեղ և տարակրոն վրացիներուն և հայերուն հետ, ոչ միայն անոնց ջերմ տենչանքն է օր առաջ միանալ իրենց ցեղակից և կրոնակից թուրքերուն, այլև զուտ գործնական տեսակետէ, անհրաժեշտ կը նկատեն փան-թուրքական ծրագրերուն յաջողութիւնը: Միայն Միջերկրականէն Արալ և Բալխաշ երկարող խիտ-թուրքական ուժեղ դաշնակցութիւն մը կրնայ ըլլալ բավական զորավոր պատուար ռուսներուն դեպի հարավ հոսումին դեմ և երաշխավորել Ատրպեճանի գոյութիւնն ու ազատութիւնը:

Ատրպեճանցիներուն ծրագիրն է նախ իրենց միացնել պարսկական Ատրպատականը, յետոյ Կովկասը վերածել Մեծագոյն Ատրպեճանի մը:[1]

Իսմեթ Ինենյուի հայտարարությունը Լոզանում

Քրդերը թուրքեր են:[2]

«Վառոիկ» թերթը (Էրզրում) «Թուրքիզմ և Քուրդիզմ» առաջնագրում գրեց (6 հոկտեմբերի, 1923 թ.)

Յուրաքանչյուր ոք, ով բնակվում է Թուրքիայի սահմաններում, անկախ իր հավատից ու համոզմունքներից, համարվում է թուրք:

Ք. Աբաթուրք (1937 թ., նոյեմբերի 16-ին)

Երկրի արևելքի բնակչությունն ամբողջությամբ կազմված է թուրքերից:[3]

Աբբուլպատ՝ Թուրքիայի վարչապետ (1989 թ.)

Մենք մեր սահմանադրությունն ընդունել ենք միայն մեկ ազգի գոյությամբ: Թուրքիայում մեկ ազգ կա: Դա այն մարդկանց ամբողջությունն է, որ կոչվում է թուրք ազգ:[4]

1. Զարեվանդ Միացեալ անկախ Թուրանիա, էջ 166:
2. Ն. տ.:
3. I. Besikci Dogu Anadolunun Düzeni, II Baski, Istabul, 1970, s. 301.
4. Թուրքական հեռուստատեսություն, 23 դեկտեմբերի 1989 թ.:

Քաղվածք քաղաքական կուսակցությունների մասին 1983 թ. ընդունված օրենքից

Քաղաքական կուսակցությունները չեն կարող պնդել, որ Թուրքիայի Հանրապետությունում կան փոքրամասնություններ: ...Քաղաքական կուսակցությունները չեն կարող հետապնդել այնպիսի նպատակ, որը սպառնում է ազգի ամբողջականությանը, այսինքն՝ ձգտել Թուրքական Հանրապետությունում առանձնացնել փոքրամասնությանը՝ պահպանելով ու զարգացնելով որևէ լեզու կամ մշակույթ, բացի թուրք լեզվից և թուրք մշակույթից...[1]

Մ. Քեմալի 1919 թ. հուլիսի 13-ի նամակը ռազմական նախարար Ֆերիդ փաշային

Իմ մեջ ոչ բարոյական, ոչ ֆիզիկական ուժ չեմ գտնում ընդունելու Ձերդ Մեծության առաջարկությունը այստեղից մեկնելու վերաբերյալ, քանի որ ներկա պահին չեմ կարող լքել արևելյան վիլայեթների բնակչությանը, որը լսելով, թե նրանք (հայերին) խոստացել են Հայաստան, հուզված ու անհանգիստ վիճակի մեջ է: ...Էրզրումի համաժողովում (1919 թ. հուլիս) որոշվեց սահմանների հարցը: Համաշխարհային պատերազմի ավարտից հետո մեր երկրի կարևոր շատ մասեր բռնագրավվեցին թշնամիների կողմից: Ելնելով իր նյութական իրական հնարավորություններից՝ մեր ազգը պիտի նշեր այնպիսի սահմաններ, որոնք կարող էր պաշտպանել սեփական ուժերով: Համաժողովը որոշեց այդ սահմանները: Որպեսզի հեշտ լինի նրանց պաշտպանելը, նա գտավ՝ ազգային սահմանները նրանք են, որոնք որոշվել են 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարով: ...Արևելյան սահմանները ներառելու էին երեք սանջակները (Կարս, Արդահան և Բաթումի)...

Սահմանները որոշելիս մենք ղեկավարվել ենք ոչ միայն ռազմական նկատառումներով: Դա ազգային սահման է: Այն անցկացվել է որպես հենց ազգային սահման: Չպետք է կարծել, որ մեր ազգային նոր սահմաններում բնակվում է մահմեդական ժողովուրդներից միայն մեկը: Այստեղ բնակվում են և՛ թուրքեր, և՛ չերքեզներ, և՛ ուրիշ մահմեդականներ: Սակայն մեր նոր սահմանները ազգային են համարվում, քանի որ նրանում համատեղ բնակվում են եղբայր ազգեր, որոնք բոլորը տոգորված են համերաշխության ոգով...

1. Загоров Истина, истина, истина, София, 1987, стр. 149.

...Մայրաքաղաքի և Անատոլիայի միջև խզման պատճառը ոչ մեր կոմիտեն էր, ոչ ազգը, որին մենք ներկայացնում ենք: Ընդհակառակը, այդ խզման պատճառը նախկին կառավարության ապօրինի գործունեությունն էր: Այդ նա համաձայնվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումների հետ՝ ընդարձակ, ինքնուրույն Հայաստան ստեղծելու մասին, որում ընդգրկվելու էին նաև մեր արևելյան նահանգները և օսմանական համայնքից վերցնելով ևս 2-3 վիլայեթներ, որպեսզի ազգային սահման համարվի Տավրոսի լեռնաշղթան:

...Հանրահայտ է, որ ինչպես հույներն ու հայերը, այնպես էլ Անտանտի տերությունները Անգլիայի գլխավորությամբ և Ֆերիդ փաշայի պաշտոնաթող կառավարությունը, որն այդ տերությունների համար զենք էր, ընտրել էին մի մեթոդ՝ իթթիհադիզմի մեջ մեղադրել օրինավոր ազգային շարժման բոլոր մասնակիցներին... Իրականում ոչ մեր գործունեությունը, ոչ մեր ազգային կազմակերպությունը ընդհանուր ոչինչ չունեին իթթիհադիզմի հետ:

...Այսպես, Սրվազի համաժողովի առաջին իսկ նիստում, մինչև մտքերի փոխանակությանը անցնելը, բոլոր պատվիրակները հերթով անհատապես երդում տվեցին ու երդվեցին, որ չեն ձգտի Միություն և առաջադիմություն կուսակցության վերականգնմանը... Բացի դա, նկատի ունենալով այդ հարցի կարևորությունը, մենք բոլոր հարմար առիթներով, հատկապես արտասահմանցիների հետ զրույցների ժամանակ, կատարում ենք անհրաժեշտ հայտարարություններ ու բացատրություններ ենք տալիս...

...Սակայն մենք սկզբունքորեն սխալ ենք համարում Միություն և առաջադիմություն կուսակցության հանդեպ դրսևորել միայն թշնամություն, որը քաղաքական նպատակներով բորբոքվում է ոչ մահմեդական տարրերի ու Անտանտի տերությունների կողմից: Մենք, ինչպես և ամբողջ ազգը, գտնում ենք, որ գլխավոր մեղավորը ոչ թե երիտթուրքերն են, այլ միայն նրանց փոքր մասը, մարդկանց այն ոչ մեծ խումբը, որոնք իրենց վատ կառավարմամբ ու չարաշահումներով երկիրը կանգնեցրին կործանման եզրին: Մեր ու ժողովրդի համար հենց այս մարդիկ են հանդիսանում իսկական հանցագործները:

...Հասկանալի է, մեծապես ցանկալի կլիներ, եթե մեր երկիրը պատերազմին չմասնակցեր, որը բերեց անլուր դժբախտություններ և ունեցավ ծանրագույն հետևանքներ, սակայն պատերազմին չմասնակցելը գործ-

նականում անհնար էր, քանի որ դա կնշանակեր վարել զինված չեզոքության քաղաքականություն, այսինքն՝ նեղուցների փակում: Մինչդեռ մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը, Ստամբուլի ռազմավարական նշանակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանը հանդես եկավ Անտանտի տերությունների կողմում՝ այս ամենը թույլ չտվեցին մնալ սպասողական վիճակում: (Զինված չեզոքության համար) մենք չունեինք անհրաժեշտ միջոցներ՝ փող, զենք, արդյունաբերություն: Անտանտի տերությունները, մասնավորապես Անգլիան, մեզ ոչ միայն փող չտվեցին, այլև զավթելով մեր ռազմանավերը՝ մեր ժողովրդից պոկեցին 7 միլիոն լիր, որը հավաքվել էր նավատորմի շինարարության համար: Անտանտի տերությունների հայտարարությունը, որը տրվեց պատերազմ հայտարարելու պահին, պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց չորս ամիս առաջ, թե նրանք որոշել են ամբողջությամբ Օսմանյան կայսրության հաշվին ստեղծել Հայկական Հանրապետություն, և հատկապես նրանց խոստումը (համաձայն բոլշևիկների կողմից հրապարակված գաղտնի արխիվների) ցարական Ռուսաստանին տալու Ստամբուլը, հանդիսանում են ակնհայտ ապացույց այն բանի, որ Անտանտի դեմ պատերազմին մեր մասնակցությունն անխուսափելի էր:

...Անգլիական ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության անունից մեր կառավարությանը (Ալի Ռիզա փաշայի) բողոք ներկայացրեց: Նա պահանջում էր. առաջին, որ մենք դադարեցնենք ռազմական գործողությունները դաշնակից բանակների, այդ թվում՝ հույների դեմ, երկրորդ, որ մենք վերջ դնենք Թուրքիայում հայերի տեղի ունեցող կոտորածին: Եթե այս երկու պայմանները կատարվեին, նա խոստանում էր մեզ թողնել Ստամբուլը...

...Որ մեր երկրում վերջ տրվեր հայերի կոտորածին, հիմքից զուրկ էր: Մեր երկրի տարածքը բոլորին հայտնի է: Ո՞վ կասի, որտե՞ղ են տեղի ունեցել կամ տեղի ունենում հայերի կոտորածներ: Ես չեմ ուզում խոսել համաշխարհային պատերազմի ցավալի իրադարձությունների մասին...

...Անգլիացիները, մի կողմից, ձգտում էին հայկական կոտորածների մասին նոր զրպարտիչ հերյուրանքով անկայունացնել մեր միջազգային դրությունը, իսկ մյուս կողմից, կառավարությանը և պատգամավորների պալատին իշխանազուրկ անելով, ցանկանում էին մեր երկրում առաջ բերել քաղաքական լուրջ ճգնաժամ, որպեսզի Ստամբուլը զավթելու նրանց մտադրության համար պատրվակ ստեղծվի:

...Հայ և հույն խաղաղ բնակչության նկատմամբ մեր սկզբունքային վերաբերմունքը միշտ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումով՝ եթե Անատոլիայում բնակվող հայերն ու հույները չընդդիմանան մեր միջոցառումներին ու ազգային ձգտումներին, նրանք կունենան երջանիկ ու ապահով կյանք ու որևէ հետապնդման չեն ենթարկվի: Եվ չնայած Կիլիկիայում և մեր արևելյան սահմաններից այն կողմ հայկական կանոնավոր և ոչ կանոնավոր զորքերը հարձակումներ են գործում մեր ցեղակիցների և կրոնակիցների վրա ու նրանց նկատմամբ հանցագործություններ թույլ տալիս, քաղաքակրթության կողմից մեր վրա դրված առանձնակի կարևոր նշանակություն ունեցող պարտքի մղումով, Անատոլիայում բնակվող հայ խաղաղ բնակչությանը զերծ պահեցինք բոլոր տեսակի հետապնդումներից: Այն օրերին, երբ արտաքին աշխարհի հետ Անատոլիայի կապը խանգարվել էր, մենք հայրենիքի բարձրագույն շահերի պահպանմանն ուղղված ընդհանուր միջոցառումների հետ միասին, նախատեսել էինք նաև միջոցառումներ հայ ազգաբնակչությանը պաշտպանելու համար և իշխանության օրգաններին համապատասխան հանձնարարականներ էինք ուղարկել:[1]

Արևելյան ռազմաճակատում զորքերի վիճակի մասին պառլամենտի հարցապնդման պատասխանը (1920 թ. օգոստոսի 14-ին)

Մայիսի 30-ին և հունիսի 4-ին Արևելյան ռազմաճակատի հրամանատարը կոմիսարների խորհուրդ մտցրեց երեք առաջարկ՝ առաջին, ապահովել Էրզրումում գտնվող մեր պատվիրակության շտապ մեկնումը Մոսկվա՝ Կարս-Բաքու գնացքով, երկրորդ, միջոցառումներ ձեռնարկել դադարեցնելու Հայաստանի մահմեդական բնակչության կոտորածը և երրորդ, քանի որ հայկական բանակը հարմար պահին կփորձի գրավել Էրզրումը, մեր զորամասերը պետք է գրավեն Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով մեզ անցած երեք սանջակները, ինչպես նաև Սարիղամիշի և Սողանլուի լեռնաշղթան՝ դրա անցումներով, որպեսզի հայկական բանակի դեմ ունենանք շահեկան դիրքեր: Այդ երեք առաջարկությունն էլ, մանավանդ երրորդը, դարձավ կոմիսարների խորհրդի քննարկման առարկա և հավանության արժանացավ: Ձեր բարձր ժողովը արդեն լիազորություն տվել է կոմիսարների խորհրդին հարմար պահին այդ երեք սանջակները գրավելու մասին: Դրա հիման վրա գլխավոր

1. Кемаль , Ататюрк Избранные речи и вступление, Москва, 1960, стр.

հրամանատարի առաջարկությունն ընդունվեց և հունիսի 13-ին մենք հրամայեցինք Արևելյան բանակի հրամանատարությանը սկսել ռազմական գործողությունների նախապատրաստությունը: 10 օր անց, հունիսի 16-ին, երբ բանակը զբաղված էր այդ նախապատրաստություններով, Մոսկվայից վերադարձավ մեր պատվիրակության անդամներից մեկը: Նա իր հետ բերեց ձեր բոլորիդ ծանոթ Չիչերինի՝ Խորհրդային Հանրապետության արտաքին գործերի նախարարի նամակը, ինչպես նաև խորհրդային ուրիշ գործիչների մասնավոր և պաշտոնական այլ նամակներ ու երկտողեր...

(Չիչերինի նամակում) ասվում էր, որ Հայաստանի, Իրանի և Թուրքիայի միջև սահմանների հարցը կարող է լուծվել դիվանագիտական բանակցությունների միջոցով՝ Ռուսական խորհրդային կառավարության միջնորդությամբ: Մյուս երկտողերում և նամակներում այդ հարցը ավելի մանրամասն էր լուսաբանված:

Այս բոլորից, համենայնդեպս, ակնհայտ էր դառնում, որ խորհրդային կառավարությունը հայերի վրա մեր հետագա հարձակումը համարում է աննպատակահարմար ու անցանկալի: Քանի որ մեր կողմից նշված երեք սանջակների ցանկացած կետի գրավումը չպետք է դիտվեր որպես հարձակում Հայաստանի վրա, մենք խոչընդոտ չտեսանք, որպեսզի սկսենք ռազմական գործողությունները, որոնց կապակցությամբ արդեն համապատասխան որոշում ընդունված էր: Դրա համար էլ մենք հրաման տվեցինք Արևելյան ճակատի հրամանատարին ռազմական գործողությունները արագորեն շարունակել: Սակայն մի քանի օր անց մի պաշտոնական հաղորդագրությունից իմացանք, որ Կարսից գնացքով գալիս է ռուսական դեսպանը: Այդ կապակցությամբ մենք մեր Արևելյան բանակին հրամայեցինք կանգնեցնել ռազմական գործողությունները, այն հաշվով, որ դրանք վերսկսվեն ռուսական դեսպանության և արդեն Էրզրումում գտնվող մեր պատվիրակության միջև կապերի հաստատումից հետո: Դա հունիսի 20-ն էր: Այդ է պատճառը, որ մենք կանգնեցրինք մեր Արևելյան բանակի հարձակողական գործողությունները:

-Ճառ արտասանած Ժողովրդա-հանրապետական կուսակցության 3-րդ համագումարում (1927 թ. հոկտեմբերին)

...Հայկական ջարդերի վերաբերյալ պնդումներն անկասկած չէին արտացոլում իրերի իսկական վիճակը...

...Հենց հայերն էին կերտողներն այն վայրենության, որն իր նախադեպը չունի պատմության մեջ:[1]

-Հայերի նոր կոտորածներ պետք չէ կազմակերպել:[2]

-Նամակ սուլթանին (Էրզրումի համագումարի օրերին)

Ազգային շարժումը ծայր առավ նվիրական հայրենիքն ու ազգը մասնատելու վտանգից փրկելու և հույների ու հայերի մտադրություններին չզոհաբերվելու նպատակով:

-Նամակ Ստամբուլի կառավարությանը (17 նոյեմբերի 1919 թ.)

Ազգը բովանդակ աշխարհին հայտարարել է իր հաստատակամությունը՝ իր իրավունքներն անձամբ պաշտպանելու, քանի որ Էրզրումի և Սըվազի համագումարների որոշումներով վճռված է ոչ մի թիզ հող չտալ Հայաստանին:

-Արևելյան ռազմաճակատի հրամանատարությունը հանձնելով Ք. Կարաբեքիրին՝ հանձնարարեց

Մաքրել, հաշվեհարդար տեսնել հայերի հետ:

-Հայտարարություն 1920 թ. վերջին

Մենք որոշեցինք, որ Կարսի, Սարիղամիշի,Օլթիի և Արդահանի վրա հարձակվելը ևս հարցի լուծում է դիվանագիտական ճանապարհով: Այդպես էլ մենք վարվեցինք:

-Նամակ Ալի Ֆուադին (14 սեպտեմբերի 1920 թ.)

Հայերի հետ սկսել բարենպաստ պատերազմ այն հաշվով, որպեսզի Ադրբեջանը միացվի Թուրքիային:

-Նամակ Թալեաթի փիկնոջը՝Հայրիե Թալեաթին

Թալեաթ փաշայի դեմ որևէ թշնամություն չունեմ: Առաջին աշխարհամարտում մեր մասնակցության համար նրան հանցավոր չեմ համարում, հարկադրված էին պատերազմի մեջ մտնել: Անկախության պատե-

1. М. Кемаль Путь новой Турции, т. 3, Москва, 1934, стр. 13.
2. А. Тиркова Старая Турция и младотурки, Петроград, 1916, стр. 71.

բազմի ժամանակ, մեր թիկունքից խփել ջանացող փոքրամասնություններին տեղափոխելով, փաշան մեզ մեծ օգուտ տվեց:

-Խալիլ փաշային

Քո ծառայություններից ցանկանում ենք օգտվել Արևելյան ճակատում: Օրինակ, մեր և բոլշևիկների միջև ուղի հարթել և այդ միջոցով հարաբերություններ հաստատելուց հետո բոլշևիկներից զենք, ռազմամթերք և դրամական օգնություն ստանալ: Նախքան զինադադարը Կովկասի մեր բանակների գործողություններին մասնակից էիր: Այն ժամանակից ի վեր մոտիկից ենք ճանաչում բոլշևիկներին: Անատոլիային այնտեղից ձեր կազմակերպած օգնությունն ավելի թանկարժեք կլինի, քան մի այլ վայրից:

-Հայրենարարություն Ազգային ժողովում

Մեր ներկայիս աղետների պատճառներից մեկն էլ մեր նախորդ ղեկավարների անիրականանալի ծրագրերն էին: Նրանք երազեցին հիմնել ընդարձակ կայսրություն՝ միավորելով մահմեդական ազգերը և թուրանական ցեղերը: Դրանից ծագեցին պանիսլամականությունն ու պանթուրանականությունը: Այս երազներն էին, որ մղեցին իթթիհադին մասնակցելու առաջին աշխարհամարտին: Սրանք իդեալներ էին ամպերում:[1]

-Իմպերիալիստները կազմակերպեցին կոտորածներ Մարաշում, կործանեցին թուրքական այդ հին քաղաքը, սպանեցին հազարավոր անմեղ մարդկանց:[2]

-Ք. Կարաբեքիրին (20 մայիսի 1920 թ.)

Պետք է ձեռնպահ մնալ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վրա վաղաժամ հարձակումից:

Քրիստոնեական աշխարհը, հատկապես Ամերիկան, կտրամադրվեն մեր դեմ՝ նման հարձակումը դիտելով որպես հայերի մի նոր ցեղասպանության փորձ ու հնարավորություն:[3]

1. **Զարեվանդ** Պանթուրանիզմ, էջ 140-141:
2. С. И. Аралов Воспоминания советского дипломата, Москва, 1960, стр. 106.
3. Excerpted from **Kazim Karabekir**, Istiklal harbimiz (Our War of Independence), Istanbul, Türkye Yayinevi, 1969, p. 663

-Զրույց Միացյալ Նահանգների ներկայացուցիչ, գեներալ Հարբորդի հետ (22 սեպտեմբերի 1919 թ.)

Հայերի զոհերի թիվը հասավ 800 000-ի: Դատապարտում եմ այդ ջարդերը:[1]

-Հայտարարություն 1920 թ. ապրիլի 24-ին

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի դեմ կատարած ցեղասպանությունը խայտառակություն էր:[2]

-Ֆրանսիական թերթի թղթակցին

Իթթիհադի պարագլուխները մեղավոր են հայերի նկատմամբ կատարած հանցագործություններում:

Այդ իթթիհադականները և նրանց մեղսակիցները արժանի են կախաղանի:

Ինչո՞ւ են դաշնակիցները դանդաղեցնում բոլոր այդ սրիկաների մահապատիժը:[3]

-Թուրքիայում բնակվող յուրաքանչյուր ոք ոչ միայն իրեն թուրք պիտի անվանի, այլև անպայման խոսի թուրքերեն: Աղանայում արտասանած ճառում (իսկ այդ քաղաքում 20 հազար հայ ու հույն էին բնակվում ու խոսում մայրենի լեզվով) Քեմալը զայրացած ասաց. «Իսկ դա ի՞նչ հետևանք կարող է ունենալ: Մարդկանց այդ ամբողջ խավը մեր դեմ է... այդ տարրերին պետք է դարձնել իսկական թուրքեր»:

-Դիարբեքիրից Ստամբուլ, Թրակիայից Վան միայն թուրքեր են:

---

1. Excerpted from "Raut Orbayin Hatiralari", Yakin Tarihimiz 3, 32 (4 October, 1962), p. 179.

2. Excerpted from **Atatürkün Söyler ve Demecler,** 1918-1938, (The Speeches and Statem ents of Atatürk), vol. I, (Istanbul, Insitute for the Study of the History of the Turkish Revolution, 1945).

3. Excerpted from **MauricsPrax,** "Constantinople", Lectures pour fous (March 1920), p. 829. Prax was the correspondent of the French newspaper Petit Parisien. For the English version of postion of the interview,, see Current History 12 (May, 1920), p. 334-336.

-Լոզանի պայմանագիրն այն փաստաթուղթն է, ... որը վճռականորեն վերջ է դնում լայնորեն մտածված այն դավաղրությանը, որը դարերի ընթացքում ձևավորվել էր թուրք ազգի դեմ, մի դավաղրություն, որը հույս ունեին իրականացնել Սևրի պայմանագրի միջոցով:

-Իմ պաշտոնական զինվորական կարգավիճակը խանգարում է ինձ մասնակցություն ունենալ իմ ժողովրդի պայքարին հանուն հայրենիքի ամբողջականության և թույլ չտալ, որ նա զոհ դառնա հայերի ու հույների ոտնձգություններին:[1]

-Երիտթուրքերի ընկերության անդամները իրենց երկրի հայրենասերներն էին:[2]

Շվեյցարական լրագրող Էմիլ Հիլդերբրանդի հարցազրույցը Մ. Քեմալի հետ, որը լույս է տեսել «Լոս Անջելես իգզամիներ» օրաթերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարում

...Նախկին երիտթուրքական կուսակցության այդ մնացորդները, կուսակցություն, որը պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք զանգվածաբար անգութ գազանությամբ քշվեցին իրենց բնակավայրերից ու ոչնչացվեցին, այդ թափթփուկները շարունակում էին համառել հանրապետական կառավարման օրոք: Նրանք մինչև օրս էլ շարունակում էին ապրել կողոպուտի, թալանի ու կաշառակերության միջոցով, թշնամաբար վերաբերվելով օգտակար աշխատանքի մեջ ներգրավվելու և իրենց ապրուստը արդար քրտինքով վաստակելու ամեն մի գաղափարի:

Ընդդիմադիր կուսակցության քողի տակ այս տարրը, որ ժողովրդի կամքին հակառակ երկիրը ներքաշեց Մեծ պատերազմի մեջ և պատճառ դարձավ, որ թուրք երիտասարդության արյան գետեր հոսեն Էնվեր փաշայի հանցավոր փառասիրությանը հագուրդ տալու համար, այդ տարրը, ընդդիմադիր կուսակցության անվան տակ փոքրոգիաբար փորձեր կատարեց իմ և իմ կառավարության անդամների կյանքի դեմ:

1. **Yakin** Tarih Ansiklopedisi, Cilt 12, Istanbul, 1990, s. 27.
2. **Sina Aksin** Jön Türkler ve Ittihat ve Terakki, Istanbul, 1987, s. 192.

Հազգը՝ գնդապետ, զեյթունցիներին

Հիմա ձեր վիճակն անհույս է, որովհետև ներկայումս, մեր հերոս հրամանատար Մուստաֆա Քեմալ փաշան, նյութապաշտ Եվրոպայի քաջալերանքով, օրեցօր մեծ հաջողություններ կունենա... օտարներու խոստումներուն չհավատաք, մեզի ալ, ճիշտ ըսելով, վստահիլը բավական դժվար է: Մեր և ձեր միջև տարբերությունը միայն այն է, որ մենք մեծամասնություն ըլլալնուս համար դուք ստիպված եք ենթարկվելու մեզ: Մեծ ձուկերը, կըսեն միշտ, կուլ կուտան պզտիկ ձուկերը:[1]

Ֆալիհ Ռիֆկի Աթայա

Երբ Համաշխարհային պատերազմն ավարտվեց և անգլիացիները որոշեցին պատասխանատվության կանչել հայահայկական միջադեպերի մեղավորներին, բոլոր նրանք, ում այդ վերաբերում էր, միավորվելով ավազակախմբերում, զինվեցին:[2]

Բ. Օրան՝ պատմաբան

-Առաջին աշխարհամարտի նախօրյակին ու ընթացքում զանգվածային կոտորածների դեպքերը, որոնք տեղի էին ունեցել երկրի արևելքում ազգաբնակչության մեծամասնության ու փոքրամասնության միջև բախումների ընթացքում և, որոնք որպես կանոն ավարտվել են մեծ կորուստներով փոքրամասնության շարքերում, ազգաբնակչությանը վախեցրել էին հայերի կողմից հնարավոր վրեժխնդրությամբ և Հայկական պետություն ստեղծելու հեռանկարով:[3]

-Իթթիհադիստների հանցագործություններին մեղսակից լինելը և հայերի ունեցվածքի յուրացնելը, որոնք բռնագաղթվել էին երկրորդ սահմանադրության հռչակումից հետո, վախեցրեց այս խավի (հարուստ) ներկայացուցիչներին և դարձան Անկարայի կառավարության հետ նրանց միավորման գլխավոր պատճառը:[4]

1. Լ.Նորաշիտեյան Զեյթունը 1914-1921 թթ., էջ 179-180:
2. **Falih Rifki Atay** Gankaya, Atatürk'ün Dogumundan Olümünc Kadar, Istanbul, 1980, s. 450.
3. **B. Oran** Atatürk Milliyetciligi, Resmi Ideoloji Disi Bir Inceleme, s. 146.
4. Ն. տ., էջ 146:

Դ. Ավիսիօղլու

(Էրզրումի իրավունքների պաշտպանության) ընկերության անդամներ դարձան երիտթուրքերի կենտկոմի անդամ Հիմին, որը մեծ հարստություն էր կուտակել հայերի բռնագաղթի շնորհիվ, Էբուլխինդիլի Ջաֆարը (նույնպես երիտթուրք) և Թեշքիլաթ-ը մախսուսեի անդամ Դելի Հալիդը, ովքեր կարևոր դեր խաղացին հայկական և վրացական կոտորածներում:[1]

-Էրզրումում Աթաթուրքին ամենամեծ օգնությունը ցույց տվեց իթթիհադականների կամավորական ջոկատի հրամանատար Քյուչուկ Քյազիմը... Սրվազի կոնգրեսի անցկացման օրերին, երբ միջոցառումներ էին ձեռնարկվում Ալի Հալիբի զորքերի դեմ, հրաման ստանալով շարժվելու Սրվազի վրա, (քեմալականները) օգնություն խնդրեցին Խալիս Թուրղաթից: Ինչպես Քյուչուկ Քյազիմը, այնպես էլ Խալիս Թուրղութը մեղադրվում էին հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու մեջ և թաքնվում էին լեռներում:[2]

Թալեաթի նամակը Մ. Քեմալին Բեռլինից

Անատոլիայում սկսված քեմալական շարժումը հրաշք է: Բեռլինում գտնվող բոլշևիկյան ղեկավարներից ոմանք գերմանական կառավարության օգնությամբ կարողացել են ազատվել: Նրանցից հավաստիացում եմ ստացել, որ բոլշևիկյան կառավարությունը պետք է օգնի Անատոլիայի ազգային շարժմանը: Բոլշևիկյան կառավարությանն այս խնդրում համոզելու նպատակով Էնվեր, Ջեմալ փաշաներին և Ազմի բեյին Ռուսաստան ուղարկեցի:[3]

Ջեմալ փաշայի նամակը Մ. Քեմալին Մոսկվայից (հունիս, 1920 թ.)

Ռուսները ձեզ մոտ դեսպան են ուղարկում: Իլավա անունով այդ դեսպանը, ասում են, որ պատվավոր ու լուրջ անձնավորություն է: Բոլոր դեպքերում շատ եմ ցանկանում, որ Դուք էլ Ռուսաստան դեսպան ուղարկեք: Սրանց կարծիքով անհրաժեշտ է Ռուսաստանի և Թուրքիայի միջև

1. **D. Avcioglu** Milli Kurtulus Tarihi, Cilt III, Istanbul, 1979, s. 118.
2. Ն. տ., էջ 1181:
3. **Ali Fuad** Milli Mukadele Hartrate, s. 42.

զինակցության հատուկ դաշինք կնքել: Միայն անհրաժեշտ են համարում լուծել մեկ հարց: Դա էլ Հայաստանի սահմանների խնդիրն է: Ռադեկն ասում է, որ մինչև Անտանտի անդամները կազատվեն անգլիական ճնշումից, ժամանակավորապես ձևավորենք մի Հայաստան: Դրանով Հայկական հարցը, որին Եվրոպայի մեր բարեկամ աշխատավորական կուսակցությունների կողմից մեծ նշանակություն է տրվում, առայժմս կլուծվի և աշխատավորական կուսակցություններն այլևս պատրվակ չեն ունենա մեր վրա հարձակվելու: Այս հարցը քննարկման անհրաժեշտություն չունի: Սակայն համոզված եմ, որ Ռադեկի արտահայտություններում քննարկման արժանի քաղաքական հարցեր կան: Ձեր կողմից այստեղ ուղարկվելիք դեսպանն այդ մասին պետք է որոշակի հրահանգներ ունենա: Այդ հարցը լուծելուց հետո ռուսները հարկադրված կլինեն մինչև վերջ մեզ հետ լինել: Նույնիսկ Ռադեկն է ասում. «Եթե Հայկական հարցը լուծելու լինեք, ձեզ ցույց տրվող մեր օգնության ուժն ու կարևորությունը հարյուր անգամ կավելանա»:[1]

1920 թ. մայիսի 8-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ընդունեց

Բոնապարտիզմին մասնակցելու մեղադրանքով բանտարկության դատապարտվածներին ազատելու մասին որոշումը:[2]

Ջեմալ Կադրիևի՝ Այնթափի մութեսարիֆ, հայրապարությունը ֆրանսիացիներին (1921 թ.)

Ես ազգությամբ թուրք եմ. եղել եմ քեմալականների հետ և նրանց մտադրությունները ու ծրագրերը լավ գիտեմ: Նրանց միտքն ու գործն է քանդել, կործանել ու բնաջնջել: Քեմալականները չեն խնայել... նույնիսկ իրենց ազգակիցներին՝ կոտորել են, չարչարել, ջարդել, իսկ երբ վաղը տիրանան այս երկրին, ի՞նչ սոսկալի աղետներ են բերելու այդ խեղճ ու թշվառ հայերի գլխին...

Օսմանյան օրենքները ուժեղ օրենքներ էին, դրանք պաշտպանում էին փոքրամասնությունների իրավունքները: Սակայն, դժբախտաբար, աշխարհը գիտե, որ դրանք չէին հարգվում, և հայերը միշտ կոտորվել են..

1. **Ali Fuad** Milli Mukadele Hartrate, s. 49. **Գ. Լազյան** Հայկական հարց, էջ 245-246:

2. **M.Gologlu** Ucüncü Mesrutiyet 1920, Milli Mükadele Tarihi, Ankara, 1970, s. 172.

Նրանք (քեմալականները) հայերին կամ իրենց հանար վնասակար համարվող տարրերին իբր զորակոչում են Անատոլիայի խորքերը և ոչնչացնում: ... Ասում են պատերազմական դրություն է և հայերի այստեղ բնակվելը վնասակար է: Խեղճերին տարագրում ու ոչնչացնում են:[1]

Աղանայի թուրք պապվիրակները զորավար Դյուֆոնին

Մենք Քեմալի ու նրա չեթեների արյունարբու գազան լինելը ձեզնից լավ գիտենք և նաև գիտենք, թե նրանք այսուհետև ինչպիսի գազանություններ են գործելու:[2]

Ս. Ուսպյուն գել.

Ժողովրդի հանդեպ բռնության գազանային քաղաքականությունը Թուրքիայում շարունակվում է արդեն հարյուրամյակներ: Այդ տեսակետից քեմալականները, գրավելով իշխանությունը,գերազանցեցին նույնիսկ արյունարբու սուլթաններին: Նրանք հանդես են գալիս որպես ամենակատաղի շովինիստներ, ազգային փոքրամասնություններին ենթարկում բռնի թուրքացման: Քեմալականները հայրենի վայրերից քշում էին լազերին, կազմակերպում քրդերի զանգվածային սպանություններ, կոտորում հայերին... Քեմալականները՝ քաղաքական սպանությունների այդ խումբը... անփոփոխ է թողել սուլթանների պետական մեքենան:

Բ. Օրան

(Ազատագրական) պատերազմը մղվում էր ոչ թե զավթիչների, այլ ազգային փոքրամասնությունների դեմ... Իրավունքների պաշտպանության ընկերություններ ստեղծվեցին հենց այն շրջաններում, որտեղ գոյություն ուներ վտանգ հայերի և հույների կողմից:[3]

«Բոսֆոր» թերթ (Սպտամբուլ 1920 թ.)

Մ. Քեմալն այլևս չի կարող հավակնություն ունենալ, թե ինքը պաշտպանում է բացառապես թուրքական տարածքները... Մ. Քեմալը Էնվերի քաղաքականության շարունակողն է:[4]

1. ԳԱԹ, ֆ. **Ա. Չոպանյան**, թ. 7, մաս 1, գ. 3338, թ. 1-2:
2. Ն. տ.:
3. **B. Oran** Atatürk Milliyetciligi, Resmi Ideoloji Disi Bir Inceleme, s. 146
4. "Бюлетень народного коммисариата иностранных дел РСФСР", 1921 г., N 57, стр. 16.

Ամեր Քյազրիմ պաշտմաբան

Անգորայի քեմալականները և Սալոնիկի երիտթուրքերը ինքնությամբ իրար նման են, նույն մտադրությունն ունեն, նույն ձգտումները, նույն նպատակներն են հետապնդում, նույն տակտիկան են գործադրում և նույն միջոցները գործածում...

Անգորայի մարդկանց մեծ մասը հին անդամներ են Միության և առաջադիմության կոմիտեի և իրենք են, որ համաշխարհային պատերազմի ժամանակ ամենաչար գործունեությունը դրսևորեցին: Անգորայի ամբողջ վարչակազմի կաղրերը, մանավանդ զորքինը, ընտրում են երիտթուրքերից: Կառավարության անդամներից մեծ մասը երիտթուրքեր են... Մ. Քեմալի հիմնած կուսակցության նախագահ Սերիֆ բեյը Թալեաթի մերձավոր համախոհն էր... հազարավոր հայերի դահիճը... Նա հիմա, ինչպես ասում են, Անգորայի կառավարության սյունն է:

«Թուրքիան թուրքերին», ահա այն լոզունգը, որը ժամանակին եղավ իթթիհադականների խանդավառ անդամների գաղափարաբանությունը և որն այսօր նորից ազգայնականների դևիզն է... Թուրքիան շարունակում է ներշնչվել միևնույն ազգայնականական մարտաշունչ սկզբունքներով: Թուրքիայի տարածքի վրա բոլորը պետք է իրենց տեղը զիջեին թուրքերին...[1]

Խալիլ փաշա

Ի՞նչ են մեզ համար արաբները: Թողնենք այդ անիծյալ անապատը անգլիացիներին և գնանք Թուրքեստան: Այնտեղ ես կստեղծեմ մի կայսրություն իմ փոքրիկ (որդու)՝ Չինգիզի համար:[2]

Էնվերը Կարաբեքիրին

Կովկասում... մենք համացեղակիցներ ունենք, որոնք անհամբեր սպասում են թուրքերի վերադարձին:[3]

1. **O. Kiazim** L'aventure kemaliste. Elle est un danger: pour l'Orient, pour l'Europe, pour la paix, Paris, 1921, pp. 35-40, 42.

2. «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1967, թ. 7, էջ 116:

3. «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1967, թ. 4, էջ 43-44:

Հայ գաղթականների հարցով Ազգերի լիգային Թուրքիայի պատասխանը

Թրքական կառավարութեան աչքին հայ գաղթականներու ճակատագիրն ու «լքեալ գոյքերու» հարցը չեն իյնար պամանագրուած պարտականութեանց սահմաններուն մեջ, որովհետև հայ փախստականները չեն կրնար հավասարապես ձուլուիլ այն փոքրամասնութեանց մեջ, որոնք այժմ կապրին իր հողերուն վրա և, հետևաբար, անոնք չեն կրնար օգտուիլ դաշնագրին փոքրամասնութեանց վերաբերեալ յոդուածներէն:[1]

«Ենի Սաբահ» (24 մարտի 1948 թ.)

Ահմեդ Էմին Յալմանը «Վակըտ» թերթի 1919 թ. օգոստոսի 4-ի համարում առատաձեռնորեն թուրքական հողերը նվիրում է Հայաստանին, ասելով, թե Հայկական Հանրապետությունը չի կարող տեղավորել մեր երկրի հայերին, հետևաբար պետք է մի որոշ չափով հողատարածք կցել նրա սահմանին, որպեսզի հայերը տեր դառնան ազգային հայրենիքի, և մենք ընդմիշտ ազատվենք Հայկական հարցից և դրան առչվող մեքենայությունների աղմուկից:

1919 թ. օգոստոսի 26-ին նույն թերթում Ա. Էմին Յալմանը գրեց. «Հետևյալ կերպ է հնարավոր լուծել Մերձավոր Արևելքի հարցը, որը չլուծված է մնում մինչև օրս.

1.Վերանայել Հայաստանի սահմանը, տեղավորել այդ շրջանի գաղթականներին և երկրի մյուս մասերում եղած հայերին ասել, թե այլևս նրանք իրենց հայրենիքն ունեն, ցանկացողները կարող են այստեղ գնալ»:[2]

Ալի Ֆուադ

Թալեաթ փաշայի սպանողին ազատ արձակելուց հետո հասկացավ (Էնվերը), որ Իթթիհադ վե Թերաքզքի ղեկավարները միայն Մոսկվայում կարող են ապաստան գտնել:[3]

1. «Լրաբեր», ՀՍՍՀ ԳԱ, 1967, թ. 4, էջ 161-162:
2. **Ali Fuad** Milli Mukadele Hartrate, s. 220.
3. Ն. տ., էջ 222:

Էնվերի նամակը Մ. Քեմալին (16 հուլիսի 1921 թ.)

Բաքվում եղած ժամանակ (1920 թ., ամառ) Քյազիմ փաշա եղբորս և ձեզ գրած նամակում, նրա և ձեր այնքան ցանկացած ձևով տեղյակ դարձա, որ ռուսները Հայաստանում որևէ գործողություն չեն կատարելու: Մինչդեռ եթե արևելյան ճակատը ստացվեր, հայերը ուժեղանալու էին և միակ ելքը՝ ունեցած ուժերով հարձակվելն էր, ինչպես այդ եղավ Համաշխարհային պատերազմի ավարտին: Այլապես, նրանք հարձակվելով, մեզ ճզմելու էին: Այդպիսով, շարժման դեմ կառավարությունը ձայն չէր հանելու՝ ձեզ ասել էի:

Երբեք ի պաշտոնե չեմ գործել, և իմանալով, որ Լոնդոնից ոչինչ չի ստացվի, հանձնարարեցի, որպեսզի ռուսներից առավելագույն օգուտ ապահովենք: Խալիլ (փաշայի) հետ անհատապես Կարախանի և Չիչերինի վրա ճնշում գործադրելով երեք նահանգները (Կարս, Արդահան, Օլթի) և ավելին՝ Իգդիրի գավառը մեզ թողնելու ուղղությամբ աշխատեցինք:[1]

Խալիլ փաշա

Բոլշևիկների համար մեզնից ավելի լավ դաշնակից անհնար է երևակայել...

Ծովով զենք, ռազմամթերք ուղարկեցի (Ռուսաստանից) և անձամբ 100 հազար ձուլածո ոսկի հանձնեցի Կարակեոսում գտնված դիվիզիայի հրամանատար Ջավիդ բեյին:[2]

Ալի Ֆուադ

Չիչերինը Բեքիր Սամի բեյին առաջարկեց. Նախկին հայկական նահանգներից՝ Բիթլիսից, Վանից ու Մուշից, որոշ մասեր տալ Հայաստանին, որը չի կարողանում հանգիստ շունչ քաշել: Նույնիսկ ազգաբնակչության փոխանակության շուրջ էին խորհրդակցել: Այս ամենն Անատոլիայի կառավարությանը բացատրելու համար Խալիլ փաշան մեկնել էր Անատոլիա...[3]

1. Ն. տ., էջ 233-234:
2. Ն. տ., էջ 137:
3. Ն. տ., էջ 70:

Բեքիր Սամի բեյը պատասխանում է. Թուրքիայում ոչ մի ժամանակ հայկական նահանգ գոյություն չի ունեցել:[1]

Ազգային մեծ ժողովի 1920 թ. սեպտեմբերի 2-ի հանձնարարականը

Ադրբեջանի հետ կապ հաստատելու և Հայաստանին կատարված իրողության առջև կանգնեցնելու խնդիրը պետք չէ կապել Մոսկվայի հավանության հետ: Պետք է օգտվել առաջին իսկ առիթից:[2]

Նայիմ Ջևադ՝ իսլամական բանակի ղեկավարներից

Կարաբեքիր փաշան Խալիլ փաշայի, Նարիման Նարիմանովի և բոլշևիկյան բանակի հրամանատարությանը հասցեագրված նամակ էր գրել: Այդ նամակով ջատագովում էր բոլշևիկների հետ համագործակցության անհրաժեշտությունը: Կատարած ծառայությունների համար Խալիլ փաշային շնորհակալություն էր հայտնվում: Դրանից բացի, թնդանոթի, զենքի և ռազմամթերքի փոխադրության ժամանակ օգտագործելու նպատակով Ադրբեջանի միջից ճանապարհ բացելու անհրաժեշտությունը պարզաբանող երեք նամակ ստացա Կարաբեքիր փաշայից: Այս երեք նամակներն էլ հանձնեցի հասցեատերերին:

Ապահովեցի, որպեսզի օգոստոսին թուրքական և բոլշևիկյան բանակներն իրար միանային, ապա համաձայն ստացածս հրահանգների, աշխատեցի Խալիլ փաշայի հետ, որպեսզի երկու բանակների կապն ապահովվի նաև երկաթուղով, և Հայաստանը դրան ընդդիմանալ չկարողանա: Այս նպատակով գնացինք Մոսկվա: Էնվեր փաշան արդեն այնտեղ էր:[3]

Ռիզա Նուրի՝ երիտթուրք գործիչ

(Մոսկվայից օգնություն ստանալու համար) հարմար գտան, որ ես գնամ Մոսկվա Յուսուֆ Քեմալի հետ... Ներկայացանք արտաքին գործեր վարող Չիչերինին, մեր խնդրանքը ներկայացրինք: Մեզ լսեց և վերջում ասաց.

1. **Ali Fuad** Milli Mukadele Hartrate, s. 70.
2. Ն. տ., էջ 78:
3. «Յուսաբեր», 25 սեպտեմբերի 1926թ.:

-Նախ Վանը տվեք հայերին և ապա եկեք խոսենք:

Նման բանը մեզ համար անհնար էր: Յ. Քեմալ բեյին առաջարկեցի գնալ Ստալինի մոտ... Համաձայնվեց և տեսակցություն խնդրեցինք: Մի քանի օր անց դրական պատասխան ստացանք:

Մեզ մի քանի ռոպե ոլորապտույտ և մանվածապատ չանապարհներով ու թաղերով տարան: Վերջապես մտանք մի սենյակ, որի մեջտեղում մի սեղան կար, փայտե աթոռ և ընկեր Ստալինը, որ նստած էր շապիկով:

Ստալինը հարցրեց, թե ինչու ենք եկել և ինչ ենք ուզում: Մենք տեղյակ պահեցինք խնդրին:

-Շատ լավ,- ասաց նա,- մեր նպատակն էլ նույնն է՝ ձեզ օգնել, միայն թե իմանանք, թե որքան եք ուզում...

-Տասը միլիոն ոսկեդրամ,- ասացի:

-Ոչ, այդքան չի լինի:

-Հինգ միլիոն:

-Ոչ:

-Երեք միլիոն:

-Մեկ միլիոն ոսկի թող ձեզ տան:

Ստալինի մոտից գնացինք Չիչերինի մոտ: Նրան հաղորդեցինք Ստալինի խոսքերը: Նա նորից պահանջեց, որ Վանը հայերին տանք և նոր ներկայանանք իրեն:

Ի՞նչ անեինք: Եթե ձեռնունայն վերադառնայինք, մեր վիճակը շատ տխուր էր լինելու:

Յ. Քեմալին առաջարկեցի նոր տեսակցություն խնդրել Ստալինից: 5-6 օր անց հրավեր ստացանք...

Ասացինք, թե Չիչերինը պահանջում է նախ Վանը հայերին տալ և մերժում է դրամ հատկացնել:

Ստալինը հեռախոսով ռուսերեն խիստ լեզվով ինչ-որ բան ասաց Չիչերինին: Մեզ էլ ասաց. «Գնացեք, ստացեք դրամը»:

Նորից ներկայացանք արտաքին գործերի կոմիսար Չիչերինին: Մեկ միլիոն ոսկեդրամի կեսը, այսինքն՝ 500 հազար ոսկին մեզ ուղեկցող ղազախ հեծյալի հետ մինչև սահման բերեցինք և հանձնեցինք Քյազիմ Կարաբեքիր փաշայի ուժերին:[1]

1. «Մարմարա», 27 սեպտեմբերի 1952 թ.:

Հալիդի՝ պատգամավոր Աղանայից, հայրապարությունը թուրքական խորհրդարանում (1924 թ. ապրիլին)

Հայ ազգի երջանկությունը նապագան թուրքերի ձեռքում է: Ուշադրության առնելով թուրքական գործիչների փաղանգի սպանությունը, հայկական կոմիտեների դավադրությունները, անմեղ Ջեմալ (փաշայի) սպանությունը և մյուս երևույթները, որոնք փաստորեն ուղղված են թուրք ազգի դեմ՝ այդ ամենի համար կարելի էր ոչնչացնել հայ ժողովրդին:[1]

Ֆերիդ փաշա՝ ռազմական նախարար

Վիլսոնի ծրագրի վերաբերյալ ի՞նչ, դրսի միջամտությո՞ւն... մի ազգ, որը կռվում է հերոսաբար, ստրուկ լինել չի կարող:

...Մենք համոզված ենք, որ նյութական առումով Թուրքիայի տարածքում անկախ Հայաստանի ստեղծելն անհնար է: Մենք համաձայն ենք, որպեսզի տեղի ունենա ազգաբնակչության փոխանակում և սահմանների մասնակի փոփոխություն հօգուտ Հայաստանի...

Մենք ո՛չ Եգիպտոսի և ո՛չ էլ Կիպրոսի հարցերը չենք բարձրացնում, բայց նաև չենք կարող որևէ մեկին զոհել Կ. Պոլիսն ու Անատոլիան:

Սաֆեդին բեյ՝ լիբերալ-համաշայնական կուսակցության ղեկավարներից

Մենք չենք մասնակցել հայերի վերաբերյալ հարցերի քննարկմանը: Այդ հարցերը կարելի էր բարեկամաբար լուծել... Մեր կուսակցությունը միշտ էլ քննադատել է Միություն և առաջադիմություն կուսակցության քաղաքականությունը հայերի նկատմամբ:

Մ. Քեմալի նամակը բուրդ ցեղապետերին (1919 թ. օգոստոսին)

Դուք երբեք չեք համաձայնվի, որ ձեր հայրենիքի (Արևմտյան Հայաստանի) սրբազան հողը հայերը ոտնահարեն:[2]

«Վակրբ» թերթ (7 մարտի 1925 թ.)

Այնտեղ, որտեղ երևում է թուրքական սվինը, Քրդական հարց լինել չի կարող:

1. "Вечерняя Москва", 15 апреля, 1924 г.
2. **V. Askun** Sivas kongresi, Istanbul, 1963, s. 127.

Ջ. Գյուրսել՝ Թուրքիայի նախագահ

Արևելյան նահանգները Թուրքիայի դուռն ու ամրոցն են, և դրանք կորցնելը շատ կդժվարացնի Թուրքիայի գոյատևումն Անատոլիայում:[1]

Ջևդեթ Սունայ՝ Թուրքիայի նախագահ

Արևելյան նահանգներում քրդերը գուցե և բնակչության 100 տոկոսն են կազմում, բայց Թուրքիայի տարածքում քրդական պետություն հիմնելու նրանց երազը երազ էլ կմնա, ինչպես որ Մեծ Հայաստան ունենալու հայերի երազանքը: Թող քրդերը հեռանան Թուրքիայից: Իսկ ո՞ւր: Ուր ուզում են: Թող գնան Իրան, Պակիստան, Հնդկաստան: Թող դիմեն ՄԱԿ-ին՝ իրենց համար Սև Աֆրիկայում ազգային տուն հատկացնելու խնդրանքով: Թող հեռանան, քանի դեռ թուրք ազգը չի զայրացել: Քանի որ, երբ մենք զայրանում ենք, առյուծ ենք դառնում: Թող քրդերը մեր մասին հայերից հարցնեն:[2]

«Դրոշակ», 1991 թ., մարտ

1990 թ. սեպտեմբերի 23-26-ին Օզալը բանակցություններ է վարում ԱՄՆ-ում հետևյալ հարցերի շուրջը. ա) «ապահովել առևտրական գործակցության ծավալումը», այսինքն՝ ԱՄՆ-ի դռները բաց պահել թուրքական ապրանքների համար, բ) երաշխիք տալ, որ «Հայկական բանաձևը» այլևս ԱՄՆ-ի օրենսդիր օրգանների քննարկման նյութ դառնալ չի կարող, գ) Թուրքիային ու Հունաստանին ցույց տրվող օգնությունը 7*10-ի փոխարեն դարձնել հավասար, դ)քրդերին, մասնավորապես Իրաքի քրդերին, երես չտալ և այլն: Այս այցի կապակցությամբ Արևմուտքի թերթերը գրեցին. «Թուրքիան Պարսից ծոցի ճգնաժամով փորձության ենթարկվեց և ցուցադրեց, որ պատրաստ է թե ՄԱԿ-ի և թե արևմտյան աշխարհի կողքին գործելու ուժի և ծավալապաշտական հակումների միջոցով համաշխարհային խաղաղությունը վտանգող արկածախնդրության դեմ պայքարող երկրների հետ»:

Իսկ թուրքական թերթերը գրեցին. «Արևմուտքը իր քաղաքական հետամտություններով է շարժվում, մասնավորապես Միջին Արևելքին

1. "Le monde diplomotique", օգոստոսի 1971 թ.:
2. София-пресс, Объектив, 1989 г., N3.

առնչվող զանազան շահախնդրություններով: Ցանկանում է, որ Իսրայելի, Եգիպտոսի և Թուրքիայի նման երկրների ստրատեգիական դիրքը և ուժը օգտագործվի: Թուրքիան պետք է գործիք դառնա նման խաղերի, մանավանդ նկատի պետք է ունենալ, որ արաբական աշխարհը, չնայած իր ներքին որոշ հակասություններին, վաղը կարող է վերագտնել իր կրոնա-քաղաքական միությունը: Եթե Օզալը Մոսուլի և Քիրկուկի նման գոտիներում հաճույքով է շարժվում, ապա նման շահագրգռությունները կարող են շատ թանկ նստել Թուրքիայի վրա»:

Այդ վարքագիծը նկատի ունենալով Թուրքիան թուրք-ամերիկյան 1985 թվի համաձայնագիրը, որի ժամկետը լրանում էր 1990 թ. սեպտեմբերին, համաձայնվեց միայն մեկ տարով:

Այստեղ երկրորդական դեր չխաղաց նաև այն, որ «Հայկական բանաձևը» «իր իմաստով և քաղաքական կարևորությունով 1980-1990 թվերի համեմատությամբ շատ ավելի լուրջ իմաստ ու բնույթ է» ստացել: «Հայաստանի ներքին կյանքում հիմնարար շրջադարձեր են տեղի ունենում, անկախության վերահաստատումը Հայաստանի ներքին կյանքում նոր հեռանկարներ կարող է բացել: Մերձակա ժամանակներում Հայաստանի անկախ Հանրապետությունը կարող է դառնալ ՄԱԿ-ի անդամ և իր ներկայացուցիչները ունենալ այնտեղ: Արևմտաեվրոպական երկրները բացահայտ տրամադրություն են ցույց տալիս «ցեղասպանությունը» որպես անժխտելի իրողություն ճանաչելուն, հետևաբար հատուցելու և իրավատիրական պահանջները քննարկման նյութ դարձնելուն»:

«Հայաստանի ներքին վայրիվերումները, ուշ թե շուտ Թուրքիայի համար նոր հարցեր պիտի ստեղծեն, ամենևին չենք հավատում, որ մեր սահմանամերձ շրջանների մերձակա տարածքներում տեղի ունեցող փոփոխությունները բարի դրացիության ուղիով են զարգանալու:

Պատրանք չունենանք, որ Բուշի խոսքերին հետևելով կարող ենք լուծել մեր հարցերը: Երբ կիպրական և Էգեյական հարցերում ԱՄՆ-ն հօգուտ Թուրքիայի որևէ մի քայլ չի կատարում, կարելի՞ է հուսալ, որ հայկական ու քրդական հարցերում կանգնելու է Թուրքիայի կողքին»:[1]

«Հուրիեթը» սեպտեմբերի 3-ին գրել է, որ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները Թուրքիայի համար «փորձանքի» նշանակություն ունեն, քանի որ ՄԱԿ-ի մեջ Հայաստանի մտնելը այդ կազմակերպությու-

1. «Ջումհուրիեթ», 5 սեպտեմբերի 1990:

նում կվերածնի հայ-թուրքական հարաբերությունների հին ու նոր շատ հարցեր: «Հարցը գլխացավի պիտի վերածվի, երբ Հայաստանը անկախ պետություն դառնա և տեղ գրավի ՄԱԿ-ում:

Դժվար է կանխատեսել, թե Հայաստանի ղեկավարությունը Թուրքիայի նկատմամբ ինչ դիրք է բռնելու, երբ ամբողջական անկախության հասնի, բայց ծանոթ ենք հայ ժողովրդի զգացմունքներին: Հայաստանի խորհրդարանը անցյալ տարի հայտարարեց իր 1921-ի համաձայնությունը վիճելի: Արդեն երկար ժամանակ է, որ հայերը հետամուտ են այս խնդրին...

Այս կացության առջև Թուրքիան չի կարող ձեռնածալ մնալ, հարկադրված ենք մոտիկից հետաքրքրվել, հետևել դեպքերի զարգացմանը և քաղաքական իրադարձությունները քննարկել Միջին Արևելքի հարկադրանքների լույսի տակ:

...Թուրքիան սպառնալիքների դեմ հանդիման է գտնվում հյուսիսային, արևելյան և հարավային սահմանների վրա»:

Օ. Մեյրեն՝ թուրք լրագրող

Ես գնացի Թունջելի, որը նախկին Դերսիմն է: Անցա այդ անմարդաբնակ, ամայացած երկրամասով, զրուցեցի բնակիչների հետ... Նրանք կառավարական որևէ այլ չինովնիկի չէին տեսել, բացի հարկահավաքներից ու ժանդարմներից: Այստեղ չկան ո՛չ արհեստներ, ո՛չ հողագործություն, ո՛չ առևտուր: Ես տեսա միայն դժբախտ, թշվառ մարդկանց, որոնց ամբողջ կյանքը կապված է այծեբուծության հետ: Թունջելին ապրում է 15-րդ դարում և ոչինչ չգիտե 20-րդ դարի բարքերի մասին... Կառավարությունը Դերսիմից վերցնում է, բայց նրան ոչինչ չի տալիս:[1]

Ք. Օզալ՝ Թուրքիայի նախագահ

Նախ հեշտ չէ ջոկել՝ ով է քուրդ և ով քուրդ չէ: Իմ հարազատ քաղաք Մալաթիայում՝ երկրի արևելքում, մենք որևէ տարբերություն քրդերի ու թուրքերի միջև չէինք դնում, իսկ քրդերը խոսում էին թուրքերեն: Ի դեպ, Թուրքիայում քրդերը փոքրամասնություն չեն համարվել: Չէ որ Թուրքիան ստեղծվեց աշխարհագրական հարևանության և ոչ թե կամավոր միության բազայի վրա և ոչ թե ինչ-որ ռասայական սկզբունքներով: Հիշեք

1. В. Никитин Курды, Москва, стр. 407.

Աթաթուրքի հայտնի նշանաբանը, որը ասում է. «Երջանիկ է նա, որ իրեն կարող է թուրք համարել», այլ ոչ թե «նա, ով թուրք է»: Ինչո՞ւ: Որովհետև Թուրքիայում միշտ եղել են այլ լեզվախմբերի ներկայացուցիչներ՝ չերքեզներ, վրացիներ, լազեր, բայց պաշտոնական լեզուն միշտ նույնն է եղել՝ թուրքերենը:

Ի դեպ, քրդերենը պաշտոնապես ընդունելու լուրջ պահանջ չի եղել: Բոլոր այդ պահանջները ծնվել են քաղաքական ագիտացիայով և ոչ թե մշակութային պահանջմունքներով: Դուք գիտե՞ք, թե իրար հետ ինչ լեզվով են խոսում քուրդ ահաբեկիչները: Թուրքերեն: Թուրքերենն ու քրդերենը դժվար է զանազանել: Քրդերի հետ կապված խնդիրների ու դեպքերի մեջ գրեթե միշտ խառնված են եղել արտասահմանցիները: Մոտավորապես այնպես, ինչպես Օսմանյան կայսրության հայերը գտնվում էին ռուսների ազդեցության տակ: Արևելյան Անատոլիա ռուսական բանակի ներխուժումը Հայկական հարցը հասցրեց իր ապոգեյին:[1]

Ժամանակակից թուրք պատմաբաններ

Է. կարալ. Բացարձակ ճշմարտություն է, որ երկու կողմերից էլ թափվել է շատ արյուն, որովհետև հայերը զինված դիմադրություն են ցույց տվել, իսկ զգալի թվով հայեր կյանքից զրկվել են հիվանդությունների, ցրտի, ինչպես նաև այն պատճառով, որ դիմել են վրեժխնդրական գործողությունների, մի բան, որ չէր կարող հավանության արժանանալ թուրք ժողովրդի կողմից:[2]

Ի. Օզքայա. Երբ աշխարհամարտը սկսվեց, հայկական կոմիտեներն, առանց որևէ պատճառի և հակառակ քաղաքական ողջամտության, գտան, որ իրենք պատերազմական վիճակում են այն պետության հետ, որին պատկանում էին... Այդ իսկ պատճառով կայսրական կառավարությունը որոշում ընդունեց ոչնչացնել հայկական այդ կոմիտեները և ցրել նրանց ղեկավարներին: Որոշումն ի կատար ածվեց սկսած 1915 թ. ապրիլի 15-ից:[3]

---

1. «Մոնդ», 27-28 նոյեմբերի 1988 թ.:

2. **E. Z. Karai** Armenian Question 1878-1923, Ankara, 1975, p. 15-16.

3. **C. I. Ozkaya** Le peuple arménien et les tentatives de réduire le peuple tutc en servitude, Istanbul, 1976, p. 234-235.

Ֆ. Բելեն. Թուրքական բանակի թիկունքում ծայր առած հայկական ապստամբության պատճառով կառավարությունը հրաման արձակեց հայերին ճակատային գծից հեռացնելու և նրանց Սիրիա և Իրաք ուղարկելու մասին:[1]

Էսաթ Ուրաս. Պատմության օրրան հանդիսացող Անատոլիան անհիշելի ժամանակներից ի վեր եղել է թրքության մայր հայրենիքը:[2]

Դայիբ Գյոքբիլգին. Ամբողջ պատմության ընթացքում թրքության հայրենիքը հանդիսացող արևելյան վիլայեթներում հայերը վաղուց ի վեր չնչին փոքրամասնություն էին կազմում:[3]

Անկարայի համալսարանի ուսանողներ

Թուրքիայի քաղաքացին մարդ է, որն ամուսնանում է շվեյցարական քաղաքացիական օրենսգրքով, մեղադրվում է իտալական քրեական օրենսգրքով, դատվում է գերմանական պրոցեսուալ կոդեքսով, կառավարվում է ֆրանսիական վարչական օրենսգրքով և թաղվում իսլամի ծեսերով:[4]

Աթաթուրքի «Թուրքական պատմության հիմնական ուղղությունները» աշխատության առաջաբանից

Մեր նախնիները, որ մեծ տերություններ են ստեղծել, դարձան նաև մեծ քաղաքակրթությունների ստեղծողներ: Մեր պարտքն է հետազոտել, ուսումնասիրել և թուրք ժողովրդին ու ողջ աշխարհին պատմել այդ մասին:[5]

---

1. **F. Belen** XX yuzuilde Osmanli devlet, Istanbul, 1973, s. 243.

2. **E. Uras** Tarihte Ermeniller ve Ermeni meselesi, Ankara, 1950. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 126:

3. **T. Gökbilgin** Milli mücadele baslarken. Mondros mütarekesinden Sivas kongresine, Ankara, 1959, 19-31. Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 127:

4. **Васильев** Город над Босфором, стр. 26.

5. Türk tarihinin ana hatlari, Istanbul, 1930.

Ս. Իևան

Մարդկության բարձր քաղաքակրթության օրրանը կարող էր լինել և եղել է երկրագնդի միայն մեկ կետ՝ Միջին Ասիան: Պատմական հեռավոր այդ դարաշրջանում երկրագնդի բոլոր անկյուններում ապրել են երկայնագլուխ մարդիկ: Միջին Ասիայում առաջացել է մի ուրիշ ռասա, որը և փաստորեն ստեղծել է նեոլիթի մշակույթը: Հենց նրանք էին, որ առաջին անգամ յուրացնելով հողագործությունը և անասնապահությունը, մարդկության առաջ բացեցին մետաղի դարաշրջանը: Նրանք խոսել են մեկ ընդհանուր լեզվով՝ թուրքերենով: Այս ռասան Միջին Ասիայից վերաբնակեցվեց տարբեր վայրերում՝ իր հետ տանելով բարձր մշակույթ: Նա բարձր մշակույթ է տարել Իրան, Հնդկաստան, Փոքր Ասիա և Եվրոպա: Այդ ռասայի մի ճյուղն էլ խեթերն են, այսինքն՝ պրոթուրքերը, որոնք բնակություն հաստատեցին Անատոլիայում:[1]

Հ. Չեմբել

Խեթերը, շումերները, եգիպտական և էգեյան քաղաքակրթությունները մեկ շղթայի օղակների նման ձգվում են Ալթայից:[2]

Էսադ բեյ

Թուրքերն են առաջինը վառել համաշխարհային մշակույթի ջահերը:

Գրչության ստեղծման մասին պատմության դասագրքում կարդում ենք. «Այն ստեղծվել է թուրքերի կողմից նախապատմական ժամանակաշրջանում և տարածվել է ամբողջ աշխարհում»:[3]

Մուզեֆեր՝ Թուրքիայի պատմության ուսումնասիրության ընկերության քարտուղար

Գիտական վերջին տվյալները համընկնում են մարդկային երկու կատեգորիաներն ընդունելու հետ՝ նկատի ունենալով գանգի ձևը: Նրանցից մեկը վերագրվում է Կենտրոնական Ասիայի սարահարթին: Այս շրջանում ծագում առած անհատները միշտ անվանվել են թուրքեր, որոնք լեռների հետ մարտի բռնվելով՝ հիմք դրեցին մետաղի դարաշրջանին:

1. Turk tarihinin ana hatlari, Istanbul, 1930, s. 48.
2. Ն. տ., էջ 201:
3. Tarih Istanbul, C I, 1932, s. 55.

Երբ մարդկությունը դեռ տգիտության մեջ էր, թուրքերն ընթանում էին Աստծո հավատի ուղիով: Թուրքական զանգվածները շարժվելով՝ նվաճեցին Չինաստանը, Ճապոնիան, Հունաստանը: Թուրանական ծովը հասավ Իտալիայի ափերին, հասավ մինչև Բալթիկա, Իռլանդիա և Իսլանդիա: Անցավ Ֆինլանդիայով, որի ազգաբնակչությունն ընդունում է իր թուրքական ծագումը: Ոչ մի վտանգ չկարողացավ կանգնեցնել նրա շարժումը: Թուրքերը թափանցեցին Ֆրանսիա, Ալփերին ու Գալերին անուն տվեցին: Պատմական փաստ է նաև այն, որ էարուսկները ծագել են թուրքական ցեղերից մեկից: Քաղաքակրթությունը սկզբնավորվել է Կենտրոնական Ասիայում, որին թուրքերը դարձրին մյուս ժողովուրդների սեփականությունը:[1]

Ս. Սուրեյա

Մինչև 20-րդ դարը քաղաքակրթությունը միայն մահմեդականներին էր պատկանում: Եվրոպացիները այն գողացան մահմեդական աշխարհից ու յուրացրեցին, իսկ մահմեդականներն իրենց անհոգության հետևանքով որոշակի ժամանակահատվածում նրանցից հետ մնացին:[2]

Թ. Օզալ

Մեր հայրենակից Հոմերոսն էր, որ Ք. ա. 9-րդ դարում Անատոլիայում նախաձեռնեց այն, ինչը հետագայում կոչվելու էր «Հունական հրաշք»...

Հոմերոսի արվեստն անհնար է բացատրել այդ շրջանի հունական մշակույթի մակարդակով: Այն ավելի ցածր էր, քան անատոլիականը, հետևաբար Հոմերոսը ոչ թե հունական, այլ անատոլիական, այսինքն՝ թուրքական մշակույթի ծնունդ է:[3]

Ք. Արաբուրբ

Թուրքերը Անատոլիայի հնագույն բնիկ ժողովուրդն են: Անատոլիական բոլոր քաղաքակրթությունների մեջ առկա է թուրքերի մասնակցությունը: Անատոլիայի ժամանակակից թուրք ժողովուրդը ոչ միայն մշակույթի, այլև ցեղային առումով հանդիսանում է հին Անատոլիայի ժառանգորդը:

1. **W. Churchill** The World Crises, Barselona, 1944, p. 260.
2. **S. Süreyya** Cihan iktisadiyatinda Türkiye, Ankara, 1931, s. 18.
3. **W. Churchill** The World Crises, Barselona, 1944, p. 210.

Թուրքիայի բնակիչ և թուրքերեն խոսող հայերի պատասխանը «Ինչո՞ւ հայերեն չեք խոսում» հարցին

Վտանգավոր է, թուրքերի աչքում թշնամի կդառնանք:[1]

Եալչին Բեկչեն՝ «Ջումհուրիեթ» թերթի լրագրող

Տողու Պայազետի և Վանի միջև ճամբի վրայ նոյնիսկ մեկ թեյարան չկայ... Վանա լճի շուրջ ծառ չգտնելը մարդու մեջ տարօրինակ զգացումներ է առաջացնում... (Վանում) Իպրահիմ Թաթլսեսի մի երեժշտութիւնը, որ սփռվում է ամենացածր ձայնով, օտարականներին զարմացնում է և նրանք հարց են տալիս. «Ինչո՞ւ է այս երաժշտութիւնը. ուրարտակա՞ն է»:

Աղթամարի ցուցատախտակներից ոչ ոք չի հասկանում հայ արվեստի գլուխգործոցներից համարվող եկեղեցու հայկական գործ լինելը:[2]

«Միլիեթ», 20 մայիսի 1989 թ

Արևելյան Անատոլիայի և Կարսի պատմական կարևորագույն կոթողներից Անիի ավերակներն անուշադրության պատճառով օրեցօր փլուզվում են:

«Ենի զազեթե», 9 ապրիլի 1965 թ

Անկախութեան պատերազմէն Անատոլուի մեջ հայերը թուրքեր ջարդած են: Եթե այդ ջարդերու հակակշիռը հանենք, հայերը պարտական կմնան թուրքերուն...

«Ջումհուրիեթ», 9 ապրիլի 1965 թ

Ճիշտ է, կես դար առաջ, դարձեալ դաշնակներու և հնչակներու գրգռութիւններով, ցավալի դեպքեր պատահած են թուրքերու և հայերու միջև, և հայոց չափ թուրքեր ալ տառապալից օրեր ապրած են: Այս բոլորը, սակայն, իրենց մեղքերով ու ցավերով պատմութեան փոխանցուած են ներկայիս: Այլևս իմաստ չունի այդ հին էջերը քրքրել և մոխիրները խառնշտկել:

1. «Արարատ» թերթ, 5 ապրիլի 1989 թ.:
2. «Ալիք», 18 օգոստոսի 1985 թ.:

«Ջումհուրիեթ», 17 ապրիլի 1965 թ

Մենք Սևրի դաշնագիրը ջնջեցինք ճակատէ ճակատ, արիւն թափելով, և անոր մնացորդները մինչև Միջերկրական քշեցինք ու մաքրագործեցինք: Ահա թե ինչու կը խնդանք և կանցնինք՝ երբ Սևրի իրավունքներէն կը ճառեն մեզի:

«Հուրիեթ», 5 մայիսի 1985 թ.

Ամերիկացները պարտավոր են հայերին լավ ճանաչել և պետք է իմանան, որ նրանց չի կարելի վստահել:

Ք. Էվրեն՝ Թուրքիայի նախկին նախագահ

Հայերն այդքան կոտորածներ են կազմակերպել և հիմա վեր են կացել ու այնպիսի աղմուկ են բարձրացնում և այնպես են ներկայացնում աշխարհին, թե ոչ թե մենք՝ թուրքերս ենք կոտորվել, այլ մենք ենք նրանց կոտորել: Բռնություններ և ջարդեր կատարողները հենց հայերն են: Դրանով հանդերձ, թուրք ազգը լռակյաց տարել է այդ բոլորը, ջարդերի շուրջ աղմուկ չի բարձրացրել...[1]

«Գյունեշ», 13 ապրիլի 1983 թ

Ապրիլի 24-ը որպես մարդկության նկատմամբ ցեղասպանության օր հայտարարելը հայերի համար կնշանակի ոչ միայն բարոյական հաղթանակ... այլև հայերն այն կօգտագործեն քաղաքական նպատակներով... կօրինականացնեն իրենց դատը...

«Թերջուման», 12 օգոստոսի 1982 թ

Պաշտպանողական միջոցների փոխարեն մենք պետք է հրապարակենք միլիոնավոր գրքույկներ, որոնցում հայերի բոլոր գազանությունները պետք է ցույց տրվի փաստաթղթերով:

«Գյունեշ», 3 հունվարի 1983 թ

Երբ հայերը տեսնեն, որ ահաբեկչությունը տգեղացնում է իրենց դատի դեմքը, կսկսեն այդ դատն առաջ տանել քաղաքական միջոցներով,

1. Թուրքական հեռուստատեսություն, 9 հուլիսի 1986 թ.:

մեծ պետությունների օգնությամբ: Եվ թուրքը, որ մինչև օրս այդ դատի կապակցությամբ իր խելքը գլուխը չի հավաքել... ուշքի է գալու:

«Թերջումանի» թղթակիցը հայաբնակ Վաքվլը գյուղի մասին

Գյուղացիներն իրենց անվանում են «քրիստոնյա թուրքեր»: Գյուղի դպրոցը թուրքական է, եկեղեցի չկա, գյուղացիների մեծ մասը հայերեն չգիտի, թուրքացված են նրանց անուններն ու ազգանունները: Թուրքիայի գավառներում «յան» վերջավորությունով ազգանուն չկա: Հայերը բռնությամբ իսլամացվում են:[1]

Թ. Օզալ

Հայերը բազմաթիվ գրքեր ու գրքույկներ են հրատարակել և հաջողացրել են աշխարհին համոզել ցեղասպանության հարցում... Ոչ ոք իրավունք չունի պահանջելու Թուրքիային պատկանող թեկուզ մի բուռ հող կամ դատապարտել Թուրքիայի Հանրապետությանը:

«Միլիեթ», 10 հունվարի 1985 թ

Սխալ չի լինի, եթե ասենք, որ Հայկական հարցում որևէ քաղաքականություն չունենք... Մինչդեռ հայերը վերջին տասը տարվա ընթացքում քարոզչության ասպարեզում, բառիս բուն իմաստով, մեզ ոչնչացրեցին:

Թուրքական ընդհատակյա «Մեր ֆայնասփյուռը» ռադիոկայան (30 հունիսի, 1987թ.)

...Գերմանացիների գործակիցներ հանդիսացող Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների հրահանգով ավելի քան 1,5 միլիոն հայեր, որոնք բնակվում էին օսմանյան սահմաններում, բարբարոսաբար սպանվեցին, իսկ հարյուր հազարավորներ վոնդվեցին իրենց հողերից:

Ա. Հուսեյն

Ինչպես ապացուցում է ժամանակակից գիտությունը... Նոյի ջրհեղեղը ... տեղի է ունեցել 7 500 տարի առաջ... Շատ աղբյուրների վկայությամբ թուրքալեզու ժողովուրդների պապերի պապ Նուգը (Նոյը) եղել է

1. «Զարթոնք», 24 հունիսի 1985 թ.:

աստղագետ: Նա նախապես գիտեր, որ այդ իրադարձությունը (ջրհեղեղը) տեղի էր ունենալու: ...Հեռատես գիտնականը ելք էր որոնում և նախապես նավ պատրաստեց: ...Երբ սկսվեց ջրհեղեղը... նա իր նավի վրա վերցնում է մոտ 80 մարդ, սննդամթերք և յուրաքանչյուր տեսակից երկու կենդանի: Ջրի մակարդակի բարձրանալու հետ միասին բարձրանում է նաև նավը... Սակայն հետո փոթորիկի հետևանքով նավը բախվում է լեռան աննկատ գագաթին և վնասվածք ստանում: ... Վթարի ենթարկված նավի ուղևորները պատսպարվում են «Ալ գարագ» լեռան գագաթին, որը ջրից դուրս էր մնացել... իսկ ջրի հետ քաշվելու հետ միասին վար իջան... Ահա թե ինչու աշխարհում Նոյի անվան հետ առնչվող ամենաշատ տեղանունները Աղրբեջանում են: Դրանց թվում են նոյի դամբարանը և Նախիջևանի հին մասում հնագույն բերդը, ինչպես նաև Նախիջևանի ամենահին անունը՝ Նուգչիբան...

Մերձակա ժայռերի վրա փորագրված են զանազան քարտեզներ: Դրանցից մեկի վրա մեզ հաջողվեց կարդալ «Օգուզ» բառը, որը, ինչպես հայտնի է, հանդիսանում է Արաքս գետի հին անուններից մեկը:[1]

Ա. Թուրքեշ՝ թուրք քաղաքական գործիչ, ֆաշիստ

Ո՛վ թուրք, գործիր:

Արդեն մերը չեն Ռումելիան (այսինքն՝ Բուլղարիան, Հունաստանը և Հարավսլավիան), Հունգարիան, Սիրիան, Իրանը, Պաղեստինը, Եգիպտոսը, Տրիպոլիսը, Թունիսը, Ալժիրը, Ղրիմը և Կովկասը... Գործիր ինչպես գորշ գայլը: Թող վերածնվեն երբեմնի ժամանակները... Թող Թուրքիան գերիշխի բոլորի վրա... Սա վիթխարի Թուրքիան է՝ մինչև Թուրանը:[2]

Իսմեթ Ինենյու (1930 թ.)

Միայն թուրքական ռասան իրավունք ունի հաստատելու էթնիկական իրականություն իր երկրում:[3]

1. «Սովետական Նախիջևան», 1966, մայիս:
2. «Յոն» հանդես, 21 մարտի 1962 թ.:
3. Загоров Истина, истина, истина, София, 1990, стр. 151

Ջեմալ Գյուրսել

Եթե աղ անուղղելի թուրքերը (քրդերը) չխաղաղվեն, բանակը չի տատանվի կրակել և ոչնչացնել նրանց քաղաքներն ու գյուղերը: Այդ արյունալի գործողության հետևանքը կլինի ոչ միայն նրանց խռովությունների, այլև քուրդ ժողովրդի վերացումը:[1]

Ջ. Գյուրսել (1960 թ. Դիարբեքիրում)

Քրդեր չկան, բոլորը թուրք են... ամբողջ արևելքում բնակվում են միայն թուրքեր:[2]

Թ. Օզալ (1980 թ.)

Քրդեր և հայեր գոյություն չունեն:[3]

«Միլլի Յոլ» (1967 թ., թիվ 42)

Մենք՝ թուրքերս, այս հողերը վերցրել ենք մեր արյան գնով ... Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ մեզ հայերը դավաճանեցին, քրդերը, ապրելով իրենց անմատչելի լեռներում, խույս տվեցին մեր զայրույթից: Հակառակ դեպքում նրանք այդ նահանգներում ոչ թե մեծամասնություն, այլ փոքրամասնություն կկազմեին... Թուրքական հողի վրա իրենց պետությունը ստեղծելու նրանց երազանքը երազանք էլ կմնա, ինչպես ... հայերի երազանքը Մեծ Հայաստանի մասին: Թող նրանք հեռանան... քանի դեռ չեն ոչնչացվել:

1982 թ. ընդունված Սահմանադրության 66-րդ հոդված

Յուրաքանչյուր ոք, ով Թուրքական պետության քաղաքացի է, թուրք է:

«Ենի գազեթ Իսթամբուլ դեյլի» թերթ (25 նոյեմբերի 1967 թ.)

Թող հայերը հիշեն, որ ապրում են Պոլսում և փոքրամասնություն են: Թերևս... ներկայումս ցեղասպանություն կատարելը հեշտ չէ, բայց և այնպես որևէ դեպք կարող է մթնոլորտը հեղաշրջել, որից հետո Պոլսում հայ գտնելն անհնար կդառնա:

1. Загоров, Истина, истина, истина, София, 1990, стр. 151.
2. «Հուրիեթ», 25 հոկտեմբերի 1960 թ.:
3. Загоров, Истина..., стр. 151.

Միացյալ Նահանգների թուրք ուսանողների 1965 թ. հայկարարությունը

Թուրքը, զենքին ապավինելով, դեռևս քանի՞ միլիոն անիծված հայի սրի քաշելու հարմար պահի է սպասում:

Անիծյալ հայերին աշխարհի երեսից պետք է մեկընդմիշտ մաքրենք:

Դա մեր սրբազան Մարգարեի պատգամն է:

Ո՞վ իսլամական աշխարհ, լավ գիտցիր, քանի դեռ հայ թշվառականներն աշխարհի երեսից մաքրված չեն, երկրագունդը խաղաղություն և ազատություն չի ունենա:

Հանուն Մուհամեդի սիրո, յուրաքանչյուր թշվառական հայի սպանելու համար արքայության եք արժանանալու:

Շատ շուտով ձեր Հայաստանն էլ գերզմանոցի ենք վերածելու... Աստված հայ ազգի ճակատագիրը թուրքի ափի մեջ է դրել:

66 հազար պոլսահայեր մեր ձեռքում պատանդներ են, մորթելու ոչխարներ:[1]

«Միլիեթ» (26 օգոստոսի, 1986 թ.)

Չկա ոչ մի հարևան պետություն, որին Թուրքիան տարածքային պահանջ չներկայացնի:

«Թերջուման»-ը 1988 թ. ռամազանի առիթով հրատարակված իր հավելվածում գրում է

Հնդկաստանի բնակչության երակներում հոսում է թուրքական արյուն:

Թուրքերի բացատրական բառարանից

Թուրք.- Ժողովրդի անուն, որը հին ժամանակներում բնակվում էր Միջին Ասիայում: ...Այժմ այդ ժողովուրդը բնակվում է Բալկաններից մինչև Չինաստան:

«Թերջուման» (1987 թ.)

Օրակարգի մեջ են թուրքական 16 պետություններ (Թուրքիայի նախագահի պալատի դրոշակին կախված էր 16 աստղ)...

1. София-пресс, Западняя пан тюркизма, София, стр. 47.

Հարգելի նախագահը հարցրեց թուրքական պատմության մասնագետներին, թե իսկապե՞ս գոյություն ունեն թուրքական 16 պետություն: Նրան բացասական պատասխան տվին, որովհետև դրանց թիվը ավելի շատ է: Դրանից հետո նախագահը այդ պետությունների դրոշակները, որոնք կախված էին իր աշխատասենյակի խորքում, հանեց:

Ամեն առավոտ թուրքական բանակն արթնանում է հետևյալ երգի հնչյունների տակ

Կայծակներ ստեղծող ցեղի շավիղն ենք,
Փոթորիկներ ցույց տվող նահատակների երդումն ենք,
Որևէ ուժ չի կարող կասեցնել այս մրրիկ ազգին:[1]

«Թուրքիե» (23 հուլիսի 1989 թ.)

Պետք է ստեղծել արտաքին թուրքերի նախարարություն: Թուրքիան 150 միլիոն ճնշված թուրքերի հույսն է:

«Բոզքուրդ» թերթ (1942 թ.)

Ո՞վ ենք մենք: Մենք գորշ գայլեր ենք: Ո՞րն է մեր գաղափարախոսությունը: Գորշ գայլերի թուրքիզմը: Ո՞րն է գորշ գայլերի հավատամքը: Նրանք հավատում են, որ թուրք ցեղը և թուրք ազգն ուրիշ ցեղերից կամ ազգերից առավել են: Ո՞րն է նրանց գերազանցության աղբյուրը: Թուրքական արյունը...

Պատերա՞զմ: Այո, պատերազմ, եթե հարկ լինի:

1971 թ. Պոլսում լույս տեսավ Սուրեյա Այդեմիրի ինքնակենսագրական վեպը, որում զետեղված են հետևյալ չափածո տողերը

Մենք ուզում ենք իշխել արար աշխարհին,
Մեր Չուկետն է թուրք հայրենին,
Մեր Քեաբեն է բարձր և պայծառ Թուրանը,
Պահեստի սպաներ, ոտքի՛, ուղին նշմարվում է,
Ահա, տեսեք, գնում ենք Կովկաս,
Թուրանն է մեզ սպասում:[2]

1. «Հայրենիք» թերթ, Բոստոն, 13 մայիսի 1987 թ.:
2. **Զարեվանդ** Միացյալ անկախ Թուրանիա, էջ 58:

Ֆ. Թիմուրթաշիի՝ թուրք գիտնական, «Մեծ Թուրքիայի աչքերով» հոդվածից

Թուրք ազգն իր ամբողջ պատմության ընթացքում միշտ ցուցադրել է մեծ ազգի և մեծ պետության հատկություններ: Համաշխարհային տիրապետության ամբողջ աշխարհում նոր կարգեր ստեղծելու և այդ կարգերը ղեկավարելու մասին միտքը միշտ մեր ազգի համար իդեալ է եղել... Մեր ժամանակի ազգային իդեալն է Մեծ Թուրանի ստեղծումը:[1]

«Միլիեթ» (դեկտեմբեր 1988 թ.)

Մեզ համար էլ ավելի կարևոր է աղրբեջանական վերջին ցույցերին թուրքական դրոշակների ներկայությունը:

«Ջումհուրիեթ» (27 հունվարի 1989 թ.)

Ամբոխը համաթրքության կարգախոսներով կառավարությունից «օժանդակություն» և «գործակցություն» էր պահանջում հօգուտ աղրբեջանցիների: Աղրբեջանական դեպքերը կյանքի են կոչել համաթրքության կարգախոսներին:

Ա. Թուրքեշ

Բոլոր սպիտակամորթ մարդիկ ծագել են թուրքերից:

Թուրքական «Մեր ֆայնսափյուռը» ռադիոկայանի 1987 թ. հունիսի 30-ի հաղորդումը

Իր վերջին նիստում Եվրոպական խորհրդարանը նույնպես բանաձև ընդունեց Հայկական ցեղասպանության մասին: Թե՛ պրեզիդենտ Ք. Էվրենը և թե՛ վարչապետ Թ. Օզալը, այս հարցի շուրջ մեծ աղմուկ բարձրացրին՝ այն ներկայացնելով որպես Թուրքիային նվաստացնող բանաձև: Սակայն նրանք գոնե մեկ անգամ չասացին, որ այդ սև արատը Թուրքական Հանրապետության կողմից չի գործադրվել: Այդպիսով, նրանք պարտադրեցին, որ Թուրքիան կրի մեղադրանքն այն արարքների, որոնք կատարվել են Էնվերի ու Թալեաթի նմանների... կողմից:

1. «Թերջուման», 1 դեկտեմբերի 1977 թ.:

...Իրականում գերմանացիների գործակիցներ հանդիսացող Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների հրահանգով ավելի քան 1, 5 միլիոն հայեր, որոնք բնակվում էին Օսմանյան կայսրությունում, բարբարոսաբար սպանվեցին, իսկ հարյուր հազարավորները քշվեցին իրենց հողերից:

...Օսմանյան իշխանության օրոք տեղի ունեցած Հայկական ցեղասպանությունը ընդունելով՝ մենք ոչ թե կորցնում, այլ ձեռք ենք բերում հարգանք մեր նկատմամբ:

Հուսեյին Ջահիդ՝ քաղաքակն գործիչ

Կարելի է ասել, որ այդ սպանությամբ (Թալեաթի) հայկական կոմիտեները նրանից վրեժ լուծեցին ցեղասպանության համար: Սակայն հայերի բռնագաղթը մտահղացած ու իրականացրած մարդիկ դրանով փրկեցին Թուրքիան, այդ այն դեպքում, երբ գենոցիդի պատասխանատուների սպանությունը չի վերածնել հայերի իղձերը... Դեպորտացիայի վերաբերյալ որոշումը սարսափելի, սակայն երկրի համար ծայր աստիճան անհրաժեշտ որոշում էր, և ...Թալեաթն ու նրա ընկերները դրան գնացին միմիայն... հանուն երկրի բարեկեցության ու փրկության:[1]

«Հուրիեթ», 1989 թ. հունիս

Մեզ ցավ է պատճառում, որ հաճախ (արտասահմանյան) երկրների հետ հարաբերություններում գտնվում ենք ներողություն խնդրող գործընկերոջ վիճակում: «Թուրքիա» բառը մարդկանց մեջ ընկալվում է «խոշտանգում»...

Բայց ինչո՞ւ մենք որպես ազգ չենք կարողանում մեր վրայից հանել «խոշտանգող» պիտակը:

Ջ. Գյուրքան- զորահրամանատար

Ուզենք թե չուզենք... «հայոց ցեղասպանության» վրա հիմնված Հայկական հարց գոյություն ունի: Դժբախտաբար այդ հարցը միջազգային անդրադարձեր ունեցել է և արդեն Թուրքիայի Հանրապետության համար գլխացավ է դարձել... Նշված հարցը գոյություն չունեցող կամ ոչ

1. **Hüseyin Cahit Talat pasa, Yakin Tarimiz, Cilt I, s. 89.**

կարևոր համարելը (ակնարկում է Օզալին) քաղաքական հերոսության ճանապարհ է հարթում և դրանով էլ լրջության և պատասխանատվության կմղի մեր պետական այրերին:[1]

Ք. Էվրեն (17 հոկտեմբերի 1985 թ.)

«Թուրքիայի համար գոյություն ունի երեք սպառնալիք: Դրանցից առաջինը կոմունիզմի վտանգն է, որը երկար ժամանակ կախված է Թուրքիայի վրա»: Մեկ օր անց Չանքրում պրեզիդենտը հայտարարեց. «...Հենց այդ կոմունիստներն են, որ երազում են բնակչությանը իրենց կողմը գրավելով երկիրը մասնատելու մասին և չեն խուսափում անգամ հայերի հետ համագործակցելուց»:

Չանքրում ունեցած ելույթում Ք. Էվրենն ասաց. «Նրանց համար հայրենասիրություն ասած բանը գոյություն չունի: Նրանք ասում են, թե ինչո՞ւ ենք զենք գնում, ինչո՞ւ ենք ինքնաթիռաշինական գործարաններ հիմնում, ինչո՞ւ ենք ռազմանավեր, տանկեր գնում: Նրանք ամեն ինչին հակառակ են... Նրանց համար արյունն անգամ նշանակություն չունի, չեն ընդունում «թուրքական արյուն» հասկացությունը: Նրանք ասում են, որ արյունը համամարդկային է, ի՞նչ է նշանակում «թուրքական արյուն»:

Այո, այսօր թուրքական պաշտոնական քաղաքականության մեջ նորից հնչում է պանթուրքական արյան պաշտամունքը, այսինքն՝ վերադարձ դեպի երիտթուրքերի շովինիստական-ռասիստական մարդատյաց քաղաքականություն: Թուրքական բանակի 1986 թ. ծմեռային ռազմախաղերի ավարտին նվիրված արարողության ժամանակ Էվրենն ասաց, որ ի տարբերություն Առաջին համաշխարհային պատերազմի, «այսօր մեր բանակը կարող է ճեղքել այս լեռը (Արարատ) և մյուս կողմն անցնել..., որովհետև այսօր այն համալրված է զինվորական լավագույն միավորումներով և լավ վարժեցված է»:[2]

Թուրքական կառավարությունն աշխատում է նաև գիտական հիմնավորում տալ իր տարածապաշտական ձգտումներին: Այդ նպատակն էր հետապնդում 1986 թ. հոկտեմբերին կազմակերպված «Թուրքագիտական հետազոտությունները և Թուրքիան» միջազգային գիտաժողովը: Հոկտեմբերի 13-ին գիտաժողովի աշխատանքի արդյունքներն ամփոփ-

1. «Դրոշակ», 1989 թ., թիվ 1-2:
2. Թուրքական հեռուստատեսություն, 13. 10. 1985:

վեցին թուրքական հեռուստատեսության կազմակերպած «Կլոր սեղանի» ժամանակ: Գիտաժողովի մասնակիցների վկայությամբ՝ քննարկման հիմնական նյութը «թուրքաբնակ ռեգիոնի արևելյան» հատվածում, այսինքն՝ Սովետական Միությունում, բնակվող թուրքական ծագում ունեցող ժողովուրդներն էին: Նրանց կարծիքով՝ ԽՍՀՄ-ում թուրքալեզու անձանց թիվը կազմում է շուրջ 50 միլիոն: Իսկ «Սարայբոսնայից մինչև Չինաստան և Յակուտիա տարածքում այն անցնում է 140 միլիոնից: Եկող դարի սկզբներին այդ բնակչության թիվը կհասնի մոտավորապես 200 մլն-ի: Հետևաբար, նշում էին նրանք, մենք զբաղվում ենք շատ կարևոր և բազմամարդ մի էթնիկական խմբավորման ուսումնասիրությամբ: Անշուշտ, դրա կարևորությունը չի բացատրվում միայն այդ խմբավորման բազմամարդությամբ: Այն կարևոր է նաև պատմական, կուլտուրական, հոգևոր և քաղաքական տեսակետներից: Այս շրջանը աշխարհի ապագայում կարևոր դեր է զբաղեցնելու: Մարդկության ճակատագիրն այստեղ է որոշվելու: Նման աշխարհագրական դիրքի պատճառով առաջիկա 10 տարում... թուրքերը ակտիվ դեր են կատարելու մարդկության պատմության զարգացման մեջ»:[1]

«Իմ խալիֆայական մի խոսքը,- գրել է Համիդը,- բավական է սրբազան պատերազմ սկսելու համար... կգա մի օր և բոլոր հավատացյալները մեկ մարդու պես ոտքի կկանգնեն փշրելու անհավատների շղթաները: Անգլիական տիրապետության մեջ գտնվող 85 միլիոն, հոլանդական գաղութներում գտնվող 30 միլիոն և Ռուսաստանում ապրող 10 միլիոն մահմեդականները բոլորն էլ այն ժամանակ կմիանան: Չգիտե՞ն, որ 250 միլիոն մահմեդականներ ամեն օր աղոթում են ալլահին՝ իրենց աչքերը դեպի խալիֆան դարձնելով, որ մարգարեի ժառանգն է»: Աբդուլ Համիդի կարծիքով, փոքր ազգերին բարենորոգումներ շնորհելը նշանակում է «կայսրությունը կործանել» և «ինքը ուխտում է իրեն հաջորդող սուլթաններին, որ նրանք պատերազմեն հայերի անկախության դեմ»:[2]

Սուլթանին ու նրա քաղաքականությանը փոխարինելու եկան երիտթուրքերը: Նրանք թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին և համառորեն իշխանության էին ձգտում, իշխանություն, որը պետք է

1. Թուրքական հեռուստատեսություն, 13. 10. 1986:

2. **Եազճեան Գ.** Աբդուլ Համիդ 2-րդ Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980, էջ 571:

դառնար նրանց տնտեսական ու քաղաքական շահերի իրականացման միջոց: Բայց քանի որ այդ բուրժուազիան թույլ էր, իսկ երկրի տնտեսական կյանքը գտնվում էր հույների, հայերի և հրեաների ձեռքին, այդ պայմաններում ձևավորվեց ոչ թե թուրքական բուրժուական նացիոնալիզմը, այլ թուրքական մեծապետական շովինիզմը, թուրքերի ազգային բացառիկության հոգեբանությունը: Երիտթուրքերը սիրում էին ասել, որ թուրքերը 400 ձիավորով կարողացան հիմնել աշխարհածավալ կայսրություն: Եթե հավատանք երիտթուրքական պարագլուխներին, նրանք ձգտում էին տապալել «անազնիվ, ագահ և ստոր միապետին՝ Աբդուլ Համիդին, որովհետև նա «տոը ոտին չէր դնում մեծ Թուրքեստան ստեղծելու համար»:[1]

Երիտթուրքերի կուսակցության հիմնադիրներից Թեմոն քննադատում էր սուլթանին, որովհետև նա «թուրք ժողովրդին չէր հրավիրում պատժելու հայերին»:[2]

Երիտթուրքերի կուսակցությունը,- գրում է այդ կուսակցության նախկին գործիչներից մեկը՝ Մ. Ռիֆաթը, - ձգտում էր «թուրք տարրին օսմանցի մյուս տարրերի նկատմամբ տիրապետող դարձնել, նրա համար բացառիկ դիրք ապահովել, մնացած տարրերին ձուլելով կամ բնաջնջելու միջոցով Օսմանյան միությունը քանդել և նրա տեղը նոր թուրքական պետություն հիմնել...»:[3]

«Ես,- գրում է Ջեմալ փաշան,- նախ և առաջ օսմանցի եմ, իսկ դրանից հետո ես երբեք չպետք է մոռանամ, որ նաև թուրք եմ: Իմ հաստատ համոզմունքն է, որ թուրքն օսմանյան պետության հիմնաքարն է. Օսմանյան միությունն է, որ ամրացնում և հիմնավորում է թուրքական քաղաքակրթության և մշակույթի զարգացումը»:

Ուրեմն, Օսմանյան միություն ստեղծելու համար պայքարը գլխավորն էր երիտթուրքերի քաղաքականության մեջ: Իսկ բոլոր նրանք, ով-

1. **Петросян Ю.** Младотурецкого дбижение. Москва, 1971, стр. 183-194.

2. **Ջ. Կիրակոսյան** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ, 1, Ե. 1980, էջ 120:

3. **Ռիֆաթ Մ.** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհադի հայաջինջ ծրագրերը, Բեյրութ, 1966, էջ 103:

քեր այդ միությունն ստեղծել էին ուզում, նրանց «ուշադրությունը պետք է ուղղված լինի թուրքերին բարձրացնելու, նրանց թիվը ավելացնելու և նրանց գոյության հնարավորություն ապահովելու մեծ պարտականության վրա»:[1]

Երիտթուրքերի Սալոնիկի կազմակերպությունը 1911 թ. հոկտեմբերին ընդունեց հետևյալ հակամարդկային բանաձևը.

1.Համաձայն բնության օրենքների ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերի կեր դառնան:

2.Կոտորելը ազնվականության ցասումն է ստոր ցեղերի դեմ, որոնք դիտվել են որպես անարգ թշնամի:

3.Եթե որոշվել է ջարդերի ծրագիր, այն պետք է գործադրվի ամբողջությամբ՝ առանց որևէ մեկից ազդվելու և առանց տարվելու զգացմունքային ազդեցություններով: Սա անգթություն չէ, այլ գերադաս տարրի ոգու արտահայտություն:

4.Ռազմական անհրաժեշտություն է ժողովուրդների կոտորածը՝ առանց տարիքի ու սեռի խտրության:

5.Թշնամի ցեղի երեխաներին կոտորելն ազգային պաշտպանության կանխարգելիչ միջոց է:

6.Իրենց մայրերի արգանդներում իսկ այդ երեխաները ապրելու անարժան են՝ որպես աստվածամերժ շառավիղներ:

7.Կայսրության գոյությունը կախված է երիտթուրք կուսակցության ուժից և բոլոր հակամարտ գաղափարների ճնշումից:[2]

1918 թ. սեպտեմբերին Խան Խոյսկին գրել է. «Աղրբեջանը վերջապես հասել է իր նպատակին և թուրքական ժողովուրդների մեկդարյա իդեալը՝ միություն սուլթանի դրոշի տակ, իրականություն է դարձել: Վոլգայի թաթարները, Անդրկասպյան սարթերը, ուզբեկները, կիրգիզները և Խիվայի ու Բուխարայի բնակիչները Կենտրոնական Ասիայում մեծ հույսով են սպասում թուրքական ազատագրական բանակին»:[3]

Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ փաշան հայկական պատվիրակությանը հայտարարեց. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային արևմուտքից արևելք է քշում: Մենք հեռացանք Բալկան-

1. **Ջեմալ փաշա** Հայկական հարցը, Եր., 1927, էջ 17:

2. Ն. տ., էջ 18:

3. **Ահարոնեան Գ.** Խոհեր 50-ամեակի ավարտին, Բեյրութ, 1966, էջ 172:

ներից, կհեռանանք նաև Աֆրիկայից, բայց մենք պիտի տարածվենք դեպի արևելք, այնտեղ է մեր արյունը, մեր կրոնն ու լեզուն: Եվ սա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում և Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այնտեղ: Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին: Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան, պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք մեզ համար արգելք կհանդիսանաք իջնելու Քուռի հովիտը և Բաքու-Կարսն ու Ախալքալաքը կփակի մեր ճամփան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք: Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը: Մեզ պետք է երկու ճանապարհ, որոնք մեր բանակներին հնարավորություն կտան շարժվելու և պաշտպանվելու: Մի ճանապարհը՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որն անցնում է դեպի Գանձակ, մյուսը գնում է Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քուռի հովիտ: Դուք կարող եք մնալ դրանց մեջտեղում, այսինքն՝ Նոր Բայազետի և Էջմիածնի շուրջը»:[1]

Իսկ Էնվերը գտնում էր, որ «հայերը միշտ էլ եղել են և քանի դեռ կան, կլինեն մեր թշնամիները, հանգիստ չեն թողնելու մեր անատոլիական նահանգները և ավելի լավ է նրանց հիմնովին բնաջնջենք նաև Կովկասում, ինչպես այդ արվեց Թուրքիայում: Կովկասում փոքրիկ Հայաստանը պատճառ է դառնալու, որ միշտ ձգտի ընդարձակել իր սահմանները և դառնալ հավիտենական վտանգ Թուրքիայի համար»:

Եվ ապա՝ «Կայսրությունը պետք է մաքրել հայերից ու լիբանանցիներից: Առաջիններին մենք կոչնչացնենք սրով, երկրորդներին՝ սովով»:[2]

Առաջին աշխարհամարտի նախօրյակին նա նշեց. «Ողղպատյա բանակաների տեր Գերմանիան մեզ թիկունք կկանգնի ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասն ու Եգիպտոսն էլ երիտթուրքերի տաիրապետության տակ առնելու և Թուրքիան աշխարհի ամենահզոր կայսրության վերածելու»:[3]

1. **Խատիսեան Ս.** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 70:

2. «Շարժում», 07. 10. 1935:

3. ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, Եր., 1985, էջ 13:

«Մենք մի արատ ունենք, որ պիտի մաքրենք»՝ դա «հայերից Թուրանի ճանապարհի մաքրումն ու թուրքական միության ապահովումն է»:[1]

Ջեմալ փաշան հայերին հայտարարել է. «Մենք վերացնում ենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ խանգարում է մեր նպատակին հասնելուն: Դուք միշտ ռուսների հետ եք, դուք նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են»:[2]

Այդ նույն օրերին դոկտ. Նազըմը բացականչեց. «Ո՜վ թուրք, տեսնում եմ, որ բախտիդ արևը պիտի ծագի. Թուրանի ճամփան բացվելով լույսերն աչքեր պիտի շլացնեն»:[3]

Երիտթուրքերի այս ցնորամիտ երազանքները տարածվում էին ամենուր և հայտնի էին շատերին: Այդ մասին օտարերկրյա դեսպաններն իրենց կառավարություններին զեկուցագրեր էին գրում: Այսպես, օրինակ, Շվեյցարիայում Ֆրանսիայի դեսպանը 1918 թ. ապրիլի 18-ին գրել է իր կառավարությանը. «Մենք ձեզ արդեն հայտնել ենք այն մեծ հույսերի մասին, որ տածում է Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի ժառանգությունների նկատմամբ և այն փորձերի մասին, որպեսզի նախկինում ցարական տիրապետության տակ ապրող թուրք ժողովուրդներին միացնի Կ. Պոլսին: Ռուսաստանում, 1918թ. փետրվարի 20-ի համարում գրել է «Թերջուման վի հակիքաթ» թերթը, գոյություն ունի թուրանական աշխարհը, որ տարածվում է մինչև Չինաստանի և Աֆղանստանի սահմանները, ընդգրկելով Կասպից ծովը, և որի ազգաբնակչության 90 տոկոսը մերձենում է թուրքական ռասային:

Այս պլանները տվյալ փուլում ավելի կոնկրետ վերաբերում են Կովկասին և Ղրիմին: Թուրքիային Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների զիջումը նրա համար դարձավ առաջին քայլը իր նպատակների իրականացման ճանապարհին, և այս իրական հաջողությունը ոգևորել է նրան իր եսասիրական պլանների հետագա զարգացման համար...»:[4]

Երիտթուրքերը, կազմակերպելով հայերի ցեղասպանությունը, միաժամանակ նպատակ ունեին տիրանալու նրանց ունեցվածքին և օգտագործելու այն ինչպես ռազմական ծախսերը, այնպես էլ մահմեդական

1. "Be Ori ent", 21.09.1914.
2. **Ահարոնեան Գ.** նշվ. աշխ., էջ 175:
3. **Ռիֆաթ Մ.** նշվ. աշխ., էջ 22:
4. ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, Եր., 1980, էջ 40-41:

քաղցած բնակչությանը բավարարելու համար: Երիտթուրք գործիչ Նայիմ բեյը գրում էր. պատերազմը նոր էր սկսվել, երբ «Թուրքիայում ծայր առան քաղցն ու թշվառությունը: Այս թշվառներին (թուրքերին) խաբել, կշտացնել էր պետք, և այդ կարող էին անել հայերի թողնելիք ապրանքներն ու դրամը: Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ Ազիզի, Սվազի նահանգներում հայերի ջարդ ու կողոպուտ սկսվեց: Այս զբաղմունքը ժողովրդին ամեն ինչ մոռացնել էր տալիս»:[1]

Կ. Պոլսի «Բոզքուրդ» թերթը 1942 թվականի մարտի 5-ին գրել է. «Ո՞վ ենք մենք: Մենք գորշ գայլեր ենք: Ո՞րն է մեր գաղափարախոսությունը: Գորշ գայլի թուրքիզմը: Ո՞րն է գորշ գայլերի (թուրքերի) հավատամքը: Նրանք հավատում են, որ թուրք ցեղը և թուրք ազգը ուրիշ ցեղերից կամ ազգերից առավել են: Ո՞րն է նրանց գերազանցության աղբյուրը, թուրքական արյունը: Արդյո՞ք թուրքն ի ծնե գերազանց է: Թուրքը գերազանց է ի ծնե»: «...Գորշ գայլերը պանթուրքի՞ստ են: Այո: Գորշ գայլ թուրքերի սրբազան նպատակն է տեսնել թուրքական պետությունը 60-միլիոնանոց ազգ դարձած: Ի՞նչ պետք է լինի քո արդարացումը (խնդիրը) դրա համար: Գորշ գայլերը վաղուց են հռչակել «արդարությունը չի տրվում, այլ բռնագրավվում է» սկզբունքը: Պատերա՞զմ: Այո, պատերազմ, եթե անհրաժեշտ է...»:[2]

1960 թ.լույս տեսած «Թուրք ջիլիյե Գիրիշ» գրքում կարդում ենք. «Թուրքիայի 20-միլիոնանոց դինամիկ համախմբումը և հյուսիսի ու արևելքի 30 միլիոններին (թուրքական ցեղերին) երկար զսպել հնարավոր չէ: Եթե թուրքիզմն ու Թուրքիան պիտի ապրեն, ապա պետք է առանց ժամանակ կորցնելու միանան և կազմեն 60-միլիոնանոց թուրք ազգ»:[3]

1985 թ. ապրիլի սկզբներին պաշտոնական այցով Վաշինգտոն ժամանեց Թուրքիայի կառավարության նախագահ Թ. Օզալը: Այդ այցելության նպատակներից մեկը Հայկական հարցի շուրջ ԱՄՆ-ում ծավալված շարժումների ու քննարկումների խափանումն էր: Եվ դա Օզալին հաջողվեց: Այցելության ժամանակ նա հանդիպումներ ունեցավ Ռեյգանի, Շուլցի, Բուշի, Ուայնբերգերի և այլ պաշտոնական անձանց հետ: Նրանք բոլորը Օզալին հավաստիացրին, որ «հայերի հարցի վերաբեր-

1. **Անտոնեան Ա.** Մեծ ոճիր, Բեյրութ, 1977, էջ 240:

2. **Ահարոնեան Գ.** նշվ. աշխ., էջ 177-178:

3. Ն. տ., էջ 179:

յալ կոնգրեսի վերջին ժամանակների ընդունած որոշումների առթիվ Թուրքիայի անհանգստությունը հասկանալի է: Մենք ամեն ինչ կանենք այդ որոշումները վերանայելու համար»:[1]

Օզալն իրավացի էր. նա լավ էր ճանաչում ԱՄՆ-ի քաղաքական լիդերներին: Եվ իսկապես, երբ 1985 թ. դեկտեմբերի 10-ին կոնգրեսում նորից քննարկման դրվեց «Հայկական բանաձևը», Շուլցը կոնգրեսին մի նամակ հղեց, որով հիշեցնում էր, թե ինչ ծանր հետևանքներ կունենա այդ բանաձևի ընդունումը, իսկ Ռեյգանը կոնգրեսմեններին հավատացնում էր, որ այդ բանաձևի ընդունումը կվնասի Արևմուտքի անվտանգությանը:[2]

1986 թ. հուլիսի 9-ին Թուրքիայի պրեզիդենտ Ք. Էվրենը, Էրզրումի մոտ գտնվող Ալաջաքյոյու բնակավայրում, հանդիսավորությամբ բացեց 1918 թ. «հայ ավազակների» կողմից սպանված 278 թուրքերի հիշատակը հավերժացնող հուշարձանը: Թուրքական հեռուստատեսության կարծիքով, այդ թուրքերը «սպանվել են դոկտոր Ազարևի, գնդապետ Մորելի և Անդրանիկի հրամանատարության ներքո գտնվող ավազակների կողմից... Սպանված թուրքերի հագուստներն այրված են, լաթերը՝ կպած կմախքներին, դրանց կողքին հայտնաբերվել են Դուրաններ, թուրքերի կողմից օգտագործվող զարդեր, գլխաշորեր, արծաթյա դրամներ և կանացի հյուսած մազեր»:

Դեռ նախորդ օրը, հանդես գալով Իգդիրում, նախագահն ասաց. «Իգդիրի շրջանի բնակչությունը տարբեր ժամանակներում բազմիցս ենթարկվել է հայերի կազմակերպած ջարդերին: Հայերն այդքան կոտորածներ են կազմակերպել և հիմա վեր են կացել ու այնպիսի աղմուկ են բարձրացնում և այնպես են ներկայացնում աշխարհին, թե ոչ թե մենք՝ թուրքերս ենք կոտորվել, այլ մենք ենք նրանց կոտորել: Բռնություններ ու ջարդեր կատարողները հենց հայերն են: Դրանով հանդերձ, թուրք ազգը լռակյաց տարել է այդ բոլորը, ջարդերի շուրջ աղմուկ չի բարձրացրել և կարիք էլ չի զգացել աշխարհով մեկ այդ մասին գոռալու: Ջարդերը գրքերում են մնացել: Բայց քանի որ հայերն այլ երկրներում հուշարձաններ են կառուցում՝ նվիրված թուրքերի կողմից կոտորված հայերին, հետևաբար մենք կկառուցենք ավելի մեծ հուշարձաններ, քան հայերն են կառուցում»:[3]

1. Թուրքական հեռուստատեսություն, 19. 10. 1985:
2. «Մարմարա», 11. 12. 1985:
3. Թուրքական հեռուստատեսություն, 27. 08. 1966:

Ալաջաքյոյում Էվրենը հայտարարեց. «Թուրքերը պատմության ընթացքում երբեք չեն միջամտել տվյալ վայրի բնակչության կրոնին, լեզվին ու սովորույթներին, իրենց հետ այդ վայրերն են տարել մարդասիրություն, արդարություն, լուսավորություն և գիտություն: Թուրք ազգը ոչ մի ժամանակ ջարդ չի կատարել...

Թուրքերը պատմության ընթացքում լավ հարաբերություններ են ունեցել հայերի հետ, սակայն հայերը միշտ էլ դավաճանական նպատակներ են հետապնդել թուրքերի նկատմամբ՝ ընդմիշտ վառ պահելով այդ ստոր նպատակները... Հայերը, օգտվելով այն հանգամանքից, որ թուրքական զորքերը պարտության մատնվեցին Առաջին համաշխարհային պատերազմում, ոտքի ելան, պնդելով, թե այս հողերը իրենց են պատկանում, փորձեցին տիրանալ տվյալ տարածքին... Սակայն երբ դա հայերին չհաջողվեց, նրանք սկսեցին կոտորածներ կազմակերպել...»:[1]

Հաջորդ օրը Էվրենը, ելույթ ունենալով Էրզրումում, ասաց. «Երբ Թուրքիան ընկնում է ընդվզումների մեջ, երբ խախտվում է ազգի միասնությունն ու համերաշխությունը, զուգահեռաբար նկատելի է նաև հայերի հողային պահանջների աճը: Սակայն ազատագրական պատերազմից հետո հազարավոր զոհերի արյան գնով ձեռք բերված մեր սահմանների ներսում մենք չենք կարող թույլ տալ մեկ այլ պետության կազմավորում: Եթե նրանք կարող են, ապա թող գան և հողերը վերցնեն»:

Թուրքիայի ղեկավարներն ահա այսպես, իրականությանը ճիշտ հակառակ են ներկայացնում Օսմանյան կայսրությունում հայերի վիճակն ու 1915 թ. ցեղասպանությունը:

Հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա զանգվածային հարձակումը արդի Թուրքիայում, իրոք, դարձել է պետական քաղաքականություն: Այն խնդիր ունի ոչ միայն ժխտելու հանրահայտ փաստը, որ Արևմտյան Հայաստանն է եղել հայերի բնօրրանը, այլև մերժելու, որպես էթնիկական միավոր, հայ ժողովրդի գոյությունը:

1982 թ. Անկարայում, պրեզիդենտ Էվրենի հովանավորությամբ, լույս տեսավ արտաքին քաղաքականության ինստիտուտի պատրաստած «Հայկական հարց. ինը հարց, ինը պատասխան» գրքույկը, որ Արևմուտքի գրեթե բոլոր լեզուներով տպագրվեց ու տարածվեց աշխարհի շատ երկրներում: Այն նախատեսված է հարցին անտեղյակ ընթերցող լայն շր-

1. Թուրքական հեռուստատեսություն, 09. 07. 1966:

ջանների համար և կառուցված է փաստերի կամայական ընտրության և մեկնաբանության վրա:

Գրքույկում երրորդ հարցը ձևակերպված է հետևյալ կերպ. «Թուրքերը դարերի ընթացքում ձգտե՞լ են հայերին հավատափոխել և հարստահարել»: Հետևում է կեղծիքներով լի պատասխանը.

«Հաստատելու համար Օսմանյան կայսրության դեմ ցեղասպանության իրենց մեղադրանքը, հայ պրոպագանդիստները հայտարարում են, որ թուրքերը միշտ վատ են տրամադրված եղել ոչ մահմեդականների և, հատկապես հայերի նկատմամբ... Դեռ ավելին. հայերը փորձում են աղճատել թուրքական ինքնությունը՝ ստեղծելով տպավորություն, որ իսլամի ու քրիստոնեության միջև պայքար միշտ եղել է, որպեսզի ժամանակակից քրիստոնյա աշխարհին հեշտությամբ ընդունել տան հակաթուրքական պրոպագանդան»: Մինչդեռ օսմանցիները «վերացրին հայ եկեղեցիների, վանքերի վրա բյուզանդացիների դրած բոլոր հարկերը: Դրա փոխարեն սելջուկները հայ փոքրամասնությանը հնարավորություն տվեցին, որ հայերը համայնքի ներքին գործերը ղեկավարեն իրենց հայեցողությամբ, ներառյալ կրոնական և կրթական գործը: Եվ երբեք հայերն ու ոչ մահմեդական մյուս փոքրամասնությունները իսլամի դեմ չեն գործել: Ավելին, հայ հոգևոր առաջնորդները միշտ էլ շնորհակալություն են հայտնել...

Հայ համայնքը զարգանում և բարգավաճում էր շնորհիվ այն ազատության, որ տալիս էր նրան սուլթանը: Նրանք շահեցին սուլթանների վստահությունը ու դասվեցին կայսրության «հավատարիմ համայնքների» շարքը»:

Թուրքական «Թերջուման» թերթը նույն միտքը հետևյալ կերպ է հրամցնում. «Մերձավոր Արևելքի և Բալկանյան ժողովուրդները հիշում են, թե ինչով վերջացավ արդարության ու հավասարության մարմնացում հանդիսացող թուրք օսմանների դեմ պայքարը: Նրանցից շատերը մինչև օրս դեռ չեն ազատվել ոստիկանությունից, դաժան բռնությունից և սովետական բռունցքից... իր 600-ամյա պատմության ընթացքում Օսմանյան կայսրությունը երեք մայր ցամաքների ժողովուրդներին ապահովել է խաղաղ կյանք և նրանց պաշտպանել արտաքին թշնամուց: Այս պատմական ճշմարտությունը թող հիշեն հայերը, հույները, հրեաները, սիրիացիները, պաղեստինցիները, Միջին Արևելքի, Բալկանների ժողովուրդները և արդի Թուրքիայի սխալ դաստիարակված թուրքերը»:

1971 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Քեմալ Օզկայայի «Հայ ժողովուրդը և թուրք ժողովրդին ստրկացնելու փորձերը» գիրքը, որտեղ կարդում ենք. «Երբեք որևէ պարտված, հնազանդ ժողովուրդ, որևէ էթնիկական կամ կրոնական փոքրամասնություն այդպիսի արտոնություն չի ունեցել աշխարհի որևէ երկրում»: Որպես փաստարկ նա վկայակոչում է այն, որ Աբդուլ Համիդ 2-ը իր առաջադրությունը «վստահում էր հայ բժիշկներին»: Հեղինակի կարծիքով՝ հայերն ավելի լավ վիճակում էին, քան թուրքերը և «բարենորոգումներն ավելի շատ թուրքերին էին անհրաժեշտ, քան հայերին»:

Մի քանի մեջբերումներ կատարենք նաև թուրքական ռադիոհաղորդումներից, մասնավորապես «Հայկական թղթապանակ» արաբերեն հաղորդաշարից: «Թուրքիայում ամենաարտոնյալ ազգային փոքրամասնությունը,- ասված է այդ հաղորդաշարում,- երկար ժամանակ եղել են հայերը... բոլոր հայերը առանց բացառության ապրում էին բարեկեցիկ կյանքով և առանցքային պաշտոններ էին գրավում առևտրում ու արվեստում... Բացի այդ, հայերը թուրքերին անգնահատելի ծառայություն են մատուցել ազգային երաժշտության, թատրոնի և նույնիսկ թուրքական լեզվագիտության ստեղծման գործում»:[1]

«Հայերի հասարակական և տնտեսական վիճակը, համեմատած թուրք բնակչության վիճակի հետ,- ասված է հաղորդաշարի 1984 թ. ապրիլի 8-ի թողարկման մեջ,- շատ ավելի լավ էր: Բայց գաղութատիրական պետությունները, որոնք հարմար առիթ էին փնտրում օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու համար, հրապարակ նետեցին Հայկական հարցը»: «Հայկական հարցը արհեստականորեն առաջ քաշեցին օսմանյան պետության նկատմամբ գաղութատիրական նպատակներ ունեցող պետությունները» (ապրիլի 22-ի թողարկումից):

«Հայերն օգտվում էին բոլոր իրավունքներից, որոնք նախատեսված էին մահմեդականների համար, դրան գումարած որոշ այլ առավելություններ... (հայկական) համայնքը, ընդունելով օսմանյան մշակույթն ու կյանքի ձևը, «հավատարիմ ազգ» կոչումը ստացավ... Մինչև 1877- 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը Հայկական հարց գոյություն չի ունեցել» (ապրիլի 29-ի թողարկումից):

«Ռուսաստանի հրահրումները պատճառ դարձան, որ Թուրքիայում բնակվող հայերի մեջ զավթողական ոգի առաջանա... հայկական շարժումների նպատակն էր Արևելյան Անատոլիան (Արևմտյան Հայաստանը) միացնել Ռուսաստանին» (մայիսի 27-ի թողարկումից):

1. ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, թիվ 5, էջ 25:

Հայերը, եթե հասկանային, թե Թուրքիան իրենց համար ինչպիսի դրախտ է, «ապա ամեն օր իրենց աղոթքներում կփառաբանեին թուրքերին, որովհետև այնպիսի ազատություն ու հանգիստ կյանք, ինչպիսին նրանք ունեցել են և ունեն Թուրքիայում, աշխարհում ոչ մի տեղ գտնել չեն կարող:[1]

Ա. Դելիորմանի «Հայկական կոմիտեականները ընդդեմ թուրքերի» գրքում կարելի է կարդալ հետևյալը. սուլթան Համիդը համիդիե գնդերը ստեղծեց Սասունի «15 հազար մահմեդական բնակչությանը հայ կոմիտեականներից» պաշտպանելու համար: Նա «մեղմ քաղաքականություն» էր վարում, որի հետևանքով հայերի հարձակումներից տուժում էին «խեղճ թուրքերը»:

Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու գաղափարը ռուսների դիտավորությունն էր՝ իրականացնելու Օսմանյան կայսրությունը քրիստոնյա պետություններով շրջապատելու և նրան «ռուսների ճնշման տակ գտնվող մահմեդականներից կտրելու» քաղաքականությունը:[2]

Հակառակ պատմական իրականության, թուրքական մի պաշտոնական փաստաթղթում, սևով սպիտակի վրա գրված է. «Այն ժամանակվա մեծ կայսրություններից միայն Օսմանյան կայսրությունն էր, որ հպատակների նկատմամբ ճնշումներ չէր գործադրում: Ավելին, նա ճանաչում էր կրոնական համայնքների լրիվ ինքնավարությունը... արդյո՞ք ծիծաղելի չէ մեղադրել օսմանցիներին, որ իբր նրանք ճնշում էին հրեաներին, հույներին և հայերին, այն ժամանակ, երբ օսմանցիները ճանաչել էին նրանց ինքնորոշման, սեփական լեզվի ու մշակույթի օգտագործման, սեփական դպրոց և մանկապարտեզ ունենալու իրավունքը և երբեք չեն միջամտել նրանց գործերին: Օսմանյան կայսրությունը չէր ճնշում ոչ մուսուլմանական փոքրամասնությանը և չէր աշխատում հարկադրել նրանց ընդունելու իսլամը... Մինչև իր անկումը Օսմանյան կայսրությունը եղել է այն անկյունը, ուր օթևան են գտել աշխարհի բոլոր հալածվածները»:[3] «Արդարև, (հայ) գյուղացիները,- գրում է թուրք պատմաբան Օ. Նուրին,- տանջվում էին, ողբում, սակայն խաղաղության, հանգստավետության և

1. «Հուրիեթ», 26 սեպտեմբերի 1927 թ.:

2. ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1977, թիվ 3, էջ 8:

3. Ն. տ., 1982թ., թիվ 5, էջ 30:

առևտրի վարժված մարդիկ, հատկապես պետական պաշտոնական տների բազմաթիվ ծառայողներն ու պաշտոնատարները, երբեք չէին գանգատվում»:[1] Ռուս լրագրող Գ. Ն. Դիլը, 1891 թ. դիմելով իր թուրք գործընկերոջը, գրել է. «Հայկական հարցում ճիշտ կողմնորոշվելու համար, ամենից առաջ, երևակայական գրգռողների մասին հեքիաթի փոխարեն, պետք է գլխից դուրս շպրտել հայ ռայայի նկատմամբ օսմանցիների կարծեցյալ «մեծահոգությունը» և հայերի ահավոր «սև երախտամոռությունը»»:

«Ավելի քան 600 տարի, Փոքր Ասիայում թուրքական տիրապետության հաստատումից հետո, բազմաչարչար հայ ժողովուրդը..., այդ իսկպես որբ ժողովուրդը, գտնվել է թուրքերի իշխանության տակ, բութ հուսահատությամբ տանելով կոտորած, բռնություն և հարստահարություն, որի համար հաճախ նրան նախատում են պատմության կողմից երես տված ժողովուրդները: Հետագայում ոռոգելով հողը, որտեղ հանգչում են իր անթիվ նախնիների աճյունները, ծանր հառաչելով իր անդրջրհեղեղյան չութի վրա, որի բնապատկերը կարելի է տեսնել եգիպտական վանքերի զարդաքանդակներում, հայերը աղաչում էին թուրքերին միայն մի բան, որպեսզի փաշաներն ու վայրենի գազանները ձեռք չտային իրենց կանանց ու երեխաներին, իրենց ողորմելի փշրանքներին, որ ձեռք էր բերվել հողագործի ծանր աշխատանքով»:[2]

Նրանք կրկնում են թուրքական պատմաբանների այն թեզը, թե մինչև 1877 թ. Հայկական հարց չի եղել, որովհետև հայերը կայսրության մեջ ապրել են ազատ և լիիրավ կյանքով: «Հայերը,- կարդում ենք նրանց գրքում,- ազատ էին տնօրինելու իրենց սեփական կյանքը, ինչպես սուլթանի մյուս բոլոր հպատակները: Հայերն ունեին փաստական ինքնուրույնություն: Թուրքերի ու քրդերի վիճակը ավելի լավ չէր, քան հայերինը: Եվ եթե կային տնտեսական ու սոցիալական պրոբլեմներ, ապա դրանք ոչ թե հետևանք էին հայահալած քաղաքականության, այլ առաջ էին գալիս բյուրոկրատիայի և խոշոր հողատերերի ինքնագլխությունից»:

Հայտնի իրավաբան-միջազգայնագետ Լ. Ա. Կամարովսկին թուրքական վարչակարգն անվանել է «ամեն տեսակ ստի և բռնության խորհրդանիշ»: «Կ. Պոլսի գրավումից հետո,- գրել է «Լը Նորդ» թերթը

1. **Սաֆրաստյան Ս.** Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասում մյուս դաշնակիցների մասին, Ե., 1972, էջ 172:

2. "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году". М. 1896, стр. 387.

1892 թ. հունիսին,- անցել է 4,5 հարյուրամյակ, քաղաքակրթության փոքրագույն իսկ հետք չթողնելով ասիական քոչվորների ժառանգների վրա: Ինչպիսին նրանք եղել են 6 դար սրանից առաջ, երբ Թուրքեստանի լեռներում ու հարթավայրերում իրենց գոյությունը պահպանում էին թալանի միջոցով, այդպիսին էլ նրանք մնացին մինչև օրս, երբ կոտորում ու խեղդում են հազարավոր քրիստոնյաների, որպեսզի տիրանան նրանց ունեցվածքին»:

«Արտասահմանյան երկրներից,- շարունակում է թերթը,- միայն Ռուսաստանը ճիշտ պատկերացում ուներ այդ հանցագործ պետության մասին. նախկին քոչվորների դաժանության ու գազանությունների մասին նա իմացավ իր կրոնակից եղբայրներից, որոնք թուրքական չարագործություններից փախել էին նրա պաշտպանության տակ... Թուրքիան չի փոխվել և հարազատ է մնացել իր նախկին բարբարոս ավանդներին... Թուրքիան 19-րդ հարյուրամյակի այս վերջին տարիներին մնացել է այն նույն սոցիալական, բարոյական, մտավոր և կառավարող վիճակում, որը նա ձեռք բերեց 1300 թվին, երբ... բարբարոս հորդան հիմնավորվեց Կարա-Կիսատի մոտ...»:

***

Այժմ մի քանի փաստերով ցույց տանք հատկապես հայ ժողովրդի ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում:

16-րդ դարի օսման պատմագիր Փեչևի Իբրահիմը նկարագրել է թուրքական գազանությունները Արևելյան Հայաստանում 1551-1554 թթ.: Երբ թուրքական բանակը առաջ շարժվեց Նախիջևան և Սյունիք, գրում է Փեչևին, նրա անցած ճանապարհը ավերակի վերածվեց: «Բնակչությունն այն աստիճանի էր ցրվել ու ոչնչացել, որ մարդու հետք անգամ չէր մնացել»:

«Անսահման էր նաև թալանված ու կողոպտված բազմատեսակ թանկագին ապրանքների քանակը: Արտաքինից արծաթի նման մարմին ունեցող նորաբողբոջ սիրեկան տղաների, նորահաս և վարդանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկների, աննման և չքնաղ, գեղատեսիլ ու մանկամարդ հարսների թիվը հորինող գրիչս անգամ անկարող է արտահայտել...»:

Սուլթանի անձնական քարտուղար Իսմեթ փաշան, պետական գանձարանից օտարերկրյա մի ֆիրմայի տուգանք վճարելու համար, գրպա-

նում է 650 հազ. ֆրանկ, պետությանը հասցնելով 2,2 միլիոնի վնաս: Երբ սուլթանին այս փաստը հայտնի դարձավ, նա իր հիացմունքը հայտնեց Իսմեթ փաշային այդ ճարպկության համար: Հետագայում, երբ Իսմեթը Թուրքիայից փախավ, իր հետ տարավ մեքենայությունների ու զանազան խարդախությունների միջոցով դիզած 15 միլիոն ֆրանկ հարստություն: Գանձարանից 10 միլիոն ֆրանկ էր կողոպտել պետական գույքերի նախարար Մելիամեն:

Ֆինանսների և հասարակական աշխատանքների նախարար Զիհնի փաշան կաշառքի նվազագույն չափ էր սահմանել՝ 500 հազ. ֆրանկ: Միայն Բաղդադի երկաթուղու շինարարությունից նա կորզել էր մեկ միլիոն ֆրանկ:

Ծովային նախարարության աշխատողները զբաղված էին նավատորմի թալանով ու սպեկուլյացիայով: Վաճառքի էր հանվում ամեն ինչ՝ սկսած «կոչումներից, պաշտոններից, հումքից, վերջացրած շոգենավերի ծխնելույզներով»: Գնումներ կատարելու և պատվերներ տալու համար նախարարությանը հատկացված միջոցների 9/10-ը յուրացվում էր:

Կաշառակերությունից հատկապես տուժում էր բանակի մատակարարումն ու սպասարկումը: Իսկ բանակը կայսրության կյանքում վճռական գործոն էր: Զինված ուժերին ամեն տարի հատկացվում էր 100 միլիոն ոսկի, բայց, չնայած դրան, զինվորը թշվառ վիճակում էր: Այդպես էլ չհաջողվեց բանակը վերակառուցել: «Թուրքական բանակը,- գրում է գերմանական ռազմական մասնագետ Մոլթկեն,- այդ ռուսական պարեգոտն էր, ֆրանսիական կանոնադրությունը, բելգիական զենքը, հունգարական թամբը, անգլիական սուրը, բացի գլխարկից, որ թուրքական էր»:

Մոլթկեն բերում է բանակի վերակացուի օրինակը, որը Եդեսիայում միայն մի քանի ամիս աշխատեց, բայց պաշտոնավարության այդ կարճ ժամանակը բավարար էր մեծ հարստություն դիզելու համար: Երբ նա այլ վայր աշխատանքի մեկնեց, ապա 1000 ձիու կարիք ուներ այդ հարստությունները տեղափոխելու համար:

«Կաշառքը,- շարունակում է Մոլթկեն,- սովորություններից ավելի օրինական դարձավ: Ստորադաս պաշտոնյան չէր կարող մոտենալ վերադաս պաշտոնյային առանց որևէ նվեր տալու: Դատարանում դատախազի նվիրական պարտականությունը վճիռ արձակելը չէր, այլ նրա անձնական կամքը, անշուշտ, միշտ օրենքին և արդարությանը հակառակ... բայց կայսրության ամենամեծ կաշառակերը սուլթանն էր: Կուսա-

կալության (պաշտոնի) վաճառքը, թեև սուլթանի համար եկամուտ էր, սակայն ինքնին անմարդկային էր: Կուսակալության (պաշտոնը) գնող փաշան այն հարյուրապատիկ տոկոսով վճարել էր տալիս խեղճ ժողովրդին... գանձած հարկերի հարյուրից միայն տասն էր կառավարության դրամարկղը մտնում»:[1]

Զուլումի տարիների ականատես գրող Խ. Ուշագըլգիզը գրում է. «Ամբողջ երկիրը, վիլայեթներից մինչև կազաներ, ներսից ու դրսից ուտում էին որդերը: Երկրի բոլոր հարստությունները կառավարությունը ուղղում էր պալատի անկուշտ երախը: Ծառաներն ընտրվում էին դավաճաններից, նախարարները՝ գողերից, ստոր մարդկանց ու սրիկաներին շնորհվում էին բարձր պաշտոններ, շքանշաններ էին կախվում համազգեստներից, որոնց ներսում կեղտից բացի, ոչինչ չկա...»:[2]

Գյուղացին թալանվում էր, կորցնում իր ունեցվածքը, ընկնում պարտքի տակ: Բիթլիսի Ջրհոր գյուղն ուներ 60 տուն, որից միայն 5-ը պարտք չուներ: 30 ընտանիքներ պարտքի դիմաց կորցրել էին իրենց հողերի կեսը, իսկ 25 ընտանիք ամբողջապես հողազուրկ էր դարձել: Գյուղացու թալանին ամենաեռանդուն մասնակցություն ունեին վաշխառուները, իսկ վաշխառությունը տարիների ընթացքում դարձել էր մահմեդականների մենաշնորհը:[3]

Մ. Մակքոլը նշում էր, որ բոլորի համար պարտադիր հարկերից բացի, քրիստոնյան պետք է մուծեր նաև հետևյալ լրացուցիչ տուրքերը.

-գլխահարկ, որը կոչվում էր «ստորացնող» և գանձվում էր տվյալ տարին ապրելու (գոյություն ունենալու) իրավունքի համար,

-հատուկ հարկ զինվորական ծառայության դիմաց... Այս հարկը գանձվում էր արական սեռի երեք ամսականից բարձր բոլոր հպատակներից,

-ժամանակավոր նպատակների համար հատուկ հարկեր, որոնք, սակայն, այլևս երբեք չէին վերացվում: Օրինակ, 1867 թ. քրիստոնյաների վրա հատուկ հարկ դրվեց, որպեսզի վճարվի Անգլիայում սուլթանի ուղևորության ծախսերը: Մեկ տարի ժամանակով նշանակված այդ հարկը 90-ական թվականներին դեռ գոյություն ուներ,

1. ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1984, թիվ 7 , էջ 46-47:
2. ՀԽՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, թիվ 3, էջ 21:
3. **Պողոսյան Հ.** Սասունի պատմությունը, Եր., 1975, էջ 124:

-երբեմն քրիստոնյաներին հարկադրում էին նախապես վճարել 1-2 տարվա հարկերը, խոստանալով, որ տվյալ տարիների համար այլևս հարկ չեն հավաքի: Սակայն այս խոստումները երբեք չէին կատարվում:

Էրզրումում Անգլիայի հյուպատոս Կ. Լլոյդը 1890 թ. հոկտեմբերի 2-ին գրում է. «Հայ ազգաբնակչությունը ներկա ժամանակում հարկ վճարել չի կարող քրդերի կողմից թալանվելու պատճառով...

...Քրիստոնյաները հարևան քրդերի գործողությունների հետևանքով հասցվել են աղքատության, որոնք թալանել ու այրել են նրանց հունձքը, և չեն կարող մուծել իրենց հարկերը... Սա զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ կառավարական հարկերը վճարելուց հետո գյուղացուն բաժին է մնում իր հունձքի միայն 30 տոկոսը»:

«Մեղու Հայաստանի» թերթը 1876 թ. նոյեմբերի 6-ին տպագրեց մի հոդված՝ Տրապիզոնի հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների մասին՝ «այնպիսի մի բարբարոսություն, որ միայն փարավոնների ժամանակներում է գոյություն ունեցել»:

Վարչական պաշտոնների վաճառքը, պաշտոնատար անձանց առանց աշխատավարձի թողնելը, հարկերի հավաքումը կապալով տալը, հարկերի գանձման բարբարոս մեթոդներն ու նրանց չափերի կամայական փոփոխությունները, հատկապես հայ ազգաբնակչության համար, ստեղծել էին արտակարգ ծանր վիճակ: Բայց, ինչպես նշում են մասնագետները, պետության կողմից օրինականացված հարկերը միայն աննշան մասն էին կազմում կամայական հարկումների, որոնցով «տեղական իշխանությունները սիստեմատիկաբար հարկադրում են բնակիչներին»:

Կարինում անգլիացի հյուպատոս Էվերստը գրում է. «Միայն համբերությամբ, վախով և բնակչության տարբեր խավերի միջև սերտ կապերի բացակայությամբ կարելի է բացատրել, որ արևելյան սանջակներն անցյալ տարի հարկերը գանձելիս մի մարդու պես չապստամբեցին կառավարության դեմ... այդ դժբախտներին ամենաանգութ կերպով հետապնդում էին հարկահանները՝ նրանց բանտ էին նետում, երբ նրանք ի վիճակի չէին լինում հարկեր վճարել...»:[1]

Մի շարք կազաներում հարկերի գանձման իրավունքը գնած ընկերությունը «մտադիր է այս տարի ևս, անցյալ տարվա պես, հացահատիկը ձմռանը վաճառել աներևակայելի բարձր գներով... Անասնակեր չլի-

1. Հ. Ղազարյան Ցեղասպան թուրքը, էջ 319:

նելու պատճառով մեծ քանակությամբ ոչխարներ սատկեցին: Չնայած դրան, սատկած ոչխարների առաջիկա տարվա հարկը անխնայորեն գանձվում է»:

1880թ. Բ. Դռան հրամանով արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը: Մեկ տարի անց ցուցում տրվեց «արմատախիլ անել ազգային գրգռման արմատները», բռնագրավել ու ոչնչացնել Վարդան զորավարի և Հայաստանի ավերակների վրա սգացող կնոջ նկարները: Բանտ էին նետվում միայն այն բանի համար, որ համարձակվել էին վաճառել հայ թագավորների գերեզմանների նկարները: Բռնագրավվում էին և այրվում այն գրքերը, որոնցում կար «Հայաստան» բառը, արգելվեցին հայկական օրացույցը, հայկական ներկայացումները, հայերեն դասախոսությունները: Նույնիսկ «սուրհանդակ» բառը հապավվում էր սուր-հան-դակ և կասկածելի էր թվում: Արգելվեց նաև Կիլիկիա և մի շարք այլ հայկական տեղանունների օգտագործումը: Հայկական նոր դպրոցներ, եկեղեցիներ և այլ հաստատություններ բացելու համար պահանջվում էր սուլթանի հրովարտակը, որին սովորաբար հարկ էր լինում սպասել 5-10 տարի:

Օտարերկրյա մի լրագրող Կ. Պոլիս է գալիս և անմիջապես այցելում ոստիկանատուն: Նա ոստիկանին խնդրում է ասել, թե Թուրքիայում ինչը կարելի է գրել և ինչը՝ չի կարելի: Ոստիկանը պատասխանում է. «Ամեն ինչի մասին կարող եք գրել՝ օդի, ջրի, նույնիսկ Պոլսի շների մասին կարող եք ճառել, բայց միայն մի պայմանով, որ նրանց հավաքել չառաջարկեք: Անշուշտ, նորին վսեմության մասին կարող եք ներբողներ հյուսել... Արգելված է, սակայն, նոր վարդապետության մասին խոսել և օգտագործել այն մատնանշող բառեր... զգուշանալ մանավանդ «Մակեդոնիա», «Հայաստան» բառերից...»:

Կազմակերպվեցին խուզարկու ոստիկանների ջոկատներ, որոնք, եթե մեկին որոշել էին ձերբակալել, նրա տունը խուզարկելու ժամանակ անկյուններից մեկում աննկատ երգարան էին գցում, և դա բավական էր տանտիրոջը ձերբակալելու համար: Հայ մամուլին հազվադեպ էին թույլ տալիս օգտագործելու զենք, զինվոր, բանակ, ազատություն, բռնակալություն, ուժ, զորություն, իրավունք, արդարություն, ընկերություն, հավասարություն, միություն և նման շատ այլ բառեր:

Գրաքննիչներից մեկը «Հայրմերից» ջնջեց «Եկեսցե արքայություն քո» բառերը՝ համարելով այն ինքնուրույն թագավորություն ունենալու հայերի ձգտման արտահայտություն:

«Սուլթանը հայ մամուլի դեմ արշավանք սկսեց գավառական վալիների անմիջական մասնակցությամբ, որոնց հախուռն հերքումները հակադրեցին գավառական թղթակցություններին՝ երեսպաշտորեն քարոզելով իրենց կառավարմանը ենթակա հայաբնակ գավառներում՝ տիրող «կարգի և օրինականության» մասին և մամուլին մեղադրելով զրպարտության մեջ»:

1880 թ. բանտարկվեց «Թերջուման էֆքյար» հայատառ թերթի տնօրենը, թերթ, որ մեծ տեղ էր հատկացնում արևմտահայության ներքին կյանքին: 1882 թ. ցմահ բանտարկության դատապարտվեց «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանը: 1883 թ. երկու անգամ փակվեց «Մասիսը»՝ դարձյալ գավառում կատարվող հարստահարումները բացահայտելու համար: Մամուլին հարկադրեցին գավառների մասին տալ միայն պաշտոնական հաղորդագրություններ և կամ կառավարությանը հաճո նյութեր: Այդ նպատակով հայ մամուլի համար 1883 թ. մտցվեց նախնական գրաքննություն: 1888 թ. նոյեմբերի 26-ին «Մշակը» տպեց մամուլին վերաբերող թուրքական կանոնադրությունը: Այդ կանոնադրությունը պահանջում էր.

1.Առավելություն տվեք այն լուրերին, որոնք վերաբերում են սուլթանի թանկագին կյանքին, հունձի դրությանը, առևտրի ու արդյունաբերության զարգացմանը Թուրքիայում:

2.Մի տպագրեք այնպիսի ֆելիետոններ, որոնք չեն ստացել ժողովրդական լուսավորության նախարարի առանձին հավանությունը:

3.Մի տպագրեք գիտական և գրական այնպիսի հոդվածներ, որոնք չեն կարող տեղավորվել մի համարում...

4.Միանգամայն խույս տվեք հոդվածների մեջ կտորներ բաց թողնելուց և տողերի մեջ բազմակետեր դնելուց, որովհետև այդ անհաճո ենթադրությունների տեղիք է տալիս և խանգարում է հոգու հանգստությանը:

6.Ոչ մի տեսակետով մի տպեք մասնավոր անձերի, համայնքների կամ նահանգների խնդրագրերը, որոնք գանգատվում են իշխանության կեղծումների դեմ և այդ մասին տեղեկացնում են ի գիտություն սուլթանի:

7.Տեղեկություններ մի տպեք օտար թագավորների անձերի դեմ արած փորձերի մասին, նույնպես և ոչինչ մի տպեք արտասահմանում տեղի ունեցող ցույցերի մասին: Ըստորում, լավ չէ, որ այդ բաների մասին տեղեկանա մեր խաղաղ ազգաբնակչությունը:[1]

1. ՀՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, թիվ 1896, 1984, էջ 31:

Երբ պատերազմն ավարտվեց, թուրքական որոշ խմբավորումներ հրապարակ նետվեցին, հանցանքը միայն երիտթուրքերի վրա բարդելու միջոցով այն թուրք ժողովրդից՝ մասնավորապես նրա իշխող դասակարգերից հեռացնելու համար: Նրանք վերականգնեցին այն մեղադրանքը, որ «շատ հայեր, խաբված հունական դիվանագիտությունից ու տոգորված հեղափոխական գաղափարներով», ոտքի էին ելել օսմանյան կառավարության դեմ: Հետևաբար,- ասում էին նրանք,- տեղահանությունները կարելի էր արդարացնել «պատերազմական անհրաժեշտությամբ», բայց ոչ մի արդարացում չուներ «թալանի ու բնաջնջման» քաղաքականությունը, որ իրականացրին երիտթուրք ղեկավարները և որոնք դասվում են «մարդկության մեծագույն ոճրագործությունների շարքում»: Ուստի արդարությունը պահանջում է, որ թուրք ժողովուրդը չպատժվի «ոչ բանական կառավարության» «ոճրագործ մոլորությունների» համար, որը մահմեդականներին նույնքան վնաս պատճառեց, որքան հայերին: Այդպիսին էր մեծ վեզիր Ֆերիդ փաշայի դիրքորոշումը 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Ընդունելով «չարագործությունները, որոնք այնպիսին են, որ մարդկության խիղճը հավիտյան սարսռեցնում են», Ֆերիդ փաշան հանցանքը բարդեց գերմանացի և երիտասարդ թուրք բռնապետների վրա և դաշնակիցներին հիշեցրեց հայերի «չափազանցությունների մասին»:

Հետպատերազմյան շրջանում թուրք գործիչներից ամենաանկեղծը Ահմեդ Էմինն էր՝ Եալմանը: Նա ընդունում էր, որ ցեղասպանություն կատարվել է և այն, ինչ հայերի նկատմամբ կատարվեց, «ռազմական պահանջների հետ համաչափ չէր»: Նշելով, որ տարագիրների մեծ մասը կանայք ու երեխաներ էին, որոնք զրկված էին ապրելու միջոցներից և ենթարկված կլիմայական և աշխարհագրական ծանր պայմանների ազդեցությանը, Եալմանը գրում է. «Առաջին հերթին ավանը կամ գյուղը բոլոր շարժական իրերով թողնելու կամ վաճառելու համար տրամադրված ժամանակը շատ կարճ էր, որոշ դեպքերում այդ ժամանակը մեկ կամ երկու օր էր միայն: Երկրորդ, տեղահանվածները ոչ միայն անպաշտպան էին հարձակումներից, որոնք անխուսափելի էին հրոսակախմբերի կողմից, այլև «հատուկ կազմակերպությունը», որ ստեղծվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկու ազդեցիկ անդամների աջակցությամբ, մի շարք դեպքերում, ուղղակի գործնական դեր ունեցավ հար-

ձակումների ու ջարդերի կատարման գործում: Երրորդ, տարագրության համար ընտրված վայրը մասամբ անապատ էր և անկարող ապահովելու մեծաքանակ մարդկանց, ովքեր զով լեռներից էին եկել՝ անցնելով անասելի դժվարությունների միջով: Տեղահանությունները կոչված էին լինելու ռազմական նկատառումներով ժամանակավոր միջոցառում, բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների համար դրանք կոչված էին բնաջնջելու Թուրքիայում եղած հայկական փոքրամասնությունը, Փոքր Ասիայում ցեղային միատարրություն ստեղծելու համար»:

Էմինը նշում է, որ 1917 թ. թշնամական պրոպագանդայի ուժեղացման և տեղահանության դեմ հանդես եկող մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների (նույնիսկ կառավարության կազմում եղած անձանց) ճնշումների շնորհիվ կառավարական մի հանձնաժողով ստեղծեցին՝ տեղահանության վայրագությունները քննելու համար, բայց կառավարության կազմում տեղահանության կողմնակից անձանց ավելի ազդեցիկ լինելը ամբողջ խնդիրը «վերածեց ցուցադրման, քան անկեղծորեն փորձ արվեց ճշտելու իրական վիճակը»: Նրանք, ովքեր պնդում էին «բնաջնջման քաղաքականության վրա», գիտեին, որ հասարակական դատապարտման էին ենթարկվելու, միաժամանակ հավատալով, որ ի շահ ազգի իրենց անձնական զոհողությունը կարող է ճանաչվել «միայն շատ հեռավոր ապագայում»:[1]

Օսմանյան կայսրությունը դարձել էր հայերի որսադաշտ:

«Եթե պատահեր, որ որևէ հայ ընտանիք տնից դուրս գար ճանապարհորդելու,- գրում է Եկենը,- ավազակներն ու մարդ կոչվող անարժան ստորները նրանց պաշարում էին և այնպիսի չարիքներ էին հասցնում, որ ճանապարհորդությունն անկարելի էր դառնում: Վայն էր եկել այն խեղճի գլխին, ով համարձակվեր վերադառնալ և կառավարությունից պահանջեր, որ իր ընտանիքի առևանգված անդամները վերադարձվեն: Այն ժամանակ ավելի մեծ չարիք ու աղետներ կարող էին կատարվել: Եթե կատարվածները գրվեն, ընթերցողն անպայման կսարսափի և գիտակցությունը կկորցնի»:[2]

1. «Ազգային մշակույթ», 02. 02. 1988:
2. **Մ. Ռիֆաթ,** նշվ. աշխ., էջ 92:

***

1891-1896 թթ. թե՛ Սասունի և թե՛ հայկական մյուս կոտորածները առաջ բերեցին աշխարհի առաջադեմ ուժերի ցասումն ու բուռն բողոքները: Անատոլ Ֆրանսը Աբդուլ Համիդին անվանեց «մի բռնակալ», որ «սարսափից խելագար է դարձել»:

Հայերի պաշտպանությամբ ու արևմտյան տերությունների, այդ թվում նաև Ֆրանսիայի քաղաքականության խիստ քննադատությամբ հանդես եկավ Ժան Ժորեսը: «Ինքը՝ սուլթանն է ցանկացել կոտորածը, նա է այն կազմակերպել ու ղեկավարել»: Նա հայկական ողբերգության համար իսկական մեղավոր էր համարում նաև մեծ տերությունների երկդիմի շահադիտական և անմարդկային քաղաքականությունը, որ Եվրոպայի նույնիսկ դեմոկրատական ուժերին դարձրեց եսասիրական հաշիվների խաղալիք, և այդ ուժերին թույլ չտվեց իրենց ձայնը բարձրացնելու օսմանյան դահճի արյունախում քաղաքականության դեմ:

Գլադստոնը Աբդուլ Համիդին անվանեց «մեծ մարդասպան» և հայտարարեց, որ Օսմանյան կայսրությունը պետք է «ջնջվի քարտեզի վրայից», որովհետև նա «նախատինք է քաղաքակրթության համար և անեծք մարդկության հասցեին»:

Անգլիացի քաղաքական գործիչ Ջ. Բրայսը գրում է. «Աբդուլ Համիդը իր ձեռքի շարժումով մահ էր տարածում». ինչ վերաբերվում է հայ ժողովրդին, ապա նա «երբեք չէր մտածել ընդվզելու սուլթանի դեմ կամ ձեռք բարձրացնելու մուսուլման հարևանների վրա»: Չնայած դրան, բազմաթիվ «գյուղեր հրո ճարակ դարձան, եկեղեցիները վերածվեցին մզկիթների, կանայք բռնաբարվեցին, տղաներ և աղջիկներ դուրս տարվեցին և վաճառվեցին որպես ստրուկներ»: Ժնևի «Լա Ժնեվուազ» թերթը 1895 թ. հունվարի 16-ին գրել է. թուրքական կառավարությունը «ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում», որպեսզի Բեռլինի պայմանագիրը ստորագրողներին ասի՝ «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես այլևս գոյություն չունի Հայկական հարց»:

Անգլիական «Նյուկաստել Դեյլի Ջոռնել» թերթի թղթակիցը Բիթլիսի գավառի Խնձորկ գյուղից գրում է. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, երկար ժամանակ նախապատրաստված և, վերջապես, գործադրված այն դիտավորությամբ, որ բոլորովին ոչնչացնեն

այդ երկրի 30-40 հազար բնակիչներին: Դա կանխորոշված մի փորձ էր՝ իսպառ ջնջելու աշխարհի երեսից Սասունի բնակիչներին:

Դեպքերի ժամանակակից թուրք պատմաբան Սաղիկ Շահիդը 1898 թ. գրել է. «...Հայոց վերջին ջարդը նախապես մտածված, պլանավորված և կարգադրված էր սուլթանի կողմից»: Կ. Պոլսում թուրքերին 2-3 օր աշխատանքից ազատում և ուղարկում էին հայերին սպանելու: Հայերին սպանում էին ինչպես առնետների: Ձերբակալված հայերի թիվը հասավ 25 հազարի, որոնց կեսից ավելին ոչնչացվեց ամենաբարբարոսական միջոցներով:

Գերմանական գեներալ ֆոն Դեր Հոլցը 1897 թ. գրել է. «Փոքր Ասիայում և Կ. Պոլսում հայկական կոտորածները ոչ թե թուրքերի մոլեռանդության գործն էին, այլ նախապես մտածված քաղաքական դավադրության հետևանք»: Այդ տարիներին Կ. Պոլսում գտնվող եվրոպացիները պատմում էին բազմաթիվ փաստեր, երբ իշխանությունները պատժում էին հայերին օգնող թուրքերին:[1]

...Մալաթիայում, սկսած 1895 թ. հոկտեմբերից, իշխանությունները թուրքական և քրդական գյուղերում մարտական զենք ու ռազմամթերք էին բաժանում և մահմեդական ազգաբնակչությանը նախապատրաստում կոտորածների: Զգալով վտանգը, հայերը դադարեցրին աշխատանքը և փակեցին կրպակները:

Հոկտեմբերի 23-ին քաղաքի կառավարիչ Ռզա փաշան կառավարչատուն է հրավիրում հայկական համայնքի ազդեցիկ դեմքերին և առաջարկում հավատափոխ լինել: Հայերը հրաժարվում են կատարել այդ առաջարկը: Նրանք բոլորը տեղնուտեղը ոչնչացվում են: Թուրքերը նրանցից մեկի մարմինը կտոր-կտոր անելով կախում են հրապարակում և ազգաբնակչությանը առաջարկում գնել «10 փարայով»:

Մալաթիայի հայկական թաղերում պաշտպանական աշխատանքներ սկսվեցին: Թուրքերը հարձակման անցան, բայց հետ շպրտվեցին, իսկ Չաթալբանդ թաղամասում հայերին հաջողվեց ոստիկանությանը փախուստի մատնել: Թուրքերը զինադադար են հայտարարում: Բայց դա խաբուսիկ զինադադար էր և երկար չտևեց: Մարտերը շարունակվեցին երկուստեք հաջողություններով: Հատկանշական է, որ այդ կռիվների ընթացքում որոշ քրդեր և առանձին թուրքեր կռվում էին հայերի հետ կողք կողքի: Թուրքերը հրդեհեցին հայկական թաղերը՝ 2 հազար տուն այրվեց, 3 հազար մարդ զոհվեց:

1. «Նոր դար», 1897 թ., նոյեմբեր:

Ինքնապաշտպանության կանգնեցին ոչ միայն քաղաքների, այլև մի շարք գյուղերի բնակիչները: Այդ առումով բնորոշ է Չարսանջակի գյուղացիների դիմադրությունը: Գավառի իշխանությունները տեսնելով, որ չարսանջակցիները հետ են մղում ջարդարարների գրոհները, դիմում են խորամանկության: Նրանց հաջողվում է խաբեությամբ ոստիկաններին գյուղ մտցնել: Սկսվում է կոտորածը, թալանն ու ավերածությունը:

Մարզվանում զինված ամբոխը, զորքն ու մոտակա գյուղերից բերված խուժանը գրոհեցին հայկական թաղամասերի վրա, սակայն հանդիպելով համառ դիմադրության, նահանջեցին: Համալրում ստանալով թուրքերը պաշարեցին հայկական թաղերը, սակայն օրեր շարունակ չէին համարձակվում հարձակվել: Բայց զինամթերքի ու ջրի պակասն իր սև գործն արեց: Հայերի դիմադրությունը ճնշվեց: Գրեթե բոլորը սպանվեցին:

Հայերի դիմադրությունն այս և մի քանի այլ վայրերում ի վիճակի չեղավ փակելու զանգվածային կոտորածների ճանապարհը: Զանգվածային ջարդերը մահաբեր ուրվականի նման անցնելով հայաշատ շրջաններով, 1896 թ. օգոստոսին իրենց ժանիքները նորից խրեցին պոլսահայության կոկորդը: Օգտագործելով օսմանյան բանկի դեպքերը, սուլթանի հրամանով միայն Կ. Պոլսում ոչնչացվեց 10 հազ. հայ:

1894-1896 թթ. ընթացքում կոտորածների թիվը սովորաբար հաշվվում էր 300 հազ. մարդ, բայց, օրինակ, անգլիացի մասնագետ Ու. Ռամզեյի կարծիքով, կոտորվել է 500 հազար մարդ: Ժակ Մորգանը գտնում է, որ սպանվել է 200 հազար, բռնի մահմեդականացվել է 100 հազար մարդ, իսկ 100 հազ. կին և աղջիկ քշվել են հարեմները: Ֆրանսիացի Էմիլ Անտուանը հաշվում է 250 հազար սպանված: Ռուս գիտնական Գուտորի հաշվումներով քանդվել ու ավերվել է 50 հազար տուն և 8 հազար գյուղ, որք ու անապաստան մնացել 100 հազար երեխա: Ս. Իզմիրյանի խոսքերով՝ «ամբողջ հայ ժողովուրդը սուզվում է արյան մեջ»:

Տաժանակիր վիճակ էր սպասվում կենդանի մնացածներին:

Մուշում Անգլիայի փոխհյուպատոսը 1895 թ. դեկտեմբերին գրեց, որ Դիարբեքիրի մոտակայքի գյուղերի քրիստոնյա բնակչությունը, մահվան սպառնալիքով, մահմեդականացվել է: «Իշխան Լոբանովը նույնիսկ նյութեր է հավաքում այդ կապակցությամբ Բ. Դոանը բողոք գրելու: Հետագայում փաստերը հաստատվեցին...»:

Դիարբեքիրի Բերեջիկում «մինչև կոտորածի օրը (հունվարի 1-ը) եղել է 240 տուն, կոտորածից հետո մնացել է 150 քրիստոնյա, մյուսները, թվով 1500 հոգի..., իրենց հարազատների արնաթաթախ դիակների առաջ և ամբոխի սպառնալիքների պատճառով դարձան մահմեդական»:[1]

***

«Հուրիեթն» առաջ գնաց և 1985 թ. ապրիլի 28-ին տպագրեց «Լիրբ Արգենտինա» վերնագիրը կրող հոդված.«Երէկ, որպէս հետեւանք Արժանթինի մէջ ապրող հայկական խմբակցութիւններու, Արժանթինի Խորհրդարանի երեսփոխանական ժողովը վաւերացուց առաջարկ մը, որով կը ճանչցուի Հայկական Ցեղասպանութեան գոյութիւնը: Նոյն առաջարկը յառաջիկա շաբաթ պիտի քննարկուի նաեւ Ծերակոյտին կողմէ, եւ եթէ վաւերացուի, Արժանթինը պիտի ըլլայ առաջին երկիրը, որ պիտի ճանչնայ այսպէս կոչուած ցեղասպանութեան գոյութիւնը:

Առաջարկին մէջ կ'ավելացուի թէ Արժանթին պիտի օժանդակէ որ հայկական պահանջքները ներկայացուին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ ուրիշ Միջազգային ատեաններու մէջ:

Արժանթինի մէջ ապրող հայկական խմբակցութիւնները, օգտուելով թուրք դեսպանին բացակայութենէն (թուրք դեսպանը այդ օրերուն մահացած էր, սակայն անմիջապէս փոխարինուած էր ուրիշով մը): Իրենց գործունէութիւնները կրկնապատկելով յաջողած են այդ առաջարկը մտցնել Արժանթինի Խորհրդարանի օրակարգին մէջ, եւ կը նախատեսուի թէ ծերակոյտը եւս պիտի վաւերացնէ զայն»:

Թրքերէն գիտցող մեր հայրենակիցները թող երեւակայեն թէ ի՞նչ պէտք է եղած ըլլայ սոյն յոդուածին վերնագիրը... թրքերէնով:

1. Դ. Ե. (Երուսաղեմ), Տեղեկատու Դիվան, թիվ. 492- Մ 492, Մ թիվ 3192:

Թ. Աբչամ պապմաբան

Հայերի ցեղասպանությունը հանդիսանում է 20-րդ դարի առաջին պլանավորված զանգվածային կոտորածը: Կարելի է պնդել, որ այն օրինակ ծառայեց ապագայի նման գործողությունների համար: Նաև հայտնի է, որ վերջին տարիների իրադարձությունների զարգացման ընդհանուր տրամաբանության լույսի տակ այս հարցը ձեռք է բերում արդիական նշանակություն: Դա բացատրվում է ոչ միայն հայ-աղրբեջանական հակամարտությամբ: Մեզ համար թեման արտակարգ արդիական է նաև կապված Քրդական հարցի հետ: Խոսքը գնում է անցյալում հայերի գենոցիդի և մեր օրերի Քրդական հարցի միջև եղած ներքին կապի մասին: Դրանց կապող օղակ է հանդիսանում թուրքական ազգայնականությունը:

Այստեղ չի քննարկվում, թե եղել կամ չի եղել հայկական ցեղասպանություն: Ընդհակառակը, մենք փնտրում ենք այն հարցի պատասխանը, թե ինչու ենք հրաժարվում ընդունելու գենոցիդի իրողությունը և խույս ենք տալիս այս հիմնախնդրի շուրջ քննարկումներից: Իրադարձությունները, որոնց հետևանքով, եթե նույնիսկ հիմնվենք թուրքական պաշտոնական աղբյուրների վրա, զոհ է գնացել 300 000, իսկ համաձայն այն ժամանակվա օսմանյան որոշ պաշտոնական աղբյուրների՝ 800 000 մարդ, գրեթե բոլոր աշխատություններում այդ պատճառաբանվում և արդարացվում է «կլիմայական վատ պայմաններով», «զոհերի տարիքով», «սովով» և այլն: Խայտառակություն մարդկության առջև: Չէ որ թուրքական այդ աշխատություններում չկա նույնիսկ ցավի կաթիլ այն բանի համար, որ միայն մեկ տարվա ընթացքում զոհ են գնացել մեծ թվով մարդիկ: ...Հանգիստ խղճով ասում են. «Նրանք արժանի էին դրան»: Փոխանակ սարսափելու այդ թվերից (օրական միջին հաշվով 1 000 մարդ) և մտածելու, թե ինչպես նման բաները կանխել ապագայում, այդ աշխատությունների հեղինակները կողմնակից են հետևյալ կողմնորոշմանը՝ «Թող այդ նրանց համար դաս լինի, հակառակ դեպքում նույնը կանենք», փոխանակ հանդես գալու բարբարոսության դեմ, ցավելու կատարվածի համար, գերադասում են արդարացնել այն: Նման դիրքորոշումը հղի է եզրահանգմամբ՝ նույնանման պայմաններում մենք վարվելու ենք հենց նույն ձևով·

Սա հոգեկան վիճակ է և հարկ է զգուշանալ:

Նախապես լսում եմ իմ ընդդիմախոսների առաջարկությունը. «Չէ որ հայերն էլ են սպանել թուրքերին»: Մոտավոր տվյալներով վրեժխնդրության նպատակով հայերի կողմից 1917 թ. հետո սպանված թուրք գյուղացիների թիվը կազմում է 40 000 մարդ: Կոտորածը կոտորած է և այն ոչնչով չի կարելի արդարացնել: Սակայն հարկ է նկատի ունենալ հետևյալ փաստը: Չնայած թուրքերենում «կոտորած» և «գենոցիդ» հասկացությունների միջև հատուկ սահմանազատում չկա, այնուամենայնիվ, դրանց միջև գոյություն ունի էական տարբերություն: Այն, ինչ կատարվեց 1915 թ., նպատակ էր հետապնդում ոչնչացնելու մի ամբողջ ժողովուրդ: Այս ակցիան պլանավորված էր պետության, մասնավորապես իշխանության ղեկի մոտ գտնվող կուսակցության կողմից և իրականացվել է բյուրոկրատական կառույցների միջոցով: Իսկ կոտորածը շատ ավելի կրում է լոկալ, տեղական, սահմանափակ բնույթ...

(Թուրքերի) ազգային առանձնահատկությունը... պատճառ հանդիսացավ «տաբու» դնելու Հայկական հարցի վրա: Հայկական հարցին նվիրված թուրք հեղինակների աշխատություններում մենք բախվում ենք մի ահավոր երևույթի հետ՝ դրանք գրված են կամ պաշտոնական պետական ծառայողների և կամ ազգայնականական, կամ իսլամամետ ուղղությունների հեղինակների կողմից: Հարձակումների գլխավոր օբյեկտը հայերն են, որոնք մեղադրվում են «սև ապերախտության» և զրպարտության մեջ, ընտրում օգտագործվում է շատ ագրեսիվ լեզու: ...Գերակշռում է պնդումն այն մասին, թե իբր իրականում զոհ են դարձել ոչ թե հայերը, այլ թուրքերը... Ելնելով դրանից՝ մի շարք հեղինակներ իրենց աշխատություններում պատմում են «հայերի գազանությունների», հայերի կողմից սպանված «միլիոնավոր մահմեդականների մասին»:

Քանի որ հիմնական նպատակը բազմազգ պետության կառուցվածքի պահպանությունն էր, թուրքական էթնոսի ներկայացուցիչները չէին կարող բացահայտ ցուցադրել իրենց ազգային «Եսը»: «Պաշտոնապես» հռչակվեց այն գաղափարախոսությունը, որը հնարավորություն էր տալիս կայսրության բոլոր ժողովուրդներին ամբողջացնել մեկ ընդհանրության մեջ: Դրա համար էլ մինչև 1914 թ. նրանք իրենց պանթուրքական էությունը քողարկում էին պանօսմանիզմի դոկտրինի տակ: ...Մինչև Բալկանյան պատերազմները իթթիհադականները, որոնց ձեռքին էր իշխանության ղեկը, այդ իսկ պատճառով հրաժարվում էին պանթուրքիզմի

գաղափարախոսության բացահայտ պաշտպանությունից, սակայն այդ պատերազմներից հետո, երբ ազգային փոքրամասնությունների մեծամասնությունը հրաժեշտ տվեց օսմանյան պետությանը, «թոկից փախած» իթթիհադականների պանթուրքիստական էությունն ազատվեց հարկադիր քնկոտությունից և թուրքերը, վերջապես, բարձրաձայն խոսեցին իրենց գոյության մասին: Եվ վերը հիշատակված ուշանալուց բխող շտապողականության պայմաններում սկսեցին իրականացնել թուրքացման քաղաքականություն:

Պանթուրքիզմի առաջին գաղափարախոսները հպարտությամբ էին նշում, որ իրենց հոգևոր հայրերից մեկը դարձավ ռասիզմի հայտնի գաղափարախոս Գաբինոն:

Զիա Գեոքալփը դրեց ազրեսիվ նացիոնալիզմի հիմքը, համաձայն որի՝ «թուրքերի հայրենիքի քաղաքական սահմաններն ընդգրկում են բոլոր այն տարածքները, որտեղ լսվում է թուրքերեն խոսք և որտեղ կա թուրքական մշակույթ»:

...Մեր գիտակցության մեջ խորն է նստած հավատքը, թե մենք՝ թուրքերս, բարձր ենք մյուս ժողովուրդներից ու ցեղերից և իրավունք ունենք կառավարել նրանց...

...Շնորհիվ իսլամի, թուրքերը մշտապես գտնվում էին «իշխող ազգի» արտոնյալ վիճակում: Հաճախ պնդում են, որ իսլամը հանդուրժողականություն էր հանդես բերում մյուս կրոնների հանդեպ: Սակայն այդ «հանդուրժողականությունը» ենթադրում էր կախյալ վիճակ նրանց, ում հանդուրժում էին: Գյավուրների հանդեպ մահմեդականի գերազանցությունը ամուր արմատավորվել էր բարոյականության կոդեքսներում և ավանդույթներում և խոսք լինել չէր կարող այն մասին, որ նրանք հրաժարվեին տիրապետող վիճակից:

...Անկախության համար քրիստոնյա փոքրամասնության պայքարը շատ արագ ձեռք բերեց կրոնական հողի վրա բախման բնույթ...

Չնայած ատելության զգացմունքը գոյություն ուներ դեռևս Թանզիմաթից առաջ, սակայն այն ծայրահեղության հասավ բոլոր հպատակների հավասարության սկզբունքը հռչակելուց հետո:

Հայկական կոտորածներում նույնպես վերջին դերը չխաղաց նրանց հանդեպ թուրքերի գերիշխանությունը կորցնելու վտանգը: Հակահայ ուղղվածության մի շարք աշխատություններում թուրքերի գործողու-

թյունները ներկայացվում են որպես «մահմեդականների բնական ու հասկանալի ռեակցիա»:

Կարելի է հաստատել, որ մինչև Ազատագրական պատերազմը թուրքական հասարակական կարծիքում, մասնավորապես ընդդիմության շարքերում, տիրապետում էր այն գաղափարը, որ թուրքերը հանդիսանում են ժառանգորդները վիթխարի ու փառապանծ կայսրության, որը պետք է վերականգնել:

Հայերին հաշիվ ներկայացվեց կայսրությունից անջատված բոլոր քրիստոնյա փոքրամասնությունների համար: Եվ վճռվեց ավել թանկի գին...

Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածները հին պատմություն ունեն: Հարկ է դրանք իրենց բնույթով ու կատարման ձևով բաժանել երեք շրջանի: ...Առաջինը ընդգրկում է 1890-1909 թթ., երկրորդը՝ 1915-1917 թթ., իսկ երրորդը սկսվում է 1918 թվից: Հայ բնակչության կոտորածներն ունեն բավական հետաքրքիր էվոլյուցիա: Առաջին շրջանում դրանք կրում էին առավելապես տեղական բնույթ և իրականացվում էին ոչ թուրք էթնոկրոնական խմբերի վրա հետևողական ճնշումներ գործադրելու քաղաքականության շրջանակում: Եվ այդ քաղաքականությունն իրականացվում էր ոչ միայն պետության կողմից: Դրա իրականացման ուղիները հետևյալներն էին.

-քրդերի և մահմեդական ցեղերի մշտական հարձակումներ հայկական գյուղերի վրա, թալան, աղջիկներ փախցնել, զանգվածային սպանություններ,

-քաղաքացիական պատերազմ, մահմեդականների բախում հայերի հետ և կոտորած, որ իրականացվում էր այս բախումների ընթացքում,

-կոտորածներ, որոնք իրականացվել են պետության կողմից հարկերի հավաքման, ավազակախմբերի հետապնդման, հայերի ապստամբությունների և «անկարգությունների» ճնշման պատրվակով:

Հայկական ջարդերը ավելի սիստեմատիկ բնույթ ստացան հատկապես համիդիե գնդերի ստեղծումից հետո՝ 1890 թ.: Այս միավորումների բոլոր ծախսերը... փակվում էին հարձակումների, թալանի և ջարդերի միջոցով ստացված եկամուտների հաշվին: Խոշորագույն կոտորած տեղի ունեցավ 1894-1896 թթ....

...Հայերի հարցում առաջին պլան դուրս եկավ իսլամական մոտիվը... Հասարակությունում սկսվում է հայերին, որպես էթնիկական և կրոնա-

կան խմբի, ստորացնելու շարժում: Հայերի դեմ իշխանությունները սկսեցին իրականացնել ռասիստական քաղաքականություն:

Օրինակ, սուլթան Աբդուլ Համիդը հայերին անվանում է «այլասերված համայնք», «հավերժական ստրուկներ»... Քաջ գիտենալով, որ հասարակության մեջ հայերի կայուն վիճակը բացատրվում է նրանց տնտեսական հզորությամբ, սուլթանը ձգտում է խորտակել այդ հզորությունը խտրական քաղաքականության միջոցով:

Այս մթնոլորտում ամենևին դժվար չէր թուրքերին համոզել, որ հայերը կատաղի թշնամիներ են և ցանկանում են նրանցից խլել վերջին կտոր հողը: Հայկական հարցը սկսեցին դիտել որպես կայսրության կյանքի կամ մահվան հարց...

Այսպիսով, ի տարբերություն մնացած քրիստոնեական ժողովուրդների, հայ ժողովրդի կոտորածները կրում էին պաշտոնական իշխանությունների կողմից կենտրոնացված ձևով կազմակերպված բնույթ: Կառավարությունն արձագանքում էր յուրաքանչյուր դեպքի: Հայերի վրա հարձակումները և նրանց ջարդերը օգտագործվում էին մահմեդական ազգաբնակչության շրջանում պետության ազդեցությունն ամրապնդելու համար:

...Աբդուլ Համիդը զինեց մահմեդական բնակչությանը և հնարում էր արհեստական պատրվակներ նրանց սաղրելու հայերի դեմ: Կոտորածների մասնակիցները, պատժվելու փոխարեն, խրախուսվում էին:

Այդ նույն ժամանակ առաջին անգամ հնչեցին ոչ երկիմաստ կոչեր մի ամբողջ ժողովրդի զանգվածաբար ոչնչացնելու՝ որպես միջոց Հայկական հարցի լուծման:

1915-1917 թթ. կոտորածն իր բնույթով մեծապես տարբերվում էր նախորդներից: Որոշվեց վերջնականապես թաղել Հայկական հարցը: ...Հավանաբար հասել էր մի պահ, երբ երիտթուրքերը հանգեցին եզրակացության, որ իրենց չի հաջողվի Հայկական հարցը լուծել աստիճանաբար և անհրաժեշտ է «արմատական լուծում»:

Պաշտոնապես ընդունված է հայկական ցեղասպանության սկիզբը համարել 1915 թ. ապրիլի 24-25-ը: Սակայն սա ավելի խորհրդանշական տարեթիվ է: Հայերի բռնագաղթն ու զանգվածային սպանությունները սկսվել էին դրանից շատ առաջ...

Ուշադրություն է գրավում այն փաստը, որ այդ մարդկանց (ականատեսների) հաղորդածները, չնայած նրանք ծառայության մեջ են եղել

տարբեր վայրերում և հաշվետվություններ կազմել են միմյանցից անկախ, հիմնականում համընկնում են, ինչը վկայում է, որ եղել է (հայերի բնաջնջման) միասնական ծրագիր... իրականում հայերի ցեղասպանության առանձնահատկությունը նրա թվացող քաոսայնությունն է: Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, թե խոսքը գնում է ոչ թե կենտրոնի կողմից պլանավորված ակցիայի, այլ կոտորածների շարքի մասին, որոնք իրականացվել են վերահսկողության չենթարկվող ամբոխների կողմից տեղական իշխանությունների անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով...

Բռնագաղթը շարունակվեց երկու տարի և այդ ժամանակահատվածում հայերը կամ մեռնում էին սովից կամ զոհ դառնում զանգվածային կոտորածների: Եվ այդ ամենը կատարվում էր վերևի հրամանով: Նույնիսկ այն փաստը, որ ո՛չ ուղարկման կետերում, ո՛չ երթուղում և ո՛չ էլ բնակության նոր վայրում ոչինչ չէր ձեռնարկված մի ամբողջ ժողովրդի տեղափոխությունը կազմակերպելու համար, ապացույց է, որ կառավարության դիտավորությունը հայերին ջնջելն էր երկրի երեսից...

Հայերը կասկածելի և վստահություն չներշնչող ժողովուրդ հայտարարվել էին պատերազմը սկսելուց դեռ առաջ: 1914 թ. սեպտեմբերի 6-ին օսմանյան կառավարությունը համախումբ հայ բնակչություն ունեցող վիլայեթներ էր ուղարկել ծածկագիր հրահանգներ՝ պահանջելով մշտապես հետևել հայերի քաղաքական կուսակցությունների ղեկավարներին և ուսուցիչներին...

Գենոցիդից իսկական օգուտ քաղեց պետությունը, որը հնարավորություն ստացավ Անատոլիայի տարածքում ստեղծել ազգային պետություն: Նույնիսկ կարելի է պնդել, որ հայերի ցեղասպանությունը հանդիսացավ ավելի քան «արդյունավետ» ակցիա, որն իրականացվեց հենց այդ նպատակով:

Եվ իսկապես, Օսմանյան կայսրության բոլոր կառավարողները և երիտթուրքերի կառավարությունը ամենաշատը վախենում էին, որ քրիստոնյա փոքրամասնությունը երբևիցե կտիրանա Անատոլիային: Այնպես որ, այս աշխարհատարածքը քրիստոնյաներից մաքրելը չէր սահմանափակվում միայն հայերով և իրականացվում էր դեռևս մինչև Համաշխարհային պատերազմը, իսկ Անատոլիայի թուրքացումը, մանավանդ Բալկանյան պատերազմից հետո, դարձավ կառավարության կենտրոնական քաղաքականությունը: Ջելալ Բայարի հուշագրություն-

ներից երևում է, որ դեռևս պատերազմը սկսվելուց առաջ կազմվել էր քրիստոնյաների դեպորտացիաների մանրամասն պլան...

...Հայերի գենոցիդը կարելի է համարել Անատոլիայի թուրքացման բաղկացուցիչ մաս:

(Պատերազմի սկզբի) անսպասելի պարտությունը թուրքերին հիշեցրին վերահաս կործանման մասին, ինչը դարձավ որոշիչ գործոն գենոցիդի որոշում ընդունելու: Հետաքրքիր է, որ դեռ պատերազմից առաջ կազմվել էր պարտության դեպքում գործողությունների մանրամասն պլան... Թուրքիայի ռազմական պարտության դեպքում որոշվել էր ամրանալ Անատոլիայում և այնտեղ շարունակել պայքարը...

(Այս պլանի իրականացումը) հնարավոր դարձավ Սարիղամիշի տակ թուրքական բանակի ջախջախվելուց անմիջապես հետո...

Եվրոպայում տարածքների պերմանենտ կորուստների և Մեծ Թուրան ստեղծելու հույսերի կրախի հետևանքով թուրքերին մնացին միայն անատոլիական տարածքները: Թուրքերի ազգային հոգեբանության մեջ կարևոր տեղ էր հատկացվում Անատոլիային... Դրա ռազմավարական նշանակության գիտակցումը տեղի ունեցավ 19-րդ դարի 70- ական թվականներից հետո:

Եվ ահա այժմ (Առաջին աշխարհամարտում) թուրքերը կարող էին կորցնել նաև իրենց վերջին օթևանը, թուրքական հայրենիքի վերջին կտորը՝ Անատոլիան... Պետության և թուրքերի գոյատևումը կարող էր երաշխավորվել միայն Անատոլիայում... Եվրոպայից թուրքերին քշելու հարյուրամյա գործընթացը Անատոլիան վերածեցին թուրքերի համար կարևորագույն կենսատարածքի...

Սկզբում հայերին բռնությամբ իսլամացնում էին և համաձայնվողներին չէին բռնագաղթում: Սակայն որոշ ժամանակ անց իսլամություն ընդունողների թիվը սպառնալից չափերի հասավ, ինչը խախտեց կառավարության պլանները: Դրա համար էլ որոշվեց հայկական ծագում ունեցող բոլոր անձանց, անկախ կրոնական պատկանելության, աքսորել:

Հայկական ցեղասպանության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրանում մասնակցում էր նաև քաղաքացիական բնակչությունը... Քաղաքացիական բնակչությունը հենց սկզբից եռանդուն մասնակցություն ունեցավ հայերի բնաջնջմանը՝ թալանում էր նրանց ունեցվածքը, առևանգում կանանց ու աղջիկներին, կատարում գազանային սպանություններ ...

Պաշտոնական Թուրքիան համառորեն հրաժարվում էր գենոցիդն ընդունելուց՝ տաբու դնելով այդ թեմայի վրա, և թույլ չի տալիս դրա շուրջը քննարկումներ: Իսկ շարքային քաղաքացիներից գրեթե բոլորն ընդունում են այդ հանցագործության իրողությունը, գենոցիդի մասին պատմությունները սերնդից սերունդ են փոխանցվում: Եվ թվում է՝ չկա որևէ մեկը, որ չիմանա, թե «ժողովրդի մեջ ստեղծվել է տպավորություն, որը հաստատում է Հայկական ցեղասպանության փաստը»: Սակայն հասարակությունը միաժամանակ անտարբեր է վերաբերվում և անքննադատ է ընդունում պաշտոնական իշխանությունների նիհիլիստական դիրքորոշումը...

(Թուրքերի) ցանկությունը մոռանալու անցյալը կարելի է բացատրել երկու պատճառով՝

1.կատարված հանցագործության ահավորությամբ,

2.այդ շրջանի կոշմարին վերադառնալու դժկամությամբ:

Անկախության ընկերությունները չստեղծվեցին օտարերկրյա ներխուժման դեմ պայքարի նպատակով: Թուրքերին դրան մղեցին հույների ներխուժման և Հայկական պետության ստեղծման վտանգը, ինչպես նաև սարսափը հայերի վերադառնալուց հետո իրենց կատարածի համար վրեժխնդրության անխուսափելիության առաջ...

Աշխարհազորային ջոկատների մեծ մասը ստեղծվեց գենոցիդի կազմակերպիչների՝ Թեշքիլաթ-ը մախսուսեի անդամների կողմից: Դիմադրության առաջին շրջանում, երբ կանոնավոր բանակը դեռևս թույլ էր, այս ջոկատները կարևոր դեր խաղացին ազգային շարժման մեջ: Որպես կանոն, դրանց ղեկավարում էին Միություն և առաջադիմություն կուսակցության կամավորներն ու Թեշքիլաթ-ը մախսուսեի գործակալները, ովքեր կարևոր դեր էին խաղացել հույների (հայերի) բռնագաղթի գործում, իսկ ապա անցել էին ընդհատակ...

Հայոց գենոցիդի ժխտումը համապատասխանում էր արևելյան վիլայեթների բնակչության կենսական շահերին: Այդ հանգամանքն էր գլխավոր պատճառներից մեկը արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության ստեղծման համար...

Շատ շրջաններում այդ ընկերությունների ստեղծման նախաձեռնողը տեղական ավագանին էր, որը հարստացել էր հայերի թողած ունեցվածքի յուրացման միջոցով և վախենում էր նրանց վերադառնալուց:

Հետևաբար տեղական ավագանու ներկայացուցիչների կողմից իրավունքների պաշտպանության ընկերությունների ստեղծման և նրանց կողմից քեմալականներին ցույց տված աջակցության հիմնական պատճառը անասնական վախն էր հայերի վրեժխնդրությունից՝ կատարած չարագործությունների համար: Այլ խոսքով, հայերի գենոցիդին մեղսակցությունը և զոհերի ունեցվածքի յուրացումը թուրքական հասարակության լայն խավերին մղեց Անկախության պատերազմի:

Քեմալական շարժման պարագլուխները, չնայած երիտթուրքական կուսակցությանը իրենց չպատկանելու մասին արված բազմաթիվ հաղորդագրությունների, մշտապես հանդես էին գալիս իթթիհադականներին դատելու դեմ... Անկարայի կառավարությունը իթթիհադականներին պատժելը համարում էր թուրքերի մասնատման ու ոչնչացման պլանի բաղկացուցիչ մասը...

Ստամբուլի դատավարության ընթացքում չէ որ հեռակա մահապատժի վճիռ ընդունվեց նաև Մուստաֆա Քեմալի վերաբերյալ:

Անկարայի կառավարությունը ոչ մի կերպ չէր կարող կատարել (դաշնակիցների) գենոցիդի հանցագործներին պատասխանատվության ենթարկելու պահանջը, քանի որ Ազատագրական պատերազմի գործիչների նշանակալից մասը կազմում էին հայերի գենոցիդին ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցած կամ դրանց արդյունքում հարստություն կուտակած անձինք:

Կարծում եմ չափազանցություն չի լինի հետևյալ եզրակացությունը՝ Անկախության պատերազմի կազմակերպման և հաջողության գործում վճռական դեր խաղաց հայերի գենոցիդը:[1]

1. Т. Акчам Турецкое национальное "Я" и Армянский вопрос, Москва, 1995, стр. 9-11, 24-26, 34, 35, 41, 42, 47, 51, 56, 78, 80-82, 86-89, 104, 111, 120, 130, 135, 137, 141-144.

ՀԱՎԵԼՎԱԾ ԿԱՄ ԹՈՒՐՔԻԶՄԸ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

Իբբիհաղի 1911 թվի համաժողովից հետո Պոլիս վերադառնալով, Զիա Գեյոքալփը սկսեց մշակել թուրքիզմի ծրագիրը: Հենց այդ ժամանակ նա «Կենճ Քալեմլեր» թերթում տպագրեց «Թուրան» բանաստեղծությունը.

«Երակներուս մեջ կու գան
Արծագանքներ պատմութեան
Խորեն եկող ձայներու,
Ոչ գիրքերու էջերուն

Այլ երակիս զարկերուն,
Այլ խոր սրտիս բաբախման
Մեջ է, որ ես կը կարդամ
Յաղթանակներն հեռավոր՝
Ազնիվ ազգիս ընտրեալ»:[1]

Բանաստեղծությունը իսկույն լայն տարածում գտավ ու դարձավ թուրքիզմի ոգուն կառչած երիտասարդության հիմնը:

Դրան հաջորդեցին պանթուրանական ոգով գրված մի շարք այլ ստեղծագործություններ: 1910 թ. Հալիդե Էդիպը «Թանին» թերթում տպագրեց «Թուրք կնոջ ճակատագիրը» վեպը, այն անվանեցին համաթուրանականության ավետարան:

Սալոնիկում երիտթուրքերը նպատակ հռչակեցին.

1.Ներքին քաղաքականության ասպարեզում.- թուրք կյանքը մաքրել «օտարամոտ և ապականիչ» տարրերից: Ազատագրել ու համազգային դարձնել թուրք լեզուն, գրականությունը, կրոնը: Վերակենդանացնել հին թրքական մշակույթն ու ավանդությունները, քարոզել թուրքերի նախաօսմանյան շրջանի պատմությունը որպես միջոց ցեղային ու ազգային գիտակցության ու հպարտության ձևավորման համար:

2.Արտաքին քաղաքականության ասպարեզում.- Հաստատել թուրանական ժողովուրդների էթնիկական ու մշակութային կապը, նրանց մեջ զարգացնել համերաշխության ու միավորվելու ցանկություն, նրանց բոլորին նպատակաուղղել մեկ ընդհանուր գաղափարի: Համաթուրանիստները քարոզում էին բոլոր թուրանական ժողովուրդների եղբայրություն, փառաբանում երազային հայրենիքը՝ Թուրանն ու թուրք-թաթարական պատմության հայտնի դեմքերին՝ Աթթիլային, Ալփ Արսլանին, Տուղրիլին, Չինգիզխանին և Լենկթեմուրին:

---

1. Զարեվանդ Միացեալ, անկախ Թուրանիա, Աթենք, 1988, էջ 45-46:

Նրանք գտնում էին, որ թուրքերը, թաթարները, թուրքմենները, ուզբեկները, մոնղոլները, մանջուրացիները և այլն, ցեղակից են ու եղբայրներ: Նրանք բոլորը մահմեդականներ են, խոսում են թուրքերենի տարբեր բարբառներով և դրա համար էլ նրանք նույն ազգն են, նույն ցեղի տարբեր աշիրեթությունները: Անցյալում նրանք միավորվել ու մեծ կայսրություններ են հիմնել և այժմ էլ նույն բանը կարող են կատարել: Այդ ժողովուրդները արդեն սկսել են գիտակցել, որ իրենք թուրքեր են:

«Օսմանեան Թուրքիոյ, իբրև միակ անկախ և ամենէն զորավոր թուրանական ժողովրդին կիյնայ պարտականությունը զորացնելու այս, արդեն զարթնած ազգային գիտակցությունն ու համերաշխությունը, ուժ տալու անկախութեան և միութեան փառքին, զայն վերածելով անդիմադրելի կամքի: Թուրքիա պետք է ըլլայ թուրքական ժողովուրդներու համար. անոնցմէ ստեղծե մեկ հզոր, միացած, դաշնակցային կայսրություն» (Զիա Գեոքալփ):

Պանթուրքիստները մեծ ջանքեր էին թափում թուրք ցեղին ամեն տեսակ շնորհներ վերագրելու ուղղությամբ: «Կը շեշտեին մասնավորապես անոր քաջությունը, հերոսականութիւնը, առաջնակարգ զինուորի տաղանդը: Վեր կը հանեին փաստը, որ ան իշխողներ տուած է արևելյան բոլոր ազգերուն: Թուրքը տիրապետող և հրամայող ցեղ է, իշխելու համար ստեղծուած է»:[1] Նրանք պարծենում էին, որ թուրքերը 400 ձիավորով աշխարհի կեսը նվաճեցին:

Թուրքերի այդ հատկանիշները, գրում են պանթուրքիստները, ոչ միայն ապահովում են նրանց հաջողությունը աշխարհակալ տերություն ստեղծելու գործում, այլև նրանց դարձնում «ապագայի մեծ և դեկավար ուժը»: Ժողովուրդների պայքարում հաղթանակը թուրքերին է լինելու, քանի որ նրանց բազկի ու մտքի ուժը անսպառ է:

Նորագույն ժամանակներում հնչելու է Կենտրոնական Ասիայի ժողովուրդների երիտասարդական թարմ ձայնը, քանի որ հին ազգերն արդեն կորցրել են կարողություններն ու հնարավորությունները:

«Թուրանականներն իրենց բնածին առնական քաջությամբ և անյողդողդ ջիղերով, որ դեռ անեղծ են արևմտյան քաղաքակրթութեան քայքայիչ ազդեցութենէն և պիտի դառնան ապագայի վարիչ մեծ ուժը»:[2]

1923 թ. լույս տեսավ Զիա Գեոքալփի «Թուրքականության հիմունքները» գիրքը, որում նա քննության է առնում ազգ հասկացության հետ կապված հարցեր: Նպատակը մեկն է՝ ապացուցել, որ թուրքերն ու թուրանաբնակները, այսինքն՝ թուրքմենները, նույն ազգն են:

«Ատրպեյճանի և Պարսկաստանի թուրքերը և խուվարները,- գրում է նա,- մեզի պես Օղուզէն առաջ եղած են: Դեռևս քանի մը դար առաջ անոնք կապրեին սերտ ու համերաշխ, իբրև միևնույն ընտանիքի մը զավակները, Օղուզ խանի թոռ-

1. Զարեվանդ Միացեալ, անկախ Թուրանիա, էջ 81:
2. Ն. տ., էջ 62:

ները: Անգամ այսօր մենք ընդհանուր լեզու, գրականություն, մշակույթ, բարքեր ու սովորություններ ունենք: Դեռ Քորքունթ Աթայի, Իսյայիլ Շահի, Աշըք Քերիմի, Քեոր օղլուի գիրքերը տարածուած ու սիրուած են ամբողջ օղուզեան աշխարհին մեջ: Թուրք բանաստեղծ Ֆիզուլին բոլորիս կը պատկանի: Թուրք ազգի և ազգայնականութեան սահմանները ուրեմն Թուրքիոյ աշխարհագրական սահմաններէն անդին կանցնին»:

Եվ ապա «Գալով Թուրանին, Թուրանը չէ, ինչպես ոմանք կը խորհին, ժողովուրդներու խառանարան մը, որուն մեջ թուրքերէն զատ, կան մոնկոլներ, թունկուզներ, ֆիններ և հունգարներ: Այդ խումբը գիտութեան լեզուով Ուրալ-Ալթայեան կը կոչուի: ... Շատ ավելի նեղ է թուրանականութեան սահմանը. եաքութները, կիրգիզները, ուզբեկները, ըչփչաքները, թաթարներն ու օղուզները կը կազմեն մեկ լեզուաբանական-ցեղաբանական խումբ: Թուրան՝ թրքական այդ ցեղերուն ընդհանուր անունն է: Թրքական զանազան ճյուղերը ընդգրկող մեծագույն թրքական աշխարհով կը սահմանափակուի Թուրանիան:

Գեոքալփը համսթուրանականության ընդհանուր ծրագրի լուծման եռաստիճան համակարգ է առաջարկում. «1.Թուրքճիություն, 2. Օղուզճիություն, 3.Թուրանճիություն, երրորդը ըլլալով վերջին կայանը, գերագույն նպատակը»:[1]

Եթե վերծանելու լինենք այս ծրագիրը, կստացվի հետևյալ պատկերը՝
1) թուրքիզմ, այսինքն՝ Թուրքիայի տարածքից ոչ թուրք ժողովուրդների վերացում, 2) օղուզական թուրքերին ու նրանց զբաղեցրած տարածքների կցում Թուրքիային, 3) Թուրանական կայսրության ստեղծում:

Մանդելշտամի խոսքերով՝ «պանթուրքիզմի համար բախտորոշ պահին, այսինքն՝ երիտթուրքական վարչակազմի հաստատվելուց անմիջապես հետո Թուրքիայի նոր տերերը հիասթափվեցին օսմանիզմից, այսինքն՝ Օսմանյան կայսրության կազմում եղած բոլոր իրավահավասար բազմազան տարրերի քաղաքական համակարգի միջոցով նրանց մեկ օսմանյան ազգի մեջ միավորելու գաղափարից»: Դրա փոխարեն «թուրքիզմը հանդիսանում է հիմնական նախապայմանը պանթուրանիզմի թուրքական տարբերակի կենսագործման համար»: Հետևաբար, «Թուրքիան միայն թուրքերին» նշանաբանը այն հիմքն է, որի վրա կարող է բարձրանալ պանթուրքիզմի ու պանթուրանիզմի շենքը:

Այսինքն՝ կայսրության հպատակ ժողովուրդները, դրանք քրիստոնյա լինեն, թե մուսուլման, հենց այն բանի համար, որ թուրքական մշակույթից ու պատմությունից տարբեր մշակույթ ու պատմություն ունեն, թուրքերին հավասար հայրենասիրություն, հետևաբար նաև իրավահավասարություն ունենալ չեն կարող: Հետևաբար, ինչպես նկատել է Առնոլդ Թոյնբին. «Յուրաքանչյուր ոչ թուրք ազգություն Օսմանյան կայսրությունում արմատախիլ լինելու վտանգի էր ենթակա»:[2]

1. Զարեվանդ Միացեալ, անկախ Թուրանիա, էջ 65:
2. «Ազդակ», 1988 թ.:

Այս բանը հստակ արտահայտություն ունեցավ երիտթուրքերի իշխանության գլուխ կանգնելու առաջին իսկ օրերից: Ադանայի կոտորածը դրա վկայությունն էր: «Միզան» թերթի խմբագիր Մուրադ բեյի վկայությամբ «Իթթիհադ կուսակցությունը կազմակերպեց Կիլիկիայի ջարդը»:

Իսկ Նազըմը հայտարարեց. «Պետությունը պետք է տարամերժորեն թուրքական լինի: Օտար տարրերի գոյությունը պատրվակ է եվրոպական միջամտության համար: Պետք է հպատակ ժողովուրդներին բռնի թրքացնել»:[1]

Օսմանյան կայսրությունը 20-րդ դար թևակոխեց բզկտված, հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի մրրիկներից ալեկոծված: Կայսրությունը գնում էր դեպի կործանում և թուրքիստների կարծիքով մեղավորը ռայան էր, մոռանալով, որ թուրքական բիրտ քաղաքականության հետևանքով էր, որ ոչ թուրք ժողովուրդները ոտի էին կանգնել օսմանյան լուծը տապալելու համար: Թուրքերն այդ ժողովուրդներին մեղադրեցին դավաճանության և ապերախտության մեջ, որ հետևանք էր «օտար մեքենայություններու ու քաղաքական դավերու»: Նրանք նույնիսկ սկսեցին մեղադրել օսմանյան սուլթաններին, որոնք հպատակ ժողովուրդներին չեն ուծացրել կամ բնաջնջել: Ուստի պատահական չէ, որ նրանք փառաբանում էին Աբդուլ Համիդի հայաջինջ քաղաքականությունը և անվերապահորեն հավանություն տալիս հայերի 1894-96 թվերի կոտորածներին:

Թուրքական ժողովուրդները ամենուրեք արթնացել էին ու փարվում էին թուրանիզմին: Օսմանյան կայսրության նկատմամբ հետաքրքրության աճը մասնավորապես նկատելի էր Արևելքի թուրք-թաթարների շրջանում: Բազմապատկվեց Մեքքա հաջի գնացողների թիվը, որոնք Պոլսով անցնելիս շփվում էին պանթուրքիստների հետ և դառնում նրանց հայացքների տարածողներ: Իրենց հերթին Պոլսից քարոզիչների հոսանք էր ձգվել դեպի Ռուսաստան մահմեդականների շրջանում թուրանական պրոպագանդա ծավալելու և պանթուրքիստական կազմակերպություններ ստեղծելու համար: Նշանաբան դարձան Խալիդ Էդիպի հետևյալ խոսքերը. «Երազում եմ աշխարհի բոլոր թուրքերին քաղաքական ու մշակութային առումով մեծ ու անկախ տեսնել»: Սաստկացան հարձակումներն օսմանիզմի վրա, կշտամբանքի էին ենթարկվում նրանք, ովքեր իրենց օսմանցի էին անվանում: Հնչում էին հետևյալ բնույթի կոչեր. «Բարեկամներ, շուտով պիտի միանաք բանակին և պետերը պիտի ըլլանք մեր հերոսական զինուորներուն: Սորվեցուցեք անոնց, որ իրենք թուրք են և որ եթե կռուին Թուրքիոյ և անոր դրոշակին համար, անպայման պիտի տանին յաղթանակը: Վստահ եղեք, որ թուրք ազգությունը ավելի լավ է մեզի համար, քան մահմեդական կրոնը. ցեղային հպարտությունը առաքինություններու ամենամեծն է»: Ճանաչված սկզբունք էր դառնում հետևյալը. «Բոլոր օսմանցիները թուրք չեն և եթե կայսրությունը նկատվի պարզապես թրքական, բոլոր ոչ թուրք տարրերը օտարներ պիտի ըլլան, փո-

1. «Ազդակ», 1988 թ.:

խանակ Օսմանեան կայսրության քաղաքական մարմնի ապրող անդամներ ըլլալու»: Նրանք արաբներին ասում էին. «Դուք և ձեր ցեղը հպատակներն են Թուրքիոյ. ոչ ապաքէն թուրքերը ձեր երկիրը գրավում են սրով... օսմանցիությունը, որուն համար կը խոսիք, ուրիշ բան չէ, եթե ոչ քաղաքական խարդավանք մը, զոր դուք կը գործածեք ձեր սեփական նպատակներուն հասնելու համար: Գալով կրոնին, ան ոչ մի կապ չունի քաղաքականութեան հետ: Մենք շուտով առաջ պիտի քալենք յանուն Թուրքիոյ և յանուն թուրքական դրոշակին, մեկ կողմ թողելով հավատքը, որ անհատական և երկրորդական խնդիր մըն է միայն: Դուք և ձեր ազգը պետք է լավ հասկանաք, որ դուք թուրք եք և արաբ հայրենիքի պես բաներ գոյություն չունին»: Թուրքիզմի ոգին լայն զանգվածների շրջանում արմատավորելու միտումով թուրքերեն թարգմանվեց և կարճ ժամանակում երեք հրատարակություն ունեցավ Ղուրանը, մզկիթներում սկսեցին աղոթել թուրքերեն: Այդ նույն նպատակով հիմնադրվեց թուրքական ակադեմիան, որը գտնվում էր երիտթուրքերի կենտկոմի ենթակայության տակ: Հիմնադրվեցին նաև «Թուրք օջախ» անունը կրող նորանոր ակումբներ, որոնք խնդիր ունեին «թուրք ժողովրդի դաստիարակությունը և անոր մտավորական, ընկերային, տնտեսական մակարդակի բարձրացումը, թուրք լեզուի ու ցեղի կատարելագործումը»: Այդ ակումբների դռները ոչ թուրք անձանց առաջ փակ էր: Թուրքիզմի հիմքի վրա վերակառուցվեցին նաև արհեստակցական համքարությունները (էսնաֆությունները), որոնց ծառայեցրին քաղաքական խնդիրների:

Առանձին կազմակերպության մեջ միավորվեցին նաև թուրք առևտրականները: «Սովորական երևույթ դարձավ օտար ապրանքներու և վաճառատներու դեմ պոյքոթները, որոնք հաճախ ավերիչ յարձակումներու կը վերածուեին»:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսները ընտրվում էին պանթուրքիզմի տեսաբաններից՝ Ա. Աղան, Մ. Էմին, Խալիտ Զիա, Աբդուլահ բեյ: Բոլոր կրթօջախների ծրագրերը վերանայվեցին պանթուրքիզմի ոգով, նույն նպատակին ծառայեցվեցին նաև հրատարակչությունները: Թուրանիզմը նյութական մեծ աջակցություն էր ստանում թուրք մեծահարուստներից:

Պետությունը 50 հազ. թուրքական ոսկի հատկացրեց Հուլաղուի, Չինգիզխանի և Լենկթեմուրի մասին հետազոտություններին: Թուրանիստները ողողեցին պետական ապարատը ներքևից մինչև վերև: Անատոլիա ուղարկվեցին առաջատար թուրանիստ գործիչներ այն թուրքացնելու համար:

Կատարված աշխատանքների արդյունքները երկար սպասեցնել չտվեցին: «Թուրանական գաղափարը մտավ ռամիկ ժողովրդի գիտակցության մեջ, Թուրան բառը դարձավ ամբոխի սեփականությունը»:

«Թուրք օջախների» քայլերգում կան հետևյալ տողերը. «Մենք ուզում ենք ամբողջ աշխարհին տիրանալ: Այլևս մեր տաճարը «թուրք օջախն» է, և մեր «Քեաբեն» էլ բարձր ու լուսաշող Թուրանն է լոկ»:[1]

1. «Ազդակ», 1988:

Կայսրության ներսում տարվող պանթուրքիստական գործունեությունը զուգակցվում էր «արտաքին թուրքերի» շրջանում ծավալված աշխատանքի հետ:

Էնվերի ու Ռուսաստանի պանթուրքիստների միջև այդ կապակցությամբ համաձայնություն էր կայացվել:

1913 թ. Բայազետում հրավիրվում է պանթուրքիստների համաժողով, որտեղ որոշվում է ստեղծել «թուրք ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների միություն» և համագործակցության դաշինք է կնքվում նրանց ներկայացուցիչների միջև: Այսինքն՝ տանուլ տալով Բալկանյան պատերազմում, երիտթուրքերն իրենց հայացքը վերջնականապես շուռ տվին դեպի Արևելք: «Թուրքիան,- գրում է Զարեվանդը,- վճռականորեն կոնակը արևմուտքին դարձուցած, առաջ կերթար դեպի արևելք, ուր «միլիոնավոր թուրանիստներ» իրեն կը սպասեին, իրեն ընդառաջ կու գային: Թուրքերու Եվրոպայէն արտաքսումը կարգախոսը Կլատըսթոնի համբավավոր «փրթիով փալասով Եվրոպայէն դուրս...» կը դառնար ուխտագնացութեան ազդանշան արտաքսուողներուն համար: Դարավոր տեղատվութենէ ետք, ծայր կու տար հոգեկան մակընթացություն մը դեպի Ասիա, որ շուտով առարկայականի պիտի փոխուեր: Եվ հակառակ չարաչար և ամոթալի պարտութեան փաստին, թուրք սրտերու մեջ կը տիրեր յաղթական տրամադրություն»:

Երիտթուրք գործիչներից Հուսեյին Ջահիդը գրեց. «Պալքանեան պատերազմը թուրք ժողովրդի գոյութեան տեսակետէն ֆիզիկական պարտություն, բայց բարոյական յաղթանակ մը եղած էր»:

Այդ պարտությունն ու հաղթանակը վերածվելու էին հպատակ ժողովուրդների ուծացման կամ ֆիզիկական ոչնչացման: Եվ երիտթուրքերը ծրագրեցին, մի կողմից, այդ «դժբախտ ժողովուրդներու վերջնական բնաջնջումը, մյուս կողմէ... գինու զորութեամբ, թրքական ժողովուրդներու օգնութեամբ և քաղաքական շահակից մեծ պետություններու աջակցութեամբ վերստեղծել թուրք-թաթարական մեծ կայսրություն...»: Այդ խնդրի իրականացման համար հետևողականորեն բորբոքում էին ամբոխի կրքերն ու մոլեռանդությունը և ահա «հսկայական ու սարսափազդու թափորներ ցերեկը կարմիր դրոշներով և վայրենի կանչերով, գիշերը բոցավառ ջահերով և գինովի աղաղակներով կը շրջեին Պոլսո պողոտաները: Այս Իհթիֆալը Միլլիները (ազգային թափոր) կազմուած թուրք ժողովրդի բոլոր տարրերէն՝ համալսարանականներէն մինչև բեռնակիրները, կերթային համբուրելու Ֆաթիհի և Սուլեյմանի դամբարանները և անոնց վրա՝ ընելու «Վերժի ահավոր ուխտեր»»:

Պանթուրքիզմի տեսաբանները գտնում էին, որ

-ազգագրական առումով թուրքերը, թաթարները, թուրքմենները, ուզբեկները, մոնղոլներն ու մյուսները արյունով ու ծագումով ազգակից ժողովուրդներ են,

հետևաբար նրանք եղբայրներ են,

-սոցիոլոգիական առումով այդ ժողովուրդների մեծ մասին հատուկ են բնավորության նույն գծերը, նույն բարքերն ու սովորությունները, գրեթե նրանք բոլոր մահմեդական են և խոսում են թուրք լեզվի տարբեր բարբառներով: Հետևաբար նրանք նույն ազգն են,

-պատմական առումով այդ բոլոր ժողովուրդները նույն ցեղի տարբեր խմբեր են,

-հոգեբանորեն բոլոր այդ ժողովուրդները արդեն գիտակցում են, որ իրենք թուրք են և հանդիսանում են նույն ազգի անդամները,

-քաղաքական առումով, որպես թուրանական ժողովուրդներից միակը, որ անկախ է, Թուրքիան պարտավոր է ամրապնդել թուրանական ժողովուրդների ազգային համերաշխությունը, աջակցել նրանց անկախանալուն ու միավորվելուն:

***

Բուլղարիայի արտաքին գործոց նախարարի տեղակալ Իվան Գանևը, նկատի ունենալով 1980 թ. սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջումից հետո ստեղծված իրավիճակը, գրում է. «Մենք մեզ մեղավոր չենք համարում: Մեղավոր է պատմությունն ու այն երկիրը, որ 20-րդ դարի վերջին շարունակում է կառչած մնալ հին, Օսմանյան կայսրության շրջանում գլուխ բարձրացրած հավակնություններից: Գլխավոր մեղավորը ժամանակակից թուրք ղեկավարների պանթուրքիստական քաղաքականությունն է, որը պետական հեղաշրջումից և, հատկապես, Կիպրոսի հաջող օպերացիայից հետո դարձել է պաշտոնական քաղաքականություն»:[1]

Վերջերս սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Բյուլենտ Էջևիթը առաջարկեց Թուրքիայում ստեղծել «Արտասահմանում բնակվող թուրքերի մինիստրություն»: Սա միայն Էջևիթի կարծիքը չէ: «Թյուրքիե» թերթը 1989 թ. հուլիսի 23-ին գրեց. «Պետք է ստեղծել Արտաքին թուրքերի մինիստրություն: Թուրքիան 150 միլիոն ճնշված թուրքերի հույսն է»: Թերթը նաև առաջարկեց ստեղծել արտաքին թուրքերի հետ աշխատանքի ֆեդերացիա և Թուրքերի համաշխարհային ֆեդերացիա, երկու տարին մեկ հրավիրել արտաքին թուրքերի կոնգրես, ստեղծել արտաքին թուրքերի պրոբլեմների ինստիտուտ, ճնշված ժողովուրդների շաբաթը Թուրքիայում անցկացնել որպես «Ճնշված թուրքերի շաբաթ»:

Մասնագետների կարծիքով՝ Թուրքիայում պանթուրքիզմը ծնել է նաև նեոօսմանիզմ, որը «Օսմանյան կայսրության վերածնման երազ է...» և «մեծ վտանգ մարդկության համար» մեր օրերում, գրում է Դ. Վանդովը: Թուրքիան տարածքային պահանջներ է ներկայացնում իր բոլոր հարևաններին: Թուրքական իշխանությունները նույնիսկ իրենց իրավունք են վերապահում պնդելու, թե իբր բուլղարական, հունգարական և մյուս մահմեդականները թուրքեր են, իսկ հողե-

1. София-пресс, Западняя пан тюркизма, София, 1989, стр. 11.

ը, որոնց վրա նրանք բնակվում են, թուրքական են: Իրան-իրաքյան կռվի ժամանակ թուրքերը պատրաստ էին զավթելու Իրաքի զգալի մասը»:[1]

Պանթուրքիզմն օգտագործվում է Իրաքի նավթի շրջանները՝ Քիրկուկ-Մոսուլ, զավթելու և ստեղծելու «Քիրկուկի թուրքական հանրապետություն»:

Նկատի ունենալով Թուրքիայում գլուխ բարձրացնող պանիսլամիզմը, Փարիզում հրատարակվող «Սլ-Մուստակբալ» թերթը 1983 թ. գրեց. «Թուրքերն են գալիս:

-Ո՞ւր:

-Դեպի Օսմանյան կայսրության սահմանները... Սա այն նոր կանչն է, որն այս օրերին մարդիկ լսում են Արաբական ծոցի տարբեր կողմերում: ....Իրան-իրաքյան պատերազմը Թուրքիային հնարավորություն տվեց կրկին վերադառնալ Միջին արևելք նույն այն դարպասից, որը նրա երեսին փակվել էր Օսմանյան կայսրության փլուզման ժամանակ»:

Անդրադառնալով այս նույն խնդրին Աթենքի «Կրիսզ Ուիքլի» շաբաթաթերթը 1987 թ. մարտի 27-ին գրեց. «Իրաք-Իրան-Թուրքիա. արդյո՞ք մի նոր Օսմանյան կայսրություն չի գծագրվում», եթե նկատի առնվի Թուրքիայի ծավալապաշտ քաղաքականությունը:

Քաղաքական մեկնաբան Թեոման Էրելը 1987 թ. փետրվարի 3-ին «Միլիեթում» տպագրված «Մեզ ստիպում են նվաճել Մոսուլն ու Քիրկուկը» մեկնաբանման մեջ գրում է. «Ոմանք պնդում են, թե մենք (թուրքերը) ստիպված ենք միջամտել (Իրան-իրաքյան պատերազմին), իսկ ուրիշները թե՝ «եկեք չխառնվենք»: Առայժմ իրենց տեսակետներն են արտահայտում միայն մասնագետները: Մամուլում վիճաբանության մեջ են մտնում նախկին դեսպաններն ու գեներալները: Իսկ հասարակական կարծի՞քը: Արդյո՞ք նրան դիմելու են միայն պատերազմի մեջ մտնելուց հետո: Մոտ մի շաբաթ հետո Անթալիա է ժամանելու ամերիկյան 6-րդ նավատորմի կազմի մեջ մտնող ռազմանավերից մեկը: Ինջիրլիկի բազայում զինվորական հանդերձանք է կուտակվում: Աղբրում անցկացվում են ծմեռային ռազմախաղեր: Կիպրոսում Դիկելիայի ռազմական բազան ամերիկացիների ձեռքին է: Բարձրաստիճան իրանյան դիվանագետները հաճախակի այցեր են կատարում մեր երկիր: Նրանցից մեկը հայտարարեց, որ պրեմիեր մինիստրի հետ քննարկել են այն հարցը, թե ինչ ապագա է սպասում Իրաքին Սադամի վարչակարգի տապալումից հետո»:

Ծովակալ Բիլգեն «Ջումհուրիեթի» 1987 թ. փետրվարի 24-ի համարում գրեց. «Ռազմական շրջաններում մինչև այժմ հիշում են, թե ինչպես 1965 թվականին ԱՄՆ-ի ներկայացուցիչը այդ ժամանակվա Թուրքիայի պրեմիեր մինիստրի հետ զրուցելիս ակնարկել էր, որ կարելի է Թուրքիայի քրդերին միավորող ֆեդերատիվ մի հանրապետություն ստեղծել, իսկ պրեմիեր մինիստրը բանակի գլխավոր շտաբում այս հարցը քննարկման առարկա դարձրեց: Այնպիսի մի ժամանակ,

1. София-пресс, Западняя пан тюркизма, София, 1989, стр. 11.

երբ Թուրքիայից դուրս բռնկած հրդեհի բոցերը արտացոլվում են մեր պետական սահմանների վրա, ամերիկացիների հին առաջարկը նորից է լույս աշխարհ դուրս բերվում: Կարճ ասած, մենք չպետք է միլիտարիզմի խաղերին զոհ դառնանք»:

«Հուրիեթը» 1987 թ. մարտի 8-ին գրել է. «Մի կողմից Թուրքիան փորձում է Մոսուլին և Քիրկուկին տիրանալ, մյուս կողմից ջանում է իմանալ, թե մեծ տերությունները ի՞նչ դիրք կբռնեն, եթե ինքը Մոսուլ ներխուժի»:

Նախկին պրեմիեր մինիստր Բ. Էջևիթը «Նոկտա» ամսագրի մարտի 8-ի համարում գրել է. «Ինձ թվում է, որ այս հարձակումների հետևում պետք է փնտրել ոչ թե անջատողական ուժերին, այլ ինչ-որ այլ գործոններ: Անձամբ ես առաջարկում եմ հետևյալ երկու գործոնների վրա ուշադրություն դարձնել: 1.Որոշ արտաքին ուժեր Թուրքիային հրահրում են սահմանից այն կողմ կատարվող դեպքերին միջամտելու, դրանով իսկ նրան ներքաշելու Մերձավոր Արևելքի խճճված հարցերի ոլորտը և ծառայեցնելու իրենց նպատակներին: 2.Վախենալով, որ Թուրքիայում դեմոկրատական կարգերի վերականգնումը օրինակ կարող է ծառայել Մերձավոր Արևելքի ժողովուրդների համար, նույն արտաքին ուժերը ամեն գնով աշխատում են արգելակել դեմոկրատիայի հաղթանակին Թուրքիայում»:

Մարտի 7-ին «Միլիեթը» տպագրեց. «Ովքե՞ր են կանգնած քուրդ անջատողականների հետևում» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Մեզ առավել անհանգստացնում է այն փաստը, որ հարավարևելյան Թուրքիայում կատարվող դեպքերը սկսել են դուրս գալ «անջատողական ուժերի կողմից տարվող կամպանիայի» շրջանակներից: Իսկապես, եթե ուշադրությամբ հետևենք, կտեսնենք, որ շատ հաճախ քուրդ պարտիզանների զոհ են դառնում տեղի բնակիչները: Սպանում են այն մարդկանց, որոնք, ըստ տրամաբանության, իրենց կողմը պետք է գրավեին: Սա պարտիզանական կռիվների պատմության մեջ աննախադեպ մի երևույթ է: Ուշադրության է արժանի նաև այն, որ նրանց տրամադրության տակ գտնվող զենքերը գնալով ավելի են կատարելագործվում և շատանում: Տարօրինակ պատկեր է ստացվում. այս մարդիկ հրապարակավ առաջ են քաշում մի տեսակի պահանջներ, իսկ իրականում բոլորովին այլ նպատակներ են հետապնդում: Կարծես թե հիմնական նպատակը՝ Թուրքիային մերձարևելյան կոնֆլիկտի մեջ ներքաշելն է, Իրան-Իրաքյան պատերազմի նկատմամբ որդեգրած չեզոքությունից Թուրքիային հանելը, զանազան միջոցներով նրան ստիպել միջամտելու և Թուրքիայի ներսում նոր խլրտումներ առաջացնելը»:

Մի կողմից՝ ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ուայնբերգերը հայտարարում էր. «Հնարավոր չէ, որ Թուրքիան միջամտի մերձավորարևելյան կոնֆլիկտին», մյուս կողմից, Օկտայ Գյուները «Թերջումանում» գրում է. «Իսրայելից պետք է օրինակ վերցնենք (նկատի ունի այլ պետությունների տարածքների ռմբակոծումը) և առանց խտրություն դնելու, թե ով է մեր դեմ՝ Սիրիան, Բեյրութը, թե Իրաքը՝ անհապաղ հարձակման անցնենք»:

Եվ եթե գործունեության համար օրինակը Իսրայելն է, ապա այն նաև կարող է դառնալ դաշնակից ընդդեմ արաբական աշխարհին: Ահա թե ինչու «Հուրիեթը» 1987թ. մարտի 16-ին գրեց. «Թուրքիան պարտավոր է իր հարաբերությունները շտկել Իսրայելի հետ»:

Թուրքիան վերածվում է ռեգիոնի ժանդարմներից մեկի և Իսրայելից հետո դարձել է ԱՄՆ-ի ամենահեղինակավոր դաշնակիցը Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ը Թուրքիային տվել է ռազմական օգնություն 1983 թ. -400, 1984 թ. - 755, 1985 թ. – 900 միլիոն դոլար: Այսինքն՝ այդ օգնությունը երեք տարվա ընթացքում աճել է 2-3 անգամ: ԱՄՆ-ն իրավունք ունի Թուրքիայի տարածքում ունենալու 60 ռազմական օբյեկտներ, այդ թվում ԽՍՀՄ-ին ուղղված լրտեսական սարքեր, որոնց մեծ մասը գտնվում է քրդաբնակ շրջաններում:

1988 թ. հունիսի 28-ին հանդես գալով Վաշինգտոնում, Ք. Էվրենը ասաց. «Թուրքիան, որը գտնվում է աշխարհի ամենակարևոր ռեգիոններից մեկում, ունի ամենաերկար սահմանը Խորհրդային Միության հետ, պաշտպանում է ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող նեղուցները և ԱՄՆ-ից հետո ՆԱՏՕ-ում ունի ամենաբազմամարդ բանակը... Թուրքիան ապահովում է ՆԱՏՕ-ի և Վարշավայի պակտի միջև ջրբաժան սահմանների մեկ երրորդը... Նա ռազմական ծախսերի մակարդակով մտնում է առաջին քառյակի մեջ, չնայած եկամուտների մակարդակով վերջին տեղում է:

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Թուրքիան իր վրա է վերցրել անհամեմատ ավելի մեծ ֆինանսական ծանրաբեռնվածություն, քան այն, ինչ նա պիտի վերցներ: Դրա համար էլ թուրքական զինված ուժերի նորացման ծրագրի կատարման արագացումը կհանդիսանա արտակարգ շահութաբեր ներդրում Արևմուտքի անվտանգության ապահովման և զսպման միջոցների տեսակետից»:[1]

***

Պանթուրքիզմի մշակութային ասպեկտն այն է, որ նրա գաղափարախոսների կարծիքով բոլոր մշակույթների հիմքը թուրքական է: «Թերջուման» թերթը 1989 թ. մարտ-ապրիլ ամիսներին տպագրեց մի շարք հոդվածներ, որոնք «ապացուցում են», թե Թուրքիան հպատակ ժողովուրդներին բերեց մշակույթ, քաղաքակրթություն և մարդասիրություն: «Թուրքական» են հռչակվում այդ ժողովուրդների հոգևոր արժեքները, իսկ նրանց գիտնականների, գրողների, ճարտարապետների և այլնի ստեղծագործական նվաճումները համարվում են «թուրքական ստեղծագործական հանճարի դրսևորում»: Ըստ պանթուրքիստների «բոլոր մեծ անհատները թուրք-մուսուլմաններ են»:

Խոսելով պանթուրքիստների այդ հավակնությունների մասին հույն գիտնական Ա. Անդրոնիկոսը ծաղրում է. «Ինչ վերաբերվում է այդ ժողովրդի (թուրքերի) մշակութային ավանդույթներին, ապա իմ (թուրք) գործընկերները սեփա-

1. Թուրքական հեռուստատեսություն, 29 հունիսի 1988 թ.:

կան աչքերով կարող են տեսնել կործանումների ու վանդալիզմի հետքերը, որ դրսևորել են նվաճողները հին հուշարձանների նկատմամբ և կարդալ ԱՄՆ-ում ընթացող մի շարք դատական պրոցեսների մասին՝ կապված հուշարձանների գողանալու և վաճառքի հետ»:[1]

«Թուրքերեն լեզվի քերականություն» 1963 թվին լույս տեսած դասագրքում թուրք են համարվում Ալիշեր Նավոյին ու Նիզամի Գյանջևին: Թուրքական և արտասահմանյան գրականությունների 1961 թ. լուս տեսած դասագրքում ևս թուրք գրող է հռչակված Ֆիզուլին: Երիտասարդական հանրագիտարանում թուրք են հռչակված Առաջավոր Ասիայի ժողովուրդների գիտնականները, փիլիսոփաները, գրողները: Այդ թվում է նաև Ավիցենան: Թուրքական ծագում են վերագրում նաև Մեսրոպ Մաշտոցին:

Թուրքական է համարվում իսլամական ամբողջ մշակույթն ու քաղաքակրթությունը: Թուրքական է նաև ինքը՝ իսլամը, թուրք են բոլոր մահմեդականները: Թուրք են նաև հազարամյակներ առաջ Փոքր և Առաջավոր Ասիայում բնակված ժողովուրդները՝ կելտերը, խեթերը, բազմաթիվ այլ հնդեվրոպական ժողովուրդներ: Թուրք պատմաբան Փ. Ահմադը գտնում է, որ գորշ գայլերի գաղափարական զինանոցը պարունակում է թշնամական մոտեցում արաբների կողմից պաշտվող իսլամի նկատմամբ և պահանջ է առաջադրվում այն փոխադրել թուրքական հենքի վրա, որպեսզի մահմեդական կրոնում ևս ապահովվի թուրքերի առաջնությունը: Ըստ այդմ էլ պանթուրքիստները հայտարարում էին. «Թուրքերը կպաշտպանեն իսլամը, եթե նա թուրքացվի»:

«Արտաքին թուրքերին ազատագրելու» և ԽՍՀՄ-ի նկատմամբ ոևանշիզմի տենդը պանթուրքիստներին դեռևս 30-ական թվականներին մոտեցրին միջազգային ֆաշիստական շարժմանը, որը հոգեհարազատ էր նրանց և որի ազդեցության տակ թուրքիզմի գաղափարախոսությունը սկզբունքային փոփոխության ենթարկվեց: Եթե նախկինում պանթուրքիստները «Մեծ թուրանի» ստեղծում ասելով հասկանում էին լեզվի ու մշակույթի ընդհանրություն ունեցող ժողովուրդների միավորում, ապա 30-ական թվականներին նրանք սկսեցին քարոզել թուրք ժողովուրդների ընդհանուր ռասայական կապերի գոյությունն ու թուրքական ռասայի առավելությունների գաղափարաբանությունը: Դա մի ընթացք էր, որը պանթուրքիզմի նպատակադրումների շրջանակներն աստիճանաբար ընդլայնելով, նրան նորից հանգեցրին թուրանիզմի, որն իր մեջ էր ներառում նաև հունգարացիներին, ֆիններին և էստոնացիներին:

Պատահական չէ, որ պանթուրքիստական կազմակերպությունները մեծ ոգևորությամբ ընդունեցին ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումը: «Դա,- կարդում ենք 1986 թ. Նյու Յորքում հրատարակված «Բուլղարական կապերի արշալույսն ու անկումը» գրքում,- ոչ միայն հարված էր նրանց գաղափարախո-

1. София-пресс, Западняя пан тюркизма, София, 1989, стр. 135.

սական թշնամիներին, ավելի կարևոր էր այն, որ այդ հարձակումը հույս էր ներշնչում, որ խորհրդային ֆեդերացիան ջախջախվելու է և Խորհրդային Միությունում «գերության մեջ գտնվող» թուրք ժողովուրդները միավորվելու են թուրքական հայրենիքի հետ: Այդ հնարավորությունը հաշվի էին առել նաև նացիստները»: Այդ օրերին էր, որ Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆրանց ֆոն Պապենը Բեռլինին խորհուրդ տվեց Խորհրդային Միության դեմ օգտագործել նաև պանթուրքիստներին: Նրա կարծիքով Գերմանիան պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի հարավ-արևելքում պետական խոշոր կազմավորում ստեղծելու վրա, որը պետք է հանդիսանա մշտական վտանգ ԽՍՀՄ-ի համար: Ուկրաինան չի կարող բավարար չափով կատարել այդ խնդիրը: Նրա բնակչությունը սլավոնական է, որը ցանկացած պահին որոշելու է, որ իր ապագան կապված է ԽՍՀՄ-ի հետ: Ինչ վերաբերվում է թուրքերին, ռուսների հետ նրանց գործակցելու հնարավորությունը պետք է լրիվ բացառել:

Թուրքագետ Չառլզ Հոսլերը նշում է, որ «պանթուրքիստական իռեդենտիստները Խորհրդային Միության անկումը համարում էին անխուսափելի և մտադրվել էին ստեղծելու Խորհրդային Ռուսաստանի և Չինական Թուրքմենստանի բոլոր թուրք ժողովուրդների կոնֆեդերացիա Թուրքական Հանրապետության ղեկավարության ներքո»: 1942 թ. աշնանը, սպասելով Ստալինգրադի անկմանը, Թուրքական Հանրապետությունն իր զորքերը կենտրոնացրեց Կովկասի սահմանի վրա, «պատրաստ օգտվելու այն բոլոր հնարավորություններից, որ ընձեռելու էր գերմանա-խորհրդային պատերազմը»:[1]

Մարշալ Ա. Գրեչկոն գրել է. «Գերմանական գլխավոր հրամանատարությունը հույս ուներ, որ Անդրկովկաս դուրս գալուն պես, Թուրքիան հարված է հասցնելու Խորհդային Կովկասին հարավից»:[2]

«Ենի Սաբահ» թերթի վկայությամբ, Թուրքիային իր կողմը գրավելու համար Գերմանիան նրան խոստացել էր Սիրիան, Իրաքը և Կովկասը: Այդ օրերին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սարաջօղլուն հայտարարեց. «Որպես թուրք տենչում եմ Ռուսաստանի ոչնչացումը, դա թուրք ժողովրդի նվիրական երազանքն է»: 1942 թ. սեպտեմբերի 26-ին «Սոնդելեգրաֆ» թերթը գրեց. «Վոլգան մեր գետն է...», իսկ «Բոզքուրդ» թերթը տպագրեց «Թուրքիզմը սպասում է» հոդվածն ու «Մեծ Թուրքիայի» քարտեզը, որն ընդգրկում էր ԽՍՀՄ-ի տարածքի կեսը: Սակայն պանթուրքիստների հույսերը չարդարացան, ԽՍՀՄ-ը հաղթեց: Դրանից հետո էլ նրանց կազմակերպություններն ու հրատարակությունները շարունակեցի մնալ հակակոմունիստական և, առաջին հերթին, հակախորհրդային գաղափարախոսությունների բանակում, շարունակեցին կապերի մեջ մնալ միջազգային ֆաշիզմի հետ: Այդ կողմնորոշումը 60-70-ական թվականներին հանգեցրին Թուրքիայում նեոֆաշիստական կազմակերպությունների և, առաջին հերթին,

1. София-пресс, Западняя пан тюркизма, София, 1989, стр. 19.

2. **Ա. Գրեչկո** Ճակատամարտ Կովկասի համար, 1969, էջ 19:

նացիոնալիստական գործողությունների կուսակցության ստեղծմանը:

Որ պանթուրքիստների աջ թևը ուղղակիորեն հարեց ֆաշիստական գաղափարաբանություններին, պատահական չէր: Թուրքական ֆաշիզմի գաղափարախոսությունը կրեց «ինը ճառագայթներ» անունը: Թուրքեշի, Քարակայի և այլոց կողմից հրապարակ նետված այս տեսությունը պնդում է, որ հասարակական բոլոր արժեքներից (իդեալիզմ, կոլեկտիվիզմ, բարոյականություն, գիտություն, հասարակական առաջընթաց և այլն) վճռորոշ դեր ունի միայն ազգայնամոլությունը: Թուրքեշի կուսակցության 1981 թ. տեղի ունեցած դատավարության մեղադրական եզրակացության մեջ կարդում ենք, որ այդ կուսակցության նպատակն է հաստատել «ֆաշիստական վարչակարգ, որը հենվելու է շովինիզմի ու ռասիզմի վրա: Ա. Թուրքեշը գրում է. «Թուրք ժողովուրդը աստծո ընտրյալ ժողովուրդ է»:

Գնդապետ Արփարսլան Թուրքեշի հիմնադրած կուսակցությունը դարձավ պանթուրքիզմի գաղափարների ժառանգորդն ու տարածողը: Նրան կից գործող երիտասարդական կազմակերպությանը «Գորշ գայլեր» անուն տալը նշանավորեց այդ կուսակցության հավատարմությունը երիտթուրքերի պանթուրքիստական գաղափարախոսությանը: Նշենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Էնվեր փաշայի կողմից ստեղծված երիտասարդական կազմակերպությունը ևս «Գորշ գայլեր» անունն էր կրում:

«Բոզքուրդ» թերթը դեռ 1942 թվին է սահմանել «գորշ գայլերի» խնդիրները: «Ո՞վ ենք մենք,- գրում է թերթը:- Մենք գորշ գայլեր ենք: Ո՞րն է մեր գաղափարախոսությունը: Գորշ գայլի թուրքիզմը: Ո՞րն է գորշ գայլերի հավատամքը: Նրանք հավատում են, որ թուրք ցեղը և թուրք ազգն ուրիշ ցեղերից կամ ազգերից առավել են: Ո՞րն է նրանց գերազանցության աղբյուրը: Թուրքական արյունը: Արդյո՞ք թուրքը ի ծնե է գերազանց: Թուրքը գերազանց է ի ծնե:

...Գորշ գայլերը պանթուրքի՞ստ են: Այո, գորշ գայլ թուրքերի սրբազան նպատակն է տեսնել թուրքական պետությունը 60-միլիոնանոց ազգ դարձած: ...Պատերա՞զմ: Այո, պատերազմ, եթե հարկ լինի»: 80-ական թվականների վերջերին «Գորշ գայլեր» կազմակերպությունը Թուրքիայի ամբողջ տարածքով ստեղծեց երիտասարդական նախապատրաստական ճամբարներ, իսկ 1971 թ. մարտի 12-ին պետական հեղաշրջումից հետո նա ղեկավար ուժ դարձավ շատ դպրոցներում ու բուհերում:

1980 թ. Թուրքիայում հաշվվում էր գորշ գայլերի 1700 կազմակերպություն 200 հազար անդամով ու մեկ միլիոն համակիրներով:

1971 թվին Պոլսում լույս տեսավ Շնքեթ Սուրեյա Այդեմիրի ինքնակենսագրական վեպը, որում կան հետևյալ տողերը.

«Մենք ուզում ենք իշխել արար աշխարհին,
Մեր Չուկետն է թուրք հայրենին,

Մեր Քեաբեն է բարձր և պայծառ Թուրանը,
Պահեստի սպաներ, ոտքի՛, ուղին նշմարվում է
Ահա, տեսեք, գնում ենք Կովկաս,
Թուրանն է մեզ սպասում»:

Չնայած այն բանին, որ Թուրքիան դեռևս 60 տարի առաջ իր սահմանադրությունից դուրս էր գցել «իսլամը պետական կրոն է» արտահայտությունը, սակայն մինչև օրս էլ այդ դրույթը ակտիվ կենսագործունեության մեջ է: Պատճառն այն է, որ քեմալական շարժումն ու ռեֆորմները շոշափեցին հասարակության միայն վերին շերտերը, իսկ ժողովրդական լայն զանգվածները շարունակեցին ղեկավարվել իսլամի դոգմաներով:

Ժամանակակից թուրքական ազգայնամոլությունը սնվում էր մի քանի աղբյուրներից, որոնցից գլխավորը «էթնիկական նացիոնալիզմն է»: Նա այլասերելով իր մեջ է ներառում տարբեր տոհմա-ցեղային միավորումների էթնիկական առանձնահատկություններն ու «ֆեոդալական-կղերական նացիոնալիզմը», որը կրոնական հիմքի վրա իրար է հակադրում սոցիալ-էթնիկական ընդհանրությունները: Դասակարգային շահերը քողարկվում են որոշակի ազգության միասնական կրոնի վարագույրի հետևում: Ասվածից հետևում է, որ մեր օրերում ևս.

-Պանթուրքիզմն ու պանիսլամիզը թուրքական նացիոնալիզմի հենարաններն են և որոշում են նրա էությունը որպես բուրժուական նացիոնալիզմ՝ մինչ-բուրժուական գաղափարախոսությունների տարրերով:

Հավանաբար դրանով պիտի բացատրել ժամանակակից թուրքական նացիոնալիզմի հակումը Թուրանի գաղափարի, «թուրքական քաղաքակրթության» առասպելական-երևակայական հայրենիքի նկատմամբ և օսմանյան տիրակալությունը վերականգնելու հիվանդագին ձգտումը: Այս առումով ամենևին էլ պատահական չէ, որ ժամանակակից թուրքական ազգայնամոլական գաղափարաբանության հիմքում դրված է Զիա Գեոքալփի երեք պահանջները՝ թուրքացում, իսլամացում և մոդեռնացում:

-Պանթուրքիզմի հիմքում ընկած է ռասայական անհավասարության, ժողովուրդներին բարձրագույն և ստորին ռասաների բաժանման տեսությունը... Հիմնվելով «կենսաբանական անհավասարության» սկզբունքի վրա, պանթուրքիզմը, օրինակ, արդարացնում է բուն Թուրքիայում մի շարք ոչ թուրք ժողովուրդների գենոցիդն ու բռնի ուծացումը:

-Պանթուրքիզմը լինելով ոչ թե թուրք ժողովրդի, այլ թուրքական բուրժուազիայի գաղափարախոսություն, ազգային թշնամանքի հրահրման միջոցով խոչընդոտում է աշխատավորական զանգվածների դասակարգային պայքարը: Նա պրոպագանդելով «թուրքական միացյալ ընդհանրության մեջ» ամբողջ թուրք ռասայի միավորումը, դրանով ևս արտահայտում է բուրժուազիայի շահերը:

-Պանթուրքիզմը ձգտում է (և ոչ առանց հաջողության) մեծապետական շովի-

նիզմի թույնով թունավորել աշխատավոր զանգվածների գիտակցությունը և այդ միջոցով հասնել ազգային կոնսոլիդացիայի: Ըստ այդ գաղափարախոսության Թուրքիայում դասակարգեր չկան, այլ կա միայն միասնական թուրք ժողովուրդ:

-Պանթուրիզմը ոչ միայն ռասիստական, այլ նաև զավթողական ագրեսիվ գաղափարախոսություն է, համաձայն որի «բոլոր մարդիկ, որոնք խոսում են նույն լեզվով, իրար հետ կապված են ընդհանուր մշակույթով ու կրոնով, հանդիսանում են միասնական ընդհանրության անդամներ՝ անկախ այն բանից, թե նրանք մոլորակի որ շրջանում են բնակվում»: Ըստ որում, այդ միավորման մեջ Թուրքիային հատկացվում է ղեկավար դեր, որը պետք հանդիսանա այդ «թուրքական մեծ հասարակության» քաղաքական և հոգևոր կենտրոնը: «Հեռանկարում,- գրել է Զիա Գեոքալփը,- պանթուրքիզմի նպատակը Թուրանի ստեղծումն է», որի մեջ կմտնեն բոլոր այն երկրները, որոնցում բնակվում են թուրքեր և որոնցում խոսում են թուրքերեն:

Ահա թե ինչու թուրքական հետադիմական և ագրեսիվ ուժերը մեր օրերում ևս մեծ ակտիվությամբ են օգտագործում «Թուրանական պետության» մասին Գեոքալփի տեսությունը: Գործնական քաղաքականության մեջ այդ տեսությունը նշանակում է «թուրք ժողովուրդներին» ազատել Մոսկվայի, Հունաստանի և Բուլղարիայի տիրապետությունից, այսինքն՝ խոսքը գնում է զավթողական գաղափարաբանության մասին: Բայց ոչ միայն այդ: Պանթուրքիզմն իր էությամբ լինելով ռասիստական, մեծապետական և ֆաշիստամետ գաղափարախոսություն, լկտի հավակնությունով «տնօրինում է մյուս ժողովուրդների մշակույթները, անամոթաբար յուրացնում է ուրիշների պատմությունը, մշակութային հուշարձանները...»: Այդ ձևով «թուրքացվեցին» արաբական, քրդական, հայկական, վրացական, հունական և ուրիշ մշակույթների բազմաթիվ հուշարձաններ:

Պանթուրքիզմի շովինիստական-ռասիստական դրույթների ազդեցության տակ են թուրքական մտավորականության մեծ թվով ներկայացուցիչներ, որի հետևանքով այդ գաղափարախոսությունը համառությամբ թափանցում է հնագիտության, լեզվաբանության, պատմության, մարդաբանության, ազգագրության, աշխարհագրության և մյուս գիտությունների մեջ, ապացուցելու համար, որ «թուրքական ռասան» բարձրագույն ռասա է և նրան է վիճակված միավորվելու միջոցով տնօրինելու մարդկության ճակատագիրը:

Թուրք ժամանակակից սոցիոլոգ Ալի Ֆակիհ Ջիհանը, ծաղրելով ժամանակակից պանթուրքիստներին, գրում է. «Օգուզները, թաթարները, կիրգիզները, ուզբեկները, յակուտները ստեղծել են մեկը մյուսից տարբեր մշակույթներ: Ոչ աչքերի ու մազերի գույնը, ոչ գանգի ձևը չեն կարող ապացույց ծառայել նրանց ազգագրական ընդհանուր կեցության մասին: Այսօրվա թուրանականների պրակտիկ գործունեությունը կարելի է համեմատել աճպարարի փորձի հետ՝ ոգիներին կանչել ու նրանց հետ խոսել»:

Աշխարհակալ ցնորքներ ունեցող ազգայնամոլներին նկատի ունենալով՝

թուրք մի այլ պրոֆեսոր Տ. Տեկինը գրում է. «Անատոլիական և ասիական թուրքերի միջև հազարամյակների ընթացքում հաստատվել է աշխարհագրական, սոցիալական և մշակութային տարբերություններ: Թուրքական բարբառների միջև ոչ մեծ տարբերությունները աստիճանաբար մեծացել են, որն ի վերջո հասցրել է ազգակից, բայց տարբեր լեզուների ստեղծմանը: Թուրքերեն ու չուվաշերեն, յակուտերեն և խաքքերեն լեզուների միջև տարբերությունը, եթե ավելի մեծ չէ, ապա փոքր էլ չէ, քան, օրինակ, անգլերենի ու գերմաներենի միջև»:

«Հռոմեական և պանթուրքական կայսրություններն անհնար է վերածնել»,- եզրակացնում է պրոֆեսորը:

Թուրք ազգայնամոլների կարծիքով՝ ազգային գիտակցությունը, ազգային ոգին, ազգային մշակույթը, ազգային բարոյականությունը պատմության որոշիչ ուժերն են և միայն նրանց միջոցով է հնարավոր դաստիարակել «ազգային միասնական գիտակցություն և ոգի», այսինքն՝ ազգը վերդասակարգային է և բացարձակ: Յու. Ֆ. Ակինջին այդ առնչությամբ գրում է. «Համաձայն այդ գաղափարաբանության հասարակությունը դասակարգերի բաժանված չէ: ...Գլխավորը ազգն է, նրա ընդհանրությունը»:

Մի այլ թուրք գործիչ գրում է. «Դարեր շարունակ ազգը եղել է պատմական հիմնական միավորը: Այդպես եղել է և կլինի միշտ: Ազգերի միջև պայքարը հանդիսանում է պատմության գլխավոր շարժիչ ուժը»:

Սույն աշխատանքում մի քանի անգամ անդրադարձել ենք «միասնական թուրք ազգի» սոցիալական կազմին, որը «ենթադրում է» այդ ազգի բարոյա-քաղաքական միասնություն: Տեղին է բերել ևս մի քանի թվեր: Մի կողմում, 4-5 միլիոն գործազուրկներ, իսկ մյուս կողմում՝ մագնատներ, բանկիրներ ու կոնցեռնների տիրակալներ: Մի կողմում՝ 10 միլիոն հողազուրկ աղքատ գյուղացիներ, իսկ մյուս կողմում՝ 491 ընտանիքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի 500 և ավելի հեկտար ջրովի հողեր:

***

Առաջադրված խնդիրների գիտական մշակման գործում մեծ է Ն. Ադոնցի, մասնավորապես նրա «Հայկական հարցի լուծման շուրջ» ուսումնասիրության նշանակությունը:[1] Հեղինակի լայնախոհ, ինքնատիպ մտածողությունն օգնում է գիտական բարձր մակարդակի վրա մերժել թուրքական տեսակետները Հայկական հարցում:

Մեջբերումներ այդ ուսումնասիրությունից:

Բյուզանդիայի պատմական ծառայություններից մեկն այն է, որ առաջին պետությունն էր, որն ամենատարբեր ծագում ունեցող ազգությունների բարեկամական համագործակցության առաջին օրինակը տվեց, ազգություններ, որոնք միավորվել էին ընդհանուր պետության կառուցման գործում:

1. **Ադոնց Ն.** Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., 1989:

Մտնելով այս ազդեցիկ շինությունը, թուրքերը պարզապես ապացուցեցին ոչ միայն իրենց անկարողությունը շարունակելու իրենց նախորդների քաղաքակրթիչ խնդիրը, այլև, առակի կենդանու նման, սկսեցին կտրել այն հզոր ծառի բուն արմատները, որի պտուղը նրանց իսկ գոյության և բարեկեցության աղբյուրն էր: Կրոնական տարբերությունների սկզբունքի վրա հիմնված քաղաքականությունը երկիրը բաժանեց մահմեդականների ու ոչ մահմեդականների երկու թշնամական ճամբարների: Նրանց փոխադարձ թշնամությունը արհեստականորեն բորբոքվեց և վերածվեց բոցի:

Ճշմարիտ է, որ հարաբերությունները վաչկատուն նորեկների և մի հին քաղաքակրթության նստակյաց տարրերի միջև չէին կարող առանձնապես բարեկամական լինել: Կառավարության խնդիրը պետք է լիներ հաշտեցնել այս բնական տարընթացությունները և վերացնել հակասությունների սուր եզրերը այս անհավասար արժեքներ ունեցող ուժերի միջև: Թուրք կառավարողները, սակայն, իրենց բարեկեցությունը փնտրեցին բնակչության այս երկու գործոնների հակամարտության մեջ: Նրանց օտարոտի էին կառավարման այն տարրական սկզբունքները, որոնք մատնանշում էին նրանց երբեմն-երբեմն առավել լուսավորյալ թուրքերը: «Մեր քաղաքական իմաստուններին,- ասում է Ահմեդ Ռեսմի էֆենդին,- Ալլահը ոչ խելք է շնորհել, ոչ էլ փորձառություն: Պատմության ուսումնասիրությունը նրանց գործը չէ: Հետևաբար նրանց համար որոշակի է, որ մահմեդականի առաջնահերթ և ամենասրբազան պարտականությունն է բոլոր անհավատների վերացումը երկրի երեսից»:

Քրիստոնյաներին պատկանող հողերը մշտապես մահմեդական ներխուժման սպառնալիքի տակ էին գտնվում: Ասորի քրիստոնյաներին վտանգ էր սպառնում Իրաքի մահմեդականների կողմից, քրիստոնյա Հայաստանին՝ Քուրդիստանի մահմեդականների կողմից: Բուն Անատոլիայում թուրքերը, միացած տարբեր ծագում ունեցող ասիմիլացված ցեղերին, ճնշում էին քրիստոնյա հույներին, հայերին և նախաթուրքական ժամանակաշրջանի մյուս «հոռոմներին»:

Կառավարական իշխանությունը խրախուսում էր կրոնական հակամարտությունը և օգտագործում էր այն որպես միջոց ահաբեկելու և հնազանդեցնելու այն տարրերին, ովքեր հրաժարվում էին դավաճաններ դառնալուց, և որոնց դիմադրությունը իսլամին դիտվում էր որպես վտանգ թեոկրատական կառուցվածքին: Երկու ընդդիմադիր կրոնական աշխարհների միջև ժառանգական թշնամության մեջ կառավարությունը խաղում էր ոչ թե խաղաղեցնողի, այլ գլխավոր հրահրողի դեր: Հետևաբար, երկու ընդդիմադիր ճամբարները դարեր շարունակ կանգնած էին դեմ առ դեմ որպես թշնամիներ՝ հավատացյալներ և գյավուրներ, կառավարողներ և կառավարվողներ, զինվածներ և անզինվածներ:

Անատոլիայի եկամուտները, որոնք ամբողջապես կամ մասամբ գանձվում էին հօգուտ նրա ֆեոդալ տերերի, կազմում էր 37318730 ասպեր: Կարամանիայինը՝ 10800175: Երկու պրովինցիաների ընդհանուր եկամուտը

հետևաբար, 48110905 ասպեր էր:

Հայկական պրովինցիաների խումբը ընդամենը տրամադրում էր մոտավորապես 83683676 ասպեր: Պետք է նշել, որ միայն Վանը տարեկան վճարում էր 25079000 ասպեր: Սվազը՝ 13187327, Դիարբեքիրը՝ 11400000, Էրզրումը՝ 5906920, Կարսը՝ 9004119, Չըլդրը՝ 9686000, Մարաշը՝ 9420310:

Սիրիական խումբը վճարում էր շուրջ 14271721 ասպեր, Շամը՝ 6558600 և Հալեպը՝ 7713121: Ինչ վերաբերում է չորրորդ Միջագետքյան և արաբա-քրդական խմբին, ապա Մոսուլի պրովինցիան վճարում էր 2240000 ասպեր, մինչդեռ Շահրիզորի և Բաղդադի եկամուտները հսկողությունից դուրս էին և յուրացվում էին նստակյաց ու վաչկատուն ցեղապետների կողմից: Չնայած հայկական և սիրիական հողերից գանձվող հարկերը շատ ավելի ծանր էին քան մահմեդական պրովինցիաներից գանձվողը: Առաջիններից ստացվող եկամուտները հասնում էին հարյուր միլիոնավոր ասպերի, մինչդեռ վերջիններից ստացվողը հազիվ է կազմում այդ գումարի կեսը:

Միայն հայկական պրովինցիաները վճարում էին շուրջ 84 միլիոն, որից 25 միլիոնը մուծում էին Վանը և Մուշը, զուտ հայկական բնակչություն ունեցող պրովինցիաները: Կարճ ասած, թեև քրիստոնեական պրովինցիաները երեք անգամ պակաս տարածք էին գրավում, քան մուսուլմանականը, վերջիններից կրկնակի ավելի էին վճարում:

Այս փաստը՝ ոչ մի կերպ չի կարելի արդարացնել կամ բացատրել մեկը մյուսի հանդեպ ավելի մեծ բերրիությամբ կամ գերազանցությամբ: Բացառությամբ մի քանի հովիտների Հայկական լեռնաշխարհը հարմար չէ արժեքավոր ցանքերի համար, և այդ առումով ավելի վատ է ոչ միայն Միջագետքի բերրի դաշտավայրերի, այլև նույնիսկ Անատոլիական բարձրավանդակի շատ շրջանների համեմատությամբ: Տարբեր պրովինցիաներից ծանր հարկագանձումները կարող են բացատրվել միայն էթնիկական նկատառումներով՝ մեկը բնակեցված է քրիստոնյաներով, մյուսը՝ մահմեդականներով: Առաջինները դատապարտված են ավելի մեծ չափերի շահագործման, քան վերջինները:

Հայկական հողերից վերցվող չափից ավելի հարկերը առանձնապես ծանր էին: Ընդհուպ մինչև 80 խոշոր և շուրջ 14000 մանր ավատատերեր տզրուկի պես մխրճվել էին Հայաստանի մարմնի մեջ, և այդ կառավարության հավանությամբ: Այսպիսի մի բեռ, վեր ամեն մի երկրի ուժերից, դատապարտում էր աղքատացման, հյուծման և քայքայման մի տնտեսական կարգ, որը կառուցվել էր դարերի տքնաջան աշխատանքով:

Չնայած թուրքական կառավարության բոլոր ջանքերին տեղաշարժելու ազգաբնակչությունը մեկ վայրից մյուսը, բնաջնջելու յուրաքանչյուր նահանգի ոգին ու բնույթը և ստեղծելու միատարր մահմեդական գանգված, նրանց բոլորին թուրքերի վերածելու վերջնանպատակով, այս նահանգները մինչև հիմա էլ պահպանել են իրենց ազգային դեմքը: Չուլման այս քաղաքականությունը ներկայումս

որոշակիորեն դժվարություն է հարուցում՝ պարզորոշ սահմանազատելու տարբեր տարածքների ազգային սահմանները: Կասկած չկա, սակայն, որ նոր պայմաններում բոլոր այս էթնոգրաֆիական ալիքները, որոնք դուրս են սփռվել իրենց բնական գոտուց, կվերադառնան իրենց ընտանի ափերը, և տարագիրներն էլ իրենց տներն ու օջախները՝ ավելի մեծ դյուրությամբ և պատրաստակամությամբ, քան որով թողել էին դրանք:

Վերոհիշյալ բոլոր նահանգներից առավել վիճելին իր էթնիկական բնույթով, վիճելին առնվազն թուրքական դիվանագիտության համար, Հայաստանն է: Մենք հանգամանորեն կանգ ենք առնում դրա վրա ոչ սոսկ այն պատճառով, որ այն անմիջականորեն մեր հետաքրքրության առարկան է, այլև այն նկատառումով, որ հայկական տարածքի սահմանների որոշումը միաժամանակ վճռում է մյուս ազգությունների սահմանները, քանի որ Հայաստանը ընկած է այն անկյունում, որտեղ հանդիպում են Անատոլիա, Սիրիա, Միջագետք նահանգները:

Բավականաչափ քաջ հայտնի մի երկիր, որը թվում է, արդեն դարձել է ինչոր աղոտ և անորոշ բան, հենց որ թուրքական դպրոցի քաղաքագետներն ու դիվանագետները, ովքեր կոչված էին տնօրինելու նրա արյունոտ գործը, փորձեցին սահմանել նրա գոյության ապագա պայմանները: «Կա՞ արդյոք հայկական երկիր». «Արդյո՞ք Թուրքիայում գոյություն ունեն հայերով բնակեցված նահանգներ», ահա հարցը, որ բարձրացվում էր ամեն անգամ, երբ արյունոտ մի մեծ հրդեհ գրավում էր քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը այս դժբախտ երկրի վրա:

Ամենևին զարմանալի չէ, իհարկե, որ թուրքական իշխանությունները փորձում էին ժխտել Հայաստանի գոյությունը, այլ զարմանալին այն է, որ մեծ տերությունների ներկայացուցիչները պաշտպանում էին այդ տեսակետը, անգամ այն բանից հետո, երբ համաձայնություն էին ստորագրել «հայերով բնակեցված նահանգների» վերաբերմամբ:

Այս կամ այն ազգությանը պատկանող տարածքի՝ թուրքական իշխանությունների կողմից մշտապես վիճարկվող սահմանների ճակատագրական հարցը անփոփոխ կերպով բարձրացվում էր ամեն անգամ, երբ խոսք էր գնում նման մի ազգության թուրքական ճնշումից ազատագրելու մասին:

Քաջ հայտնի է, որ աղետաբեր փոփոխությունները Արևմտյան Ասիայի քաղաքական կյանքում միշտ հետևել են լայն մասշտաբի էթնիկական տեղափոխություններին և մեկ անգամ չէ, որ փոփոխել են ազգագրական քարտեզը:

Եթե մի ազգության թվական գերակշռությունը բացարձակ պայման է ինքնավարության և անկախ գոյության համար, ապա ինչպե՞ս է որ մի քանի միլիոն թուրքերը տիրակալում են բազում միլիոն տարբեր ազգությունների՝ Ստամբուլից մինչև Մեքքա: Ոչ միայն Արաբիայում այլև Միջագետքի լայնարձակ տափաստաններում, Սիրիայում, Հայաստանում և Անատոլիայի որոշ մասերում թուրքերը կազմում են բնակչության աննշան տոկոսը: Ի՞նչ իրավունք ունեն օսման-

ցիները ստրկության մեջ պահելով այդ պրովինցիաներս: Ինչի՞ վրա է հիմնված նրանց իշխանությունը: Էթնոգրաֆիական առումով վերցրած, այն կարող է արդարացվել միայն, ինչպես կտեսնենք շուտով, Անատոլիայի վիլայեթներում:

Այս ևս բոլորը չէ. թուրքական կայսրության բուն մայրաքաղաքում՝ **Ստամբուլում**, թուրքերը բնակչության մեծամասնությունը չեն կազմում: 1885 թ. պաշտոնական մարդահամար ցույց է տալիս, որ սուլթանի մայրաքաղաքը այդ ժամանակ ուներ 873565 բնակիչ: Սրանցից միայն 384910 էին օսմանցիներ (կամ ավելի շուտ՝ մահմեդականներ), մնացյալը՝ 488655 պատկանում էին տարբեր ազգությունների (156861-ը. հայեր, 152741-ը՝ հույներ, 44361-ը՝ բուլղարներ և 129243-ը՝ օտարերկրացրներ):

Եթե թուրքերի օգտագործած փաստարկումները հայկական հարցում՝ մատնանշելով հայերի փոքրամասնությունը երկրում, շրջելու լինենք նրանց դեմ, ապա նրանք ոչ միայն կկորցնեն բոլոր մյուս ազգություններին կառավարելու իրավունքը, այլև, ստիպված կլինեն հրաժարվելու նաև իրենց սեփական մայրաքաղաքից:

Թուրքերի տեսակետը հայկական հարցում անտրամաբանական էր, անհետևողական և նույնիսկ անբարոյական, քանի որ նրանք հայերից պահանջում էին այն, ինչ որ չունեին իրենք, թվական գերակշռություն, որպեսզի կատարեն անհրաժեշտ բարեփոխումներ, այն դեպքում, երբ իրենք, թեև կազմելով երկրի բացարձակ փոքրամասնությունը, դարեր շարունակ տիրակալել էին իրենց լայնածավալ կայսրությունում:

***

Ճիշտ ու արդար կլինի ներկայացնելու արևմտահայ մտավորականության մի քանի փայլուն ներկայացուցիչների, որոնք ոչ միայն ականատես են եղել, այլև անձամբ ենթարկվել էին ջարդարարների բարբարոսություններին:[1]

Երվանդ Օտյան

Հունիս 21-ի առտուն լսեցինք թէ քսան հնչակեաններ կախաղան հանուեր են: Այս լուրը նոր սարսափ մը ափոեց ամբողջ Պոլսոյ հայութեան մէջ:

Այդ նահատակներուն մահու պատիժը հետեւեալ կերպով կը ծանուցանէր Պոլսոյ կեդրոնական հրամանատարութիւնը.

«Պատերազմական ատեանի առջեւ ի ներկայութեան տեղի ունեցած դատավարութեամբ հաստատուած ըլլալով որ անկախ եւ ինքնօրեն Հայաստան մը կազմելու համար եղեռնափորձեր կազմակերպած, օտարները օսմանեան կառավարութեան դէմ գրգռելու եղանակով ձեռնարկած են կայսերական երկրամասերէն մաս մը օսմանեան կառավարութենէն անջատելու եւ այս նպատակով օտար երկրներու զանազան կողմերը գաղտնի եւ յայտնի համաժողովներ գումա-

1. Տե՛ս **Երվանդ Օտեան** Անիծեալ տարիներ, Երևան, 2005թ.:

ռելով մէկտեղ հրատարակութիւններ, գրգռութիւններ եւ թղթակցութիւններ ըրած են, պատժական քաղաքային օրէնքին 54-րդ յօդուածին յաւելուածական մասին համաձայն Պոլսոյ Պատերազմական ատեանին կողմէ մահուան դատապարտուեցան հետեւեալ անձերը. Փարամազ, վառնացի Յակոբ Գազազեան, Մինաս, Սմբատ, Վահան Պօյաճեան, տօքթոր Պէնիէ, Արմենակ, կօշկակար Աբրահամ, Արամ Աչըգպաշեան, բժշկական վարժարանի ուսանող Հրանդ, շապին գարահիսարցի Գարեգին, ոսկերիչ Պօղոս, Յակոբ Պասմաճեան, Թովմաս Թովմասեան, կօշկակար Երեմիա, Մկրտիչ Երէցեան, զինուորական ուսանող Գեղամ Վանիկեան, ուսուցիչ Երուանդ Թօփուզեան, սրճագործ Գառնիկ»:

Կախաղանի պատիժը տեղի ունեցած էր շատ գաղտնի կերպով եւ արշալոյսէն առաջ: Վերջին վայրկեանին միայն մայր եկեղեցիէն ափյափոյ (ձեռաց, յանպատրաստից) քահանայ մը տարած էին մահապարտներուն քով:

...Վեցօրյա բանտարկութեանս միջոցին ամէնուն հետ բարեկամացած, գրեթէ մտերմացած էի: Բանտը շոգենաւային ճամբորդութեան կը նմանի, հո՛ն անծանօթներ շուտով մտերմութիւն կը հաստատեն իրարու հետ: Բանտարկեալները տխուր էին, ո՛չ թէ իրենց մէկ ընկերոջ մեկնումին համար, այլ մանաւանդ որ գիտէին, թէ ի՛նչ վտանգ կը սպառնար ինծի:

Յորմէհետէ իմ Գոնիա աքսորուիլս հաղորդուած էր, ամէնքն անձկութեամբ համակուած էին, թէեւ կը ջանային զայն ծածկել ու կարելի եղածին չափ սրտապնդել:

...Թափորը ճամբայ ելաւ: Լուսցած էր, ու բարակ անձրեւ մը կուգար, աշնանամուտի տխուր օր մը:

Սեպտեմբեր մէկ, երեքշաբթի օր մը ճամբայ կելլէինք:

-Գէշ,- դիտել տուաւ մենէ մէկը,- երեքշաբթին ուղուրսուզ (դժբախտ) համարուած է:

Անցանք «Բիւզանդիոն»ի խմբագրատան առջեւէն:

Գրաշարները պատուհաններէն մեզ կը դիտէին: Ժպտալով բարեւեցի զիրենք:

...Այդ առաքման գործողութիւնը շատ վայրագ կերպով կը կատարուէր:

Սէվք մէմուրին (տեղափոխութեան պատասխանատու պաշտօնենա), Խուրսի էֆէնտի իր քանի մը օգնականներովը, սօփաներով (մահակներով) զինուած, յանկարծ կը մտնէր վրաններուն մէջ եւ իր քմահաճոյքին համեմատ քանդել կուտար այս կամ այն վրանը, անոնց ձողերը քաշել տալով:

-Ղալխըն, եըխըն, չըխըն (վեր կացէք, փշրէք, դուրս ելէք),- կը պոռային այդ հրէշները իրենց բիրերովը (լախտերով) սպառնալով տնտնացողներուն:

Եւ ահա վայնասուն մըն էր որ կը լսուէր փլած վրաններուն մէջ: Խե՜ղճ կիներ, աղջիկներ, ափյափոյ վրանը կը ծալլէին, կը կապէին, ձողերը կո ժողուէին, գոյ-

քերնին ու բեռներնին կը ծրարէին եւ կսկսէին կոնակնին առած փոխադրել շոգեկառք: Մինչ կը շարունակուէր լսուիլ չարաշուք բառերը.

-Ղալխըն, եղխըն, չղխըն...

Այս երեք բառերը Էսկի-Շէհիրէն մինչեւ Տէր-Զօր, մահուան ղօղանջի մը պէս հնչած են տարագիրներու ականջին:

Ու լաց ու կոծի պոռչտուքներուն մէջ, կը լսուէին նաեւ բարկութեան, անէծքի, յուսահատութեան աղաղակներ:

-Անի քաղաքէն ալ գէշ եղանք,- կը պոռար կին մը:

-Քէ՞ օր ես, չե՞ս տեսնար կոր,- կը գոչէր ուրիշ մը բռունցքը սպառնական երկինք բարձրացրած:

Անկարելի է երեւակայել աւելի սրտաճմլիկ տեսարան մը:

Մեր Օսմանիէ գտնուած միջոցին լսեցինք այն սոսկալի խոշտանգումները, որոնց ենթարկուած էին 40-50 հազար տարագիրներ:

Այս խեղճերը, մէկ գիշերուն մէջ, տեղատարափ անձրեւի մը ատեն, յանկարծ զինուորներու ու ոստիկաններու սպառնալիքին ու ծեծին տակ ճամբայ կը հանուին: Այդ տասնեակ հազարներով կիները, տղաքը, աղջիկներն ու ծերունիները, հիւանդներն ու անկարները կը ստիպուին թողուլ իրենց ունեցած բոլոր վրանները եւ գոյքերը ու այսպէս, անձրեւին տակ, լեռնէ լեռ քալել օրերով, հասնելու համար Իսլահիէ: Այդ քառասուն հազար տարագիրներէն հազիւ քսան հազարը կրնան հանդուրժել ճամբու տաժանքին, մնացածը բնաջինջ կըլլայ:

Մեր հոն գտնուած ատենը հազիւ քանի մը հազար տարագիր կար վրաններուն ներքեւ, որոնք քաղքէն մէկ ու կէս ժամ հեռու ամայի դաշտի մը մէջ կը բնակէին:

...Նոյեմբերի վերջերն էր եւ ցուրտը սկսած էր այդ կողմերը: Բաց կառքերուն մէջ դողդողալով ճամբանիս շարունակեցինք հետզհետէ դէպի վեր ելլելով: Հանդիպեցանք բանուոր հայ զինուորներու, որոնք ճամբու շինութեան կաշխատէին ամենախեղճ վիճակի մէջ: Իրենց մէջ կը գտնուէին «Ժամանակ»ի երկու նախկին գրաշարներ, որոնք զիս ճանչնալով եկան կառքին քով:

-Օրը տասը ժամ, այս ցուրտին, կաշխատինք չոր հացի մը փոխարէն,- ըսին:

-Բայց այստեղ տուն չկայ, վրան չկայ,- դիտել տուի,- գիշերը ո՞ւր կը պառկիք:

-Հոս, բացօթեայ կը պառկինք,- պատասխանեցին:

-Հիւանդ չէ՞ք ըլլար...

-Հարկաւ կըլլանք:

Ու բացատրեցին թէ ութը հարիւր հոգիէն հազիւ 160 հոգի ողջ մնացած էին իրենց մէջէն:

Մինչեւ Իսլահիէ հանդիպեցանք հազարաւոր տարագիրներու միշտ նոյն ահռելիօրէն խղճալի վիճակին մէջ:

Ուշ ատեն հասանք Իսլահիէ ու իջանք պանդոկ մը որուն տէրը յոյն էր ու հաճեցաւ մեզի հիւրընկալել:

Իսլահիէ նոյն միջոցին 10 հազարի մօտ տարագիրներ կային վրաններու տակ: Քաղքին օդը վատառողջ ու տենդային է: Գրեթէ ամէն վրանի մէջ մէյմէկ հիւանդ կար:

Հոն կրկին հանդիպեցայ Հրանդ Մկրեանին որ նորէն պահապանի ու մեռելաթաղի պաշտօն կը կատարէր:

-Օրական 100-150 հոգի կը մեռնի կոր,- ըսաւ,- ո՛չ բժիշկ ունինք, ո՛չ դեղ:

...Սէպիլի վրաններուն մէջ ականատես եղայ շատ տխուր եւ սրտաճմլիկ տեսարանի մը:

Վրաններէն քիչ մը անդին խրամները բացուած էին ուր ընդհանրապէս տարագիրները կերթային իրենց բնական պէտքը գոհացնելու:

Այդ խրամներուն մօտ էի երբ տեսայ քանի մը տղաք որ վերը կեցած՝ բան մը կը դիտէին իրարու ըսելով.

-Մեռած է:

-Չէ, չէ մեռած:

-Շարժեցաւ, տե՛ս,- եւ այլն:

Հետաքրքիր՝ մօտեցայ տղոց եւ վար, խրամին մէջ նայեցայ:

Սոսկալի տեսարան մը պարզուեցաւ աչքերուս առջեւ:

Աղտեղութեան մէջ կիսամերկ պառկած էր մանկամարդ կին մը, 25-26 տարեկան, բաւական գեղեցիկ: Կինը մեռած չէր տակաւին, ատեն-ատեն կը շարժէր, մէկ կողմ դառնալու ջանք կընէր, թեւը կամ ոտքը վեր կը բարձրացնէր, յետոյ կրկին անշարժ կը մնար, տքալով:

Սրունքները, կուրծքը, թեւերը մերկ էին, շրջազգեստ չէր հագած:

Յայտնի էր որ վրաններէն բերած նետած էին հոն, բայց ինչո՞ւ համար:

Տղաքը հարցուփորձեցի, բան մը չէին գիտեր:

Դարձայ դէպի վրանները եւ մէկ քանի հոգիի պատմեցի տեսածս:

Ո՛չ ոք կարեւորութիւն տուաւ: Ամէն մարդ իր գլուխը ազատելու զբաղած էր, ո՞վ կարեւորութիւն կուտար հոգեւարք կնոջ մը:

Քանի մը ժամ յետոյ կրկին վերադարձայ խրամին քով, տեսնելու համար թէ կինը ի՞նչ եղած էր:

Երիտասարդ մարդ մը եւ կին մը հո՛ն կեցած տխուր, տխուր կը դիտէին այդ ահռելի տեսարանը. կինը ատեն ատեն աչքերը կը սրբէր: Անկարելի էր արդարեւ չյուզուիլ:

Աղբին մէջ պառկած կինը դեռ չէր մեռած՝ բայց յայտնի կերեւար որ ա՛լ հոգի կուտար:

-Աս ի՞նչ սարսափելի բան է,- ըսի հոն կեցող երիտասարդին,- յայտնի բան է որ այս կինը վրաններէն բերեր հոս նետեր են, առանց մեռնելուն սպասելու...

ասանկ հրէշութիւն, ասանկ վայրենութիւն, ասանկ անխղճութիւն կըլլա՞յ:

Մարդը լուռ ու մունջ մտիկ ըրաւ խօսքերս, յետոյ տխրութեամբ պատասխանեց.

-Այս խեղճ կինը իմ քենիս, քովս կեցող կնոջ քոյրը, մենք երէկ գիշեր բերինք հոս նետեցինք զինքը...

-Դո՞ւք,- գոչեցի զարմացած:

-Այո՛,- շարունակեց,- կեցիր պատմեմ ու յետոյ մեզի կը դատես:

Եւ մարդը իր պատմութիւնը ըրաւ: Տիգրանակերտցի բարեկեցիկ ընտանիքի մը կը պատկանին եղեր: Տարագրութեան միջոցին չարաչար կողոպտուեր են:

-Գրեթէ մերկ վիճակին մէջ առանց մէկ փարայի, անօթի, ծարաւ Սէպիլ հասանք կինս, աղջիկս, քենիս ու ես: Ապահովաբար մինչեւ հիմա հոս ամէնքս ալ պիտի մեռնէինք՝ եթէ բարեկամ ընտանիքի մը չհանդիպէինք: Մարդիկը մեզ իրենց վրանը առին, հագուեցուցին, կերակրեցին ու մինչեւ հիմա անոնք են որ կը հոգան մեզի: Վրանին մէջ ո՛չ բաւական տեղ կայ, ո՛չ ալ բաւական անկողին: Երկու երեք հոգի ծոց ծոցի պառկելու ստիպուած ենք: Այս պայմաններուն մէջ քենիս տիզանդրիէ բռնուեցաւ շատ գէշ կերպով: Բժիշկ չկայ, դեղ չկայ: Գիտէք որ տիզանդրին փոխանցիկ հիւանդութիւն մըն է: Մեզ հիւրընկալող ընտանիքը ըսաւ որ կա՛մ հիւանդը վրանէն հանենք՝ կա՛մ ամէնքս միասին դուրս կելլենք: Վրանէն դուրս ելլելը կինս ալ, աղջիկս ալ, զիս ալ մահուան դատապարտել էր պարզապէս: Մէկի տեղ՝ չորս հոգի պիտի մեռնէինք զուր տեղը: Կնոջս հետ մտածեցինք, մտածեցինք եւ ուրիշ ճար չգտանք: Գիշերը առինք քենիս ու լալով բերեցինք հոս նետեցինք... կեանքը անուշ է:

Եւ այր ու կին սկսան դառնապէս արցունք թափել:

-Կը ներէք քիչ մը առաջ ըսածս խօսքերուս համար,- կմկմացի եւ հեռացայ իրենց քովէն:

***

Արդարեւ տիզանդրին սարսափելի ջարդ կընէր Սէպիլի վրաններուն մէջ: Դեկտեմբերը հասած էր, անձրեւը կը տեղար: Ցուրտը անտանելի էր մանաւանդ գիշերները: Բարակ կտաւէ շինուած պատառատուն, խարխլիկ վրանները անբաւական էին օդին դժնդակութեան դէմ պաշտպանելու համար մէջը գտնուողները: Աւելցուցէք ասոնց վրայ սնունդի անբաւականութիւնը եւ կրնաք երեւակայել թէ որքա՞ն հիւանդներ պառկած էին վրաններուն տակ:

Առտուընէ մինչեւ իրիկուն աղբի կառք մը, որ իբրեւ մեռելակառք կը ծառայէր, կերթար կուգար մեռեալ փոխադրելով: Ամէն անգամ ութը տասը հատ կը դիզէին կառքին մէջ ու այնպէս կը տանէին:

***

Առաջին անգամ Սէպիլի վրաններուն մէջ տեսայ տղայ վաճառելու զարհու-

ռելի ու սրտաճմլիկ գործողութիւնը:

Հալէպէն կուգային՝ կառքերով՝ արաբ, թուրք, հրեայ կիներ ու կսկսէին շրջիլ մէկ վրանէն միւսը:

-Սաթլը չօճուք վա՞ր մը (ծախու մանուկ կա՞),- հարցնելով:

Այն ծնողքները, որոնք ունեւոր էին՝ սոսկումով ճամբու կը դնէին այդ կիները, իսկ խեղճերը, անօթիները կը վարանէին:

Այդ վարանումը բաւ էր սակարկութեան սկսելու համար:

-Տանը երթայ,- կըսէր էրիկը իր տղուն ձեռքէն բռնած:

-Կը մեռնիմ՝ զաւկէս չեմ բաժնուիր,- կը գոչէր կինը լալով:

Եւ ահա գնորդ կիները կը միջամտէին:

-Դուք արդէն մեռնելու կերթաք կոր, գոնէ սա տղան ազատեցէք: Մենք բարիք ընելու համար է որ առնել կուզենք: Մեզի զաւակ պիտի ընենք... եթէ ողջ մնաք ու ետ դառնաք նորէն ձեր զաւակը ձեզի կուտանք:

Ու այսպէս հազար ու մէկ համոզիչ խօսքեր: Ու մայրը որ իր զաւկին անօթի ըլլալը գիտէ եւ միջոց ալ չունի կերակրելու, վերջապէս յուսահատ տեղի կուտայ:

Կիները մէկ երկու մէճիտ կը դնեն մարդուն ձեռքը եւ մանուկը կառք դնելով կը մեկնին:

Ու ահա՛ ողբ ու կոծը կը սկսի: Հիմա հայր ու մայր երկուքն ալ կուլան, կը զոչան իրենց ըրածին վրայ, կառքին ետեւէն վազել կուզեն, բայց ան արդէն հեռացած է...

Տեսայ կին մը որ իր երկու զաւակները վաճառելէ քանի մը ժամ ետքը խենդեցաւ:

Ուրիշներ, տեսակ մը թմրութեան, ապուշութեան մէջ կիյնային, լուռ, ակնարկը սեւեռուն, ժամերով գետինը նստած կը մնային: Ա՛լ կարծես զգացումը, գիտակցութիւնը մեռած էր իրենց մէջ, անասնացած էին...

Սէպիլի մէջ, այսպէս, հազարաւոր հայ տղաք ու աղջիկներ ծախուած էին հալէպցի արաբներու, թուրքերու եւ հրեաներու: Ընդհանրապէս փոքր տղաքը յարգի էին, 7-10 տարեկան, մանաւանդ աղջիկները:

Մանուկներու վաճառումը տեղահանութեան ահռելի եղեռնին ամէնէն զահանդեցնող (սարսափեցնող, զարհուրեցնող) դրուագներէն մէկն է: Երբեք կարելի չէ մարդկութեան աւելի մեծ նուաստացում մը երեւակայել:

***

Համայի մէջ կային 30-ի չափ սամսոնցի տարագիր կիներ, որոնք հազար ու մէկ չարչարանքներէ ետքը եկած ինկած էին հոն: Իրենց մէջ կը գտնուէր տիկին Մարիձա Մսրեան իր երկու աղջիկներով, ծխախոտի ծանօթ վաճառականին կինը, որուն զաւակները Գերմանիա հաստատուած էին ու ծխախոտի առեւտուրով կը զբաղէին:

Այդ խեղճ կիներուն պատմութիւնը սրտաճմլիկ էր:

Հազիւ թէ Սամսոնէն մեկնած՝ զիրենք բաժնած էին իրենց ամուսիններէն, եղբայրներէն ու զաւակներէն:

Ճամբան թուրքերն ու քիւրտերը առեւանգած էին իրենց մանկամարդ ու գեղանի հարսերն ու աղջիկները: Յետոյ մէկ քանի անգամներ կողոպտուած էին: կիները ստիպուած էին իրենց ոսկիները կուլ տալ որպէսզի չգողցնեն:

Սամսոնցի օրիորդ մը պատմեց ինծի թէ՝ 35 ոսկի կուլ տուած էր:

-Փորիս մէջ կը զգայի ոսկիներուն ծանրութիւնը,- կըսէր,- եւ երբ գիշերը պառկած տեղս, ասդին անդին դառնայի՝ ոսկիներն ալ մէկ կողմէն միւս կողմը կերթային: Եւ ամէնէն անտանելին սա էր, որ երբ դրամները ելլէին, ստիպուած էինք լուալ եւ կրկին կուլ տալ, որովհետեւ ատկից ապահով տեղ չէինք կրնար պահել, թուրքերը ո՛չ թէ միայն մեր գրպանները կը խուզարկէին, այլ նաեւ մազերնուս մէջ, բերաննուս մէջ դրամ եւ գոհարեղէն կը փնտռէին ու այսչափով ալ գոհ չըլլալով, մեր մարմնոյն ծածուկ տեղերն անգամ կը նայէին...

Այդ խեղճ կիները այսպէս քանի մը ամիս լեռնէ լեռ տարուելով՝ բերուած էին Հալէպ ու անկէ ալ Համա: Իրենցմէ շատերը յոգնութենէ, տառապանքէ, անօթութենէ ու հիւանդութենէ մեռած էին ճամբան:

Տիկին Մարեան եւ իր աղջիկները, ինչպէս նաեւ միւս սամսոնցի կիները մուրացկանի կերպարանքով հասած էին Համա:

Գալով սամսոնցի էրիկմարդերուն, եւ ո՛չ մէկէն կարելի եղած էր լուր առնել:

Հաւանօրէն ամէնքն ալ ջարդուած էին իրենց կիներէն բաժնուելէ ետքը:

Զարմանալի էր կեսարացի էրիկմարդերու կարաւանի մը ողջ Համա հասնիլը: Անշուշտ սխալի մը կամ թիւրիմացութեան մը արդիւնքն էր այս:

Համայի մէջ երկու հոսանք կար, մեծամասնութիւնը կուզէր գլուխը ազատելու համար ընդունիլ իսլամութիւնը, իսկ փոքրամասնութիւնը կուզէր դիմադրել ճնշումին:

Բայց նոյնիսկ իսլամանալու տրամադիրները շատ մեծ տագնապի մատնուած էին, մանաւանդ անոնք որ հասուն աղջիկներ ունէին: Կը վախնային, որ այս կրօնափոխութեան հետեւանքը պիտի ըլլար խառն ամուսնութիւններ, ինչ որ կը սարսափեցնէր զիրենք:

Յետոյ, ուրիշ խնդիր մը կար, ո՛չ ոք կուզէր առաջին քայլը առնել եւ օրինակ ըլլալ ուրիշներու:

Այսուհանդերձ այդ մէկ շաբթուան ընթացքին, բաւական թիւով ամուրիներ գացին կրօնափոխ ըլլալու:

Շաբաթը լրացաւ եւ դեռ երեւելիները կը վարանէին իրենց պատասխանը տանելու:

Առտու մը ալ իմացանք որ իթթիհատի Դամասկոսի կեդրոնին անդամներէն Ալի Քէմալ պէյը եկած է հայերու իսլամացումը փութացնելու համար: Այդ Քէմալ պէյի համար կըսուէր, թէ նախկին եպարքոս (վարչապետ) Քեամիլ փաշայի ազգականներէն էր, նախկին զինուորական, խիստ ու դաժան մարդ մը:

Արդարեւ գալէն անմիջապէս ետքը բռնել բանտարկել տուաւ փաստաբան Համբարձում Սարաֆեանը, այնթապցի Խաչատուր Խաչատուրեանը, պատուելի Նոհուտեանը եւ պատուելի Գասպարը, իբրեւ հայերու իսլամացման արգելք եղող անձեր:

Միեւնոյն ժամանակ լուր տարածուեցաւ որ չիսլամացող Հայերը, այր թէ կին, անմիջապէս ճամբայ պիտի հանուին ու պիտի քշուին Հաւրանի անապատները:

Բոլոր այս եղելութիւնները բնականաբար վարանողները մղեցին իսլամացման:

Առտու մը ալ ես, Ներսէս Խաչատուրեան եւ անթաքիացի Խոսրով գացինք ներկայացանք միւթէսարըֆ Խայրի Ֆէրուզան պէյին եւ ըսինք, թէ կը փափաքինք իսլամութիւնը ընդունիլ:

Միւթէսարըֆը գոհունակութիւն յայտնեց եւ ըսաւ.

-Ա՛լ ասկէ ետքը ձեր մազին դպչող չըլլար, կրնաք ազատ համարձակ ձեր գործերովը զբաղիլ:

Յետոյ պաշտօնեայ մը կանչելով մեզ ղրկեց նուֆուսի (այստեղ՝ անձնագիր) սենեակը որպէսզի ստանանք մեր նոր նուֆուս թէսքէրէսիները:

Հոն մեզ հարցուցին, թէ ի՞նչ անուն կուզէինք առնել:

Ես Ազիզ Նուրի անունը ընտրեցի, Ներսէս Խաչատուրեան Ալի Ֆէրուզան անունը առաւ, իսկ Խոսրով իր անունը չարափոխեց Խիւսրէվի:

Իսկ ամէնուս ալ հօրը անունը կոչուեցաւ Ապտուլլահ, իսկ մօր անունը Ուտուլլահ:

Նոր թէսքէրէները առինք եւ դուրս ելանք:

Ամբողջ գործողութիւնը հազիւ ժամ մը տեւած էր:

Անունի փոփոխութիւն մը եղաւ պարզապէս եւ ո՛չ ուրիշ բան:

Երկու օր ետքը, որովհետեւ տակաւին մեծամասնութիւնը կը դանդաղէր իսլամանալու, Քէմալ պէյ ձերբակալել տուաւ այնթապցի տէր Ներսէս Թաւուքճեան քահանան, մարաշցի տէր Յակոբ քահանան եւ ուրիշ երեք քահանաներ եւ երկու պատուելիներ, որոնք արդէն բանտն էին, Նոհուտեան եւ Գասպար եւ ամէնքը մէկէն ճամբայ հանեց ու աքսորել տուաւ Թաֆիլէ, Եէմէնի ճամբուն վրայ, անապատ տեղ մը:

Հետեւեալ օր իր մարդոց ձեռքով լուր տարածուեցաւ, թէ բոլոր անոնք որոնք մինչեւ երեք օր չփութան իսլամութիւնը ընդունիլ, անմիջապէս հետիոտն ճամբայ պիտի հանուին դէպի Արաբիոյ անապատները:

Ասիկա պարզապէս կը նշանակէր դէպի սպանդ առաջնորդել ամէնքն ալ:

Ազդեցութիւնը անմիջական եղաւ: Հարիւրաւորներ խուժեցին իթթիհատի քլիպը, ուր տեղի կունենար իսլամացման գործողութիւնը եւ իրենց նոր՝ անունները արձանագրել տուին:

Գործողութիւնը արդէն շատ պարզ էր:

Իթթիհատի կողմէ պատրաստուած էին հազարաւոր խնդրագիրներ որոնց

վրայ պէտք էր միայն աւելցնել հին ու նոր անունները եւ ստորագրել, որուն փոխարէն իրենց կը տրուէր թուղթի կտոր մը որուն վրայ իսլամական անունը եւ թիւ մը կար:

Այս թուղթին կտորը պիտի ծառայէր յետոյ նոր նուիրուս թէսքէրէսին առնելու, որովհետեւ նոյն միջոցին անկարելի էր այդքան բազմութեան նոր թէսքէրէներ տալ, մանաւանդ որ այդքան մեծ քանակութեամբ թէսքէրէ չկար Համայի մէջ:

Չորս հինգ օր ետքը Համա գտնուող հինգ հազար տարագիր հայերը այս ձեւով իսլամացան:

Ամէնէն դժուարը եղաւ սամսունցի կիներուն իսլամացումը: Ասոնք մինչեւ վերջին վայրկեանը մերժեցին հաւատափոխ ըլլալ եւ պատրաստակամութիւն յայտնեցին անապատը տարագրուելու:

...Այս բարեացակամութենէն դժգոհ՝ ճամբաս շարունակեցի այդ երկու արաբներուն ընկերակցութեամբ: Քիչ մը ետքը եկաւ մեզի միացաւ նաեւ այն պատանին որուն հետ խնդիր ունեցած էի: Այս պարագան կասկածներս աւելի շատցուցին:

Հազիւ կէս ժամ քալած էինք երբ արաբները կանգ առին ու զիս ալ կեցուցին:

-Հանէ՛ մաչլախդ,- հրամայեց իրենցմէ ամէնէն տարեցը որ երեսուն տարեկանի մօտ մօրուօք աւազակի դէմքով հուժկու մարդ մըն էր:

Փորձեցի աղաչանքով օձիքս ազատել: Անկարելի եղաւ:

-Շո՛ւտ մաչլախդ տուր, եթէ ո՛չ հիմա գլուխդ կը ջախջախեմ,- գոչեց եւ մէջքէն հանեց խոշոր մուրճը:

Անմիջապէս հնազանդեցայ:

Յետոյ մէկիկ մէկիկ հանել տուին միւս զգեստներս ալ, որոնք ինչպէս ըսի, պատառատուն քուրջերու վերածած էի: Առին նաեւ գլխանոցս եւ կօշիկս ու այդպէս մօրէ մերկ ըրին զիս:

Ապա ծաղրական շեշտով մը «Մասաս սէլամի» (երթաս բարով) ըսին ու ետ դարձան:

Այսպէս, աղամական վիճակի մէջ, պահ մը զետինը նստայ խորհելով թէ՝ ի՞նչ պէտք էր ընէի: Անշուշտ հազար անգամ զղջացած էի այս յիմարական ձեռնարկութենէս, սակայն չէի ուզեր ետ դառնալ այս վիճակով, մանաւանդ կը վախնայի որ էլ Պուսէրայի ոստիկանները զիս կը բռնեն ու կը բանտարկեն ու հաւանօրեն չարաչար կը ծեծեն ալ:

Որոշեցի ճամբաս շարունակել դէպի առաջ, բայց այս մօրէմերկ վիճակիս մէջ ինչպէ՞ս պիտի կրնայի վրանները երթալ հիւրընկալութիւն խնդրելու:

Բաւական քալելէ ետքը հանդիպեցայ ծերուկ հովիւի մը որ իր ոչխարներուն քով, դաշտին մէջ նստած կը ծխէր:

Մօտեցայ իրեն: Մերկութիւնս տեսնելով իսկոյն գուշակեց եղելութիւնը:

-Կողոպտեցի՞ն քեզի,- հարցուց:

-Այո՛,- պատասխանեցի:

-Ո՞ւր տեղ:

-Հոսկէ հազիւ ժամ մը անդին:

-Քանի՞ հոգի էին:

Պատասխանեցի թէ երեք հոգի էին որոնք հետս ընկերացան: Ծերունի հովիւը տխրութեամբ գլուխը օրորեց, ուրիշ քանի մը հարցումներ ըրաւ ազգութեանս, ուրկէ գալուս, ուր երթալուս մասին եւ սիկարէթ մը հրամցուց:

Յետոյ, քովը դրուած աղտոտ տոպրակ մը բացաւ ու վերարկուի մը նմանող հին ու մին լաթ մը հանեց եւ ինծի երկարելով.

-Հագի՛ր,- ըսաւ:

Աղտոտութենէ սեփսեւ եղած խոշոր թաշկինակ մըն ալ տուաւ որպէսզի գլուխս ծածկեմ:

Այս անակնկալ զգեստաւորումը չափազանց ուրախացուց զիս: Երախտագիտութեամբ ձեռքը քաշեցի համբուրեցի եւ արաբերէն լեզուով գոց ըրած բոլոր մաղթանքներս կրկնեցի:

Վերարկուն առանց թեւի բաճկոն մըն էր որ հազիւ ծունկերս կիջնար:

-Անօթի՞ ես,- հարցուց:

-Ո՛չ,- պատասխանեցի,- քիչ մը առաջ ճաշեցի:

-Քիչ մը հաց տամ քեզի:

Ու հէյպէին (տոպրակ) մէջէն երկու հատ թարմ բլիթ հանեց:

-Ո՞ւր կրնամ վրաններ գտնել,- հարցուցի:

-Ասկէ երեք ժամ հեռուն,- պատասխանեց:

Ժամանակ չի կար կորսնցնելիք եւ հազիւ արեւը մարը մտնելէ ետքը պիտի կրնայի հասնիլ այդ վրանները:

Կրկին շնորհակալութիւն յայտնեցի ու մեկնեցայ:

Մութը կը սկսէր եւ տակաւին վրանները չէին երեւար:

Քայլերս արագեցի, որովհետեւ օդը զովանալ կը սկսէր:

***

Թերթենը ***Վահան Մինախորյանի*** «1915 թվականը. արհավիրքի օրեր» հուշագրությունը: Տրապիզոնի հայության քարավանում նա ևս անցավ բռնագաղթի սարսափելի ճամփաներով, սեփական մաշկի վրա տարավ թուրքական ոճրագործությունների ամբողջ համալիրը:

-Մի փոլիս եկել, կանգնել էր առաջնորդի սենեակի դռան մօտ: Մարդիկ լուռ՝ մէկ-մէկ իջնում էին պատշգամբից եւ բոլորաձեւ տեղ բռնում բակի մէջ: Իջնում է նաեւ կաթոլիկ քահանան՝ իր հետեւորդներով, որոնք մինչեւ այդ իրենց պահում էին կղզիացած: Կանայք, երեխաները խմբւած էին պատշգամբում: Չէի հասկանում՝ ինչ է կատարւում, բայց քիչ անց դուրս ելաւ առաջնորդը եւ մի քանի քայլ անելով՝ կանգ առաւ բակի մէջ:

Ամենքը մեկէնիմեկ վար առին ֆէսերը: Առաջնորդի շրթունքները դողում էին. գլուխը վեր բռնած, աչքերը վար՝ նա աղոթում էր: Այդ տարօրինակ տեսարանը վրաս թողնում էր կենդանի մարդկանց հոգեհանգստի տպաւորութիւն: Վերջացրեց աղօթքը, բակում, պատշգամբում կանգնածներին խաչակնքեց եւ ուղղեց դէպի փողոց: Բակում խմբւած հասարակութիւնը ճանապարհեց նրան մինչեւ դուռը: Եւ մօտ կէս ժամ մնաց այնտեղ խմբված, ապա երբ սայլերի անվերջ դղրդոցը մարեց, յետ դարձաւ ու նորից պատշգամբում տարածւեց:

Ոչ միայն առաջնորդի, այլեւ հասարակութեան մի մասի միւսից բաժանւելը բոլորի վրայ ազդել էր աւելի՝ քան կարելի էր սպասել: Տեղ-տեղ աշխատում էին պարզել, թէ ով գնաց, ով մնաց: Բայց, ընդհանրապէս, նոր ուժով, նորից ցցւում էր հին հարցը՝ ի՞նչ անել: Կանանց ամենից շատ զբաղեցնում էր հասունացած աղջիկների խնդիրը: Ընդհանուր կարծիքը այն էր, որ նախքան տեղահանւելը՝ նրանց պէտք է ամուսնացնել եղած ամուրիների հետ: Պնդում էին, որ կարող են փախցնել միայն աղջիկներին, իսկ երէկւայ աղջիկը մի օր յետոյ կին դառնալով՝ փրկւում էր անպատւութիւնից: Բացի այդ, իհարկէ, կային նաեւ ուրիշ հաշիւներ: Տղամարդիկ կարեւորութիւն չէին տալիս այդ ելքին եւ ամէն անգամ, երբ խօսք էր լինում այդ մասին, ջղայնացած ասում էին, թէ պէտք է աղջիկների մազերը կտրել, հին, պատառոտած հագուստներ հագցնել, դէմքի վրայ գնդասեղով վէրքեր բանալ եւ ծեծած սխտոր դնել վրան, ընդհանրապէս՝ այլանդակել: Ոչ նւազ ծանր խնդիր էր նաեւ եղած դրամները պահելու հարցը: Ոմանք խորհուրդ էին տալիս ոսկիները կլլել, ոմանք ասում էին, թէ ով ոսկի ատամ ունի բերանում՝ թող զգոյշ լինի, որովհետեւ դուրս պիտի քաշեն:

Անյայտութիւններով լի, արճիճի պէս ծանր գիշերը, վերջապէս, լուսացաւ: Անձրեւը, կարծես թէ սրբել, լւացել էր երկինքը, որը այժմ իր խստադէմ, առաքինի կապոյտը տարածել էր քարւանսարայի վրայ:

Վաղ առաւօտից ոտքի վրայ էին ամենքը. սպասում էին հրահանգի՝ քարւանսարայից դուրս գալու համար: Ոչ թէ մէկ գիշեր, այլ կարծես թէ շա՜տ տարիներ էին անցել: Հասարակութիւնը արդէն իսկ նման էր մաշւած, քայքայւած գաղթականների բազմութեան: Մարդիկ հնամաշ հագուստներ էին հագել, եւ ընդհանուր միապաղաղութեան մէջ հարուստն ու աղքատը դժւար էր տարբերել: Կանանցից ոմանք այնքան էին այլանդակւել, որ գրեթէ անճանաչելի էին դարձել:

Այս ընդհանուր այլակերպութեան մէջ նկատելի էր նաեւ մի ներքին փոփոխութիւն: Ընդհանրապէս, համր ու պրկւած մի վիճակ էր ստեղծւել: Նախ՝ կերեւի, թէ հարցման, դատողութեան, խորհրդածութեան ժամանակը անցել էր եւ ով ինչ մտքի վրայ մնացել էր՝ այնտեղ էլ կանգ էր առել: Դէպքերը մտքի հնարաւորութիւններից աւելի առաջ էին ընթացել: Ապա զգալի էր վայրկեանի մեծութեան գիտակցութիւնը. մօտենում էր դէպքերի վճռական ժամը, կարաւանի շարժման վայրկեանը: Չախալլին իբրեւ «ժամանակաւոր» աքսորավայր, վերջացնում էր իր գոյութիւնը. տնից, տեղից, դեռ խիստ թարմ անցեալից, այնքան մօտ այդ կա-

յանի կեանքը դադարում էր այլեւս, իսկ անդին պարզւում էր մի անյայտ ճանապարհ, ուր մահը, փչացումը, թշւառութիւնը անխուսափելի էր: Հանրութեան այս ապրումների մէջ թերեւս որոշ բացառութիւն էին կազմում փոքրիկները, որոնց համար «խնդիրը» ժամանցի, հետաքրքիր արկածի բնոյթ էր ստացել:

Դրսում աճող իրարանցումից երեւում էր, որ շուտով պիտի մեկնենք: Դրա հետ միասին ներսում տիրող յոգնաբեկ անդորրութիւնը քիչ-քիչ խախտւում էր: Ամենից շատ աղմկում էին փոքրիկներ ունեցող մայրերը: Սրանց անհրաժեշտ էր, որ երեխաները իրենց մօտ կանգնեն, այնինչ նրանք, առաջին յարմար առիթով, գնում էին այս կամ այն ուրիշ խմբի մօտ: Միաժամանակ, մարդիկ հեւ ի հեւ, քակում ու նորից կապում էին իրենց իրերը. ոմանք մեծ կապոցները վերածում էին փոքրերի, որ շալակն առնեն. ոմանք էլ առանձին կտորներից կազմում էին կապոց, որ ճամբին չկորցնեն...

Որքան յիշում եմ, անձնական որեւէ հոգս չունէի ես: Առողջական վիճակս այնպէս էր, որ բոլորի ճակատագիրը բաժանելու ֆիզիկական հնարաւորութիւնն արդէն իսկ մեծ բարեբախտութիւն էր: Երեք տարւայ ընթացքում այնքան էի ընտելացել Սամսոնի հայութեան, որ յետ մնալը կամ նրանից բաժանւելը մեծագոյն թշւառութիւնը պիտի լինէր ինձ համար: Սրա հետ միասին, ուրիշներին ինձնով «չվտանգելու» մի անմիտ նախազգացում, որ հալածում էր ինձ դեռ քաղաքապետարանում, այժմ աւելի էր սրւել: Զգում էի, որ Չախալլիում իշխանութիւնների կողմից յատուկ հաշւի տակ առնւած եմ: Եւ որովհետեւ թւում էր, թէ Ալթունեանին ընկերակցելս արտաքնապէս մեղմացնում էր երկուսիս ուսուցչութեան հանգամանքը, որոշել էի՝ հակառակ Բարունակի իրենց ընկերանալու պնդումներին՝ մեկնել Ալթունեանների սայլով: Մօտիկների մէջ այս անշնաւ պարագան արժէք էր ստանում, որովհետեւ, կարծես թէ, դառնում էի Ալթունեանների ընտանիքի անդամ եւ պէտք է բաժանէի յատկապէս նրանց ճակատագիրը: Արդէն եղած հաւաքականութեան մնացորդները փոշիանում, վերջանում էին, ու ցրիւ համայնքը վերածւում էր ինքնամփոփ ընտանիքների:

Դուրսը իրարանցումը սաստկանում էր: Սայլերի ճռինչը բռնել էր փողոցը. գալն ու գնալը յայտնի չէր: Անհաշիւ ձայներ, իւղազերծ անիւների ճռռոցի հետ մեկտէղ, ստեղծել էին մի ժխոր, որ տրորում էր բոլորի առանց այն էլ քայքայւած ջղերը:

Արեւի շողքն արդէն ընկել էր դիմացի պատշգամբի պատին, երբ յայտնւեց Նուրի բէյը: Բակի մէջ դառնալով ու աչքի անցնելով բոլորին՝ նա հրամայեց դուրս գալ եւ տեղ բռնել սայլերում: Հասարակութիւնը մէկէնիմէկ ճմլւեց, ապա անվարան ու զարգացող աճապարանքով դիմեց դէպի դուրս... Դէմս ցցւած մի փոլիս ուզում էր հասկանալ, թէ ինչի եմ սպասում, իսկ ես՝ կանգնած Ալթունեանների անհաշիւ իրերից մնացած կապոցների մօտ՝ սպասում էի, որ բարձեն ու տանենք...

Չախալլիի երկար ու ձիգ հրապարակը վերէն վար բռնւած էր սայլերով: Ըստ երեւոյթին, տեղահանւում էին ամենքը: Մնում էր միայն վայրի քարւանսարայի

հասարակութիւնը, որի համար սայլեր չկային եւ պէտք է ճամբայ հանուէր մէկ-երկու օր յետոյ: Արդէն եղած սայլերը չէին գոհացնում այդ օրը դուրս հանուած հասարակութեան, եւ մարդիկ տեղ-տեղ վազվզում էին՝ սայլ գտնելու համար: Կարաւանից յետ ընկնելը, առանց սայլի մնալը ահաբեկել էր նրանց: Փոլիսները գոռում, գոչում, հրում ու շտապեցնում էին: Կարծես թէ Չախալլին հրդեհուելու վրայ էր կամ ենթարկւում էր թշնամի ուժերի գրաւման: Մէջ ընդ մէջ, սայլից սայլ անցուդարձ էին անում նոյն կասկածելի թուրքերը՝ պարապ պարկեր, պարաններ ուսերին: Կիսամերկ, գազանացած այս մարդկանց տեսքը ահ ու սարսափ էր ազդում: Սրանց յաջորդում էին սայլապանները, որոնք մեծ մասամբ յիշեցնում էին մեզ քաղաքապետարանից բերողներին: Նրանք, առանց քաշւելու, շօշափում էին սայլերի մէջ եղած կապոցները, դիտում, զննում էին իրենց վիճակած «ճամբորդներին», գոռում-գոչումներով կանչում էին միմեանց, դէմքով, ձեռքով արտայայտում էին իրենց զբաղեցնող մտքերը, հոհոալով ցրւում էին՝ մի այլ տեղ նորից խմբւելու համար: Բայց կային նաեւ տարիքոտ, հանդարտ մարդիկ:

...Մտանք քարքարուտների մէջ: Ձիերը քաշում-տանում էին սայլերը անասելի դժուարութեամբ: Անտանելի տօթ էր, եւ թանձր փոշին պարորել էր մեզ: Գիշերւայ անձրեւը կամ այստեղ չէր հասել, կամ կիզիչ արեւը վաղուց արդէն ծծել քաշել էր վերջին կաթիլը: Տիկին Ռեբեկան յոգնութիւնից նիրհում, սայլի մէջ տարուբերւում էր: Գարեգինը թաղուած էր մտքերի մէջ: Առջեւի սայլում կոյսերի ճերմակ գլխաձածկերը սայլի ցնցումներից ծածանւում էին, զարնւում՝ սագերի թեւերի նման: Ովքե՞ր են արդեօք: Ազգականնե՞ր, պաշտօնակիցնե՞ր, քոյրե՞ր, թէ պարզապէս բախտակիցներ: Ինչո՞ւ մենակ են, ինչո՞ւ չեն մնացել յունաց թաղում: Ո՞վ պիտի կարողանայ հասկանալ նրանց հայ լինելը... Եւ մտքերս նորից թռչում էին դէպի Սամսոն, դէպի Կարա-Սամսոնի այն զարթ առաւօտը, երբ առաջին անգամ տեսայ նրանց...

Հեռում, լեռնադաշտի միապաղաղ տարածութեան խորքում, նշմարւում էր մի կոյտ. շինութիւն էր: Քանի մօտենում էինք նրանէ այնքան քարքարուտներին յաջորդում էին մարգագետիններ, որոնք իրենց կանաչներով նման էին անապատային օվասիսների: Բացի կոյսերից, որոնց համար այլեւս ամէն ինչ դադարել էր գոյութիւն ունենալուց, ամէն մարդ ցցած՝ դիտում էր այդ շէնքը: Շատ ժամանակ չանցաւ, եւ մօտեցանք ու կանգ առինք: Գտնւում էինք մի պահականոցի առջեւ, որից քիչ հեռու կանգ առաւ եւ մեր սայլը: Քառակուսի շէնքը բաւական ընդարձակ տեղ էր բռնում: Շէնքի աջ կողմում, մեր սայլի դիմաց, տարածւում էր մի ընդարձակ դաշտ: Ձախ կողմից, վերը կար ջրհոր, որի շուրջ խմբւել էին սայլապաններ: Դէմը, լայն պատշգամբի երկարութեամբ, գետնի վրայ, հաստատուած էին բարձրադիր թախտեր, որոնց մօտ նստած, կանգնած էին մի քանի ոստիկաններ: Շէնքի մօտ սլքտում էին բաւական թով կասկածելի թուրքեր, որոնցից շատերը զինուած էին ատրճանակներով ու սրերով: Ըստ երեւոյթին չեթաներ էին: Նրանք անցնում էին սայլերի շարքը: Մարդ չկար, որ կանգ չառնէր կոյսերի սայ-

լի մօտ. ի՜նչ անմտութիւն էր այդ խեղճերի համար իրենց հագուստներով ճամբայ ելնելը, եւ ինչպէս Չախալլիում չէին նկատել տարագրւող կանանց կերպարանափոխութիւնը... Բարեբախտաբար, որեւէ դէպքի նախանշան չկար: Ըստ երեւոյթին, վայրի «պաշտօնական» հանգամանքը զսպում էր մարդկանց: Եւ տարագիրները, քիչ-քիչ սրտապնդելով, իջնում էին սայլերից եւ ապա՝ աւելի համարձակութիւն ստանալով՝ գնում, գալիս էին մինչեւ ջրհորը: Կանգնած էի ձիերի մօտ, որոնք գլուխները քաշ, ականջները կախ, յոգնած ու մարդու պէս մտազբաղ՝ նայում էին դէպի դաշտ: Սայլապանը մօտեցաւ նրանց՝ ջրով լի դոյլը ձեռքին:

...Հիմա միս-մինակս, երկու պզտիկներով ես ինչ կրնամ ընել, միւսիւ Վահան,- ասում էր նա՝ չորացած ձեռքերով աչքերը սրբելով: Աղջիկը, դպրոցի թանձրահիւսք մազերով սանուհիներից մէկը, պահւել էր պատի մօտ դարսւած անկողինների տակ: Մայրը նրա մազերը չէր կտրել. ի զո՜ւր, բոլորովին ի զուր: Մանչը՝ Սուրիկը, դպրոցի նւագախմբի եռանկիւնահարը, պահակի պէս, առերեւոյթ անտարբեր, կանգնել էր քրոջ թաքստոցի դիմաց: Մի քիչ դէպի վար՝ երեք-չորս տարեկան մի աղջնակ անվերջ ճչում էր, թէ «Երթանք տուն»: Պատի անկիւնում նստածների մէջ ինչ-որ մի մարդ, «պոռազանի» պէս թրթռացնելով, աղօթում էր թուրքերէն: Ճաթռտած «Ալլա՜հ», «Ալլա՜հ» գոչերը ապշեցնում էին Աստւած նշանակելու պատճառով...

.....Դաշտը բառիս բուն առումով հեծեծում էր: Լուսաբացին պատահած դէպքը ցնցել էր բոլորին: Այժմ ամենքն էլ հասկանում էին, որ շատ մօտ է պատուհասը: Բայց, միաժամանակ, մարդկանց համակել էր մի զարմանալի համակերպութիւն, որի միակ յայտարարը հրաշքի ակնկալութիւնն էր: Հանրութեան մէջ անձնական գոյութեան խնդիրը տարրալուծւել, նոյնացել էր ընդհանուր ցաւի հետ: Զգալիօրէն թուլացել էր մարդկանց ինքնապաշտպանութեան բնազդը: Հոսանքն ի վար գնում էր կամ պէտք է գնար ամէն մարդ: Այս արդէն ճշտւած էր ու տարակուսանք չկար այլեւս: Դրա հետ միասին, շատ հեռուները մտածելու էլ հնարաւորութիւն չկար: Ընթացիկ հոգսերն ու ցաւերը այնքա՜ն էին շատ, որ գալիքի մասին մտածելու ժամանակ չէր մնում: Մէկի երեխաներն էին հիւանդ, միւսի՝ կինը, հայրը, մայրը: Ժողովրդի մի խոշոր մասի պարէնը արդէն սպառւել էր. մէկը հաց չունէր, միւսը միայն ալիւրի մնացորդներ ունէր, բայց հաց պատրաստելու հնարաւորութիւն չկար: Այս պարագաներում մի պուտ կաթը, մէկ հատ «սուլֆաթօն» աւելի արժէք էին ստանում, քան այն, ինչ որ լինելու էր...

***

Մեկնելու վրայ էին: Ջանիկի շրջանը այստեղ վերջանում էր: Միւթեսարրիֆ Նեջմի բէյը իր գործը կատարել վերջացրել էր: Մտնում էինք նոր շրջան, ուր այլեւս ամէն բան «օտար» էր: Ըստ էութեան ոչինչ արժող այս պարագան մեծ նշանակութիւն ունէր: Այստեղ քակւում, կտրտւում էին անցեալի հետ միացնող կապերը: Սամսոնը այլեւս հեռու մի աշխարհ էր: Անգամ Չախալլին երազ էր թւում:

Տուն, թաղ, քաղաք, շրջան եւ այլուր-այսպէս էր ծաւալւում գաղթը: Այլեւս ոտքով պիտի գնայինք. իրերի համար տրամադրուած սայլերը այնքան քիչ էին, որ 10-15 ընտանիքի հազիւ բաժին էր ընկնում մէկ հատ:

Գարեգինը հարեւանների հետ միասին արդէն վարձել էր մի սայլ եւ զբաղուած էր իրերը կապկպելու, սայլում տեղաւորելու հոգսերով: Ես գործ չունէի անելու, եւ միտքս անցել էր կոյսերին, որոնք այլեւ չկային: Դարձայ Արմենակին, որ ամեն բան գիտէր: Ասաց, որ լուսաբացին նրանց տարել են պաշտօնատուն. ցոյց տուեց դաշտի միւս ծայրին մի սպիտակ շէնք ու յարեց, որ հիմա նրանց ուր լինելը չգիտէ: Քայլերս ուղղեցի դէպի այդ շէնքը: Ի՞նչ պիտի ասէի այդ անօգնական կանանց, եթէ դէմ-դիմաց գայինք, չգիտեմ: Դաշտում մարդիկ գործի վրայ էին՝ որը կապում էր, որը դարսում, որը բարձում: Ծանր էր յատկապէս այն ընտանիքների վիճակը, որոնք փոքրեր, անկարներ, հիւանդներ ունէին: Վերջինների թիւը շատ-շատ էր. գրեթէ տուն չկար, որ հիւանդ չունենար: Վարը դէմս ելաւ «քէալլաճի» Սարգիսը (ազգանունը մոռացել եմ): Թաղի մէջ հարեւան էր, համեստ, լռակեաց մի մարդ, բայց երբեմն խմում ու բորբոքւում էր: Ձեռքս թօթուեց ու լճացած աչքերով նայեց դէմքիս.

-Ներեցէք, տխուր միջադէպը մոռցէք. ի՞նչ գիտնայի, թէ ասանկ պիտ ըլլար...

Բոլորովին մոռացել էի, թէ ինչի մասին է խօսքը:

-Թաղին մէջ ատրճանակ պարպելուս համար, գինով էի, մոռցէք...

Սրտանց երանի տուի մարդուն, որ դեռ անցեալից մի բան յիշում էր: Որքան էի հեռացել նրանից՝ չգիտեմ, երբ, յանկարծ, վրայ հասաւ Արմենակը եւ շնչահեղձ գոչեց.

-Միւսիւ Վահա՛ն, փախէ՛ք... մի տեղ թաքնուեցէք... պահակները միւսիւ Ալթունեանին ձերբակալեցին եւ ձեզ կը փնտրեն...

Յանկարծակիի եկայ: Ակնթարթի մէջ այդ վայրում եղած մարդ, կին, երեխայ շրջապատեցին մեզ: Գարեգինի ձերբակալման պատճառի մասին Արմենակը ոչինչ չգիտէր, իսկ իմ մասին ասում էր, որ հարցնում են՝ անունս տալով: Փախչելու կամ հասարակութեան մէջ թաքնուելու մասիմ մտածելը աւելորդ էր: Տարակուսանքով համակած՝ յետ դարձայ դէպի մեր կայանը: Մի ժանդարմ, մէկ փոլիս կանգնած էին Գարեգինի մօտ, իսկ տկն. Ռեբեկան ինչ-որ բան էր բացատրում: Փոլիսը ինձ տեսնելով՝ թղթի վրայ կարդաց անուն-ազգանունս եւ յարեց.

-Հայդէ՛, առաջ անցիր ընկերոջդ հետ միասին:

Հասկացայ, որ պէտք է Գարեգինին չէզոքացնեմ.

-Ես ընկեր չունիմ, մինակ եմ, սրան ճանապարհին պատահեցի:

-Հայդէ՛,- գոռաց ոստիկանը:

Տկն. Ռեբեկան ճչալով՝ կախուեց Գարեգինի թեւից: Ես մի անգամ էլ փորձեցի բացատրել փոլիսին, որ Ալթունեանը կապ չունի ինձ հետ, բայց նա կոպտութեամբ առաջ հրեց ինձ: Ստիպուեցայ ենթարկուել: Յետեւից բերում էին Գարեգինին: Լսում էի տկն. Ռեբեկայի ճիչերը: Մի քանի քայլ վար Գարեգինը հաւասարուեց

ինձ հետ: Ամէն կողմից մարդիկ շաւր նայում էին:

Բաւական հեռացել էինք մեր կայանից, երբ մի խմբի մէջ տեսայ գունատ, զգգգւած Բարունակին: Օէ, Աստուած... Բայց չկար, Տիգրանը չկար, չտեսայ... Եթէ այնտեղ լինէր, պէտք է որ դէմս գար: Երեւի մօտ տասը վայրկեան էր անցել, երբ վրայ հասաւ Արմենակը եւ մի կապոց յանձնելով Գարեգինին՝ յետ մնաց: Փոլիսը խլեց Գարեգինի ձեռքից կապոցը, քրքրեց, նայեց պարունակութեանը ու յետ տուեց: Մեզ տանում էին դաշտի եզրով, մեր կայանից դէպի աջ: Ձախ կողմից, տեղ-տեղ, բարձած սայլերը արդէն շարժւում էին դէպի վեր: Դաշտը մնում էր մեր յետեւում: Վերջապէս, կանգ առինք մի խարխլած շէնքի առաջ: Անգոյն, միափեղկ դռնից ներս երկարում էին տախտակի թեք աստիճաններ, որոնք ուղիղ գծով տանում էին վեր: Թէ ուր էր շէնքի առաջին յարկի մուտքը եւ ինչ էր ներկայացնում այն՝ չեմ յիշում: Սանդուխքների ծայրին մի ուրիշ դուռ բացւում էր դէպի ներս: Փոլիսը մեզ ներս տարաւ ու դուռը վրայ բերելով՝ գնաց: Մնացինք միջին մեծութեամբ մի սենեակի մէջ: Տախտակի յատակը կեղտից սեւացել էր: Պատերից, առաստաղից թափւած հողերը դիզւել էին շերտ-շերտ: Դռան դիմաց, պատի տակ դրւած էր մի թախտ, եւ այս էր սենեակի ամբողջ «կահաւորումը»: Մուտքից դէպի աջ պատը կենտրոնում քանդւած եւ պատուհանը բոլոր փայտի մասերով հանւած, տարւած էր:

Մօտեցանք պատի այդ խոռոչին: Աղօտ կերպով յիշում էի, որ մեր կայանից գրեթէ ուղիղ գծով վար իջանք. նշանակում է՝ խոռոչի աջ կողմից պէտք է տեսնւէր քարւանսարան, որի պատի տակ գիշերը լուսացրինք: Բայց տեսայ միայն վարը կկզած ժանդարմին: Դիմացը, ընդարձակ տարածութեան վրայ, կենդանի շունչ չկար: Կարծէս թէ մէկէնիմէկ ամայացել էր չորս կողմը: Արեւն ելել ու կանգնել էր այնպէս, որ կարծես թէ վար պիտի ընկնէր: Դաշտը խանձւած էր, բնութիւնը՝ մեռած: Դէպի աջ երկարում էր մի լայն ճանապարհ, որ ոլորւելով՝ հեռւում նոյնանում էր ընդարձակածաւալ տափաստանների հետ: Այնքան խճողւած էին մտքերս, որ չէի կարողանում ինձ հաշիւ տալ եղածի մասին: Ձերբակալման մասին Գարեգինին արած հարցումներս կամ անպատասխան էին մնում, կամ տւած պատասխաններից ոչինչ չէր հասկացւում: Որոշ էր միայն, որ նրան ինձնով վտանգելու վախս ու նախազգացումս իրողութիւն էր դարձել...

Քարւանսարայի ուղղութեամբ, լայն ճամբու վրայ, յայտնւեցին առաջին մէկ-երկու սայլերը՝ շրջապատւած ոտաւորներով: Մարդ չկար, որ դէմքը դէպի մեզ չդարձնէր, բայց ոչ ոքի ճանաչել հնարաւոր չէր. հանրութեան մէջ տարբերւում էին միայն կանայք, փոքրերը: Հատ ու կտոր խմբերին յաջորդեց մի զանգւած, որը, կարծես թէ, մէկ ոտքով էր շարժւում: Երբ զանգւածը անցաւ, ոլորտի մօտ, ուղիղ մեր դիմաց մի խումբ զատւած մնաց. մի քանի կանայք, այր մարդիկ, փոքրեր: Նրանց շարժումներից, ձեռքերի ճօճումներից երեւում էր, որ մեզ տեսնում են: Գարեգինը այնքան կլանւած էր դիտելով, որ կրկնակի հարցմանս, թէ ովքեր են, չպատասխանեց: Տարակոյս չունէի, որ նրանց մէջ է տկն. Ռեբեկան: Ակնոց-

ներս արագ մաքրեցի ու լարեցի ամբողջ տեսողութիւնս, բայց անօգուտ՝ մարդ չկարողացայ ճանաչել: Յանկարծ խմբից զատուեց մի փոքրիկ տղայ ու ճամբու եզրով դէպի մեզ վազեց: Շունչս հատաւ, սիրտս կծկվեց ու կարծես թէ պայթեց: Տիգրանն էր, որ ամբողջ ուժով դէպի մեզ էր վազում: Բաւական յետ ընկած՝ նրան հետապնդում էին Բարունակն ու Արմենակը: Վերջինը վրայ հասաւ, ուզեց բռնել. Տիգրանը կամենալով խուսափել՝ վար ընկաւ...

Արմենակն ու Բարունակը նրան քաշելով՝ յետ էին տանում: Ահա նրանք հասան խմբին, եւ ամէն բան դարձեալ խառնուեց ու անճանաչելի դարձաւ... Կանգնա՞ծ էին թէ նստած, քակո՞ւմ էին թէ կապում, վեր էին հանում մէկի՞ն, թէ միւսին շալակն էին բարձում՝ չգիտեմ: Գարեգինը կծկուեց, յետ քաշուեց ու նորից մօտեցաւ պատուհանի խոռոչին... Ես ինքս ինձ նորից գտայ, երբ աստիճաններից ուժգին ու արագ ոտնաձայն լսեց: Ներս մտան երկու պահակներ, որոնցից մէկի անգղադէմ կերպարանքը մտաբերում էի. կարծեմ թէ նա էր, որ տարաւ կոյսերի սայլապանին ու նրան փոխարինեց մի ուրիշով՝ Կարադաղի լեռների տակ պատահած դէպքից յետոյ: Միւսը թթած, ինքնամփոփ, ծանրաշարժ մի մարդ էր. նա ձեռքին ունէր թեւերի շղթայ. իմ եւ Գարեգինի դաստակները օղակեց, կողպէքներով փակեց: Անգղադէմ պահակը սկսեց ինձ խուզարկել: Մանրազնին շօշափելով օձիքս՝ նա անցաւ ծոցիս գրպաններին: Դուրս հանեց սեւ հեղուկով լեցուած մի փոքրիկ գլանաձեւ սրուակ, որ առաջին առիթով ինձ էլ զարմանք պատճառեց... աղօտ կերպով յիշեցի, որ սրուակը խլել էի Կապտանեանից՝ Չախալլիում: Միւս գրպանից հանեց ակնոցներիս տուփը. բացեց, նայեց պարապ տուփը, հասկացաւ նշանակութիւնը, յետ տաւ ու սկսեց փնտրել, քրքրել գօտիս: Այնտեղ խնամքով պահել էի արծաթ ժամացոյցս, ոսկէ շղթայով: 1913-ի դաշտահանդէսին այդ ժամացոյցը նուէր էի ստացել Թաղական խորհրդից: Ինչպէս բոլոր մրցանակները, նոյնպէս եւ այդ ժամացոյցը հանդիսաւորապէս բաշխել էր Միթեսաքֆ Նեջմիբէյը, որ դաշտահանդէսի պատուոյ նախագահն էր: Ճերմակեղէնիս գօտու մէջ, դեռ Սամսունում, կարելի է երեք ոսկի եւ երկու թուղթ լիրա: Բացի դրամապանակիս մէջ մնացած մանրուքներից՝ այդ էր իմ ամբողջ հարստութիւնը: Անգղադէմ պահակը ժամացոյցը գտաւ, դուրս քաշեց: Երբ ոսկի հաստ շղթան ֆուրս ելաւ, միւս պահակը, որ մինչ այդ անտարբեր նայում էր, շարժում արաւ՝ ժամացոյցը խլելու: Եւ տեղի ունեցաւ ըստ էութեան անկարեւոր մի դէպք, որը, սակայն, այնուհետեւ երբեք չկարողացայ մոռանալ:

-Մայիցա կա՛ցо (սպասիր, ա՛յ մարդ)- բոլորովին պարզ, մաքուր վրացերէնով գոչեց անգղադէմ պահակը՝ գրպանելով ժամացոյցը: Ծանօթ բարբառը սիրտս թունդ հանեց, կարծես թէ երազ էր... Սակայն, հասկացայ, որ պահակները վրացախօս թուրքեր են: Թերեւս այդ դէպքն էր պատճառը, որ անգղադէմ պահակ կարուած դրամները չգտաւ, թէեւ խուզարկում էր մեծ փորձառութեամբ, աւելի հմուտ՝ քան հռչակաւոր «Ռոստովսկի կոնվոյը» Կովկասից Սիբիր մեկնողներին: Մնացած գրպաններիս մէջ բան չկար, բացի դրամապանակից, որը նոյնպէս իրացրեց:

Անցաւ Գարեգինին եւ նոյն ձեւով, օձիքից սկսելով՝ խուզարկեց մինչեւ ոտքերը: Բայց Գարեգին մօտ ոչինչ գտաւ, ինչ որ մարդուն բոլորովին անհասկանալի եւ անհաւատալի էր թւում: Նա, ըստ երեւոյթին, ենթադրում էր, թէ Գարեգինը թաքցրել է ահագին հարստութիւն, մինչդեռ ինքը ոչինչ չի կարողանում գտնել: Անյաջողութիւնից մարդը քրտնել ու զայրացել էր: Նա մէկ քայլ յետ քաշուեց, ցասկոտ հայեացքով վերէն վար չափեց Գարեգինին ու ապա, ընդհուպ գրկի մէջ առնելով նրան, սկսեց խուզարկել նախկին ձեւով: Ձեռքերը խոթած Գարեգինի ծոցը՝ նա երբեմն կանգ էր առնում ու բերանբաց մտածում: Այնքա՜ն ուշիմ ու կենտրոնացած էր մարդու դէմքը, որ կարծես թէ ուզում էր ոչ միայն շօշափել, այլեւ լսել «գանձերի» զնգոցը: Մարդը գրգռուած՝ Գարեգինից պահանջեց բերանը բանալ: Նայեց: Բան չկար: Յանկարծ, նա յետ քաշուեց ու մի վայրկեան լրջօրէն մտածեց. երեւի հասկացաւ, որ ամէն բան կնոջ մօտ է: Եւ դարձաւ ու խենթի պէս սանդուխքներով վար վազեց: Նրան կրնկակոխ հետապնդեց ընկերը:

Շղթայած՝ մենք նորից մօտեցանք փլած պատուհանի խոռոչին:

...Ի՞նչ էր այդ, ինչի՞ արդիւնք էր այդ հիւանդ զգացումը՝ չգիտէի ու չգիտեմ եւ հիմա էլ... Ես մէկէնմէկ չոքեցի՝ ակնոցներս գտնելու, վերցնելու բացարձակ ու հզօր մղումից դրդուած: Մէջքիս, գլխիս իջնող հարուածները, որոնք, ի դէպ ասած, որ եւ է ցաւ չէին պատճառում ինձ, խանգարում էին փնտրտուքս: Մարդը երուի արդէն դադարել էր ծեծլուց, երբ ես յուսահատ՝ յետ նստեցի եւ սկսեցի յատակի հեռուները դիտել՝ ակնոցներս գտնելու: Բայց, յանկարծ, ձախ աչքս անախորժ կերպով կծկծաց ու, կարծես թէ, վար թափուեց: Հասկացայ, որ մարդը աչքս կուրացրեց: Վայրկեանապէս վեր նայելս ու մարդու ցնցուած յետ ցատկելը մէկ եղաւ.

-Օ՜...,- բացականչեց նա:

Շշմած, բերանաբաց մնացի. մարդը բոլորովին այլակերպուել էր. շնչում էր այնպէս, որ կարծես թէ տասնեակ կիլոմետրեր էր վազել. դէմքն այլանդակուել, աչքերը կոպերից դուրս էին ընկել.

-Ի՞նչ ես փնտրում...

-Ակնոցներս...

-Ի՞նչ...

-Ակնոցներս...

Մարդը խենթի պէս յետ-յետ գնաց:

-Ակնոցնե՜րդ...

Պղնձագոյն դէմքի վրայ նրա խոշոր, սեւ աչքերը, լայն-լայն բացուած, ցաւագար շրջան արին ու եզան աչքերի պէս դեղնեցին.

-Ակնոցնե՜րդ...

Անբնական, գրեթէ խենթ արագութեամբ նա դէս ու դէն նայեց: Դռան մօտ գտաւ: Առաւ, նայեց, ծոցի գրպանը դրեց եւ հատ-հատ շեշտելով ասաց.

-Ակնոցներդ, էֆենդի, յիշատակ կը մնան ինձ մօտ...

Դժուար թէ որ եւ է բան մինչ այդ այդքան յուսահատութիւն պատճառած լինէր

ինձ՝ որքան նրա այդ խօսքերը: Մէկ աչքով, անթարթ, ես նայում էի նրա ծոցի գրպանին, երբ, յանկարծ, նա մէկ-երկու քայլ արաւ ու դուրս քաշելով գրպանից ակնոցներս՝ մեկնեց ինձ: Հապճեպով առի ու ծոցիս գրպանը նետեցի: Մարդը, գլուխը մէկ կողմ թեքած, հեւիհեւ շշնջաց.

-Դիա վուրմամ ... (էլ չեմ խփի):

Հնոցի պէս եռացող գլխիս մէջ, յանկարծ, մարդը պատկերացաւ մի այլ տեղ եւ ապշութիւնս զարմանքի փոխուեց...

-Դիա վուրմա՞մ...

Շատ աղօտ կերպով հասկանում էի մարդու պաշտօնը, աստիճանը եւ ուզեցի վեր կենալ, երբ մարդը ճչաց.

-Դիա վուրմա՞մ...

Արդէն հասկացել էի ով լինելը: Ելանք... Մարդը գժի պէս յետ-յետ գնաց, կպաւ պատին ու գոռաց.

-Դիա վո՛ւրմամ...

Յանկարծ, տունը ցնցուեց. մարդը դուռը սոսկալի շրխկոցով վրան դարձրեց ու սանդուխքները դղրդացնելով՝ գլխապատառ վազեց վար: Կաւզայի առաջ մեզ հանդիպող ժանդարմների պետն էր այդ մարդը, որի կոտրտուելով քայլերի վրայ անմեղութեամբ խնդացել էր Գարեգինը:

Քունքիս իջած մտրակի հարուածը մասամբ շօշափել էր նաեւ ձախ աչքս, որը այժմ արնակալել, ուռել եւ փակուել էր: Գարեգինը, ամէն բան զանց առած, խիստ մտահոգուած էր այդ առթիւ: Նա հարկադրում էր ինձ փակել միւս աչքս, ձախի կոպերը բանալով եւ իրարու վրայ հարցնում էր, թէ տեսնո՞ւմ եմ, արդեօք. մշուշ էր, բայց տեսնում էի:

Ոչ թէ ցաւի, այլ ծեծով անպատուած լինելու դառնութիւնն էր, որ համակել էր մեզ: Դրան միանում էր այն զգացման ստուգութիւնը, թէ ամենը գնացին, մնացինք մենք: Յետ մնացինք կարաւանից, հարազատների խմբից: Եթէ թոյլ տային, դեռ վազելով կարող էինք հասնել: Բայց էլ հոյս չկար: Որքա՞ն ժամանակ էր արդեօք անցել... դժուար էր հասկանալ:

Ժանդարմների պետի անհետանալուց յետոյ, երեւի, անցել էր մէկ-երկու ժամ, երբ դուռը յանկարծ բացուեց եւ ներս մտաւ մեզ ձերբակալող փոլիսը: Նա քակեց մեր ձեռքերի շղթան ու ամբարտաւան ձեւով հրամայեց հետեւել իրեն: Գարեգինը առաւ թախտի վրայ ընկած կապոցը, որ տուել էր Արմենակը, եւ աճապարանքով վար իջաւ: Նրան հետեւեցի ես: Դռան մօտ կանգնած մելամաղձոտ ժանդարմը միացաւ մեզ: Քիչ վարը, արեւի ճառագայթների տակ, աչքիս կծկծոցը սաստկացաւ: Վայրը ճանաչելու կարողութիւններս այլեւս թուլացել էին: Արդէն մէկ աչքով, առանց ակնոցի, որը անկարող էի գործածել, լաւ չէի տեսնում: Դրա հետ միասին՝ ամէն բան, կարծես թէ շուռ էր եկել: Եւ այն, ինչ առջեւ էր, ընկել էր յետեւ, իսկ ինչ յետեւ էր՝ գտնւում էր առջեւում: Գնում էինք տնից, բայց կարծես թէ այնտեղ պիտի գայինք եւ, առհասարակ, գնում էինք թէ գալիս էինք, չէինք կա-

ղողանում հասկանալ: Անցնում էինք ինչ-որ կիսաքանդ շինութիւնների մօտով, որոնք, կարծես թէ, առաջին անգամ էի տեսնում: Մեր ձախ կողմը պէտք է որ լինէր քարաւանսարան, որի պատի տակ գիշերեցինք, բայց այնտեղ տարածել էր մի ընդարձակ ու ամայի դաշտ: Մարդ չկար, շրջապատի մէջ կենդանի շունչ չկար: Աւելի վար մեր դիմաց կային մարագներ, ախոռներ, որոնք գուցէ ունէին նաեւ քարաւանսարաների հանգամանք: Անցանք ու, թեքուելով դէպի ձախ, մտանք դաշտ: Այստեղ ու այնտեղ թափթփուած էին ճմլուած, բզկտուած անհաշիւ թղթերի կտորներ: Զուգահեռ, շրջանաձեւ անցնում, դառնում էին ծանր անիւների հետքեր: Աջ եւ ձախ, դեղնած, կիսադալար կանաչներ փակել, նոյնացել էին գետնի հետ: Այստեղով, նշանակում է, անցել էին զանգւածներ: Դիմացը, արեւի տակ, ոսկու պէս փայլփլում էին ջարդուած ապակու կտորներ: Իսկ վերը, դաշտից դուրս, երկարում էր ճանապարհը: Պարապ էր, ոչ մի անցուդարձ չկար: Ճամբուց վար, դէպի աջ տարածւում էին շինութիւններ... Սպիտակ շէնքը... պաշտօնատունը... Չէ՞ որ ես այնտեղ էի գնում. եւ իրաւ, այդ շէնքից ուղիղ գծով դաշտից միւս ծայրին ընկած էր մեր խարխլած քարաւանսարան: Պարզ էր, որ մեզ տանում էին այնտեղ: Ու մտածեցի, որ պարսկահպատակ եմ, Կարաջաղաղի շրջանի Ահեր գիւղից: Ամիր-Վահան Ղահրամանեան Յովհաննէսեան: Ամիր-Վահա՛ն:

-«Ոչ մի կապ չունեմ»...

-«Ուսուցչութեամբ, միայն, միմիայն ուսուցչութեամբ»...

-«Չգիտեմ»...

Յիմա՛ր... Տօթ էր, անտանելի տօթ: Հասանք ու կանգ առանք շեմքի մօտ: Փոլիսը ներս գնաց, ապա յետ դարձաւ ու առաջնորդեց մեզ: Մաքուր, քառակուսի միջանցքը տանում էր մի սենեակ, որի դուռը բաց էր: Ներս մտանք ու մնացինք շեմքի մօտ կանգնած: Բաւական մաքուր, ընդարձակ սենեակի խորքում կար մի սեղան, որի վրայ դրուած էին գինու եւ օղիի շիշեր, ուտելիքներ, մրգեր, բաժակներ եւ այլն: Սեղանի մօտ նստած էր ժանդարմների պետը: Ծխում էր՝ բերանից ծուլօրէն բաց թողնելով ծուխը: Նրա դիմաց, մէջքը դէպի մեզ, նստած էր մի գունդ մարդ, սովորական հագուստով եւ, գլուխը քարշ, ուտում էր: Պատերի մօտ կային աթոռներ, մէկ-երկու կլոր սեղաններ: Ձախ կողմից, պատի տակ, սեղանից ոչ հեռու, կար գորգով յարդարուած մի թախտ: Աջ կողմից, դէպի ճանապարհը նայող լուսամուտների մօտ՝ մի գրասեղան: Սենեակն ընդհանրապէս ոչ թէ պաշտօնատան, այլ մասնաւոր բնակարանի տպաւորութիւն էր թողնում: Եւ կարգ ու սարքը, ներքին ինչ-որ տպաւորութիւններով, այնքան ծանր ազդեց վրաս, որ սիրտս ճմլուեց...

Ժանդարմների պետը ոտքի ելաւ: Պղնձագոյն դէմքը հանդարտ էր ու խոհուն: Նա վարանոտ մի շարժումով հրաւիրեց մեզ սեղանի մօտ: Միայն Թուրքիայի մէջ հնարաւոր է պաշտօնական եւ անպաշտօն հանգամանքների նման մի շրջադարձ: Զգացի, որ կացութիւնը այլ էր, եւ մի բան մեզ գերազանց վիճակի մէջ էր դնում, որից, սակայն, օգտուելը հնարաւոր չէ: Ես զուսպ շնորհակալութեամբ հրա-

ժարեցի: Գարեգինը լուռ կանգնած էր: Ժանդարմների պետը հրաւիրեց նստել պատի մօտ եղած աթոռներին: Կրկնեցի շնորհակալութիւնս եւ մնացինք կանգնած: Այն ժամանակ նա երկու բաժակ օղի ձեռքներին մօտեցաւ մեզ եւ առաջարկեց: Ես շնորհակալութեամբ մերժեցի, Գարեգինը նոյնպէս:

-Գուցէ կարծում էք, թէ թունաւորված են, ահաւասիկ, նայեցէք, փորձում եմ,- ասաց նա՝ բաժակներից մի-մի ումպ խմելով:

Միայն դառն ժպիտ յարուցեցին իմ մէջ նրա այդ խօսքերը, որոնք ներքնապէս անյարիր մի վիճակի արդիւնք էին:

-Նա թոյնից վախ չունի,- տեղից վեր ելնելով ասաց միւս մարդը, որին անմիջապէս ճանաչեցի:

-Այս սրուակը, եթէ հիմա իրեն տաս, հաճոյքով կը պարպի, որովհետեւ, երբ բանը բանից անցնում է, կեանքն էլ արժէքազուրկ է լինում:

Զարմանքով տեսայ, որ Կապտանեանից խլած սեւ հեղուկով լի սրուակը այժմ նրա ձեռքումն էր: Եւ մտքերիս կծիկը ինքնին քակուել սկսեց:

-Ռուս զօրքերին թեւ ու թիկունք եղաք, Էրզրումում համաձայնութեան գալու բոլոր հնարաւորութիւնները մերժեցիք՝ անմիտ, տղայական պատճառներ բերելով: «Ադանա՜ն», ո՞ր երկրի մէջ տեղի չեն ունենում նման յետադիմական շարժումներ, «բարենորոգութիւնների ձգձգո՜ւմ», ե՞րբ ժամանակ եղաւ գործադրելու, «գաւառի տխուր գժտութիւննե՜ր», ո՞վ էր նրանց ծնունդ տալիս...

Նա գնալով նորից սկսել էր բորբոքուել.

-Եւ դաւաճանեցիք այնպիսի մի շրջանում, երբ Դարդանէլից, Միջագետքից, Պաղեստինից, Կովկասից, ամէն կողմից ազգերը մեզ վրայ թափած՝ ուզում էին մեզ բզկտել, «հիւանդ մարդու» ժառանգութիւնը իրենց մէջ բաժանել... Օ՜, ինչպէս չէ, անշուշտ նաեւ ձեզ բաժին հանել...

Նա կատաղութեամբ եւս մէկ քայլ արաւ դէպի մեզ ու ատամները կրճտացնելով՝ կանգ առաւ: Ապա ձեռքը տարաւ ծոցի գրպանը, դուրս քաշեց մի փոստքարտ ու բոլորովին մօտենալով ինձ՝ ցոյց տուեց.

-Ծանո՞թ է...

Այնտեղ նկարուած էր «Հայկական ազատամարտը»:

-Ծանօթ է, չէ՞... Այս չէ՞ ձեր ուզածը... Է՜, ինչ կայ, որ, երկիրը մե՜ծ, հողը շա՜տ... Գնացէք հիմա ձեր «Էրմենիստանը» ստեղծեցէք Մոսուլի մէջ...

Կարծես թէ փայտով հարուած տուին գլխիս... «Մոսո՜ւլ»...

-Իսկ եթէ այնտեղ էլ անյաջողութեան հանդիպէք, մեղադրեցէք ձեզ. մենք այլեւ մեր կրծքի վրայ օձեր պահելու միտք չունենք...

Նա մօտեցաւ սեղանին, իրարու վրայ երկու բաժակ օղի պարպեց ու խռպոտ ձայնով իրնքն իրեն շարունակեց.

-Այս անգամ ամէն բան վերջացաւ. չարիքն արմատով դուրս քաշուեց ու դէն նետուեցաւ...

Ապա դանդաղ դէպի մեզ գալով՝ յարեց.

-Թէ՛ մեր, թէ՛ ձեր տառապանքները յաւիտենապէս վերջ գտան: Հասկացա՞ք...

Նրա զսպած կատաղութիւնը այս անգամ չափ չունէր. բուռն ատելութեան բովանդակ թափով ու դառն հեգնանքի շեշտով նա ասաց.

-Դուք, իհարկէ, յոյս ունէք, որ ռուսները պիտի գան: Բայց մինչեւ այդ՝ քար քարի վրայ չի մնայ...Կը փլի, կը ջախջախուի ամէն բան... Եւ ձեր ռուսները, լաւագոյն դէպքում, կանցնին այնպիսի աւերակների միջով, որոնց տեսքը սարսափ կազդէ նրանց՝ անգամ երազի մէջ...

Յանկարծ նա լռեց այնպիսի մի ձեւով, որ, կարծես թէ, շատ կարեւոր բան յիշեց: Ապա ինքն իրեն հաւաքեց եւ աչքերը բիբիս մէջ յառած՝ զսպած կատաղութեամբ շշնջաց.

-Այս բոլորը ձեզ համար ոչինչ է, այնպէս չէ՞... Ձեզ համար այժմ ամէն բան միեւնոյն է, այնպէս չէ՞... Իսկ հազարաւոր մարդի՞կ, որոնք ձեզ նմանների պատճառով այժմ տառապում են ճանապարհին՝ կանա՞յք, աղջիկնե՞ր, որոնք յանցանք չունին, երեխանե՞ր...

-Հերի՛ք է,- ինձ համար էլ բոլորովին անսպասելի կերպով գոչեցի ես:

Նա կարծես թէ շանթահար եղաւ եւ հազիւ կարողացաւ ատամների միջից շշնջալ.

-Ի՞նչ ասացի՛ք...

Ժանդարմների պետը ոտքի ելաւ ու յամր անցաւ դէպի մեզ:

-Դուք ասացիք. «Հերի՞ք է»...

Ես դրականապէս թօթւեցի գլուխս:

-Դուք ուզում էք, որ հիմա տեղնուտեղը ձեր «հաշիւը» փակե՞մ...

Ես դարձեալ շարժեցի գլուխս:

Կարմրած աչքերը, կոպերի թանձր ծալքերից դուրս գալով, կախ ընկան, վզի հաստ երակները ցցուեցին: Աջ ձեռքը գրպանի մէջ դարձնելով՝ նա կանգնած տեղը բարկութիւնից խեղդւում էր: Նրա գունդ ուսերը բարձրանում, կուրծքը նկատելի կերպով ուռում էր: «Ես մի ակնթարթ»,- անցաւ գլխովս...

Բայց յանկարծ, նա փուքսի պէս բաց թողեց շունչը, յետ քաշւեց, ու հազիւ զսպած յուզումով սպառնագին ասաց.

-Շատ լաւ... հերիք է... այս անգամ հերիք է...

***

1995 թ. ֆրանսերենից հայերեն Գր. Ջանիկյանի թարգմանությամբ հրատարակվեց ***Ա. Համլենի և Ժ. Բոնի*** «Վերականգնված հիշողություն» անունը կրող բացառիկ հետաքրքիր փաստագրական վիպակը: Գրքում մեծ տեղ են գրավում արևմտահայության ցեղասպանությունն ու դրան առնչվող շատ կարևոր ու հետաքրքիր նյութեր:

Մի քանի մեջբերումներ այդ գրքից Գր. Ջանիկյանի գերազանց թարգմանությամբ:

Բոնագաղթի տառապանքները ներկայացնելիս վիպակի հեղինակները գրեթե վերարտադրել են բռնագաղթի ճանապարհներով անցած արևմտահայ հանրահայտ մտավորական *Ա. Անտոնյանի «Մեծ ոճիր»* փայլուն ստեղծագործությունը: Ֆրանսիացի հեղինակները մեծ վստահությամբ ու հարգանքով են վերաբերվել Արամ Անտոնյանին ու նրա «Մեծ ոճիր»-ի պարունակած նյութերին:

«Աքսորի ճանապարհին,- գրում են գրքի հեղինակները,- բռնագաղթվածներից նախ խլում էին հնչուն դրամը, ապա մնացած ողջ ունեցվածքը: Նրանց չորսհինգերորդը կանայք, երեխաներ էին, երեք- հինգերորդը քայլում էին ոտաբոբիկ: Շատերն իրենց դժբախտ էին զգում մանավանդ այն պատճառով, որ չեն կարողանում հողին հանձնել մեռած հարազատներին: Դիակներն անքաղ մնում էին ճանապարհի վրա, ամեն տեղ: Կանայք օրերով շալակած տանում էին զավակների անկենդան մարմինները:

Ամենածանրը այն մայրերի ճակատագիրն էր, որոնք ծննդաբերում էին ճանապարհին: Նրանց հազիվ այնքան ժամանակ էին տալիս, որ նորածիններին աշխարհ բերեն: Մի կին գիշերով երկվորյակ ծնեց: Հաջորդ առավոտյան նա ստիպված էր ոտքով, երեխաներին շալակն առած ճամփա ընկնել: Երկու ժամ քայլելուց հետո, ընկավ: Զինվոր-ոստիկանները ստիպեցին զավակներին թողնել թփի տակ, քարավանի հետ շարունակել ճանապարհը:

Մի ուրիշ կին ծննդաբերեց հենց քայլելու ժամանակ: Քանի որ նրան նույնիսկ կանգ առնել թույլ չտվին, հարկադրված մի քանի քայլ արեց ու մեռած ընկավ:

Ամեն տեղ հանդիպում են մանուկների անթիվ անթաղ դիակներ: Մի թուրք հազարապետ, որ ինձ պես երեք օր առաջ էր վերադարձել անապատից, պատմում էր, թե ինչպես են մայրերը ճանապարհին թողնում զավակներին, որովհետև չեն կարողանում կերակրել: Ավելի մեծերին թուրքերն իրենք են խլում ծնողի ձեռքից: Հազարապետը, իր եղբայրները, օրինակ, տանը մեկական այդպիսի երեխա ունեին, որոնց ուզում էին մահմեդական դարձնել:

Այդ երեխաներից մեկը գերմաներեն գիտեր, ըստ երևույթին մեր որբանոցի սան էր եղել: Այստեղից անցնող քարավանների մեջ առվազն երեք հարյուր կին ծննդաբերել են ճանապարհին:[1] Մի ուրիշ ականատես հանդիպել է այս տարագիրներին: Գրեթե նույն տեղում:

-Նրանց անվերջանալի թափորը ճամփա ընկավ... ավելի ճիշտ զինվոր-ոստիկանները սկսեցին առաջ քշել մահակի հարվածներով: Իրենց մերկությունը մի կերպ ծածկած, թուլացած աքսորականներն ավելի շուտ սողում էին, քան քայլում: Ծեր կանայք անզոր ընկնում էին, բայց երբ զաբիթիեն դագանակը բարձրացրած մոտենում էր, ճարահատ վեր էին կենում: Ոմանց հրում էին մատակների նման: Իմ աչքի առաջ մի երիտասարդ կին ընկավ, բայց մահակի երկու-երեք հարված ստանալուց հետո, տառապանքով ոտքի կանգնեց: Առջևից, երկու թե երեք տարեկան երեխան գրկած, քայլում էր ամուսինը: Քիչ այն կողմ մի ծեր կին

1. Տե՛ս Յ. Լեփսիուսի հիշատակված աշխատությունը, էջ 176-177

սայթաքեց, փռվեց ցեխի մեջ: Զինվոր-ոստիկանը բիրով սկսեց ծեծել նրան: Կինը չէր շարժվում: Ծեծը շարունակվեց ոտքի հարվածներով: Պառավն անշարժ էր: Վերջապես թուրքը ոտքով այնպես ուժեղ խփեց նրան, որ գլորեց մոտակա փոսը: Կարծում եմ, արդեն մեռած էր...

Մի խեղճ աղջնակ, որն ավելի քան մեկ շաբաթ քայլել էր ոտաբոբիկ, որպես հագուստ միայն մի պատառոտված գոգնոց ուներ: Նա դողում էր ցրտից ու քաղցից, ոսկորները բառացիորեն դուրս էին ցցվել մաշկի տակից: Մոտ քսան երեխա էլ աքսորականները ճանապարհին թողեցին, որովհետև չէին կարողանում քայլել: Արդյոք մեռա՞ն քաղցից: Հավանաբար: Նրանց մասին անհնար է որևէ բան իմանալ: Ես տեսա նաև զեյթունցի երկու անօգ, տարիքոտ աղջիկների: Երևում էր, որ բարեկեցիկ ընտանիքից են, բայց հետևները հագուստից բացի, ոչինչ չէին կարողացել վերցնել: Հինգ թե վեց ոսկի էլ պահել էին մազերի մեջ: Դժբախտաբար, քայլելու ժամանակ արևն ընկել էր նրանց վրա և զինվոր-ոստիկանը նկատել էր ոսկու փայլը: Նա նույնիսկ ժամանակ չկորցրեց քանդել-հանել տալու համար: Խեղճերի մազերը պոկեց:[1]

Քաղցը, ծարավը, տոթը, ցուրտը, հիվանդությունները, ծեծը անընդհատ նոսրացնում էին աքսորականների քարավանները: Գուցե դա դիտավորություն չէր, այլ անկազմակերպվածության, միջոցների բացակայության արդյունք, չնայած Հաճընի բողոքական պատվելին մի թուրքի ասում է, թե.

-Այս տարագրվածների կեսն էլ ողջ չի մնա,- վերջինս պատասխանում է.

-Մենք էլ հենց դա ենք ուզում:

Իրոք, ավելի մաքիավելական (իտալացի քաղաքագետ Նիկոլո Մաքիավելիի (1469-1527) անունից առաջացած արտահայտություն, որը նշանակում է բարոյական ամեն չափանիշ խախտող, նենգ) ծրագիր երևակայել անգամ հնարավոր չէ:

Նայիմ բեյն (հալեպի գաղթականների տեսչության գլխավոր քարտուղարն էր, տեսուչը՝ Աբդուլ-Ահադ բեյը: Պատերազմից հետո Նայիմ բեյի հուշերը հրատարակել է Արամ Անտոնյանը: Պաշտոնական փաստաթղթերը, որ գլխավոր քարտուղարը տվել է հայ հրապարակագրին, որպես իրեղեն ապացույց, օգտագործվել են Թեհլիրյանի՝ Թալեաթ փաշային պատուհասողի դատավարության ժամանակ, 1921 թվականին, Բեռլինում) այսպես է նկարագրում Հալեպի՝ տարագրության տեսչության ժողովներից մեկը. «Տասնմեկ անց կեսին (տաճկական ժամանակով) գաղթականների տեսուչ Էյուբ բեյն ու զինվոր-ոստիկանների հրամանատար Էմին բեյն շտապեցին Աբդուլ-Ահադ Նուրի բեյի գրասենյակ: Նրանց խորհրդակցությունը մոտավորապես մի ժամ տևեց: Թեման հայերին բնաջնջելու միջոցներն էին: Էյուբ բեյը կողմնակից էր բացահայտ նախճիրի, բայց Աբդուլ-Ահադ Նուրի բեյը, որ շատ խորամանկ անձնավորություն էր, մերժեց այդ գաղափարը: Ըստ նրա, շատ ավելի ճիշտ կլիներ հայ գաղթականներին հանձնել ծմեռվա դժվարություններին և այլ զրկանքների: Դա հնարավորություն կտար հետագայում պնդելու, թե

1. Տե՛ս Յ. Լեփսիուսի հիշատակված աշխատությունը, էջ 30-33:

հայերը մահացել են իրենց բնական մահով: Տասը-տասնհինգ հազար գաղթական կուտակել նույն տեղում կնշանակեր կարճ ժամանակում նրանց ենթարկել ամեն տեսակի տառապանքի, քաղցի ու հիվանդության: Իսկ հետո, երբ այդ նույն հայերին ավելի հեռու քշելու համար անակնկալ տեղահան արվեր, պարզ է, նրանք փոխադրամիջոց գտնել չէին կարողանա և ոտքով քայլելուց ուժասպառ, հետզհետե կընկնեին ճանապարհի ողջ երկարությամբ:

Աբդուլ-Ահադ Նուրի բեյի տեսակետը հաղթեց: Ամեն ինչ տեղի ունեցավ այնպես, ինչպես մտածված էր: Յուրաքանչյուր առավոտ մեզ հայտնում էին, թե քաղցից, ցրտից ու հիվանդություններից քանի հարյուր հայ է մահացել: Էյուբ բեյը գնաց Ազազ, վերադարձին ուրախ-ուրախ պատմեց, որ այրել է տարագիրների վրանները: Գայմագամն ու գաղթականների առաքման պաշտոնյան մեզ ամեն օր մահացածներ մասին տեղեկագրեր էին ուղարկում:

Մահը միայն հայերին չէր հնձում, տեղացիներն էլ էին կորուստներ ունենում:

Մի օր ես ասացի Աբդուլ-Ահադ Նուրի բեյին.

-Բեյ էֆենդի, գաղթականների առաքումը պետք է մի փոքր դանդաղեցնել: Ողջ Միջագետքին մահ է սպառնում: Եթե նույն ձևով շարունակենք, այդ ընդարձակ տարածքում, դներից բացի, ոչ մի կենդանի էակ չի մնա: Ռես-ուլ-Այնի գայմագամը մեզ անընդհատ խնդրագրեր է ուղարկում:

Նուրի բեյը ծիծաղեց.

-Տղա՛ս,- ասաց,- այսպես մենք ազատվում ենք մեզ համար նույնքան վտանգավոր երկու տարրից: Հայերի հետ սատկողներն արաբներ չե՞ն: Վա՞տ է, որ մենք բացում ենք թրքության ապագա ճանապարհը:

Լռեցի: Ահավոր դաժան պատասխանը սահմռկեցրեց ինձ: Ո՞վ էր նրան խրախուսում առանց վախի, բացահայտ նման անողորմ ծրագիր ի կատար ածել: Այդ կապակցությամբ շատ բան կարելի է ասել, բայց գաղթականների ընդհանուր տեսչության գաղտնի թղթերի մեջ պահվող հրամանագրի մի օրինակն ինքնին բավական է բացատրելու համար, որ Նուրի բեյի հանդգնության պատճառն իրեն տրված անբեկանելի հանձնարարությունն էր՝ համընդհանուր բնաջնջման ենթարկել բոլոր հայերին:

Ահա այդ հրամանը. «Չնայած, դարեր ի վեր մեր պետականության ամուր հիմքերը սասանել ձգտող և կառավարության համար պատուհաս դարձած հայ տարրի բնաջնջումը նախապես վճռված էր, ժամանակի պայմանները հնարավորություն չէին տալիս իրականացնելու այդ սրբազան մտադրությունը: Այժմ, քանի որ բոլոր խոչընդոտները վերացված են և մեր հայրենիքն այդ վտանգավոր ազգությունից փրկելու հարմար պահը հասել է, խստիվ հանձնարարում ենք գաղթականների թշվառ վիճակի հանդեպ կարեկցություն չցուցաբերել և նրանց իսպառ ոչնչացնելով, Թուրքիայում մեկընդմիշտ վերացնել «հայ» բառը: Ամեն ինչ արեք, որ այդ ծրագիրն իրագործող պաշտոնյաները լինեն ազգանվեր ու վստահելի»:

Նայիմ բեյը շարունակում է.

-Այս հրամանի ճշգրիտ թվականը և ում ուղղված լինելը հայտնի չէ, որովհետև իմ ձեռքինը պատճեն է: Բայց, ամեն ինչից զգացվում է, որ ներքին գործերի նախարարը (այսինքն՝ Թալեաթ բեյը) այն հղել է անձամբ կուսակալին, իսկ կուսակալն էլ իր հերթին՝ գաղթականների ընդհանուր տեսչությանը:

Կարծում ենք, որ այս փաստաթուղթը Հալեպ է հասել Աբդուլ-Ահադ Նուրի բեյի նշանակումից առաջ, Ջելալ բեյի կուսակալության շրջանում: Թերևս նրա բովանդակությանը ծանոթանալուց հետո է Ջելալը հեռագրել Կոստանդնուպոլիս. «Ես այս նահանգի կուսակալն եմ, դահիճը լինել չեմ կարող» և անմիջապես պաշտոնանկ է արվել...

Մաարայի, Բաբի, Հալեպի շրջակա գյուղերում տեղավորված գաղթական հայերին տեղափոխելու շրջանում գայմագամներն այնպիսի անգութ հրահանգներ ստացան, որ առանց արցունքի կարդալ իսկ հնարավոր չէր: Հալեպից զինվոր-ոստիկաններին կարգադրում էին բռնագաղթվածներին քաղցած և ծարավ թողնել, ճանապարհին հնարավորին չափ նվազեցնել նրանց թիվը:

1916 թվականի հունվարի 20-ին Աբդուլ-Ահադ Նուրի բեյը Բաբի գաղթականության առաքման տեսուչ Մուհարրեմ բեյին գրեց.

«Հաղորդագրություն թիվ 344

Անշուշտ, դուք զգում եք ձեր պատվական անձի նկատմամբ կուսակալության ցուցաբերած վստահությունը և այդ վստահությունից ելնելով մեր վարչության՝ ձեզ հանձնարարված գործի կարևորությունը: Ուրեմն, չպետք է թույլ տաք, որ որևէ հայ հաստատվի Բաբում: Միայն գաղթականների նկատմամբ հանդես բերած ձեր խստությունն ու փութկոտությունը կարող են իրականացնել մեր հետապնդած նպատակը: Նաև հոգ տարեք, որ ճանապարհին դիակ չմնա: Հնարավորին չափ շուտ հայտնեք այն առավելագույն գումարը, որ կարող են պահանջել այդ գործը հանձն առած անձինք:

Մահացածների ձեր ուղարկած վերջին ցուցակը գոհացուցիչ չէ: Մնում է ենթադրել, որ այդ մարդկանց (հայերի) վիճակը լավ է: Նրանց տեղափոխությունը չպետք է նմանվի ճանապարհորդության: Բողոքներին, լաց ու կոծին ուշադրություն մի դարձրեք: Կուսակալությունն անհրաժեշտ հրահանգները գայմագամին էլ է տվել: Ջանք ու եռանդ մի խնայեք»:

20 հունվարի 1916 թ., Աբդուլ-Ահադ Նուրի»

Այս Մուհարրեմ Բեյը Բաղդադի ոստիկանության նախկին տնօրենն է և գաղթականների տեղափոխմամբ զբաղվող պաշտոնյաներից ամենաարյունարբուն: Նրան հանձնարարված գործը շատ կարևոր էր և որպեսզի ագահության պատճառով զիջումներ չանի, 150 ոսկի ամսական էին տալիս: Մուհարրեմ բեյի հրամանով շատ քարավաններ աքսորվեցին, նա պատճառ դարձավ, որ հազարավոր հայեր ամենադաժան կտտանքներով մեռնեն ճանապարհին:

Աբդուլ-Ահադ Նուրի բեյը այս արյունռուշտ մարդուն օգնելու համար Բաբ ու-

դարկեց զինվոր-ոստիկանների մի հարյուրապետի, որն իր հետ հետևյալ հրահանգը տարավ. «Բաբի գազան (գյուղաքաղաքը) հայ գաղթականներից դատարկելու ժամանակ գործադրված ոչ մի բռնություն պատասխանատվության չպետք է ենթարկվի:

Աբդուլ-Ահադ Նուրի»:

Հարյուրապետն ու իր հետ մեկնած հինգ-վեց զինվոր-ոստիկանները մարդասպանության ձևերից չէին խորշում: Վերջին հրահանգի համաձայն, ինչ միջոցով ուզում է լիներ, Բաբի բոլոր գաղթականները քսանչորս ժամվա ընթացքում պիտի տեղահանվեին, այն էլ այնպես, որ նոր աքսորը նրանց մահվան հասցներ: Մերկ ու բոկոտն հայերը չկարողանալով ձմեռվա սառնամանիքին երկար քայլել, ընկնում էին, մահանում: Բաբից Մեսքենե ձգվող ճանապարհը, շրջակա դաշտերը դիակներով լցվեցին ու մի բուռ հողի էլ չարժանացան: Կառավարությունն իմանալով, որ մեռելները մնում են բաց երկնքի տակ, անհանգստացավ, և որպեսզի օտարականների ուշադրությունը չգրավի, հրամայեց թաղել: Բահ ու բրիչով զինված մեռելաթաղներ հայտնվեցին, որոնք ձգտում էին ամեն կերպ թաքցնել նախճիրի հետքերը:

Կարգի համաձայն՝ տասնհինգ օրը մի անգամ մահացածների թիվը ծածկագրով հեռագրվում էր Կոստանդնուպոլիս: Այս հանգամանքը ևս վկայում է, որ գաղթականների ընդհանուր տեսչության Բաբի փոխանորդությունն ստեղծված էր հանցավոր նպատակներով: Կառավարությունն անընդհատ պահանջում էր ոտնահարել հայերի կյանքն ու պատիվը, վերացնել նրանց գոյության բոլոր հնարավորությունները:

Թալեաթ փաշան գրում էր. «Բոլոր նրանց, ովքեր կվարանեն վերջ տալ դարեր ի վեր թուրքերի վտանգավոր թշնամիների, իսկ վերջերս նաև Օսմանյան կայսրությունը արյան մեջ խեղդելու ձգտող հայերի գոյությանը, պետք է, իսկույն ևեթ, որպես հայրենիքի դավաճան՝ պատժել, անշուշտ, որևէ այլ պատրվակով և այդ մասին անհապաղ համապատասխան մարմիններին տեղյակ պահել»:

Որովայնախտի համաճարակի շրջանում այնքան շատ գաղթական էր Հալեպ հասել, որ ոստիկաններն ու զինվոր-ոստիկանները Աստծուց բացի այլ ապավեն չունեցող հայերին տներից հանում էին խոզերի պես՝ պարանով կապելով ու գետնամած քաշքշելով: Մի օր, դժբախտ մեկը աղերսագիր էր ներկայացրել, ուր նկարագրում էր, թե ինչպես են որովայնախտով վարակված իր ողջ ընտանիքը նետել փողոց, լցրել աղբատար կառքն ու տարել քաղաքից դուրս՝ Կառլիկ: Տղամարդն աղաչում-պաղատում էր, որ իրենց թույլ տրվի գոնե մի տասը օր էլ Հալեպում մնալ: Խեղճն ինչ իմանար, որ մահվան են դատապարտված, ոչ ոք իրավունք չունի իրենց օգնել: Իմ աշխատած շրջանում մեր վարչությունը հայ գաղթականներից տասը հազար աղերսագիր ստացավ, որոնցից տասը գոնե ուշադրության չարժանացան: Հալեպում մեկը մյուսից ծանր, բազմաթիվ նման դեպքե-

րի ականատես լինելուց հետո, ինձ, որպես գաղթականների առաքման պաշտոնյա, փոխադրեցին Մեսքենե:

Մեկնելուս պահին Էյուբ բեյը կանչեց ու ասաց.

-Նայիմ էֆենդի, մենք Մեսքենե ուղարկված մեր ոչ մի պաշտոնյայից գոհ չենք: Դու ամեն ինչին տեղյակ ես, գիտես մեր ստացած հրահանգների բովանդակությունը: Այնպես արա, որ այդ մարդիկ (հայերը) շուտ վերանան: Հարկ եղած դեպքում ձեռքովդ խեղդիր, նրանց սպանելը հաճույք է: Բնականաբար, քաղցը, ծարավը, վարակիչ հիվանդությունները, բժշկության բացակայությունը նախ և առաջ հարվածում էին թույլերին: Քարավաններում դեռ շատ աքսորական կար, որոնցից հարկ էր ազատվել: Դոկտոր Բեհաէդդին Շաքիրը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսը, առաջարկեց.

-...Ես բազմաթիվ անքուն գիշերներ անցկացրի և կարծում եմ ելքը գտա: Այո՛, ընկերներ, մենք երևակայությունից վեր ծանր բեռ ենք վերցրել մեզ վրա, առանց բացառության բոլոր հայերին՝ տղամարդկանց, կանանց, ծերունիներին ու անկարներին սպանելը հեշտ չէ: Ինչպես ամեն գործի, դրա համար նույնպես անհրաժեշտ են փորձառու, հմուտ մարդիկ: Մենք չենք կարող նման պատասխանատու պարտականությունը վստահել ո՛չ բանակին, ո՛չ զինվոր-ոստիկաններին, ո՛չ էլ ժողովրդին: Սա նրանց անելու բանը չէ: Ճիշտ է, զինվորին ու զինվոր-ոստիկանին նույնպես սովորեցնում եմ մարդ սպանել, բայց պատերազմի մեջ՝ երկրի և հայրենիքի խաղաղության համար: Մեր կազմակերպելիք նախճիրին մենք պատերազմի բնույթ չենք կարող տալ: Որտեղի՞ց ուրեմն գտնենք մեզ անհրաժեշտ ուժը, մարդկանց: Ես երկար մտածեցի և կարծում եմ, գտա, գիտե՞ք որտեղ՝ բանտերո՛ւմ, ուր շատ կան տարբեր հանցանքների համար զինվորական ծառայությունից զրկված ոճրագործներ: Եթե մենք նրանց ազատ արձակենք և խմբերի բաժանելով մեզ ենթարկենք, կարծում եմ, մի հիանալի հատուկ կազմակերպություն ստեղծած կլինենք: Գավառներում ոչ որ՝ ո՛չ տեղական պաշտոնյաները, ո՛չ էլ զինվորական հրամանատարներն իրավունք չեն ունենա նրանց գործերին խառնվել, իսկ ով այդպիսի բան փորձի, հետ կկանչենք ու պաշտոնանկ կանենք:

Մենք ներքին գործերի նախարարի հետ կորոշենք, թե նախ որ քաղաքի կամ գյուղի հայությանը բնաջնջենք և անհրաժեշտ ուժերն ուղարկելով, նահանգապետներին կկարգադրենք, որ հայերին պատերազմական գոտիներից հեռացնելու պատճառաբանությամբ, բռնագաղթի հրաման տան: Հենց որ ոստիկաններն աքսորականներին հասցնեն պայմանավորված վայրը, կթողնեն-կվերադառնան, իսկ մեր կազմակերպության խմբերն անմիջապես բոլորին սպանելով, կլցնեն նախապես պատրաստված փոսերը:[1]

Փաստորեն, «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթի մահսուսե») անդամներն առանձնահատուկ իրավունքներ ունեցող մարդասպաններ էին, որոնք ոչ միայն պիտի կատարեին Թալեաթի հրամանները, այլև այդ հրամաններից

1. Տե՛ս **Մեվլան Զադե Ռիֆաթի** հուշերը:

խուսանավող, խղճահարություն ցուցաբերող պաշտոնյաներին պատժեին: Կազմակերպությունը, որը մոտ տասը հազար անդամ ուներ և մասնաճյուղեր էր ստեղծել ողջ երկրում, օգտվում էր բացարձակ արտոնություններից և ամենաբարձրաստիճան անձնավորության հետ նույնիսկ կարող էր հաշվեհարդար տեսնել:

Տարբեր զանցանքների համար կալանավորված այս ոճրագործներին բանտերից հանելուն պես արագ մարզում էին, ուղարկում նախճիրի վայրերը: Բնականաբար, նրանք ազատ էին իրենց ուզած ձևով գործելու և հանդիսանում էին հայերին բնաջնջող գլխավոր ուժը:

Մարդասպանների գործելակերպը պարզ էր ու արագ՝ հարձակվում էին աքսորականների վրա և խմբերի բաժանելով, հարյուրներով գնդակահարում: Ողջ մնացածների գործն ավարտում էին մահակներով ու յաթաղանով: Կանանց, երեխաներին կապկպում էին, ժայռերի բարձունքից նետում Եփրատը:

Այսպիսով, հազարավոր դիակներ կուտակվում էին մի փոսի մեջ, մնում բաց երկնքի տակ, հանձնվում գետի ալիքներին:

-Քսանութ օր է, որ,- հավաստում է արդեն հիշատակված երկաթգծի պաշտոնյան,- Եփրատի հոսանքը բերում է դիակներ, որոնք կամ երկու-երկու՝ մեջք մեջքի, կամ էլ երեքից մինչև ութը անձ բազուկներից են միմյանց կապված: Մենք հարցրինք Ջերաբլուսում ծառայող թուրք սպային, թե ինչու դիակները թաղել չի տալիս: Նա պատասխանեց, որ նման հրաման դեռ չի ստացել, բացի այդ, հնարավոր չէ պարզել նրանց քրիստոնյա կամ մահմեդական լինելը, որովհետև առնանդամները կտրված են (մահմեդականներին թաղել կարելի էր, քրիստոնյաներին՝ ոչ): Շները հոշոտում էին ալիքների ափ նետած դիակները: Ուրիշ դիակներ էլ, որոնք մնացել էին ավազուտների վրա, անգղերի բաժին դարձան: Մի գերմանացի ձիով կատարած միայն մեկ պտույտի ժամանակ տեսել էր գետի հոսանքով լողացող վեց զույգ դիակ: Գերմանական հեծելազորի մի հարյուրապետ էլ պատմում էր, որ ձիով Դիարբեքիրից Ուրֆա գնալիս, ճանապարհի երկու կողմերին տեսել է բազմաթիվ անթաղ դիակներ, ընդ որում, բոլորն էլ գլխատված երիտասարդներ են եղել (զինվորական ծառայության կանչված, ճանապարհների շինարարության համար օգտագործված հայեր):[1]

«Հատուկ կազմակերպության համար» հեշտ որս էին դառնում մանավանդ նվազ դիմացկուն այն աքսորականները, որոնք հոգնության պատճառով հետ էին մնում քարավանից:

-Նրանց,- պատմում է Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հայզերը,- սվինով շամփրում, գետն էին նետում: Դիակները կամ գետի հոսանքով ծով էին հասնում Տրապիզոնի դիմաց, կամ էլ տասը-տասներկու օր ժայռերի արանքում, ծանծաղուտների մեջ մնալով, փտում էին՝ սարսափ պատճառելով այդ տեղերից անցնող ճամփորդներին:[2]

1.Տե՛ս Յ. Լեփսիուսի հիշատակված աշխատությունը, էջ 54:

2. Ն.տ., էջ 179:

Երեխաներին ոչնչացնելու ծրագիրը անհեթեթ է դարձնում հայ ժողովրդի բնաջնջումն արդարացնել փորձող թրքական բոլոր պատճառաբանությունները: Անմեղ մանուկներն իրենցից ռազմական վտա՞նգ էին ներկայացնում, լրտեսություն՞ էին անում հօգուտ ռուսների, թե՞ զինված ապստամբություն կամ խռովություն էին նախապատրաստում: Մինչդեռ թուրք դահիճներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում նրանց նկատմամբ:

Նախ երեխաների մի մասին խլեցին դեպի մահ գնացող քարավաններից ու որբանոց ուղարկեցին, ուր մեծ մասամբ աշխատում էին մահմեդականացնել: Հետո տղաներին վաճառեցին կամ բաժանեցին թուրք գյուղացիներին, իսկ գեղեցիկ աղջիկներին գիշերային վայելքի հաստատությունները տարան: Բոլոր մնացածներին, նույնիսկ նրանց, ովքեր տեղավորվել էին մահմեդական պաշտոնյաների ընտանիքներում, հավաքեցին կրկին, հասցրին քարավաններին: Այս երեխաների հանցանքը հիշողությունն էր: Թալեաթն այդպես էր վճռել դեռևս 1915 թվականի դեկտեմբերի 12-ին.

«Ծածկագիր թիվ 830

Ներքին գործերի նախարարը Հալեպի կուսակալին՝

Հավաքեցեք և խնամեք միայն այն որբերին, որոնք իրենց ծնողների սպանությունը չեն հիշում: Մնացածներին ուղարկեք քարավանով:

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Մի այլ հեռագրում նա ավելացնում է.

«Իմացանք, որ որոշ վայրերում բացված որբանոցներն են ընդունում նաև ծանոթ անձանց (ապահովության համար ներքին գործերի նախարարի հրած հեռագրերում հայերը կոչվում էին «ծանոթ անձինք» կամ «խնդրո առարկա անձինք») երեխաներին: Քանի որ կառավարությունը վնասակար է համարում նրանց գոյությունը, այդ մանուկներին կերակրելը, պատսպարելը, անգամ խղճալը նշանակում է գործել մեր կամքին հակառակ՝ անկախ այն բանից, դա արվում է բուն նպատակը չհասկանալո՞ւց, թե անտեսելուց: Հանձնարարում եմ այլևս ոչ մի երեխայի որբանոց չընդունել, նրանց համար որբանոցներ չբացել»:

Մի երրորդ հեռագիր բացահայտում է նախորդի որոշ դրույթները.

«Ծածկագիր թիվ 853

Ներքին գործերի նախարարը Հալեպի կուսակալին՝

Այնպիսի մի ժամանակ, երբ հազարավոր մահմեդական գաղթականներ և զոհված զինվորների այրիներ սննդի ու հոգատարության են կարոտ, հարմար չենք գտնում ավելորդ ծախսեր անել ծանոթ անձանց երեխաներին կերակրելու համար, որոնք ապագայում, բացի մեզ վնաս հասցնելուց, ոչ մի օգուտ չեն կարող տալ:

Բոլոր նրանց, ովքեր մինչև այժմ մնացել են նահանգում, մեր վերջին հրահանգի համաձայն՝ տարագիրների քարավանների հետևից ուղարկել Սեբաստիա:

23 հունվարի 1916

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Բացառությամբ մի քանի ազնիվ ընտանիքների, մնացածներին բարեսրտությունը չէ, որ դրդում էր երեխա վերցնել: Հայ մանուկները մահմեդականների համար շատ հարմար ծառա էին դառնում՝ փոխարենը ստանալով մի կտոր չոր հաց և մահակի մի քանի հարված:

Բայց այս երեխաներին նույնիսկ իշխանությունները վտանգավոր էին համարում: Վերջ ի վերջո, երբ մեծանային, հայ չպիտի՞ դառնային: Հրամանը հստակ էր՝ գտնել, հավաքել բոլորին, ուղարկել դեպի մահ:

«Ծածկագիր թիվ 603

Ներքին գործերի նախարարը Հալեպի նահանգապետին՝

Մեզ հայտնի դարձավ, որ Սվազի, Մամուրեթ -ուլ -Ազիզի, Դիարբեքիրի, Էրզրումի նահանգներից տեղահանված և ճանապարհին իրենց ծնողների մահվան պատճառով անտեր մնացած ծանոթ անձանց երեխաներին որոշ մահմեդական ընտանիքներ որդեգրում կամ ծառայության են վերցնում: Այս շրջաբերականով մենք ձեզ հանձնարարում ենք նրանց բոլորին հավաքել, աքսորավայրերն ուղարկել, իսկ ժողովրդին՝ ձեր հարմար նկատած ձևերով համապատասխան հրահանգներ տալ:

5 նոյեմբերի 1915

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Էնվեր փաշան՝ պատերազմական նախարարը, 1916 թվականի սկզբին հանդիպեց մի խումբ երեխաների, որոնք մերկ ու սոված թափառում էին Պաղեստինի ճանապարհներին: Նա զինվորական իշխանություններին հրամայեց, որ պատսպարեն, կերակրեն որբերին, բայց Թալեաթ փաշան իսկույն հակառակ միջոցի դիմեց.

«Հալեպի կուսակալությանը՝

Առանց կասկած առաջացնելու, պատերազմական նախարարության հրամանով զորանոցներում պատսպարվող ու խնամվող ծանոթ անձնավորությունների երեխաներին հավաքել և պատրվակելով, թե պիտի հանձնվեն գաղթականության վարչության տնօրինությանը, բոլորին միասին ոչնչացնել: Մեզ տեղեկացնել:

7 մարտի 1916 Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Հայտնի չէ, թե 1915-1916 թվականներին քանի հայ երեխա մորթվեց, խեղդվեց, ջրամույն արվեց կամ ողջակիզվեց՝ Բիթլիսում մի օրում ամբոխի աչքի առջև հազար հայ մանուկի ողջ-ողջ այրեցին: Բավական է հիշել, որ բռնագաղթվածների չորս-հինգերորդը կանայք, երեխաներ էին և նրանց հազիվ տասներորդ մասը հասավ Սիրիայի անապատները, այսպես կոչված՝ աքսորավայր:

Քանի որ բնաջնջման զանազան միջոցները, որ օգտագործվում էին աքսորի ճանապարհին, գոհացուցիչ արդյունք չէին տալիս, Նուրի բեյը գաղթականության տեղավորման կայանի ընդհանուր վարչությանը հղած հեռագրում թելադրում է. «Գրավոր հարցումներից պարզվել է, որ տեղահանված հայերի հազիվ տասը տոկոսն է հասել նշանակված վայրը, մնացածը ճանապարհին մահացել են քաղցից, հիվանդություններից, բնական համարվող այլ պատճառներից: Ես հույս ունեմ, որ դուք մի քիչ ավելի խիստ կվարվեք, և նույնը տեղի կունենա նաև մնացած հետ:

10 հուվարի 1916

Աբդուլ-Ահադ Նուրի»:

Վերջապես բռնագաղթվածների մնացորդները հասան այն վայրերը, որ իշխանությունները ինչ-ինչ նկատառումներով աքսորավայր էին կոչում: Դեռևս տարագրության սկզբում հայերին հայտնել էին, որ նոր բնակավայրում հաստատվելու ամեն հնարավորություն իրենց պիտի տրվի, և դա ծաղր էր անշուշտ, որովհետև բոլոր տղամարդիկ զորակոչի էին ենթարկվել, սպանվել: Կանայք, երեխաները կարո՞ղ էին նոր գաղութներ հիմնել: Բացի այդ, տարագիները, իբր տներ կառուցելու համար՝ շինանյութ, հող մշակելու համար գործիքներ պիտի ստանային, բայց միակ բանը, որ տեսան՝ այրող անապատի ավազն էր ու մեկ էլ մահվան ճամբարները:

Ովքե՞ր էին, սակայն, այդ մարդիկ, որ դիմացել էին քաղցին, որովայնախտին, գանակոծությանը, կարողացել էին խուսափել զինվոր-ոստիկանների գնդակներից, քրդի յաթաղանից, «Հատուկ կազմակերպության» մարդասպանների դագանակներից, ուրվականների նմանվող հյուծված, անկուշտ հայացքներով էակներ, որոնք անվերջ մի կտոր հաց ու մի ումպ ջուր էին խնդրում:

-Այն, ինչ տեսա, վեր է ամեն երևակայությունից: Համեմատել «հազար ու մի սարսափների հետ»՝ նշանակում է ոչինչ չասել: Բառացիորեն ինձ թվում էր, թե հայտնվել եմ դժոխքում,- ասում է մի վկա, որ եղել էր Դեր-Զորից մինչև Մեսքենե ձգվող վրաններում:

Որովայնախտն ու թանչքը հնձում էին ողջ մնացածներին, մանավանդ երեխաներին, որոնք առանց այն էլ քաղցից ու թերսնումից կմախք էին դարձել: Բայց զինվոր-ոստիկաններն ու հատուկ կազմակերպության «չեթեները» արագացրին «գործի» ավարտը...

Հալեպում աքսորականներին նախ փորել էին տալիս իրենց գերեզմաններն ու յաթաղանով, կացնով ոչնչացնում: Դեր-Զորում նրանց փակում էին քարայրում, հրդեհում կամ պարզապես ստիպում էին անապատով քայլել այնքան «մինչև հազարները դառնան հարյուր, հարյուրները մի փոքր խումբ, որը նվազելով, նվազելով վերանա»:

1916 թվականի վերջին հայկական ցեղասպանությունը գործնականում

ավարտված էր: Օսմանյան Հայաստանի 2 100 000 տղամարդկանցից ու կանանցից մնացել էին հազիվ 600 000-ը, որոնք կամ ապաստան էին գտել Ռուսաստանում կամ էլ փրկվել էին, որովհետև մեծ քաղաքներում, ինչպես, օրինակ, Զմյուռնիայում ու Կոստանդնուպոլսում ընդհանուր բռնագաղթ տեղի չէր ունեցել:

Այսպես թե այնպես քսաներորդ դարի առաջին ցեղասպանությանը զոհ գնաց 1 500 000 մարդ:

Թուրքերը որոշել են խոսել

Վերջին տասը տարում 220 բռնարարք է կատարվել թուրք դիվանագետների, տարբեր պաշտոնյաների դեմ: Հայկական հարցն ի վերջո այնպիսի սուր հնչեղություն ստացավ, որ անգամ Անկարայի իշխանություններին ստիպեց խզել վաքսուն տարվա լռությունը: Թուրքերը պնդում են, որ իբր երկրի՝ իրար հաջորդող կառավարությունները լռում էին, որովհետև իրենց մեղավոր չէին համարում: Այս դիրքորոշումը թվում էր հաստատուն ու վերջնական, որը հիմնավորելու համար կառավարությունը հավաքագրել էր քաղաքական գործիչների, դիվանագետների, պատմաբանների, նախկին զինվորականների, լրագրողների, նույնիսկ Թուրքիայում ապրող հայերին:

Որպեսզի ժխտեն հայերին բնաջնջելու օսմանյան կառավարության ծրագիրը, թրքական իշխանությունները հրապարակել են ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի՝ 1915 թվականի աքսորի հրամաններին առնչվող բազմաթիվ վկայություններ ու վավերագրեր, որոնցից կարելի է եզրակացնել՝ որոշակի հրահանգներ են եղել հայ ազգաբնակչությանը ճակատամարտի վայրերից հեռացնել հնարավորին չափ ապահով պայմաններում:

Ծովակալ Օրքյունտը մասնագիտությամբ պատմաբան է, հակիրճ մեզ ներկայացրեց Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը Առաջին աշխարհամարտից առաջ: Այնուհետև, փաստաբան Բորուան պատասխանեց մեր հարցերին:

-Դուք ժխտում եք, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մեկ ու կես միլիոն հայ է նահատակվել: Թուրքիան դա ի՞նչ փաստարկներով է հիմնավորում:

-Այդ հարցին շատ հեշտ կարելի է պատասխանել, մանավանդ որ վերջին տասնամյակներում թիվը չափազանց աճել է: Թալեաթ փաշան, որը համարվում է ցեղասպանության պատասխանատուն, քանի որ հայերին տեղահանելու հրաման է ստորագրել, իր կուսակցության վերջին խորհրդաժողովում հրապարակեց մահացածների թիվը՝ 300 000: Հայերն իրենց հերթին պնդում էին, որ 600 000 կորուստ են ունեցել: Բայց իշխանությունը նվաճած կուսակցությունը, որ Թալեաթ փաշայի կուսակցության հակառակորդն էր, իր հերթին զոհերի թիվը հասցրեց 800 000-ի: Այդ ժամանակվանից թիվը մեծացել, հասել է մեկ ու կես, նույնիսկ երկու միլիոնի: Բավական է միայն մի հայացք նետել Օսմանյան կայսրության վի-

ճակագրության վրա, ի միջի այլոց, վարչության տնօրենը հայ է եղել, համոզվելու համար, որ 19-րդ դարի վերջին բացառվում էր նման թիվ: Բայց, ինչպես արդեն ասել եմ 1982-ին՝ Ժնևի ֆրանսիական հեռուստաընկերության կազմակերպած «Կլոր սեղանի» ժամանակ, թիվը կարևոր չէ:

Քարոզչություն

Անկարա վերադառնալուն պես մեզ, միջազգային մամուլի մյուս ներկայացուցիչներին հարցազրույցի հրավիրեցին արտաքին գործերի նախարար պարոն Թյուրքմենի մոտ: Բոլորս միասին հազիվ քսան հոգի կլինեինք: Հարցերը վերաբերում էին նոր սահմանադրությանը, ազատություններին, քաղաքական կուսակցությունների արգելմանը: Նախարարը շատ սահուն պատասխանում էր անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն:

Օգտվելով մեր մի գրչընկերոջ վայրկենական դադարից, մենք հարց տվինք.

-Պարոն նախարար, Անկարա ժամանած բոլոր լրագրողների թղթապանակներում հայկական հարցի մասին գրքույկ կա: Սա նորություն է, որովհետև վերջին տասնհինգ տարում այդ թեմայով թրքական ոչ մի հաղորդագրություն չի եղել:

-Վերջին տասնհինգ տարում հայկական հարց չի էլ եղել... նրանց քարոզչությանը հետևեց ահաբեկչությունը, որն այլևս լոկ քաղաքական գործողություն չէ, այլ երիտասարդների կողմից իրագործվող բռնություն: Դժբախտաբար, Արևմուտքում կան երկրներ, ուր հավատ են ընծայում հայկական քարոզչությանը, ուստի, բնական է, որ Թուրքիան պիտի պատասխաներ հերյուրանքներին:

Խնդիրը, ինչպես ներկայացնում են հայերը, չի համապատասխանում պատմական իրականությանը: Դա՛ ենք փորձում ասել մեր գրքույկով: Օսմանյան կայսրություն այլևս գոյություն չունի, նրա տարածքում ծնվել են բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Թուրքիայի Հանրապետությունը: Հայերը մեծամասնություն էին կազմում Կովկասում, նրանք այնտեղ անկախ պետություն ստեղծեցին և հարձակվեցին Թուրքիայի վրա: Հետո այդ հանրապետությունը հաշտության պայմանագիր կնքեց Անկարայի հետ, որը ճանաչեց նրա սահմանները: Բայց Հայկական Հանրապետությունը որոշեց միանալ Խորհրդային Միությանը: Ինչ վերաբերում է պատմական փաստերին, միակ ճշմարտությունը հայերի հավատարմությունն է Պետրոգրադի քաղաքականությանը: Նրանք զորակցեցին արևելյան Անատոլիա շարժվող ռուսական բանակին: Օսմանյան կառավարությունն ստիպված էր հայերին կայսրության այլ շրջանները՝ մասնավորապես Լիբանան ու Սիրիա տեղափոխելու որոշում կայացնել: Պատերազմական իրադրությունում նման վճիռը բնական էր, մանավանդ որ շատ հայեր կռվում էին ռուսական բանակում: Երկիրը լիովին քայքայված էր, պայմաններն անտանելի էին, ձմեռը դաժան, զոհեր շատ եղան: Երկու միլիոն թուրք մահացավ պատերազմի ժամանակ, կորուստներ հայերն էլ ունեցան: Բայց պնդումը, թե իբր կանխամտածված ջարդեր են եղել, ճիշտ չէ: Նրանք ասում են, որ մեկ ու կես միլիոն զոհ

են տվել: Դա թվաբանորեն նույնիսկ անհնար է, որովհետև կայսրության տարածքում ապրող հայերի թիվը հազիվ հասնում էր մեկ միլիոն երեք հարյուր հազարի: Նրանցից հինգ հարյուր հազարը տեղափոխվել են ռուսական գերիշխանության տակ գտնվող Հայաստանը, որն այժմ խորհրդային է, չորս հարյուր հազարը տեղահանվել են, հարյուր հազարը մնացել Թուրքիայում:

Արտաքին քաղաքականության ինստիտուտում մեզ ներկայացրին այդ շրջանին վերաբերող բավական շատ վավերագրեր:

«Քանի որ պատերազմական գոտիներին մոտ բնակվող որոշ հայեր արգելք են հանդիսանում կայսերական բանակի գործողություններին, ում վստահված է երկրի սահմանների պաշտպանությունը, խանգարում են պարենհավաքին ու զորակոչին, համագործակցում թշնամու հետ, անգամ հարձակվում մեր զորանոցների, քաղաքների ու գյուղերի անմեղ բնակչության վրա, նրանց թալանում ու կոտորում (մի անգամ նույնիսկ հանդգնել են սնունդ հասցնել թշնամու ռազմա-ծովային ուժերին, մատնել մեր դիրքերը), անհրաժեշտ ենք ենք համարում նման անհնազանդ տարրերին հեռացնել սահմանամերձ շրջաններից և իրենց բնակավայրերից, որոնք փաստորեն զինապահեստների ու ամրությունների են վերածվել: Այդ պատճառով համապատասխան մջոցառումներ ձեռնարկել հայերին տեղափոխելու համար Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներից, Աղանայի, Սիսի, Մերսին Գոզանի, Ջեբելբերեքեթի գավառներից, բացառությամբ Աղանա, Սիս և Մերսին քաղաքների, Մարաշի սանջակից՝ բացառությամբ բուն Մարաշի, Իսկենդերունի, Բեյլանի, Ջզիր-ի-Շյուքուրի, Անթալիայի շրջաններից, Հալեպի վիլայեթից՝ բացառությամբ վարչական կենտրոնի: Որոշված է նրանց ուղարկել հետևյալ վայրերը՝ Մոսուլի վիլայեթ, Դեր Զոր....»:

Այդ նույն ժամանակ օսմանյան կառավարությունն էլ էր հետապնդում պատերազմի հանցագործներին:

1919 թվականի փետրվարի 12-ին Ստամբուլի ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական և իտալական ներկայացուցչություններին ուղղված վերջնագրում հայտնվում էր, որ պատերազմի հանցագործության մեջ մեղադրվող թուրքերը խիստ պատասխանատվության են ենթարկվելու, միաժամանակ պահանջ էր ներկայացվում միջազգային դատարանով դատել «այն հայերին, որոնք տեղահանությունից առաջ, ցարական զորքերի՝ արևելյան նահանգները բռնազավթելուն պես, մեկ միլիոնից ավելի թուրք են կոտորել»:

Օսմանյան կառավարությունը 1919-ին արդեն ստեղծել էր պատերազմի հանցագործներին հետապնդող հատուկ հանձնախմբեր: Նրանց անաչառությունն ու անկողմնակալությունն ապահովելու համար նախարարների խորհուրդն առաջարկել էր այդ խմբերի մեջ ներգրավել չեզոք երկրների կառավարությունների առաջադրած օտարազգի քննիչ-դատավորների: Այդ նպատակով հա-

տուկ ծանուցագրեր էին հղվել Դանիայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների, Իսպանիայի և Շվեդիայի դիվանագիտական ներկայացուցիչներին:

Հայտնվում է Դանիայի նորին կայսերական վեհափառության ներկայացուցչությանը, որ օսմանյան կառավարությունը ձեռնարկել է պատերազմի բոլոր այն հանցագործների հետապնդումը, որոնք մեղադրվում են մեր մահմեդական և ոչ մահմեդական հպատակների տեղահանության համար: Առանց ցեղի ու կրոնի տարբերության՝ բոլոր հանցագործների հետքերը գտնելու համար քննիչ հանձնախմբեր են ստեղծվել ինչպես Կոստանդնուպոլսում, այնպես էլ գավառներում: Մեղսակիցների մի մասն արդեն ձերբակալվել, հանձնվել է արդարադատությանը: Կայսերական կառավարությունը ցանկանալով հետաքննությունը վարել բարձր մակարդակով ու անկողմնակալությամբ, որոշեց վերոհիշյալ քննիչ հանձնաժողովների կազմում ներգրավել չեզոք երկրների իրավաբանների: Կայսրության արտաքին գործերի նախարարությունը պատիվ ունի Ձեր ներկայացուցչությանը խնդրելու հնարավորին չափ կարճ ժամկետում մեզ հայտնել Ձեր կառավարության կարծիքն այդ առաջարկի վերաբերյալ: Բնականաբար իրավաբանների ճանապարհածախսը, աշխատավարձը, մնացած բոլոր վճարումները կայսերական կառավարությունը վերցնում է իր վրա:

...Ստամբուլի ամերիկյան գերագույն կոմիսար, ծովակալ Ա. Բրիստոլը Վաշինգտոն հղած իր մի զեկուցագրում նշում է, որ քաղաքական նկատառումներով Կիլիկիայի դեպքերը չափազանցվում են: Թշնամի երկրներն անպայման ցանկանում են ստեղծել անկախ Հայաստան, որն անշուշտ կարագացներ Թուրքիայի մասնատումն ու քայքայումը: Ծովակալ Բրիստոլի հեռագիրը ուղարկված է 1920 թվականի հունվարի 10-ին և կրում է 122 համարը:

Սիրիայում Ֆրանսիական ուժերի զորահրամանատար և բարձրագույն կոմիսար, գեներալ Գուրոն 1920 թվականի նոյեմբերի 25-ի հաղորդման մեջ հավաստում է, որ հայերն անընդհատ կատաղի հարձակումներ են գործում թուրքերի վրա, որոնք ուղեկցվում են «ջարդերով, թալանով ու հրկիզումներով»:

...Դոկտոր Լեփսիուսի եզրահանգումները բացառիկ արժեք ունեն՝ «Բռնագաղթի կանոնները շատ շուտ խախտվեցին, ընդունելով հետևողական բնաջնջման բնույթ: Ամենից առաջ ձգտում կար ազատվելու տղամարդկային ուժից: Դրա համար ընդհանուր տեղահանության հրամանին նախորդեց ահավոր մի փուլ՝ քաղաքական ղեկավարներն ու մտավորականները ձերբակալվեցին, աքսորվեցին երկրի խորքերը կամ էլ սպանվեցին...

Բանակում ծառայող, ճանապարհների շինարարության վրա աշխատող, բեռնակրություն անող տղամարդկանց ճակատագրի մասին էլ կարելի է եզրակացնել օտարականների պատմածներից, որոնք պատահաբար այդ վայրերում ճանապարհորդելիս տեսել են, թե ինչպես հետևողականորեն ոչնչանում են հայ այրերը...

Ճանապարհին բաժանված ուտելիքից զգացվում էր, որ տեղահանումը հղացողներին ու իրականացնողներին քիչ է հուզում տարագիրների ճակատագիրը: Ոչ մեկի հոգը չէր, որ աքսորականների կեսը քաղցից ու հիվանդություններից մահանում է ճանապարհին»:

«...Կանանց ու երեխաներին նույնպես հենց սկզբից սկսեցին հալածանքի ենթարկել, ընդ որում, արևելյան բոլոր վեց վիլայեթների մի քանի հարյուր հազարի հասնող հայ ազգաբնակչությունը, առանց բացառության, այնպիսի անասնական դաժանության զոհ էր դառնում, որ մարդկության պատմության մեջ դժվար է նույնիսկ համարժեք օրինակ գտնել, բացի թերևս, աֆրիկյան ստրուկներ որսացողների կամ Ներոնի՝ քրիստոնյաների հանդեպ կազմակերպած նախճիրներից: Թուրք կառավարության արդարացումները, որ իբր իրենք նման միջոցի դիմում են ռազմական նպատակով՝ պատերազմին հարող շրջաններից հայերին տեղափոխում են հետագա բախումները կանխելու համար, հերքվում է հենց բռնագաղթի մեթոդներով: Ես կարծում եմ, եթե ամեն մի գերմանացի այդ դեպքերի մասին հավաստի տեղեկություն ունենա, իմանա, թե ինչպիսի սառնասրտությամբ են լայնածավալ երկրի ողջ ազգաբնակչությանը կոտորում, մնացածին տանջանքներով մեռցնելու համար անապատները քշում, չի կարող ատելությամբ չլցվել թուրք կառավարության նկատմամբ:

Ով մարդկային զգացում ունի, որքան էլ հայացքներով թրքամետ լինի, այլ կերպ չի կարող դատել»:

«Հայերի նկատմամբ գործադրված անողորմ դաժանության վերջին փուլը համընդհանուր գաղթը եղավ. մարդկանց իրենց օջախներից բռնի հանում ու աքսոր էին ուղարկում՝ ճանապարհին դիմելով կոտտանքների ամենավայրագ միջոցների: Տարագիրներին փոխադրամիջոց կամ սնունդ հատկացնելու համար ոչինչ չէր արվում, այդ դժբախտ էակները, որոնց մեջ մտավորական այրեր, բարձրատոհմիկ տիկնայք կային, ստիպված էին քայլել ոտքով, դիմագրավել իրենց հալածող ոճրախմբերին: Բոլորի տները բառացիորեն թալանում էին, իսկ ընտանիքի անդամներին բաժանում, ցիրուցան անում՝ որպես կանոն տղամարդկանց սպանելով, կանանց, աղջիկներին էլ առևանգելով ու տանելով հարեմ: Իրենք՝ մայրերը, երեխաներին սովամահությունից փրկելու համար նետում էին գետը կամ վաճառում օտարերկրացիներին:

Խիստ վստահելի ականատեսների հյուպատոսարան ուղարկված զեկուցագրերի փաստերը գերազանցում էին մարդկային պատմության մեջ երբևէ հղացված ու իրագործված ամենագազանային, սադայելական բռնաճնշումները: Թուրք իշխանությունները մայրաքաղաքի և գավառների կապը խափանել էին այն միամիտ հույսով, որ մինչև արտասահմանյան երկրները ճշմարտությունն իմանան, իրենք իրենց գործն ավարտած կլինեն: Բայց լուրերն անընդմեջ դուրս էին սողոսկում հյուպատոսների, միսիոներների, օտարերկրյա ճանապարհորդների և անգամ թուրքերի միջոցով»:

....«Ներքին գործերի նախարարության ծածկագիրը Հալեպի կուսակալությանը

Ամերիկյան կառավարության հրահանգով Կոստանդնուպոլսի դեսպանի վերջերս կատարած միջամտություններից զգացվում է, որ որոշ բնակավայրերի հյուպատոսներ գաղտնի ճանապարհներով անցանկալի տեղեկություններ են ստանում: Մենք, իհարկե, նրանց բացատրել ենք, որ տեղահանությունը կատարվում է ապահով, բնականոն պայմաններում, բայց քանի որ այդ բացատրությունը դիվանագետներին չգոհացրեց, կասկածները ցրելու համար քաղաքներից, գավառներից և այլ բնակավայրերից հայերին հանելու ժամանակ աշխատեցեք ուշադրություն գրավող դեպքեր թույլ չտալ: Ներկա քաղաքականության տեսակետից շատ կարևոր է, որ այդ վայրերում գտնվող օտարերկրացիները համոզված լինեն՝ տեղահանումը լոկ տեղափոխության նպատակ ունի:

Անհրաժեշտ է առերես մեղմ վերաբերմունք հանդես բերել, ծանոթ միջոցներին դիմել միայն հարմարագույն վայրերում: Այն անձանց, որոնք անհաճո լուրեր են հաղորդում կամ քննություններ կատարում, կարգադրում եմ այլ պատրվակով ձերբակալել, հանձնել պատերազմական ատյանին:

18 նոյեմբերի 1915թ.

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»:

Ծածկագրի վրա նախ կպտարված է հետևյալ մակագրությունը

«Առանց ծածկագրի մասին հայտնելու, տեսնվեցեք ոստիկանության տնօրենի հետ: Իրո՞ք նման լուրեր հավաքող մարդիկ կան: Նախարարի հրահանգի համաձայն այդ վայրերում բռնագաղթվածների հետ չափավոր վարվեցեք:

Գաղթականների ընդհանուր տեսուչի փոխանորդին

21 նոյեմբերի 1915 թ.

Կուսակալ՝ Մուստաֆա Աբդուլհալիկ»:

Ապա երկրորդը

«Ես վստահ էի, որ նման անձնավորություններ կան և շատ անգամ ոստիկանության տնօրենին խնդրել եմ հետևել նրանց, բայց ձեռնարկված միջոցներն օգուտ չեն տվել: Եթե կուսակալությունն իր կողմից ավելի խիստ որոշում կայացնի, արդյունքը շոշափելի կլինի: Սպասում եմ Ձեր հրամանին:

21 նոյեմբերի, 1915 թ.

Ընդհանուր տեսուչի փոխանորդ՝ Աբդուլ-Ահադ Նուրի»:

Երրորդը

«Դուք այդ մասին գրավոր պիտի հայտնեիք նաև տեղահանման պաշտոնյաներին:

Գաղթականների ընդհանուր տեսուչի փոխանորդին

22 նոյեմբերի 1915 թ.

Կուսակալ՝ Մուստաֆա Աբդուլհալիկ:

Նման թուրքերից մեկը 1919 թվականի հունվարի 28-ին «Սաբահ» թերթում գրում էր. «Չորս-հինգ տարի անընդմեջ մեր երկրում տեղի է ունեցել պատմության մեջ բացառիկ մի ոճիր, որն ահաբեկել է աշխարհը: Անշուշտ, նման համընդհանուր բարբարոսություն չէին կարող իրագործել հինգ կամ տասը հոգի, այլ առնվազն հարյուր հազարներ: Եթե ընդունենք անգամ, որ 600 000-ի փոխարեն կոտորվել է 300 000, նույնիսկ 100 000 հայ, 10, 500, թեկուզ 1 000 ոճրագործ ֆիզիկապես ի վիճակի չէին լինի այդքան մարդ սպանել: Արդեն հաստատված իրողություն է, որ այդ նախճիրն իրագործվել է իթթիհադի կենտրոնական կոմիտեի որոշումով ու հրամանով: Հենց որ մի քանի նախարարություններ ու նախարարներ, «Հատուկ կազմակերպությունը» ջարդերի ծրագիրը պատրաստեցին, այն հետևողականորեն սկսեցին իրագործել կուսակալներն ու կուսակալությունները (այդ թվում կուսակալության ծառայողները, զինվոր-ոստիկանները, անգամ ժողովուրդը): Արդարության նկատմամբ ծաղր չէ՞ այն հանգամանքը, որ համապատասխան մարմինները, մեծ ու փոքր ոճրագործների հսկա բանակը մի կողմ թողած, ձերբակալել են միայն Դիարբեքիրի, Սվազի, Խարբերդի կուսակալներին, որոնց դեռ չեն էլ դատել, ինչպես նաև մանր-մունր մի քանի պաշտոնյայի»:

Այս տողերն ստորագրողը կոչվում էր Ալի Քեմալ բեյ:

Նա ներքին գործերի նախարար էր...

Ալ. Օսման-թագավորական տուն

Ալայ- գունդ

Ալայ բեյի-սիփահիների պետ, գնդապետ

Ակչե-փոքր արծաթե դրամ՝ 1/120 դուրուշ

Աղասի-հրամանատար

Ամալե թապուրի- հրամանատար

Աշար-տասանորդ հարկ

Աշիրեթ-կրոնացեղային համայնք

Աշիրեթապեկ-ցեղապետ, կրոնական ղեկավար

Աջեմ-ոչ արաբ՝ պարսիկ

Արմաղան- նվեր, ընծա

Աֆուշահանե- թողություն, ներում

Բաբ- մուտք, դուռ

Բաբը Ալի -հրապարակ, որտեղ գտնվում է Բարձրագույն Դուռը՝ օսմանյան կառավարությունը

Բաբը հումայուն-կայսրական պալատ

Բեդելի-ասկերի-զինվորական ծառայության դիմաց հարկ

Բեյլերբեյ- պաշտոն, ավատատեր

Գյավուր-անհավատ

Գյուլխանեի հաթթը շերիֆ (Վարդապետանի հրովարտակ)- 1839 թ. ընդունված օրենք՝ Թանզիմաթ

Դեֆթերխանե- Հողերի սեփականության վրա վերահսկվող ծառայություն

Դևշիրմե- մանկահավաք

Դին-հավատ, կրոն

Դինար-ոսկե դրամ՝1/4 լիրա

Դիվան-ատյան

Ելդրզ(Ասպդ)- սուլթանական պալատ

Ենիչերի- ենիչերական (պրոֆեսիոնալ բանակի) զինվոր

Զադե- զավակ

Զիմմի- ոչ մահմեդական հպատակ (ռայա)

Էշ- աշիրեթ, ցեղ

Էյալեթ-նահանգը մինչև վիլայեթի ստեղծումն այդպես էր կոչվում

Էլմիր- երկրի ղեկավար

Էնջյումեն-ժողով, ընկերություն

Էսնաֆ-համքարություն

Թահրիրի նուֆուս- մարդահամար

Թանզիմաթ- բարենորոգում

Թարիխ-պատմություն

Թաբուր-զորամիավոր, գունդ

Թաքրիր-բողոքագիր, զեկուցագիր

Թեշքիլաթ-ը մախսուսե (Հատուկ կազմակերպություն)- ցեղասպանջարդարարական ջոկատների միավորում

Թիմար-հողատիրության ձև

Թյուֆեկլի-հրացանագործ

Թոփչի- թնդանոթաձիգ

Թոփխանե-հրետանոց, հրետանավորների հրամանատարության նստելատեղ

Իրադե-սուլթանական հրամանագիր

Լիվա-վարչական միավոր

Խաթթը-հյումայուն- սուլթանական հրամանագիր, որ հանդիսավորությամբ հրապարակվում է Բաբը Ալիում, կոչվում է նաև Խաթթը-շերիֆ

Խալաթ-նվեր, նվիրատվություն

Խալիֆ-մահմեդականության առաջնորդ

Խալիֆե-Մուհամեդի հաջորդ, տեղապահ

Խան-իջևանատուն, հյուրանոց

Խանե- տուն, կացարն

Խարաջ-գլխահարկ, զինվորական ծառայության դիմաց ոչ մահմեդականներից գանձվող հարկ

Խոջա-ուսուցիչ

Կազա-վարչական միավոր՝ մտնում է սանջակի մեջ

Կալե- բերդ

Կայմակամ- կազայի վարչական ղեկավար, պետ

Կըլըջ- սուր, թուր

Կըշլա-զորանոց

Կըշլագ-ձմեռանոց, քոչվորների բնակատեղի

Հարեմ-սիրուհի

Համիդիե գնդեր- քրդական անկանոն հեծելազնդեր՝ ստեղծված ցեղերի հիմքի վրա, ուղղված հայերի դեմ

Հաքիմ-իշխող, տիրող, նաև իմաստուն

Ղազի-սրբազան պատերազմ՝ ջիհադ

Ղարիբ-պանդուխտ

Մեդրեսե- դպրոց

Մեջլիս-ժողով, վարչական օղակ

Միրլավա- հրամանատար

Մյուբաշիր-դատական կատարածու

Մյուդիր-նահիեի (գյուղախմբի) պետ

Մյուլք- կալվածք

Մյուշիր-մարշալ

Մյուֆթի- կրոնավոր, Շարիաթի օրենքները մեկնաբանող

Մոլլա- իսլամական հոգևորական, աստվածաբանության մասնագետ

Մութեսարիֆ-սանջակի վարչական ղեկավար, պետ

Մուրսիաաս- գավառային հայ ղեկավար

Յավուզ-ուժեղ, դաժան

Յութուբ- քոչվոր

Նահիե-կազայի մեջ մտնող վարչական միավոր (գյուղախումբ)

Նամազ- ամենօրյա (օրը 5 անգամ) մահմեդական աղոթք

Նևրուզ-մահմեդական նոր տարի

Նեֆուզ- գլխահարկ՝ զինվորական ծառայությունից ազատվելու դիմաց, գանձվում էր ոչ մահմեդականներից

Նիզամի դատարան-քաղաքացիական դատարան

Նիքյահի- իսլամական ամուսնական ակտ

Շամ-Սիրիա

Շեյխ- աշիրեթապետ՝ կրոնական առաջնորդ

Շեյխ ուլ-իսլամ- շերիաթի գծով բարձրագույն իշխանություն

Շերի-համաձայն շերիաթի

Շերիաթ- մահմեդական կրոնական օրենքներ

Շերիաթական դատարան- կրոնական դատարան

Շիա- ոչ ուղղափառ մահմեդականություն

Չավուշ- հիսնապետ

Չեթե-հրոսակ

Չելլո- նախահայդուկային պայքարի եղանակ և խումբ

Չելալի- ըմբոստ

Չիզիե-ոչ մահմեդականից գանձվող գլխահարկ

Չիհադ-սրբազան պատերազմ

Ռայա (հոպ)-ոչ մահմեդական հպատակ

Ռում- Բյուզանդական կայսրության կազմում եղած ժողովուրդներ, հույն

Ռումելի- Օսմանյան կայսրության եվրոպական մաս

Սադրազամ- վարչապետ

Սանջակ-վիլայեթից փոքր վարչական միավոր (լիվա)

Սերասքեր- բանակի հրամանատար

Սերդար- հրամանատար

Սերիալ- վարչություն

Սիփահի- հատուկ հեծյալ զորք

Սյուննի- ուղղափառ իսլամ

Սոմար- հացատիկի չափ՝ 16 փութ

Սոֆթա- մահմեդական կրոնական դպրոցի սովորող

Սուլթան-օսմանյան բարձրագույն իշխանություն

Վալի-նահանգապետ

Վակֆ- կրոնական հաստատություններին պատկանող կալվածք

Վեքիլ- տեղակալ

Վիլայեթ- նահանգ

Ուլեմա- իսլամ հոգևորական-գիտնական

Ուլուֆե- զինվորականների աշխատավարձ

Ուլուս- ժողովուրդ, հասարակություն

Փադիշահ- Վեհապետ, սուլթան-խալիֆ

Փաշա- բարձր աստիճան՝ զինվորական թե քաղաքացիական, բարձր պաշտոն զբաղեցնող անձին տրվող կոչում

Փաշալըք- փաշայի տիրույթ

Փեզևանք- սրիկա

Քենպ-ամուսնություն

Քեշիշ- քրիստոնեական հոգևորական

Քիլար- ամբար

Քյաֆիր(անպեղյակ, անհավատ)- ճորտատիրական ենթակայության ձև

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3
1. Հայոց ցեղասպանությունը և Գերմանիայի
պատասխանատվությունը.....8
2. Ճանաչման նախնական քայլերը.....10
3. Համաթուրանական մութ դավեր.....13
4. Առաջին թուրանական վեհաժողովը.....17
5. Իթթիհադական հեղաշրջում.....18
6. Դավեր ընդդեմ Հայաստանի.....23
7. Բնաջնջման մեխանիզմ.....29
8. Կոտորածները թուրքական պաշտոնական քաղաքականության
մշտական բաղադրիչ.....53
Գլուխ առաջին
Ցեղասպանության նախապատրաստություն.....57
Գլուխ երկրորդ
Ցեղասպանությունը գործողության մեջ.....119
Գլուխ երրորդ
Թուրքիայի հակահայ ցեղասպան քաղաքականությունը
մշտական գործոն.....392
Վերջաբանի փոխարեն. Թ. Աքչամ՝ պատմաբան.....480
Հավելված կամ թուրքիզմը հայ մտավորականության ներկայացմամբ.....489
Թուրքերեն բառերի թարգմանություններ.....547

ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ
II

СТЕПАН КАРАПЕТОВИЧ ПОГОСЯН

ТУРКИ О ТУРКАХ
II

На армянском языке
Ереван "Айастан" 2011
Ереван Издательство ЕГУ 2011

Խմբագիր՝ ***Ռուզան Մարգարյան***
Կազմի ձևավորումը՝ ***Սամվել Մելքոնյանի, Գրիգոր Մարիկյանի***
Համակարգչային շարվածքը՝ ***Մարգարիտ Արիստակեսյանի***
Համակարգչային ձևավորումը՝ ***Արմինե Մարգսյանի և Կարինե Դավթյանի***

ԵԳԵԱ

Տպագրությունը՝ ԵԳԵԱ տպագրատան

Ստորագրված է տպագրության՝ 18.03.2011թ.:
Ծավալը՝ 34.5 տպ. մամուլ: =32,1 պայմ. մամուլի, հրատ. 30,2 մամուլ:
Չափսը՝ 60X84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 500:
«Հայաստան» հրատարակչություն. Երևան, Իսահակյան 28:
ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1: